ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՍՏԱԼԻՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԽՐՈՒՇՉՈՎ

ԵՐԵՎԱՆ 2001

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ВИРАБЯН АМАТУНИ

АРМЕНИЯ
ОТ СТАЛИНА ДО ХРУЩЕВА
ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ЖИЗНЬ
1945-1957 годы

Издательство "Гитутюн" НАН РА
Ереван 2001

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ գլխավոր դիրեկտորատ գրադարան

ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ

Ա II 86667

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՏԱԼԻՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԽՐՈՒՇՉՈՎ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ
(1945 - 1957թթ.)

ՀԱՅԿ.ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ ՍԿԱՆԵՑ.ՍԲՏ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ-2001

ԳՏՀ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Վ 680

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիմիր Ղազախեցյան

Գրախոսներ՝
Պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյան
Պատմական գիտությունների թեկնածու Կարեն Խաչատրյան

Վ 680 Վիրաբյան Ա.Ս., Հայաստանը Ստալինից մինչեւ Խրուշչով. Հասարակական-քաղաքական կյանքը (1945-1957թթ.),- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, 238 էջ:

Աշխատության մեջ Երեւանի եւ Մոսկվայի կենտրոնական արխիվներում եւ գրադարաններում պահպանվող ու մեծ մասամբ նորահայտ եւ առաջին անգամ շրջանառության մեջ դրվող կուսակցական-խորհրդային մարմինների վավերաթղթերի, գիտական եւ հուշագրային գրականության եւ պարբերականների նյութերի հիման վրա ներկայացվում եւ վերլուծվում է Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը, արծարծվում են Հայկական Հարցի վերաբարձրացման, հայրենադարձության, ամբողջատիրության համակարգի խորացման, քաղաքական բռնաճնշումների, եկեղեցու և պետության փոխհարաբերությունների, 1950-ական թվականներին իրականացված բարեփոխումների հիմնահարցերը: Աշխատությունը նախատեսվում է պատմաբանների եւ ընթերցող լայն շրջանակների համար

Վ 0503020913
(02) - 2001 ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 5-8080-04-99-3
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2001

© Վիրաբյան Ա.Ս.

Երկու խոսք

Վերջին տարիներին հայ պատմագիտության մեջ թուլացել է ուշադրությունը Խորհրդային Հայաստանի պատմության հիմնախնդիրների ուսումնասիրության նկատմամբ:

Հետպատերազմյան Հայաստանի տնտեսության մեջ եւ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցան թե՛ դրական, թե՛ բացասական լուրջ տեղաշարժեր: Վերելք ապրեց տնտեսությունը, հատկապես ծանր արդյունաբերությունը, բարեփոխումներ կատարելու փորձեր արվեցին գյուղատնտեսության մեջ, միջազգայնորեն բարձրացվեց Հայկական հարցը՝ Թուրքիայի կողմից բռնագավթած հայկական տարածքները հայ ժողովրդին վերադարձնելու եւ աշխարհով մեկ սփռված հայերին հայրենիք վերադարձնելու նպատակով: Հայաստանի ղեկավարությունը համարձակություն ունեցավ կենտրոնական իշխանությունների առաջ բարձրացնելու 1921թ. անարդարացիորեն Ադրբեջանին անցած հայկական հողերը Հայաստանին վերադարձնելու հարցը: Դրա հետ միաժամանակ ավելի էր խորացավ եւ ամրապնդվեց ամբողջատիրության համակարգը, ավելի էր խստացավ հսկողությունը հոգեւոր կյանքի նկատմամբ, եկեղեցին օգտագործվում էր հանուն խորհրդային պետության եւ ոչ թե հավատացյալների շահերի:

1953թ.՝ Ստալինի մահից հետո, երկրում տեղի ունեցան լուրջ հասարակական-քաղաքական փոփոխություններ, սկսվեցին դեմոկրատացման եւ բարեփոխումների գործընթացներ, սակայն խորհրդային համակարգի պայմաններում դրանք մինչեւ վերջ հասցվել չէին կարող:

Վերոհիշյալ հիմնախնդիրների գիտական ուսումնասիրումը եւ գործնական փորձի ընդհանրացումը չեն կորցրել իրենց արդիականությունը նաեւ մեր օրերում:

Հիմնական գրականության եւ աղբյուրների տեսություն

Հայաստանի՝ հետպատերազմյան ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքն ամբողջությամբ հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել, թեպետ հիմնախնդրի առանձին հարցեր արտացոլվել են պատմագիտական աշխատություններում: Բազմաբնույթ հարցեր ուսումնասիրվել են տակավին 1950-ական թվականների վերջերին: Հաջորդ տասնամյակում հրատարակվեցին Գ.Գեղամյանի, Ս.Խարմանդարյանի եւ Ա.Հակոբյանի աշխատությունները[1]:

Գ.Գեղամյանի մենագրությունը հանրապետության գյուղատնտեսության հետպատերազմյան ժամանակաշրջանի պատմությանը նվիրված միակ ամբողջական աշխատությունն է, որտեղ փորձ է արվել «վեր հանել սոցիալիստական հասարակարգի լիակատար ու վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում գյուղատնտեսության զարգացման համար Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության մղած պայքարի պատմությունը»: Հեղինակը միանգամայն ճիշտ է նկատել, որ «գյուղացիության վիճակը մինչեւ 1953թ. բավականին ծանր էր», սակայն դրա պատճառը նա տեսնում է ոչ թե համակարգի, այլ «կոլտնտեսությունների եւ սովխոզների ղեկավարման թերությունների, կոլտնտեսային շինարարության, լենինյան քաղաքականության խեղաթյուրումների» մեջ[2]:

Լայնորեն ներկայացնելով հանրապետության գյուղատնտեսության հիմնահարցերը, վերլուծելով եւ մեկնաբանելով խորհրդային ղեկավարության ձեռնարկումները գյուղատնտեսության բարեփոխման բնագավառում, հաճախ նաեւ դրանց ձախողումը՝ հեղինակը դա բացատրում է ոչ թե այդ որոշումների ի սկզբանե սխալ լինելով, այլ դրանց «սխալ» կենսագործմամբ, մասնավորապես այդպես է բնութագրված կոլտնտեսությունների խոշորացման քաղաքականության ձախողումը[3]: Ժամանակի թելադրանքով հեղինակը շրջանցել է գյուղի սոցիալական ծանր վիճակը, դրա արդյունքում գյուղացու քաղաք կամ այլ հանրապետություններ արտահոսքի երեւույթը եւ այլ «կնճռոտ» հարցեր: Այսուհանդերձ, Գ.Գեղամյանի մենագրությունը կարեւոր ներդրում է հանրապետության գյուղատնտեսության հետպատերազմյան շրջանի պատմության ուսումնասիրման ասպարեզում:

Ս.Խարմանդարյանի մենագրությունը ներկայացնում է Խորհրդային Հայաստանի 1946-1950թթ. պատմությունը: Աշխատությունը աչքի է ընկնում փաստերի եւ թվական տվյալների ճշտությամբ, ունի ընդհանուր բնույթ, ուսումնասիրված են հանրապետության տնտեսական ոլորտի եւ հասարակական-քաղաքական կյանքի բազմաթիվ հարցեր: Հեղինակը, օգտագործելով թվական եւ վիճակագրական բազմաթիվ տվյալներ, ձգտել է ցույց տալ չորրորդ հնգամյակի տարիների հանրապետության

---

[1] *Գեղամյան Գ.Մ.*, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում (1946- 1958թթ.), Ե., 1968, *Խարմանդարյան Ս.Վ.*, Սովետական Հայաստանը չորրորդ հնգամյակի տարիներին (1946-1950), Ե., 1960, *Հակոբյան Ա.Մ.*, Սովետական Հայաստանը կոմունիստական շինարարության հինգերորդ հնգամյակի տարիներին (1951-1955), Ե., 1962:

[2] *Գեղամյան Գ.Մ.*, նշվ.աշխ., էջ 9:

[3] Նույն տեղում, էջ 27- 28:

տնտեսական շինարարության «անշեղ վերելքը» եւ բնակչության «նյութական բարեկեցության աճը եւ կուլտուրական մակարդակի բարձրացումը»[1]: Սակայն հեղինակի համար կոմունիստական կուսակցության եւ խորհրդային կառավարության որոշումները «ճշմարտություն են վերջին աստիճանի» եւ նույնիսկ 20-րդ համագումարից հետո նա ոչ մի քննադատական մոտեցում չի ցուցաբերում դրանց նկատմամբ: Ընդհակառակը, ՀամԿ(բ)Կ կենտկոմի գրականության եւ արվեստի ասպարեզում 1946-1948թթ. հայտնի որոշումները նա համարում է «պատմական», կոլտնտեսությունների խոշորացման մասին որոշման կենսագործումը՝ որպես «բարերար ազդեցություն նրանց հետագա աշխատանքների վրա», իսկ գաղափարախոսական հարցերի մասին որոշումները՝ որպես մեծ նշանակություն ունեցող՝ «գիտահետազոտական հիմնարկների աշխատանքների բարելավելու գործում»[2]:

Հեղինակի ուշադրության տեսադաշտից դուրս են մնացել բնակչության սոցիալական ծանր վիճակը, քաղաքական բռնաճնշումները, զանգվածային աքսորը, հայրենադարձության կազմակերպման եւ իրականացման թերությունները եւ հասարակական-քաղաքական կյանքի բազմաթիվ հարցեր: Հեղինակը Գերագույն խորհրդի ընտրությունները բնութագրում է «ժողովրդական տոն», «կոմունիստների ու անպարտիականների բլոկի փայլուն հաղթանակ», սակայն մնում է անհասկանալի՝ ո՞ւմ կամ ի՞նչի նկատմամբ[3]: Հասկանալի է, 1950-60-ական թվականների խորհրդահայ պատմաբանը չէր կարող չլինել կոմկուսի վարած քաղաքականության պաշտպան, սակայն ոչինչ չէր խանգարում նրան պահպանել չափի զգացումը:

Ա.Հակոբյանի աշխատությունը, հեղինակի խոսքերով, նվիրված է «Հայկական ՍՍՌ-ի հինգերորդ հնգամյակի տարիների պատմությանը»: Նա իր առջեւ խնդիր է դրել հիմնական գծերով լուսաբանել «Սովետական Հայաստանի ձեռք բերած հաջողությունները սոցիալիստական շինարարության գործում, ռեսպուբլիկայի աշխատավորների հայրենասիրական աշխատանքը եւ պայքարը այդ հաջողություններին հասնելու համար, Կոմպարտիայի ձեռնարկած միջոցառումները սովետական եւ պետական կարգի հետագա ամրապանդման համար եւ մի շարք այլ կարեւոր հարցեր»[4]: Ի տարբերություն Ս.Խարմանդարյանի աշխատության, այս աշխատանքում հիմնականում արտացոլված են տնտեսության՝ արդյունաբերության եւ գյուղատնտեսության, պատմության հարցեր: Հասարակական-քաղաքական կյանքը ներկայացված է միայն 1953թ. հանրապետության ղեկավարության փոփոխմամբ եւ հնի «սխալների» թվարկմամբ: Չօգտագործելով պետական եւ կուսակցական արխիվների նյութեր, հիմնվելով միայն հրապարակված նյութերի եւ մի քանի ձեռնարկությունների ու կազմակերպությունների ընթացիկ արխիվների տվյալների վրա՝ հեղինակը հաճախ թույլ է տվել փաստական եւ վիճակագրական սխալներ եւ հակասություններ: Նշելով, որ «1953թ. Սովետական Հայաստանի գյուղատնտեսության հաջողությունների տարի»[5], հեղինակը հաջորդ էջերում

---

[1] *Խարմանդարյան Ս.Վ.*, նշվ. աշխ., էջեր 133, 168:
[2] Նույն տեղում, էջեր 55, 149, 192:
[3] Նույն տեղում, էջ 37:
[4] *Հակոբյան Ա.Ս.*, նշվ.աշխ., էջ 7:
[5] Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 84:

ներկայացրել է դրանց մի շարան[1]:

Այսպիսով, հիշյալ աշխատությունները, ներկայացնելով Հայաստանի հետպատերազմյան ժամանակաշրջանի պատմությունը, հասարակական-քաղաքական կյանքի բազմաթիվ հարցեր չեն լուսաբանել կամ միակողմանիորեն են ուսումնասիրել:

Հանրապետության հետպատերազմյան ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքն ամփոփ կերպով տրված է «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի VIII հատորում, «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր»-ում եւ «Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմություն»-ում[2]:

Հայ ժողովրդի պատմության VIII հատորի հետպատերազմյան ժամանակաշրջանի բաժինը գրված լինելով նույն հեղինակների՝ Ա.Հակոբյանի, Գ.Գեղամյանի եւ Ս.Խարմանդարյանի կողմից, բացառությամբ մեկ հայրենադարձության նվիրված ենթագլխի, որի հեղինակն է Լ. Խուրշուդյանը, ներկայացված է, մասնակի բացառություններով, նույն մոտեցումներով, ինչպես նրանց մենագրություններում: Շարադրանքում նույնիսկ խոսք չկա հետպատերազմյան տարիներին արծարծված հայկական հարցի, քաղաքական բռնաճնշումների եւ 1949թ. զանգվածային աքսորի, եկեղեցու եւ այլ հիմնահարցերի մասին:

Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերում հետպատերազմյան ժամանակաշրջանը ներկայացված է որպես համատարած ձեռքբերումների, հաղթանակների ու հաջողությունների տարիներ, այնինչ՝ իրականում հաջողություններին փոխարինել են անհաջողությունները, հաղթանակներին հաջորդել են պարտությունները, տնտեսության առաջընթացին՝ ինչ-որ պահեր՝ նահանջ: Ցույց է տրված կոմկուսի դերի անընդմեջ աճը հասարակական կյանքում: Հայաստանի կոմկուսը եւ հանրապետությունը 17 տարի ղեկավարած Գրիգոր Հարությունյանը եւ նրան փոխարինած Սուրեն Թովմասյանը ՀԿԿ պատմության ուրվագծերում ներկայացված են միայն որպես համագումարներում հաշվետվություններով հանդես եկողներ եւ դրանից հետո՝ որպես առաջին քարտուղար ընտրվողներ: Նրանց դերը հանրապետության կյանքում եւ՝ դրական եւ՝ բացասական առումով ոչնչով չի բացահայտվում: Բացարձականացված են կուսակցական փաստաթղթերը, չկա ոչ մի քննադատություն եւ վերլուծություն: «Սոցիալիզմի կառուցումը» մատուցվում է որպես լենինյան ծրագրի իրագործում, այն դեպքում, երբ այն իրականում ստալինյան ծրագրի կենսագործում էր: Այդ բոլոր թերությունների պատճառով այսօր այդ աշխատությունը կորցրել է իր գիտական նշանակությունը:

Հանրապետության արդյունաբերության եւ գյուղատնտեսության քննարկվող ժամանակաշրջանի պատմությունն արտացոլվել է այդ հիմնախնդիրներին նվիրված, ժամանակագրական առումով ավելի մեծ շըր-

---

[1] *Հակոբյան Ա.Մ.*, նշվ. աշխ., էջ 85-90:

[2] Հայ ժողովրդի պատմություն, հ.VIII, Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի եւ հետպատերազմյան կոմունիստական շինարարության տարիներին, 1941-1965թթ., Ե., 1970, Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967, Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմություն, Ե., 1981:

ջան ընդգրկող աշխատություններում[1], որտեղ հանրապետության տնտեսությունը միայն անընդհատ զարգացում է ապրում՝ առանց տատանումների ու դժվարությունների: Նշված աշխատություններում անբավարար է վերլուծված ինդուստրացման սոցիալական հետեւանքները, իսկ բնապահպանական խնդիրների մասին ընդհանրապես խոսք չկա: Ընդունելով ծանր արդյունաբերության էներգատար ճյուղերի զարգացման սխալ քաղաքականությունը՝ հեղինակներն անուշադրության են մատնում հանրապետության քիմիական արդյունաբերության զարգացման անհեռատես քաղաքականությունը եւ դրա ծանր բնապահպանական հետեւանքները:

Քննարկվող ժամանակաշրջանի «բանվոր դասակարգի եւ գյուղացիության դաշինքի» պատմությանն են նվիրված մի քանի աշխատություններ[2], սակայն այդ հիմնախնդիրը մեր կարիքով ստեղծվել է արհեստականորեն, որպես կոմունիստական գաղափարախոսության ծնունդ, ուստի այն չենք քննարկի:

Բանվոր դասակարգի պատմությունը հանգամանալից ուսումնասիրված է: Հիշարժան են Հ.Հարությունյանի աշխատությունները[3], ուր հանրապետության զարգացման հիմնական ֆոնի վրա լուսաբանված են բանվոր դասակարգի կազմում առաջացած քանակ-որակական տեղաշարժերը, դրանց ազդեցությունը հասարակության սոցիալական կառուցվածքի վրա, բանվորության արտադրական-ստեղծագործական եւ հասարակական-քաղաքական ակտիվությունը: Հարուստ փաստական տվյալներով, քննական վերլուծությամբ այդ աշխատություններն ունեն գիտական մեծ արժեք:

Խորհրդահայ պատմագիտությունը ուսումնասիրել է նաեւ հանրապետության արհմիությունների[4], մտավորականության ձեւավորման ու զարգացման[5] պատմությունը:

---

[1] *Ազիզբեկյան Հ.Հ.*, Սովետական Հայաստանի էլեկտրիֆիկացիայի պատմությունից, Ե., 1966: *Ավագյան Վ.Լ.*, Հայաստանի կոմունիստական կուսակցության պայքարը քիմիական արդյունաբերության ստեղծման ու զարգացման համար, 1920-1965թթ., Ե., 1971: *Նույնի* Խորհրդային Հայաստանի քիմիական արդյունաբերության զարգացման պատմությունից (1927-1980թթ.), Ե., 1983: *Բարսամյան Վ.Հ.*, Հայաստանի կոմկուսի գործունեությունը հանրապետության գունավոր մետալուրգիայի եւ լեռնահանքային արդյունաբերության զարգացման բնագավառում (1945-1965թթ.), Ե., 1973: *Ենգոյան Փ.Ի.*, Հայաստանը ինդուստրացման ուղիով, Ե., 1967: *Խաչատրյան Ի.Դ.*, ՍՄԿԿ պայքարը գյուղատնտեսության զարգացման համար, 1946-1965թթ., Ե., 1980: *Հարությունյան Ս.Ս., Տիտանյան Ա.Ա.*, Դրվագներ Հայաստանի գյուղատնտեսության զարգացման պատմությունից, Ե.,1966: *Սաղաթելյան Տ.Կ.*, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը էլեկտրիֆիկացիայի համար մղվող պայքարում, Ե., 1968:

[2] *Ամիրյան Ս.*, Բանվոր դասակարգի եւ գյուղացիության դաշինքն արդի էտապում, Ե., 1967: *Օհանջանյան Բ.Ս.*, Հայաստանի բանվոր դասակարգի եւ գյուղացիության դաշինքի պատմությունից (1953-1965թթ.), Ե., 1970:

[3] *Հարությունյան Հ.Ս.*, Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման ժամանակաշրջանում (քանակը, կազմը), Ե., 1983, *Նույնի* Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը (1938-1960թթ.), Ե., 1987:

[4] *Վարդապետյան Ա.Վ.*, Հայաստանի արհմիությունների պատմություն, Եր., 1969:

[5] *Խաչատրյան Գ.Ս.*, Հայաստանի սոցիալիստական ինտելիգենցիայի կազմավորումն ու զարգացումը, Ե., 1968: *Григорьянц А.К.*, Формирование и развитие технической интеллигенции Армении (1920-1965гг.), Е., 1966.

Հետպատերազմյան մեծ հայրենադարձության նախապատրաստման եւ իրականացման հարցերը բազմակողմանի արտացոլվել են Հ.Մելիքսեթյանի «Հայրենիք-սփյուռք առնչությունները եւ հայրենադարձությունը» մենագրության մեջ[1]: Բարձր գնահատելով նրա կատարած աշխատանքը հայրենադարձության հիմնախնդրի ուսումնասիրման ասպարեզում՝ միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել մենագրության երկու թույլ կողմերը: Ցանոթ չլինելով մի շարք արխիվային փաստաթղթերի, մասնավորապես ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գր.Հարությունյանի կողմից Ստալինին եւ մյուս ղեկավարներին հղած գրություններին՝ հեղինակը չի ներկայացրել հայրենադարձության կազմակերպման ճանապարհին ծագած մի շարք հարցեր: Երկրորդ, հեղինակը ներկայացրել է հայրենադարձության կազմակերպման եւ իրականացման միայն դրական կողմերը, մի կողմ թողնելով հայրենադարձների ընդունման եւ տեղավորման բնական ու շինծու դժվարությունները, բնակարանների եւ կենցաղային առարկաների սուր պակասը, սննդամթերքով անբավարարվածությունը, որի հետեւանքով հայրենադարձների մոտ ծագեցին արտագաղթի տրամադրություններ, տեղի ունեցան պետական սահմանը խախտելու բազմաթիվ փորձեր: Հակառակը, հեղինակը ծանր վիճակի պատճառով առաջացած տրամադրությունները կապում է «նոր պայմանների ոչ ճիշտ ընկալման» հետ[2]: Անհասկանալի է մնում, թե հայրենադարձներն ինչպես պետք է ընկալեին նոր պայմանները:

Ա.Սարգսյանի «Հանուն գաղափարախոսության անաղարտության, ՀԿԿ գաղափարախոսական աշխատանքը ետպատերազմյան տարիներին» աշխատությունը նվիրված էր «ՍՄԿԿ-ի մարտական ջոկատներից մեկի Հայաստանի կոմկուսի ետպատերազմյան ժամանակաշրջանի գաղափարախոսական, քաղաքական-դաստիարակչական գործունեության փորձի ուսումնասիրմանն ու ընդհանրացմանը»[3]:

Դժվար թե խորհրդահայ պատմագիտության մեջ գտնվի որեւիցե մեկ այլ աշխատություն, որտեղ այնքան անսկզբունքային եւ անքննադատ մոտեցում ցուցաբերվեր կուսակցական որոշումների եւ ձեռքբերումների նկատմամբ, քան վերոհիշյալում: Հեղինակի հետեւությունները եւ եզրակացությունները հաճախ հասնում են անհեթեթության, իսկ երեվակայությունը սահման չունի: Նա գրքի գլուխներից մեկը վերնագրել է «Մամուլը, ռադիոն եւ հեռուստատեսությունը գաղափարախոսական ճակատի հարվածային ուժերն են», սակային տեքստում հեռուստատեսության մասին ոչինչ չի ասել եւ չէր էլ կարող, որովհետեւ քննարկվող ժամանակաշրջանում հանրապետությունում հեռուստատեսություն չի եղել, այն իր առաջին հաղորդումները եթեր է արձակել միայն 1957թ.:[4]

1990-ական թվականներին հայ ժողովրդի պատմության խորհրդային ժամանակաշրջանի հարցերի նկատմամբ հայեցակարգը փոխվեց. Հրապարակված աշխատություններն արդեն ազատված էին նախկին միակարծության կաղապարներից, հիմնախնդիրները ներկայացված էին իրենց ամբողջության մեջ: Թեպետ քննարկվող ժամանակաշրջանի վերա-

---

[1] *Մելիքսեթյան Հ.Ռ.*, Հայրենիք-սփյուռք առընչությունները եւ հայրենադարձությունը (1920-1980թթ.), Ե., 1985:
[2] *Մելիքսեթյան Հ.Ռ.*, նշվ. աշխ., էջ 222:
[3] *Սարգսյան Ա.Ա.*, Հանուն գաղափարախոսության անաղարտության,Ե., 1986,էջ 7:
[4] Հայկական սովետական հանրապետություն, հ. 6, Ե., 1980, էջ 368:

բերյալ չեն ստեղծվել ամբողջական աշխատություններ, սակայն առանձին հարցեր արդեն դարձել են ուսումնասիրության առարկա:

Հետպատերազմյան շրջանում Հայկական հարցի բարձրացման պատմությանն առաջինն անդրադարձել է ակադեմիկոս Հ.Սիմոնյանը «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» մենագրությունում[1]: Օգտագործելով հրապարակի վրա եղած փաստաթղթերի ժողովածուները եւ այլ նյութեր՝ հեղինակը տվել է հարցի բարձրացման պատմությունը, սակայն արխիվային փաստաթղթերի բացակայությունը հնարավորություն չի տվել ներկայացնել հիմնահարցն ամբողջությամբ:

Քննարկվող ժամանակաշրջանի պետություն-եկեղեցի փոխհարաբերություններին է անդրադարձել Ս.Ստեփանյանցը[2]: Նա շրջանառության մեջ է դրել հարուստ նյութ, փորձել է առաջին անգամ ներկայացնել հայ եկեղեցին խորհրդային հասարակական հարաբերությունների ոլորտում, ուստի մի շարք եզրակացություններում թույլ է տվել անհարկի խստություն եւ անարդարացի քննադատություն: Գրքի մեզ հետաքրքրող բաժինը զերծ չէ թերություններից, որի պատճառը նաեւ արխիվային որոշ փաստաթղթերի բացակայությունն է:

Վերջին տասնամյակում Հայաստանում 1920-53թթ. քաղաքական բռնաճնշումների պատմության ուսումնասիրության ասպարեզում մեծ աշխատանք կատարվեց: Ա.Մանուկյանի եւ մեր կողմից հրապարակվել են մենագրություններ եւ հոդվածներ[3], սակայն հիմնախնդիրն ունի դեռ չբացված շատ էջեր եւ կարոտ է հետագա խորը հետազոտության:

Հետպատերազմյան շրջանում Հայկական հարցի հիմնախնդիրներին է նվիրված Կ.Խաչատրյանի հոդվածը:[4]

1990-ական թվականներին հրապարակվեցին մի շարք ուսումնական ձեռնարկներ բուհերի եւ հանրակրթական դպրոցների սովորողների համար[5]: Քննարկվող հիմնահարցը դրանցում շարադրված է նորովի, սակայն հավանաբար ծավալի սահմանափակվածության պատճառով, տեղ չեն գտել հայկական տարածքների, ազգամիջյան հարաբերությունների, պետության ու եկեղեցու փոխհարաբերությունների, հասարակական-քաղաքական կյանքի որոշ հիմնահարցեր:

Հիմնահարցի ուսումնասիրության համար օգտագործվել են թեմային առնչվող հրապարակված սկզբնաղբյուրներից՝ ԽՄԿԿ եւ ՀԿԿ համագումարների, կենտկոմների պլենումների արձանագրությունները եւ այլ փաստաթղթեր, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարներ Գր.Հարություն-

---

[1] *Սիմոնյան Հ.Ռ.*, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991:

[2] Ստեփանյանց Ս., Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապատության օրոք, Ե., 1994:

[3] *Մանուկյան Ա.*, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ., Ե., 1999: *Վիրաբյան Ա.Ս.*, Փաստաթղթեր 1949թ. բռնագաղթի մասին, Բանբեր Հայաստանի արխիվների. 1990, N 3, էջ 68 - 76:

[4] Карен Хачатрян, Армянский вопрос на начальном этапе холодной войны, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թ. 2, Ե., 2001, էջ 126-131:

[5] *Սգիգբեկյան Ռ.Լ., Գեղամյան Գ.Մ.*, Հայաստանը 1945-1990-ական թվականներին, Ե., 1994: *Հակոբյան Ա.Ս., Սարգսյան Ա.Ս., Վիրաբյան Վ.Հ.*, Հայոց քաղաքական պատմություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., 1999: Հայոց պատմության հիմնահարցեր, Հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը, Ե., 2000.

յանի եւ Ս.Թովմասյանի հրապարակված զեկուցումները, վիճակագրական ժողովածուները, ինչպես նաեւ ժամանակաշրջանի մամուլը:

Աշխատությունը գրված է հիմնականում արխիվային նյութերի հիման վրա, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Լայնորեն օգտագործվել են ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի, Պատմության եւ Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվների նյութերը: Առաջին անգամ օգտագործվել են ՀԿԿ կենտկոմի բյուրոյի այսպես կոչված «Հատուկ թղթապանակի» որոշումները, կենտկոմի առաջին քարտուղար Գր.Հարությունյանի գրագրությունները երկրի ղեկավարների հետ, Հայաստանի պետանվտանգության եւ ներքին գործերի նախարարությունների, Անդրկովկասյան ռազմական օկրուգի հակահետախուզական վարչության եւ սահմանապահ զորքերի հայկական օկրուգի հրամանատարության հատուկ հաղորդագրությունները, թուրքական ռադիոկայանների ռադիոունկնդրումների նյութերը, ՀԿԿ կենտկոմի կուսակցական հանձնաժողովի անհատական գործերը: Ռուսաստանի Նախագահի եւ Պետական արխիվներում մեր կողմից հայտնաբերած նյութեր:

Օգտագործվել են նաեւ հրապարակված եւ արխիվներում պահպանվող ժամանակաշրջանի պետական-կուսակցական ղեկավար աշխատողների հուշերը[1]:

---

[1] *Դալաքյան Կ.*, Հուշապատում (դեմքեր, իրողություններ, մտորումներ), Ե., 1998. *Չվերեւ Ա.Գ.*, Մինիստրի հուշագրություններ, Ե., 1975:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Հայրենական պատերազմի չորս տարվա ընթացքում Հայաստանի տնտեսության մեջ եւ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ: Կառուցվեցին տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ: Արդյունաբերությունը յուրացրեց արտադրանքի ավելի քան 270 նոր տեսակի թողարկում, որոնց զգալի մասը ծառայում էր բանակի կարիքներին: Արդյունաբերությունից ետ չմնաց գյուղատնտեսությունը: Պատերազմի տարիներին ցանքերի տարածությունն ընդարձակվեց ավելի քան 30 հազար հեկտարով, խաղողի այգիների տարածությունը՝ 3425, պտղատու այգիներինը՝ 5200 հեկտարով: Կառուցվեցին մի շարք ջրանցքներ, որոնց շնորհիվ ոռոգվող հողերի տարածությունը ավելացավ 20 հազար հեկտարով: Հայաստանի բնակչությունը տասնյակ միլիոնավոր ռուբլիներ, հարյուր հազարավոր փութ հացահատիկ, մեծ քանակությամբ հագուստ եւ նվեր-ծանրոցներ տրամադրեց պաշտպանության պետական ֆոնդին:

Գիտության եւ մշակույթի զարգացման բնագավառում եւս զգալի նվաճումներ ձեռք բերվեցին: Գիտական մտքի զարգացման լավագույն արտահայտություններից մեկը 1943թ. Գիտությունների Ակադեմիայի հիմնադրումն էր, որը գիտահետազոտական խոշոր աշխատանքներ ձեռնարկեց հանրապետության բնական պաշարների օգտագործման, երկրի ռազմատնտեսական հզորության բարձրացման ուղղությամբ: Գրականության եւ արվեստի գործիչները պատերազմի տարիներին ստեղծած իրենց լավագույն երկերով, կինոնկարներով սխրագործության էին մղում ժողովրդին թշնամու դեմ լիակատար հաղթանակ տանելու համար:

Պատերազմի ավարտից հետո ամենից առաջ պետք էր վերականգնել տնտեսությունը եւ այն կողմնորոշել դեպի խաղաղ նպատակներ: Պատերազմի հասցրած մարդկային եւ նյութական վնասները հսկայական էին: Վերջին տարիներին ԽՍՀՄ մարդկային կորուստները գնահատվում են սպանված 27 միլիոն մարդ: Տնտեսական կարողության կորուստն է՝ 32 հազար ավերված ձեռնարկության, 654 հազար կմ երկաթուղի, 1710 քաղաք եւ ավան, 70 հազար գյուղ[1]: 1945թ. սեպտեմբերին պատերազմի հասցրած վնասների գումարը գնահատվեց 679 միլիարդ ռուբլի, որը 5,5 անգամ գերազանցում էր ԽՍՀՄ-ի 1940թ ազգային եկամուտը[2]:

Տնտեսության վերականգնման անհրաժեշտությունը ենթադրում էր այդ գործընթացի նոր ուղիների ընտրություն՝ աջակցել եւ փոխկապակցել պատերազմի ընթացքում երեւան եկած կամապաշտական պրակտիկայի սահմանափակումները կամ վերադառնալ զարգացման 30-ական թվականների մոդելին: Դրանք դարձան բանավեճի առարկա 1945-46թթ. ժողտնտեսության զարգացման 4-րդ հնգամյա պլանի նախագծի քննարկման

---

[1] Дмитренко В. Л., Есаков В. Д., Шестаков В. А., История отечества, М., 1997, с.387.

[2] *Զվերեւ Ա. Գ.*, նշվ. աշխ., էջ 321:

ժամանակ: Այն ավարտվեց նախապատերազմյան մոդելին վերադարձի կողմակիցների հաղթանակով: Ավելի հավասարակշռված տնտեսական զարգացման կողմնակիցների թվում էին ԽՍՀՄ Պետպլանի նախագահ Ն. Վոզնեսենսկին եւ Ռուսաստանի նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռոդիոնովը: 30-ական թվականների մոդելի կողմնակիցներն էին Գ.Մալենկովը եւ Լ. Բերիան:[1]

1946-1950թթ. հնգամյա ծրագրով նախատեսված ժողտնտեսության զարգացման տեմպերը ենթադրում էին ոչ միայն վերականգնել նրա նախապատերազմյան մակարդակը, այլեւ ակնկալել նոր էական աճ: 1950թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը պետք է անցներ 1940թ. մակարդակից 48 տոկոսով[2]:

Ելնելով վերոհիշյալ ծրագրից, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը 1946թ. հուլիսին ընդունեց օրենք հանրապետության ժողտնտեսության վերականգնման ու զարգացման 1946-50թթ. հնգամյա ծրագրի մասին: Այդ ծրագրով նախատեսվում էր ապահովել «ծանր արդյունաբերության, հատկապես հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության, քիմիական արդյունաբերության, գունավոր մետալուրգիայի, մետաղամշակման արդյունաբերության եւ շինանյութերի արդյունաբերության առաջնահերթ զարգացումը»[3]: Ընդունված ծրագրով ՀԽՍՀ արդյունաբերության զարգացման տեմպերն ավելի բարձր էին ԽՍՀՄ արդյունաբերության զարգացման միջին տեմպերի համեմատությամբ: Հնգամյակի վերջին արդյունաբերության արտադրանքի ծավալը պետք է կազմեր 1940թ. մակարդակի 210 տոկոսը: Կապիտալ ներդրումները կազմելու էին 1420 միլիոն ռուբլի[4]: Ծրագրով նախատեսվում էր նաեւ թեթեւ ու սննդի արդյունաբերության աճ, սակայն հնգամյակի կարեւոր կառույցների թվում չկար այդ ճյուղերի որեւէ նշանակալից շինություն: Ինչպես տեսնում ենք, հնգամյա ծրագրով շեշտը դրված էր ծանր արդյունաբերության զարգացման վրա: Խաղաղ շինարարությանն անցնելու բերումով երկրում 1946թ. արդյունաբերության արտադրանքի ծավալը նախորդ տարվա համեմատ նվազեց 17 տոկոսով: Հայաստանում եւս 1946թ. արդյունաբերության համախառն արտադրանքի նախատեսված ծրագիրը չկատարվեց, այն կազմեց 95,4 տոկոս, թեպետ նախորդ տարվա համեմատ աճել էր 13,1 տոկոսով[5]:

Առաջատար ձեռնարկություններից արտադրանքի թողարկման ծրագրերը թերակատարեցին արդյունաբերության Լենինականի տեքստիլ կոմբինատը /51,8 տոկոս/, Կիրովի անվան կաուչուկի /67,4 տոկոս/, ավտոդողերի /50,6 տոկոս/, կարբիդի /90,1 տոկոս/ գործարանները: ՀԿ/բ/Կ կենտկոմը ՀամԿ/բ/Կ Կենտկոմ ուղարկած տեղեկատվության մեջ դա բացատրում էր նշված ձեռնարկությունների ղեկավարության եւ կուսակցական կազմակերպությունների անբավարար աշխատանքով: Իրականում հիմնական պատճառը պատերազմից հետո սկսված աշխատուժի հոսունության բարձր մակարդակն էր, երբ բանվորները, փնտրելով աշխատանքի ավելի լավ պայմաններ, օգտվելով աշխատուժի պակասից,

---

[1] *Лихоя Я.Г.*, Советский Союз: История власти, 1945-1991, Н., 2000, с.50.

[2] Решения партии и правительства по хозяйственным вопросам. 1917-1967гг., Сб. док., т. 3. 1941-1952гг., М., 1968, с. 252.

[3] «Սովետական Հայաստան», 1946, 4 օգոստոսի:

[4] Նույն տեղում, 1946, 31 հուլիսի:

[5] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 43, թթ. 1-3:

հաճախակի տեղափոխվում էին տեղից տեղ: Պատահական չէ, որ հանրապետության խոշոր նորակառույցներում 1945-47թթ. աշխատել են 9967 գերմանացի ռազմագերիներ, մասնավորապես Քանաքեռի ալյումինի, Սպիտակի շաքարի եւ Կիրովականի ազոտական պարարտանյութերի գործարանների, Սեւանի ու Գյումուշի հիդրոէլեկտրակայանների շինարարություններում եւ Արթիկի տուֆի հանքավայրում[1]: Գ.Հարությունյանը 1946թ. դիմում է Լ.Բերիային նորակառույցներում աշխատելու համար ուղարկել եւս 10 հազար ճապոնացի ռազմագերի, որը սակայն չի իրականացվում[2]: Իհարկե, աշխատուժի պակասի հետ միաժամանակ իր դերն էր կատարում նյութատեխնիկական մատակարարման մեջ սակավությունը, աշխատավարձի վճարման ժամկետների խախտումը, որը հաճախ տեվում էր ամիսներ: ՀԿ/բ/Կ Կենտկոմ ուղարկված ՀԽՍՀ պետանվտանգության նախարարության հատուկ հաղորդագրություններից մեկում նշվում էր, որ «համար 447 /էլեկտրամեքենաշինական-Ա.Վ./ գործարանում բանվորների, ծառայողների եւ ինժեներատեխնիկական աշխատողների հուլիս-օգոստոս ամիսների աշխատավարձը, բացառությամբ հուլիս ամսվա 20 տոկոս կանխավճարի, մինչեւ սեպտեմբեր չի վճարված: Դրամի բացակայության պատճառով շատ բանվորներ հնարավորություն չունեն օգտվելու ճաշարանից: Ավելացել է գործարանում աշխատանքից ազատվելու դիմումների թիվը: Գործարանի աշխատողների շրջանում առաջանում են այսպիսի անառողջ տրամադրություններ եւ խոսակցություններ. «...Աշխատանք պահանջում են, բայց փող չեն տալիս, թեկուզ սատկիր սովից, բանվոր դասակարգի վրա ընդհանրապես ուշադրություն չեն դարձնում: Հասցրել են հուսահատության վերջին աստիճանին: Վերջին անդրավարտիքներն ենք շուկա հանում: Այսպես ապրել այլեւս անհնար է...»[3]:

Արտադրական ծրագրերը կատարելու համար ղեկավարները գերադասում էին ավելացնել աշխատողների թիվը եւ սարքավորումների քանակը, քան թե աշխատանքի արտադրողականության բարձրացման համար պայմաններ ստեղծել: Դրա հետեւանքով շեշտակիորեն ավելացավ բանվորների թիվը: Ինչպես նախքան պատերազմը, նոր բանվորների մեծ մասը եկել էր գյուղից: Հ.Հարությունյանի հաշվարկներով 1946-50թթ. բանվոր դասակարգի քանակական աճի 46,3 տոկոսը տեղի էր ունեցել ի հաշիվ կոլտնտեսային գյուղացիության[4]:

Հնգամյակի տարիներին աճեց նաեւ մասնագետների եւ բարձր որակավորման բանվորների թիվը: Արդեն 1948թ. արդյունաբերությունում աշխատող 49319 բանվորներից 42984-ը կամ 87 տոկոսը եւ ինժեներատեխնիկական 3160 աշխատողից 2542-ը կամ 80,4 տոկոսը հայեր էին[5]:

1947թ. Հայաստանում արդյունաբերության արտադրանքի համախառն արտադրության ծրագիրը կատարվեց 107,6 տոկոսով[6]: Հանրապետությունում իրացվեց ապրանքների նոր տեսակների արտադրություն՝ էլեկտրական տրանսֆորմատորներ, գեներատորներ, կոմպրեսատորներ: Չորրորդ հնգամյակի հետագա երեք տարիներին արդյունաբերության

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 101, թթ. 6-7:
[2] Նույն տեղում, գ. 100, թ. 32:
[3] Նույն տեղում, ց. 034, գ. 96, թթ. 250-251:
[4] *Հարությունյան Հ.Ս.*, Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը, էջ 44:
[5] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 100, թ. 68:
[6] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 100, թ. 40-41:

զարգացման արագ տեմպերը պահպանվեցին: 1949թ. վերջին արդյունաբերությունը թողարկման ծրագրով նախատեսված մակարդակին[1]:

Չորրորդ հնգամյակի տարիներին կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը գերակատարվեց 30 տոկոսով: Հատկանշական է, որ այդ տարիներին Հայաստանի արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերը ամենաբարձրերից էր ԽՍՀՄ-ում/եթե երկրում արդյունաբերական արտադրանքը նախատեսված 48-ի փոխարեն աճեց 73 տոկոսով, ապա հանրապետությունում այդ աճը 110-ի փոխարեն կազմեց 149 տոկոս, զիջելով միայն էստոնիային եւ Լատվիային[2]:

ՀԿ/բ/Կ 15-րդ համագումարում՝ 1951թ. մարտին, նշվեց, որ արդյունաբերության համախառն արտադրանքի պետական ծրագիրը 1950թ. կատարվեց 103 տոկոսով, դրանով իսկ պլանով նախատեսված մակարդակը 1940թ. համեմատությամբ 2,1 անգամի փոխարեն գերազանցեց 2,4 անգամ[3]: Շեշտը դրվում էր ծանր արդյունաբերության արագացված զարգացման վրա: Արտադրության միջոցների արտադրությունը 1940թ. մակարդակի համեմատությամբ ավելացավ ավելի քան երկու անգամ:[4]

Չորրորդ հնգամյակում մինչեւ վերջ չհաղթահարվեցին հետպատերազմյան դժվարությունները, ծրագրող մարմինների, ձեռնարկությունների գործունեության թերությունները: Չհաջողվեց լրիվ հաղթահարել էլեկտրաէներգիայի, մետաղների, բարձր արտադրողականության տեխնիկայի պակասը: Աշխատուժի արտահոսքը մնում էր բարձր: Սպառման առարկաների արտադրության զարգացման ցածր տեմպերի պատճառով մշտապես գոյություն ուներ լայն սպառման առարկաների սակավություն:

Արդյունաբերության զարգացման նույն ռազմավարությունը պահպանվեց նաեւ 50-ական թվականների առաջին կեսին: ՀամԿ/բ/Կ 19-րդ համագումարում հաստատված ԽՍՀՄ զարգացման 1951-55թթ. 5-րդ հնգամյա ծրագրի դիրեկտիվներով նախատեսվում էր արդյունաբերական արտադրության մակարդակը բարձրացնել 70 տոկոսով: Նախատեսվում էր մեքենաշինության եւ մետաղամշակման արտադրանքն ավելացնել մոտ 2 անգամ, էլեկտրակայանների կարողությունը՝ մոտ 2 անգամ, իսկ հիդրոէլեկտրակայաններինը՝ 3 անգամ[5]: Շեշտը կրկին դրվում էր ծանր արդյունաբերության զարգացման վրա: Սակայն արդեն 1953թ. օգոստոսին՝ Ստալինի մահից հետո, ընդունված բյուջեում մեծ ներդրումներ էին նախատեսվում լայն սպառման առարկաների արտադրության բնագավառում՝ մեծապես իջեցնելով դրանց գները: 5-րդ հնգամյակի տարիներին արդյունաբերության զարգացումը ենթարկվեց նույն փորձություններին:

Հայաստանի արդյունաբերության զարգացումը 5-րդ հնգամյակում բնորոշվում էր ծանր արդյունաբերության՝ գունավոր մետաղների արտադրության, մեքենաշինության, մետաղի մշակման, քիմիական արդյունաբերության եւ էլեկտրաէներգիայի արտադրության աճի բարձր տեմպերով: 1955թ. գունավոր մետաղների համախառն արտադրանքը 1945թ. համեմատությամբ ավելացել էր 8,2, մեքենաշինության եւ մետաղամշակ-

---

[1] *Ս. Վ. Խարմանդարյան*, նշվ. աշխ., էջ 113:
[2] Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, էջ 217:
[3] *Գր. Հարությունյան*, Հաշվետու զեկուցում ՀԿ/բ/Պ XV համագումարում, էջ 11:
[4] История КПСС, т. 5 (1938-1959гг.), кн.2 (1945-1959гг.), М, 1980, с. 203.
[5] КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, т. 8, 1946-1955, М., 1985, с. 262-264.

ման ճյուղի արտադրանքը՝ 11 անգամ: Զարգացավ էներգետիկան: Եթե 1945թ. էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմում էր 450 միլիոն, ապա 1955թ. արդեն հասել էր 2214,7 միլիոն կիլովատ ժամի[1]: Հանրապետությունում աճեց նաեւ բանվորության քանակը[2]:

Արդյունաբերության զարգացման բարձր տեմպերի հետ քաղաքային բնակչության աճն իր հերթին հաճախ բերում էր դժվար լուծելի սոցիալ-տնտեսական խնդիրներ: Թեպետ ավելանում էին բնակարանային շինարարության ծավալները, սակայն բնակարանային խնդիրն առկա էր:

Երեւանում արդյունաբերության մեծ ծավալների կենտրոնացումը ծնում էր բնապահպանական խնդիրներ: Գ.Հարությունյանը, որ 1944-45թթ. մեծ հետեւողականություն էր ցուցաբերել Քանաքեռի ալյումինի գործարանի կառուցման հարցը լուծելու համար[3], 1951թ. դիմելով ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի նախարարին՝ վնասակար արտանետումների պատճառով անհամաձայնություն էր հայտնում գործարանի երկրորդ հերթի շինարարության ծրագրի առթիվ[4]:

Ընդհանրապես, սխալ թույլ տրվեց արդյունաբերության զարգացման ռազմավարության մեջ: Միակողմանի շեշտվեց էներգատար եւ մետաղատար ուղղությունների ու քիմիական արդյունաբերության զարգացումը, Սեւանի ջրերի անհեռատես օգտագործումը: ԽՍՀՄ պետպլանի նախագահ Ն.Վոզնեսենսկին դեմ էր Հայաստանում ալյումինի գործարանի շինարարությանը, համարելով, որ դրա հետեւանքները կարող են աղետալի լինել, քանի որ Հայաստանը, զուրկ լինելով էներգետիկ պաշարներից, իր տնտեսությունը պետք է զարգացնի ավելի քիչ էներգատար ուղղությամբ: Հաշվի առնելով, որ հայերի գիտատեխնիկական ներուժն արագ զարգացման եւ աճի միտում ունի, նա ճիշտ էր համարում արդյունաբերության զարգացումը տանել կամ շվեյցարական կամ ավստրիական մոդելով, այսինքն՝ աշխատել բարձր տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ[5]:

Սակայն այս առաջարկները չընդունվեցին եւ արդյունաբերության զարգացումն այլ ընթացք ստացավ, որին անհեռատեսորեն զոհաբերվեց Սեւանը: Իհարկե, այդ տարիներին՝ էլ փորձեր արվեցին Սեւանի ջրերի խնայողաբար օգտագործելու համար: Մասնավորապես, ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն 1949թ. քննարկելով խնայողաբար օգտագործման հարցը, ԽՍՀՄ էլեկտրակայանների նախարարին առաջարկել էր «Հայէներգոյի» համակարգում ներդնել ջրի խնայողական օգտագործման պարգեւավճարների նույնպիսի համակարգ, որպիսին գործում էր վառելիքի խնայողության համար ջերմային էլեկտրակայաններում[6]:

ԽՍՀՄ արդյունաբերության թերությունների եւ գիտատեխնիկական նվաճումները ներդնելու հարցերը քննարկվեցին ԽՄԿԿ Կենտկոմի 1955թ. հուլիսյան պլենումում: Արձանագրվեց, որ արդյունաբերությունը, հատկապես ծանր, ձեռք է բերել զգալի հաջողություններ: Մինչդեռ, տնտեսության մի շարք ճյուղերում գիտության եւ տեխնիկայի ձեռքբե-

---

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, էջ 281:
[2] *Հ. Հարությունյան*, նշվ.աշխ., էջ 38:
[3] Գրիգոր Հարությունյան, Կյանքը եւ գործունեությունը, էջ 224-228:
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 30, գ. 108, թ. 136-138:
[5] Գրիգոր Հարությունյան, Կյանքը եւ գործունեությունը, էջ 227-228:
[6] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 94, թ. 237:

ռումները դանդաղ էին ներդրվում պրակտիկայում: Քննադատվեց տնտեսագիտական այն տեսակետը, ըստ որի՝ սոցիալիզմի ժամանակ մեքենաների բարոյական մաշվածություն տեղի չի ունենում[1]:

Հայաստանի արդյունաբերության բնագավառում թերություններին անդրադարձավ 1955թ. հուլիսի 27-ի կուսակտիվի ժողովը, որտեղ քննարկվեցին ԽՄԿԿ Կենտկոմի պլենումի արդյունքները:[2] Անհրամայական համարվեց այն երեւույթը, երբ Հայաստանից պղինձը եւ ալյումինը նախնական մշակման համար արտահանվում էր երկրի հեռավոր շրջաններ, իսկ այնտեղից այդ մետաղների գլանվածքը գրեթե ամբողջությամբ ներկրվում էր հետ՝ կաբելային արտադրանք պատրաստելու համար[3]:

Վերոհիշյալ թերությունները վերացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները սովորաբար արդյունք չէին տալիս, թերությունները շարունակում էին պահպանվել:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԵՐԸ

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից 1946թ. մարտին հաստատված գյուղատնտեսական զարգացման ծրագրերը տպավորիչ էին, առաջին հայացքից թվում էին առավել իրական, քան նախապատերազմյան ծրագրերը: 1940թ. մակարդակի համեմատ գյուղատնտեսության արտադրանքը նախատեսվում էր ավելացնել 27 տոկոսով: 1946թ. հավաքվեց ընդամենը 39,6 մլն. տոննա հացահատիկ, որը նախորդ տարվանից բավականին ցածր էր[4]: Դա պայմանավորված էր արտասովոր երաշտով եւ «մասնատված ղեկավարման» փորձի աղետալի ձախողմամբ: 1946թ. սկզբից կոլտնտեսությունները միաժամանակ ենթարկվելով երեք նախարարությունների պետք է աճեցնեին տարբեր մշակաբույսեր: ԽՍՀՄ Նախարարների խորհուրդի եւ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի 1946թ. սեպտեմբերի 19-ին որոշմամբ կուսակցական-խորհրդային կազմակերպությունների ղեկավարները հանձնարարություն ստացան «բոլոր միջոցները ձեռնարկել կոլտնտեսային արտելի կանոնադրության խախտումները վերացնելու» համար[5]: ԽՍՀՄ կառավարությանն առընթեր ստեղծվեց կոլտնտեսությունների գործերի խորհուրդ, որի նախագահ հաստատվեց Ա.Անդրեը[6]:

Հայաստանում կոլտնտեսություններին վերադարձվեց արագ կերպով նրանցից վերցված 5528 հեկտար հող, ինչպես նաեւ անասուններ, հացահատիկ եւ այլ մթերքներ[7]: Կենտրոնի սեպտեմբերի 19-ի որոշումից հետո 15 օրվա ընթացքում հանրապետության բոլոր շրջաններում անցկացվեցին կուսակտիվի եւ կոլտնտեսականների ընդհանուր ժողովներ: Ամենախիստ քննադատության ենթարկվեցին կոլտնտեսությունների վարչությունները, հողային մարմինները, շրջկոմների եւ շրջգործկոմների աշխատողները: Պատերազմի տարիներին կոլտնտեսականներն սկսել էին

---

[1] КПСС резолюциях, т. 8, с. 510-512.
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 35, գ. 38, թ. 1:
[3] Նույն տեղում, թթ. 10-24:
[4] Новейшая история Отечества. XX век. т. 2, с. 250.
[5] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց. 26, գ. 46, թ. 594:
[6] Նույն տեղում, թ. 669:
[7] *Գր. Հարությունյան*, Հաշվետու զեկուցում ՀԿ/բ/Պ XIV համագումարում, էջ 59:

Ա 86667

մշակել իրենց տնամերձներին կից անմշակ եւ խոպանացած հողերը: Բացի այդ, ԽՍՀՄ ժողկոմխորհի եւ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի 1942թ. ապրիլի 7-ի որոշմամբ արդյունաբերական ձեռնարկություններին, զինմասերին թույլատրվել էր մշակել կոլտնտեսությունների կողմից չօգտագործվող հողատարածքները՝ վերջիններիս համաձայնությամբ: Սեպտեմբերի 19-ի որոշմամբ այդ տարածքները պետք է վերադարձվեին կոլտնտեսություններին, թեպետ փաստերը վկայում են, որ դրանք, հաճախ լինելով մանր, կտրտված, տարիներով մնում էին անմշակ եւ վերածվում խոպանի: Կարեւորը սկզբունքն էր, որով կոլտնտեսականն իրավունք չուներ ունենալ նախատեսված չափաբաժնից մի թիզ ավելի հող, իսկ քաղաքաբնակը՝ հող մշակելու ոչ մի իրավունք: Միայն 1946թ. ընթացքում հանրապետության բոլոր՝ 1043 կոլտնտեսություններում «հայտնաբերվեցին կոլտնտեսականների կողմից հողի զավթման» 18594 դեպք՝ 2625 հա ընդհանուր տարածքով, իսկ 597 կազմակերպություն եւ ձեռնարկություն «անօրինականորեն» օգտագործում էին 1768 հա հողատարածք: Որոշումը դրական տեղաշարժեր առաջացրեց կոլտնտեսությունների կյանքում:[1]

1946թ. ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն բազմիցս անդրադարձավ կառավարության որոշման կատարմանը: Գյուղարտելի կանոնադրության խախտումների համար աշխատանքից ազատվեցին առանձին շրջանների ղեկավարներ, ներքին գործերի բաժինների պետեր, պետբանկի բաժանմունքների կառավարիչներ[2]: Կառավարությունը որոշման կատարման համար սահմանեց եռամսյա ժամկետ: Սակայն այն ոչ միայն երեք ամսում, այլ երեք տարում էլ չհաջողվեց կենսագործել:

1947-49թթ. ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն բազմիցս անդրադարձել է գյուղարտելի կանոնադրության խախտման հարցին: Ինչպես վկայում է կոլտնտեսությունների գործերի գծով խորհրդի Հայաստանի ներկայացուցչի՝ խորհրդի նախագահ Ա.Անդրեւին 1949թ. սեպտեմբերին ուղարկված գրությունը «ինչպես նախորդ, այնպես էլ 1949թ. շարունակվում է կոլտնտեսությունների հանրային եւ տնամերձ հողերի շռայլումը եւ զավթումը, ինչպես նաեւ հողերի վարձակալության հանձնումը»[3]: 15 էջից կազմված զեկուցագրում մանրամասն տվյալներ կան հանրապետությունում գյուղարտելի կանոնադրության խախտման վերաբերյալ: Այդ զեկուցագրում խոսք անգամ չկա «հողերի հափշտակումների», պարտքերի չվճարումների եւ այլ խախտումների պատճառների մասին /պարենամթերքի պակաս, բնամթերահարկ, աշխատանքի վարձատրության ցածր մակարդակ, անձնական շահագրգռվածության բացակայություն/: Զեկուցագիրը Մոսկվայում մեծ արձագանք գտավ եւ ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը 1949թ. դեկտեմբերի 19-ին ընդունեց «Հայկական ԽՍՀ-ում ԽՍՀՄ նախարարների խորհրդի եւ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի 1946թ. սեպտեմբերի 19-ի «Կոլտնտեսություններում գյուղարտելի կանոնադրության խախտման վերացման միջոցառումների մասին» որոշման անբավարար կատարման մասին» որոշումը, որը կրկնում էր հիշյալ զեկուցագիրը: Նշելով հանրապետության խորհրդային եւ գյուղատնտեսական մարմինների աշխատանքում «տեղ գտած լուրջ բացթողումները»՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին հանձնարարվում էր մինչեւ 1950թ. հունվարի 15-ը վե-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 47, թթ.1-5:
[2] Նույն տեղում, թթ. 5-6:
[3] Նույն տեղում, ց. 29, գ. 109, թթ. 40-45:

ռացնել խախտումները եւ մինչեւ նույն ամսի 25-ը ներկայացնել կատարած աշխատանքի մասին հաշվետվություն[1]:

1950-51թթ. գյուղարտելի կանոնադրության խախտման առթիվ ՀԿ/բ/Կ Կենտկոմն ընդունել է ընդամենը մեկ փաստաթուղթ: «Պայքարի» ժամանակավոր դադարեցումը բացատրվում է նրանով, որ կուսակցական եւ խորհրդային մարմինների ուշադրությունը բեւեռված էր կոլտնտեսությունների խոշորացման եւ «ագրոքաղաքների» հիմնախնդրին, սակայն 1952թ. վերադաս մարմինները դարձյալ անդրադառնում են կոլտնտեսությունների կանոնադրությանը: 1952թ. փետրվարի 8-ին ԽՍՀՄ նախարարների խորհուրդը եւ ՀամԿ/բ/Կ Կենտկոմն անդրադառնում են 1946թ. սեպտեմբերի 19-ի որոշման կատարման ընթացքին, թեեւ անցել էր ավելի քան հինգ տարի, իսկ փետրվարի 16-ին ընդունվում է «Կոլտնտեսությունների բնամթերային եւ դրամական եկամուտների բաշխման, հանրային տնտեսության ամրապնդման եւ զարգացման գործի ղեկավարման ասպարեզում եղած թերությունների եւ սխալների վերացման միջոցառումների մասին» որոշումը[2]:

Ըստ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի մարտի 22-ի որոշման՝ «կուսակցական եւ խորհրդային մարմիններն անբավարար են կատարում ԽՍՀՄ նախարարների խորհրդի եւ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի ցուցումները կոլտնտեսային սեփականությունը հափշտակումից պահպանելու հարցի գծով» եւ հանձնարարվում էր «կարճ ժամկետում վերացնել կոլտնտեսային սեփականության նկատմամբ եղած հանցավոր վերաբերմունքը, հանրային ունեցվածքի հափշտակումը եւ վատնումը, տարբեր անձնավորություններին մթերքի, անասունների եւ անասնակերի ձրի բացթողումը եւ չնչին գնով վաճառքը, անխնա պայքար վարել ամեն տիպի խաբեբաների եւ խարդախների դեմ, նրանց ենթարկել դատական պատասխանատվության՝ որպես քրեական հանցագործների՝ անվիճելի կերպով վերականգնելով նրանց կողմից կոլտնտեսություններին հասցրած վնասը»[3]:

Վերոհիշյալ որոշումները քննարկվում են Հայաստանի կուսակցական մարմիններում: Փետրվարի 8-ի որոշումը դառնում է Հայաստանի երեք նորաստեղծ՝ Երեւանի, Լենինականի եւ Կիրովականի օկրուգային կոմիտեների պլենումների քննարկման առաջին հարցը[4]: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն երկու անգամ անդրադառնում է փետրվարի 16-ի որոշմանը[5], իսկ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի մարտի 22-ի որոշումը դառնում է Կենտկոմի եւ բյուրոյի, պլենումի քննարկման առարկա[6]:

Քննելով միութենական եւ հանրապետական մարմինների որոշումները, կարելի է եզրակացնել, որ. 1. Կոլտնտեսային ունեցվածքը, անկասկած, ենթարկվել է հափշտակման եւ շռայլման, 2. Կուսակցական եւ խորհրդային մարմինները դրանք կանխելու համար դիմել են վարչական մեթոդների՝ տնտեսական լծակների փոխարեն:

Որպես ապացույց մեջբերենք մի հատված Գր.Հարությունյանի 1952թ. մայիսի 12-ին պլենումում ունեցած զեկուցումից. «Այն անձերի

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 85, թ. 1:
[2] Նույն տեղում, ց. 32, գ. 52, թթ. 74-77:
[3] Նույն տեղում, գ. 32, թ. 8:
[4] Նույն տեղում, ֆ. 2867, ց. 2, գ. 2, ֆ. 2869, ց. 1, գ. 3, ֆ. 2868, ց. 3, գ. 3:
[5] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 32, գ. 17, թ. 138, գ. 18, թ. 31:
[6] Նույն տեղում, գ. 9, թթ. 4-14, գ. 18, թթ. 87-88:

նկատմամբ, որոնք թույլ են տվել կոլտնտեսային շինարարության գծով կուսակցության քաղաքականության կոպիտ խեղաթյուրում, Կենտկոմի կողմից ձեռնարկվել են պատժի խիստ միջոցներ, ընդհուպ կուսակցությունից վտարումը եւ հանձնումը դատի»: Մասնավորապես, կուսակցությունից հեռացվել եւ դատի են տրվել Արտաշատի շրջկոմի երկու քարտուղար, աշխատանքից ազատվել են շրջկոմների 9 առաջին քարտուղար, շրջգործկոմների 3 նախագահ, այլ ղեկավար աշխատողներ: Կոլտնտեսային արտելի կանոնադրության խախտման համար կուսակցությունից հեռացվել է 523 կոմունիստ, նրանցից 149-ը՝ կոլտնտեսության նախագահ: «Սակայն, շարունակում է Գ.Հարությունյանը,- հանրապետության զգալի թվով կոլտնտեսություններում կրկին հայտնաբերվում են գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտման փաստեր, որոնք լուրջ վնաս են հասցնում կոլտնտեսությունների հանրային տնտեսությանը եւ խոչընդոտ հանդիսանում կոլտնտեսությունների հետագա ավելի արագ տնտեսական զարգացմանը եւ կազմակերպական ամրապնդմանը»[1]:

ԽՍՀՄ Գերգույն դատարանի պլենումը 1952թ. մայիսի 6-ին որոշում է, որ կոլտնտեսություններից անվճար կամ իջեցված գներով մթերքներ կամ հանրային անասուններ բաց թողնող նախագահները ենթակա են պատասխանատվության՝ որպես կոլտնտեսային ունեցվածքի հափշտակողներ՝ համաձայն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1947թ. հունիսի 4-ի «Պետական եւ հանրային ունեցվածքի հափշտակության համար քրեական պատասխանատվության մասին» հրամանագրի 2-րդ կամ 3-րդ հոդվածների[2]: Հուլիսի 11-ին ԽՍՀՄ Նախարարների խորհուրդն ընդունում է «Դատախազության մարմինների կողմից գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտման գործերի քննարկման քաշքշուկների փաստերի մասին» որոշում, նրանց հանձնարարվում էր գործերի քննարկումն ավարտել միամսյա ժամանակում, իսկ դրանից հետո խստորեն պահպանել գործերի հետաքննության ժամկետը[3]:

Իրականացված միջոցառումների մասին ՀամԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղար Գ.Մալենկովին հունիսի 4-ի զեկուցագրով Գ.Հարությունյանը հաղորդեց. «Գյուղարտելի կանոնադրության խախտման փաստերը լայնորեն ստուգելու եւ բացահայտելու համար Կենտկոմը բոլոր շրջաններում Կենտկոմի անդամներից եւ դատա-դատախազական ու ֆինանսական մարմինների պատասխանատու աշխատողներից կազմակերպեց հանձնաժողովներ: Կենտկոմի անդամների միջոցով ծավալվեցին հանրապետության բոլոր կոլտնտեսությունների միաժամանակյա ստուգումներ: Այդ ընթացքում հայտնաբերվեցին գյուղարտելի կանոնադրության խախտման բազմաթիվ փաստեր»: Պարզվում է, որ Հայաստանում տեղ են գտել գյուղարտելի կանոնադրության խախտման յուրահատուկ երեւույթներ, որոնց մասին խոսք չկա ՀամԿ/բ/Կ Կենտկոմի մարտի 22-ի որոշման մեջ: Դրանց թվում են կոլտնտեսությունների վարչությունների կողմից ոռոգման ջրի եւ էլեկտրաէներգիայի օգտագործման համար կոլտնտեսականների պարտքերի վճարումը: Հանրային միջոցների հաշվին կոլտնտեսությունները հաճախ փակել էին կոլտնտեսականների հարկերը եւ այլ

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 32, գ. 9, թթ. 6-7:
[2] Նույն տեղում, գ. 116, թ. 13:
[3] Նույն տեղում, թթ. 7-9:

վճարումները: Կոլտնտեսությունների կողմից հանրային անանսուններ էին հանձնվել կոլտնտեսականների մսամթերումների հաշվին եւ այլն[1]: Զեկուցագրում ներկայացվում էր, որ կոլտնտեսությունների 25 նախագահ եւ 283 այլ աշխատողներ հեռացվել էին աշխատանքից, որոնցից 202-ը ենթարկվել էին քրեական պատասխանատվության: Աշխատանքից ազատվել էր շրջկոմի մեկ քարտուղար, գործկոմի մեկ նախագահ, մեկական դատավոր ու դատախազ: Պատասխանատվության ենթարկված ղեկավար աշխատողների փոքր թիվը Գ.Հարությունյանը բացատրում էր նրանով, որ նախկինում արդեն խստագույն միջոցներ է ձեռնարկվել այդպիսի անձանց դեմ: Բերելով փաստեր, նա այնուհետեւ ափսոսանքով ավելացնում է, թե «ձեռնարկված միջոցառումները անբավարար են եւ խախտումները շարունակում են կրել զանգվածային բնույթ»[2]:

Հետպատերազմյան առաջին տարիներին խիստ բարձր մակարդակի վրա էր գտնվում պետական մթերումների չափաքանակը: Հաճախ պետությունը վերցնում էր կոլտնտեսությունների բերքի մեծ մասը, երբեմն՝ ամբողջը: ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը եւ ՀամԿ/բ/Կ Կենտկոմը 1946թ. հունիսի 26-ին սահմանում են ՀԽՍՀ հացամթերման չափաքանակը: Այն կազմելու էր 1988 հգ. փութ: ՀԽՍՀ Նախարարների խորհրդից եւ ՀԿ/բ/Կ Կենտկոմից պահանջվում էր «հացամթերումների սահմանված ծրագրի ճշտապահ եւ ազնիվ կատարում», քանզի կենտրոնական մարզերում եղանակի անբարենպաստ պայմանների պատճառով հացամթերումների տարեկան ծրագիրը իջեցվել է: Ուստի, հանրապետությունում հացամթերման ծրագրի կատարման համար անձամբ պատասխանատու էին Նախարաների խորհրդի նախագահը եւ Կենտկոմի առաջին քարտուղարը[3]:

Մթերվող հացը պահպանելու, վատնումից, հափշտակումից, փչացումից ապահովելու համար ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը եւ ՀամԿ/բ/Կ Կենտկոմը 1946թ. հուլիսի 27-ին եւ հոկտեմբերի 25-ին ընդունում են համապատասխան որոշումներ, որոնցով հանրապետական եւ տեղական իշխանության մարմիններին հանձնարարվում է խստագույնս ապահովել հացի պահպանումը եւ մեղավորներին պատժի ենթարկելը[4]:

Սակայն նույնիսկ խստագույն որոշումները անկարող էին արգելել կոլտնտեսականներին, հացի փոխադրումով եւ պահպանումով զբաղված աշխատողներին՝ կիսաքաղց գոյությունը պահպանելու համար դիմել ցանկացած միջոցի: Ինչպես նշված է Ստալինի եւ Ժդանովի ստորագրությամբ 1946թ. նոյեմբերի 26-ի հանրապետությունների ղեկավարներին ուղղված հեռագրում, «մի շարք կոլտնտեսություններում հակապետական տարրերը արգելակում են հացամթերքի կալսումը եւ զտումը, մեծաքանակ հացահատիկ են թողնում, այսպես կոչված, թափուկներում, դիտավորյալ կատարում են անորակ կալսում, մեծաքանակ հացահատիկ են թողնում ծղոտի հետ, չկալսած հացը թաքցնում են դեզերում, իսկ տեղական կուսակցական եւ խորհրդային, ինչպես նաեւ դատական եւ դա-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց.32, գ. 49, թթ. 229-230:
[2] Նույն տեղում, թ. 232-234:
[3] Նույն տեղում, թթ. 417-418:
[4] Նույն տեղում, թթ. 429-433, 686-687:

տախազական մարմինները լռությամբ անցնում են այդ հանցագործությունների կողքով»[1]:

Գյուղացու ստացած բերքի մինչեւ վերջին հատիկը պետությանը հանձնելն ապահովելու համար իշխանության մարմինները դիմում էին ցանկացած միջոցի: Թվարկենք դրանցից մի քանիսը: ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը հուլիսի 31-ին ընդունում է «Հացի եւ արեւածաղկի առեւտուրը արգելելու մասին մինչեւ դրանց մթերման ծրագրի կատարումը» որոշումը, որով կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին եւ մենատնտեսներին արգելվում էր հացահատիկի, ալյուրի, թխած հացի եւ արեւածաղկի վաճառքն ու փոխանակումը մինչեւ պետական ծրագրի կատարումը[2], սեպտեմբերի 13-ին ընդունվում են «Սպեկուլյացիայի դեմ պայքարը ուժեղացնելու մասին»[3], իսկ հոկտեմբերի 4-ին՝ «Հացամթերումները ուժեղացնելու միջոցառումների մասին» որոշումներ: Հայաստանի համար սահմանվում էր 200 հազար փութ բնամթերային վճար, միաժամանակ սահմանվում է կոլտնտեսությունների եւ խորհրդային տնտեսությունների կողմից պետությանը հացի լրացուցիչ հանձման ծրագիր, որով Հայաստանի համար սահմանվում էր եւս 200 հազար փութ[4]:

Սակայն հայ գյուղացու համար ճակատագրական եղավ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի եւ ՀԱԿ/բ/Կ Կենտկոմի 1946թ. նոյեմբերի 14-ի որոշումը, որով հացամթերումների ծրագիրը կատարած կոլտնտեսությունների, կոլտնտեսականների եւ մենատնտեսների համար սահմանվեց լրացուցիչ 400 հազար փութ հացահատիկի պարտադիր գնման ծրագիր[5]:

ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն նոյեմբերի 16-ին ընդունում է համապատասխան որոշում, որով բոլոր ղեկավար աշխատողները, ներառյալ Կենտկոմի առաջին քարտուղարը եւ Նախարարների խորհրդի նախագահը, գործուղվում են շրջաններ՝ հացամթերման գործում «օգնություն» ցույց տալու համար[6]: 20 օր անց Գ.Հարությունյանը զեկուցում է Ստալինին, որ հացի պարտադիր գնման ծրագիրը կատարված է 101 տոկոսով եւ խնդրում թույլատրել Հայաստանում հացի ազատ վաճառքը[7]:

Ձեռնարկված միջոցառումները չկարողացան կանխել հացահատիկի հափշտակումը: Համաձայն ՆԳՆ զեկուցագրի, 1946թ. նոյեմբերի 10-ից 20-ը այդ հանցակազմով քրեական պատասխանատվության են ենթարկվել 132 մարդ, նրանցից բռնագրավվել է 16211 կգ հացամթերք, 292 կգ արեւածաղիկ[8]:

1947թ. հուլիսի 7-ին ՀԱԿ/բ/Կ Կենտկոմը եւ ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը հաստատում են ՀԽՍՀ հացամթերումների պետական ծրագիրը: Այն սահմանվում է 2278 հզ. փութ[9]: Պետական ծրագրի ավելացումը բացատրվում էր անհրաժեշտ պետական պահուստներ ստեղծելու պահանջով, որը երկիրն ապահովագրելու էր եղանակի քմահաճույքներից, հնարավորություն էր տալու վերացնել հացի վաճառքի քարտային

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ.115, թ. 335:
[2] Նույն տեղում, գ. 46, թթ. 471-472:
[3] Նույն տեղում, գ. 102, թ. 522:
[4] Նույն տեղում, գ. 46, թթ. 664-665:
[5] Նույն տեղում, գ. 38, թ. 44:
[6] Նույն տեղում, գ. 22, թթ. 110-112:
[7] Նույն տեղում, գ. 48, թ. 442:
[8] Նույն տեղում, գ. 102, թ. 498:
[9] Նույն տեղում, ց. 27, գ. 51, թթ. 281-283:

համակարգը եւ ապահովել երկրի տնտեսական անկախությունը: Դարձյալ ոչ մի խոսք հացի իրական արտադրողի՝ գյուղացու մասին: Կոլտնտեսություններում երաշխավորված վարձատրության բացակայումը, գյուղացու տնտեսության հսկայական հարկերը, սովը հանգեցրին գյուղից զանգվածային փախուստի: Սովից կուրուստը եւ նրա հետ կապված հիվանդությունների ընդհանուր քանակը երկրում 1947-48թթ. կազմեց մոտավորապես երեք միլիոն մարդ, որոնցից մոտ մեկ միլիոնը մահացան: Եվ դա միայն Ռուսաստանի Դաշնությունում[1]:

ԽՍՀՄ Կենտվիճվարչության տվյալներով հացահատիկի պետական պահուստները լրիվ կբավարարեին ապահովելու սովյալ շրջաններին. 1946թ. այն 10,1 մլն. տոննա էր, 1949թ. 18,8 մլն.: Ուրեմն, խնդիրը ոչ թե հացի, այլ նրա բաշխման եւ իր ժողովրդի նկատմամբ կառավարության վերաբերմունքի մեջ էր: 1947թ., երբ երաշտի հետեւանքները զգացվեցին ավելի խստորեն, հացի արտահանումը նախորդ տարվա 0,4 մլն. տոննայից հասավ 2,4 մլն.: Հաց էր մատակարարվում Բուլղարիային, Ռումինիային, Լեհաստանին, Չեխոսլովակիային:

Իսկ գյուղում շարունակվում էր սովը: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն 1948թ. աշխատանքից ազատել է Կենտկոմի առեւտրի եւ հասարակական սննդի բաժնի վարիչ Վ.Վարտազարովին՝ նրա մի շարք «սխալ» ելույթների համար: Կենտկոմի բյուրոյում, երբ քննարկվում էր հացի խնայողաբար օգտագործման մասին հարցը, նա, ի տարբերություն ՀամԿ/բ/Կ Կենտկոմի ցուցումների, պահանջում է երկրի կառավարության առաջ հարց բարձրացնել Հայաստանի համար հացի ֆոնդերն ավելացնելու մասին, իսկ Երեւանի կուսակտիվի ժողովում հայտարարում է, որ Հայաստանի գյուղերում սով է, որ դրա պատճառով գյուղացիները լցվել են քաղաք եւ ստեղծել մեծ հերթեր[2]:

1949թ. դեկտեմբերի 7-ին ՀԽՍՀ պետանվտագության նախարարը հատուկ հաղորդագրությունով հայտնում է Կենտկոմ, որ նախարարության տվյալներով, անբերրիության եւ նյութական դժվարությունների պատճառով Թալինի շրջանից, առանց համապատասխան թույլտվության, հանրապետության այլ քաղաքներ ու շրջաններ են մեկնել բազմաթիվ մարդիկ, 12 գյուղերից՝ 520 ընտանիք եւ 531 անհատներ: Նույն պատճառով Բասարգեչարի շրջանից Ադրբեջան էին մեկնել 365 ընտանիք[3]: Ղուկասյանի եւ Ամասիայի շրջաններից 1948-1950թթ. «ինքնագլուխ» հեռացել էր 1421 ընտանիք[4]:

Հայաստանը 1947թ. հացամթերման ծրագիրը եւս կատարում է: Գ.Հարությունյանը սեպտեմբերի 16-ին զեկուցում է Ստալինին՝ մթերումները ժամկետից շուտ կատարելու եւ լրացուցիչ, որպես կանխավարձ, 250 հզ. փութ հացահատիկ հանձնելու մասին[5]:

1947թ. բարենպաստ եղանակային պայմանների, առատ բերքի եւ ստեղծված պետական պաշարների շնորհիվ դեկտեմբերի 14-ին ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը եւ ՀամԿ/բ/Կ Կենտկոմը որոշեցին արդյունա-

---

[1] Новейшая история Отечества. XX век, с. 251.
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 100, թ. 119:
[3] Նույն տեղում, ց. 29, գ. 100, թթ. 41-42:
[4] Նույն տեղում, ց. 31, գ. 106, թ. 13:
[5] Նույն տեղում, ց. 27. գ. 50, թ. 176:

բերական ու պարենային ապրանքների քարտերը վերացնել, ինչպես նաեւ դրամական ռեֆորմ անցկացնել[1]:

Սակայն, չնայած հացամթերումների ծավալի աճին, հացահատիկի բերքատվությունը մնում էր ցածր: 1949թ. Հայաստանում հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 10,8 ցենտներ[2], 1947-48թթ. միջին 12,2 ցենտների փոխարեն: 1949թ. վերջին կոլտնտեսությունների տնտեսական եւ ֆինանսական վիճակն այնքան վատացավ, որ կառավարությունը ստիպված եղավ մշակել մի շարք բարեփոխումներ: 1950-51թթ. անցկացվեցին բանավեճեր գյուղատնտեսական քաղաքականության անհրաժեշտ միջոցառումների մասին: Ագրարային քաղաքականության ղեկավար Անդրեեւին փոխարինեց Խրուշչովը:

Հայաստանում հացի հիմնախնդրի լուծումը փորձեցին լուծել ցանքատարածությունների ծավալի ավելացմամբ, էքստենսիվ եղանակով: ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը 1950թ. մայիսի 30-ին որոշեց Հայաստանում ցորենի արտադրությունն ավելացնել եւ խնդիր դրեց հացի պահանջն ապահովել սեփական արտադրության հաշվին[3]: Չնայած հացամթերումների պարբերական աճին՝ 1950թ. հանրապետության հացի պահանջի միայն 30 տոկոսը բավարարվեց սեփական արտադանքով, մնացածը ներմուծվեց այլ հանրապետություններից[4]:

Խորհրդային կառավարությունը հացահատիկի արտադրությունն ավելացնելու համար որոշեց հանրապետության կոլտնտեսություններում հացահատիկի ցանքատարածությունները 280 հազար հեկտարից մինչեւ 1957թ. հասցնել 460 հզ. հա, իսկ բերքատվությունը 1957թ. պետք է հասցվեր 22-25 ցենտների: 150 հզ. հա վարելահողերի տարածության ընդարձակումը կատարվելու էր ի հաշիվ արոտավայրերի հերկման՝ 96 հազար հա եւ նոր ոռոգվող հողերի յուրացման՝ 53 հզ. հա: Իսկ բերքատվության բարձրացման համար նախատեսվում էր լայնորեն օգտագործել հանքային պարարտանյութեր:

Կառավարությունը նոր ոռոգվող հողերի յուրացման համար որոշեց 1951-55թթ. վերաբնակեցնել 11 հզ. գյուղացիական տնտեսություններ՝ հիմնականում լեռնային շրջաններից: Մայիսի 30-ին ՀամԿ/բ/Կ Կենտկոմն որոշեց խոշորացնել մանր կոլտնտեսությունները, որի հիման վրա ԽՍՀՄ նախարարների խորհուրդը հունիսի 7-ին ընդունեց միջոցառումների ծրագիր[5]:

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում այն իրագործվեց շատ արագ: Կոլտնտեսությունների թիվը 1948թ. 1043-ից 1950թ. վերջին իջավ 666-ի: 1951թ. մարտի 4-ին «Պրավդան» հրապարակեց «ագրոքաղաքների» ստեղծման նախագիծը, որով Խրուշչովը հանդես էր եկել հունվարին մի ելույթում: Ագրոքաղաքը իսկական քաղաք էր լինելու, ուր գյուղացին բազմահարկ շենքում պետք է վարեր քաղաքային կյանք: Դրանով վերջ էր տրվելու գյուղացիությանը, լուծվելու էր քաղաքի ու գյուղի տարբերությունը: Հաջորդ օրը «Պրավդան» ճշտեց, որ խոսքը ոչ թե ծրագրի, այլ բանավեճ սկսելու մասին է:

---

[1] "Правда", 1947, 15 декабря.
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց.29, գ.85, թթ. 5-7:
[3] Նույն տեղում, ց. 30, գ. 6, թ. 123:
[4] *Գր. Հարությունյան*, Հաշվետու զեկուցում ՀԿ/բ/Պ XV համագումարում, էջ 31-32:
[5] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 30, գ. 59, թթ. 84-85:

Գ.Հարությունյանը լավ հասկացավ, թե ինչի կնմանվեր Հայաստանն առանց գյուղերի: Նա վճռականորեն հանդես եկավ այդ ծրագրի դեմ: 1951թ. մարտի 20-ին բացվեց ՀԿ/բ/Կ 15-րդ համագումարը: Մեջբերենք նրա ներկայացրած հաշվետվությունից. «Ամենից առաջ ագրոքաղաքների, այդ հիբրիդների մասին: Առաջարկում են ագրոքաղաքներ կառուցել, բայց չեն բացատրում, թե ինչ տարբերություն պետք է լինի գյուղի ու ագրոքաղաքի կամ ագրոքաղաքի ու քաղաքի միջև: Ինձ թվում է, որ այդ առաջարկների մեջ կա ավելի շատ ֆանտաստիկա, քան կոլխոզային գյուղի ռեալ պառանջները: Նույնը կարելի է ասել նաև այն մասին, թե իբր բնակավայրերի գյուղ անունը այլևս չի բավարարում կոլխոզնիկներին և հարկավոր է նոր անուն հորինել: Մանր կոլխոզների բնակչությունը մեկ խոշորացված գյուղում վերաբնակեցնելու կողմնակիցների սխալը, ինչպես էլ նրանք անվանում են այդ խոշոր գյուղը՝ ագրոքաղաք թե կոլխոզային ավան, այն է, որ նրանք մանր կոլխոզները, իբրեւ արտադրական միավորներ, մեկ խոշոր կոլխոզային տնտեսության մեջ միավորելու պատմական անհրաժեշտությունը մեխանիկորեն նույնացնում են մանր գյուղերը մեկ խոշոր գյուղի մեջ միավորելու հարցի հետ: .Ես կանգ չեմ առնում անընդունելի այլ հարցերի վրա, ինչպես, օրինակ, գյուղերում երեք-չորս բնակարանից բաղկացած երկհարկ շենքերի կառուցումը կամ տնամերձ հողամասերի կրճատումը, գտնելով, որ այդ հարցերը բոլորի համար պարզ են, ըստ էության հակասում են գյուղատնտեսական արտելի կանոնադրությանը եւ չեն համապատասխանում հանրային կոլխոզային տնտեսության զարգացման շահերին»[1]:

Խորհրդային երկրում միջոցառումներ անցկացնելիս բացասական հետեւանքների մասին չէին մտածում, այդ մասին սկսում էին խոսել դրանց երեւան գալուց հետո միայն: Արդեն 1950թ. վերջին նախապատրաստական աշխատանքներ սկսվեցին «ագրոքաղաքների» շինարարության համար: Ձեռնարկվեց առաջին 23 ագրոքաղաքների նախագծումը, հատկացվեցին հողատարածքները: Ագրոքաղաքների շինարարության համար Հայգյուղշինի 1951թ. աշխատանքի ծրագրերում նախատեսվել էր 1.500 հզ. ռուբլի[2]: Սակայն շուտով կենտրոնը հասկացավ առանց խորը ուսումնասիրությունների եւ հեռանկարների կանխատեսման ընդունած որոշումների կենսագործման արդյունքում երեւան եկած բացասական երեւույթների շուտափույթ վերացման անհրաժեշտությունը: Արդեն ապրիլի 2-ին ՀամԿ/բ/Կ Կենտկոմը «Կոլտնտեսային շինարարության խնդիրների մասին, կապված մանր կոլտնտեսությունների խոշորացման հետ» փակ նամակ է տարածում, որով որերորդ անգամ փորձ էր արվում սխալ քաղաքականությունը բարդել տեղական կազմակերպությունների վրա: Սխալ էր համարվում ագրոքաղաքների ստեղծումը, տնամերձ հողամասերի չափի ու անձնական օգտագործման անասունների գլխաքանակի նվազեցումը: Սակայն կոլտնտեսությունների խոշորացումը համարվում էր ճիշտ եւ հանձնարարվում էր վերացնել տեղ գտած թերությունները[3]: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն ապրիլի 7-ին քննարկում է այն եւ հանձնարա-

---

[1] *Գր. Հարությունյան*, Հաշվետու զեկուցում ՀԿ/բ/Պ XV համագումարում, էջ 54-56:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 31, գ. 298, թթ. 177-178:
[3] Նույն տեղում, գ. 30, թ. 176:

ռում շրջկոմների պլենումներում ընդունել համապատասխան միջոցառումներ[1]:

1951թ. մայիսին Հայաստանի գյուղատնտեսության հիմնախնդիրներին նվիրված մի շարք խմբագրականներ է հրապարակել «Հայրենիք» թերթը: Թերթը գտնում էր, որ հացահատիկի ցանքատարածությունները ավելացնելու եւ բերքատվությունը բարձրացնելու ուղղությամբ խորհրդային կառավարության ծրագրերն անիրագործելի են: Ապա կասկած էր հայտնում՝ եթե նույնիսկ ավելացվեն հացահատիկի ցանքատարածությունները, Հայաստանը երբեւիցե կկարողանա՞ իրեն ապահովել անհրաժեշտ հացով[2]: Գյուղարտելի կանոնադրության խախտումների հարցի կապակցությամբ թերթը կատարել է հետաքրքիր վերլուծություն: Հայ գյուղացին, պարզաբանում էր թերթը, կապված կոլտնտեսությանը, ստիպված է իր քրտինքով կերակրել կուսակցա-պետական անգործունյա եւ ծրիակեր ղեկավարների այնպիսի մեծ բանակ, որի նմանը չկա ոչ մի այլ երկրում: Նա հնարավորություն չունի օրինական կարգով ավելացնելու իր հողակտորը, նույնիսկ մի բուռ ավել հացահատիկ հավաքելու համար: Մթերքների պետական գնումների ցածր գները համարում էր բացասական երեւույթ, քանզի գյուղացին, շուկա հանելով իր մթերքների ավելցուկը, չի դիմանում կառավարական ցածր գների հետ մրցակցությունը եւ ստիպված է իր մթերքը նույնպես վաճառել ցածր գներով[3]:

Հայաստանում գյուղատնտեսության մեջ դրական տեղաշարժեր, այնուամենայնիվ, կատարվում էին: Դա նկատելի էր գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրիֆիկացման, ջրաշինարարական աշխատանքների, ճահճակալած հողերի յուրացման բնագավառներում: Բայց միաժամանակ, կենսագործելով Հայաստանը հացի սեփական արտադրությամբ ապահովելու մասին որոշումը, հերկվեցին դարավոր խոտհարքներ եւ ամառային արոտավայրեր: Ղեկավար ցուցումները, առանձին բացառություններով, կատարող Գր.Հարությունյանը ՀԿ/բ/Կ 15-րդ համագումարում /1951թ./ Հայաստանի գյուղատնտեսության գլխավոր խնդիրը համարում էր «պայքարը ցորենի համար»[4]: Կյանքն ապացուցեց, որ լեռնային Հայաստանը երբեք չի կարող իրեն ապահովել սեփական հացով, իսկ նշված չհիմնավորված միջոցառումը մեծ վնաս հասցրեց հանրապետության գյուղատնտեսությանը: Ստալինի մահից հետո, նոր ղեկավարությունը, ճիշտ գնահատելով ստեղծված իրավիճակը, 1953թ. մայիսի 8-ին չեղյալ հայտարարեց Հայաստանում եւ Անդրկովկասի մյուս հանրապետություններում հացահատիկի արտադրությունն ավելացնելու մասին 1950թ. որոշումները[5]:

1953թ. Բերիայի վերացումից հետո, ԽՄԿԿ Կենտկոմում առաջացան լուրջ տարաձայնություններ, որոնք վերաբերում էին տնտեսության եւ հասարակության դերի փոփոխություններին: Տնտեսության մեջ հակադրվեցին թեթեւ արդյունաբերության զարգացման ռազմավարությունը, որը պաշտպանում էր Մալենկովը, եւ Խրուշչովի առաջարկած գյուղատնտեսության ու ծանր արդյունաբերության «միությունը»:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 31, գ. 30, թ. 179:
[2] «Հայրենիք», Բոստոն, 1951, 18 մայիսի:
[3] «Հայրենիք», Բոստոն, 1951, 20 մայիսի:
[4] *Գ. Հարությունյան*, Հաշվետու զեկուցում ՀԿ/բ/Պ XV համագումարում, էջ 33:
[5] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 51, թթ. 32-33:

Հանրապետության գյուղատնտեսության վիճակը որոշ չափով բարելավվեց: Սակայն այն շարունակում էր մնալ ծանր: 1955թ. հանրապետությունում հացահատիկի ցանքատարածությունները կազմեցին 305,9 հզ. հա, իսկ եգիպտացորենինը՝ 14,8 հզ. հա: Հացահատիկի միջինը բերքատվությունը կազմեց 8,1 ցենտներ, նախորդ տարվա 5,3 ցենտների դիմաց: Հացահատիկի ընդհանուր բերքը կազմեց 247,8 հզ. տոննա[1]:

Գյուղատնտեսության արտադրության ուժը եւ պետգնումների գների բարձրացումը փոքր-ինչ ավելացրին հանրապետության կոլտնտեսությունների եկամուտները: 1954-55թթ. դրանք համապատասխանաբար կազմեցին 592,9 մլն. եւ 610 մլն. ռուբլի: Որոշ չափով բարձրացավ կոլտնտեսականների աշխօրի արժեքը: Այն 1954թ. միջին հաշվով կազմում էր 8 ռուբլի 80 կոպեկ, իսկ 1955թ. հասավ 10 ռուբլու: 1955թ. հանրապետությունում մեկ կոլտնտեսականը միջին հաշվով վաստակել էր 245 աշխօր, այսինքն տարեկան եկամուտը կազմել էր 2450 ռուբլի[2]: Համեմատության համար նշենք, որ բանվորի տարեկան միջին աշխատավարձը կազմում էր 10-12 հազար ռուբլի:

Գյուղատնտեսության համակարգի բարելավմանն ուղղված բարեփոխումները հանգեցնում էին կա՛մ ձեւավորված կառուցվածքների կատարելագործման, կա՛մ նրա առանձին բաղադրամասերի ապամոնտաժման փորձերի:

3. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Խաղաղության հաստատումով սկսվեց զինվորների ու սպաների զանգվածային զորացրում: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանը 1945թ. հունիսի 23-ին ընդունեց «Գործող բանակի անձնակազմի մեծահասակների զորացրման մասին» օրենքը, որն ունեցավ տնտեսական մեծ նշանակություն. ժողովրդական տնտեսությունը համալրվեց մեծաքանակ աշխատողներով: Զորացրվածներին կազմակերպված ընդունելու եւ աշխատանքի տեղավորելու հարցը քննարկվեց ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի հունիսի 30-ի նիստում: Որոշվեց ստեղծել զորացրվածներին աշխատանքի տեղավորելու շրջանային հանձնաժողովներ[3]:

Հանրապետությունում զորացրվածների ընդունումը եւ տեղավորումն օրինակելի կազմակերպելու նպատակով հուլիսի 3-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմում հրավիրվեց հատուկ խորհրդակցություն քաղկոմների եւ շրջկոմների կադրերի գծով քարտուղարների մասնակցությամբ: Զորացրվածների ընդունման, զոհվածների ու հաշմանդամների ընտանիքների նյութական-կենցաղային սպասարկման խնդիրները քննարկվեցին նաեւ տեղական մարմիններում ու կազմակերպություններում[4]:

Զորացրվածներին արագ աշխատանքի տեղավորման նպատակով ՀԿ/բ/Կ Կենտկոմը ձեռնարկություններում ու կազմակերպություններում անցկացրեց թափուր պաշտոնների հաշվառում: 1945թ. հոկտեմբերի 20-ի դրությամբ Հայաստան էին վերադարձել զորացրված 7716 մարդ, նրանցից աշխատանքի էին տեղավորվել 7554 մարդ: Աշխատանքի

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 35, գ. 45, թ. 197:
[2] Նույն տեղում, թ. 207:
[3] Նույն տեղում, ց. 25, գ. 35, թ. 50:
[4] Նույն տեղում, ց. 034, գ. 45, թթ. 205-207:

տեղավորելուց բացի, կազմակերպվում էին զորացրվածների որակավորման բարձրացման դասընթացներ: Ուսուցչական երկամսյա դասընթացներին մասնակցեց 214 մարդ: Գործում էին կինոմեխանիկների, կոշկակարների, դերձակների, հաշվապահների եւ հաշվետարների դասընթացներ:

1946թ. փետրվարին հանրապետություն էին վերադարձել 24191 զորացրվածներ, որոնցից աշխատանքի էր տեղավորվել 23690: Նրանցից կոլտնտեսությունների վարչությունների նախագահներ էին աշխատում 92, դաշտավարական բրիգադի բրիգադավար՝ 657, ֆերմայի վարիչ՝ 252, գյուղատնտեսության մասնագետ՝ 282, կոլտնտեսությունների հաշվետարական աշխատող՝ 219, ուսուցիչ՝ 607, կոլտնտեսությունների մեքենավարներ՝ 210, գյուղխորհուրդների նախագահներ ու քարտուղարներ՝ 388, հիմնարկների ու ձեռնարկությունների ղեկավարներ՝ 82 մարդ: Կուսակցական, խորհրդային եւ տնտեսական մարմինները լրջորեն զբաղվում էին զորացրվածների նյութական ու կենցաղային պայմանների բարելավմամբ: Զորացրվածներին բաց թողնվեց միանվագ օգնություն՝ 331,7 հզ. ռուբլի, 2864 զույգ կոշիկ, 8126 մետր կտորեղեն, 15769 հատ պատրաստի հագուստ եւ 6418 կտոր օճառ: Կոլտնտեսությունների եւ ձեռնարկությունների միջոցներով վերանորոգվեցին 1273 զորացրվածի բնակարաններ 126 զորացրված ստացան բնակարան: Կոլտնտեսությունների կողմից նրանց բաց թողնվեց 3146 ցենտներ հացահատիկ, 1815 ցենտներ կարտոֆիլ, 3194 կգ կարագ, 2976 կգ պանիր եւ 917 ցենտներ այլ մթերք: Հատուկ օժանդակության էին արժանանում Հայրենական պատերազմի հաշմանդամները եւ զոհվածների ընտանիքները: 1946թ. սկզբին հանրապետությունում հաշվառված էր 28316 հաշմանդամ, որոնցից 421 առաջին, 13256 երկրորդ եւ 14639 երրորդ խմբի: Հաշմանդամների ընդհանուր թվից տնտեսության տարբեր բնագավառներում աշխատում էր 25125 մարդ, մնացածները առաջին եւ երկրորդ կարգի հաշմանդամներն էին: Աշխատանքի տեղավորված հաշմանդամներից գյուղխորհուրդների նախագահ էին աշխատում 208, կոլտնտեսությունների նախագահ՝ 181, դաշտավարական բրիգադի բրիգադավար՝ 1136, ֆերմայի վարիչ՝ 492, դպրոցի դիրեկտոր՝ 226, ուսուցիչ՝ 1159, կուսակցական-կոմերիտական աշխատանքում՝ 246, ձեռնարկությունների ղեկավարներ՝ 493 մարդ[1]:

Լուրջ ուշադրություն էր դարձվում հաշմանդամներին նոր մասնագիտություններ ուսուցանելու ուղղությամբ: 1945թ. ընթացքում պատերազմի 2923 հաշմանդամներ տարբեր մասնագիտություն էին ստացել կազմակերպված դասընթացներում: 1946թ. սկզբին դասընթացներում սովորում էր 1035 հաշմանդամ: Հաշմանդամներին ու զոհվածների ընտանիքներին տրվում էր նյութական օգնություն, սննդամթերք, հագուստ, վառելանյութ: Օժանդակ տնտեսություն ստեղծելու համար 1945թ. ընթացքում կոլտնտեսությունները նրանց հատկացրին 989 խոշոր եւ 1690 գլուխ մանր եղջերավոր անասուն[2]:

Սակայն կային նաեւ լուրջ դժվարություններ զորացրվածներին աշխատանքի տեղավորելու, բնակարանով ապահովելու եւ կենցաղային այլ խնդիրների լուծման բնագավառում: Դժվարությունները մեծ էին մաս-

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 48, թթ. 53-55:
[2] Նույն տեղում, թթ. 55-56:

նավորապես քաղաքացիական մասնագիտություն չունեցող զորացրված սպաների գծով: Ավելի ծանր էր բնակարանային հարցը:

1946թ. հունիսի 20-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք բանակի անձնակազմի երրորդ հերթի զորացման մասին: ՀԽՍՀ զինկոմիսարիատի տվյալներով հանրապետություն վերադարձավ 3-րդ հերթի զորացրված 4054 մարդ: Զորացրվածների տեղավորման եւ նրանց շրջանում տարվող աշխատանքի հարցերը քննարկեց ՀԿ/բ/Կ Կենտկոմի 1946թ. հունիսյան պլենումը[1]:

1946թ. ընդունված հնգամյա ծրագրի մասին օրենքով նախատեսվում էր նույն թվականին վերացնել բնակչությանը առաջին անհրաժեշտության ապրանքներով սահմանափակ մատակարարումը: Սակայն ահավոր երաշտը հնարավորություն չտվեց 1946թ. վերացնել քարտային համակարգը: Բնակչության մի հոծ զանգված չէր ստանում նույնիսկ նախատեսված չափաբաժին սննդամթերքը: Վատ բերքի պատճառով միութենական մարմինների որոշմամբ 1946թ. նոյեմբերի 1-ից փոխվեց հացի որակը (դեպի վատը), նաեւ քարտային չափաբաժինը, իսկ հանրապետությունների հաց ստացող բնակչության քանակը ըստ ամիսների հաստատվելու էր ԽՍՀՄ Նախարարների խորհրդի կողմից[2]:

Հանրապետությունում կրճատվեց հացի քարտ ստացողների թիվը: Այն 1946թ. դեկտեմբերին քաղաքներում եղել է 410 հզ., իսկ 1947թ. փետրվարին նվազել է մինչեւ 398 հզ., համապատասխանաբար կրճատվել էր ալյուրի ծախսը[3]:

Հացի պակասությունը բացի սովից, ծնում էր մասնավորապես սպեկուլյացիա: Չնայած ԽՍՀՄ Նախարարների խորհրդի սեպտեմբերի 13-ին ընդունած «Սպեկուլյացիայի դեմ պայքարն ուժեղացնելու մասին» որոշմանը, միայն 1946թ. հոկտեմբերին ՆԳՆ մարմինների կողմից սպեկուլյացիայի համար 103 մարդու նկատմամբ հարուցվել էր 70 քրեական գործ, նրանցից 77-ի ծերբակալությամբ[4]:

Սպեկուլյացիայի տարածված եղանակներից էր կոլտնտեսականների մթերքների վերավաճառքը, անօրինական ու կեղծ քարտերով ծեռք բերած հացի բարձր գնով իրացումը:

1947թ. բարենպաստ եղանակային պայմանների, լավ բերքի եւ ստեղծված պետական պահուստների շնորհիվ ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը եւ ՀամԿ/բ/Կ Կենտկոմը դեկտեմբերի 14-ին որոշում ընդունեցին դրամական ռեֆորմ անցկացնելու եւ արդյունաբերական ու պարենային ապրանքների քարտերը վերացնելու մասին[5]:

Դրամական ռեֆորմի հետ միաժամանակ դեկտեմբերի 16-ից վերացվեց պարենային եւ արդյունաբերական ապրանքների մատակարարման քարտային համակարգը: Ապրանքների վաճառքը կատարվելու էր բաց առեւտրի կարգով: Մթերքների գոյություն ունեցող առեւտրական /ազատ ու բարձր/ եւ նորմավորված /քարտով ու ցածր/ գների փոխարեն մտցվեցին պետական միասնական մանրածախ գներ: Արդյունաբերական ապրանքների գները սահմանվեցին ազատ վաճառքի գներից 3,2 անգամ

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 1, թ. 18:
[2] Նույն տեղում, գ. 46, թթ. 680-683:
[3] Նույն տեղում, գ. 48, թթ. 2, 119:
[4] Նույն տեղում, գ. 102, թ. 523:
[5] "ПРАВДА", 1947, 15 декабря.

ցածր: Ոգելից խմիչքների գները պահպանվեցին գործող /ազատ/ գների սահմաններում: Դրամական ռեֆորմի ժամանակ աշխատավարձերի եւ թոշակների չափերը մնում էին անփոփոխ: Հայաստանի «գյուղերում եւ քաղաքներում տեղի ունեցան աշխատավորության խանդավառ միտինգներ ու ժողովներ՝ նվիրված պատմական որոշմանը, աշխատավորները ջերմորեն ողջունում էին դրամական ռեֆորմը եւ քարտային սիստեմի վերացումը, որը երջանիկ ու լիառատ կյանքի նոր հեռանկարներ էր բացում մեր երկրում»[1]: Միաժամանակ փողոցներում եւ մտերմական շրջապատում հնչել են նաեւ այլ կարգի խոսակցություններ: Մի երկրաբան դժգոհ հայտարարել է. «Դրամի փոխանակումը տասը մեկի հարաբերությամբ անարդարացի է: Սպեկուլյանտներն ելք կգտնեն, իսկ իմ ունեցվածքը կորավ»: Հատկապես մեծ դժգոհություն կար հայրենադարձների շրջանում, նրանք չէին հավատում նյութական դրության իրական բարելավմանը[2]:

Որ խորհրդային շատ քաղաքացիներ, հատկապես պաշտոնյա, պատրաստ չէին «զոհողությունների», վկայում են այն զեղծումները եւ չարաշահումները, որ կատարվեցին դրամական ռեֆորմի ընթացքում: ՀԿ(բ)Կ Կենտկոմն անդրադարձավ այդ չարաշահումների հարցին՝ պատժելով մեղավորներին:

Դրամական ռեֆորմի հետ ԽՍՀՄ նախարարների խորհուրդը եւ ՀամԿ/բ/Կ Կենտկոմը դեկտեմբերի 23-ին որոշեցին 1948թ. հունվարի 1-ից խորհրդաչին եւ կուսակցական ղեկավար աշխատողների անվճար պարենային եւ արդյունաբերական ապրանքների բացթողումը վերացնել[3]: Սակայն խորհրդային կառավարությունը չէր կարող հուսախաբ անել արտոնությունների սովոր խորհրդային ընտրախավին եւ դրա փոխարեն սահմանվեց լրացուցիչ դրամական բավարարում՝ ամսական երկուսից մինչեւ երեք աշխատավարձի չափով[4]:

ՀԿ/բ/Կ Կենտկոմը դեկտեմբերի 25-ին քննարկեց ղեկավար աշխատողների դրամական բավարարության հարցը եւ հաստատեց այն ղեկավար աշխատողների ցուցակները /20 կուսակցական եւ 46 խորհրդային/, որոնք լրավճարի արտոնություն ունեին: Ամսական 1800 ռուբլի աշխատավարձ ստացող Կենտկոմի առաջին քարտուղարը, Նախարարների խորհրդի, Գերագույն խորհրդի եւ Պետպլանի նախագահները ստանալու էին եւս 5400 ռուբլի լրավճար, 1500-1600 ռուբլի ստացող Կենտկոմի քարտուղարները եւ նախարարների խորհրդի նախագահի տեղակալները՝ 4500-4800 ռուբլի: Ամենից բարձր վարձատրվում էր արտաքին գործերի նախարարը՝ 2800 ռուբլի աշխատավարձ եւ 5600 ռուբլի լրավճար[5]: Համաձայն ԽՍՀՄ Նախարարների խորհրդի եւ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի դեկտեմբերի 24-ի եւ 29-ի որոշումների, սահմանվեցին քաղկոմ-շրջկոմների քարտուղարների եւ գործկոմների նախագահների, տեսակալների աշխատավարձերը՝ 1948թ. հունվարի 1-ից 1200-ից մինչեւ 1900 ռուբլու սահմաններում[6]: Համեմատելու համար նշենք, որ 1950թ.

---

[1] «Սովետական Հայաստան», 1947, 16 դեկտեմբերի:
[2] ՀՀ ՀՔԿՓ, ֆ. 1, ց. 28, գ. 138, թթ. 37-38:
[3] Նմանն ապրանքի արժեքը կազմում էր 200, 300, 500, 750, 1500 ռուբլի՝ կախված ղեկավար աշխատողի զբաղեցրած պաշտոնից: Տես ֆ. 1, ց. 27, գ. 59, թ. 149:
[4] Նույն տեղում, ց. 27, գ. 40, թթ. 9-10:
[5] ՀՀ ՀՔԿՓ, ֆ. 1, ց. 27, գ. 37, թթ. 115-120:
[6] Նույն տեղում, թ. 114, ց.28, գ. 40, թ. 5:

երկրում բանվորների եւ ծառայողների ամսական միջին աշխատավարձը կազմում էր 640 ռուբլի, իսկ կոլտնտեսականներինը՝ 164 ռուբլի[1]:

1949-50 թվականներին կառավարության որոշմամբ երկու անգամ եւս իջեցվեցին ապրանքների պետական գները, սակայն բնակչության նյութա-կենցաղային պայմաններում առանձնապես փոփոխություններ տեղի չունեցան: Ի՞նչն էր պատճառը: Պատերազմից հետո, մինչեւ քարտային համակարգի վերացումը, երկրում իրականացվեց մանրածախ գների ռեֆորմ: Արդյունքում, 1940թ. համեմատ, դրանք աճեցին երեք անգամ /պարենայինը 3,6 անգամ, արդյունաբերական ապրանքներինը՝ 2,2 անգամ/: Իսկ բանվորների եւ ծառայողների աշխատավարձն այդ տարիներին աճեց ընդամենը 1,5 անգամ եւ 1946թ. կազմեց ամսական ընդամենը 480 ռուբլի, իսկ 1950թ.՝ 640 ռուբլի: Ամեն տարի աշխատավարձից տասնյակ միլիարդ ռուբլի հատկացվում էր պետական փոխառությունների բաժանորդագրմանը: Խանութների առատությունը /այն էլ մեծ քաղաքներում/ արդյունք էր բնակչության ցածր գնողականության:

Այդուհանդերձ, գները երեք անգամ բարձր էին նախապատերազմյան մակարդակից: Անհրաժեշտ է նշել, որ գների իջեցումից մեծամասամբ շահում էին բարձր աշխատավարձ ստացողները, ինչպես ցույց տրվեց վերը, խորհրդա-կուսակցական ընտրախավի օրինակով: Կար եւս մի գործոն, որի հաշվին իջեցվում էին գները: Դա գյուղում կյանքի աննախադեպ վատթարացումն էր, որտեղ ապրում էր բնակչության կեսը: Թեեւ հետպատերազմյան շրջանում ձեռնարկվեցին միջոցառումներ բնակչության առողջապահության բարելավման ուղղությամբ, այնուամենայնիվ, այն գտնվում էր անմխիթար վիճակում: Պատերազմի տարիներին նշանակալի չափով աճել էր բնակչության մահացությունը թոքախտից, ինչը պայմանավորված էր բնակչության կենցաղային պայմանների վատթարացումով: Հետպատերազմյան տարիներին նույնպես շարունակվում էր այդ հիվանդության աճը:

1948թ. հոկտեմբերի 25-ին ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը ընդունեց «Թոքախտի հիվանդության նվազեցման գծով միջոցառումների մասին» որոշումը, որի հիման վրա ՀԽՍՀ Նախարաների խորհուրդը 1949թ. փետրվարի 11-ին ընդունեց համապատասխան որոշում[2], իսկ նոյեմբերի 29-ին՝ միջոցառումների ծրագիր: 1950թ. ամռանը ՀԽՍՀ պետական վերահսկողության նախարարության եւ վիճվարչության անցկացրած ստուգումները պարզեցին, որ նախատեսված միջոցառումների ծրագիրը հիմնականում չի կատարվել[3]:

Պատերազմից հետո ջերմախտը Հայաստանում ուներ անկման՝ միտում՝ պատերազմի տարիների մեծ աճից հետո, սակայն հիվանդների քանակը դեռեւս մեծ էր: 1946թ. ՀԽՍՀ ջերմախտ հիվանդության ցուցանիշներով գտնվում էր 4-րդ տեղում՝ ԽՍՀՄ հանրապետությունների շարքում: Ըստ այդմ, ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն, հոկտեմբերի 7-ին ընդունեց «Ջերմախտի դեմ պայքարի միջոցառումների մասին» որոշումը[4], որը կարեւոր նշանակություն ունեցավ այդ զանգվածային հիվանդության վերացման գործում: Պատերազմի տարիներին ի հայտ եկած բացասական

---

[1] Страницы истории КПСС. Факты, проблемы, уроки, М., 1988, с. 471
[2] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 22, գ. 150, թթ. 3-6:
[3] Նույն տեղում, գ. 1451, թթ. 1-21:
[4] Նույն տեղում, գ. 32, թթ. 44-46:

երեւույթների թվում էր վեներական հիվանդությունների աննախադեպ աճը, ինչը մարդկային զանգվածների մինչ այդ չտեսնված տեղաշարժերի արդյունք էր: 1945-47թթ. այդ հիվանդների թիվը 8,5 անգամ ավելի էր նախապատերազմյան երեք տարիների համեմատությամբ[1]:

Առաջնակարգ խնդիր էր անապաստան եւ խնամազուրկ երեխաների հարցի լուծումը: Այն ենթադրում էր տվյալ երեխաների հավաքումը, հաշվառումը, 15 տարեկանից բարձրերին աշխատանքի տեղավորելը կամ ուսումնարաններում ընդգրկելը, փոքրերին՝ մանկատներ եւ մանկամսուրներ հանձնելը, խնամազուրկ երեխաների վերադարձը ծնողներին, հիվանդների բուժումը: Մինչեւ պատերազմը Հայաստանում գործում էին 10 մանկատուն 1400 մանուկով, որոնք հիմնականում 1935-38թթ. բռնությունների ենթարկվածների զավակներ էին: Պատերազմի տարիներին կազմակերպվեցին եւս 31 մանկատներ՝ հիմնականում հարմարեցված շենքերում: Մինչեւ 1948թ. բացարձակապես անհարմար շենքերում տեղավորված 10 մանկատներ վերացվեցին: 1948թ. հուլիսին գործող 31 մանկատներում դաստիարակվում էր 4962 երեխա[2]:

1945-46թթ. այդ աշխատանքներն իրականացվում էին անծրագիր, ՆԳՆ մանկական անապաստանության ու խմանազրկության դեմ պայքարի բաժնի կողմից: Պատկերը փոխվեց 1947-49 թթ., երբ նոր շինարարությունների ծավալումը եւ արդյունաբերության հետագա զարգացումը հնարավորություն ընձեռեցին 15 տարեկանից բարձրերին տեղավորել աշխատանքի: 1947թ. ապրիլի 7-ին ԽՍՀՄ կառավարությունն ընդունեց որոշում ծնողազուրկ երեխաներին ու անչափահասներին մանկատներում, արհեստագործական ուսումնարաններում եւ աշխատանքի տեղավորելու մասին: ՀԽՍՀ Նախարարների խորհրդի մայիսի 24-ի որոշումը իշխանության մարմիններին հանձնարարեց բացել նոր մանկատներ, հատուկ արհեստագործական ուսումնարաններ[3]: Մեկ տարի անց, ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը արձանագրեց, որ գործկոմներն անհրաժեշտ ուշադրություն չեն դարձել մանկական անապաստանության եւ խնամազրկության վերացմանը, որի պատճառով նկատվել է երեխաների մեծ հոսք շրջաններից դեպի Երեւան[4]: Ստուգումների հիման վրա ՀԽՍՀ կառավարությունը 1948թ. սեպտեմբերի 16-ին ընդունեց նոր որոշում, հաստատվեց մանկական անապաստանության ու խնամազրկության դեմ պայքարի լայնածավալ միջոցառումների ծրագիր[5]: Օրինապահ մարմիններին հանձնարավեց կանխել անապաստան եւ խնամազուրկ երեխաների փախուստը, առաջարկություններ ներկայացնել մանկական աշխատանքային ճամբարներ կազմակերպելու մասին:

1948թ. ՆԳՆ կողմից հայտնաբերվել էր 2414 անապաստան եւ 5008 խնամազուրկ երեխա: Նրանցից մանկատներ էին հանձնվել 824, ուսումնարաններում տեղավորվել 104, մանկամսուրներում՝ 31, աշխատանքի տեղավորվել՝ 206, վերադարձվել ծնողներին 6113 երեխա[6]: ՀԽՍՀ կառավարությունը 1949թ. մարտին լուսավորության նախարարությանը

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 219, թ. 60:
[2] Նույն տեղում, ց. 21, գ. 1106, թթ. 11-12:
[3] Նույն տեղում, ց. 20, գ. 453, թթ. 2-4:
[4] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 21, գ. 201, թ. 3:
[5] Նույն տեղում, գ. 1106, թթ. 2-4:
[6] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 30, գ. 250, թ. 18:

եւ շրջխորհուրդների գործկոմներին հանձնարարեց մանկատները բեռնաթափել ծնողներ ունեցող երեխաների հաշվին[1]: ՆԳՆ 1949թ. ընթացքում հավաքել է 1331 անապաստան եւ 3606 խնամազուրկ՝ ընդամենը 4937 երեխա[2]: Չնայած ձեռնարկված միջոցառումներին, անապաստանության վերացումը ընթանում էր շատ դանդաղ, որի պատճառը բնակչության սոցիալ-տնտեսական ծանր վիճակն էր: ՀԽՍՀ կառավարությունը 1949թ. նոյեմբերի 17-ին կրկին անդրադարձավ այս խնդրին, հանձնարարվեց իրականացնել նրանց հատկացվող գումարների լրիվ օգտագործումը, նաեւ խնամազուրկ երեխաների ծնողներին պատասխանատվության ենթարկել[3]: Այս որոշումը եւս դատապարտված էր ձախողման, որովհետեւ կատարումն ապահովված չէր անհրաժեշտ նախադրյալներով: ՆԳՆ ստուգումներով հայտնաբերվում էին փաստեր, երբ շրջանային կազմակերպություններն անապաստան երեխաներից ազատվելու համար նրանց գաղտնի հեռացնում էին հարեւան հանրապետություններ: ՀԽՍՀ կառավարությունը 1950թ. հունվարի 13-ին քննարկեց հիշյալ որոշման կատարման ընթացքը: Նշվեց, որ 1949թ. նախորդ տարվա համեմատությամբ անապաստանությունը եւ խնամազրկությունը կրճատվել է 33 տոկոսով: Մասնավորապես, նախատեսվեց 1950թ. Երեւանում կառուցել նոր մանկական ընդունարան, որի ֆինանսավորման համար կրճատվելու էին 13 այլ միջոցառումների կապիտալ ներդրումները[4]: ՀԽՍՀ կառավարության 1947-50թթ. ձեռնարկած միջոցառումները որոշ չափով մեղմացրին անապաստանությունը: Սակայն դրա իսպառ վերացումը կապված էր բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման հետ:

Միանշանակ կարելի է եզրակացնել, որ հանրապետության բնակչությունը գտնվում էր սոցիալական ծայրաստիճան ծանր դրության մեջ, որն ինչպես բնական /պատերազմի հետեւանքներ/, այնպես էլ արհեստական դժվարությունների արդյունք էր:

---

[1] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, g. 22, գ. 305, թ. 4:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 30, գ. 250, թ. 19:
[3] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, g. 24, գ. 1036, թթ. 1-3:
[4] Նույն տեղում, g. 23, գ. 35, թթ. 4-5:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

1. ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Երկրորդ աշխարհամարտի ավարտին, երբ պարզ էր Գերմանիայի եւ նրա դաշնակիցների պարտության անխուսափելիությունը, Սփյուռքի եւ Հայաստանի մտավորականության շրջանում բարձրացավ Արեւմտահայաստանը եւ Կարսի մարզը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու պահանջը՝ աշխարհասփյուռ հայերին իրենց հայրենիքում համախմբելու համար:

Արդեն 1944թ., պահը հարմար համարելով, Երեւանում հայ մտավորականների (Ավետիք Իսահակյան, Նաիրի Զարյան, Դերենիկ Դեմիրճյանի եւն.) շրջանում շոշափվում էր Գերմանիայի դեմ պատերազմի հաղթական ավարտից հետո Արեւմտահայաստանը Խորհրդային Հայաստանին միավորելու հարցը: 1944թ. սեպտեմբերի 14-ին «Սովետական Հայաստան» թերթի խմբագիր Հ.Մամիկոնյանը նամակով դիմեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Գր.Հարությունյանին, որով վերջինիս տեղյակ էր պահում խմբագրությունում իր եւ Ավ.Իսահակյանի զրույցի մասին: Բանաստեղծն այն միտքն էր հայտնել, որ պատերազմից հետո շատ հարցեր են լուծվելու, այդ թվում Արեւմտահայաստանի հարցը, եւ որ անհրաժեշտ է դիմել Ստալինին՝ նրա կարծիքն իմանալու համար: Նամակագիրը միաժամանակ հայտնում է, որ Ավ.Իսահակյանը մինչ այդ Մոսկվայում հանդիպել է Ա.Միկոյանին, եւ վերջինս հաստատել է, որ պատերազմից հետո Արեւմտահայաստանի հարցը կլուծվի[1]:

Ի տարբերություն խորհրդահայ հասարակության, որտեղ այդ հարցը 1944թ. քննարկվում էր մտերմիկ զրույցների ընթացքում, սփյուռքահայությունը՝ հատկապես Ստալինգրադի ճակատամարտից հետո, ակտիվ միջոցների դիմեց հայկական հողերի հարցը միջազգային հանրությանը ներկայացնելու համար: Արդեն 1943թ. Ռամկավար ազատական եւ Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունները բացահայտ հայտարարեցին, որ ձգտելու են ԱՄՆ-ի եւ Անգլիայի օգնությամբ հասնել Թուրքիայից «մարդկային արդարության» եւ ակնկալում էին ԽՍՀՄ մասնակցությունը հարցի քննարկմանը[2]: Շարժումը մի կողմից գլխավորում էր ՀՅԴ, մյուս կողմից՝ ՌԱԿ, խորհրդայնամետ այլ կազմակերպությունների՝ ՍԴՀԿ եւ Ամերիկահայերի առաջադիմական լիգայի (գտնվում էր կոմունիստների ազդեցության ներքո) հետ միասին: Հայկական գաղթօջախներում ստեղվեցին ազգային խորհուրդներ, որոնց աշխատանքը համակարգում էր 1944թ. մարտին Նյու Յորքում ստեղծված ամերիկահայ ազգային խորհուրդը: Նա իր առջեւ նպատակ էր դրել. 1. Օգնել Ամերիկային պատերազմական ջանքերում, 2. Միջոցներ ձեռնարկել եւ օգնել

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց.127, գ. 23, թթ. 4-5:
[2] Նույն տեղում, ց. 034, գ. 95, թ. 280:

այդ ձեռնարկումներով Խորհրդային Միությանը եւ Խորհրդային Հայաստանին, 3. Պաշտպանել տարագիր հայերի իրավունքները հարկ եղած բոլոր միջոցառումներով եւ աշխատել նրանց հայկական հողերի վրա վերաբնակեցման խնդրի լուծման համար: Ամերիկահայ ազգային խորհուրդը հայկական հատվածներում տեր էր ճանաչում Խորհրդային Հայաստանի կառավարությանը[1]:

Ամերիկահայ ազգային խորհրդի ղեկավարության կազմում ընդգրկվեցին ՌԱԿ ղեկավար Պետրոս Թերզյանը (ատենապետ), նրան հետագայում փոխարինեց Նշան (Ջեկ) Շահինյանը, Ջեմս Չանգալյանը: Ֆրանսահայ ազգային խորհրդի նախագահ ընտրվեց Արշակ Չոպանյանը: Ազգային խորհուրդներ կազմակերպվեցին Սիրիայում, Լիբանանում, Հունաստանում, Պաղեստինում, Ուրուգվայում: Հ.Յ.Դ. ԱՄՆ-ում գործում էր «Հայկական ազգային կոմիտե»-ի անվան տակ եւ Ռուբեն Դարբինյանի եւ Սիմոն Վրացյանի ղեկավարությամբ, 1944թ. կազմակերպեց միջոցների հանգանակություն՝ «բարեկամաբար տրամադրված սենատորների եւ կոնգրեսմենների օգնությամբ հայ-թուրքական հարցը լուծելու համար»[2]:

Հայաստանում եւ սփյուռքում ազգային զարթոնքին նպաստեց նաեւ եկեղեցու նկատմամբ խորհրդային իշխանության շրջադարձը եւ խորհրդա-թուրքական «Բարեկամության եւ չեզոքության մասին» պայմանագրի դենոնսացիան:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Թուրքիան թեւ բացահայտ ելույթ չունեցավ ԽՍՀՄ-ի դեմ, այնուհանդերձ, նա Գերմանիայի կողմն էր: 1940թ. հուլիսին ստորագրվել էր գերմանա-թուրքական գաղտնի պայմանագիր՝ Գերմանիային ռազմավարական հումքով ապահովելու մասին: Թուրքիայից Գերմանիա էր տեղափոխվում քրոմի հանքանյութ, նավթ, բամբակ, կաշի եւ սննդամթերք, Թուրքիայի միջնորդությամբ՝ անագ եւ կաուչուկ: ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի սկսվելուց 4 օր առաջ ստորագրվեց գերմանա-թուրքական բարեկամության եւ չհարձակման մասին պայմանագիր 10 տարի ժամկետով[3]:

Թուրքիան զավթողաբար էր տրամադրված ԽՍՀՄ-ի հարավային տարածքների նկատմամբ: Թուրքական գլխավոր շտաբը 1942թ. 26 դիվիզիա էր կենտրոնացրել Անդրկովկասի սահմանագլխին, հատկապես Հայաստանի սահմանի երկայնքով: Իսկ ԽՍՀՄ ստիպված էր սահմանի վրա պահել 18 դիվիզիա, որոնք այնքան անհրաժեշտ էին ռազմաճակատում: Կովկասի համար մղվող մարտերի թեժ օրերին՝ 1942թ. օգոստոսին, թուրքական զորքերը գիշերով մոտեցան Արաքս գետին եւ սկսեցին զորավարժություններ անցկացնել: Թուրքական զորքերը սպասում էին գերմանական զորքերի Անդրկովկաս դուրս գալուն, որպեսզի թիկունքից հարվածեն Կովկասյան ռազմաճակատի զորքերին: 1947թ. մարտի 27-ին «Պրավդա» թերթը տպագրեց ՏԱՍՍ-ի հաղորդագրությունն այն մասին, որ ամերիկյան «ՊՄ» թերթում հրապարակվել է թուրքական մի նախկին բարձրաստիճան պաշտոնյայի հոդվածը, ուր ասված է, որ Թուրքիան 1942թ. կատարել է զորահավաք եւ պատրաստվում է հոկտեմբերի 17-ին (պետք է լինի նոյեմբերի 17-ին- Ա.Վ.) պատերազմի մեջ մտնել: Սակայն

---

[1] «Զարթօնք», Պէյրութ, 1945, 26 ապրիլի:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 95, թթ. 283-284:
[3] Հասրաթյան Մ., Օրեշկովա Ս., Պետրոսյան Յու., Թուրքիայի պատմության ուրվագծեր, Եր., 1986, էջ 290:

Ստալինգրադի մոտ եւ Կովկասյան նախալեռներում գերմանական զորքերի գլխովին ջախջախումը սառեցրին թուրքական ռազմատենչ ձգտումները: Իսկ երբ խորհրդային զորքերը մտան Ղրիմ եւ ազատագրեցին Օդեսան, Թուրքիայի կողմից ռազմավարական հումքի մատակարարումը Գերմանիային դադարեցվեց:

Թուրքիայի երկերեսանի քաղաքականությունը դիպուկ կերպով ներկայացրել է Ամերիկայում լույս ընծայվող ռամկավարական «Պայքար» թերթը. «Պատերազմի սկզբից եւ մինչեւ ներկայումս Թուրքիան վարում է քաղաքականութիւն, որի անկիւնաքարը հանդիսանում է. 1. Չհրաժարվել չեզոքությունից, 2. Շահագործել կռվող երկու կողմերին առեւտրի եւ օգնութեան միջոցով, նրանցից կորզել ինչ որ հնարաւոր է, 3. Ապահովագրել իրեն Մոսկվայի պատմական պահանջներից՝ օգտագործելով Անգլիայի եւ Ամերիկայի պաշտպանութիւնը եւ օժանդակութիւնը, 4. Խաղաղության կոնֆերանսում տեղ զբաղեցնել հաղթողների շարքում»: Թերթը Թուրքիայի քաղաքականությունը գնահատում է կեղծ եւ իր կարծիքը ամրապնդում հետեւյալ փաստերով. «Թուրքիան, հայտարարելով իրեն Անգլիայի բարեկամը, լենդլիզով ստացավ 20 միլիոնի արժողութեամբ օգնութիւն: Գերմանիայի հետ կնքեց «առեւտրական» պայմանագիր եւ իրականացնում է իր համար շահավետ ապրանքափոխանակութիւն: Իր երկերեսանի քաղաքականութեամբ Թուրքիային հաջողվեց փաստորեն չմասնակցել պատերազմին եւ մնալ «չեզոք»[1]:

1944թ. օգոստոսի 2-ին Թուրքիան խզեց դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ, իսկ 1945թ. փետրվարի 23-ին պատերազմ հայտարարեց նրան եւ Ճապոնիային: Երբ Գերմանիայի պարտությունն արդեն փաստ էր, խորհրդային կառավարությունը քայլեր ձեռնարկեց Թուրքիայի հետ հարաբերությունները հստակեցնելու ուղղությամբ: 1945թ. ԽՍՀՄ կառավարությունը 1925թ. դեկտեմբերի 17-ի խորհրդա-թուրքական բարեկամության եւ չեզոքության պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ Թուրքիային ծանուցեց նրա դենոնսացիայի մասին: Հատկանշական է, որ խորհրդային կառավարության քայլն անսպասելի էր թուրքական կողմի համար. Թուրքիայի կառավարությունն արգելեց թուրքական թերթերին որեւէ մեկնաբանություն հրապարակել պայմանագրի դենոնսացիայի մասին: Թույլատրվեց տպագրել միայն պաշտոնական հաղորդագրություններ եւ Անատոլիական գործակալության արտասահմանյան թերթերի մեկնաբանություններ[2]: Պայմանագրի դենոնսացիայի մասին հաղորդագրությունից մի քանի օր անց թուրքական թերթերն արտատպեցին Լոնդոնում լույս տեսնող լեհական «Ջեննիկ Պոլսկի» թերթի հոդվածը, որտեղ մասնավորապես նշվում էր, որ Խորհրդային Միությունը նեղուցների հարցում վերադառնում է ցարական Ռուսաստանի քաղաքականությանը: Թուրքական պատասխանից հետո «Ուլուս», «Ջումհուրիեթ», «Ենի սաբահ» եւ այլ թերթեր, որոնք տպագրեցին խորհրդա-թուրքական հարաբերությունների մասին հոդվածներ, միաբերան սկսեցին գովերգել նախկին բարեկամական հարաբերությունները, որ գոյություն ունեին 25 տարի շարունակ Թուրքիայի եւ ԽՍՀՄ-ի միջեւ: Հիշեցնում էին, որ Խորհրդային Ռուսաստանը մեծ օգնություն է ցույց տվել Թուրքիային անկախության համար պայքարում: Մյուս կող-

---

[1] «Պայքար», Բոստոն, 1944, 6 հուլիսի:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 95. թթ. 63-78:

մից, նրանք հավաստում էին, որ իրենք այդ տարիների ընթացքում հստակորեն կատարել են իրենց պարտականությունները ԽՍՀՄ-ի հանդեպ եւ հետեւողականորեն խուսափել են այնպիսի քայլերից, որոնք կարող էին սասանել խորհրդա-թուրքական բարեկամությունը:

Խորհրդային Հայաստանի ղեկավարության հիմնական դիրքորոշումը խնդրո առարկա հարցում հետեւյալն էր.

1. Օգտվելով այն հանգամանքից, որ երկրորդ աշխարհամարտի տարիներին Թուրքիան ակտիվորեն օժանդակել է Գերմանիային եւ նույնիսկ պատրաստվում էր պատերազմի մեջ մտնել նրա կողմից, բարձրացնել Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական հողերը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու հարցը:

2.Կազմակերպել աշխարհասփյուռ հայերի հայրենադարձությունը պատմական հայրենիք:

3. 1921թ. անարդարացիորեն Խորհրդային Ադրբեջանին անցած հայկական հողերի միացումը Խորհրդային Հայաստանին:

1945թ. ապրիլի սկզբին ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը եւ արտաքին գործերի ժողկոմ Սահակ Կարապետյանը մեկնում են Մոսկվա[1], իրենց հետ տանելով Ստալինի եւ Մոլոտովի անուններով մի շարք գրություններ՝ սփյուռքահայության շրջանում աշխատանքներ ծավալելու, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ 1944թ. փետրվարի 1-ի որոշման համաձայն Իրանի, Սիրիայի ու Լիբանանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, ԱՄՆ-ում, Եգիպտոսում ու Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանատներում հայկական գծով խորհրդականի պաշտոն ստեղծելու, գաղութների կյանքը ուսումնասիրելու համար Հայաստանի ժողկոմխորհի ներկայացուցիչներին Իրան, Լիբանան, Ռումինիա եւ Բուլղարիա գործուղելու, սփյուռքահայությանը Խորհրդային Հայաստանի նվաճումներին ծանոթացնելու համար «Սովետական Հայաստան» անունով ամսագիր հրատարակելու մասին[2]:

Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին գրության մեջ մասնավորապես նշվում էր, որ «առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին ավելի քան մեկ միլիոն հայեր, Հայաստանի *բնիկ բնակիչներ* (ընդգծումը մերն է- Ա.Վ.), խուսափելով թուրքական եւ գերմանական իմպերիալիստների կազմակերպած կոտորածից, որի զոհը դարձան ավելի քան մեկ միլիոն հայեր, ստիպված էին գաղթել Թուրքական Հայաստանից արաբական եւ բալկանյան երկրներ, Արեւմտյան Եվրոպա, ԱՄՆ եւ այլ երկրներ»[3]:

Շուրջ մեկ ամիս մնալով Մոսկվայում՝ Գր.Հարությունյանը եւ Ս.Կարապետյանը հանդիպեցին խորհրդային ղեկավարների հետ, ստացան համապատասխան ցուցումներ: Այդ օրերին էր, որ Ստալինն ընդունեց Գեւորգ Զ Չորեքչյան կաթողիկոսին, հավանաբար նրանց խնդրանքով:

1945թ. ապրիլի 6-ին ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեն որոշում է ընդունում Անդրկովկասի ավտոմոբիլային ճանապարհները վերակառուցելու մասին[4], որը հեռու գնացող նպատակ էր հետապնդում եւ փաստորեն ռազմական նախապատրաստումների սկիզբ էր:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 32, թ. 214:
[2] Գրիգոր Հարությունյան, Կյանքը եւ գործունեությունը, էջ 159-163:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թ. 18:
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 25, գ. 22, թթ. 19-20:

Թուրքական կողմը եւս սահմանն ամրացնելու միջոցներ էր ձեռնարկում: Մասնավորապես, 1945թ. մայիսի 30-ի լուսաբացին ուժեղ ամպրոպի ժամանակ սպայթեցվում է Մարգարա գյուղի մոտ գտնվող Արաքսի մետաղյա կամուրջի թուրքական մասը: Հաջորդ օրը թուրքական սահմանային հանձնաժողովի ներկայացուցիչը խորհրդային կողմին հաղորդում է, որ կամուրջի աջափնյա մասի պայթյունը տեղի է ունեցել պայթուցիկ նյութերին արած կայծակի հարվածից, նյութեր, որ ժամանակին տեղադրել էր թուրքական կողմը «զգուշության նպատակով»: Իրականում, թուրքերն օգտվելով ամպրոպից, կամուրջը պայթեցրել էին անվտանգության նկատառումներով[1]:

1945թ. ապրիլի 25-ին Սան-Ֆրանցիսկոյում բացվեց միավորված ազգերի կոնֆերանսը, որի նպատակը խաղաղության պահպանման եւ անվտանգության ապահովման համար միջազգային կազմակերպության ստեղծումն էր: Կոնֆերանսի աշխատանքի օրերին, որը տեւեց մինչեւ հունիսի 26-ը, Ամերիկայի Հայ ազգային խորհուրդը եւ Հայկական ազգային կոմիտեն մասնակից երկրների ներկայացուցիչներին հանձնեցին «Հայ ժողովրդի գործը» եւ «Հայկական հարցի առթիվ» հուշագրերը: Առաջինում պահանջվում էր «Հայկական հողերի միացումը ազատ, անկախ Հայաստանի գոյութիւն ունեցող պետութեանը եւ արտասահմանում ապրող ու Հայաստան մեկնելու ցանկութիւն ունեցող բոլոր հայերի վերադարձն այնտեղ»[2]: Ամերիկայի Հայ ազգային խորհրդի հուշագիրը տպագրվեց «Սովետական Հայաստան» թերթում, մեծ ոգեւորություն առաջացնելով Հայաստանի բնակչության ամենալայն շրջաններում: Այն ընթերցում էին ամենուր աշխատատեղերում, բնակարաններում, փողոցներում: Այդ օրերին հանրապետության թերթերում տպագրվում են նամակներ «Արդարության ձայնը», «Հասել է ժամանակը», «Մեկուկես միլիոն մարդկանց ձայնը» եւ նման վերնագրերով[3]: Բնակչության շրջանում անցկացվում էին հանդիպումներ եւ զրույցներ, որոնց ընթացքում պարզաբանվում էր սփյուռքահայության կողմից թուրքական իշխանության ներքո գտնվող հայկական հողերի նկատմամբ պահանջի մասին հուշագրերը: Բնակչության կողմից զեկուցողներին տրվում էին բազմաթիվ հարցեր, որոնց ցանկը նոյեմբերի 30-ին ՀԿ(բ)կ Կենտկոմի կողմից ուղարկվեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կազմիրահանգչական բաժնին: Մասնավորապես, Հայաստանի բնակչությանը հետաքրքրում էին բնութագրական հետեւյալ հարցերը.

1. Որտեղո՞վ է անցնելու նոր սահմանը:
2. Վանի վիլայեթը մտնու՞մ է պահանջվող տարածքների մեջ:
3. Ո՞ր սահմանների մասին է խոսքը՝ պատմական Հայաստանի, թե 1914 թվականի:
4. Կթույլատրվի՞ խորհրդային հայերին տեղափոխվել Թուրքահայաստան:
5. Ինչու՞ մեր հանրապետությունում եւ միութենական մամուլում լայնորեն չի լուսաբանվում այդ հարցը:

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 385, թ. 157:
[2] «Սովետական Հայաստան», 1945, 13 հունիսի:
[3] «Սովետական Հայաստան», 1945, 15 հունիսի, "Коммунист" , 1945, 15 июня.

6. Ինչպե՞ս կվարվի խորհրդային կառավարությունը, եթե Անգլիան եւ ԱՄՆ-ը չհամաձայնվեն բավարարել արտասահմանյան հայերի պահանջը եւ այլն[1]:

Մոսկվա ուղարկած ցանկը բաղկացած էր 62 հարցերից: Դրա ուսումնասիրումը ցույց է տալիս, որ Հայաստանի բնակչությունը տեղյակ էր հիմնահարցի պատմությանը, գիտակցում էր խոչընդոտները հարցի դրական լուծման ճանապարհին եւ հասկանում էր ԱՄՆ-ի եւ Անգլիայի աճող առճակատումը ԽՍՀՄ-ի հետ:

Սան-Ֆրանցիսկոյում հայկական պատվիրակությունների գործունեության մասին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմ Ս. Կարապետյանի եւ Ազգային եկեղեցական ժողովին որպես հյուր ժամանած «Լրաբեր» թերթի խմբագիր, Ամերիկայի Հայ ազգային խորհրդի փոխնախագահ, կոմունիստ Պատրիկ Սելյանի 1945թ. հունիսի 22-ին Երեւանում կայացած հանդիպման սղագրությունը. «Դեռեւս 1943թ.,- պատմում է Սելյանը,- ազգային խորհրդի մի քանի ղեկավարներ առաջարկություն ներկայացրեցին խորհրդին այն մասին, որպեսզի դիմենք Ամերիկայում խորհրդային դեսպանատանը Թուրքիայի կողմից բռնագրաված հայկական հողերը Խորհրդային Հայաստանին միավորման մասին: Մենք՝ կոմունիստներս, գտնում էինք վաղաժամ այդ հարցի դնելը եւ փորձեցինք համոզել ազգային խորհրդի մյուս անդամներին, բայց դա մեզ չհաջողվեց, եւ մենք ստիպված էինք դիմել Նյու Յորք՝ խորհրդային գլխավոր հյուպատոսին: Վերջինս ուղղակի հայտարարեց, որ այդ հարցով մեզ լսել չի կարող: Չբավարարվելով այդ պատասխանով՝ ազգային խորհրդի ղեկավարությունն այդ հարցով դիմեց ԽՍՀՄ դեսպանին՝ Վաշինգտոնում[2], բայց վերջինս տվեց համարյա նույն պատասխանը, ինչ հյուպատոսը: Երբ 1945թ. սկզբին մենք իմացանք, որ Սան-Ֆրանցիսկոյում կիրավիրվի Միացյալ ազգերի կոնֆերանս, Ազգային խորհրդի անդամների մոտ նորից գաղափար ծագեց բարձրացնել Թուրքիայի կողմից զավթած հայկական հողերը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու եւ ամբողջ աշխարհով սփռված հայերին հարենադարձնելու հարցը: Երբ պատվիրակները սկսեցին հավաքվել Սան-Ֆրանցիսկոյում, մենք սկսեցինք հող նախապատրաստել խորհրդային հյուպատոսարանում ու դեսպանատանը եւ համոզվեցինք, որ տարածքների հարցի բարձրացման նպատակահարմարություն այդ անգամ կա եւ ձեռնամուխ եղանք հուշագրի տեքստի կազմելուն: Տարածքների վերադարձման հարցը, զգուշության համար, մենք հուշագրում բացահայտ չդրեցինք: Այդ հատվածը գրեցինք առանձին թղթի վրա եւ հանձնարարեցինք Սան-Ֆրանցիսկո ուղեւորվող մեր ներկայացուցիչներին նախնական խորհրդակցություն ունենալ խորհրդային ներկայացուցիչների հետ եւ տեղում որոշել տարածքների հարցը հուշագրում բացահայտ դնելու նպատակահարմարությունը: Մի քանի օր հետո տեղի ունեցավ հետաքրքիր միջադեպ. ազգային խորհուրդ բերեցին մի ծրար, որը հասցեագրված էր Ամերիկահայերի ազգային կոմիտեի քարտուղար Հ.Զարյանին: Տեսնելով ծրարի հասցեն՝ ես հասկացա, որ այն մեզ է հասել թյուրիմացաբար: Ծրարում մենք հայտնաբերեցինք դաշնակների պարագլուխ Սիմոն Վրացյանի

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 135, թթ. 11-14:

[2] Խոսքը Ա.Գրոմիկոյի մասին է:

հետաքրքիր փաստաթուղթը: Նա դաշնակների կողմից Սան-Ֆրանցիսկո էր ուղարկվել անգլիացիների եւ ամերիկացիների հետ կապ հաստատելու հանձնարարությամբ եւ տարածքների հարցը դաշնակների տեսանկյունից բարձրացնելու նպատակով: Այդ նամակում Վրացյանը տեղեկացնում էր դաշնակների կոմիտեին այն մասին, որ նրան հաջողվել է հանդիպել Անգլիայի եւ Ամերիկայի ներկայացուցիչների հետ եւ պարզել, որ վերջիններս թեկուզ եւ դժկամությամբ են գնում Թուրքիայից տարածքների անջատմանը, բայց կգնան դրան, որպեսզի չփչացնեն իրենց հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ: Վրացյանը գրում էր, որ նրա փորձերը կապվել խորհրդային պատվիրակության ներկայացուցիչների, մասնավորապես պատվիրակության անդամ, հայ պրոֆեսոր Համո Հարությունյանի հետ, չեն պսակվել հաջողությամբ: Նա գրում էր, որ իրեն հաջողվել է համոզել անգլիացիներին եւ ամերիկացիներին նրանում, որ հայերը իրենց էությամբ հակախորհրդային տարրեր են եւ կարող են լինել նրանց համար հուսալի հենարան Մերձավոր Արեւելքում, դրանից հետո ես մեկնեցի Հայաստան, այստեղ իմացա, որ մեր հուշագիրը հրապարակվել է հայկական տարածքների միավորման հատվածով, դա նշանակում է, որ հուշագրի այդ հատվածը հրապարակվել է խորհրդային ներկայացուցիչների գիտությամբ»: Ս.Կարապետյանի այն հարցին, թե «Դուք դրանում վստահ եք», Սելյանը պատասխանել է, որ «ոչ միայն վստահ է դրանում, այլ ինքը չունի ոչ մի կասկած»[1]:

Թուրքական իշխանություններն անհանգստությամբ ընդունեցին հայկական կազմակերպությունների հուշագրերը: «Ջումհուրիեթ» թերթը 1945թ. մայիսի 9-ին տպագրելով հաղորդագրություն Սան-Ֆրանցիսկոյից, խմբագրության անունից գրում է. «Հայերը, հանդիսանալով թուրքական հպատակներ, օգտվում են մեր օրենքների բոլոր իրավունքներից, որոնք տարածվում են մեր քաղաքացիների վրա: Այդպիսի դեպքում վերոհիշյալ հաղորդագրությունը կոնֆերանսի հավաքված երկրների ներկայացուցիչներին հայերի դիմումի մասին, տեղին չէ եւ անմիտ է»: Թերթը, դա համարելով անբավարար, իր թղթակցին ուղարկեց Կոնստանդնուպոլիսի հայոց պատրիարք Արսլանյանի մոտ, որը, ինչպես դա երեվում է թղթակցությունից, խուսափել է ըստ էության պատասխանից եւ հայտարարել. «Ես հանդիսանում եմ հայերի հոգեւոր ներկայացուցիչը եւ զբաղվում եմ միայն կրոնական հարցերով, եւ քանի որ քննարկվող հարցը հանդիսանում է զուտ քաղաքական, ես լիազորված չեմ հայկական հասարակության անունից ինչ-որ բան ասել այդ առումով: Վերոհիշյալ հաղորդագրության մասին մենք ոչ մի տեղեկություն չունենք: Ես ենթադրում եմ, որ դա արել են ամերիկահայերը: Եթե անհրաժեշտ է, որպեսզի ես անձամբ ինչ որ բան ասեմ, ապա կրոնի առումով մենք օգտվում ենք լիակատար ազատությունից եւ ունենք այնպիսի իրավունքներ, ինչպես եւ ցանկացած թուրքական քաղաքացի»[2]:

Չբավարարվելով Արսլանյանի պատասխանից, «Ջումհուրիեթը» որոշեց օգտագործել Ստամբուլում լույս տեսնող երկու հայկական թերթերը եւ ստիպել դրանց հրապարակել հաղորդագրություն այդ առիթով, որը եւ հետո արտատպեցին թուրքական թերթերը: «Ժամանակ» թերթը Սան-Ֆրանցիսկոյից ստացված հաղորդագրության մասին գրում է. «Մենք մեծ

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 95, թթ. 146-148:
[2] Նույն տեղում, թ. 173-174:

զարմանքով իմացանք, որ Ամերիկայի հայկական ազգային կոմիտեն Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսին դիմել է խիստ հիմար առաջարկություններով: Մենք՝ Թուրքիայում ապրող հայերս, օգտվում ենք հանրապետական Թուրքիայի օրենքների բոլոր բարիքներից եւ չենք զգում ազգային ու կրոնական տարբերություն: Մենք երբեք չենք կասկածում, որ Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսը, որը զբաղված է խաղաղության գործի լուծումով, նույնիսկ չի պատասխանի այդ հիմար հուշագրին»: Գրեթե նույն բովանդակությունն ուներ նաեւ «Սարմարա» թերթի մեկնաբանությունը[1]:

Թուրքական իշխանությունները քիչ պատճառներ չունեին, որպեսզի պաշտպանեին իրենց՝ միջազգային հասարակական կարծիքի հարձակումներից հայերի նկատմամբ ունեցած հարաբերությունների համար: Կային ոչ քիչ օրինակներ, որոնք ցույց էին տալիս թուրքերի հակահայկական քաղաքականությունը: Բնութագրող էր ամբողջ աշխարհում աղմուկ հանած «Վարլըկա վերգիսի« (կարողության) հարկը, որը ընդունվեց 1942թ. եւ ուղղված էր ազգային փոքրամասնությունների դեմ եւ փաստորեն հանգեցնում էր նրանց ունեցվածքի զանգվածային բռնագրավմանը[2]: Այդ հարկի պատճառով ուղղակի սնանկացան ոչ միայն հարուստ, այլեւ միջին ու մանր կարողություն ունեցող հարյուրավոր հայեր:

1945թ. հունիսի 16-ին Ս.Էջմիածնի հոգեւոր ճեմարանի դահլիճում բացվեց Ազգային եկեղեցիական ժողովը: Ժողովին մասնակցում էին պատգամավորներ ինչպես Խորհրդային Միության եւ արտասահմանյան թեմերից, այնպես էլ ներկայացուցիչներ Մոսկվայից եւ օտարերկրացի հյուրեր[3]: Ժողովի բացման նախօրյակին պատգամավորներ Ա. Իսահակյանը եւ Մ. Սարյանը հայտարարություն արեցին հայ եկեղեցու գործերի խորհրդին, որ հրաժարվում են մասնակցել ժողովին: Հանդիպելով ՀԽՍՀ ԺԿԽ-ի նախագահի տեղակալ Ս.Կարապետյանի հետ, նրանք հայտնեցին, որ չեն ուզում մասնակցել ժողովին, որպեսզի չհանդիպեն սփյուռքահայ պատգամավորների հետ, որովհետեւ վերջիններս նրանց առաջ կդնեն Թուրքահայաստանը Խորհրդային Հայաստանի հետ միավորման հարցը, իսկ նրանք չգիտեն կուսակցության եւ կառավարության կարծիքը այդ հարցի վերաբերյալ: Կառավարության անդամի համառ պահանջից հետո միայն նրանք մասնակցեցին ժողովին: Հունիսի 25-ին՝ ժողովի ավարտից հետո, ՀԽՍՀ ԺԿԽ-ի կազմակերպած ընդունելության ժամանակ արտասահմանյան պատվիրակները հանդես եկան հայտարարությամբ, որ խորհրդային կառավարությունը կիրագործի նրանց երազանքը Հայաստանի տարածքային միավորման ուղղությամբ[4]:

Երեւանից մեկնելուց առաջ ժողովի հյուր, Քենթրբերյան տաճարի (Անգլիա) վանահայր Հյուլեթ Ջոնսոնը ելույթ ունեցավ մամուլի ասուլիսում, որին մասնակցում էին խորհրդային եւ արտասահմանյան մամուլի ներկայացուցիչներ: Այն հարցին, թե ինչպես է նա վերաբերվում Ամերիկայի հայ ազգային խորհրդի կողմից ընդունած հայկական տարածքները վերադարձնելու մասին հայտարարությանը, Հ.Ջոնսոնը պատասխանեց. «Ես լիովին եւ ի սրտե համաձայն եմ, որ Թուրքիայի կողմից խլված մարզերը պետք է, որքան կարելի է շուտ, վերադարձվեն Հայաստանին: Ամե-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 95, թթ.174-175:
[2] Ժամանակակից Թուրքիա (տեղեկատու), Ե., 1967, էջ 222:
[3] «Սովետական Հայաստան», 1945, 17 հունիսի:
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 25, գ. 27, թթ. 41-42:

րիկահայերի Ազգային խորհրդի դեկլարացիան, իմ կարծիքով, միանգամայն արդարացի է ու հիմնավոր: Թուրքիան անհերեւակայելի անգթությամբ բնաջնջում էր հայ բնակչությունը: Հաղթող տերություններն առաջին համաշխարհային պատերազմից հետո հայտարարեցին, որ արդարացիությունը պահանջում է այդ մարզերը վերադարձնել նրանց օրինական տերերին: Այն, ինչ որ գրված է այն ժամանակ, պետք է այժմ կենսագործվի: Ես ողջունում եմ դեկլարացիայի հրապարակման փաստը եւ այն համարում եմ խիստ արդիական»[1]:

Մայիսի 22-ին Անկարայում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ ԽՍՀՄ դեսպան Վինոգրադովը թուրքական կառավարությանը հայտնեց, որ իր երկիրը պատրաստ է նոր պայմանագիր կնքել Թուրքիայի հետ, եթե նեղուցների վերահսկողության վերաբերյալ Մոնտրեի համաձայնագիրը վերանայվի եւ եթե Կարսը, Արդվինը ու Արդահանը վերադարձվեն ԽՍՀՄ-ին, քանի որ դրանք պատկանում են Հայաստանին եւ Վրաստանին: Հունիսի սկզբին բանակցություններ վերսկսվեցին Մոսկվայում, որտեղ ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Վ. Մոլոտովը Թուրքիայի դեսպան Սելիմ Սարպերին կրկին ներկայացրեց ԽՍՀՄ-ի տարածքային պահանջները[2]:

1945թ. հուլիսի 6-ին Գր.Հարությունյանը, հավանաբար անտեղյակ խորհրդա-թուրքական բանակցություններից, նամակով դիմում է Ստալինին եւ բարձրացնում «Թուրքիային անցած Հայաստանի տարածքների» հարցը: Նշելով, որ խորհրդա-թուրքական պայմանագրի դենոնսացիայից հետո Հայաստանի բնակչության շրջանում սկսվել են խոսակցություններ Թուրքիայի կողմից բռնազավթած տարածքները վերադարձնելու մասին, կենտկոմի քարտուղարը գրում է. «Հատկապես աշխույժ խոսակցություններ են տեղի ունենում մտավորականության շրջանում, որտեղ սկսել են բացահայտ ասել այն մասին, որ ուկրաինական, բելոռուսական եւ այլ ժողովուրդների միավորումից հետո խորհրդային կառավարությունը մեծ տերությունների երեք ղեկավարների հանդիպման ժամանակ կդնի Խորհրդային Հայաստանի տարածքի հետ առաջին համաշխարհային պատերազմից հետո Թուրքիային անցած տարածքների միավորման հարցը: Մտավորականության շրջանում խոսակցությունները հանգում են նրան, որ անհրաժեշտ է պահանջել վերականգնելու 1914թ. սահմանները եւ նախկին Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը հանձնել Հայաստանին: Դրա հետ է կապվում նաեւ արտասահմանում ապրող հայերի վերաբնակեցումը»[3]:

Նույն օրը Մոսկվայում Ստալինը ընդունում է վանահայր Հյուլեթ Ջոնսոնին: Զրույցի ընթացքում, որին ներկա էր նաեւ արտաքին գործերի ժողկոմ Վ.Մոլոտովը, Ջոնսոնը Ստալինին պատմում է էջմիածնի եկեղեցական ժողովի եւ հավանաբար նաեւ ժողովի ընթացքում բարձրացված հայկական տարածքների հարցի մասին [4]:

Կարծես ամեն ինչ պատրաստ էր երեք տերությունների ղեկավարների հանդիպմանը նորից մեջտեղ բերելու հայկական հարցը: Սակայն գործում էր նաեւ Թուրքիայի ղեկավարությունը: Եթե 1920թ. իրենց հար-

---

[1] «Սովետական Հայաստան», 1945, 26 հունիսի:
[2] Դաշնակից երեք տերությունների ղեկավարների Բեռլինի կոնֆերանսը, էջ 167:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց. 034, գ. 27, թ. 41:
[4] «Սովետական Հայաստան», 1945, 7 հուլիսի:

ցերը լուծելու համար նրանք դիմեցին Խորհրդային Ռուսաստանին, ապա այժմ թուրքական պատվիրակությունը մեկնեց Լոնդոն: Օգտվելով այն հանգամանքից, որ Անգլիան եւ Խորհրդային Միությունը, չնայած նրան, որ երկրորդ աշխարհամարտում դաշնակիցներ էին, արտաքին քաղաքական հարցերում ունեին խոր հակասություններ, հատկապես Մերձավոր Արեւելքում, Թուրքիան հանձնվեց Անգլիայի պաշտպանությանը: Դեռեւս 1943թ.սկզբին Մեծ Բրիտանիայի վարչապետ Չերչիլը Ադանայում հանդիպել էր Թուրքիայի նախագահի, վարչապետի եւ բանակի գլխավոր շտաբի պետի հետ: Այդ հանդիպումից հետո Անգլիան Թուրքիային մատակարարեց 20 միլիոն ֆունտ ստեռլինգ գումարի ռորագույն զենք: Նույն թվի վերջին Կահիրեում տեղի ունեցավ Թուրքիայի նախագահ Իսմեթ Ինենյուի տեսակցությունը Ռուզվելտի եւ Չերչիլի հետ[1]:

Մեծ տերությունների ղեկավարները 1945թ. հուլիսի կեսին հավաքվեցին Բեռլինում, հերթական կոնֆերանսի: Կոնֆերանսի բացումից մեկ օր առաջ՝ հուլիսի 16-ին, տեղի ունեցավ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Ա.Իդենի եւ ԽՍՀՄ արտգործժողկոմ Վ.Մոլոտովի զրույցը, որի ընթացքում Ա.Իդենը հայտնեց, թե Լոնդոն ժամանած թուրքերն Անգլիայի կառավարությանը տագնապ են հայտնել այն առիթով, որ Մոսկվան հարց է հարուցել Թուրքիայի արեւելյան հողերը ԽՍՀՄ-ին վերադարձնելու մասին: Այդ հարցադրմանը Մոլոտովը պատասխանում է, որ 1921թ. թուրքերը, օգտվելով խորհրդային պետության թուլությունից, նրանից խլել են Խորհրդային Հայաստանի տարածքի մի մասը: Ժողկոմի փաստարկների առթիվ Իդենն կարծիք է արտահայտում, որ Թուրքիան համաձայն չէ բավարարել Խորհրդային Միության պահանջները: Մոլոտովը հիշեցնում է, որ անգլիական կառավարությունը բազմիցս հանդես է եկել ի պաշտանություն հայերի, իսկ բոլորովին վերջերս հայերի պահանջը պաշտպանել է դոկտոր Հյուլեթ Ջոնսոնը: Մոլոտովը նշում է նաեւ, որ եթե հարցը դրականորեն լուծվի եւ հայերի տարածքներն ընդարձակվեն, ապա արտասահմանում բնակվող նրանց շատ հայրենակիցներ կվերադառնան իրենց հայրենիքը: Զրույցի վերջում նա նշում է. «Թող թուրքերը հայերին տան Խորհրդային Միությանը, դա կլինի արդարացի»[2]:

Բուն կոնֆերանսում հայկական տարածքների մասին առաջինն արտահայտվում է Մեծ Բրիտանիայի պատվիրակությունը: Հուլիսի 22-ին Չերչիլը զգուշացրեց Ստալինին, որ նա չվախեցնի Թուրքիային, մեջտեղ հանելով տարածքների խնդիրը, որ Թուրքիան առանց այն էլ շատ անհանգստացած է Բուլղարիայում բուլղարական եւ խորհրդային զորքերի կուտակումներով: Հարցապնդմանը, Ստալինի առաջարկով, պատասխանում է Մոլոտովը: Հայտնելով, թե ինչից է ծագել հարցը, նա նշում է, որ «1921թ. Թուրքիայի կողմից Խորհրդային Հայաստանից եւ Խորհրդային Վրաստանից խլվել է տարածք, դա Կարսի, Արդվինի եւ Արդահանի մարզերի հայտնի տարածքն է: Այդ պատճառով էլ ես հայտարարեցի, որ դաշնակցային պայմանագիր կնքելու համար պետք է կարգավորել Վրաստանից եւ Հայաստանից խլված տարածքների հարցը, հետ վերադարձնել նրանց այդ տարածքները»[3]:

---

[1] Ժամանակակից Թուրքիա (տեղեկատու), էջ 226-227:
[2] Դաշնակից տերությունների ղեկավարների Բեռլինի կոնֆերանսը, էջ 44-45:
[3] Նույն տեղում, էջ 167-168:

Հաջորդ օրը շարունակվում է Թուրքիայի հարցի քննարկումը: Ստալինը, պատասխանելով Չերչիլի ակնարկներին, Բուլղարիայում խորհրդային զորքերի կուտակումներով Թուրքիային ահաբեկելու մասին, հայտնում է, որ այնտեղ կա ընդամենը 2 դիվիզիա, որ այն ավելի փոքրաթիվ է, քան անգլիական զորքերը Հունաստանում: Բացահայտ հասկացնելով, որ Անգլիան աջակցում է Թուրքիային, Ստալինն այնուհետեւ նշում է, թե ինչ վերաբերում է սահմաններն ուղղելու հարցին, ապա դա կարող է թուրքերին վախեցնել: Նա կրկնում է Մոլոտովի խոսքը. «Բայց խոսքը գնում է սահմանի վերականգմանը, որը գոյություն է ունեցել մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը: Ես նկատի ունեմ Կարսի շրջանը, որը պատերազմից առաջ գտնվում էր Հայաստանի կազմում եւ Արդահանի շրջանը, որը պատերազմից առաջ գտնվում էր Վրաստանի կազմում: Մենք գտնում ենք, որ Կարսի եւ Արդահանի շրջանում սահմանը ճիշտ չէ, եւ մենք Թուրքիային հայտարարեցինք, որ եթե նա ուզում է մեզ հետ դաշինք կնքել, հարկավոր է շտկել այդ սահմանը, եթե նա չի ուզում շտկել սահմանը, ապա վերանում է դաշինքի հարցը»[1]:

Չգալով, որ իրավիճակը ծայրահեղ շիկանում է, միջամտում է ԱՄՆ-ի նախագահ Հարրի Տրումենը: Նա ասում է. «Ինչ վերաբերվում է տարածքային հարցին, ապա այն վերաբերում է միմիայն Խորհրդային Միությանը եւ Թուրքիային եւ պետք է լուծվի նրանց միջեւ»[2] :

Կոնֆերանսում հայկական տարածքների հարցը այլեւս չբարձրացվեց, սակայն կանցնի մի քանի տարի եւ Չերչիլը կհայտարարի, թե հայկական տարածքների պահանջը «ոտնձգություն մըն է Թուրքիո ամբողջականության դեմ»[3], իսկ ԱՄՆ-ի հախագահ Տրումենն էլ կնշի, որ «Թուրքիո արեւելյան սահմանները Միացյալ Նահանգներու սահմաններն են»[4]:

1945թ. սեպտեմբերին Լոնդոնում կայացավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամ երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդակցություն, որտեղ դրսեւորվեցին ԽՍՀՄ-ի եւ Արեւմուտքի միջեւ լարվածության սրման նոր նշաններ: Թեպետ Վ.Մոլոտովը պնդում էր Կարսն ու Արդահանը անպայմանորեն Խորհրդային Միությանը կցելու մասին[5], սակայն խորհրդակցությունը ավարտվում է անարդյունք: Եվ հասկանալի է, որ նման պայմաններում անուշադրության պետք է արժանանար Ամերիկայի հայ ազգային խորհրդի հեռագիրը, որում պահանջվում էր «Թուրքիոյ մեջ հայկական նահանգներու միացումը Սովետ Հայաստանի ազատ եւ ապահով հանրապետութեանը»[6]:

Հայկական հողերի հարցի լուծմանը 1945թ. աշնանն ակտիվորեն սկսում է մասնակցել հայոց եկեղեցին, հանձին նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Զ-ի: Վերջինս նոյեմբերի 27-ին դիմում է ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի ղեկավարներին հայկական հողերը «առնել Թուրքիայի ձեռքից եւ վերադարձնել իրենց իսկական տերերին ու միացնել Սովետական Հայաստանին»: Իսկ նոյեմբերի 29-ին էջմիածնում տե-

---

[1] Դաշնակից տերությունների ղեկավարների Բեռլինի կոնֆերանսը, էջ 183-184:
[2] Նույն տեղում, էջ 186:
[3] Իզմիրլյան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկայիս (քննական տեսութիւն), Պէյրութ, 1964, էջ 276:
[4] Ժիրայր Նահրի, Հնչակեան կուսակցութիւնը եւ հայկական հողային դատը, Պէյրութ, 1968, էջ 18:
[5] «Զարթօնք» , Պէյրութ, 1967, 5 դեկտեմբերի:
[6] «Զարթօնք» , Պէյրութ, 1969, 16 սեպտեմբերի:

ղի ունեցավ մամուլի ասուլիս, որին մասնակցում էին կենտրոնական եւ հանրապետական թերթերի թղթակիցներ: Նրանք հավաքվել էին իմանալու, թե ինչպես է կաթողիկոս Գեւորգ Զ-ն պատկերացնում ու վերաբերվում հայության եւ հայրենիքի միավորման եւ հայ ժողովրդին մայր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի շուրջը համախմբվելու խնդրին: Կաթողիկոսը հայտարարեց. «Արտասահմանի հայության ճակատագրի մասին մեր հոգատարությունը եւ նրանցից ստացած բազմաթիվ նամակներն ու հեռագրերն մեզ մղեցին դիմելու երեք տերությունների ղեկավարներին՝ Ստալինին, Տրումենին եւ Էտլիին՝ խնդրելով վերացնել բազմաչարչար հայ ժողովրդի վերաբերմամբ թույլ տված պատմական մեծ անարդարությունը: Մեր դիմումով մենք խնդրում ենք Թուրքիայից վերցնել նրա կողմից բռնի կերպով զավթած եւ այժմ ամայի հողերը, վերադարձնել նրանց վաղեմի տերերին եւ այդ հողերը միացնել Սովետական Հայաստանին: Դա գաղթական հայերին հնարավորություն կտա մի ընտանիքի մեջ ապրելու իրենց արյունակից եղբայրների հետ, աշխատելու եւ զարգացնելու իրենց ազգային կուլտուրան»[1]:

Դրանից մի քանի օր առաջ՝ նոյեմբերի 25-ին «Պրավդա»-ում հրապարակվել էր Գր.Հարությունյանի «Խորհրդային Հայաստանի 25 տարին» հոդվածը, որտեղ վերստին նշվում էր, որ 1920թ., օգտվելով Հայաստանի անօգնական դրությունից, թուրքական զորքերը զավթեցին Հայաստանի տարածքի զգալի մասը՝ Կարս, Արդահան, Սարիղամիշ եւ Կաղզվան քաղաքներով:

Այդ օրերին պարզվեց նաեւ, որ Թուրքիայի նկատմամբ հողային պահանջներ ուներ նաեւ Վրաստանը: Թեպետ Ստալինը Պոտսդամի կոնֆերանսում նշել էր, որ Արդահանի շրջանը մինչեւ առաջին աշխարհամարտը գտնվել էր Վրաստանի կազմում, սակայն մամուլում որեւիցե ակնարկ Վրաստանի պահանջների մասին չէր եղել: Երեք մեծ տերությունների արտաքին գործերի նախարարների մոսկովյան խորհրդակցության օրերին՝ դեկտեմբերի 20-ին, «Պրավդա»-ում լույս տեսավ վրացական «Կոմունիստ» թերթից արտատպված՝ ակադեմիկոսներ Ս.Ջանաշիայի եւ Ն.Բերձենիշվիլու նամակ-հոդվածը՝ «Մեր օրինական պահանջները Թուրքիային» վերնագրով: Իրենց նամակում նրանք, վերհիշելով հեռավոր անցյալը, պնդում էին, որ հնուց Վրաստանին է պատկանել սեւծովյան ափի մի մասը՝ Տրապիզոն քաղաքի հետ միասին: Վրաց գիտնականները գրում էին, որ «Վրաց ժողովուրդը պետք է ետ ստանա իր հողերը՝ Արդահանը, Արդվինը, Օլթին, Թորթումը, Իսպիրը, Բայբուրդը, Գյումուշհանեն եւ Արեվելյան Լազիստանը՝ ներառյալ Տրապիզոնի եւ Գիրեսունի շրջանները, այսինքն Վրաստանից խլված տերիտորիաների ընդամենը մի մասը«[2]:

Պայմանավորվածություն կա՞ր արդյոք Հայաստանի եւ Վրաստանի ղեկավարների միջեւ Թուրքիայի նկատմամբ այդ քայլերի համար: Մեզ թվում է՝ ո՛չ, որովհետեւ նույն տարածքը (Արդահան, Օլթի) պահանջում էր եւ՝ Հայաստանը, եւ՝ Վրաստանը: Տեղյա՞կ էր այդ քայլերին Ստալինը, հավանաբար այո՛, որովհետեւ այդ մեծածավալ հոդվածը «Պրավդա» թերթում դժվար թե տպագրվեր առանց վերջինիս գիտության: Ինչի՞ համար էր դա արվում. հավանաբար Թուրքիայի վրա ճնշումն ուժեղացնելու նպատակով: Թուրքիան առանց այդ էլ ահաբեկված էր Անդրկովկասի

---

[1] «Սովետական Հայաստան», 1945, 2 դեկտեմբերի:

[2] "Правда", 1945, 20 декабря.

սահմանագծին խորհրդային զորքերի կուտակումից, սակայն իրականում զիջելու ոչ մի նշան ցույց չէր տալիս: Ընդհակառակը, Թուրքիայում ուժեղանում էր հակահայկական եւ հակախորհրդային մթնոլորտը եւ ձգտում դեպի Անգլիան եւ ԱՄՆ: Տրապիզոնում հրապարակվող «Հալք» թերթը 1945թ. դեկտեմբերի 26-ին գրում էր. «Մինչեւ որ արյան վերջին կաթիլը ցամաքի մեր երակներում եւ մեր սրտերը դադարեն բաբախել, պիտի կռվենք, պահելու համար մեր հողային ամբողջությունը»[1]:

Թուրքիայի նախագահ Իսմեթ Ինենյուն 1945թ. նոյեմբերի 1-ին Ազգային մեծ ժողովում հայտարարեց. «Թրքական հողամասի ոչ մի մասը չի կարող պահանջվել որեւէ մեկի կողմից»: Մերժում էր հողային հարցի մասին ԽՍՀՄ-ի հետ բանակցել: Իսկ վարչապետ Շյուքրու Սարաջօղլուն, 1946թ. հունվարի 6-ին հանդես գալով թուրքական մամուլի ներկայացուցիչների առջեւ, հայտարարում է, որ «ոչ մի հայ չի ապրում Կարս եւ Արդահան շրջանների մեջ», մոռանալով 1920թ. ջարդերը: Խորհրդային ճնշման հետ ուժեղանում էր արեւմուտքի պաշտպանությունը Թուրքիային՝ «խորհրդային ագրեսիայից»: «Իզվեստիա» թերթը 1946թ. հունվարի 8-ին հրապարակում է ՏԱՍՍ-ի հերքումը ֆրանսիական «Պարի Մատեն» թերթի այն լուրի առթիվ, ըստ որի Խորհրդային Միությունը պատերազմ է հայտարարել Թուրքիային եւ արյունահեղ ընդհարումներ են եղել ռուսական եւ թուրքական սահմանապահների միջեւ «Թուրքական Անդերի եւ խորհրդային Կովկասի» սահմանում: Ի՞նչ նպատակ էր հետապնդել ֆրանսիական թերթը այդպիսի լուր տարածելով: Ընկել էր սենսացիայի հետեւի՞ց, թե՞ կռահում էր խորհրդա-թուրքական բախման անխուսափելիությունը, դժվար է ասել: 1946թ. Խորհրդային Միությունը թեւակոխեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների նախապատրաստման եռուն շրջանը: 1946թ. փետրվարի 1-ին կայացավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու, ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Գր.Հարությունյանի հանդիպումը ընտրողների ներկայացուցիչների հետ: Նա հանդես եկավ ընտրողների առջեւ, ուր հիմնականում խոսեց «Թուրքիայի կողմից զավթած հայկական մարզերի» հարցի մասին: Նշելով Թուրքիայի ձեռքին գտնվող հայկական մարզերը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու այժմեականության մասին, նա ասաց. «Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը»: Այնուհետեւ նա պարզաբանում էր, որ հայկական մարզերը վերադարձնելու հարցը դրված է ամբողջ հայ ժողովրդի կողմից, որ այդ պահանջները պաշտպանում է Խորհրդային Հայաստանի կառավարությունը: Վերջինս գտնում է, որ Թուրքիայի կողմից հայկական հողերի նրանց իսկական տիրոջը Խորհրդային Հայաստանին վերադարձնելը արդարացի է, եւ որ «այդ հարցը խիստ կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման համար»[2]: Իր ճառը Հայկոմկուսի ղեկավարը ավարտեց «մենք կհասնենք մեր օրինական պահանջների բավարարմանը» խոսքերով:

Նման լավատեսության պատճառը հավանաբար խորհրդային զորքերի օրեցօր աճող կենտրոնացումն էր թուրքական սահմանում: Իհարկե, դրա մասին հաղորդումներ չկային խորհրդային մամուլում, ոչ էլ ուղղակի արխիվային վավերագրեր: Այնուամենայնիվ, պահպանվել են փաստա-

---

[1] «Զարթօնք», Պէյրութ, 1967, 26 դեկտեմբերի:
[2] «Սովետական Հայաստան», 1946, 3 փետրվարի:

թղթեր, որոնք վկայում են դրա մասին: Այսպես, ՀԿ(բ)Կ Հոկտեմբերյանի շրջկոմի քարտուղար Ե.Աղաջանյանը 1946թ. նոյեմբերի 22-ին զեկուցելով Գր. Հարությունյանին զինվորների կողմից այգիները վնասելու մասին, նշում է, որ շրջանի սահմանամերձ Հոկտեմբեր, Բամբակաշատ, Արմավիր, Մեծ Շահրիար եւ Մարգարա գյուղերում տեղակայված են զինվորական ստորաբաժանումներ, որոնց մեծ մասը ժամանել է այս տարի[1]: Հայաստանում տեղաբաշխված 7-րդ գվարդիական բանակի հրամանատարը 1946թ. դեկտեմբերի 2-ին Կենտկոմի քարտուղարին հայտնում էր, որ Քանաքեռի պահեստարաններում զինամթերքի քանակը օրեցօր ավելանում է[2]:

Հայ գիտնականները նույնպես ակտիվորեն մասնակցում էին հայկական պահանջատիրության պարզաբանմանը: 1946թ. փետրվարի 20-ին Մոսկվայում՝ ԽՍՀՄ ժողկոմխորհին կից բարձրագույն դպրոցի գծով կոմիտեի դասախոսական դահլիճում ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ալեքսեյ Ջիվելեգովը հանդես եկավ «Հայաստանը եւ Թուրքիան» դասախոսությամբ: Գիտնականը պատմելով հայ ժողովրդի պատմական ճակատագրի մասին, ներկայացրեց Հայաստանից բռնագրավված Վանի, Բիթլիսի եւ Երզրումի մարզերի պատմությունը: Նա մասնավորապես նշեց. «Թուրքիան, օգտվելով խորհրդային հանրապետությունների դժվարություններից եւ Հայաստանի թուլությունից, հենվելով գերմանական իմպերիալիզմի ուղղակի օգնության վրա, գրավեց Կարսի եւ Արդահանի մարզերը եւ Սուրմալուի օկրուգը Հայաստանի այն մասից, որը նախկինում մտնում էր ռուսական կայսրության կազմի մեջ: Հայերի խոհերն անշեղորեն ուղղվում են դեպի իրենց տարածքների վերականգնումը պատմական սահմաններում: Դեպի Խորհրդային Հայաստան են շրջված ողջ աշխարհի հայության հայացքները: Դեպի հայրենիք ձգող տարերային ուժը, որը նկատվում է արտասահմանում բնակվող հայերի մեջ, նոր ուժով է բարձրացնում հայ ժողովրդի համար կենսականորեն կարեւոր հարցը՝ Ռուսաստանի կազմի մեջ մտած հայկական տարածքների վերամիավորումը Խորհրդային Հայաստանին: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի, Հայաստանի կառավարության, վերջերս ընտրված Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ Զ-ի անուններով աշխարհի տարբեր ծայրերից, որտեղ հայկական գաղութներ կան, ստացվում են դիմումներ, որոնցում հաստատ հույս է հայտնվում, որ Հայկական Խորհրդային Հանրապետությունը վերջապես իր դրոշի ներքո կհավաքի հայկական պատմական բոլոր տարածքները եւ աշխարհով սփռված ողջ հայ բնակչությունը: Այդ պահանջների բավարարման արդարացիությունը ոչ մի կասկած չի հարուցում»[3]:

Հայկական տարածքների հարցը շարունակում էր մնալ Խորհրդային Հայաստանի բնակչության բոլոր խավերի ուշադրության կենտրոնում: Հետաքրքիր է ՀԿ(բ)Կ Լենինականի քաղկոմի միջնորդությունը ՀԿ(բ)Կ կենտկոմի առջեւ՝ նշելու քաղաքը «թուրքական զավթիչներից» ազատագրելու 25 ամյակը[4]: Փաստորեն, խորհրդային իշխանության ամբողջ 25-ամյա ընթացքում առաջին անգամ էր հիշատակվում թուրքերի կողմից Ալեքսանդրապոլի օկուպացիայի մասին:

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 98, թ. 213:
[2] Նույն տեղում, թ. 215:
[3] "Известия", 1946, 22 февраля, N 46.
[4] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 79, թ. 56.:

Հայկական տարածքների պաշտպանության օգտին հանդես եկան արտասահմանյան մի շարք երկրների պետական եւ հասարակական գործիչներ, զանգվածային լրատվության միջոցներ: 1945թ. նոյեմբերին ամերիկյան նշանավոր գործիչների մի խումբ ստեղծում է «Հայաստանի նկատմամբ արդարացի վերաբերմունքի համար պայքարի ամերիկյան կոմիտե», կամ ինչպես նրան անվանում էին «հայերի շահերի պաշտպանության ամերիկյան կոմիտե»: Կոմիտեի նախագահն էր էդվին Սմիթը՝ Ամերիկա-խորհրդային բարեկամության ազգային խորհրդի նախկին ղեկավարը: 1945թ. հուլիսի վերջերին նա եղել էր Երեւանում, շրջել հանրապետությունում, հանդիպել Հայաստանի ղեկավարների հետ եւ քաջատեղյակ էր խնդրո առարկա հիմնահարցին[1]: Կոմիտեի քարտուղար Սիրլը, որը նաեւ Նյու Յորքի բողոքական եկեղեցիների դաշնության գլխավոր քարտուղարն էր, հայտարարեց, որ նորաստեղծ կոմիտեն կձգտի հասնել առաջին համաշխարհային պատերազմից հետո ամբողջ աշխարհում ցրված մեկուկես միլիոն հայ փախստականների հայրենադարձությանը: Կոմիտեն նաեւ իր առջեւ խնդիր դրեց օժանդակել հայ ժողովրդի պահանջներին՝ Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող հայկական հողերի միացմանը Խորհրդային Հայաստանին: Օբերլինի քոլեջի աստվածաբանության հայտնի պրոֆեսոր Հորթոնը հայտարարեց. «Հայկական հիմնահարցի արդարացի լուծումը հայկական գավառների ազատագրումն է»: Բացի հիշված անձանցից, կոմիտեի կազմում էին նաեւ կրթության բնագավառի գործիչ Դագգանը, Ջոն Հոպկինսի համալսարանին կից Պավլովյան ինստիտուտի դիրեկտոր Քէնթը, «Չերչմեն» հանդեսի խմբագիր Շիպլերը, Հարվարդի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Սարոկինը, բեւեռախույզ Ստեֆանսոնը, լրագրող Վոլտեր Դյուրանտը, գրողներ Ադամիչը, Լենգիելը, Կարլսոնը եւ այլ հայտնի գործիչներ: Կոմիտեի հիմնադիր անդամներից էր 1945թ. դեկտեմբերին մահացած հանճարեղ գրող Թեոդոր Դրայզերը[2]:

Երեք Մեծ տերությունների արտգործնախարարների մոսկովյան (1945թ. դեկտեմբերի) խորհրդակցությանն ուղղված կոմիտեի դիմումում նշված է. «Ավելի քան հարյուր նշանավոր ամերիկացի, բնակչության բոլոր խավերի ներկայացուցիչներ վերջերս միավորվել են «Հայաստանի նկատմամբ արդարացի վերաբերմունքի համար պայքարի Ամերիկյան կոմիտե» ստեղծելու նպատակով: Այդ ամերիկացի տղամարդիկ եւ կանայք շատ անհանգստացած են մեր ժամանակի մեծագույն անարդարության համար այն փաստով, որ ամբողջ աշխարհի հայ բնակչության կեսից ավելին վտարվել է իր հայրենիքից՝ թուրքական կառավարիչների դաժանությամբ ու ճնշմամբ: Կոմիտեն դաշնակից կառավարություններից վըճռականորեն պահանջում է բավարարել հայ ժողովրդի արդարացի պահանջները, վերադարձնել հայկական պատմական հողերը Խորհրդային Հայաստանին եւ արտասահմանյան հայերին հնարավորություն տալ վերադառնալ իրենց հայրենիքը»[3]:

1946թ. հունվարին կոմիտեն ուղերձ հղեց Լոնդոնում գումարված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի առաջին նստաշրջանի մասնակից ամերիկյան ներկայացուցիչներին, պահանջելով կատարել ԱՄՆ-ի նախկին նա-

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 93, թ. 172:
[2] Նույն տեղում, ց. 26, գ. 47, թթ. 173-174:
[3] Նույն տեղում, թթ. 117-118:

խագահ Վիլսոնի 1920թ. որոշումը Թուրքիայի կողմից բռնազավթած տարածքները Հայաստանին վերադարձնելու մասին: Կոմիտեն հայտարարում է, որ օժանդակում է «Ամերիկայի հայկական ազգային խորհրդի» հայկական տարածքները վերադարձնելու եւ հազարավոր հայերի հայրենադարձության պահանջներին եւ կոչ էր անում ամերիկյան պատվիրակությանը ամենաբարյացկամ ոգով վերաբերվել հայ ժողովրդի կարիքներին, երբ էլ այն դառնա ՄԱԿ -ի քննարկման առարկա[1]:

1946թ. ապրիլ ամսին Ամերիկյան կոմիտեն, Ամերիկայի հայկական ազգային խորհրդի հետ, ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում անցկացրեցի ցույցեր, որոնք ավարտվեցին ապրիլի 28-ին Նյու Յորքի Կարնեգի Հոլում կազմակերպված զանգվածային ցույցով: Ներկայացուցիչների պալատի դեմոկրատ անդամ Սելլերը իր ելույթում, նշելով հայ ժողովրդի ներդրումը Միավորված ազգերի պայքարի գործում, հայտարարեց, որ Թուրքիայի հայկական գավառները պետք է միանան ազատ, անկախ Խորհրդային Հայաստանին եւ արտասահմանում գտնվող հայերին պետք է հնարավորություն տրվի՝ վերադառնալու իրենց հայրենիքը»: Սենատոր Թոբին հայտարարեց, որ հայերը «լոյալ էին դաշնակիցներին ինչպես 1-ին, այնպես էլ 2-րդ աշխարհամարտերում, այն դեպքում, երբ թուրքերը կռվում էին Գերմանիայի կողքին առաջին համաշխարհային պատերազմում, եւ պահպանեցին գերմանացիներին օգտակար չեզոքություն՝ երկրորդում»: Նյու Յորքի քաղաքապետարանի խորհրդի անդամ Իսաքսը նշեց, որ չպետք է թույլ տրվի, որ ՄԱԿ-ը վերածվի նոր «Սրբազան միության» եւ իր նպատակը դնի պահպանել Status Quo-ն: Դրա համար ՄԱԿ-ը պետք է վերացնի անարդարությունը եւ Խորհրդային Հայաստանին վերադարձնի Թուրքիայի կողմից զավթած հայկական տարածքները: Նա կոչ արեց Պետական դեպարտամենտին օժանդակել հայ ժողովրդի պահանջներին, «քանի որ Թուրքիան, որը թշնամի էր առաջին աշխարհամարտում եւ այժմ էլ ճնշում է իր ազգային փոքրամասնություններին, արժանի չի ոչնչի, բացի խիստ պատժից»: Ելույթ ունեցան նաեւ Սմիթը, Սիրլը, ներկայացուցիչների պալատի անդամ Սեյվիջը, բեւեռախույզ Ստեֆանսոնը: Հանրահավաքն ընդունվեց բանաձեւ, որում կոչ էր արվում ՄԱԿ-ին «համակիր ուշադրություն ցուցաբերել եւ արագ լուծել հայկական հարցը այդ բանաձեւի առաջարկություններին համաձայն», այսինքն օժանդակել Խորհրդային Հայաստանին վերամիավորելու Կարսի, Արդահանի, Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի նահանգները: Բանաձեւի պատճեններ ուղարկվեցին ՄԱԿ-ի բոլոր անդամներին, ինչպես նաեւ ԱՄՆ-ի նախագահ Տրումենին եւ պետքարտուղար Բիրսին: Հայ ժողովրդի արդարացի պահանջների պաշտպանությամբ հանդես եկան Ֆիլադելֆիայի քաղաքագլուխ Սամուելը, Ռոդ Այլենդի նահանգապետ Պաստորը եւ սենատոր-դեմոկրատ Գրինը: Մայիսի սկզբին «Նյու Յորք Թայմս»-ը հրապարակեց Ամերիկյան կոմիտեի նախագահ Սմիթի նամակը, որտեղ նշվում էր, որ թուրքերի կողմից հայերի հետապնդումը վաղուց առաջացրել է ողջ դեմոկրատական եւ քրիստոնեական աշխարհի զայրույթը: Այնուհետեւ նա գրում էր, որ ամերիկյան ազդեցիկ որոշ շրջաններ, դժբախտաբար, առարկում են հայերի պահանջներին այն պատճառով, որ այն ծառայում է Խորհրդային Միության ռազմավարական եւ տնտեսական շահերին: Այդ առիթով Սմիթը հայտարարում էր. «Այդ փաստարկը կոչ է՝ արհամարհել

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թ. 122:

մարդկայնության ու արդարության պահանջը միայն նրա համար, որ արդյունքում պատահական օգնություն կլինի երեկվա պատերազմի դաշնակիցներից մեկին: Այդ դիրքորոշումը չի համապատասխանում այն իդեալներին, որոնց համար կռվում եւ զոհվում էին ամերիկացիները, ռուսները, անգլիացիները եւ հայերը: Հայկական հարցը ստեղծվել է Թուրքիայի անցած պատմության մութ էջերում եւ ոչ թե Խորհրդային Միության մեջ»[1]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հայկական սփյուռքը հիմնականում համախմբել էր Միավորված ազգերի շուրջը, տասնյակ հազարավոր հայեր կռվել էին ԱՄՆ-ի եւ Անգլիայի բանակների շարքերում, եվրոպական երկրների դիմադրության շարժման մեջ: Հատկանշական է այն փաստը, որ սփյուռքահայերն իրենց հույսը կապեցին ԽՍՀՄ-ի եւ նրա բանակի հաղթանակի հետ: Սփյուռքահայությունը միավորվեց: Տարբեր երկրներում կազմակերպվեցին ազգային խորհուրդներ, որոնք խնդիր դրեցին բոլոր միջոցներով օժանդակել Կարմիր բանակի հաղթանակին: Նրանք հավատում էին, որ հաղթանակը վերջ կդնի ազգային այն աղետի հետեւանքներին, որը վրա հասավ առաջին աշխարհամարտի տարիներին, որ իրենք կազատվեն «գաղթականի» դժբախտ ճակատագրից եւ հնարավորություն կունենան վերադառնալ հայրենիք: Այդ կազմակերպություններն իրենց առջեւ խնդիր դրեցին տերությունների առջեւ բարձրացնել Թուրքահայաստանի խնդիրը, հասնել նրան, որ Թուրքիայի կողմից բռնազավթած հայկական տարածքները միավորվեն Խորհրդային Հայաստանի հետ, քանզի հանրապետությունը իր փոքր տարածքով հնարավորություն չուներ ընդունելու աշխարհասփյուռ ավելի քան մեկ միլիոն հայերին:

1945թ. մարտի 19-ին ԽՍՀՄ կառավարության կողմից խորհրդա-թուրքական բարեկամության եւ չեզոքության պայմանագրի դենոնսացիայի մասին լուրն առնելուն պես սփյուռքահայության շրջաններում ավելի է ամրապնդվում պատերազմից հետո հայկական հողերի վերադարձման հավատը, նոր թափով է ծավալվում ակտիվ գործունեությունը համաշխարհային հասարակությանը հայկական հարցի էությունը ներկայացնելու համար: Ապրիլի 5-ին Փարիզում տեղակայված Հայ փախստականների կենտրոնական կոմիտեի նախագահ Արշակ Չոպանյանը դիմում է Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպան Ալեքսանդր Բոգոմոլովին: Շարադրելով Թուրքիայի հայ բնակչության եղեռնի եւ բռնագաղթի պատմությունը, առաջին աշխարհամարտից հետո դաշնակիցների երկերեսանի քաղաքականությունը, Չոպանյանը հայտնում է, որ հայ գաղթականության երազանքն է վերադառնալ պատմական հայրենիք, որը պետք է միանա Խորհրդային Հայաստանին: Ապա հույս էր հայտնում, որ դեսպանը հայ փախստականների ցանկությունը կհասցնի ԽՍՀՄ կենտրոնական եւ Հայաստանի կառավարություններին, իսկ ԽՍՀՄ ներկայացուցիչները Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսի օրակարգում կդնեն Թուրքահայաստանի ազատագրման հարցը[2]:

Ապրիլի 7-ին Նյու Յորքում գտնվող Հայկական ազգային կոմիտեն հեռագիր է հղում Ստալինին, հուսալով, որ նա կհիշի հայերի արդարացի գործը: Մասնավորապես, նշվում է, որ հայերը «չեն մոռացել Ձեր պատ-

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թթ. 175- 178
[2] Նույն տեղում, ց. 034, գ. 95, թթ. 203-205:

մական հայտարարությունը Թուրքահայաստանի իրավունքների մասին եւ հաստատ համոզված են, որ Դուք նորից կվերանայեք այդ իրավունքները համակրանքի նույն ոգով»[1]:

Մայիսի 28-ին նախկին Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ Համո Օհանջանյանը դիմում է Ստալինին, Տրումենին եւ Չերչիլին, որտեղ խնդրում է ամեն ջանք գործադրել հայ ժողովրդին հուզող հարցը՝ բազմադարյա հայրենի հողի նկատմամբ իրավունքների վերականգնումը, լուծելու համար[2]:

Սփյուռքահայ կազմակերպությունները հատկապես մեծ հույսեր էին կապում 1945թ. ապրիլին Սան-Ֆրանցիսկոյում բացվելիք Միավորված ազգերի կոնֆերանսի հետ: Ինչպես արդեն նշել ենք, Ամերիկայում գործող հայկական երկու կազմակերպություններն էլ հուշագրերով դիմում են կոնֆերանսին: Ամերիկայի հայկական ազգային խորհրդի, որի կազմի մեջ մտնում էին ամերիկահայ բոլոր կուսակցությունները, հասարակական, մշակութային ու կրոնական կազմակերպությունները, բացառությամբ ՀՅԴ-ի, հուշագրում նշվում էր, որ հասել է ժամանակը, որ Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող հայկական տարածքը միացվի Հայաստանին, ինչը հնարավորություն կտար տարբեր երկրներում բնակվող մեկ ու կես միլիոն հայերին վերադառնալ հայրենիք: Այնուհետեւ նշվում էր, որ դաշնակիցներն առաջին աշխարհամարտից հետո հայերին խոստացան ազատագրում, իսկ ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը որոշեց անկախ Հայաստանի սահմանները, որը սակայն չիրականացավ: Մեկը մյուսին հաջորդող հանդիսավոր խոստումները մոռացվում էին կամ զոհաբերվում էին հզոր տերությունների սեփական շահերին: Շեշտելով երկրորդ աշխարհամարտի ժամանակ դեմոկրատիան եւ առաջադիմությունը պաշտպանած հայ ժողովրդի նվաճումները՝ հուշագիրը մատնացույց է անում. «պատերազմի ժամանակ հայերը կրկին անգամ ապացուցեցին իրենց նվիրվածությունը դեմոկրատիային եւ Միավորված Ազգերի գործին: Նրանք նորից պայքարեցին եւ աչքի ընկան ամերիկյան բանակի շարքերում եւ Միավորված մյուս ազգերի բանակներում: Միայն Կարմիր բանակում կար 50 հայ գեներալ եւ ավելի քան քառորդ միլիոն հայ զինվոր»: Գնահատելով Թուրքիայի վարքագիծը՝ նշվում էր, որ վերջինս «ապաստան էր որոնում կեղծ չեզոքության քողի տակ, միեւնույն ժամանակ ցույց տալով նացիստներին ամեն տեսակ օգնություն»[3]: Շեշտվում էր, որ Հայաստանի մի մասը, որտեղ հայերը ապրել են անհիշելի ժամանակներից մինչեւ առաջին աշխարհամարտը, մնում է Թուրքիայի տիրապետության ներքո, այն ժամանակ, երբ մեկ ու կես միլիոն հայեր ապրում են որպես գաղթականներ եւ վտարանդիներ աշխարհի չորս ծագերում: Հուշագրի վերջում նշվում էր, որ հասել է ժամանակը, որպեսզի թուրքական տիրապետության տակ գտնվող հայկական նահանգները միացվեն Խորհրդային Հայաստանին, որպեսզի արտասահմանում գտնվող հայերը կարողանան վերադառնալ իրենց օջախները, քաղաքներն ու գյուղերը: Հուշագիրը ավարտվում էր այն հույսով, որ «այս անգամ հայ ժողովուրդը խաղալիք չի դարձվի ուժի քաղաքականության միջազգային շախմատային տախտակի վրա»:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թ. 146:
[2] Նույն տեղում, ց. 034, գ. 95, թթ. 178-179:
[3] «Սովետական Հայաստան», 1945թ., 13 հունիսի:

Հայկական ազգային կոմիտեն Ս.Վրացյանի ստորագրությամբ հուշագրով դիմեց Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսին: Հուշագիրն իր բովանդակությամբ շատ չէր տարբերվում առաջինից: Բացառություն էր փաստերի հավաստիությունը: Զգալի տեղ էր հատկացված Հայաստանի առաջին հանրապետությանը, Սեւրի պայմանագրին, հայկական հարցի վերաբերյալ Ազգերի լիգայի բանաձեւերին: Եվ ամենակարեւորը, եթե Ազգային խորհուրդը առաջարկում էր հայկական տարածքները միացնել Հայաստանին, ասել է թե Խորհրդային Միությանը, ապա Ազգային կոմիտեն պահանջում էր հայկական տարածքներից եւ Խորհդային Հայաստանից ստեղծել նոր Հայկական հանրապետություն[1]: Սակայն, շուտով Հ.Յ.Դ.-ն ստիպված էր հաշտվել իրերի դրության հետ եւ իր հետագա գործունեության հիմքում դրեց հայկական տարածքները Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջը:

Հայկական սփյուռքը վառ հույսեր էր կապում տերությունների ղեկավարների հերթական կոնֆերանսի հետ, որը սկսվեց հուլիսի կեսին Բեռլինի Պոտսդամ արվարձանում: Ամերիկայի Հայկական ազգային խորհուրդը հուլիսի 19-ին հեռագիր է ուղարկում տերությունների երեք ղեկավարներին՝ հայկական հարցը կոնֆերանսի օրակարգում ընդգրկելու համար: Հեռագրում ասվում էր. «Մենք հավատում ենք, որ Դուք կընդունեք որոշում հայ ժողովրդի արդարացի պահանջները բավարարելու մասին: Հայերին պետք է տրվի հնարավորություն կրկին վերաբնակվել իրենց պատմական հայրենիքում՝ հայկական նահանգներում, որոնք ներկայումս գտնվում են Թուրքիայի կազմում եւ որոնք այժմ պետք է վերադարձվեն նրանց միակ օրինական տիրոջը՝ Խորհրդային Հայաստանին»[2]:

Վկայակոչելով հայ ժողովրդի պատմական անցյալը, հեռագրի հեղինակները գրում են, որ հայերն առաջինն են ընդունել քրիստոնեությունը եւ ավելի քան մեկ ու կես հազարամյակ պատվար են եղել կիսավայրենի հորդաների դեմ, որոնք ձգտել են նվաճել Եվրոպան: Վերջում Հայաստան ներխուժեցին թուրք-օտոմանները եւ ավելի քան հինգ հարյուրամյակ նրան ճնշման ենթարկեցին, թալանի եւ պարբերական ոչնչացման: Կազմակերպելով հայերի ջարդեր 1895-1896թթ., ապա առաջին աշխարհամարտի տարիներին, Գերմանիայի աջակցությամբ Թուրքիան իրագործեց հայ բնակչության զանգվածային ոչնչացում: Այնուհետեւ, անցնելով դաշնակիցների կողմում հայերի մասնակցությանը պատերազմին, եւ հայերին տրված խոստումները չկատարելուն, ինչպես նաեւ երկրորդ աշխարհամարտի ընթացքում Թուրքիայի քաղաքականությանը, հեռագրի հեղինակները գրում են. «Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հայերը մի անգամ եւս ցուցաբերեցին ազատության իրենց ձգտումն եւ քաջաբար կռվեցին Միացյալ ազգերի, հատկապես ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի բանակներում: Այժմ հասել է ժամանակը, երբ թուրքերը պետք է վճարեն հայերին՝ դարավոր անարդարության համար, թեպետ նրանք երբեք չեն կարող քավել իրենց մեղքը: Մեկ ու կես միլիոն հայեր այժմ ապրում են Խորհրդային Հայաստանից դուրս: Նրանց մեծ մասը ցանկանում է վերադառնալ իր նախահայրերի երկիրը եւ մասնակցել նրա վերականգնմանը: Հայկական ծագմամբ ամերիկացիները, ինչպես եւ ամբողջ աշխարհի հայերը խնդրում են Պոտսդամում ընթացող կոնֆերան-

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թ. 148:
[2] Նույն տեղում, թ. 109:

սին հայ ժողովրդի հարցը ընդգրկել իր օրակարգում, որպեսզի ընդունվի արդարացի որոշում, որը հնարավորություն կտար հայերին կրկին վերադառնալ իրենց պատմական հայրենիքը, եւ որ այդ հողերը միացվեն Խորհրդային Հայաստանին»[1]:

Տարբեր գաղթօջախներից եւս կոնֆերանսի հասցեով հեռագրեր են ուղարկում հայկական այլ կազմակերպություններ: Հարավային Ամերիկայի հայկական գաղութների գործադիր կոմիտեն օգոստոսի 3-ին հեռագրում է Պոտսդամ՝ խնդրելով ազատագրել հայկական նահանգները եւ միացնել դրանք Խորհրդային Հայաստանին[2]: Ռումինիայի հայկական գաղութի ներկայացուցիչները հուլիսի 31-ին հանրահավաք են գումարում եւ Թուրքիայի հայկական տարածքները Հայաստանին միացնելու պահանջով դիմում են մեծ տիրությունների երեք ղեկավարներին[3]:

ԱՄՆ-ի բազմաթիվ ազդեցիկ հայկական կազմակերպություններ դիմեցին 1945թ. սեպտեմբերին Լոնդոնում ընթացող ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամ երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդակցությանը՝ պահանջելով Թուրքիայի հայկական տարածքները վերադարձնել եւ միացնել Խորհրդային Հայաստանին: Ամերիկահայերի ազգային խորհրդի Նյու Յորքի բաժանմունքի զանգվածային հանրահավաքը դիմում է խորհրդակցությանը՝ պահանջելով արդարացիորեն լուծել հայ ժողովրդի խնդիրները: Նույնպիսի պահանջներ են ներկայացնում Քոնեքթիքութի նահանգի Բրիջպորտ եւ Հարթֆորդ քաղաքներում գումարված հանրահավաքները: Ֆիլադելֆիայի ամերիկահայերի ազգային խորհրդի նախագահ, հայտնի բանաստեղծ Կարապետ Սիտալը պահանջում է, որպեսզի «հայկական տարածքները, որոնք ներկայումս գտնվում են Թուրքիայի տիրապետության ներքո, դառնան Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասը»: Համանման պահանջով հանդես է գալիս Ուորչեսթրում (Մասաչուսեթսի նահանգ) կայացած ՄԴՀԿ 62-րդ համագումարը: Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը Լոնդոնի խորհրդակցությանը հղած ուղերձում նշում է, որ «արդեն վաղուց հասել է ժամանակը, որպեսզի հայերի հանդեպ ցուցաբերվի արդարացի վերաբերմունք: Մենք կոչ ենք անում հայրենադարձնել մեկ ու կես միլիոն թուրքահայերին, որոնք ցրված են աշխարհով մեկ եւ Թուրքիայի հայկական գավառները միացնել ազատ Խորհրդային Հայաստանին»[4]: Խորհրդակցությանը դիմում են նաեւ Կալիֆորնիայի, Վիսքոնսին նահանգի Ռեյսին քաղաքի հայերը, Ֆրանսիայի եւ Ռումինիայի հայկական գաղութները, Ամերիկայի հայկական ավետարանչական միությունը:

Հ.Յ.Դ. ներկայացուցիչ Միսակյանը սեպտեմբերի 7-ին Լոնդոնում հուշագիր հանձնեց ԽՍՀՄ արտգործնախարար Մոլոտովին, իսկ պատճենները՝ մյուս երկրների նախարարներին՝ հայ ժողովրդի ցանկությունների եւ օրինական պահանջների մասին: Ներկայացված փաստաթղթում տալով հայկական հարցի հիմնական տեսանկյունները, Հ.Յ.Դ. պահանջում էր մշակել պատշաճ ծրագիր, որով Թուրքիային կառաջարկվեր հо-

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թ. 110:
[2] Նույն տեղում, թ.108:
[3] Նույն տեղում, թ.128:
[4] Նույն տեղում, թթ. 111-113:

գուտ Խորհրդային Հայաստանի հրաժարվել այն բոլոր տարածքներից, որոնք նախագահ Վիլսոնը տվել էր Հայաստանին[1]:

Հայկական սփյուռքը մեծ ակտիվություն ցուցաբերեց նաեւ երեք տերությունների արտաքին գործերի նախարարների մոսկովյան խորհրդակցության օրերին: Պահանջը նույնն էր՝ Թուրքիայի հայկական տարածքները միացնել Խորհրդային Հայաստանին[2]:

1946թ. հունվարին Լոնդոնում գումարված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին նստաշրջանի օրերին բազմաթիվ հայկական կազմակերպություններ իրենց հեռագրերով, ուղերձներով նորից պահանջում էին անդրադառնալ հայկական հարցին: Լիբանանի հայկական ազգային խորհուրդը Սիրիայում եւ Լիբանանում ապրող 200 հազար հայերի անունից պահանջում էր Խորհրդային Հայաստանին միացնել Թուրքիայի կողմից բռնազավթած տարածքները: Առաջին նստաշրջանին են դիմում նաեւ Եգիպտոսի, Ուրուգվայի, Արգենտինայի, Շվեյցարիայի հայկական գաղութների ներկայացուցիչները, Փարիզում գործող «Թուրքահայաստանի պաշտպանության կոմիտեն»[3]:

Հ.Յ.Դ. անունից Միսակյանը նստաշրջանի նախագահին հանձնեց հուշագիր, որտեղ ասվում էր. «Առաջին՝ վերամիավորել Խորհրդային Հայաստանին ԱՄՆ-ի նախագահի սահմանած հայկական գավառները՝ ըստ Սեւրի պայմանագրի: Այդ պահանջին հակադրել այն փաստարկը, թե այդ գավառներում հայեր չեն մնացել, համազոր է թուրքական հանցագործությունների արդարացմանը: Այժմ աշխարհում հաշվում է ավելի քան 3,5 միլիոն հայ, որոնցից 2,5 միլիոնը գտնվում է Խորհրդային Միությունում: Երկրորդ՝ հայրենադարձնել եւ վերականգնել 1915թ. զանգվածային ջարդերից հետո կենդանի մնացած հայերի իրավունքները, որոնք այժմ գտնվում են արտասահմանում, հիմնականում Մերձավոր Արեւելքում: Երրորդ՝ Թուրքիայի կողմից համապատասխան պատերազմական տուգանքի վճարում այն ամբողջ ունեցվածքի համար, որը ոչնչացվեց, քանդվեց, խլվեց եւ բռնագրավվեց թուրքական կառավարության եւ ժողովրդի կողմից համաշխարհային պատերազմից առաջ, ընթացքում եւ հետո»[4]:

Հայկական սփյուռքը իր պահանջներով դիմում էր նաեւ անմիջապես մեծ տերությունների ղեկավարներին, արտաքին գործերի նախարարներին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին եւ այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին, Խորհրդային Հայաստանի ղեկավարներին: Այդպիսի առաջին դիմում հղվեց Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսին մասնակցող Վ.Մոլոտովին: Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը նշում էր, որ 1920թ. նոյեմբերի 29-ի խորհրդայնացումը Հայաստանին փրկեց թուրքական վտանգից եւ ներքին աղետից, որը իրականացնում էին դաշնակները: Այնուհետեւ, արտասահմանի հարյուր հազարավոր աշխատավոր ժողովրդի անունից խորհուրդը խնդրում էր օժանդակել հայկական տարածքների ազատագրմանը[5]:

Համանման խնդրանքով Ստալինին դիմեցին Բեյրութի, Հունաստանի, Սիրիայի եւ Լիբանանի հայկական գաղութների ներկայացուցիչները,

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թ. 154:
[2] Նույն տեղում, թ. 143:
[3] Նույն տեղում, թթ.119-124, 157:
[4] Նույն տեղում, թ. 158:
[5] Նույն տեղում, թթ. 126-128:

Ամերիկայում գործող «Տարոն-Տուրուբերան» կազմակերպության ամենամյա համագումարը[1]: Խարբին քաղաքի հայկական հասարակությունը 1945թ. հոկտեմբերի 7-ի հանրահավաքից հետո նամակով դիմեց գեներալիսիմուս Ստալինին, որտեղ ասված է. «Մենք՝ հայերս, սույնով դիմում ենք Ձեզ, սիրելի Իոսիֆ Վիսարիոնի, որպես մեծ առաջնորդի եւ ազատատենչ ժողովուրդների պաշտպանի, եւ թախանձալի խնդրում ենք Ձեզ օգնել մեր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին, միացնել 1920թ. եւ դրանից առաջ զավթած տարածքները, որոնք պատմականորեն պատկանում են մեզ»[2]:

Սփյուռքից բազմաթիվ հեռագրեր էին ստացվում նաեւ Խորհրդային Հայաստանի ղեկավարության հասցեով: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մացակ Պապյանի անունով հեռագրեր ստացվեցին Բուենոս-Այրեսից, Բեյրութից, Սան-Պաուլոյից, որտեղ իրենց համերաշխությունն էին հայտնում հայկական տարածքների պահանջներին [3]:

Հ.Յ.Դ. ազդեցության ներքո գտնվող Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի հայկական հարցի հանձնաժողովը 1945թ. օգոստոսի 18-ին ՀԽՍՀ արտգործժողկոմ Ս.Կարապետյանին ուղարկեց նամակ, որով ցանկանում էր Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը տեղյակ պահել հայկական հարցի գծով հանձնաժողով ստեղծելու, նրա նպատակների, կատարած աշխատանքների մասին: Այդ հանձնաժողովի ձգտումն էր բարձրացնել եւ պաշտպանել հայկական հարցը, իսկ այդ հարցի ներքո նրանք հասկանում էին. 1. Նախագահ Վիլսոնի որոշած գծի սահմաններում Թուրքահայաստանի միացումը Խորհրդային Հայաստանին, 2. Թուրքերի կողմից տեղահանված բոլոր հայերի վերադարձը Հայաստան:

Հայտնվում էր, որ Ամերիկայի հայկական գաղութը վաղուց բաժանված է հակադիր հոսանքների եւ այժմ էլ շարունակում է մնալ այդ հոսանքների պայքարի թատերաբեմում, սակայն Հայաստանի եւ հայկական հարցի հանդեպ նրանք չունեն տարաձայնություն: Բոլոր հոսանքները հոգեպես կապված են Խորհրդային Հայաստանին, նրանում են տեսնում իրենց ազգային երազանքի իրականացումը եւ պատրաստ են ցանկացած ինքնազոհության՝ հանուն նրա բարգավաճման: Նամակը վերջանում էր հետեւյալ խոսքերով. «Մենք ուրախ կլինեինք ստանալ Ձեր կարծիքը եւ խորհուրդները, որպեսզի ներդաշնակենք մեր գործողությունները Հայաստանի ընդհանուր շահերի ու նպատակների հետ»[4]: Այն ստորագրել էր հանձնաժողովի նախագահ դոկտոր Արմենակ Ալիխանյանը:

Նամակի առթիվ ՀԽՍՀ արտգործժողկոմը հայտնում է կենտկոմի առաջին քարտուղարին. «Ամեն ինչից երեւում է, որ դաշնակները արտասահմանում ձգտում են վաստակել քաղաքական կապիտալ այսպես կոչված հայկական հարցում, հարմարվելով ներկա պահին ստեղծված իրադրությանը: Իրականում, ինչպես վկայում են փաստաթղթերը եւ նոր մեքենայությունները, նրանք շարունակում էին Խորհդային Միության եւ Խորհրդային Հայաստանի հանդեպ իրենց թշնամական քաղաքականությունը, հանդիսանալով օտարերկրյա պետությունների, մասնավորապես անգլիական ռեակցիայի գործակալներ: Ելնելով վերաշարադրանքից

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թթ. 135-137,157:
[2] Նույն տեղում, ց. 034, գ. 95, թ. 273:
[3] Նույն տեղում, ց. 26, գ. 47, թթ. 134,142:
[4] Նույն տեղում, ց. 034, գ. 95, թթ. 219-224:

ՀԽՍՀ ԱԳԺԿ-ն գտնում է նպատակահարմար անպատասխան թողնել դաշնակցության կազմակերպությունից ելնող ցանկացած նամակ, հուշագիր եւ այլ դիմումներ: Միաժամանակ անհրաժեշտ ենք գտնում մեր մամուլի էջերում դիմակազերծել դաշնակների թաքնված երկերեսանի մեքենայությունները»[1]:

1946թ. մայիսին ԱՄՆ-ի տասնվեց հայկական կազմակերպություններ ուղերձով դիմեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, որով խնդրում էին Անվտանգության խորհրդի օրակարգ մտցնել հայկական հարցը, աջակցել հայ ժողովրդի պահանջների կարգավորմանը, նրան հնարավորություն տալ վերադառնալու իր հայրենիքը եւ ապրելու ազատ եւ անվտանգ: Ուղերձում նշվում էր, որ չորս միլիոն հայեր ամբողջ աշխարհում պահանջում են, որպեսզի Խորհրդային Հայաստանը ստանա Կարսը, Արդահանը, Էրզրումը, Տրապիզոնը, Բիթլիսը եւ Վանը, որոնք Վիլսոնի որոշմամբ պետք է տրվեին Հայաստանին: «Թուրքիան չկարողացավ հասնել իր նպատակին՝ ամբողջ հայ ժողովրդի ոչնչացումով «լուծել» հայկական հարցը: Պատմական Հայաստանը մաքրված է հայերից, բայց այն չի վերածվել թուրքական հողի: Թուրքահայաստանը այժմ քիչ է բնակեցված եւ ամայացված է: Եթե Թուրքահայաստանը վերադարձվի հայերին, ապա կկրկնվի Խորհրդային Հայաստանի 25-ամյա ծաղկման զարմանահրաշ պատմությունը եւ համաշխարհային քաղաքակրթությունը կշահի այդ հանձնումից»: ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին համանման ուղերձներ հղեցին Կալիֆորնիայի արքեպիսկոպոս Գալաֆյանը եւ Ամերիկայի հայկական ազգային խորհրդի Ֆիլադելֆիայի բաժանմունքը: Մասնավորապես, Գալաֆյանը գրում էր, որ եթե Հայաստանը նորից պետք է տուժի մեծ տերությունների ընչաքաղցությունից եւ հակամարտությունից, ապա մարդկությանը կհամարձակվի՝ արդյոք խոսել արդարության մասին[2]:

Հայկական տարածքների պաշտպանության օգտին հանդես եկան արտասահմանյան մի շարք երկրների պետական ու հասարակական գործիչներ, զանգվածային լրատվության միջոցներ: Հայկական սփյուռքը իր նպատակին հասնելու համար փորձեց օգտագործել նաեւ քրիստոնեական եկեղեցին: ԱՄՆ-ի չորս մեծ կազմակերպություններ՝ Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը, Հայերի շահերի պաշտպանության ամերիկյան կոմիտեն, Հյուսիսային Ամերիկայի հայ եկեղեցու բարձրագույն հոգեւորականությունը եւ Ամերիկայի հայկական միսիոներների ասոցիացիան հուշագրով դիմեցին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ժամանակավոր կոմիտեի Ժնեւի նստաշրջանին, որպեսզի եկեղեցիների համաշխարհային խորհուրդը ավելի քան մեկ միլիոն հայ փախստականներին ցույց տար բարոյական աջակցություն՝ վերադառնալու հայրենիք եւ այդ առիթով դիմեր ՄԱԿ-ին: Հայաստանի շահերի պաշտպանության կոմիտեն իր անդամներ, նստաշրջանի պատգամավորներ, եկեղեցիների միջազգային խորհրդի ամերիկյան քարտուղար Լեյֆերին եւ պրոֆեսոր Հորթոնին հանձնարարեց ակտիվորեն բարձրացնել հայկական հարցը: Ամերիկայի հայ միսիոներները, հայկական ավետարանչական եկեղեցու անունից, պահանջում էին եկեղեցիների համաշխարհային խորհրդից՝ միջնորդել համաշխարհային կոնֆերանսներին «հորդորել Թուր-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 95, թթ. 217-218:
[2] Նույն տեղում, ց. 26, գ. 47, թ.159:

քիային խաղաղ ճանապարհով Խորհրդային Հայաստանին վերադարձնել տարածքները, ինչպես վերապահված է Սեւրի պայմանագրում»[1]:

Սփյուռքահայության շրջանում մեծ խանդավառություն առաջացրեց Գր.Հարությունյանի 1946թ. փետրվարի 1-ի նախընտրական ճառը, որտեղ նա ՀԽՍՀ անունից դրեց «Թուրքիայի կողմից զավթած հայկական մարզերի» վերադարձման հարցը [2]:

Հայկական սփյուռքի ձեռնարկած միջոցառումների շարքում կարեւոր քայլ էր Հայկական համաշխարհային կոնգրեսը, որը Ամերիկայի հայ ազգային խորհրդի նախաձեռնությամբ գումարվեց 1947թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը, Նյու Յորքում: Կոնգրեսին մասնակցում էին 715 պատգամավորներ 22 երկրներից, որոնք ներկայացնում էին 70 կենտրոնական կազմակերպություններ եւ 275 մասնաճյուղեր, 31 եկեղեցի: Հ.Յ.Դ. կոնգրեսին չէր մասնակցում: Հայկական համաշխարհային կոնգրեսը բացվեց մեծ ճաշկերույթով Ուոլդորֆ Ասթորիա հյուրանոցում, որտեղ ի թիվս այլ հռետորների, հանդես եկավ սենատոր Չարլզ Թոբին: Նա ընդգծեց հայերի մատուցած ծառայությունները երկու համաշխարհային պատերազմներում, արտահայտվեց հօգուտ հայկական հարցի արդարացի լուծման եւ տերություններին կոչ արեց՝ հայկական հարցն այլեւս չզոհել իրենց շահադիտական նկրտումներին: Կոնգրեսը քննարկեց ներգաղթի եւ վերաշինության, Խորհրդային Հայաստան-Սփյուռք մշակութային հարաբերությունների ընդլայնման հարցերը, առաջարկեց ՄԱԿ-ի ուշադրությանը հանձնել հայկական հողային պահանջները եւ ընդունեց համապատասխան որոշումներ [3]:

Հայկական համաշխարհային կոնգրեսին հեռագրով ողջունել էին Խորհրդային Հայաստանի կառավարությունը եւ Գեւորգ Զ կաթողիկոսը: Մայիսի 12-ին հատուկ պատվիրակությունը հուշագրով ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դին Աչեսոնին ներկայացրեց կոնգրեսի հիմնական որոշումը՝ ամերիկյան կառավարությանը խնդրել ՄԱԿ-ի օրակարգի մեջ մտցնել հայկական հողային պահանջների հարցը: Աչեսոնն ակնարկեց այն «մեծ դժվարությունները», որոնք ծառացած էին այդ հարցի լուծման ճանապարհին՝ ԱՄՆ-ի որդեգրած նոր քաղաքական ուղղության տեսակետից (նկատի ուներ նույն ապրիլին ընդունված «Տրումենի դոկտրինան», որը «կոմունիստական վտանգից» պաշտպանելու պատրվակով 400 մլն. դոլարի օգնություն էր նախատեսում Հունաստանին եւ Թուրքիային՝ երաշխավորելով նրանց տարածքային ամբողջականությունը-Ա.Վ.): Հուշագիրը հանձնվեց նաեւ ՄԱԿ-ի քարտուղարությունն [4]:

Սկսված սառը պատերազմի պայմաններում Թուրքիայի նկատմամբ յուրաքանչյուր հողային պահանջ դիտվում էր որպես «կոմունիզմի ծավալում»: Այսպիսով, Թուրքիայի պաշտպան կանգնած Արեւմուտքի տերությունները եւ ԱՄՆ-ը նորից դառնում են հայերի արդարացի պահանջների ոխերիմ թշնամիներ: 1946թ. ապրիլի սկզբին Ստամբուլ ժամանեցին ամերիկյան «Միսսուրի» հածանավը, ադմիրալ Հյուիթի հրամանատարությամբ, որի վրա գտնվում էր Ամերիկայում թուրքական դեսպան Էրտեգյունի աճյունը: Հածանավով Թուրքիա ժամանեց Տրումենի անձնա-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թ. 145:
[2] Նույն տեղում, թ.122:
[3] «Էջմիածին», 1947, թ. 7-8, էջ 38-39:
[4] «Ժողովուրդ», Փարիզ, 1947, 13 հունիսի:

կան ներկայացուցիչ Ուենդելը եւ մի խումբ ամերիկյան լրագրողներ: Ամերիկացիների այցը օգտագործվեց թուրքերի կողմից ամերիկա-թուրքական բարեկամության ամենալայն քարոզի համար: Դա բացահայտ շեշտում էր նաեւ թուրքական մամուլը, որն օգտագործելով այդ գործոնը, ընդունեց ռազմատենչ բնույթ, կոչ անելով «վախեցնել» Թուրքիայի հնարավոր թշնամիներին: Իսկ քանի որ թուրքական թերթերը «թշնամու» տակ հասկանում էին ԽՍՀՄ-ին, թերթերի տոնը ընդունեց հակախորհրդային նրբերանգ: Այսպես, «Վաքաս» թերթի խմբագիր Յալմանը ապրիլի 5-ի առաջնորդողում գրում է. «Միսսուրի» հածանավն իր մեջ մարմնավորում է ԱՄՆ-ի հզորությունը եւ ուժը: Այն ցուցադրում է այդ հզորությունը այն շրջաններում, որոնք այժմ գտնվում են առավել կրիտիկական եւ վտանգավոր դրության մեջ: Հածանավը հանդիսանում է բարի կամքի, բարեկամության եւ համերաշխության դեսպանորդը»: Իսկ «Թասվիր»-ի խմբագիր Էբբուզին գրում է. «Եթե «Միսսուրի» հածանավի համազարկերը առաջ են բերում բարեկամական երկրների ուրախությունը, ապա մեր թշնամիների մոտ առաջացնում են թախիծ եւ մտածմունք: Բայց նրանք անզոր են, որովհետեւ թուրք-ամերիկյան բարեկամությունը, որ օրեցօր ամրանում է, կստիպի ավելի խորը մտածել նրանց, ովքեր պահի են սպասում, որպեսզի հարձակվեն Թուրքիայի վրա»:

Հետաքրքիր են «Ենի սաբահ» թերթի խմբագիր Սարաջօղլու արտահայտությունները, որը փորձում էր հաստատել, թե ամերիկյան հածանավի այցը Թուրքիա ցույց չէ «որեւիցե պետության, մասնավորապես Ռուսաստանի դեմ»: Դրանով էլ հենց «Ենի սաբահի» խմբագիրը մերկացնում է թուրքական իշխող շրջանների մտադրությունները՝ օգտագործել ամերիկյան նավի ժամանումը քաղաքական ցույցի համար, ուղղված առաջին հերթին ԽՍՀՄ-ի դեմ: Սարաջօղլին գրում է. «Թուրքիան ոչ մի դեպքում չի ցանկացել ձեռնարկել որեւիցե թեկուզ աննշան գործունեություն՝ ուղղված մեր հյուսիսային հարեւանի դեմ»:

Ամերիկացիները այցելեցին Անկարա, որտեղ ապրիլի 7-ին ընդունվեցին նախագահ Ինենյուի եւ վարչապետ Սարաջօղլու կողմից: Նրանց պատվին կազմակերպվեց ճոխ ընդունելություն, որի ժամանակ Թուրքիայի նախագահը հայտարարեց. «Ինչքան ամերիկյան դրոշը մոտ լինի Թուրքիայի ափերին, այնքան լավ մեզ համար»: Նա նաեւ ավելացրեց, որ Թուրքիան հույս ունի ստանալ 100 միլիոն դոլարի վարկ՝ արդյունաբերության զարգացման համար՝ ԱՄՆ-ից մեքենաների ու սարքավորումների ներմուծումը ֆինանսավորելու նպատակով[1]: Ընդունելությունում Սարաջօղլին հանդես եկավ հայտարարությամբ երկրորդ աշխարհամարտի տարիներին Թուրքիայի դիրքորոշման վերաբերյալ: Նա փորձեց ապացուցել, որ Թուրքիան իր վարած քաղաքականությամբ իբր թե ցույց է տվել դաշնակիցներին մեծ ծառայություն: Նա ասաց, որ Թուրքիան պատերազմի սկզբին զենքի էր կանչել մեկ միլիոն մարդ եւ «պատրաստ էր ցանկացած անակնկալի»: Գերմանացիները, Սարաջօղլու խոսքերով, հասկացան, որ ստիպված կլինեն թանկ վճարել, որպեսզի ուժով հասնեն իրենց նպատակին, եւ դրա համար փորձեցին ինտրիգներ սարքել երկրի ներսում: Բայց Թուրքիայի պինդ կեցվածքը, ինչպես հայտարարեց նա, անհաջողության մատնեց գերմանացիների մեքենայությունները: Եզրափակիչ խոսքում Սարաջօղլուն հայտարարեց. «Մի խոսքով, մենք վճռա-

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թթ. 93-94

կանորեն կանգնեցինք զենքը ձեռքներիս մինչեւ պատերազմի վերջը: Դրա համար մենք վստահ ենք, որ ունենք մեր մասնաբաժինը մարդկության համար համաշխարհային մեծ պատերազմում»:

Այնուհետեւ, ամերիկացի լրագրողների այն հարցին, թե ինչպիսին է Թուրքիայի դիրքորոշումը «նեղուցներում ռազմական հանգրվան տրամադրելու եւ Թուրքիայի արեւելյան մասերի, այդ թվում Կարսի, Արդահանի եւ Արդվինի շրջանների տարածքները տրամադրելու մասին խորհրդային պահանջների» վերաբերյալ, Սարաջօղլուն պատասխանեց. «Ես կպայքարեմ նույնիսկ այն դեպքում, եթե Անգլիան ու Ամերիկան կանգնեն ցանկացած ագրեսորի կողմը», ապա ավելացրեց. «Թուրքիայի կառավարությունը հավատում է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները ՄԱԿ-ում իրենց ներկայությամբ կօժանդակեն, կամ պատրաստ են օժանդակելու Թուրքիային ընդդեմ ցանկացած ագրեսիայի»[1]:

Նույն օրը, ապրիլի 7-ին, ամերիկյան «Վաշինգտոն փոստ» թերթը հրապարակեց Անկարայից ստացված հեռագիր այն մասին, որ ԽՍՀՄ-ը պահանջել է իրեն հանձնել Կարսը, Արդահանը եւ Արդվինը: Հաղորդումը, որը հենվում էր Անկարայում «ոչ պաշտոնական հեղինակավոր սկզբնաղբյուրի վրա», հայտնում էր, որ պահանջները առաջադրվել են դիվանագիտական ուղիներով անցած տարվա հունիսին: Հաղորդման մեջ նշվում էր նաեւ, որ ԽՍՀՄ-ը պահանջել է Բոսֆորի նեղուցում մի քանի ռազմական հանգրվան ստեղծելու իրավունք: Միաժամանակ հրապարակվեց Սարաջօղլու հայտարարությունը, որ նա կպայքարի, «եթե Անգլիան ու Ամերիկան կանգնեն ցանկացած ագրեսորի կողմը»:

Ֆրանսիական «Կարֆուր» շաբաթաթերթն ապրիլի սկզբներին հրապարակեց հոդվածներ շարք, որտեղ նշվում էր, որ դիվանագիտական պայքարը կենտրոնացվում է Թուրքիայի շուրջը: «Ինչպես հայտնի է,- գրել է շաբաթաթերթը,- Ռուսաստանը Պոտսդամի կոնֆերանսում պահանջել է իրեն միացնել Կարսը եւ Արդահանը»: «Կարֆուր»-ի թղթակիցը հաղորդում է, որ նա զրուցել է թուրք ժողովրդի տարբեր խավերի ներկայացուցիչների հետ, եւ նրանք բոլորը թուրքական սահմանների հարցը համարում են վերջնականապես լուծված Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերով: Թուրք գեներալ Կարաբեքիրը հայտարարել է թղթակցին, որ Թուրքիան բարոյական եւ ռազմավարական նկատառումներից ելնելով չի համաձայնվի զիջել իր տարածքի որեւիցե մասը: Բարոյական տեսակետից, Կարաբեքիրի կարծիքով, այդպիսի զիջումը անհնարին է, քանի որ Կարսից, Արդահանից եւ Արդվինից հետո Թուրքիայից կպահանջվեն զիջել նոր տարածքներ, որը կբերի վերջինիս մասնատման: Ռազմավարական տեսակետից Թուրքիան չի կարող գնալ որեւէ տարածքային զիջման, քանի որ Կարսի սարահարթից դժվար չէ թափանցել Անկարա ձգվող հարթավայր, ինչպես նաեւ դեպի հարավ՝ Տիգրիսի եւ Եփրատի ուղղությամբ, որը հանդիսանում է Անատոլիայի բանալին: Թղթակիցը հաղորդում է նաեւ, որ վերջին շրջանում անգլիացիները եւ ամերիկացիները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Թուրքիայի նկատմամբ: Ֆրանսիացի թղթակցի եզրահանգումները ճշմարտացի էին, ինչը հաստատվում էր նաեւ Տրումենի անձնական ներկայացուցիչ Ուենդելի հայտարարությամբ, որն արվել էր թուրքական մամուլի ներկայացուցիչներին ապրիլի 10-ին, Թուրքիայից «Միսսուրի» հածանավի հեռանալուց առաջ. «Ես հանձնեցի Ինենյուին

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թ. 95:

Տրումենի անձնական ուղերձը: Տրումենը սպասում է Ինենյուից եւ թուրք ժողովրդից ավելի մոտ եւ ամուր բարեկամություն: Հանդիպելով Ինենյուին, ես տեսա Ինենյուի մոտ հաղթանակ տարած հպարտ հրամանատարի: Այդ հրամանատարը կարող է եւ ներկայումս տանել համանման հաղթանակ»:

Ամփոփելով վերոշարադրածը, կարելի է ասել, որ «Միսսուրիի» այցը Թուրքիա վկայում է, որ 1946թ. սկզբին ԱՄՆ-ը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Մերձավոր Արեւելքի նկատմամբ: Թուրքական ջրեր հածանավ ուղարկելով եւ Թուրքիայի նկատմամբ համակրանքը շեշտելով՝ ԱՄՆ-ը ցուցադրում էր մերձարեւելյան հիմնահարցերի լուծման գործում ակտիվ դեր խաղալու ցանկությունը: Թուրքերն էլ, օգտագործելով ամերիկյան հածանավի ներկայությունը որպես քաղաքական ցույց, ոչ երկիմաստ արտահայտվեցին, որ ԽՍՀՄ-ի հետ բախման դեպքում կունենան ԱՄՆ-ի եւ Անգլիայի օժանդակությունը: Անկասկած է նաեւ, որ ամերիկացիների այցելությունը հանդիսացավ բարոյական օժանդակություն Թուրքիային եւ խրախուսեց նրա ղեկավար շրջանների հակախորհրդային տրամադրությանը: 1946թ. ապրիլի 9-ին Ազգային Մեծ ժողովի կուսակցական խմբակցությունում ելույթ ունենալով՝ Թուրքիայի արտգործնախարար Հասան Սաքան ընդգծեց, որ Թուրքիան միայնակ չի լինի այն դեպքում, եթե խորհրդային պահանջների հարցը եւ խորհրդա-թուրքական հարաբերությունները դրվեն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի քննարկմանը, որովհետեւ այդ դեպքում Թուրքիային կօժանդակեն Անգլիան եւ Ամերիկան: Այնուհետեւ, շոշափելով «Միսսուրի» հածանավի այցը, նա ասաց, որ դա վկայում է Թուրքիայի նկատմամբ ԱՄՆ-ի համակրանքի մասին: Կանգ առնելով նեղուցների հիմնահարցի վրա՝ Հասան Սաքանը հայտարարեց. «Մեծ Բրիտանիան Թուրքիային հավաստիացրել է, որ նեղուցների նկատմամբ խորհրդային պահանջները կենթարկվեն քննարկման ամերիկյան ծրագրի համաձայն»: Վերջում նա շեշտեց. «Մեր քաղաքական հարաբերությունները Մեծ Բրիտանիայի եւ ԱՄՆ-ի հետ զարգանում են շատ բարեհաջող»[1]:

Չնայած այդ ամենին, այնուամենայնիվ, ԽՍՀՄ-ի ճնշումը Թուրքիայի վրա շարունակվում էր: 1946թ. օգոստոսի 7-ին ԽՍՀՄ կառավարությունը Թուրքիային հղեց հայտագիր Սեւծովյան նեղուցների հիմնախնդրի առթիվ, ուր մատնանշելով մի շարք փաստեր, որոնք ցույց էին տալիս նեղուցների օգտագործումը պատերազմի ժամանակ ԽՍՀՄ-ի եւ նրա դաշնակիցների դեմ պատերազմի մեջ գտնվող տերությունների կողմից, իր կարծիքը հայտնեց այն հինգ սկզբունքների մասին, որոնք նա առաջարկում էր դնել նեղուցներից նոր կարգավիճակի հիմքում[2]:

Խորհրդային կառավարության այդ հայտագրին հետեւեցին ոչ միայն Թուրքիայի օգոստոսի 22-ի պատասխանը, այլեւ Անգլիայի եւ ԱՄՆ-ի հայտագրերը: Օգոստոսի 21-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Բեւինը Լոնդոնում ԽՍՀՄ գործերի ժամանակավոր հավատարմատարին հանձնեց իր կառավարության հայտագիրը, ուր ասվում էր, որ չի կարող պաշտպանել խորհրդային տեսակետը, ըստ որի նեղուցների հարցը վերաբերում էր միայն սեւծովյան երկրներին եւ Թուրքիային, որ այդ հարցերը պետք է լուծվեն միջազգային համաձայնագրով: Նոյեմբերի 20-ին

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թթ. 98-100:
[2] «Սովետական Հայաստան», 1946, 1 հոկտեմբերի:

նեղուցների մասին Անգլիային հղած նոր հայտագրում խորհրդային պահանջներն արդեն ավելի էին մեղմացել: Պնդելով մինչեւ նեղուցների կարգավիճակը որոշող միջազգային կոնֆերանսի հրավիրումը Թուրքիայի հետ անմիջական բանակցությունների անհրաժեշտությունը, խորհրդային կառավարությունը գտնում էր, որ սկզբունքորեն դեմ չէ այդպիսի կոնֆերանսի հրավիրմանը: Սակայն ԱՄՆ-ը եւ Անգլիան ավելի ցուցադրական էին դարձնում իրենց հարաբերությունները Թուրքիայի հետ:

1946թ. նոյեմբերի 15-ին Անկարայի ռադիոն հեռարձակում է Անատոլիական գործակալության հաղորդումը այն մասին, որ ամերիկյան ֆինանսական փորձագետ Սամուել Ուելս Սմիթը հայտարարել է թուրքական լրագրողներին, որ ինքը, որպես Թուրքիայում անգլո-ամերիկյան համակարգող կոմիտեի ներկայացուցիչ, բանակցություններ է վարել թուրքական իշխանությունների հետ՝ Թուրքիայի հետ ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի տնտեսական համագործակցությունը սերտացնելու ուղղությամբ[1]: Իսկ մի քանի օր անց նոյեմբերի 18-ին, Նեապոլի ռազմական հանգրվանից անգլիական մի խումբ ռազմական նավեր բարեկամական այցով ուղեւորվում են թուրքական միջերկրածովյան նավահանգիստներ[2]:

1947թ. սկզբին թուրքական կառավարությունը Մեջլիսի հաստատմանը ներկայացրեց բյուջեի նախագիծ, որով նախատեսվում էին վիթխարի ռազմական հատկացումներ: Վարչապետ Ռեզեբ Փեքերն բացահայտորեն պարզաբանեց, որ զինվորական ու ոստիկանական ապարատի ուժեղացումը նպատակ ունի «անողոք կերպով ճնշել այն անկարգությունները, որոնք կարող են առաջանալ ամեն տեսակ քաղաքական ազդեցությունների հետեւանքով»[3]:

1947թ. մայիսին Թուրքիայի նախագահ Ինենյուն ամերիկյան ազգին հղեց դիմում, որով ողջունում էր այն օգնությունը, որը ԱՄՆ-ի նախագահ Տրումենը ցանկանում էր տրամադրել Թուրքիային: 1947թ. հուլիսի 12-ին ստորագրվեց ամերիկա-թուրքական համաձայնագիր՝ «Տրումենի դոկտրինային» համապատասխան Թուրքիային ռազմական օգնություն ցույց տալու մասին: Այդ փաստաթղթի համաձայն ռազմական միջոցառումների համար վերջինս ստանում էր 100 միլիոն դոլար եւ ամերիկյան սպառազինություն:

Նոր դաշնակցին պաշտպանելու համար ԱՄՆ-ի կառավարությունը իր երկրի ներսում հայկական կազմակերպությունների դեմ կտրուկ միջոցներ ձեռնարկեց: 1947թ. վերջերին ԱՄՆ-ի արդարադատության նախարարությունն Ամերիկայի Հայկական առաջադիմական միությունը (լիգան) մտցրեց հակաամերիկյան կազմակերպությունների ցուցակի մեջ, իսկ Ազգային խորհուրդը ստիպված դադարեցրեց հայկական պահանջների քարոզը, քանի որ ամերիկյան կառավարությունը այդ պահանջները դիտում էր որպես Ամերիկայի շահերին հակասող: Ռամկավարների առաջարկով խորհուրդը սկսեց զբաղվել ընդամենը երկու՝ Խորհրդային Հայաստանի հետ մշակութային կապերի ամրապնդման եւ հայրենադարձության աջակցության հարցով[4]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 47, ց. 25, գ.135, թ. 69:
[2] Նույն տեղում, թ. 86:
[3] Թուրքիայի պատմության ուրվագծեր, էջ 302:
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 74, թ. 113:

Ստեղծված նոր իրադրության պայմաններում ԽՍՀՄ-ը սկսեց հետ կանգնել իր պահանջներից՝ թույլ տալով անհրաժեշտ վրիպումներ: 1947թ. հոկտեմբերի 24-ին ՄԱԿ-ի քաղաքական կոմիտեի նիստում պատասխանելով Թուրքիայի ներկայացուցիչ Սարպերի այն բողոքին, ըստ որի մոսկովյան ռադիոն նույնիսկ թուրքերեն լեզվով հաղորդում է հակաթուրքական քարոզչություն, ԽՍՀՄ ներկայացուցիչ Ա.Վիշինսկին նշում է, որ Սարպերը «ի միջի այլոց, ասաց, որ այդ քարոզչության մեջ կարեւոր տեղ է գրավում եւ թուրքական տարածքների մի մասը Թուրքիայից անջատելու քարոզչությունը, նկատի ունենալով Կարսը եւ Արդահանը, այդ առթիվ հենվելով մոսկովյան մամուլում հրապարակված երկու վրացի ակադեմիկոսների նամակի վրա, որտեղ այդ հողերը, որոնց մասին այստեղ հիշատակեց թուրքական ներկայացուցիչը, հանդիսանում են հնամենի վրացական հողեր»[1]:

Այնուհետեւ, խորհրդային ներկայացուցիչը, փաստեր ներկայացնելով հիշյալ հոդվածից, վերջում եզրակացրեց, որ այդ հողերը պետք է վերադարձնել Վրացական հանրապետությանը, քանզի «այդ հողերը վրացական են»: Դժբախտաբար, Խորհրդային Հայաստանում Վիշինսկու այս հայտարարությանն անկարող եղան գնահատական տալ բացեիբաց, սակայն արտասահմանում դաշնակցական մամուլը պատշաճ հակահարված տվեց դրան եւ պնդեց, թե Խորհրդային Միությունն արդեն թաղել է հայկական հարցը, իսկ վրաց պրոֆեսորները վրացական են համարում ոչ միայն Կարսն ու Արդահանը, այլեւ վիլսոնյան ողջ Հայաստանը[2]:

1953թ. մայիսի 30-ին խորհրդային կառավարությունը հայտարարեց, որ «բարիդրացիական հարաբերությունները պահպանելու եւ խաղաղությունն ու անվտանգությունն ամրապնդելու համար Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունները հնարավոր համարեցին հրաժարվել Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից: Ինչ վերաբերում է նեղուցների հարցին, ապա խորհրդային կառավարությունը վերանայել է իր նախկին կարծիքը եւ հնարավոր է համարում ԽՍՀՄ-ի անվտանգությունն ապահովել նեղուցների կողմից ինչպես ԽՍՀՄ-ի համար, նույնպես եւ Թուրքիայի համար հավասար ընդունելի պայմաններով: Այսպիսով, խորհրդային կառավարությունը հայտարարում է, որ Խորհրդային Միությունը Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի»[3]:

Ամփոփելով, կարելի է միանշանակ արձանագրել.

1. Սփյուռքի հայկական կազմակերպությունները գիտակցում էին, որ աշխարհի հետպատերազմյան խաղաղության եւ անվտանգության հարցերը կախված են երեք մեծ տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի համագործակցությունից եւ որ բոլոր կարեւոր միջազգային հարցերը կարող են լուծվել այդ տերությունների համաձայնեցված գործողություններով: Դրա համար նրանք հատուկ նշանակություն էին տալիս Մեծ տերությունների ղեկավարներին ուղերձների հղմանը, որովհետեւ վստահ էին, որ այդ տերությունների ղեկավարները հաշվի կառնեն հայերի արդարացի պահանջները եւ այս անգամ վերջնականապես կվերացնեն այն մեծ անարդարությունը, որ անցյալում թույլ էր տրվել հայ ժողովրդի նկատմամբ:

---

[1] "Известия", 1947, 28 октября.
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 74, թ. 112:
[3] Դաշնակից տերությունների ղեկավարների Բեռլինի կոնֆերանսը, էջ 591:

2. Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս այդ կազմակերպությունների հավատը՝ թե հայկական պատմական հողերի հիմնախնդրի լուծման գործում գլխավոր դերը խաղալու է ԽՍՀՄ-ը: Նրանք ուղղակի հայտարարում էին, որ ԽՍՀՄ-ը փոքր ազգերի ու երկրների միակ պաշտպանն է, մասնավորապես՝ հայ ժողովրդի փրկիչը: Սփյուռքը վստահ էր, որ խորհրդային կառավարությունը ոչ միայն կպաշտպանի հայ ժողովրդի պահանջները, այլեւ կիրագործի նրա դարավոր երազանքը:

3. Բոլոր հայկական կազմակերպությունները, առանց բացառության, պահանջում էին հայկական տարածքները՝ Կարսը, Վանը, Արդահանը, Էրզրումը, Տրապիզոնը, Բիթլիսը վերամիավորել Խորհրդային Հայաստանին, այսինքն՝ մտցնել ԽՍՀՄ-ի կազմի մեջ:

4. Բոլորն այդ պահանջները կապում էին աշխարհով մեկ սփռված 1,5 միլիոն հայերի հայրենադարձության եւ հայրենիք վերադառնալու ձգտման հետ: Իրենց ուղերձներում նրանք նշում էին այն հանգամանքը, որ Խորհրդային Հայաստանը չափազանց փոքր է ավելի քան մեկ միլիոն հայերի տեղավորման համար, որ հայերի հայրենադարձությունը հնարավոր է միայն հայկական տարածքները Թուրքիայից ազատագրված լինելու պայմաններում:

5. Այդ ուղերձները ցույց են տալիս, որ սփյուռքահայությունը անկեղծորեն ցանկանում էր ապրել եւ ստեղծագործել ԽՍՀՄ-ում, իր գործն ու եռանդը միավորել Խորհրդային Հայաստանի բնակչության աշխատանքին:

6. Իր բացասական դերը կատարեց հայկական ուժերի անհամաձայնեցված գործունեությունը. սփյուռքահայությունը բաժանված էր երկու հակադիր եւ անհանդուրժողական ուժերի, իսկ Խորհրդային Հայաստանը, չունենալով միջազգային իրավունքի սուբյեկտի կարգավիճակ, անկարող էր որեւիցե ձեւով ազդել իրադարձությունների ընթացքին:

7. Խորհրդային կառավարությունը Թուրքիայից տարածքային պահանջների հետ մեջտեղ բերելով սեւծովյան նեղուցների կարգավիճակի հարցը, երկու երկրների փոխհարաբերությունների հարցը միջազգայնացրեց, դրանով իսկ թաղելով հայկական տարածքների խնդիրը:

8.Հայ ժողովրդի արդարացի պահանջները կրկին անգամ զոհաբերվեցին տերությունների սեփական շահերին:

2. ՀԱՅՐԱՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Սփյուռքահայության զանգվածային ներգաղթի կազմակերպման ծրագիրը սերտորեն առնչվում էր Թուրքիայից հայկական տարածքների ազատագրման իրական թվացող հեռանկարի հետ: Այդ հարցը միջազգայնորեն առաջին անգամ դրվեց 1945թ. ապրիլին Սան-Ֆրանցիսկոյում բացված Միավորված ազգերի կոնֆերանսի առաջ՝ Ամերիկայի հայկական ազգային խորհրդի կողմից, կոնֆերանսի պատվիրակություններին հանձնված հուշագրում: Պահանջվում էր «հայկական հողերի միացումը ազատ անկախ Հայաստանի գոյություն ունեցող պետությանը եւ արտասահմանում ապրող ու Հայաստան մեկնելու ցանկություն ունեցող բոլոր հայերի վերադարձը այնտեղ»[1]:

[1] «Սովետական Հայաստան», 1945, 13 հունիսի:

Խորհրդային Հայաստանի ղեկավարությունն այդ հարցը անուղղակիորեն կենտրոնական իշխանությունների առաջ բարձրացրեց 1945թ. ապրիլին, երբ ՀԽՍՀ ժողկոմխորհը եւ ՀԿ(բ)Կ Կենտկոմը հարց բարձրացրին Համկ(բ)Կ Կենտկոմ՝ Ստալինի եւ արտաքին գործերի նախարար Մոլոտովի առաջ՝ ՀԽՍՀ ժողկոմխորհի ներկայացուցիչներ ուղարկել Իրան, Սիրիա-Լիբանան, Ռումինիա եւ Բուլղարիա՝ «այդ երկրներում հայերի վիճակը, մասնավորապես, խորհրդային քաղաքացիություն ընդունելու, Հայաստան տեղափոխվելու նրանց ձգտումների հետ կապված հարցերը ուսումնասիրելու» համար[1]:

Հայաստանի ղեկավարությունը զանգվածային հայրենադարձություն կազմակերպելու խնդիրն ամբողջությամբ Ստալինին ներկայացրեց 1945թ. մայիսի 15-ին՝ ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ա.Սարգսյանի եւ ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Գր.Հարությունյանի ստորագրած գրությամբ: Մինչ այդ, Գր.Հարությունյանը եղել էր Մոսկվայում, հանդիպել էր Ստալինին, եւ պայմանավորվածություն էր ձեռք բերվել հայրենադարձությունը կազմակերպել ավելի ուշ, պատերազմի հասցրած վնասները որոշ չափով վերացնելուց հետո: Այդ է վկայում Ստալինին ուղարկված գրության հետեւյալ հատվածը. «Մեր ունեցած տվյալներով, արտասահմանում եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրության ժամանակ, որը կայանալու է էջմիածնում ընթացիկ տարվա հունիսի կեսերին, աշխարհականների կողմից պատգամավորներին պատվիրան է տրվել այցելել Հայաստանի կառավարություն եւ միջնորդել՝ նրանց հայրենիք վերադառնալու մասին: Հաշվի առնելով, որ կաթողիկոսի ընտրության համար ժողով ժամանող պատգամավորները Հայաստանի կառավարության առաջ կդնեն այդ հարցը, եւ կապված Հայաստանի կառավարության կողմից նրանց վերջնական պատասխան տալու նպատակահարմարության հետ, մենք ստիպված ենք արագացնել *այդ հարցադրումը Ձեր առաջ*»[2] (ընդգծումը մերն է - Ա.Վ.):

Այնուհետեւ, հայտնելով, որ արտասահմանում ապրում է մոտ մեկ միլիոն հայ եւ ներկայացնելով նրանց տեղաբաշխումն ըստ երկրների՝ Հայաստանի ղեկավարները նշում էին, որ այդ գաղութները հայրենական պատերազմի տարիներին ակտիվորեն պայքարել են ընդդեմ գերմանական ֆաշիզմի, ստեղծել են հայրենասիրական ընկերություններ, առաջադիմական լիգաներ, միջոցների հանգանակություն են կազմակերպել կարմիր բանակի օգնության, «Սասունցի Դավիթ» եւ «Գեներալ Բաղրամյանի անվան» տանկային շարասյուների հիմնադրամների համար:

Ստալինին ուղարկած գրությունն ավարտվում է հետեւյալ առաջարկություններով. «Հաշվի առնելով այդ բոլորը եւ հնարավորությունների առկայությունը՝ արտասահմանյան հայերի մի մասին ընդունել նույնիսկ ընթացիկ տարում, ՀԿ(բ)Կ Կենտկոմը եւ ՀԽՍՀ ժողկոմխորհը դրական են վերաբերվում հայրենիք՝ Խորհրդային Հայաստան, արտասահմանյան հայերի վերադարձի հարցին եւ խնդրում են Ձեր թույլտվությունը.

1. Հայաստանի ժողկոմխորհին՝ կազմակերպել ռուս-թուրքական պատերազմների եւ թուրքական կառավարության կողմից հայերի կոտորածների ընթացքում արտասահմանյան երկրներ փախած հայերի վերադարձը:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թ. 24:
[2] Նույն տեղում, թթ. 33-36:

2. Կազմակերպել ՀԽՍՀ ժողկոմխորհին կից ներգաղթող հայերի ընդունման եւ տեղավորման գծով կոմիտե:

3. Հայկական գաղթօջախներում առաջադիմական, հայրենասիրական եւ բարեգործական ընկերությունների ներկայացուցիչներից ստեղծել հայերի հայրենիք վերադարձի գծով կոմիտեներ:

4. Հավանություն տալ արտասահմանյան հայերի նախաձեռնությանը հայության շրջանում միջոցների հավաքման եւ Խորհրդային Հայաստան վերադարձի ու տեղավորման հիմնադրամ ստեղծելու համար, այդ նպատակով ներգրավելով արտասահմանի բարեգործական ու այլ ընկերությունների հիմնադրամները:

5. ՀԽՍՀ ժողկոմխորհի տրամադրությանը հատկացնել հինգ միլիոն ռուբլի՝ ընթացիկ տարում հայ-ներգաղթողների ընդունման կազմակերպման ծախսերի համար:

6. Թույլատրել ՀԽՍՀ ժողկոմխորհին 1945թ. կազմակերպել 30-40-ական հայերի վերադարձը, առաջին հերթին Ռումինիայից եւ Բուլղարիայից, աշխատանքի տեղավորելով նրանց Հայկ. ԽՍՀ խորհրդային տնտեսություններում եւ շահագործման հանձնվող արդյունաբերական ձեռնարկություններում»[1]:

Մինչեւ իրադարձությունների հետագա ընթացքին անդրադառնալը, քննարկենք, թե իրո՞ք առկա էին «հնարավորություններ» 1945թ. հայրենադարձներ ընդունելու համար: Մեր կարծիքով, ո՛չ: Սակայն թվարկենք «առկա հնարավորությունները» հերթականությամբ.

1. Բնակարանային հարցը գտնվում էր շատ ծանր վիճակում: Գր. Հարությունյանը 1945թ. հոկտեմբերի 27-ին Ստալինին ուղարկած գրության մեջ նշում էր. «Մեզ մոտ, Հայաստանում, ամենածանր լուծվող հարցերից մեկը բնակչությանը բնակտարածությունով ապահովելն է: Հատկապես բնակարանի սուր կարիք է զգացվում Երեւան, Լենինական եւ Կիրովական քաղաքներում՝ վերջին տարիներին բնակչության աննախադեպ աճի հետեւանքով»:

Քաղաքներում մեկ շնչի հաշվարկով նվազագույնը 9 քառակուսի մետր պետական չափաբաժնի փոխարեն Երեւանում փաստացի դրությունն էր՝ 1932թ. 4,3, իսկ 1940թ. իջել էր 3,6 քառակուսի մետրի: Լենինականում 1932թ. 5,8-ից 1940թ. իջել էր, 4,5-ի, իսկ Կիրովականում համապատասխանաբար՝ 4,9 եւ 4,1 քառակուսի մետրի: Պատերազմի տարիներին չափաբաժինը ավելի էր էջել: Գր.Հարությունյանը խնդրում էր Ստալինից հանձնարարել նշված քաղաքների խորհուրդներին 1946-47թթ. ընթացքում յուրաքանչյուր տարի հատկացնել 25-ական միլիոն ռուբլի՝ բնակարանային շինարարության համար[2]: Հայրենադարձներին ընդունելու համար բնակարանային պայմաններ բնավ չկային:

2. Զգացվում էր արդյունաբերական ապրանքների եւ պարենի սուր պակաս: 1945թ. նոյեմբերին Գր.Հարությունյանը նամակով դիմում է ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Վ.Մոլոտովին, նշելով, որ «պատերազմի ընթացքում գործվածքեղենի վատ մատակարարման պատճառով Հայաստանի բնակչության հագուստը խիստ մաշված վիճակում է», խնդրում է խորհրդային կառավարությունից «Խորհրդային Հայաստանի 25-ամյակի առթիվ միանվագ բաց թողնել գործվածք եւ կոշկեղեն, գո-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թթ. 35-36:

[2] Նույն տեղում, թթ. 47-49:

նե մտավորականության համար, 10 հազար մետր բրդյա գործվածք եւ 4 հազար զույգ կոշիկ»[1]:

Բավարարվելով հանրապետության «առկա հնարավորություններ-ի» ներկայացված տվյալներով, վերադառնանք հայրենադարձության հիմնախնդրի լուծման ընթացքին: Հայաստանի ղեկավարության մայիսի 15-ի գրությունը Ստալինը թողեց անպատասխան: Նա առավել քաջատեղյակ էր երկրի իրական հնարավորություններին եւ հարցի քննարկումը հետաձգեց: Ստալինը սպասում էր Պոտսդամի կոնֆերանսին, որտեղ դնելու էր «հայկական եւ վրացական տարածքների» խնդիրը, եւ հարցի դրական լուծման դեպքում հրահանգ կտար հայրենադարձությունը սկսելու մասին, հակառակ դեպքում՝ կմնար ձեռնպահ:

Հասկանալի է, որ առանց ԽՍՀՄ կառավարության որոշման Հայաստանի կառավարությունը ոչինչ չէր կարող ձեռնարկել: Իսկ արտասահմանից ստացվում էին հազարավոր դիմումներ, մեկը մյուսից հուզական: Հատկապես ծանր էր հայերի վիճակը Հունաստանում: Այնտեղ բնակվող 25 հազար հայերից միայն 5 հազարն ուներ հունական քաղաքացիություն, իսկ մյուսները զրկված էին քաղաքացիական որեւէ իրավունքից: 1945թ. այնտեղ բռնկված քաղաքացիական պատերազմի պատճառով հայերը հալածվում էին որպես «խորհրդամետ եւ կոմունիստամետ» կողմնորոշում ունեցողներ: Հյուսիսային Հունաստանից՝ Մակեդոնիայից եւ Թրակիայից հալածանքներից փրկվելու համար շատ հայեր փախչում էին Բուլղարիա[2]:

Որպես առիթ օգտագործելով Հունաստանի հայ բնակչության ծանր դրությունը՝ Հայաստանի ղեկավարությունը 1945թ. հուլիսի 4-ին կրկին դիմում է արտգործնախարար Վ.Մոլոտովին: Գրության սկզբում տեղյակ էր պահվում, որ հաստատվել է մայիսի 15-ի նամակի ենթադրությունը, որ եկեղեցիական ժողովի պատգամավորները պատրաստվում են բարձրացնել գաղթական հայերին հայրենիք վերաբնակեցնելու հարցը: ՀԽՍՀ ժողկոմխորհի կազկակերպած ընդունելության ժամանակ հայկական բոլոր գաղութների՝ բացի Թուրքիայի, ներկայացուցիչները, իրոք բարձրացրին այդ հարցը: Նամակագիրները՝ ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ս.Կարապետյանը եւ Գր.Հարությունյանը նշում էին, որ «չունենալով Միութենական կառավարության թույլտվությունը դրական պատասխանի վերաբերյալ, ՀԽՍՀ ժողկոմխորհը փոխանցեց նրանց, որ հարցը բարդության պատճառով ներկայումս ուսումնասիրվում է, որից հետո կներկայացվի քննարկման»[3]:

Ապա, ելնելով հունահայերի ծանր վիճակից, առաջարկվում էր արտասահմանյան հայերի հայրենիք վերաբնակեցնելու ընդհանուր հարցից առանձնացնել Հունաստանում բնակվող հայերի հարցը եւ այն քննարկել առանձին, որի նպատակով միջնորդվում էր.

« 1. Ստանձնել Հունաստանում առանց քաղաքացիության բնակվող հայերի իրավունքների պաշտպանությունը:

2. Բավարարել Հունաստանում բնակվող հայերի խնդրանքը խորհրդային քաղաքացիություն ընդունելու վերաբերյալ:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թ. 65:
[2] Նույն տեղում, գ. 28, թթ. 1-11:
[3] Նույն տեղում, գ. 27, թ. 37:

3. Թույլատրել 1945թ. ընթացքում Հունաստանից Խորհրդային Հայաստան վերաբնակեցնել 15-20 հազար հայ, հաշվի առնելով Սեւ ծովով նրանց հայրենադարձվելու համեմատաբար նպաստավոր հնարավորության առկայությունը»[1]:

Սակայն այս նամակը եւս մնում է անհետեւանք: Օգոստոսի 2-ին ավարտվեց Պոտսդամի կոնֆերանսը՝ Թուրքիայի կողմից Խորհրդային Միությանը տարածքներ վերադարձնելու հարցում ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի կոշտ դիրքորոշման առկայությամբ: Ուստի Ստալինը չէր շտապում որոշում ընդունել:

Ժամանակն անցնում էր, Հայաստանի կառավարության անունով շարունակում էին ստացվել հազարավոր նամակներ, որոնց պատասխանը կառավարությունը չուներ: Հայրենադարձության հարցն արտասահմանյան մամուլում դարձավ շահարկման առարկա: Ստեղծված իրադրությունից ելք գտնելու համար Գր.Հարությունյանը որոշում է մեկնել Մոսկվա, տեսակցել Ստալինի եւ երկրի մյուս ղեկավարների հետ[2]:

Երկրի ղեկավարների հետ Գր.Հարությունյանի 1945թ. գրությունների թղթապանակում կան հոկտեմբերի 27-ով թվագրված մի քանի գրություններ՝ հասցեագրված Ստալինին եւ Բերիային[3]: Հատկանշական է, որ հուլիսի 6-ի՝ հայկական տարածքների մասին գրությունից հետո, մինչեւ հոկտեմբերի 27-ը այլ փաստաթուղթ չկա: Հոկտեմբերի 27-ի գրությունների թվում առկա են Հայաստանի քաղաքներում բնակարանային շինարարություն ծավալելու համար միջոցներ հատկացնելու եւ Մխիթարյան միաբանությունը, իր գրադարանով ու տպագրական միջոցներով, Հայաստան տեղափոխելու, այն կաթողիկոսին ենթարկելու աշխատանքներ սկսելու վերաբերյալ գրությունների եւ՝ առաջին եւ՝ երկրորդ օրինակները, փաստ, որը վկայում է Գր.Հարությունյանի կողմից այն իր հետ Մոսկվա տանելու, Ստալինի հետ հանդիպման ժամանակ այդ հարցադրումները քննարկելու, սակայն մերժում ստանալով, դրանք մեջտեղ չհանելու մասին: Թղթապանակում այդ գրություններին հետեւում են 12 այլ գրությունների երկրորդ օրինակներ՝ ուղղված Ստալինին, Մոլոտովին, Մալենկովին, Անդրեեւին, Միկոյանին՝ տարբեր հարցադրումներով, այդ թվում Լեռնային Ղարաբաղի եւ հայրենադարձության վերաբերյալ, որոնք մյուսներից տարբերվում են նրանով, որ չունեն հերթական համար եւ ամսաթիվ, մի քանիսն էլ տպագրված են ԽՍՀՄ ժողկոմխորհին կից ՀԽՍՀ մշտական ներկայացուցչության բլանկի հակառակ երեսին[4]: Այս փաստերը վկայում են, որ հիշյալ գրությունները Գր.Հարությունյանը կազմել է Մոսկվայում երկրի այս կամ այն ղեկավարի հետ հանդիպելուց եւ համապատասխան հարցադրումը համաձայնեցնելուց հետո, քանզի բարձրացրած բոլոր հարցերը հետագայում, բացի Լեռնային Ղարաբաղի, այս կամ այն ձեւով իրենց լուծումն են ստացել, այդ թվում զանգվածային հայրենադարձության կազմակերպումը: Գր.Հարությունյանը արտասահմանյան հայերի հայրենիք վերադառնալու վերաբերյալ Մոսկվայում երկու գրություն է կազմել, մեկը Ստալինի, մյուսը Մալենկովի անուններով:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թ. 29:
[2] Նույն տեղում, ց. 25, գ. 39, թ. 72:
[3] Նույն տեղում, ց. 034, գ. 27, թթ. 44-59:
[4] Նույն տեղում, թթ. 60-75:

Ստալինին ուղղված գրությունը կարճ է, շեշտը դրված է երեք հանգամանքի վրա.

1. Արտասահմանյան հայերից շարունակում են ստացվել դիմումներ հայրենիք վերադառնալու թույլտվության մասին: Խորհրդային Հայաստանն այդ դիմումներին դրական պատասխան չի տվել՝ միութենական կառավարության որոշման բացակայության պատճառով:

2. Հայկական գաղթօջախներում թշնամաբար տրամադրված խմբերը տարածում են լուրեր այն մասին, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը չի պատասխանում այդ դիմումներին այն պատճառով, որ խորհդային իշխանությունը բացասաբար է վերաբերվում հայերի վերադարձին հայրենիք:

3. Խորհրդային Հայաստանի 25-ամյակի առթիվ ՀԿԿ Կենտկոմը եւ ժողկոմխորհն անհրաժեշտ են գտնում ունենալ միութենական կառավարության հատուկ որոշումը, հրապարակված մամուլում, արտասահմանյան երկրներում ապրող հայերի հայրենիք՝ Խորհրդային Հայաստան, վերադառնալու թույլտվության մասին:

Համկ(բ)կ Կենտկոմի քարտուղար Գ.Մալենկովին հասցեագրված գրությունն ավելի մանրամասն է, տեղեկություններ կան արտասահմանում ապրող հայերի քանակի, հայրենիք վերադարձողների աշխատուժի օգտագործման հեռանկարների եւ այլ հարցերի մասին: Գրությանը կցված էր ԽՍՀՄ կառավարության որոշման նախագիծը[1]:

Այն հանգամանքը, որ մի քանի օր անց, նոյեմբերի 21-ին ներկայացված նախագիծը առանց որեւէ փոփոխման ԽՍՀՄ ժողկոմխորհը Ստալինի ստորագրությամբ ընդունեց որպես որոշում «Արտասահմանյան հայերի Խորհրդային Հայաստան վերադառնալու կապացությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին» վերնագրով[2], վկայում է այն մասին, որ այն նախօրոք համաձայնեցված էր եթե ոչ Ստալինի, ապա Մալենկովի հետ: Այսպիսով, Խորհրդային կառավարությունը կանաչ լույս վառեց հայրենադարձության ճանապարհին, եւ սկսվեցին հայրենադարձների ընդունման ու տեղավորման ուղղությամբ ամենաժվարին՝ նախապատրաստական աշխատանքները:

Այս հարցի քննարկումը չենք շարունակի, քանի որ այն խորությամբ ուսումնասիրված եւ լուսաբանված է[3]: Մեր խնդիրն է ցույց տալ, թե ինչպես ընկալվեց հայրենադարձության մասին որոշումը գաղութահայ շրջաններում, ինչպես էին զգում իրենց ներգաղթածները հայրենիքում, ինչպիսի հաջողությամբ էին իշխանությունները լուծում առաջացած հարցերը, ինչպես էին Հայաստանի նոր բնակիչներն ընկալում անծանոթ պայմանները՝ թե սոցիալ-տնտեսական, թե քաղաքական, որոնք էին ձեռքբերումները եւ կորուստները, ինչու ի վերջո կասեցվեց հայրենադարձությունը, եւ որն էր Ստալինի բուն նպատակը՝ ամիսների լռությունից հետո թույլատրել հայրենադարձությունը:

Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության մասին խորհրդային կառավարության որոշումը խանդավառությամբ ընդունեց հա-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թթ. 73-75:

[2] «Սովետական Հայաստան», 1945, 2 դեկտեմբերի:

[3] Մելիքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 177-245, Саркисян Н., Деятельность Компартии Армении по осуществлению репатриации зарубежных армян по вовлечению их в социалистическое строительство, Автореферат, 1983, сс.8-17.

մայն հայությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Այդ փաստը անառարկելիորեն ընդունված է պատմագիտության կողմից եւ մեր կարծիքով վերաքննության ենթակա չէ: Հայրենադարձության մասին որոշումը դրականորեն ընդունեցին գաղութահայության բոլոր ուժերը՝ կոմունիստները, հէակյանները, ռամկավարները եւ նույնիսկ դաշնակցականները: Վերջիններիս նախնական վերաբերմունքը հայրենադարձության նկատմամբ սխալ է մեկնաբանված խորհրդահայ պատմագիտության մեջ: Հ.Մելիքսեթյանը նշելով, որ Հ.Յ.Դ. նույնիսկ իրեն հայտարարել է ներգաղթի ջերմ կողմնակից[1], իհարկե ջերմ բառը վերցնելով չակերտների մեջ, չի անդրադառնում այն հանգամանքին, թե ինչու հետագայում Հ.Յ.Դ., եթե ոչ բացահայտ, ապա ներքուստ, դեմ էր հայրենադարձությանը:

Որ Հ.Յ.Դ. սկզբնական շրջանում ողջունեց հայրենադարձությունը, վկայում են նույնիսկ արտասահման գործուղված խորհրդային Հայաստանի ներկայացուցիչները: Մասնավորապես, Իրան գործուղված ՀԽՍՀ արտգործնախարարի տեղակալ Գ.Հովհաննիսյանը 1946թ. մայիսի 30-ին Գր.Հարությունյանին ներկայացրած զեկուցագրում հայտնում է. «Դաշնակների կուսակցությունը ամեն կերպ իր «Ալիք» թերթի միջոցով ջանում է ցույց տալ իրեն որպես Խորհրդային Հայաստան հայերի վերաբնակեցման կողմնակից: Նրանք թույլատրել են կուսակցության անդամներին ցուցակագրվել Հայաստան մեկնելու համար: «Ալիքի» խմբագրությունը իր թերթի էջերում լուսաբանում է վերաբնակեցման հարցերը: Այդ թերթը առաջինը հայտարարեց միջոցների հանգանակություն՝ վերաբնակիչների օգնության հիմնադրամի օգտին: Այդպիսի մարտավարություն դաշնակները ստիպված էին ընտրել Հայաստան մեկնելու հայերի զանգվածային ցանկության պատճառով: Նրանք չեն կարող եւ չեն ուզում բացահայտ գնալ ընդդեմ այդ ցանկության: Ընդհակառակը, ձգտում են հայտնվել վերաբնակեցման կազմակերպիչների առաջին շարքերում: Սպահանում նրանց ներկայացուցիչները համայնքային խորհրդի ղեկավարությանը հայտարարեցին, որ նրանք ունեն Սիմոն Վրացյանի ցուցումները՝ օժանդակել վերաբնակեցմանը»[2]:

Սակայն իրադրությունը փոխվեց, երբ ԽՍՀՄ կառավարության 1946թ. փետրվարի 22-ի «Արտասահմանից Խորհրդային Հայաստան հայերի վերաբնակեցման գործնական միջոցառումների մասին» որոշման ցուցումների համաձայն հայկական գաղթօջախներում սկսեցին կազմակերպվել «Հայերի վերադարձին աջակցող տեղական կոմիտեներ, կազմված արտասահմանյան հայկական առաջադիմական կազմակերպությունների հիման վրա»[3]: «Առաջադիմական» կազմակերպությունների անվան ներքո հասկացվում էին կոմունիստները, հնչակյանները, վերապահումով՝ ռամկավարները, բայց ոչ դաշնակցականները:

Երբ 1946թ. մարտ-ապրիլ ամիսներին Բուլղարիայում, Հունաստանում, Իրանում, Լիբանանում, Ռումինիայում եւ Սիրիայում սկսեցին կազմակերպվել այդ կոմիտեները խորհրդային դիվանագիտական ներկայացուցչությունների, ինչպես նաեւ Խորհրդային Հայաստանից գործուղված պետական գործիչների եւ ավտանգության նախարարության ներկայա-

---

[1] Մելիքսեթյան Հ., նշվ.աշխ., էջ 328-330:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 99, թթ. 43-44:
[3] Նույն տեղում, գ. 44, թ. 175:

ցուցիչների նախապատրաստած ցուցակներից, պարզվեց, որ դաշնակցականների ներկայացուցիչներ այդ կոմիտեներում չկան: Նորից դիմենք Գ.Հովհաննիսյանի զեկուցագրին. «Թեհրանի կենտրոնական կոմիտեի կազմը հրապարակելուց հետո, երբ պարզվեց, որ կոմիտեի կազմում չեն մտել դաշնակցության եւ «Ալիքի» խմբագրության ներկայացուցիչները, «Ալիքի» խմբագիրը մի քանի դաշնակների հետ այցելեց կոմիտեի նախագահին, պարոն Իսաեւին (Ռոման Իսաեւ, Ռոմանոս Իսայան- Ա.Վ.), որտեղ փորձեցին պարզել, ինչու նրանց խոստացան, բայց իրենց ներկայացուցչներին չմտցրին կոմիտե եւ հայտարարեցին, որ «անկեղծորեն ցանկանում են օժանդակել հայերի վերաբնակեցման գործին, քանզի դա նրանց վաղնջական երազանքն է»[1]:

Հասկանալի է, որ այստեղ գործում էր տարիների ընթացքում ձեւավորված գործելակերպը. խորհրդային մարմինները ոչինչ չէին ձեռնարկում առանց թշնամու եւ հակառակորդի կերպար ունենալու, եւ միշտ, Խորհրդային Հայաստանի եւ հայկական գործերի հանգամանքներում դա դաշնակցությունն էր: Այսպիսով, Հ.Յ.Դ. հայտնվեց եզրագծից դուրս: Եվ այդ կուսակցությունը սկսեց հանդես գալ հայրենադարձության գաղափարի դեմ, իհարկե, օգտագործելով հայրենադարձության կազմակերպման եւ իրագործման ընթացքում ծագած եւ՝ բնական (պատերազմի հասցրած), եւ՝ արհեստական (գաղափարախոսական, խոսքի եւ գործի հակասության, ընդունված ծրագրերի եւ դրանք ժամանակին չկատարելու եւն.) դժվարությունները:

ՌԱԿ-ը անվերապահորեն ընդունեց հայրենադարձությունը, սակայն 1947թ. հունվարին, կուսակցության 8-րդ ընդհանուր պատգամավորական ժողովում, ողջունելով «ներգաղթը իբր ազգահաւաքման պատմական աննախընթաց իրողութիւն«, միաժամանակ պահանջ դրեց «ներգաղթը յառաջ տարուի այնպիսի ձեւով, որ նկատի առնուին իւրաքանչիւր գաղութի տնտեսական ու քաղաքական մասնայատուկ պայմանները, որպէսզի առաջքը առնուի ներգաղթող ընտանիքներու անորոշ կացութենէն բղխած անպատեհութիւններուն, ու մանաւանդ տեղի չունենան հապճեպ ու այդ իսկ պաճառաւ վնասաբեր վաճառումները գոյքերու եւ կալուածներու, դէպքեր, որոնք անկախաբար ներգաղթողին ու գաղութին պատճառուած վնասներէն, շահագործումի նիւթ կը հայթայթեն ներգաղթի հակաբրօբականտին»[2]:

ՌԱԿ-ի պատգամավորական ժողովը վերոհիշյալի հիման վրա Հայաստանի իշխանություններից խնդրում էր նախօրոք կազմել ներգաղթողների ցուցակները՝ ըստ տարիների, որպեսզի նրանք նշված ժամկետի համաձայն պատրաստվեն մեկնման, միաժամանակ ներգաղթի կոմիտեի լիազորները ուշադրություն դարձնեն տեղական կոմիտեների առաջարկություններին գործի կազմակերպման եւ արդյունավետության տեսակետից: Այսպիսով, հայրենադարձության նախապատրաստման առաջին շրջանում գաղութահայության բոլոր շերտերը ողջունեցին այն:

ԽՍՀՄ ներկայացուցչությունների եւ հայկական կոմիտեների տրվյալներով, Խորհրդային Հայաստան ներգաղթելու համար ցուցակագրվել

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 99, թ. 44:
[2] Նույն տեղում, ց. 27, գ. 62, թթ. 35 - 36:

էր 360 հազար մարդ, ըստ երկրների այդ պատկերը ուներ հետեւյալ տեսքը[1]:

Սիրիա եւ Լիբանան.....	140	հազար մարդ
Հունստան	20	___ " ___
Իրան	60	___ " ___
Ֆրանսիա	50	___ " ___
Եգիպտոս..	30	___ " ___
Հարավային Ամերիկա	29	___ " ___
Թուրքիա	20	___ " ___
Բուլղարիա..	9	___ " ___
Ռումինիա.....	1	___ " ___
ԱՄՆ	1	___ " ___

1946թ. առաջին կեսն անցավ լարված նախապատրաստական աշխատանքների մեջ: Գր.Հարությունյանն այդ ընթացքում երեք անգամ դիմում է Մոսկվա՝ Ստալինին եւ Բերիային, գործնական հարցերում անհրաժեշտ օգնություն հայցելով[2]: ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1946թ. փետրվարին կայացած պլենումը քննարկեց ներգաղթը հաջող իրագործելու համար անհրաժեշտ գործնական քայլերի ծրագիրը: Մատնանշվեց այն հանգամանքը, որ «միայն Հայրենական պատերազմում ծեռք բերված հաղթանակը եւ Խորհրդային Հայաստանի 25 տարվա խոշոր նվաճումները հնարավոր դարձրին ներգաղթը»[3]:

ԽՍՀՄ Ժողկոմխորհը 1946թ. փետրվարի 22-ին եւ հունիսի 21-ին ընդունեց սփյուռքահայության ներգաղթի հետ կապված գործնական միջոցառումների մասին որոշումներ, որոնց նախագծերը գրված են Գր.Հարությունյանի ծեռքով[4]:

1946թ. հուլիսին ներգաղթողների առաջին գնացքները ժամանում են Հայաստան: Կարճ ժամանակում՝ մինչեւ հոկտեմբերի կեսերը, հայրենիք ժամանեց մոտ 50 հազար հայ՝ նախատեսված 30-35 հազարի փոխարեն: Հոկտեմբերի 8-ին Ստալինին գրած զեկուցագրում Գր.Հարությունյանը ներկայացնում է արդյունքները.

1. Բնակարանների պակասի պատճառով ժամանողներին հաճախ տեղավորում են բնակության համար ոչ պիտանի շինություններում, ինչը առաջ է բերում արդարացի դժգոհություն, իսկ բնակարանների կառուցումը դանդաղում է շինափայտի եւ ծածկի նյութերի պակասի պատճառով:

2. Ժամանող բնակչության հիմնական զանգվածը արհեստավորներ են եւ երբ նրանց տեղավորում են գյուղական վայրերում, նրանք դժգոհում են եւ ցանկանում բնակվել քաղաքներում:

3. Իրանից, Սիրիայից եւ Լիբանանից ժամանածները վատ են հագնված եւ մոտակա ձմռանը նրանք պատրաստ չեն: Նրանց աշխատած գումարները բավարար չեն հագուստ եւ կոշիկ գնելու համար:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 100, թ. 92:
[2] Նույն տեղում, ց. 27, գ. 3, թթ. 3-6, 15-16, 38-41:
[3] Նույն տեղում, ց. 26, գ. 3, թ. 112:
[4] Նույն տեղում, գ. 44, թթ. 175-177, գ. 45, թթ. 407- 410:

4. Իրանից եւ Սիրիայից ժամանած հայրենադարձները համառորեն պահանջում են իրենց մատակարարել ամենօրյա թեյի շաքար, իսկ դա ավելին է, քան տեղաբնակների սպառումը:

Նամակի վերջում խնդրվում է առաջնորդին՝ Հայաստանի համար բաց թողնել հագուստ, կոշիկ եւ շաքար՝ հայրենադարձներին մատակարարելու համար[1]: Նույն օրը նույնպիսի բովանդակությամբ նամակներ են առաքվում Ա.Միկոյանին, Լ.Բերիային եւ Ա.Ժդանովին, իսկ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ն.Վոզնեսենսկուն ներկայացվում են ավելի կոնկրետ տվյալներ[2]: Միաժամանակ պատրաստվում է առաջին հայրենադարձների ողջույնի ստվարածավալ նամակը՝ անմիջապես նրանց համար հարազատ հայր եւ մեծ առաջնորդ դարձած Ստալինին[3]:

Մոտենում էր 1947 թվականը: Միութենական կառավարությանն է ներկայացվում հայրենադարձների հերթական խմբաքանակ ընդունելու մասին որոշման նախագիծը: Իսկ դժվարություններն ու դժգոհությունները աճում էին: ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն հայրենադարձների շրջանում աշխատանքները ուժեղացնելու համար Կենտկոմում ստեղծում է հատուկ բաժին՝ հինգ աշխատակիցներից բաղկացած: Սակայն տնտեսական ծանր պայմանների պատճառով սկսվում են նկատվել արտագաղթի տրամադրություններ: Մեկ տարվա ընթացքում՝ մինչեւ 1947թ. հունիսը, Թուրքիայի հետ սահմանը կարողանում են խախտել եւ անցնել 21 մարդ, իսկ 110-ը բռնվում են այդպիսի փորձ կատարելիս[4]: Եվ տնտեսական լծակների (սեփական տների կառուցում, դրամական օգնություն) հետ միաժամանակ սկսում են կիրառվել վարչական մեթոդներ: ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն 1947թ. մայիսի 16-ի որոշմամբ սահմանամերձ շրջաններում բնակեցված հայրենադարձներին սկսում է տեղափոխել հանրապետության այլ տարածքներ[5]: Ժամանակակիցների վկայությամբ տեղափոխման է ենթարկվել 215 ընտանիք[6]:

Սակայն Հայաստանի ղեկավարությունը գիտակցում էր, որ վարչական մեթոդներով հնարավոր չէ արդյունքի հասնել, ուստի ծրագրում է ներգաղթած որակյալ մասնագետներին օգտագործելու համար հիմնել էլեկտրատեխնիկական եւ ռադիոարդյունաբերություն: Այդպիսի խնդրանքով Գր.Հարությունյանը դիմում է Ստալինին[7], որի արդյունքում Երեւանում սկսվում է կառուցվել լուսատեխնիկական գործարանը:

Հետզհետե պարզ է դառնում, որ 1947թ. հայրենարձության ծրագրերը կատարել հնարավոր չէ: Նախատեսված 63 հազար մարդու փոխարեն հաջողվում է ընդունել ընդամենը 35 հազար հայրենադարձ: Դժվարությունները հնարավոր չէր հաղթահարել նույնիսկ Ստալինի ստորագրությամբ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1947թ. հունվարի 29-ի, մարտի 24-ի, դեկտեմբերի 10-ի որոշումներն ընդունելով:

Այդ տեսակետից հատկանշական է Գր.Հարությունյանին ներկայացրած «Հայրենադարձ հայերի քաղաքական-բարոյական վիճակի մա-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 100, թթ. 71-74:
[2] Նույն տեղում, թ. 91:
[3] Նույն տեղում, թթ. 98-116:
[4] Նույն տեղում, ց. 27, գ. 47, թ. 57:
[5] Նույն տեղում, գ. 26, թ. 16:
[6] Մովսես Բազարյան, Նամակներ սովետական «դրախից», Ե., 1996, էջ 44:
[7] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 47, թթ. 85 - 86:

սին» զեկուցագիրը (կազմված հայրենադարձ հայերի շրջանում աշխատող սեկտորի կողմից՝ 1947թ. սեպտեմբերի 27-ին): Առանց մեկնաբանության կատարենք մի քանի մեջբերում այդ փաստաթղթից. «Թերությունները երեւում են սկսած Բաթումի ընդունման կետից, որտեղ հաճախակի, քարավանի ժամանումից հետո, մարդիկ մի քանի օր մնում են շոգենավի մեջ: Օրինակ, հայրենադարձներով նավը Սիրիայից եւ Եգիպտոսից ժամանեց սեպտեմբերի 14-ին, սակայն նրանք նավում մնացին 8-12 օր: Հայրենադարձները Բաթումից Հայաստան են ուղարկվում ապրանքատար վագոններով, որտեղ չեն ստեղծվում ամենափոքր պայմանները: Ուղեւորները երեխաների հետ մեկնում են երկու օր առանց ջրի եւ էլեկտրականության: Գնացքները շարժվում են առանց որոշակի չվացուցակի, որի պատճառով ուղեւորները չգիտեն, թե երբ եւ որտեղ ինչքան են կանգնելու, որպեսզի ազատ հաճախեն զուգարան եւ ձեռք բերեն եռացրած ջուր: Գնացքները կանգնում են դատարկ կայարաններում 5-6 ժամ, իսկ մեծ կայարաններում, որտեղ կարելի է ձեռք բերել սննդամթերք, գնացքները չեն կանգնում: Այդ թերությունները առիթ ծառայեցին Ֆրանսիայից մի քանի հայրենադարձների հայտարարելու. «Մենք ժամանեցինք մեծ դժվարություններով, առանց ջրի եւ լույսի, ուստի խնդրում ենք ստեղծել տարրական պայմաններ հաջորդ քարավանների համար»:

Հայաստանում դժվարություններն ավելի ակնհայտ էին դառնում. «Հայրենադարձների շատ ընտանիքներ Երեւանում, Լենինականում, շրջաններում, սովխոզներում ապրում են ծանր բնակարանային պայմաններում: Ստալինի անվան կոլտնտեսությունում (Բերիայի անվան շրջանում) մի սենյակում ապրում է ընտանիք՝ բաղկացած 22 շնչից: Այդ նույն կոլտնտեսությունում 16 ընտանիքներ ապրում են անավարտ շինություններում: Հիմնական դժգոհությունների պատճառը այն է, որ քաղաքաբնակներին ուղարկում են գյուղ,- ասում է քարավանի ղեկավար Դեւեջյանը,- որտեղ նրանք հայտնվում են դժվար դրության մեջ, որովհետեւ աշխօրից առայժմ ոչինչ չեն ստանում, իսկ հաց ու մթերք չեն կարող գնել, որովհետեւ չունեն փող»[1]:

Անհրաժեշտ է շեշտել, որ հայրենադարձ հայերը իշխանության մարմինների կողմից չէին վայելում քաղաքական վստահություն: Կիրովականում կառուցվող ազոտական պարարտանյութերի գործարանում 1948թ. հոկտեմբերին աշխատում էր 169 հայրենադարձ: ՀԽՍՀ պետանվտանգության նախարարությունը դիմում է Գր.Հարությունյանին, խնդրելով՝ հանձնարարել հայրենադարձներին տեղափոխել գործարանի շինարարությունից այլ աշխատանքի, հաշվի առնելով գործարանում իրականացվող «հատուկ միջոցառումները»[2]: Գործարանի տնօրինությունը 15 օր անց հայտնում է Կենտկոմ, որ հանձնարարությունը կատարված է, հայրենադարձների մի մասը տեղափոխված է այլ աշխատանքի, իսկ մի մասն էլ տարբեր առիթներով ուղղակի հեռացվում է աշխատանքից[3]:

Հայրենադարձների շրջանում եղած դժգոհությունների մասին ՀԽՍՀ պետանվտանգության նախարարությունը «հատուկ հաղորդագրություններով» տեղյակ էր պահում Գր.Հարությունյանին: 1948թ. ապրիլի 7-ի հատուկ հաղորդագրությունում նշվում է, որ Վեդու շրջանից ստացված

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 47, թթ. 96-100:
[2] Նույն տեղում, ց. 28, գ. 87, թ. 55:
[3] Նույն տեղում, գ. 205, թթ. 32-33:

տվյալների համաձայն «շրջանի որոշ գյուղերում հայրենադարձների կարիքների նկատմամբ շրջանային կազմակերպությունների եւ կոլտնտեսությունների մի շարք ղեկավարների անպատասխանատու վերաբերմունքի պատճառով նրանց շրջաններում աճել են արտագաղթի տրամադրությունները եւ դժգոհությունները՝ իրենց նյութական վիճակից»: Հաղորդագրության մեջ ներկայացված են փաստեր նման անբարեխիղճ վերաբերմունքի հետեւանքների մասին: Դաշլու գյուղում բնակվում է հայրենադարձների 14 ընտանիք, որոնք գտնվում են նյութական շատ ծանր վիճակում, որի հետեւանքով 1947թ. երկրորդ կեսին եւ 1948թ. հունվար-փետրվար ամիսների ընթացքում մահացավ 16 մարդ: Թերսնման պատճառով հայրենադարձների մի քանի ընտանիք հիվանդացել են տարբեր հիվանդություններով[1]:

1948թ. դեկտեմբերի 3-ին Սիսիանի շրջանի Սպանդարյան գյուղում տան ծածկի փլվելու պատճառով զոհվում է հայրենադարձ ընտանիքի մանկահասակ երեք երեխա: ՀԽՍՀ դատախազության ստուգումից պարզվում է, որ սենյակը կառուցվել էր սեպտեմբեր-հոկտեմբերին եւ Վ.Տերտերյանի ընտանիքն այնտեղ ապրել էր ընդամենը 25 օր: Ինչպես նշված է դատախազության տեղեկատվության մեջ, «սենյակը ծածկված է եղել երկու հին գերանով, որոնցից մեկը՝ փտած: Սենյակի լուսամուտները ապակով պատված չեն եղել, որի պատճառով Տերտերյանի ընտանիքը ստիպված է եղել ցրտից պաշտպանվելու համար գիշերը լուսամուտները խցկել խոտով, իսկ ցերեկը հանել խոտը՝ լուսավորության համար»[2]:

1947թ. երկրորդ կեսից արտագաղթի տրամադրություններն աճեցին, շատացան սահմանն անցնելու փորձերը: Համաձայն սահմանապահ զորքերի հայկական օկրուգի հրամանատարության հատուկ հաղորդագրությունների, ձերբակալված սահմանախախտ հայրենադարձները իրենց արարքը բացատրել են նյութական ծանր վիճակով[3]: 1948թ. առաջին կեսի ընթացքում սահմանը հաջողվեց անցնել 14 անձանց, որոնցից մեկին Իրանի իշխանությունները հետ վերադարձրին[4]: Փետրվարի 18-ին Վեդու շրջանի Նոր Կյանք ավանի 11 հայրենադարձ բնակիչների, որոնք ներգաղթել էին Իրաքից, հաջողվեց անցնել Թուրքիայի սահմանը[5]: Օգոստոսի 2-ին հայրենադարձ հայերի մի խումբ փորձում է անցնել սահմանը նույն շրջանում: Հանդիպելով սահմանապահ խմբի՝ սահմանախախտները որսորդական զենքից կրակ են բացում սահմանապահների վրա: Փոխհրաձգության ժամանակ 4 սահմանապահ եւ 2 հայրենադարձ վիրավորվում են, ստացած վերքերից հիվանդանոցում մեկական սահմանապահ եւ հայրենադարձ մահանում են[6]:

Սահմանի խախտման այս երկու դեպքը դարձան ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի քննարկման առարկա, որտեղ առաջին անգամ սահմանի խախտումը կապվում է ոչ միայն «քաղաքական-դաստիարակչական աշխատանքների» բացակայության, այլեւ «հայրենադարձների առանձին ընտանիքների ապրուստի համար անհրաժեշտ միջոցների» չապահովման

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 87, թթ. 2-3:
[2] Նույն տեղում, գ. 90, թ. 130:
[3] Նույն տեղում, ց. 27, գ. 57, թթ. 194-205, 243, 245:
[4] Նույն տեղում, ց. 28, գ. 94, թ. 6:
[5] Նույն տեղում, գ. 43, թ. 60:
[6] Նույն տեղում, գ. 77, թթ. 26-30:

հետ[1]: Սահմանի հաճախակի դարձած խախտումները ԽՍՀՄ դատախազության կողմից ստուգումների առիթ ծառայեցին: Արդյունքների մասին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա.Ժդանովին ներկայացրած զեկուցագրում ԽՍՀՄ գլխավոր դատախազ Կ.Գորշենինը նշում է, որ 1946-47թթ. սահմանը անցնելու փորձի համար կալանավորվել է 286 մարդ, որոնք իրենց ցուցմունքներում հիմնականում հենվել են վատ բնակարանային-կենցաղային պայմանների վրա: Զեկուցագրում այնուհետեւ բերվում է «վատ բնակարանային-կենցաղային պայմանների» այնպիսի մի շարան[2], որն ընթերցելիս ակամա մտածում ես, թե ինչու եւ ինչի համար կազմակերպվեց հայրենադարձությունը: Երկու սահմանախախտներ ցուցմունք են տվել, որ աշխատելով էջմիածնում ճանապարհային շինարարության վրա, օրական 500 գրամ հացից բացի ուրիշ ոչ մի մթերք չեն ստացել, եւ գտնվելով ծանր պայմաններում, որոշել են վերադառնալ բնակության նախկին վայր: Միայն Հոկտեմբերյանի շրջանից փորձել է արտասահման փախչել 34 մարդ: Գործի քննության ընթացքում պարզվում է, որ հայրենադարձների մեծամասնությունը որոշել է վերադառնալ բնակության նախկին վայր բնակարանային-կենցաղային ծանր պայմանների պատճառով: Ուստի, ինչպես նշված է զեկուցագրում, ԽՍՀՄ դատախազությունը հսկողական կարգով որոշել է ստուգել ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1945թ. նոյեմբերի 21-ի «Արտասահմանից Խորհրդային Հայաստան հայերի վերադարձի միջոցառումների մասին» թ.2947 որոշման կատարման ընթացքը: Ստուգման արդյունքում պարզվում են հայրենադարձների նկատմամբ անհոգի վերաբերմունքի բազմաթիվ փաստեր, որոնցից մի քանիսը կփորձենք համառոտ ներկայացնել.

1. Թալինի շրջանում վերաբնակեցվում է 23 ընտանիք՝ 116 մարդ, որոնք երկար ժամանակ գտնվում են բաց երկքի տակ: Շրջգործկոմը նրանց տեղավորելու ոչ մի միջոց չի ձեռնարկում, պատճառաբանելով, որ հայրենադարձները ժամանել են չծրագրավորված:

2. Էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղում երեք ընտանիք բնակեցվել են կառուցվող շենքում՝ առանց դռների ու լուսամուտների, սենյակներում չկան մահճակալներ եւ այլ անհրաժեշտ իրեր:

3. Վեդու շրջանի Թայթան եւ Գորովան գյուղերում եւ Կիրովի անվան խորհրդային տնտեսությունում 12 անձից բաղկացած ընտանիքներ բնակվում են 12-ական քառակուսի մետր տարածքով սենյակներում:

4. Ցեմենտի գործարանի բանավանում մի սենյակում ապրում են 2-ական ընտանիքներով, քնում են հատակին, որովհետեւ մահճակալ չկա:

5. Ավշար գյուղում 2 ընտանիքներ (10 անձ) միասին ապրում են մեկ սենյակում, քնում են հողե հատակին, որովհետեւ անկողնային պարագաներ եւ մահճակալներ չունեն:

6. Իրանց ժամանած 9 անձից բաղկացած ընտանիքը տեղավորվել էր Զանգիբասարի շրջկենտրոնում, կիսախարխուլ սենյակում: Անձրեւների ժամանակ նրանց տեղափոխում են ակումբի շենք: Հացի քարտեր տրվում են ընտանիքի երկու անդամի, որի պատճառով հյուծվածությունից այդ ընտանիքում վեց երեխա մահանում են:

7. Կոտայքի շրջանում 17 ընտանիք բնակեցվում են դպրոցական շենքում:

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 43, թ. 60:
[2] Նույն տեղում, գ. 60, թթ. 201- 208:

8. Բերիայի անվան շրջանում հինգ ընտանիք միասին բնակեցվում են մեկ սենյակում[1]:

Զեկուցագրում ներկայացված են այն ծրագրերը, որոնք, համաձայն միութենական կառավարության որոշումների, պետք է իրականացվեին, եւ այն, ինչ արվել էր: Այսպես, 1947թ. ծրագրված էր նախապատրաստել 13 հազար սենյակ: Օգոստոսի 1-ի դրությամբ փաստորեն կար 2375 կամ ծրագիրը իրագործվել է 18 տոկոսով: Ընդ որում, 1106 նախապատրաստվել էր տեղաբնակների «խտացման», այսինքն՝ նրանցից սենյակները վերցնելու հաշվին: Վատ էր իրականացվում նաեւ անհատական բնակարանային շինարարությունը: 1947թ. համար հատկացված 65 միլիոն ռուբլուց օգոստոսի 1-ի դրությամբ իրացվել էր 16,8 միլիոն ռուբլին:

Շինարարական աշխատանքների թերակատարման հիմնական պատճառը շինափայտի պակասն էր, որն իր հերթին հանրապետության տնտեսական մարմինների թերացումների եւ անպատասխանատվության հետեւանք էր: ՀԽՍՀ գյուղատնտեսության նախարարությունը 1947թ. առաջին կիսամյակում Ռուսաստանում պետք է մթերեր եւ ներկրեր 8 հազար խորանարդ մետր փայտ, հուլիսի 1-ի դրությամբ չէր ներկրել ոչ մի մետր: Հայկոոպը ծրագրված 3750 խորանարդ մետրի փոխարեն ներկրել էր 60-ը, արհեստագործական կոոպերացիայի վարչությունը՝ 2000-ի փոխարեն ընդամենը 20 խորանարդ մետր[2]: Զեկուցագրի վերջում տեղեկացվում է. որ «Հայաստան են ժամանելու հայրենադարձների նոր խմբեր եւ բնակարանների պատրաստ չլինելը հանրապետությունում կստեղծի խիստ անբարենպաստ իրադրություն ամեն ինչում»[3]:

Կ. Գորշենինի զեկուցագիրը դարձավ ինչպես ՀամԿ(բ)Կ Կենտկոմի, այնպես էլ ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի քննարկման առարկա[4]: ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն զեկուցագրին անդրադառնում է երկու անգամ՝ 1947թ. հոկտեմբերի 20-ին եւ միջոցառումներ մշակելու համար ստեղծում է հանձնաժողով: Իսկ նոյեմբերի 14-ին ընդունում է «Հայաստան վերադարձած արտասահմանյան հայերի աշխատանքային, բնակարանային, նյութական-կենցաղային հարցերի կարգավորման գործում եղած թերությունների վերացման միջոցառումների» ծրագիր: Կենտկոմի բյուրոն հանձնարարում է կուսակցական, խորհրդային եւ տնտեսական մարմինների ղեկավարներին անձնական պատասխանատվությամբ վերացնել հայրենադարձների ընդունման, աշխատանքով ապահովման, բնակարանների շինարարության, տնային իրերի ու վառելիքի հատկացման գործում եղած թերությունները: Շրջկոմների քարտուղարներին պարտադրվում է մեկ շաբաթում աշխատանքով ապահովել աշխատունակ բոլոր հայրենադարձներին եւ արդյունքների մասին Կենտկոմ ներկայացնել հաշվետվություն: Միաժամանակ, հայրենադարձության հետ կապված հարցերի համակարգումը դրվում է Կենտկոմի երկրորդ քարտուղարի վրա[5]:

Որոշումից հետո որոշ աշխատանք կատարվեց: ՀԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկված հաշվետվությունները կազմում են երկու ստվարածավալ թղ-

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 60, թթ. 205-207:
[2] Նույն տեղում, թ. 203-204
[3] Նույն տեղում, թ. 207:
[4] Նույն տեղում, ց. 27, գ. 33, թ. 79, գ.34, թթ. 45-49:
[5] Նույն տեղում, գ. 33, թթ. 46-49:

թապանակ[1]: Ներկայացնենք մի քանի հատված այդ հաշվետվություններից.

1. Երեւանի Մոլոտովյան շրջանում դեկտեմբերի 1-ի դրությամբ ավարտվել էր 12 բնակարանի վերանորոգումը[2]:

2. Երեւանի Սպանդարյանի շրջանում 21 հայրենադարձ ընտանիք բնակվում է նախկին կոլտնտեսային ֆերմայում, որտեղ էլեկտրականություն չի եղել: Դեկտեմբերի 1-ին նոր այնտեղ անցկացվել է էլեկտրականություն[3]:

3. Նոր Բայազետի շրջանի Ծաղկաշեն գյուղում տեղավորված 6 ընտանիքներ ապահովվում են վառելիքով եւ պարենով: Նրանց հատկացվում է 14 ցենտներ հացահատիկ, 25 կգ յուղ, 50 կգ պանիր, 12 ցենտներ կարտոֆիլ: Աղկալա գյուղում 8 ընտանիքների տրվել է վառելիք՝ ամբողջ տարվա համար: Կոլտնտեսությունը յուրաքանչյուր շնչին, օգնության կարգով, տվել է մեկ ցենտներ կարտոֆիլ, բաժանվել է 9 ցենտներ հացահատիկ, 20 կգ յուղ, 51 կգ պանիր եւ այլ մթերքներ[4]:

Սակայն, քանի որ խորհրդային համակարգում բոլոր միջոցառումները կամպանիայի բնույթ էին կրում, ուստի նախատեսված ոչ բոլոր ծրագրերն էին իրականացվում, նրանցից շատերը մնում էին թղթի վրա: Վերոհիշյալ որոշումները նույնպես արժանանում են այդ ճակատագրին: Ինչպես վկայում են արխիվային փաստաթղթերը, հայրենադարձների մոտ արտագաղթի տրամադրությունները շարունակում էին աճել: 1949թ. հունվար-օգոստոս ամիսներին սահմանն անցնելու փորձ է կատարել 168 հայրենադարձ, որոնք ինչպես միշտ, արտասահման անցնելու ցանկությունը բացատրել են նյութական ծանր պայմաններով[5]:

Բնակարանային եւ կենցաղային դժվարությունների պատճառներից մեկն էլ Միութենական կառավարության ընդունած որոշումների հակասությունն էր: ԽՍՀՄ Նախարարների խորհուրդի 1947թ. դեկտեմբերի 10-ի «Արտասահմանյան հայերին 1948թ. ՀԽՍՀ ընդունելու եւ տեղավորելու նախապատրաստման մջեցառումների մասին» որոշումով նախատեսվում էր հայրենադարձների համար բյուջեի հաշվին 1948թ. կառուցել 84,5 հազար քառակուսի մետր բնակտարածություն, իսկ բանկային վարկերի հաշվին՝ 9036 տուն: Սակայն ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1948թ. փետրվարի 12-ի «ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության վերականգման եւ զարգացման 1948թ. ծրագրի մասին» որոշումը Հայաստանում ստացվելուց հետո պարզվեց, որ նախատեսված անհատական բնակարանային շինարարության համար կենտրոնացված կապիտալ ներդրումները եւ վարկերը չեն ապահովի նույնիսկ 1947թ. դեկտեմբերի 10-ի որոշումով նախատեսված բնակարանային շինարարությունը[6]: Ուստի, ՀԽՍՀ կառավարությունը ստիպված էր 1948թ. կրճատել նախնական ծրագրով նախատեսված բնակարանային շինարարությունը[7]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գգ. 213, 214:
[2] Նույն տեղում, գ. 213, թ. 48:
[3] Նույն տեղում, թթ. 50-51:
[4] Նույն տեղում, թ. 41:
[5] Նույն տեղում, ց. 29, գ. 99, թ. 140:
[6] Նույն տեղում, ց. 28, գ. 74, թ. 158:
[7] Նույն տեղում, թ. 160:

1948թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Հայաստան գործուղման մեկնած Սովինֆորմբյուրոյի թղթակից Միխայիլ Դոլգոպոլովը հանդիպում է ունենում բազմաթիվ հայրենադարձների հետ եւ որոշում է նամակով տեղյակ պահել ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Ա.Միկոյանին[1]: Նամակում շեշտը դրված է երկու հիմնական հանգամանքի վրա: Առաջինը՝ Հայաստանի ղեկավար աշխատողները հայրենադարձներին տալիս են տարբեր խոստումներ, իսկ հետո դրանք չեն կատարում, կամ կատարում են շատ ուշացումով: Երկրորդը՝ տարբեր բնագավառների որակյալ մասնագետներ՝ «արժեքավոր մարդիկ», ուղարկվում են կոլտնտեսություններ կամ այլ վայրեր երկրորդական աշխատանքների: Եվ լրագրողը բերում է այդպիսի բազմաթիվ փաստեր. դիցաբանության հայտնի մասնագետ-պրոֆեսորին ուղարկել են գյուղ՝ գրադանարանավար, իսկ փարիզյան հայտնի դերձակներին՝ կոլտնտեսային դաշտերում աշխատելու[2]:

Ա.Միկոյանի մակագրությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած այդ նամակը իր գործը կատարում է, մի քանի ընտանիք ստանում են հարմարավետ բնակարան եւ աշխատանք՝ ըստ մասնագիտության[3]: Սակայն, որքա՞ն մարդիկ կային, որոնց մասին նամակ գրող չկար:

1947թ. հայրենադարձության ծրագիրը չկատարվեց: Նախատեսված 63 հազար մարդու փոխարեն հայրենադարձվեց 35 401 մարդ[4]: Ճիշտ է, Իրանի կառավարությունը 1947թ. արգելեց հայերի հայրենադարձությունը, Եգիպտոսում եւ Պաղեստինում բռնկվեցին համաճարակներ, իսկ Արգենտինայի, Բրազիլիայի եւ Ուրուգվայի կառավարությունները չարտոնեցին հայերի հայրենադարձությունը, սակայն մյուս երկրներից էլ հայրենադարձության ծրագիրը չկատարվեց:

1947թ. դեկտեմբերի 10-ին ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը հաստատեց 1948թ. հայրենադարձության ծրագիրը, որով նախատեսվում էր ընդունել 10 հազար մարդ[5]: ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն դեկտեմբերի 23-ին, քննարկելով այդ որոշման կենսագործման հարցը, հաշվի առնելով արդեն ներգաղթածների բնակարանային դժվարությունները՝ հանձնարարեց ՀԽՍՀ Նախարարների խորհրդին, Արտասահմանյան հայերի ընդունման կոմիտեին, վերաբնակեցման վարչությանը, քաղկոմ-շրջկոմներին, քաղաքային եւ շրջանային գործադիր կոմիտեներին հիմնական ուշադրությունը դարձնել 1946-47թթ. հայրենադարձներին բնակարանով ապահովելու վրա[6]:

Սակայն ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն 1948թ. հունիսի 25-ին քննարկելով հայրենադարձների համար վարկով իրականացվող անհատական բնակարանային շինարության ընթացքի մասին հարցը, արձանագրում է, որ վերաբնակեցման վարչությունը 1948թ. հունիսի 1-ի դրությամբ շրջաններում բնակարանային շինարարության ծրագիրը կատարել է 66,1 տոկոսով, որը կազմում էր տարվա ծրագրի ընդամենը 12,9 տոկոսը, իսկ կոլտնտեսություններում այն կատարվել էր գրեթե նույն չափով 68,8

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 91, թ. 23:
[2] Նույն տեղում, թ. 30:
[3] Նույն տեղում, թթ. 2-4:
[4] Նույն տեղում, ց. 29, գ. 100, թ. 78:
[5] Նույն տեղում, թթ. 2-4:
[6] Նույն տեղում, գ. 37, թ. 90:

տոկոսով: Նույն վիճակն էր նաեւ քաղաքներում՝ 6914 առանձնատան փոխարեն շահագործվել էր 189-ը, այդ թվում Երեւան քաղաքում 4918 տան դիմաց՝ ընդամենը 152-ը[1]:

Հասկանալի էր դառնում, որ ինչպես նոր հայրենադարձության, այնպես էլ նախորդ տարիների տեղավորման ծրագրերը ձախողվում էին: Հայաստանի ղեկավարությունը որոշում է 1949թ. հայրենադարձությունը դադարեցնել: ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1948թ. օգոստոսի 24-ին որոշում է ընդունում այդ տարվա հայրենադարձությունը կրճատելու մասին: Որոշման առաջին կետով այն դադարեցվում էր Ֆրանսիայից (2000 մարդ), Սիրիայից եւ Լիբանանից (3500 մարդ), իսկ ԱՄՆ-ից նախատեսված 1000-ը կրճատվում էր 750-ով: Երկրորդ կետով թույլատրվում էր եգիպտոսից լրացուցիչ ներգաղթել 400 մարդ ու նրանց ընդհանուր թիվը հասցնելով 1900-ի: Երրորդ կետով 1949 թվականից հայերի զանգվածային հայրենադարձությունը արտասահմանից դադարեցվում էր, իսկ չորրորդով կրճատվում էին արտասահմանյան հայերի ընդունման ու տեղավորման կոմիտեի եւ վերաբնակեցման վարչության հաստիքները[2]:

Փաստորեն, ըստ որոշման, 1948թ. հայրենադարձությունը պետք է իրականացվեր Ռումինիայից (1000 մարդ), եգիպտոսից (1900 մարդ) եւ Բուլղարիայից (1000 մարդ): Մինչեւ սեպտեմբերի կեսերը Հայաստան ժամանեցին հայրենադարձներ Ռումինիայից եւ եգիպտոսից, իսկ Բուլղարիայի հայերը, թվով հազար մարդ, տները եւ կահկարասին վաճառած, թողած աշխատանքները, բեռները կայարան հանձնած, սպասում էին ջերմանավի[3]: Սակայն նրանք հայրենիքն այդպես էլ չտեսան՝ 1948թ. սեպտեմբերի 14-ին հայրենադարձությունը կասեցվեց:

Պատճառը Ստալինի հեռագիրն էր Գ.Մալենկովին. «Հայ ներգաղթողների մեջ կան ամերիկյան հետախույզներ, որոնք նախապատրաստել են դիվերսիա «Պոբեդա» ջերմանավի վրա»: Նա նկատի ուներ սեպտեմբերի 1-ին բռնկված հրդեհը «Պոբեդա» ջերմանավի վրա, որը մի քանի օր առաջ հայրենադարձների մի մեծ խումբ էր հասցրել Բաթումի նավահանգիստ:

Նույն օրը՝ 1948թ. սեպտեմբերի 13-ին, Մալենկովը պատասխանում է Ստալինին. «Դուք, իհարկե, ճիշտ եք, հայ ներգաղթողների մեջ կան ամերիկյան հետախույզներ, որոնք իրականացրել են դիվերսիա «Պոբեդա» ջերմանավի վրա՝ Բաթումից Օդեսա դուրս գալուց առաջ, հայերի ափ իջնելուց առաջ կամ այդ ընթացքում: Մենք կձեռնարկենք բոլոր միջոցները»: Սեպտեմբերի 14-ին Մալենկովը հեռագրում է Ստալինին. «ԽՍՀՄ Նախարարների խորհրդի սեպտեմբերի 14-ի որոշմամբ արտասահմանյան հայերի ներգաղթը ԽՍՀՄ անհապաղ եւ անմիջապես դադարեցվում է. արգելվում է նրանց ընդունումը Հայաստան, անկախ նրանից, թե որտեղից են ներգաղթողները»[4]:

Այս որոշումից հետո մի բացառություն, այնուամենայնիվ, արվեց: ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն 1948թ. հոկտեմբերի 19-ին որոշում է «հանձնարարել ՀԽՍՀ կառավարությանը՝ ըստ ԽՍՀՄ կառավարության 1948թ. հոկտեմբերի 8-ի որոշման, լրացուցիչ ընդունել, որպես բացառություն, 260

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 47, թ. 122:
[2] Նույն տեղում, գ. 49, թ. 147:
[3] Նույն տեղում, ց.31, գ. 58, թ. 36:
[4] Գրիգոր Հարությունյան, Կյանքը եւ գործունեությունը, էջ 8-9:

մարդ ԱՄՆ-ի հայերից»[1]: Ամերիկահայերը վաճառել էին իրենց տուն ու տեղը, հրաժարվել էին ԱՄՆ-ի քաղաքացիությունից եւ ստացել խորհրդային քաղաքացիություն, ուստի ամերիկյան իշխանությունները պահանջում էին նրանց հեռանալ երկրից: Խորհրդային իշխանություններին այլ ելք չէր մնում, քան «որպես բացառություն», ընդունել նրանց: Հայերի այդ խումբը, թվով 162 մարդ, քանզի մոտ հարյուր մարդ այս կամ այն կերպ մնացին ԱՄՆ-ում, 1949թ. փետրվարին հասավ Հայաստան՝ դրանով ավարտելով մեծ հայրենադարձությունը:

Այժմ անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թե ինչ մտադրություն ուներ, ավելի ճիշտ, կարող էր ունենալ Ստալինը հայրենադարձությունը թույլատրելիս եւ ինչու կասեցրեց այն: Մեր խորին համոզմամբ հայրենադարձությունը Ստալինը ցանկանում էր օգտագործել որպես հաղթաթուղթ՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու համար, որտեղ հայկական տարածքների հարցը երբեք էլ առաջնային չէր, գլխավորը Սեւծովյան նեղուցներն էին: Իսկ 1948թ. արդեն պարզ դարձավ, որ նեղուցների հարցն այնպես չի լուծվում, ինչպես նա ծրագրել էր, եւ Ստալինին այլեւս պետք չէին հայրենադարձները, որոնք այնքան լրացուցիչ խնդիրներ էին առաջացնում: Նրա հոգսը չէր, որ հազարավոր հայեր իրենց ունեցվածքը վաճառած, սպասելով Հայաստան մեկնելուն, հայտնվել էին նոր դժբախտության մեջ: Իսկ հետո, առանց վարանելու, արդեն հայրենադարձված հայերի մի խումբ էլ կաքսորեր Ալթայի երկրամաս՝ «նոր հայրենիք», մշտական բնակության:

Ամփոփելով վերոհիշյալը՝ կարելի է միանշանակ շեշտել.

1. Սփյուռքահայերի հայրենադարձություն կազմակերպելու մասին խորհրդային կառավարության որոշումը մեծ ոգեւորությամբ ընդունվեց համայն հայության կողմից՝ Հայաստանում եւ Սփյուռքում:

2. Սփյուռքահայերի հայրենադարձությունը Հայաստանում եւ Սփյուռքում կապում էին Թուրքիայի կողմից բռնագրավված հայկական հողերի՝ Խորհրդային Հայաստանին վերամիավորելու հետ: Այդ գաղափարն իր արտահայտությունն էր գտել Սան-Ֆրանցիսկոյում բացված Միավորված ազգերի կոնֆերանսի պատվիրակություններին հայկական կազմակերպությունների հանձնած հուշագրերում[2], Գր.Հարությունյանի 1945թ. հուլիսի 6-ին Ստալինին հղած նամակում[3] եւ ընտրողների առջեւ 1946թ. փետրվարի 1-ին ունեցած ճառում[4]:

Միայն սփյուռքահայ առանձին քաղաքական գործիչներ, մասնավորապես Հայ Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Արշակ Ղարագյոզյանը, գտնում էին, որ հայկական հողերի հարցը չպետք է կապել հայրենադարձության հետ, քանզի նրանք տնտեսական շահեր ունեին Թուրքիայում[5]:

3. Սփյուռքի բոլոր քաղաքական ուժերը սկզբում կողմ էին հայրենադարձությանը: Սակայն հետո, խորհրդային մարմինների կողմից մեկուսացվելով հայրենադարձության կազմակերպումից, Հ.Յ.Դ. դեմ էր, իսկ ՌԱԿ-ը տեսնելով այդ գործում առկա սխալները եւ թերությունները, սկսեց

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 52, թ. 40:
[2] «Սովետական Հայաստան», 1945, 13 հունիսի:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թ. 41:
[4] «Սովետական Հայաստան», 1946, 3 փետրվարի:
[5] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 115, թ. 286:

քննադատել դրանք եւ պահանջել, որ այն իրականացվի առավել կազմակերպված, որպեսզի մարդիկ չհայտնվեն նոր դժվարությունների առջեւ:

4. Հայաստանի իշխանությունները պատրաստ չէին բնակչության նման հոծ զանգվածի ընդունմանը եւ տեղավորմանը: Նրանց անկազմակերպ գործունեության, հաճախ նաեւ խոսքի եւ գործի հակասության պատճառով հայրենադարձների մեծ մասը հայտնվեց բնակարանային, աշխատանքային, նյութական եւ կենցաղային դժվար պայմաններում, կրկին խաթարվեցին մարդկային շատ ճակատագրեր, որոնց հետեւանքով առաջացան արտագաղթի տրամադրություններ: Հաճախ չունենալով հարցերի լուծման տնտեսական միջոցներ՝ իշխանությունները դիմում էին վարչական մեթոդների, վերաբնակեցնում էին նոր տեղեր, իսկ 1949թ. իրականացվեց «անհուսալի տարրերի» աքսորը:

5. Հազարավոր սփյուռքահայեր վաճառելով իրենց ունեցվածքը, դուրս գալով աշխատանքից, տարիներով սպասում էին Հայաստան մեկնելուն՝ ընկնելով նոր, ծանր դրության մեջ: 1947թ. հուլիսի 9-ին Իրանի ՀԽՍՀ ներկայացուցիչ Վ.Կարապետյանը տեղեկացնում է Գր.Հարությունյանին, որ 20 հազար գյուղացիներ դեռեւս 1946թ. վաճառել են իրենց անձնական ունեցվածքը, ցանքս չեն կատարել եւ հայտնվել են ծանր կացության մեջ[1]: Նույն վիճակում էին նաեւ Ռումինիայի, Հունաստանի, Եգիպտոսի եւ մյուս երկրների հայերը:

6. Կասեցնելով հայրենադարձությունը՝ խորհրդային ղեկավարությունը հաշվի չառավ վերոհիշյալ հանգամանքը: Մարդկային ճակատագրերը նրան չէին հուզում: Մի խումբ բուլղարահայեր, 1951թ. դիմելով Ա. Միկոյանին, գրում են. «Բառերով հնարավոր չէ Ձեզ հաղորդել ողբերգությունը, որը ապրեցինք մենք, երբ հայտնվեցինք ծմռան նախօրյակին այդպիսի դժվար կացության մեջ»[2]:

7. Հետպատերազմյան լարվածության եւ տերությունների նոր հակասությունների պայմաններում խաթարվում էին հասարակ մարդկանց ճակատագրերը: Թույլատրելով հայրենադարձությունը՝ Ստալինը այն օգտագործում էր Խորհրդային Միության շահերի համար՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու նպատակով: 1948թ., երբ պարզ էր, որ Թուրքիայի նկատմամբ ծրագրերը ձախողվում են, նրան այլեւս պետք չէին հայրենադարձները, եւ նա կասեցրեց այն:

8. 1946-48թթ. մոտ 90 հազար հայեր տեղափոխվեցին Հայաստան: Նրանք թեեւ դժվարությամբ, բայց ներգրավվեցին հանրապետության տնտեսական եւ հասարակական-քաղաքական կյանքում: Նրանք եւ նրանց սերունդները դարձան հանրապետության լիիրավ քաղաքացիներ:

3. ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թուրքիային բռնակցված հայկական հողերը Հայաստանին վերադարձնելու հարցը չլուծվեց: Շուտով սկսվելու էր ներգաղթը, հայրենադարձներին անհրաժեշտ էր տեղավորել, իսկ Հայաստանի հնարավորությունները սակավ էին: Այդ իրավիճակում Գր.Հարությունյանը դիմում է Ի.Ստալինին՝ Լեռնային Ղարաբաղը եւ Նախիջեւանը Հայաստանին միա-

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 62, թ. 49:
[2] Նույն տեղում, ց. 31, գ. 58, թ. 36:

վորելու համար: Ադրբեջանի կազմում գտնվող այդ երկրամասերի հնարավորությունները չէին օգտագործվում, հայ բնակչությունն օրեցօր պակասում էր, իսկ Հայաստանին միավորվելու դեպքում դրանք կարող էին դառնալ ծաղկուն այգեստաններ, ինչպես Արարատյան դաշտավայրը:

Ղարաբաղի վերաբերյալ նամակը հայտնի է: Մեր կողմից հայտնաբերվել է 1988թ. եւ բազմիցս հրապարակվել: Նամակը գրվել է 1945թ. նոյեմբերին՝ Մոսկվայում.

« Իոսիֆ Վիսարիոնովիչ

Լեռնային Ղարաբաղի իքնավար մարզը, որ հարում է Հայաստանի տարածքին, 1923 թվականից մտնում է Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ: Այդ մարզի բնակչությունը հիմնականում հանդիսանում են հայերը: Ազգաբնակչության 153 հազարից 137 հազարը հայեր են: Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսությունը համանման է Հայաստանի լեռնային մասի գյուղատնտեսությանը: Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին մեծապես կնպաստեր նրա զարգացմանը եւ կբարելավեր տնտեսության ղեկավարումը: Ազգաբնակչության քաղաքական եւ մշակութային սպասարկումը մայրենի լեզվով կգորեղանար Հայաստանի հանրապետական մարմինների ղեկավարման դեպքում: Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին հնարավորություն կտար տեղական կադրերին շարունակելու բարձրագույն կրթությունը Հայաստանի բուհերում: Մյուս կողմից, Հայկական ԽՍՀ-ն կարող էր ազգային կադրեր ստանալ Լեռնային Ղարաբաղի մարզից, որոնք առանձնանում են իրենց գործնականությամբ եւ ներկայումս բնականաբար չեն կարող լիովին օգտագործվել Ադրբեջանում: Ելնելով վերոհիշյալից եւ Լեռնային Ղարաբաղի բնակչության ցանկությունից, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմն ու Ժողկոմխորհը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի եւ Միութենական կառավարության քննարկմանն են ներկայացնում Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ կազմի մեջ որպես Ղարաբաղի մարզ մտցնելու հարցը: Այս հարցի դրական լուծման դեպքում Հայաստանի Կենտկոմն ու Ժողկոմխորհն առաջարկ կներկայացնեն ԽՍՀՄ Կառավարությանը Ղարաբաղի նախկին կենտրոն Շուշիի, որ ավերվել էր խորհրդային իշխանության հաստատումից առաջ, վերականգման մասին:

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Գր.Հարությունյան:
նոյեմբեր 1945թ.»[1]:

Նախիջեւանի պահանջի մասին փաստաթուղթ հայտնի չէ, սակայն այդ մասին վկայում է Անտոն Քոչինյանը. «Գրիգոր Հարությունյանն իրոք վատ գիտեր մայրենի լեզուն, իհարկե, դա նրա մեղքը չէր, այլ դժբախտությունը: Բայց նա հայրենասեր էր: Այդ է վկայում թեկուզ այն փաստը, որ Ստալինի կենդանության, Բաղիրովի առկայության պայմաններում, 1945թ. նա համարձակորեն Ղարաբաղը եւ Նախիջեւանը Հայաստանին վերադարձնելու հարց բարձրացրեց»[2]:

ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի կողմից Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի Հայաստանին վերամիավորման պահանջի հարցը արծածվել է նաեւ ՀԿԿ կենտկոմի 1953թ. հուլիսյան եւ նոյեմբերյան պլենումներում, երբ Գր.Հարությունյանին ազատում էին քարտուղարի պաշ-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թ. 74:
[2] «Գարուն», 1990, թ. 7, էջ 53:

տոնից: Գյուղատնտեսության նախարար Ս.Ղազարյանը հուլիսյան պլենումում հայտարարում է, որ Ստալինին «ընկ.Հարությունյանը գրել է, որ Նախիջեւանը տարածքով կպած է մեր հանրապետությանը, դրա համար խնդրել է Նախիջեւանը թողնել մեր հանրապետությանը»[1], իսկ նոյեմբերյան պլենումում, դիմելով Հարությունյանին, նա ասում է. «Դուք մի անգամ հայտարարեցիք, որ խոսել եք ընկ.Ստալինի հետ, եւ նա ձեզ խորհուրդ է տվել դնել Նախիջեւանի եւ Ղարաբաղի վերաբերյալ հարցը, եւ որ Դուք դիմել եք նրան: Դուք այն ժամանակ ասացիք, որ այս նամակը ընկ.Ստալինին ուղարկել եք»[2]:

1945թ. նոյեմբերի նամակի քննարկումը Մոսկվայում ձգձգվեց եւ ի վերջո անուշադրության մատնվեց: 1947թ. Գր.Հարությունյանը որոշում է Ղարաբաղի հարցը կրկին բարձրացնել՝ օգտագործելով նաեւ հայրենադարձ հայերի տեղափոխման փաստարկը: Նոյեմբերի 21-ին նա հեռագրում է Ստալինին՝ Մոսկվա մեկնելու թույլտվության խնդրանքով[3] եւ ստանալով պատասխանը՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Զավեն Գրիգորյանի հետ նոյեմբերի 22-ին մեկնում է այնտեղ[4]:

Ահա թե ինչ է վկայում Զ.Գրիգորյանը. «Մոսկվայում մի քանի օր հետո կայացավ ընդունելություն Ստալինի մոտ: Գր.Հարությունյանը բոլոր կռվանների ապացուցումներով, ընդհուպ Ղաբաբաղի ժողովրդի ցանկությունը, ներկայացրեց հարցը Ստալինին: Ստալինը ինձ ուշադիր լսեց, ասելով, թե ձեր պահանջը կարելի է քննության առարկա դարձնել, բայց պայմանով, որ միութենական կառավարություն մտնեք Բաղիրովի հետ»: Սա իհարկե, արդեն մերժում էր եւ Հարությունյանը դա իսկույն հասկացել էր: Զ.Գրիգորյանի զարմանքին՝ Կրեմլից վրդովված դուրս գալու պատճառի վերաբերյալ, Հարությունյանը ասել էր. «Նա (Բաղիրովը-Ա.Վ.) այնպիսի սրիկա է, որ չի գնա այդ բանին»: Հանգուցալուծումը այսպես ստացվեց. Կրեմլը Բաղիրովին հրավիրում է Մոսկվա, միաժամանակ տեղեկացնելով Հարությունյանի «արարքի» մասին, հուշելով նրան պատասխանի հակառաջարկը: Ժամանելով Մոսկվա, Բաղիրովը Հարությունյանին անակնկալ է մատուցում: Հարցին վաղորոք քաջատեղյակ մարդու ինքնավստահությամբ նա առաջարկում է. «Ես Հայաստանից կտանեմ 120 հազար ադրբեջանցի, իսկ դուք ընդունեք ձեր 100 հազար հայերին»[5]:

Գր.Հարությունյանին այլ ելք չէր մնում, քան համաձայնել այդ առաջարկին, եւ 1947թ. դեկտեմբերի 3-ին երկու քարտուղարների ստորագրությամբ նամակ է հանձնվում Ստալինին.

«Մտքեր փոխանակելով որոշ հարցերի շուրջ, որոնք ծագել են վերջին տարիներին Ադրբեջանական եւ Հայկական հանրապետություններում տեղի ունեցած տնտեսական փոփոխությունների հետեւանքով, Ձեզ ենք դիմում հետեւյալ առաջարկությամբ. Մինգեչաուրի համակարգի իրագործման ժամանակ ոռոգման ենթարկվող հողերի ազատվելը եւ բամբակագործության շրջանների գոյություն ունեցող կոլտնտեսություններում բանվորական ուժի պակասը, ինչպես նաեւ բամբակի բերքատվության բարձրացման խնդիրը առաջ են մղում Ադրբեջանական ԽՍՀ-ի այդ

---

[1] ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 7, թ. 56:
[2] Նույն տեղում, գ. 11, թթ. 59-60:
[3] Նույն տեղում, ց. 27, գ. 49, թ. 691:
[4] Նույն տեղում, գ. 35, թթ. 104-105:
[5] «Ազգ», 1998թ., 3 ապրիլի: Տես նաեւ ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 34, գ. 48, թ. 52:

շրջաններում բնակչության ավելացման անհրաժեշտության հարցը: Այդ հարցի իրական լուծում կարող էր լինել Հայաստանում բնակվող 130 հազար ադրբենջանցիների վերաբնակեցումն այդ շրջաններում: Ադրբեջանական բնակչությունը Հայաստանից Ադրբեջան տեղափոխելով անհամեմատ կթեթեւանային արտասահմանյան երկրներից հայրենիք վերադարձող հայերի ընդունման ու տեղավորման պայմանները: Ադրբեջանական բնակչության վերաբնակության արդյունքում ազատվող հողատարածությունները ու կացարանները կարելի կլիներ օգտագործել Հայաստան ժամանող սփյուռքահայությանը գյուղական բնակավայրերում բնակեցնելու նպատակով»:

Ակնհայտ է, որ վերաբնակեցման ելակետային նպատակը Ադրբեջանի բամբակագործական շրջանների բնակչությունն ավելացնելու ցանկությունն էր, քանի որ զգացվում էր բանվորական ուժի պակաս եւ անհրաժեշտ էր բամբակի բերքատվությունն ավելացնել: Իսկ Հայաստանը լոկ նախատեսում էր ազատվող հողակտորները օգտագործել հայրենադարձ գյուղացիների բնակեցման նպատակով: Մ.Բաղիրովի եւ Գր.Հարությունյանի նամակը հետեւյալ խնդրանքով է ավարտվում.

«Ելնելով այդ նպատակներից, խնդրում ենք հավանություն տալ.

1.Հայկական ԽՍՀ-ում բնակվող ադրբեջանական բնակչության վերաբնակեցմանը Ադրբեջանական ԽՍՀ-ի բամբակաշատ ու սակավ բնակեցված շրջաններում եւ ազատվող հողերի ու կացարանների օգտագործմանը արտասահմանից Հայկական ԽՍՀ վերադարձող հայերի ընդունման ու տեղավորման նպատակով:

2. Թույլ տալ Ադրբեջանական ԽՍՀ ու Հայկական ԽՍՀ Նախարարների խորհուրդներին ստեղծել համատեղ հանձնաժողով՝ վերաբնակեցման պայմանների ու կարգի մշակման, ինչպես նաեւ վերաբնակեցման իրականացման ղեկավարման համար:

3. Այդ միջոցառումների հետ կապված ծախսերը կատարել միութենական բյուջեից»[1]:

Երկու հանրապետությունների ղեկավարների նամակն արժանացավ Մոսկվայի հավանությանը: Մեր կարծիքով, այստեղ իր դերը կատարեց նաեւ «սառը պատերազմի» գործոնը: Նույն սկզբունքով, բայց այլ եղանակով Հայաստանից տեղափոխվեցին ադրբեջանցիները, ինչպես Վրաստանից՝ թուրք-մեսխեթցիները:

1947թ. դեկտեմբերի 23-ին ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը նամակում բարձրացված խնդրի լուծման նպատակով կայացրեց թ. 4083 հատուկ որոշում՝ «Հայկական ԽՍՀ-ից դեպի Ադրբեջանական ԽՍՀ-ի Քուռ-Արաքսի ցածրավայր կոլտնտեսությունների եւ այլ ադրբեջանական բնակչության վերաբնակեցման մասին»[2]:

Այս որոշման կենսագործման համար ՀԽՍՀ կառավարությունը ստեղծում է հանձնաժողով, որը սկսում է ուսումնասիրել Հայաստանում ադրբեջանական բնակչության իրական քանակը եւ նրանց տեղաբաշխումը ըստ շրջանների, ինչպես նաեւ 1948թ. 10 հազար մարդ վերաբնակեցնելու հնարավորություններն առանց գյուղաշխատանքներին վնասելու: Հանձնաժողովը 1948թ. հունվարի 6-ին հաղորդում է ՀԽՍՀ կառավարությանը, որ համաձայն 1939թ. մարդահամարի տվյալների, Հայաստա-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 47, թթ. 137-138:
[2] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 113, ց. 29, գ. 179, թթ. 38-40:

նում բնակվում էին մոտ 131 հազար ադրբեջանցի: Հաշվի առնելով պատերազմի տարիներին բնական աճի պակասումը եւ բնակչության նվազումը՝ ռազմաճակատ մեկնելու պատճառով, Հայաստանում 1948թ. հունվարի 1-ին բնակվում էին 110-115 հազար ադրբեջանցի, որոնցից 6 հազարը՝ քաղաքաբնակ (Երեւան եւ Լենինական)[1]: Հանձնաժողովի առաջարկների հիման վրա ՀԽՍՀ եւ ԱԽՍՀ կառավարությունները դիմում են ԽՍՀՄ կառավարությանն ընդունել նոր որոշում, որտեղ արտացոլված կլինեին վերաբնակիչների իրավունքները, արտոնությունները եւ կոլտնտեսային արտադրական միջոցների տեղափոխման հարցերը[2]:

ԽՍՀՄ կառավարությունը 1948թ. մարտի 10-ին կայացրեց երկրորդ՝ թ. 754 «Հայկական ԽՍՀ-ից դեպի Ադրբեջանական ԽՍՀ-ի Քուռ-Արաքսի ցածրավայր կոլտնտեսականների եւ այլ ադրբեջանական բնակչության վերաբնակեցման մասին» որոշումը Ի.Ստալինի ու Յա.Չադաեւի ստորագրությամբ, որն ավելի էր կոնկրետացնում նախորդը: Որոշման մեջ մանրամասն ու հստակ մշակվել էին այն արտոնությունները, որոնք տրվում էին ադրբեջանցի վերաբնակներին՝ Հայաստանի շրջաններից մեկնելիս նրանց ունեցվածքային իրավունքների ապահովման նպատակով.

«Ի լրումն ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1947թ. դեկտեմբերի 23-ի «Հայկական ԽՍՀ-ից դեպի Ադրբեջանական ԽՍՀ-ի Քուռ-Արաքսի ցածրավայր կոլտնտեսականների եւ այլ ադրբեջանական բնակչության վերաբնակեցման մասին» թ.4083 որոշման, ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը որոշում է.

1. Հայկական ԽՍՀ-ից դեպի Քուռ-Արաքսի ցածրավայր մշտական բնակության տեղափոխվող կոլտնտեսականներին թույլ տալ իրենց հետ տեղափոխել իրենց ունեցած արտադրության բոլոր միջոցները (գյուղատնտեսական մեքենաներ, գույք, կենդանի ու մեխանիկական քարշուժ, բոլոր տեսակի անասունների ու թռչունների գլխաքանակ, մեղվաընտանիքներ, փոխադրամիջոցներ, այլ ունեցվածքը, ինչպես նաեւ բնեղեն այլ ֆոնդեր), բացառությամբ օժանդակ ձեռնարկությունների (ջրաղացներ, ծավարաղացներ, էլեկտրակայաններ) եւ այլ արտադրական, կուլտուր կենցաղային շինությունների:

2. Սահմանել, որ Հայկական ԽՍՀ-ի կոլտնտեսությունները, որոնց անդամները տեղափոխվում են Ադրբեջանական ԽՍՀ-ի Քուռ-Արաքսի ցածրավայր, հանձնում են վերաբնակեցված վայրերի կոլտնտեսություններին, որոնց կազմի մեջ ընդգրկվում են վերաբնակվող կոլտնտեսականները, վերաբնակեցման պահին նրանց բաժին ընկնող շարժական ունեցվածքը (գյուղատնտեսական մեքենաներ, գույք, կենդանի ու մեխանիկական քարշուժ, բոլոր տեսակի անասունների ու թռչունների գլխաքանակ, մեղվաընտանիքներ, փոխադրամիջոցներ, բնեղեն եւ այլ ֆոնդեր), իսկ նրանց հասանելիք անշարժ գույքի արժեքը (բազմամյա տնկարկներ, ջրաղացներ, էլեկտրակայաններ եւ այլ տնտեսական ու կենցաղային շինություններ) փոխանցվում են նույն կոլտնտեսություններին Ադրբ.ԽՍՀ եւ Հայկ.ԽՍՀ Նախարարների խորհուրդների սահմանած ժամկետում:

3. Պարտավորեցնել Ադրբեջանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդներին մեկամսյա ժամկետում սահմանել կոլտնտե-

---

[1] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 113, ց. 29, գ. 179, թ. 3:
[2] Նույն տեղում, թթ. 7-8:

սությունների, կոլտնտեսականների ու Հայկական ԽՍՀ-ից Ադրբեջանական ԽՍՀ-ի Քուռ-Արաքսի ցածրավայր վերաբնակվող այլ ադրբեջանական բնակչության հետ հաշվարկների կարգը՝ Հայկական ԽՍՀ-ում նրանց թողած անշարժ գույքի դիմաց:

4. Պարտավորեցնել Հայկական ԽՍՀ եւ Ադրբեջանական ԽՍՀ Նախարարների խորհրդներին զորավիգ լինել վերաբնակ կոլտնտեսականներին, ինչպես նաեւ բանվոր-ծառայողներին, ովքեր տեղափոխվում են Ադրբեջանական ԽՍՀ-ի Քուռ-Արաքսի ցածրավայր՝ մեկնման վայրերում իրենց պատկանող տների վաճառքի հարցում»:

Որոշման տեքստից պարզորոշ երեւում է ամեն ինչ նախատեսելու ձգտումը, որպեսզի Հայաստանից մեկնելով՝ վերաբնակները չկրեն եւ ոչ մի նյութական վնաս: Ադրբեջանի Քուռ-Արաքսի ցածրավայրի տարածքում վերաբնակների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, շինությամբ եւ տեխնիկապես նրանց օգնելու նպատակով որոշման մեջ չափազանց ստույգ միջոցառումներ էին նախատեսվել: Որոշման մեջ այնուհետեւ կարդում ենք.

«8. Թույլ տալ Ադրբեջանական ԽՍՀ Նախարարների խորհրդին՝

ա) Հայկական ԽՍՀ-ում (ք.Երեւան) կոլտնտեսականների ու այլ ադրբեջանական բնակչության Հայկական ԽՍՀ-ից Ադրբեջանական ԽՍՀ-ի Քուռ-Արաքս ցածրավայր տեղափոխվելու ժամանակահատվածում ներկայացուցչություն կազմակերպել:

բ) 1948թ. Հայկական ԽՍՀ-ից դեպի Ադրբեջանական ԽՍՀ-ի Քուռ-Արաքսի ցածրավայր ադրբեջանական բնակչության վերաբնակեցման հետ կապված նախապատրաստական աշխատանքների, օժանդակ ձեռնարկությունների նախագծման եւ շինարարության, անտառարդտնտեսությունների կազմակերպման, նյութերի, շինարարական սարքավորման ու փոխադրամիջոցների ձեռքբերման համար ծախսել 11 միլիոն ռուբլի, ի հաշիվ ոչ կենտրոնացված (արտալիմիտային) կապիտալ աշխատանքների համար հանրապետությանը 1948-ին հատկացված միջոցների:

գ) 1948թ. անցկացնել հանրապետության գյուղական բնակչության թվից 700 հոգուց կազմակերպված հավաք՝ Մոլոտովյան մարզում անտառամթերումների եւ Ադրբեջանական ԽՍՀ-ի Քուռ-Արաքսի ցածրավայրում ոռոգվող հողերի իրացման գծով վարչության կողմից անցկացվող աշխատանքներին ներգրավելու նպատակով:

9. Ադրբեջանական ԽՍՀ-ի Քուռ-Արաքսի ցածրավայրի ոռոգման հողերի իրացման գծով վարչությանը թույլ տալ՝

ա) 1948թ. կատարել շենքերի ու այլ օժանդակ շինությունների կառուցման աշխատանքներ, ինչպես նաեւ նախապատրաստական միջոցառումներ անցկացնել Գյուղտնտբանկի հետ համաձայնեցված նախահաշվային-ֆինանսական հաշվարկներով վերաբնակեցման շինարարության հետագա ծավալման նպատակով:

բ) 1948-50թթ. ավելացնել Մոլոտովյան մարզի անտառարդտնտեսության փայտանյութի արտադրական հզորությունը՝ տարեկան մինչեւ 100 հազար խորանարդ մետրի հասցնելու համար»[1]:

Ըստ նույն որոշման՝ մի շարք միութենական նախարարությունների ու գերատեսչությունների հանձնարարվում էր Ադրբ. ԽՍՀ-ի Նախարարների խորհրդին Քուռ-Արաքսի ցածրավայրի ոռոգվող հողերի իրացման

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 70, թթ. 136-139:

վարչության համար հատկացնել սարքավորումներ ու նյութեր՝ ըստ որոշմանը կից հավելվածի: Բացի այդ, «Ցենտրսոյուզը», ըստ Ադրբեջանական ԽՍՀ Նախարարների խորհրդի հետ ունեցած համաձայնության, պետք է հանրապետություն ներմուծեր շինանյութ ու ավտոմեքենաներ՝ կոլտնտեսություններին ու վերաբնակ կոլտնտեսականներին վաճառելու նպատակով, հաղորդակցության ճանապարհների նախարարությունը 1948-ին Քուռ-Արաքսի ցածրավայրի ոռոգվող հողերի իրացման գծով վարչությանը հատկացնելու էր տեղամասեր՝ Ադրբեջանական ԽՍՀ 11 կայարաններում, յուրաքանչյուրը 600 մ երկարությամբ՝ փոխաբեռնման ու ռելսային պահեստների համար եւ այլն: Այդպես էին պլանավորվում Հայաստանից ադրբեջանական բնակչության կազմակերպված վերաբնակեցումը Ադրբեջան, Քուռ-Արաքսի ցածրավայրում իրացվող ոռոգելի հողերի վրա նրա բնականոն տեղավորման համար պայմանների ստեղծումը: Ադրբեջանում ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշումներն ընդունվեցին որպես չափազանց կարեւոր փաստաթղթեր, որոնք նպատակ ունեին լուծելու այդ հանրապետության առջեւ ծառացած շատ կարեւոր խնդիրներ:

Այդ մասին է վկայում մասնավորապես Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի 1948թ. ապրիլի 13-ի «Կոլտնտեսականների ու այլ ադրբեջանական բնակչության՝ Հայկական ԽՍՀ-ից Ադրբեջանական ԽՍՀ վերաբնակվելու կապակցությամբ տարվող զանգվածային բացատրական աշխատանքի մասին» որոշումը[1]: Այդ որոշման մեջ ուղղակի նշվում է, որ ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի 1947թ. դեկտեմբերի 23-ի որոշումը, որը կայացվել է Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի խնդրանքով, «Քաղաքական մեծ կարեվորություն ունեցող փաստաթուղթ է եւ վկայում է Ադրբեջանական ԽՍՀ-ի ու ադրբեջանական ժողովրդի հետագա կուլտուր-տնտեսական զարգացման ու բարգավաճման վերաբերյալ կուսակցության, կառավարության ու անձամբ ընկեր Ստալինի հոգատարության մասին»:

Կենտկոմի բյուրոն այնուհետեւ շեշտում էր, որ Հայաստանից ադրբեջանական բնակչության վերաբնակեցումը Ադրբեջան մեծ հնարավորություններ է ստեղծում Մինգեչաուրի համակարգի շինարարության կապակցությամբ իրացվող հողերի լրիվ օգտագործման ու ընդլայնման համար: Որոշման մեջ նաեւ նշվում էր, որ Հայաստանից ադրբեջանցիների մեկնումը կատարվում է կամավոր սկզբունքով՝ վերաբնակներին մեծ արտոնություններ տրամադրելով ու ապահովելով նրանց լիակատար տնտեսական տեղավորումը նոր բնակության վայրերում: Ապա Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի բյուրոն իր որոշման մեջ մեծ խնդրանքով դիմում է Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմին՝ վերաբնակվողների շրջանում բացատրական աշխատանք տանելու համար Հայկական ԽՍՀ-ում մի շարք միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ: Մյուս փաստաթղթերից հայտնի են դառնում այլ մանրամասներ՝ վերաբնակների արտոնությունների մասին: Այսպես, նրանք ազատվում էին իրենց վրա դրված գյուղատնտեսական հարկի, կուլտհավաքի, ապահովագրական մուծումների ու բացի կաթից՝ գյուղատնտեսական մթերքից պետությանը պարտադիր կարգով հատկացվող մատակարարումների ապառքներից:

Բացի այդ, վերաբնակվող ադրբեջանական բնակչությանը եւ կոլտնտեսականներին անձամբ պատկանող անշարժ գույքի ու բազմամյա տնկարկների փոխհատուցման հետ կապված հարցերի լուծման համար

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, գ. 130, թթ. 24-25:

նախատեսված էր բնակության նոր վայրերում հողաշինարարական աշխատանքներ անցկացնել՝ ամբողջովին կամ 75 տոկոսով պետական բյուջեի հաշվին, ինչպես նաեւ տեղափոխման ծախսերի 50 տոկոսը կատարել պետական բյուջեի, իսկ մնացած կեսը գյուղատնտեսական վարկի հաշվին՝ ելնելով իրացվող ցանքատարածության մակերեսից: Իսկ այն վերաբնակ կոլտնտեսականների համար, որոնց չէին հատկացվել «Քուռ-Արաքսջրշինի» կառուցած ագարակները, նախատեսված էր փոխհատուցել տների, շինությունների ու բազմամյա տնկարկների արժեքը պետական բյուջեի հաշվին: Այդ նպատակով Ադրբեջանական ԽՍՀ Նախարարների խորհրդին հատկացվեցին համապատասխան միջոցներ: Հայաստանի խորհրդային ու կուսակցական մարմինները բացատրական լայն աշխատանք են վարել ադրբեջանցի կոլտնտեսականների շրջանում՝ նրանց կազմակերպված մեկնման նպատակով: Ադրբեջանական գյուղեր ու կոլտնտեսություններ են գործուղվել պատասխանատու աշխատողներ, որոնք տեղերում պատասխանում էին Ադրբեջանում վերաբնակության ծրագրի կապակցությամբ ծագած բազմաթիվ հարցերին[1]:

Կազմակերպվող տեղափոխման պայմանների, ինչպես նաեւ այդ միջոցառման նպատակների պարզաբանումներից հետո ադրբեջանական բնակչությունը հիմնականում ըմբռնումով ընդունեց այն: 1948թ. հունիսի 7-ին Ադր. ԽՍՀ Նախարարների խորհրդի ներկայացուցիչը Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմին ու հանրապետության Նախարարների խորհրդին հասցեագրված նամակում, հայտնելով ադրբեջանական բնակչության շրջանում իր կատարած բացատրական աշխատանքի մասին, ընդծում էր, որ «անցկացված բոլոր աշխատանքների հետեւանքով ադրբեջանական բնակչությունը քաղաքական վիթխարի խանդավառությամբ, մեծ կամեցողությամբ ու միասնականությամբ է ստանձնել ու արդեն ավարտել այն դիմում-հարցաթերթիկների լրացումը, որով իր համաձայնությունն է հայտնել Ադրբեջանական ԽՍՀ տեղափոխվելու վերաբերյալ»[2]:

Վերաբնակեցման կազմակերպման գործում տեղ էին գտել նաեւ որոշ թերություններ: Առանձին վայրերում Հայաստանի շրջանների ղեկավարները խոչընդոտել են ադրբեջանական բնակչության մեկնմանը՝ պատճառաբանելով, որ միութենական ու հանրապետական գերատեսչությունների աշխատողները ժամանակին տեղյակ չեն պահել տեղերում իրենց ներկայացուցիչներին տեղափոխման պայմանները կարգավորող որոշումների, ցուցումների ու հրահանգների մասին: Հարկ է նշել, որ հայկական կողմը մեծ ուշադրություն էր դարձնում Հայաստանից ադրբեջանական բնակչության՝ մեկնման կամավորության սկզբունքին: Այդպես, 1949թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի բյուրոն հատուկ որոշում ընդունեց, որով դատապարտվում էր Նոյեմբերյանի շրջանի Լամբալու գյուղի ադրբեջանական բնակչության տեղափոխման կազմակերպման ընթացքում կամավորության սկզբունքի խախտման փաստը: Բյուրոյի որոշման մեջ մշակվել էին համապատասխան միջոցներ՝ թույլ տրված խախտումների վերացման ուղղությամբ[3]:

1948-53թթ. ԽՍՀՄ Նախարարների խորհրդի վերոհիշյալ որոշումների հիման վրա Հայաստանից Ադրբեջան տեղափոխվեց 44168 մարդ:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 193, թթ. 1-2:
[2] Նույն տեղում, գ. 97, թ. 13:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 55, թ. 88-90:

Վերաբնակներն իրենց հետ Հայաստանից Ադրբեջան տեղափոխեցին 14365 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 46919 գլուխ ոչխար ու այծ, 1028 ձի, 1314 էշ եւ այլ շարժական ունեցվածք[1]:

Այստեղ հարկ է նշել, որ չնայած խստորեն կիրառվող կամավորության սկզբունքին, 1949թ. վերջից եւ, հատկապես, 1950-ին, նկատվում էին բազմաթիվ դեպքեր, երբ Ադրբեջան տեղափոխված կոլտնտեսականները սկսեցին վերադառնալ Հայաստան: Այդ մասին է վկայում մասնավորապես, Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր վերաբնակեցման վարչության պետի տեղակալի 1950-ի նոյեմբերի 20-ի նամակը, որն ուղղված է հանրապետության Կոմկուսի կենտկոմի քարտուղարին ու Նախարարների խորհրդի նախագահին: Նամակում նշվում է, որ տեղի է ունենում «Քուռ-Արաքսի ցածրավայր վերաբնակեցվածների ինքնակամ, զանգվածային վերադարձ մեր հանրապետության շրջաններ, քանի որ կլիմայական պայմանները ծանր են անդրադարձել վերաբնակների վրա, իսկ բնակեցման նոր վայրերում պատշաճ ուշադրություն չի դարձվել նրանց տնտեսական կարգավորմանն ու ամրապնդմանը»[2]:

Հատկապես շատ էին նման դեպքերը 1951թ.: Ընդ որում, վերադարձող վերաբնակները, որպես կանոն, ժամանում էին առանց որեւէ պաշարի՝ Ադրբեջանում թողնելով անասունների իրենց բաժինը, ունեցվածքը, մինչեւ անգամ սեփական անասունները: Մինչդեռ, վերաբնակների նախկին տները մեծ մասամբ վաճառվել էին, իսկ կոլտնտեսությունների մի մասը լուծարվել էր եւ նրանց հիման վրա խորհտնտեսություններ էին կազմավորվել: Այդ կապակցությամբ մեծ բարդություններ էին ծագում նրանց բնակարաններով, աշխատանքով ապահովելու հարցում: Անհրաժեշտ միջոցներ էին ձեռնարկվում վերադարձողներին ընդունելու, աշխատանքի տեղավորելու ուղղությամբ: Սակայն դրությունը գնալով բարդանում էր, քանի որ շարունակվում էր վերաբնակների ինքնակամ վերադարձը:

Ադրբեջանցիների վերադարձի փաստերի մասին տեղեկացվեց Ադրբեջանական ԽՍՀ Նախարարների խորհրդին ու վերաբնակեցման վարչությանը: Հայաստանի Նախարարների Խորհրդի խնդրանքով Ադրբեջանական ԽՍՀ կառավարությունը 1950թ. Հայաստան գործուղեց իր ներկայացուցիչներին՝ տեղերում վերադարձածների շրջանում հարցումներ ու ստուգումներ կատարելու նպատակով: Ներկայացուցիչները պարզաբանեցին, որ չեն կարող իրական միջոցներ ձեռնարկել ստեղծված դրության շտկման ուղղությամբ, քանի որ վերադարձածները կտրականապես հրաժարվում են մեկնել Ադրբեջան[3]:

Ոչ լրիվ տվյալներով՝ 1952թ. հունվարի 1-ի դրությամբ վերաբնակներից Հայաստան են վերադարձել շուրջ, 500 ընտանիք, այսինքն ավելի քան 2 հազար մարդու[4]:

Չնայած դրան, 1952-ի հունվարի 5-ին Ադրբեջանական ԽՍՀ Նախարարների Խորհուրդը դիմեց Հայաստանի կառավարությանը՝ 1953-54թթ. ընթացքում Հայաստանից ադրբեջանական բնակչությունից Ադրբեջանական ԽՍՀ-ի հացահատիկային խորհտնտեսություններ 3800

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 31, գ. 69, թ. 57, g. 34, գ. 62, թ. 29:
[2] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 113, g.29, գ.225, թ.29:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 31, գ. 70, թ. 51:
[4] Նույն տեղում, g. 32, գ. 66, թ. 385:

տնտեսություն տեղափոխելու միջնորդությամբ[1]: Սակայն, հանրապետության կառավարությունը անհրաժեշտ համարեց ԽՍՀՄ Նախարարների խորհրդի առջեւ հարց բարձրացնել 1952-ից սկսած ադրբեջանական բնակչության Ադրբեջանական ԽՍՀ վերաբնակեցումը դադարեցնելու մասին[2]: Ստանալով ՀԿ(բ)Կ Կենտկոմի համաձայնությունը, ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը հունվարի 19-ին տեղյակ է պահում Ադրբեջանի կառավարությանը, որ չի կարող տալ համաձայնություն Հայաստանից նշված 3800 տնտեսություն վերաբնակեցնելու մասին, քանի որ, համաձայն ԽՍՀՄ կառավարության որոշումների, միջոցառումը կատարվում է կամավորության սկզբունքով, իսկ Հայաստանի վերաբնակեցման վարչության տվյալներով հունվարի 15-ի դրությամբ շատ քիչ տնտեսություններ են ցանկություն հայտնել վերաբնակվել, եւ բացի այդ, վերաբնակեցվածներից ավելի քան 500 տնտեսություն հետ են վերադարձել Հայաստան[3]:

Սակայն փաստերը ցույց են տալիս, որ 1952-53թթ վերաբնակեցումը շարունակվել է: 1952 եւ 1954 թվականների տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ տվյալ ժամանակաշրջանում վերաբնակեցվել է 1168 ընտանիք՝ 4798 մարդով[4]: Միաժամանակ աճում էր վերադարձողների քանակը. 1954թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ այն կազմել է 2 հազար ընտանիք՝ մինչեւ 9 հազար մարդով[5]:

Ադրբեջանական բնակչության զանգվածային վերադարձը ծանր կացության մեջ էր դնում իշխանության մարմիններին.

1. Դժվարանում էր միջհանրապետական վերաբնակեցման ծրագրերի հետագա կատարումը:

2. Իրենց նախկին բնակավայրեր վերաբնակիչների վերադարձը ստեղծում էր անառողջ մթնոլորտ հանրապետության կոլտնտեսություններում՝ քանի որ նրանք սովորաբար գալիս էին ծեռնունայն, դրանից բխող հետեւանքներով:

3. Քարոզչական-բացատրական աշխատանքը արդյունք չէր տալիս. ադրբեջանցիները կտրականապես հրաժարվում էին հետ վերադառնալ, հայտարարում էին, որ Հայաստանի տեղաբնակներ են եւ չեն ցանկանում մեկնել այլ վայրեր:

4. Միանվագ պետնպաստները եւ տեղափոխման ծախսերը նրանցից հետ ստանալու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները արդյունք չեն տալիս: Դատական մարմինների որոշումները եւս ձեւական էին. վերադարձողները վճարման միջոց չունեին եւ հնարավոր չէր բռնագրավել նրանց անձնական ունեցվածքը:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, Ադրբեջանի իշխանությունները 1950-ական թվականների սկզբներին ակտիվորեն օժանդակում էին ադրբեջանցիների հետդարձին: Այսպես, 1952թ. մարտի 18-ին Ադրբեջանի վերաբնակեցման վարչությունը բողոքում է ՀԽՍՀ Նախարարների խորհրդին, որ Հայաստանի լուսավորության նախարարությունը հետ է կանչել ավելի քան 75 վերաբնակեցված ուսուցչի, սակայն մատնանշվում էին

---

[1] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 113, ց. 29, գ. 298, թ. 1:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 32, գ. 66, թ. 386:
[3] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 113, ց. 29, գ. 298, թ. 2:
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 32, գ. 66, թ. 385, ց. 34, գ. 62, թ. 29:
[5] Նույն տեղում, ց. 34, գ. 62, թ. 29:

ընդամենը 5 հոգու տվյալներ[1]: ՀԽՍՀ լուսավորության նախարարության ստուգումներից պարզվում է, որ նշված ուսուցիչներից 4-ին Հայաստանի իշխանությունների հայտերի հիման վրա գործուղել էր Ադրբեջանի լուսավորության նախարարությունը[2]: 1952թ Գր.Հարությունյանը Մ.Բաղիրովի հետ. ունեցած հեռախոսային խոսակցության ժամանակ կտրուկ շեշտել է. «Դուք եք ստիպում, որ ադրբեջանցիները վերադառնան Հայաստանի իրենց բնակավայրերը՝ խախտելով որոշումը»[3]: Դրան հակառակ, Հայաստանի իշխանությունները ամեն ջանք գործադրում էին վերադարձողների համար տանելի պայմաններ ստեղծելու եւ նրանց տնտեսական գործունեության մեջ ներգրավելու ուղղությամբ: Ավելին, 1953թ. հանրապետության ղեկավարության փոփոխությունից հետո նոր ղեկավարությունը նախկինների, մասնավորապես Գր.Հարությունյանի եւ Նախարարների խորհրդի նախագահ Ս.Կարապետյանի գործունեությունը Լամբալու գյուղի վերաբնակեցման գործում բնութագրում է որպես «կուսակցության ազգային քաղաքականության կոպիտ խեղաթյուրում»[4]:

1948-53թթ. Ադրբեջան է տեղափոխվել 44168 մարդ, որոնցից 1954թ. հոկտմբերի 1-ի դրությամբ հետ է վերադարձել մինչեւ 9000 մարդ: Հայաստանի ղեկավարությունը զանգվածային վերադարձը կանխելու նպատակով խնդրում է թույլատրել վերադարձողներին տեղավորել ոչ անպայման նախկին բնակավայրերում, այլ այնտեղ, որտեղ առկա են բնակարանային եւ այլ հնարավորություններ՝ 5 տարվա ընթացքում նրանցից գանձելով վերաբնակեցման գումարները[5]:

1959թ. մարդահամարի տվյալներով Հայաստանում բնակվում էր 107,8 հազար ադրբեջանցի, այսինքն վերաբնակեցումը բնակչության քանակի վրա չէր ազդել եւ պահպանվել էր 1948թ. մակարդակը:

Վերջին տարիներին Ադրբեջանի զանգվածային լրատվության միջոցները, գիտնական-հասարակագետներ, լրագրողներ, մինչեւ անգամ պետական գործիչները, կոպտորեն խեղաթյուրելով հանրահայտ դեպքերը, կեղծ գիտական գրքերի, ամսագրերի էջերը լցնում են ստահոդ հորինվածքներով, ձգտում ստեղծել ադրբեջանական ժողովրդի թշնամու կերպար ի դեմս հարեւան հանրապետության: Դեռ ավելին, նկատվում է ողջ քաղաքակիրթ աշխարհի առջեւ հայ ժողովրդի հանդեպ Ադրբեջանում ու Լեռնային Ղարաբաղում իրագործված բարբարոսական արարքներն ինչոր կերպ «բացատրելու» (նույնիսկ արդարացնելու) ձգտում: Անչափ մեծ է այդ «գործիչների» մեղքը սեփական ժողովրդի կուրացման, գազանային ազգայնամոլության թույնով նրա գիտակցությունն ախտահարելու մեջ: Ուղղակի կեղծարարության բազում փաստերից է 1948-53թթ. Հայաստանից ադրբեջանական բնակչության Ադրբեջան վերաբնակեցնելու պատմությունը: 1990թ. Ադրբեջանից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները դիմեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանին «Հայաստանի ադրբեջանական բնակչության տեղահանման մասին» դիմումով[6]:

---

[1] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 113, ց. 29, գ. 298, թթ. 14-15:
[2] Նույն տեղում, թթ. 21-22:
[3] Գրիգոր Հարությունյան, Կյանքը եւ գործունեությունը, էջ 232:
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 34, գ. 36, թթ. 174-175:
[5] Նույնտեղում, գ.62, թթ. 29- 31:
[6] "Бакинский рабочий", 1990, 23 сентября.

Ահա թե ինչ են գրում ադրբեջանցի պատգամավորները. «Մեծ Հայրենական պատերազմի ավարտից հետո, 1948-51թթ. հայրենադարձված հայերի համար հողատարածություն ազատելու լկտի պատրվակով, Ստալինի ու Միկոյանի նախաձեռնությամբ, Հայաստանից բռնի տեղահանվեցին ավելի քան 100 հազար ադրբեջանցիներ, որոնցից շատերը, չդիմանալով ծանր փորձություններին, վախճանվեցին»:

Մենք որեւէ տվյալ չունենք այն մասին, որ Ի.Ստալինը եւ Ա.Միկոյանը եղել են նշված վերաբնակեցման նախաձեռնողներ, նախաձեռնության հեղինակը Մ.Բաղիրովն էր, եւ դա Լեռնային Ղարաբաղի պահանջի հակառաջարկն էր: Վերադառնանք պատգամավորներին: Քննարկման առարկա պարբերության եւ ոչ մի դրույթ իրականությանը չի համապասխանում, քանի որ.

1. Հայաստանից ադրբեջանական բնակչության Ադրբեջան վերաբնակեցման միջոցառումները չէին կազմակերպվել «հայրենադարձ հայերի համար հողատարածություններ ազատելու լկտի պատրվակով»: Այդ ձեռնարկման հիմնական նպատակն էր, համաձայն խորհրդային իշխանությունների պաշտոնական վարկածի, Ադրբեջանի բամբակացան շրջանների սակավ բնակեցված տարածքների իրացումը վերաբնակների միջոցով, Քուռ-Արաքսի ցածրավայրում բամբակի բերքի ավելացումը: Իսկ ազատված տարածքները հայրենադարձ հայերով բնակեցնելու մտադրությունը, ըստ էության, ածանցյալ գործոն էր: Տեղին է շեշտել, որ 1948թ. հայրենադարձության դադարեցման պատճառով ազատված հողերն այդպես էլ չօգտագործվեցին տվյալ նպատակով:

2. Հայաստանից ադրբեջանական բնակչության Ադրբեջան վերաբնակեցումը կատարվում էր խիստ կամավոր սկզբունքներով: Վերաբնակների համար արտոնյալ պայմաններ էին սահմանվել, հետեւաբար այն ոչ մի կերպ հնարավոր չէ որակել իբրեւ «բռնի տեղահանություն»:

3. 1948-53թթ. Հայաստանից արտոնյալ պայմաններով Ադրբեջան վերաբնակվեցին ոչ թե 100 հազար, այլ 44168 մարդ: Նրանցից 9 հազարը շուտով վերադարձել են Հայաստան:

Մեզ հայտնի չէ, թե վերաբնակեցման ժամանակ իրականում քանի մարդ է մահացել, սակայն նույնիսկ 1952թ. ադրբեջանական կառավարությունը, կրկին դիմելով Հայաստանի Նախարարների խորհուրդին, խնդրում էր շարունակել վերաբնակեցման ծրագիրը: Վերաբնակների համար բավարար պայմաններ ապահովելու մեղքը ընկնում է միմիայն ադրբեջանական կողմի վրա, մյուս կողմին մեղադրանք ներկայացնելը նշանակում է խեղաթյուրել ճշմարտությունը: Հետպատերազմյան շրջանում խորհրդային կառավարության առերեւույթ հայանպաստ ձեռնարկումները (ընդգծված հակաթուրքական քաղաքականությունը, տարածքների հարցի բարձրացումը, հայրենադարձությունը) խուլ դժգոհություն առաջացրին ինչպես հարեւան հանրապետությունների ղեկավարության, այնպես էլ երկրի մահմեդական մտավորականության որոշ խավերի շրջանում: 1947-48թթ. ՀամԿ(բ)Կ Կենտկոմը, ներքին գործերի նախարարությունը հեղեղվեցին «հայկական ազգայնականության», «հայկական անջատողական ձգտումների», «ծովից ծով Հայաստան» ստեղծելու նկրտումները «մերկացնող» զրպարտչական նամակներով[1]:

---

[1] Հարցը պատմագիտության մեջ առաջինը ներկայացրել է Հ.Ավետիսյանը: Տե՛ս Գրիգոր Հարությունյան, Կյանքը եւ գործունեությունը, էջ 7-10:

1947թ. հունիսի 21-ին Մ.Բաղիրովը նամակով դիմեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմ՝ Մարիետա Շահինյանի՝ 1946թ. Երեւանում հրատարակված «Խորհրդային Անդրկովկաս» գիրքը շրջանառությունից հանելու պահանջով: Եվ դա այն բանի համար, որ Մ.Շահինյանը Լեռնային Ղարաբաղը անվանել էր «Հայկական երկրամաս», «Հայաստանի մի կտոր», Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի գտնվելը բնորոշել որպես «դեն նետված, քանդված երկիր»: Բաղիրովի պահանջը պաշտպանեցին ՀամԿ(բ)Կ Կետնկոմի գաղափարախոսական գծով ղեկավարներ Ա.Ժդանովը եւ Մ.Սուսլովը[1]:

1948թ. Վրաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կ.Չարկվիանին հատուկ նամակով Ստալինին տեղեկացրեց Անդրկովկասում հայ ազգայնականների «պառակտիչ» գործունեության եւ դաշնակցականների ազատ բնակության մասին: Հատկապես ակտիվ հակահայկական գործունեություն էին ծավալել Բաշկիրիայում կազմակերպված «Թուրքիայի բարեկամները»՝ ուսուցչական ինստիտուտի պատմության ամբիոնի դասախոս Ն.Իզբաշու գլխավորությամբ: 1947թ. նոյեմբերին Լ.Բերիային ուղղված նամակում «Թուրքիայի բարեկամների» անունից Իզբաշին առաջ քաշեց «բարձրացնենք զգոնությունը եւ ջախջախենք հայկական բուժուական ազգայնականությունը» կարգախոսը՝ պահանջելով «հավաքագրել խորհրդային հասարակությունը եւ անվտանգության մարմիններին՝ վճռական պայքարի ընդդեմ այդ խոցի»: Նույնպիսի բովանդակություն ունի Ա.Ժդանովին հղած նամակը: Մնալով անպատասխան՝ նա դեկտեմբերի 5-ին նոր նամակներ հասցեագրեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյին, իսկ մի քանի օր անց՝ Ստալինի անձնական քարտուղարին: Առաջին նամակի պատճենը եւ երկրորդի բնագիրը ՀամԿ(բ)Կ Կենտկոմից ուղարկվում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարին՝ բարձրացված հարցերի վերաբերյալ կարծիք հայտնելու համար[2]:

Հայաստանի կոմկուսի կենտկոմը «Թուրքիայի բարեկամների» նամակները՝ ուղղված Լ.Բերիային, Ա.Ժդանովին, քաղբյուրոյին, որակում է որպես «զրպարտություն», իսկ հեղինակին՝ «Թուրքիայի հետադիմական պարագլուխների շահերի պաշտպան»:

«Թուրքիայի բարեկամները» եւ Ն.Իզբաշին, խեղաթյուրելով հայերի պայքարը թուրքական բռնակալ լծի դեմ եւ Թուրքահայաստանի ազատագրումը, գրում է. «Այսպես կոչված «Թուրքահայաստանի» ազատագրումը նրա օրինական տերերից, այսինքն բնակչության մուսուլմանական մեծամասնությունից, դա կեղտոտ գործ է»: Վերցնելով չակերտների մեջ Թուրքահայաստան անվանումը, Իզբաշու նպատակն էր ժխտել Թուրքիայում հայկական հողերի գոյությունը, որոնց «օրինական տերը», ըստ նրա, թուրքերին էին: Այդ ամենը համապատասխանում էր հետադիմական պանթյուրքիզմի գաղափարախոսությանը: Նա լռում էր հայերի մեծագույն ողբերգության՝ թուրքական իշխանությունների իրականացրած եղեռնի մասին, որի արդյունքում ոչնչացվեցին ավելի քան մեկ միլիոն հայեր, նաեւ այն քասին, որ հայերի մնացած մասը, որպեսզի փրկվի թուրքական կոտորածից, ստիպված էր փախչել իր հայրենիքից աշխարհի բոլոր կողմերը: Իզբաշին դեմ էր նաեւ հայերի հայրենադարձությանը՝ ի դեմս հայրենադարձների տեսնելով նոր պատերազմի հրձիգների: Նրա կարծիքով

---

[1] Գրիգոր Հարությունյան, Կյանքը եւ գործունեությունը, էջ 8:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 69, թթ. 122-132:

վերջիններս ձգտում են օգտագործել ԽՍՀՄ-ը Թուրքիայի դեմ, ստեղծել «Մեծ Հայաստան», ապա անջատվել ԽՍՀՄ-ից[1]: Նա մեղադրում էր խորհրդային կառավարությանը «պատերազմի հայ հրձիգներին» հովանավորելու մեջ. «Գլխավորը, իմ կարծիքով, կայանում է նրանում, որ պատերազմի այդ հրձիգներին մեր ցուցադրական հովանավորչությամբ շատ բացահայտ վերանայում ենք մեր արտաքին քաղաքականությունը (չեմ հասկանում ինչի համար՝ ստեղծում ենք հատկապես *այդպիսի* տպավորություն)»: Ստացվում էր, որ ԽՍՀՄ-ը խրախուսում էր Թուրքիայի հետ պատերազմի հրահրումը, իսկ Իզբաշին խաղարարարի «առաքելություն» էր վերցրել եւ իր «բաշկիր համախոհներով» փորձում էր խորհրդային մամուլի միջոցով դիմել «թուրք բարեկամներին»՝ «խաղաղություն եւ առողջ հայրենասիրություն» պահպանելու կոչով[2]:

Առարկելով այս հերյուրանքներին՝ Գր.Հարությունյանը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյին գրում էր. «Հայտնի է, որ Հայաստան վերադառնում են աշխատավոր հայերը, բայց նրանց մեղադրում են «գազանային ազգայնականության եւ Թուրքիայի դեմ պատերազմ հրահրելու մեջ», իսկ «Իզբաշու եւ նրա համախոհների առկայությունը Բաշկիրական ԻԽՍՀ-ում վկայում է ծայրահեղ դեպքում, ոչ թե դրական երեւույթի, այլ ԽՍՀՄ-ում պանթուրքական տրամադրությամբ անձանց ներկայության մասին»[3]:

Պատերազմից հետո ազգամիջյան հարաբերությունները սուր կերպով հանդես եկան բանակում: Անդրկովկասում տեղաբաշխվեցին մեծաքանակ զորամիավորումներ, իսկ իշխանության մարմինները հաճախ չէին կարողանում սպաների համար ստեղծել կենցաղային անհրաժեշտ պայմաններ: Այդ պատճառով սլավոն ազգության սպաների մոտ հաճախ ծընվում էին մեծապետական, իսկ տեղական ազգության սպաների մոտ՝ որպես հակակշիռ, ազգայնական տրամադրություններ: Իր դերն էր կատարում պատերազմում հաղթանակ տանողի գործոնը. սպաների արտահայտություններում բացակայում էր պատասխանատվության զգացումը: Անդրկովկասի ռազմական օկրուգի հակահետախուզության վարչությունը 1947թ. նոյեմբերի 10-ին օկրուգի հրամանատար Ֆ.Տոլբուխինին եւ երեք հանրապետությունների կենտկոմների առաջին քարտուղարներին ներկայացնում է հատուկ հաղորդագրություն «Անդրկովկասի ռազմական օկրուգի զորամասերում եւ միավորումներում մեծապետական ու տեղական-ազգայնական տրամադրությունների դրսեւորումների փաստերի մասին»: Ներկայացնենք հայերին վերաբերող հատվածները: 7-րդ գվարդիական բանակի զինծառայող մայոր Ա.Բիկովը մի խումբ սպաների ներկայությամբ հայտարարում է. «Այնպիսի անօրինականություն, ինչպիսին Հայաստանում է, ոչ մի տեղ չկա, եւ դրան ոչ մեկը ուշադրություն չի դարձընում: Սպաները ապրում են աշխատասենյակներում, նրանց բնակարան չեն տալիս, իսկ արտասահմանից վերադարձող հայերին ապահովում են բնակելի տարածությամբ: Հայերը ի վիճակի են միայն առեւտուր անելու, արդյունաբերությունում աշխատել չեն ուզում, նրանց փոխարեն աշխատում են ռուսները»: Հիդրոմետ ծառայության ավագ ինժեներ Լաշեւսկին, որ ներկա էր ընտրողների հետ Գր.Հարությունյանի հանդիպմանը (1946թ. փետրվար), դժգոհ մնալով նրանից, որ ելույթները հնչում

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 69, թ. 128-129:
[2] Նույն տեղում, թ. 132:
[3] Նույն տեղում, թթ. 124-125:

էին հայերեն, կողքին նստած սպային բարձրաձայն ասում է. «ԽՍՀՄ-ում ֆաշիզմը դեռ չի վերացվել: Մնացել են ֆաշիզմի երկու օջախ՝ Հայաստան ու Վրաստան, որոնց հարկավոր է ոչնչացնել»: 1947թ. օգոստոսի վերջին Խորհրդային Միության հերոս, փոխգնդապետ Շուբինը եւ հակատանկային հրետանային գնդի այլ սպաներ, այն միտքն են հայտնում, որ հայերը կեղտոտ ժողովուրդ են, մորթապաշտ եւ սպեկուլյանտ: Շուբինը մասնավորապես ասում է, որ «այստեղ անհրաժեշտ է անպայման պատերազմ, եւ պետք է խփել այնպիսի արկերով, որպեսզի զգան: Թե չե այստեղ ինչպիսի Սարգսյան եղել է (7-րդ բանակի բարձրաստիճան սպա-Ա.Վ.), այդպիսի Սարգսյան էլ մնացել է»[1]:

Հոկտեմբերյանի շրջանում տեղաբաշխված 203-րդ հրետանային գնդի հրամանատար գնդապետ Ալեկսենկոյին երբ տեղակալը հայտնել է զինվորների կողմից կոլտնտեսությունների այգիներից մրգի հաճախակի գողության եւ այն մասին, որ շրջկոմը խնդրում է միջոցներ ձեռնարկել, հրամանատարը դժգոհել է եւ հայտարարել. «Ի՞նչ մանրախնդիր ժողովուրդ է այստեղ, ամեն մի խնձորի համար բողոքում են: Ոչ մի բան այնպես չէի ցանկանա, քան այն, որ մենք այստեղից հետ քաշվեինք, իսկ թուրքերը գրավեին ամեն ինչ մինչեւ Ռոստով եւ ոչ մի նմուշ այստեղ չթողնեին, կոտորեին բոլորին: Այդ ժամանակ կտեսնեինք, թե ինչ է նշանակում բողոքել»: 1947թ. հուլիսի 13-ին 31-րդ գվարդիական դիվիզիայի հրամանատարի տեղակալ գնդապետ Ռեշետնիկովը խոսելով մայոր Այվազովի հետ ասում է, թե «ինչու այս հայ ազգին թուրքերը բոլորին չկոտորեցին»: Վերջինիս այն դիտողությանը՝ թե ինքն էլ է հայ, ի պատասխան՝ ստանում է հայհոյանք: Ինչպես նշված է հաղորդագրության մեջ, բանակում տեղ էին գտնում նաեւ «ազգայնական» արտահայտություններ: 7-րդ գվարդիական բանակի մարտական պատրաստության բաժնի պետ գեներալ-մայոր Ս.Կարապետյանը աշխատում է բաժինը համալրել հայազգի սպաներով, հայտարարելով, որ «ռուսները դանդաղաշարժ են»: Բաժնի սպա մայոր Շարապովը բողոքել է ծառայողներին, որ Ս.Կարապետյանը հանձնարարել է Սարգսյանին (վերոհիշյալ-Ա.Վ.) հետեւել ռուս սպաների աշխատանքին՝ վերջիններիս մեղադրելով դանդաղկոտության մեջ[2]:

Հրամանատարությունն ուներ այն մտայնությունը, որ անդրկովկասյան ժողովուրդները պատերազմի տարիներին չեն կռվել, թաքնվել են թիկունքում, իսկ բեռի հիմնական կրողը եղել են ռուսները, եւ սա Ստալինի հայտնի «հաղթանակի կենացածառի» արդյունքն էր: Բարձրացնելով ոչ թե խորհրդային, այլ ռուս ժողովրդի կենացը՝ նա բացատրեց, որ վերջինս է «Խորհրդային Միության առաջատար ուժը», վճռական դեր կատարեց պատերազմում: Դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Պետրուշինը, պատմելով Ախալքալակի եւ Ախալցիխայի շրջաններ իր այցելության մասին հայտարարում է. «Անցնելով գյուղերով, անմիջապես կարելի է որոշել, որտեղ են ապրում ռուսները, որտեղ տեղացի ազգությունները: Տեղական ազգությունների գյուղերում Հայրենական պատերազմի ոչ մի հաշմանդամ չես տեսնի, բայց բավական է մտնել ռուսական գյուղ, անմիջապես կտեսնես պատերազմի անոտք եւ անձեռք տուժվածներ»[3]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 27, գ. 58, թ. 189:
[2] Նույն տեղում, թթ. 192-193:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 27, գ. 58, թ. 184:

Այդ ամենին տեղյակ էին զորամիավորումների կուսակցական հանձնաժողովները, սակայն պատժամիջոցներ չին ձեռնարկվում, ինչը առիթ է տալիս ենթադրել, որ նմանատիպ երեւույթները խրախուսվում էին: Պատերազմի բովով անցած սպաները մշտապես պետք է ունենային թշնամու կերպար. Թուրքիան անծանոթ էր, բայց աչքի առջեւ էր ադրբեջանցի Բաղիրովը («Ու՞մ համար ենք արյուն թափել: Խորհրդային իշխանությա՞ն, թե՞ Ադրբեջանի եւ Բաղիրովի համար»- գեներալ-մայոր Կորեցկի), վրացի Չարկվիանին («Վերցնենք, օրինակ, Չարկվիանուն, նա այժմ իբրեւ պատվավոր մարդ է, իսկ կսկսվի պատերազմը եւ կտեսնենք, թե ինչպիսին կլինի նա»- մայոր Ռուդնեւ): Իսկ տեղաբնակ զինվորականների համար թշնամու կերպար էր «եկվոր», «սալդաֆոն», «դանդաղաշարժ» ռուսը: Հատուկ հաղորդագրության եզրակացությունները կրում են ժամանակի գաղափարական դրոշմը. այդ ամենի պատճառը քաղաքական եւ ընդհանուր կրթական ցածր մակարդակն է, դաստիարակչական աշխատանքի պակասը, իսկ մեծապետական եւ տեղական ազգայնականության նկատմամբ չկա կոշտ դիրքորոշում, հաճախ դրանց վերաբերվում են հաշտվողականությամբ[1]:

Նման անտարբեր վերաբերմունքը շարունակվում է մինչեւ 1949թ. օգոստոսը, երբ Թուրքիայի հետ պատերազմի բռնկման հավանականությունը վերանում է, իսկ տեսակետների վերանայման համար առիթ է ծառայում Ադրբեջանի Ենի-Երեւան գյուղի բնակչության նկատմամբ մոտակա գումարտակի զինվորների հաշվեհարդարը: Կենցաղային հողի վրա առաջացած ծեծկռտուքը Անդրկովկասի ռազմական օկրուգի հրամանատարությունը բացատրում է ժամանակի բնորոշ մտայնությամբ. «Նման խայտառակ երեվույթի պատճառը, որը խորթ է խորհրդային բանակին, որպես մեր երկրի ժողովուրդների միջեւ անխախտ բարեկամության ու եղբայրության բանակի, այն է, որ գումարտակը համալրած անձնակազմը վատ է դաստիարակվել ԽՍՀՄ ժողովուրդների լենինյան-ստալինյան բարեկամության ոգով եւ բարձր քաղաքականության զգոնությամբ: Այդ զորամասերի հրամանատարները եւ քաղաշխատողները մոռացել են Ստալինի ցուցումները այն մասին, որ կապիտալիզմի մնացուկները, հատկապես ազգային հարցում, կենդանի են առանձին խորհրդային մարդկանց գիտակցության մեջ, եւ այնտեղ, որտեղ ամենօրյա բոլշեւիկյան պայքար չի մղվում դրա դեմ, այնտեղ անգլո-ամերիկյան հետախուզության կողմից օգտագործվող կործանված հակալենինյան ամեն տեսակի ու գույնի ազգայնական խմբերի բեկորները ձգտում են իրականացնել խորհրդային պետության դեմ իրենց խառնակիչ, կործանարար գործունեությունը»[2]:

Իրենց ծեծված ընկերոջ համար ծեծկռտուքի մեջ մտած զինվորները դժվար թե գաղափար ունենային «հակալենինյան», «ազգայնական խմբերի» մասին, սակայն փաստը օգտագործվում է Անդրկովկասի ռազմական օկրուգի «ազատամիտ» զինվորականության սանձերը ձգելու համար: Օկրուգի հրամանատարությունը խնդիր է դնում բարելավել դաստիարակչական աշխատանքները ոչ միայն զինվորների, սերժանտների ու սպաների, այլեւ գեներալների շրջանում[3]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 58, թթ. 200-201:
[2] Նույն տեղում, ց. 29, գ. 28, թ. 40:
[3] Նույն տեղում, ց. 27, գ. 58, թթ. 40-41:

1953թ. մարտի վերջին՝ Ստալինի մահից հետո, զինվորականության կողմից տեղական բնակչության նկատմամբ օրինականության նման խախտումներին տրվում է ոչ թե քաղաքական գնահատական, այլ բնութագրվում է որպես քրեական արարք[1]:

Վերոշարադրյալն ամփոփելով՝ կարելի է եզրակացնել.

1. Անկասկած է, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրը բարձրացնելիս Գ.Հարությունյանը խորհրդակցել էր Ստալինի հետ եւ ստացել նրա համաձայնությունը: Սակայն անհայտ է մնում, թե ինչ մտահղացումներ ուներ վերջինս՝ թույլատրելով Գ.Հարությունյանին բարձրացնել հարցը, եւ ինչու հետեւողական չեղավ Ղարաբաղը Հայաստանին միավորելու խնդրում:

2. Խորհրդային ազգային քաղաքականությունը սերտ կապված էր «սառը պատերազմի» գործոնի հետ: Ձեւավորվող ռազմական դաշինքների միջեւ հավանական առճակատումը ստիպում էր նախորդ տարիների օրինակով մեկուսացնել եւ հեռա-վոր վայրեր արտաքսել ամբողջ ազգությունների՝ ելնելով այն մտավախությունից, թե նրանք կհամա-գործակցեն հավանական հակառակորդի հետ: Անդրկովկասից տեղա-հանվեցին թուրք-մեսխեթցիները, մուսուլման հայերը՝ հեմշինները, թուր-քերը, հույները, մեծաթիվ քրդեր, հայ բնակչության մի հոծ զանգված, որով բացահայտվեցին բոլշեւիզմի ազգային քաղաքականության մեծապետական հիմքերը: Տնտեսական ծրագրերի լուծման շարժառիթով ադրբեջանական բնակչության վերաբնակեցումը եւս կապված էր «սառը պատերազմի» հետ՝ խորհրդա-թուրքական սահմանամերձ շրջանները մաքրված էին մուսուլման բնակիչներից: Եվ բնական, որ 50-ական թվականների է, արդեն ոչ մի ուշադրություն չէր դարձվում այն փաստին, որ ադրբեջանցիները հոծ զանգվածով վերադառնում էին Հայաստան՝ բնակության նախկին վայրեր:

3. Խորհրդային երկրում «Թուրքիայի բարեկամների» եւ նմանատիպ այլ կազմակերպությունների գործունեության նկատմամբ անուշադրությունը հող նախապատրաստեց հետագա տարիներին, հատկապես հետխորհրդային տարածաշրջանում մուսուլմանական արմատական ֆունդամենտալիզմի բուռն աշխուժացման եւ ամրապնդման համար:

4. Հետպատերազմյան տարիներին բանակի շարքերում ազգամիջյան սուր հարաբերությունները կրկին ցուցադրում են բոլշեւիզմի ազգային քաղաքականության մեծապետական հիմքերը եւ ազգային հարցի լուծման անկատարությունը:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 68, թթ. 156-160:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏԱԳԱ ԽՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՐՏԱՃՄԱՆ ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Պատերազմից ՀԱՄԿ/բ/Կ դուրս եկավ արտաքնապես միածույլ, բայց գործնականում անմիատարր: 1945թ. վերջին ՀԱՄԿ/բ/Կ-ում, ուր պատերազմի տարիներին ընդունվել էին հսկայական թվով ճակատայիններ, որոնք հաճախ չունեին բավարար քաղաքական կոփվածության եւ ամուր գաղափարական հայացքներ, հաշվվում էր ավելի քան 5,5 միլիոն անդամ ու թեկնածու[1]: Կուսակցության մեջ մինչեւ պատերազմը ընդունված կոմունիստների թիվը հաշվվում էր ոչ ավել՝ քան 2 միլիոն մարդ: Համալրման մեջ առջեւում էին ճակատայինները՝ 2,5 միլիոն մարդ, հաջորդը թիկունքի աշխատողներն էին՝ հիմնականում կանայք, որոնք արագացված կարգով ընդունվեցին տեղերում, ռազմաճակատ մեկնողների բացը լրացնելու համար եւ կազմում էին ավելի քան 1 միլիոն մարդ:

Հայկոմկուսի կազմում 1945թ. հունվարի 1-ին կար ավելի քան 33 հազար կոմունիստ: Նրանց մեկ երրորդը կոմկուսի շարքերն էին ընդունվել պատերազմի տարիներին, Հայաստանում: Պատերազմի նախօրյակին հայկոմկուսում հաշվվում էր 37 հազար անդամ, որոնցից 15 հազարը մեկնեցին ռազմաճակատ: 1946թ. հունվարի 1-ին ՀԿԿ անդամների քանակը հասավ 45 հազարի, որոնցից 7 հազարը զորացրվածներն էին՝ ռազմաճակատում կոմկուսի շարքերն էին ընդունվել[2]:

Խաղաղության հաստատումով կոմունիստական կուսակցության առջեւ ծառացած կարեւորագույն խնդիրներից էր նրա գործունեության վերակառուցումը նոր պայմանների համաձայն: Կուսակցության ղեկավարության մեջ հասունացել էր լուրջ կադրային տեղաշարժերի անհրաժեշտությունը: ՀԱՄԿ/բ/Կ Կենտկոմի 1946թ. մարտյան պլենումը Կենտկոմի քաղբյուրոն եւ կազմբյուրոն լրացրեց «նոր ուժերով»: Քաղբյուրոյի անդամներ դարձան Լ.Բերիան եւ Գ.Մալենկովը, թեկնածուներ՝ Ն.Բուլգանինը եւ Ա. Կոսիգինը[3]: Ընդ որում՝ ի հակակշիռ քաղբյուրոյի, որը հիմնականում պահպանեց իր հին կազմը, կազմբյուրոն ձեւավորեց գլխավորապես կուսակցական աշխատողների նոր սերնդից, որոնք իրենց ցուցաբերել էին պատերազմի տարիներին: Նրանց մուտքը իշխանության բարձրագույն ոլորտ նշանակում էր, որ, համաձայն ստալինյան տրամաբանության, հասել էր ժամանակը, երբ իրենց ուժերը սպառածներին պետք էր փոխարինել նորերով: Նոր ղեկավարները կազմեցին հետպատերազմյան կադրային կազմի ամենաարմատական թեւը, թեպետ դժվար թե հնարավոր լինի գերագնահատել նրա արմատականությունը, որը սահմանափակված էր բոլորի համար իրականության ընդհանուր ընկալմամբ. դեռ չէր հասունացել սոցիալիզմի լուրջ ձեւախախտման ընկալումը: Հնարավոր փոփոխությունների «միջանցքը», ըստ էության, նրանց համար սահ-

---

[1] История КПСС, т. 5, кн. 2, с. 36.
[2] Компартия Армении в цифрах и документах, Е., 1980, с. 14, 54.
[3] История КПСС, т. 5, кн. 2, с. 12.

մանափակված էր հին հասարակական կառուցվածքների սրբագրմամբ՝ առանձին դեմոկրատական մասնիկներ ներգրավելով: Սակայն այն, ինչ կատարվեց հետագայում, վեր է տրամաբանությունից: Սպասվելիք «կադրային հեղափոխությունը» իր սուր ծայրերը շրջեց ընդդեմ նոր ղեկավարների, որի արդյունքում կուսակցական աշխատողների պատերազմական սերունդը զրկվեց իր ունակությունները լրիվ օտագործելու հնարավորությունից: Առաջին փորձը ձախողվեց: Ղեկավար պաշտոններից հեռացվեցին եւ բռնադատվեցին մարդիկ, որոնք հայտնի էին իրենց արմատական ավել կամ պակաս հայացքներով: Մեծաթիվ կուսակցական եւ խորհրդային աշխատողների հարվածեց «լենինգրադյան գործը»: Ընթացքի մեջ դրվեց վախի, հետապնդումների, բռնությունների մեքենան, որը մի անգամ թափ ստանալով, շարունակեց աշխատել ինքնիրեն: Իսկ կանգառի ազդանշանը հնչեց միայն 1953 թ.: Խաղաղ իրադրությանը համապատասխան փոխվեց նաեւ կուսակցական մարմինների կառուցվածքը: ՀԿԿ Կենտկոմում միավորվեցին կամ լուծարվեցին մի շարք բաժիններ, որոնք ստեղծվել էին պատերազմի տարիներին՝ ռազմական արդյունաբերության կազմակերպման եւ կառավարման համար: 1945թ. վերջին լուծարվեցին քիմիական արդյունաբերության, պղնձարդյունաբերության եւ էլեկտրակայանների բաժինները[1]:

ՀամԿ/բ/Կ Կենտկոմն սկսեց պարբերաբար լսել մարզկոմների, երկրամասային կոմիտեների եւ հանրապետությունների կոմկուսների հաշվետվությունները: ՀամԿ/բ/Կ Կենտկոմը 1947թ. որոշում է ստուգումներ անցկացնել Հայաստանում՝ ստեղծելով համապատասխան հանձնաժողով Կենտկոմի կադրերի վարչության պետի տեղակալ Ա.Լարիոնովի գլխավորությամբ: Ուսումնասիրվում են ՀԿ/բ/Կ Կենտկոմի գործունեությունը ղեկավար կուսակցական աշխատողների ընտրության, առաջքաշման եւ օգտագործման ուղղությամբ: Հայաստանի արխիվներում չի պահպանվել Լարիոնովի կազմած զեկուցագրի օրինակը, բայց գոյություն ունի նույն թեմայով Գ.Հարությունյանի զեկուցումը, որով նա հանդես եկավ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի կազմբյուրոյի 1947թ. հուլիսի 25-ի նիստում, որը Ա.Ժդանովի նախագահությամբ քննարկում էր տվյալ հարցը[2]:

Կուսակցական կադրերի առաջքաշման ասպարեզում Գ.Հարությունյանը կատարած աշխատանքը բնորոշել է հետեւյալ կերպ. «Առաջքաշման ռեզերվի բացակայության պայմաններում /1937թ.-Ա.Վ./, Կենտկոմը ստիպված էր կուսակցական ղեկավար աշատանքի ընտրել եւ առաջադրել մեծ մասամբ շարքային կոմունիստների՝ հաճախ անհրաժեշտ պատրաստվածություն եւ ղեկավար կուսակցական աշխատանքի փորձ չունեցող, բայց *կուսակցական գիծը իրականացնել կարողացող* /ընդգծումը մերն է- Ա.Վ./»[3]: Այո, կարեւորը կուսակցական գիծն էր, ոչինչ, որ նրանք փորձ եւ կրթություն չունեին, տարիների ընթացքում նրանք կսովորեին կուսակցական դպրոցներում /1940-45թթ. Մոսկվայում՝ 96, Հայաստանում՝ 755 մարդ/: Կանցնի եւս 6 տարի, եւ նրանց մեծ մասը հանդես կգա Գ.Հարությունյանի դեմ, բայց այդ մասին քիչ հետո:

Ա.Լարիոնովի զեկուցագրի հիման վրա ՀամԿ/բ/Կ Կենտկոմը քննեց Գր.Հարությունյանին աշխատանքից ազատելու հարցը, սակայն

---

[1] ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 25, գ. 40, թ. 92:
[2] Նույն տեղում, ց. 27, գ. 47, թթ. 34-52, ց. 28, գ. 99, թ. 13:
[3] Նույն տեղում, ց. 27, գ. 47, թ. 35:

քննարկումների ընթացքում որոշվեց նրան թողնել զբաղեցրած պաշտոնում՝ ընդունած որոշումների կատարման համար: Ինչի՞ համար էին նրան մեղադրում. «կուսակցական աշխատողների մի մասի մոտ անհրաժեշտ գիտելիքների եւ բավարար քաղաքական ու հանրակրթական պատրաստվածության բացակայության պատճառով լրջորեն տուժում է կուսակցական աշխատանքի որակը: Շատ ղեկավար աշխատողներ թույլ են տիրապետում բոլշեւիկյան կուսակցության պատմության տեսությունը, նրանց մի մասի մոտ նկատվել են «մանրբուրժուական տրամադրություններ», որը արտահայտվել է պետության հաշվին առանձնատների կառուցումով: Շատ կուսակցական եւ խորհրդային աշխատողներ ըստ արժանվույն չեն գնահատել եւ ուսումնասիրել ռուսաց լեզուն»[1]:

ՀամԿ/բ/Կ Կենտկոմի կազմբյուրոյում Գ.Հարությունյանի զեկուցման հիման վրա ՀամԿ/բ/Կ Կենտկոմն օգոստոսի 27-ին ընդունեց «Ղեկավար կուսակցական աշխատողների ընտրության, առաջքաշման եւ օգտագործման գործի վիճակը հայկական կուսակցական կազմակերպություններում» որոշումը: Այն քննարկվեց ՀԿ/բ/Կ Կենտկոմի 1947թ. սեպտեմբերյան պլենումում, որտեղ Գ.Հարությունյանը հանդես եկավ ընդարձակ զեկուցումով[2]: Պլենումը իրականացրեց նաեւ կադրային փոփոխություններ: Հայաստանի կոմկուսի կենտկոմը «ղեկավար աշխատողներով ուժեղացնելու նպատակով» ՀամԿ/բ/Կ Կենտկոմի կողմից Հայաստան էին գործուղվել Հարություն Պողոսովը /Մոսկվայի քաղկոմից/, Կարլ Բարիգյանը /Վրաստանի կոմկուսի կենտկոմից/, Հրանտ Մարտիրոսյանը /ՀամԿ/բ/Կ Կենտկոմի աշխատակազմից/: Նրանք համապատասխանաբար ընտրվեցին Հայկոմկուսի կենտկոմի երկրորդ, երրորդ քարտուղարներ եւ կազմիրահանգչական բաժնի վարիչ: 1947թ. ՀամԿ/բ/Կ Կենտկոմից գործուղված Հմայակ Դավիդովը ընտրվեց Երեւանի քաղկոմի երկրորդ քարտուղար: Որոշ ժամանակ անց գործուղումով եկավ Յակով Զարոբյանը /Օմսկի մարզկոմից/, որը նշանակվեց ՀԿ/բ/Կ Կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ[3]: Տեղի աշխատողները հեգնանքով նրանց կպցրին «ազգի փրկիչներ» պիտակը, քանզի այդ պահին Կենտկոմի առաջին երեք քարտուղարներից ոչ մեկը հայերեն չէր խոսում: 1950-ական թվերի սկզբներին, բացի Յա. Զարոբյանից, մյուսները ազատվեցին աշխատանքից եւ հետ գործուղվեցին: ՀԿ/բ/Կ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումում Գ.Հարությունյանը եւս քննադատվեց, զգացվում էր, որ հասունանում էր ընդդիմադիր խումբ՝ Շմավոն Առուշանյանի եւ Սուրեն Թովմասյանի գլխավորությամբ, որոնք սպասում էին ավելի հարմար պահի: Այն վրա հասավ 1953թ.: ՀամԿ/բ/Կ Կենտկոմի որոշումից եւ ՀԿ/բ/Կ Կենտկոմի պլենումից հետո, 1947թ. աշնանը հանրապետությունում տեղի ունեցան լուրջ կադրային տեղաշարժեր: Հանրապետության 44 շրջաններում փոխվեցին 19 առաջին, 18 երկրորդ եւ 25 կադրերի գծով քարտուղարներ, ինչպես նաեւ շրջգործկոմի 25 նախագահ: Ավելի ցածր օղակներում փոխվեցին շրջկոմների կազմբաժինների 17 եւ քարոզչության բաժինների 14 վարիչներ, շրջգործկոմների առեւտրի բաժինների 19 վարիչներ[4]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 4, թթ. 8-11:
[2] Նույն տեղում, թթ. 8-30:
[3] Նույն տեղում, ց. 123, գգ. 2561, 4109, 4789, 6245, 8202:
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 100, թթ. 66-68:

Երկար տարիներ չէր հրավիրվում կուսակցական բարձրագույն մարմինը՝ ինչպես ՀամԿ/բ/Կ, այնպես էլ Հայկոմկուսի համագումարը: ՀամԿ/բ/Կ 18-րդ համագումարի 1939թ. հաստատած կանոնադրությամբ միութենական համագումարները հրավիրվելու էին երեք տարին մեկ, իսկ հանրապետությունների կոմկուսներինը մեկ ու կես տարին մեկ անգամ[1]:

ՀԿ/բ/Կ 13-րդ համագումարը տեղի էր ունեցել 1940թ. մարտին, իսկ 14-րդ համագումարը հրավիրվեց ավելի քան ութ տարի անց՝ 1948թ. նոյեմբերին: Եթե մի կողմ թողնենք պատերազմի չորս տարիները, ապա հաջորդ երեք տարում համագումար չհրավիրելը վկայում էր կուսակցության ղեկավար մարմինների կողմից «լենինյան սկզբունքների» հետեւողական ոտնահարման մասին: Խախտվում էր նաեւ պլենումների հրավիրման կարգը. համաձայն կանոնադրության՝ այն հրավիրելու էր երեք ամիսը մեկ անգամ: Եթե չհաշվենք կազմակերպչական հարցեր քննարկած պլենումները, ապա 1946թ. տեղի է ունեցել 3, 1947-48թթ.՝ 2-ական պլենում, որը նույնպես վկայում է կոլեգիալ ղեկավարման սկզբունքը անտեսելու մասին: 1948-52թթ. հաճախականության որոշ խախտումներով տեղի ունեցան ՀԿ/բ/Կ երեք համագումարներ: ՀԿ/բ/Կ 14-րդ համագումարը /1948թ. նոյեմբեր/ քննարկեց կուսակցության գործունեությունը հանրապետության ժողովրդական տնտեսության /արդյունաբերության եւ գյուղատնտեսության/, մշակույթի, գիտության, գրականության ու արվեստի, աշխատավորների կուլտուր-կենցաղային սպասարկման բնագավառներում, ինչպես նաեւ արծարծվեցին ներկուսակցական աշխատանքների խնդիրները: Համագումարը հանդիսավորությամբ արձանագրեց՝ հետպատերազմյան տարիների առաջին ձեռքբերումները, դժվարություններն ու թերությունները[2]:

Նույն ընթացակարգով տեղի ունեցան ՀԿ/բ/Կ 15-րդ /1951թ.մարտ/ եւ 16-րդ /1952թ. սեպտեմբեր/ համագումարները: Դրանք տարբերվում էին 1920-30-ական թվերի համագումարներից նրանով, որ կուսակցության ղեկավար մարմինների անդամները առաջադրվում եւ ընտրվում էին նախօրոք կազմված ցուցակներով եւ հիմնականում՝ միաձայն: Նույն ձեւով էր ընտրվում նաեւ Կենտկոմի ղեկավարությունը՝ բյուրոն: Դա, իհարկե, առաջացնում էր շատերի դժգոհությունը: Բայց բարձրաձայն արտահայտվում էին եզակի մարդիկ: Երեւանի պետական համալսարանի ասպիրանտուրայի շրջանավարտ Ավետիս Ղուկասյանը 1947թ. նոյեմբերին 25-ին դիմել էր ՀամԿ/բ/Կ Կենտկոմ՝ Ստալինին եւ Ժդանովին, ներկայացնելով «կուսակցական դեմոկրատիայի խախտման մի քանի ձեւեր»՝ սկզբնական կուսկազմակերպության ժողովի ղեկավարության, կուսակցական բյուրոյի ու շրջանային կազմակերպության կոնֆերանսի պատգամավորների «ցուցակային» ընտրություններից սկսած մինչեւ կուսակցական ղեկավար մարմինների կազմավորումը: Տեղյակ էր պահում, որ համալսարանի կուսկազմակերպության դռնփակ ժողովում, 1947թ. հոկտեմբերի 31-ին ինքը ելույթ է ունեցել եւ քննադատել ՀԿ/բ/Կ Կենտկոմի ղեկավարությանը, որը ոտնահարում է կոմունիստների իրավունքները, ճնշում է քննադատությունը, որ կենտկոմի աշխատակազմում եւ այլ կու-

---

[1] КПСС в резолюциях, т. 7, М., 1985, с. 99-102:

[2] *Գր. Հարությունյան*, Հաշվետու զեկուցում ՀԿ/բ/Պ XIV համագումարում, Ե.,1948:

սակցական մարմիններում տարածված է քծնանք ու շողոքորթություն, որ ղեկավար աշխատողների մեծ մասը բարոյալքվել է[1]:

ՀամԿ/բ/Կ Կենտկոմը Ա.Ղուկասյանի դիմումը ուղարկում է ՀԿ/բ/Կ Կենտկոմ: Սկսվում է Ա. Ղուկասյանի 6-ամյա ողիսականը: 1948թ. սեպտեմբերի 4-ին ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի կուսակազմակերպության ժողովն անդրադառնում է Ա. Ղուկասյանի մեկ տարի առաջ ունեցած ելույթին, եւ այն համարելով «բացարձակ հակակուսակցական ու անսկզբունքային», նրան հեռացնում է կուսակցության շարքերից: Ընդ որում, որոշմանը կողմ են քվեարկում 17, դեմ՝ 13 եւ ձեռնպահ՝ 3 մարդ, ինչը վկայում է ժողովականների մոտեցումների որակական տարբերությունների մասին[2]: Ա.Ղուկասյանը ժողովում հայտարարեց, որ ինքը զրպարտիչ հայտարարություն չի արել, որ հանդես գալով դռնփակ ժողովում, օգտվել է կուսակցության անդամի իր իրավունքից, այն է՝ քննադատել է հանրապետության կուսկազմակերպության կյանքի թերությունները: ԵՊՀ կուսկոմիտեն, Կիրովյան շրջկոմը եւ Երեւանի քաղկոմը հաստատում են ժողովի որոշումը, Ա.Ղուկասյանին հեռացնելով «հակահեղափոխական տրոցկիստական հայացքների, երկերեսանության, սադրիչ հայտարարությունների եւ իր սխալները ընդունելուց հրաժարվելու» համար: ՀԿ/բ/Կ Կենտկոմը չէր շտապում քննարկել նրա «արարքը» եւ հարցին անդրադարձավ միայն 1948թ. փետրվարի 8-ին: Նրան կուսակցության շարքերից հեռացնելու մասին ՀԿ/բ/Կ Կենտկոմի որոշման մեջ նշված էր, որ «Ա.Ղուկասյանը կուսակցական մարմիններին վարկաբեկելու նպատակով հայտարարում է, թե սկսած Կենտկոմից վերջացրած ԵՊՀ սկզբնական կուսկազմակերպությունով սխալ է իրականացվում ներկուսակցական դեմոկրատիան՝ «կուսակցական կազմակերպությունների ժողովների, կոնֆերանսների եւ պլենումների նախապատրաստման գոյություն ունեցող կարգը խախտում է կուսակցական դեմոկրատիան», կուսակցական մարմինների կազմը նախատեսվում է նախապես ու ներկայացվում ժողովին կամ կոնֆերանսին»: ՀԿ/բ/Կ Կենտկոմը, հրաժարվելով «հակահեղափոխական տրոցկիստական» պիտակից, Ա.Ղուկասյանին հեռացնում է կուսակցությունից «հակակուսակցական հայացքների, կուսակցական մարմինների հասցեին զրպարտանքի եւ սադրանքի» համար[3]: Կանցնի եւս վեցը տարի, ու 1954թ. ՀԿ/բ/Կ կուսհանձնաժողովի նույն անդամ՝ Ս.Օատուրովան, որը 1948թ. կազմել էր Ա.Ղուկասյանի «հակակուսակցական հայացքների» մասին տեղեկանքը, կգրի նորը, նշելով. «Նոր ստուգումներից պարզվեց, որ Ա.Ս.Ղուկասյանը հիմնականում ճիշտ է քննադատել ՀԿԿ Կենտկոմի նախկին ղեկավարության թերությունները»[4]: Սրան կհետեւեն նույն կուսակցական մարմինների միջնորդությունները եւ Ղուկասյանին կուսակցության մեջ վերականգնելու մասին որոշումը:

ՀԿ/բ/Կ Կենտկոմն էր հաստատում ոչ միայն կուսակցական ու կոմերիտական կադրերին, այլեւ արդյունաբերության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության եւ մթերման մարմինների, խորհրդային, վարչական, մշակույթի եւ լուսավորության, առեւտրի եւ կոոպերացիայի ղեկավար աշխատողներին: 1947թ. հունվարի 1-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյու-

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 88, թթ. 42-67:
[2] Նույն տեղում, ց. 61, գ. 8325, թ. 27:
[3] Նույն տեղում, թ. 1-2:
[4] Նույն տեղում, թ. 71:

րոն հաստատում է 2038 անվանակարգային (նոմենկլատուրային) պաշտոնյա: Բացի դրանից, կադրերի բաժնում հաշվառվում էր նաեւ 1660 պաշտոնյա, որոնք աշխատանքի կարող էին ընդունվել (պաշտոնում հաստատվել) Կենտկոմի համապատասխան բաժնի համաձայնությամբ: Կուսակցական-կոմերիտական աշխատողներից կենտկոմի բյուրոյի անվանակարգի մեջ մտնում էին 909, իսկ հաշվառվող պահեստային խմբում՝ 331 պաշտոնյա: Արդյունաբերության, տրանսպորտի եւ կապի բնագավառում համապատասխանաբար՝ 155 եւ 266, գյուղատնտեսության եւ մթերման՝ 170 եւ 216, խորհրդային մարմիններում՝ 208 եւ 262, վարչական եւ ռազմական կազմակերպություններում՝ 317 եւ 197, մշակույթի եւ լուսավորության՝ 157 եւ 323, առեւտրում եւ կոոպերացիայում՝ 122 եւ 64 պաշտոնյա[1]: Հանրապետության ավելի քան 300 կուսակցական, խորհրդային տնտեսական պաշտոնյաներ հաստատվում էին ՀամԿ/բ/Կ Կենտկոմի կողմից: Բացի կուսակցական ու խորհրդային ղեկավար աշխատողներից, միութենական նշանակության արտադրական ձեռնարկությունների տնօրեններից, այդ պաշտոնների թվում էին նաեւ հանրապետական թերթերի ու բուհերի ղեկավարները, հասարակագիտական ամբիոնների վարիչները[2]:

Պատերազմից հետո ցածր էր ղեկավար աշխատողների կրթական մակարդակը: 1946թ հունվարի 1-ին 845 աշխատողներից, այդ թվում Կենտկոմի ղեկավարներ, քաղկոմ-շրջկոմների քարտուղարներ ու բաժինների վարիչներ, գործկոմների նախագահներ եւ բաժինների /ֆինանսական, առեւտրի, հողագործության, կրթության, առողջապահության/ վարիչներ, դատախազներ, ՄՏԿ եւ խորհրդային տնտեսությունների տնօրեններ, կոմերիտմիության քաղկոմ-շրջկոմների քարտուղարներ, թերթերի խմբագիրներ, պետբանկի բաժանմունքների վարիչներ, սպառկոոպի նախագահներ, բարձրագույն կրթություն ունեին 265 /31,3 տոկ./, թերի բարձրագույն՝ 112 /13,2 տոկ./[3]: Ցածր էր նաեւ պաշտոն զբաղեցնելու միջին տեւողությունը. երեք տարի: Ընդ որում, դրանից ավելի իրենց պաշտոնում աշխատում էին 334 մարդ /39 տոկ./: Բերված տվյալները վկայում են ղեկավար աշխատողների հաճախակի տեղաշարժերի մասին: Այն ավելի ցածր էր 30-ական թվականների ցուցանիշից: Ցածր էր ղեկավար աշխատողների միջին տարիքը, այն կազմում էր 36, որն արդյունք էր 1930-ական թվականների «զտումների»: Ղեկավար աշխատողների թվում 50-ից բարձր տարիք ունեին ընդամենը 21 /2,5 տոկ./[4]: Նրանց բացարձակ մեծամասնությունը առաջ էր քաշվել 1939-40թթ., «զտումներից հետո»:

Պատերազմից հետո կուսակցական եւ խորհրդային աշխատողները պատրաստվում եւ վերապատրաստվում էին նույն համակարգում, որի արդյունավետությունը բարձրացնելու համար ՀամԿ/բ/Կ Կենտկոմը 1946թ. օգոստոսի 2-ին ընդունեց «Ղեկավար կուսակցական եւ խորհրդային աշխատողների պատրաստման ու վերապատրաստման մասին» որոշումը[5]:

Մարզային եւ հանրապետական մասշտաբի կուսակցական եւ խորհրդային աշխատողներ պատրաստելու համար ՀամԿ/բ/Կ Կենտկոմին

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 43, թթ. 32-33:
[2] Նույն տեղում, ց. 127, գ. 47, թթ. 1-18:
[3] Նույն տեղում, գ. 45, թ. 127:
[4] Նույն տեղում, թթ. 4-5:
[5] КПСС в резолюциях, т. 8, с. 39-48.

կից կազմակերպվեցին բարձրագույն կուսակցական դպրոց, եռամյա ուսման ժամկետով, իսկ վերապատրաստման համար՝ այդ դպրոցին կից ինն ամսյա դասընթացներ: ՀամԿ/բ/Կ Կենտկոմի որոշմամբ մարզկոմների եւ հանրապետությունների կոմկուսների կենտկոմներին կից ստեղծվեցին երկամյա կուսակցական դպրոցներ՝ քաղաքային եւ շրջանային մասշտաբի աշխատողների պատրաստման նպատակով: Դրա համաձայն ՀԿ/բ/Կ Կենտկոմին կից միամյա կուսդպրոցը վերակառուցվեց երկամյայի, ավելացվեց սովորողների թվաքանակը՝ 120-ից հասցվեց 150-ի[1]:

Կուսկացության տեսական աշխատողների պատրաստման համար ՀամԿ/բ/Կ Կենտկոմին կից ստեղծվեց հասարակական գիտությունների ակադեմիա, որի շրջանավարտներն աշխատում էին կուսակցության կենտրոնական մարմիններում, բուհերում, գիտահետազոտական ինստիտուտներում եւ գիտական ամսագրերում: Հետպատերազմյան կուսակցական ու խորհրդային ղեկավարի գործնական հատկանիշը, աշխատանքային ոճը եւ բարոյական կերպարը մեծապես կանխորոշում էր երկրի հետագա առաջընթացը, խորհրդային քաղաքացու սոցիալական վիճակը, ինչու չէ, հաճախ նաեւ նրա ճակատագիրը: Քիչ չէին իրենց գործին ու գաղափարին նվիրված մարդիկ: Սակայն, աստիճանաբար տեղի էր ունենում նաեւ ղեկավար աշխատողի այլասերում: Այն արտահայտվում էր՝ պետական միջոցները սեփական կարիքների համար օգտագործելով, պաշտոնական դիրքի չարաշահմամբ, որոնք կուսակցական փաստաթղթերում բնութագրվում էին որպես «մանրբուրժուական տրամադրությունների» աճ: Այդպիսի «տրամադրությունների» օրինակ է սեփական առանձնատների կառուցումը: Ինչպես նշված է ՀԿ/բ/Կ Կենտկոմի հանձնաժողովի զեկուցագրում, «մի շարք տնտեսական ու խորհրդային կազմակերպությունների ղեկավարների առանձնատների շինարարությունը իրականացվում է հիմնականում պետության հաշվին, պետական շինարարություններին բաց թողնվող շինանյութերով: Ղեկավարներն անվճար օգտվում են ձեռնարկությունների եւ կարեւորագույն կառույցների համար նախատեսված ռազմագերիների աշխատուժից, ինչպես նաեւ լայնորեն օգտագործվում է հիմնարկների ու ձեռնարկությունների տրանսպորտը»[2]: Բերվում են առանձնատներ կառուցող մի քանի տասնյակ ղեկավարների վերաբերյալ փաստեր: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն, 1946թ. դեկտեմբերի 7-ին քննելով հարցը, որոշում է պետության միջոցներով կառուցվող առանձնատները հանձնել համապատասխան ձեռնարկության տնօրինությանը, որոնց միջոցներով կառուցվել են դրանք, իսկ մեղավորներին ենթարկել քրեական եւ կուսակցական պատասխանատվության[3]:

1947թ. ընթացքում կոլտնտեսություններից մեծ քանակությամբ գյուղատնտեսական մթերքներ ծրի վերցնելու համար իրենց զբաղեցրած պաշտոններից ազատվեցին Արտաշատի, Աշտարակի եւ Կիրովականի շրջկոմների առաջին քարտուղարները, Սիսիանի շրջգործկոմի նախագահը, պետության հաշվին առանձնատներ կառուցելու համար՝ Ստեփանավանի շրջգործկոմի նախագահը եւ շրջկոմի քարտուղարը, Սեւանի շրջկոմի քարտուղարը, Ղարաբաղլարի շրջկոմի երկրորդ քարտուղարը[4]:

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 43, թթ. 33-34:
[2] Նույն տեղում, ֆ. 27, գ. 48, թ. 41:
[3] Նույն տեղում, ց. 26, գ. 35, թ. 23:
[4] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 69, թթ. 94-95:

ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ քննչական գործերին կից իրեղեն ապացույցները /դրամ, կտորեղեն եւ այլ իրեր/ սեփական հայեցողությամբ օգտագործելու եւ յուրացնելու համար աշխատանքից ազատվեց Գերագույն դատարանի նախագահը[1] եւ արդարադատության նախարարը[2]: Խորհրդային օրինականության խախտման համար 1947-48թթ. աշխատանքից ազատվեցին եւ խստորեն պատժվեցին ութ ժողդատավորներ եւ շրջանային դատախազներ, ներքին գործերի շրջանային չորս բաժինների պետեր[3]:

Քննարկվող ժամանակաշրջանում օրինախախտումներ կատարողների թվում մեծ էր միջին եւ ցածր օղակի ղեկավար կոմունիստների թիվը: 1948թ. ՀամԿ/բ/Կ շարքերից հեռացված 627 կոմունիստից 403 մեղադրվել էին «յուրացման, սպեկուլյացիայի, գողության, թալանի, պետական ու կոլտնտեսային միջոցների շռայլման» մեջ[4]:

1952թ. հունիսի 21-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն ազատում է Կենտկոմի 2-րդ քարտուղար Հ.Պողոսովին պաշտոնեական դիրքը չարաշահելու համար: Նա մեղադրվում էր «բնակելի շենքի, որտեղ նրան հատկացվել էր բնակարան, շինարարության ժամանակ նախահաշվից ավել խոշոր պետական միջոցներ ծախսելու, կազմակերպությունների հաշվին բնակարանը կահավորելու, ինչպես նաեւ 1951թ. Արտաշատի շրջանում առջեւից ընթացող մեքենայի վրա կրակելու համար»[5]:

Այս փաստերը վկայում են այն մասին, որ արդեն 1940-ական թվերի 2-րդ կեսին կուսակցական, խորհրդային-տնտեսական ղեկավար աշխատողների շրջանում ծնվում էր հակվածությունը դեպի պաշտոնեական դիրքի չարաշահումը, կաշառքի ստացումը, պետական եւ կոլտնտեսային ունեցվածքի հափշտակումն եւ յուրացումը, որոնք ավելի մեծ ծավալ ստացան հետագա տասնամյակներում: Կուսակցությունն ավելի էր ամրապնդում իր դիրքերը պետական մարմիններում եւ հասարակական կազմակերպություններում: Առաջնահերթ ուշադրություն էր դարձվում խորհուրդների գործունեությանը, որոնք, համաձայն ԽՍՀՄ Սահմանադրության, հանդիսանում էին պետության քաղաքական հիմքը:

Քննարկվող ժամանակաշրջանում տեղի ունեցան ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդների 2-4-րդ գումարումների ընտրությունները: 1946թ. փետրվարի 10-ին կայացան հետպատերազմյան շրջանի առաջին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունները: ԽՍՀՄ-ում ընտրություն կոչվածը կոմունիստական կուսակցության հերթական քարոզչական կամպանիա էր, որտեղ ընտրողի դերը սահմանափակված էր սոսկ քվեաթերթիկ ստանալու եւ այն արկղի մեջ գցելու արարողությամբ:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1945թ. հոկտեմբերի 5-ին հրամանագիր է ընդունում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրություններ անցկացնելու մասին, միաժամանակ հրապարակվում է ընտրությունների կարգի մասին կանոնադրությունը[6]: Բնակչությանը ընտրական կարգի եւ ԽՍՀՄ Սահմանադրության հետ ծանոթացնելու համար Հայաս-

---

[1] Նույն տեղում, ց. 27, գ. 23, թ. 79:
[2] Նույն տեղում, ց. 28, գ. 42, թ. 58:
[3] Նույն տեղում, ց. 27, գ. 57, թթ. 240-242:
[4] Նույն տեղում, գ. 22, թ. 140:
[5] Նույն տեղում, ց. 32, գ. 29, թթ. 175-176:
[6] "Известия", 1945, 6 октября.

տանի բոլոր ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, հիմնարկներում եւ չաշխատողների շրջանում կազմակերպվեցին խմբակներ: Քարոզչական աշխատանքները «բարելավելու» համար հոկտեմբերի 22-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմում կայացավ խորհրդակցություն գաղափարախոսական բնագավառի աշխատողների մասնակցությամբ[1]:

ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն հոկտեմբերի 23-ին հաստատում է Ազգությունների խորհրդի ընտրությունների հանրապետական ընտրական հանձնաժողովի անդամների թեկնածուներին[2], որոնք հետո առաջադրվում են հասարակական կազմակերպությունների ժողովներում: Նոյեմբերի 4-ին բյուրոն որոշում է ընդունում ընտրատարածքներ, տեղամասեր եւ դրանց ընտրական հանձնաժողովներ կազմավորելու մասին[3]: Համաձայն այդ որոշման, ՀԿ/բ/Կ քաղկոմ-շրջկոմները Կենտկոմից ներկայացուցչի հետ կատարում են հանձնաժողովի անդամների նախատեսումը եւ ներկայացնում են կենտկոմ: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն նոյեմբերի 17-ին հավանություն է տալիս առաջադրված թեկնածուներին, իսկ հանձնաժողովների նախագահներին ու քարտուղարներին ներկայացնում է ՀամԿ/բ/Կ Կենտկոմ[4]: Վերջինիս «կանաչ լույսից» հետո նրանց առաջադրում են հանրապետության ընտրատարածքների հասարակակն կազմակերպությունների ընդհանուր ժողովներումը[5]: Համաձայն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրի Հայաստանում կազմավորվում է Միութենական խորհրդի ընտրությունների 4 եւ Ազգությունների խորհրդի 25 ընտրատարածքային հանձնաժողով:

Եթե վստահենք ՀԿ/բ/Կ Կենտկոմի կողմից ՀամԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղար Գ. Մալենկովին ուղարկած զեկուցագրին, հանրապետության ընտրողների շրջանում աշխատում էին 20352 ագիտատոր, կազմակերպվել էր 16645 խմբակ՝ 542 հազար մասնակիցներով: Մոսկվայից ստացվել եւ տպագրվել էր 9 հազար պլակատ, ընտրությունների կարգի մասին գրքույկ՝ 142 հազար օրինակ, ԽՍՀՄ Սահմանադրությունը՝ 74 հազար օրինակ, Ստալինի զեկուցումները՝ 257 հազար օրինակ, ԽՄԿԿ Կենտկոմի դիմումը ընտրողներին՝ 300 հազար օրինակ[6]:

1945թ. դեկտեմբերի 14-15-ին տեղի ունեցավ ՀԿ/բ/Կ Կենտկոմի պլենում՝ քաղկոմ-շրջկոմների քարտուղարների եւ շրջգործկոմների նախագահների մանակցությամբ, որտեղ քննարկվեցին «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին» եւ «Կուսակցական կազմակերպությունների քարոզչական աշխատանքների մասին՝ կապված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների հետ» հարցերը[7]:

Քարոզչական աշխատանքի ընթացքում ընտրողների տարաբնույթ հարցադրումների մասին ՀԿ/բ/Կ Կենտկոմը տեղյակ էր պահում ՀամԿ/բ/Կ Կենտկոմին: Թվարկենք դրանցից մի քանիսը.

- Ընտրություններին կարո՞ղ են մասնակցել ներգաղթող հայերը:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 45, թ. 279:
[2] Նույն տեղում, ց. 25, գ. 39, թ. 76:
[3] Նույն տեղում, ց. 034, գ. 45, թ. 81:
[4] Նույն տեղում, թթ. 94-95:
[5] Նույն տեղում, ց. 27, գ. 157, թ. 82:
[6] Նույն տեղում, թ. 62:
[7] Նույն տեղում, ց. 25, գ. 1, թթ. 53-59:

- Հոգեւորականության ներկայացուցիչները կարո՞ղ են ընտրել եւ ընտրվել Գերագույն խորհրդում:

- Արդյո՞ք գերմանական գերությունից վերադարձած բոլոր խորհրդային քաղաքացիները կմասնակցեն ընտրություններին:

- Ո՞ր երկրներում են կանայք զրկված ընտրական իրավունքից:

- Կարելի՞ է ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն անվանել խորհրդային պառլամենտ:

- Ինչու՞ նախորդ ընտրություններում քվեաթերթիկում կար ընդամենը պատգամավորի մեկ թեկնածու եւ արդյո՞ք այդպես կլինի առաջիկա ընտրություններում[1]:

Ինչպես տեսնում ենք, ընտրողների մոտ կար բավական հետաքրքրասիրություն: Նրանց պասիվությունը միայն համակարգի արդյունք էր: Ընտրությունների նախապատրաստման ընթացքում ամենաէականը պատգամավորների թեկնածուների ընտրությունն էր: Թեկնածուների մի մասը հանրապետության ղեկավար աշխատողներն էին, որոնք ի պաշտոնե դառնում էին պատգամավոր: Նրանց թվում էին կենտկոմի երեք քարտուղարները, գերագույն խորհրդի նախագահը, նախարարների խորհրդի նախագահը եւ տեղակալները, պետանվտանգության նախարարը, Լենինականի քաղկոմի առաջին քարտուղարը: Հայաստանում էին ընտրվում նաեւ Մոսկվայում աշխատող հայազգի պետական գործիչներ՝ ինչպես ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Ա.Միկոյանը, ԽՍՀՄ պետանվտանգության նախարարի տեղակալ Բոգդան Քոբուլովը եւ ուրիշներ: Մյուսներին ընտրում էր ՀԿ/բ/Կ Կենտկոմը՝ հանրապետության մտավորականներից, արդյունաբերության եւ գյուղատնտեսության բնագավառում աչքի ընկած բանվորներից ու կոլտնտեսականներից: Ընդորում, թեկնածուների մեջ պետք է լիներ ադրբեջանցի եւ քուրդ՝ հանրապետության ազգային կազմը եւ ազգային քաղաքականության ճիշտ կենսագործումը արտահայտած լինելու համար: ՀԿ/բ/Կ Կենտկոմը պատգամավորության թեկնածուների ցուցակը ներկայացնում է ՀամԿ/բ/Կ Կենտկոմ: Բացի հանրապետության ղեկավարներից, ցուցակում կային Հայկանուշ Դանիելյանի, Մարտիրոս Սարյանի, Գեղամ Սարյանի, Խաչատուր Կոշտոյանցի, Արմեն Գուլակյանի, Հովհաննես Բաղրամյանի, Բոգդան Քոբուլովի անունները[2]:

ՀամԿ/բ/Կ Կենտկոմը ցուցակում կատարում է որոշ փոփոխություն. հանվում են չորս թեկնածու, այդ թվում Հ.Բաղրամյանը եւ Բ.Քոբուլովը, ավելացվում է Կ.Հալաբյանի անունը, ինչպես նաեւ հանձնարարվում է մյուս երեք տեղի համար թեկնածուներ առաջադրել բանվորներից եւ կոլտնտեսականներից: Այնուհետեւ, ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն հավանություն է տալիս «կոմունիստների եւ անկուսակցականների բլոկի» 29 թեկնածուներին[3]: Սկսվում է պատգամավորության թեկնածուների առաջադրումը: Եվ պարզվում է, որ նրանց ոչ բոլորի կենսագրություններն են «մաքուր»: Կենտկոմում տեղեկություններ են ստացվում, որ Դիլիջանի 136 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու առաջադրված Արեւհատ Քոչարյանի ամուսինը պատերազմի ժամանակ եղել է ռազ-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 45, թթ. 328-331:
[2] Նույն տեղում, գ. 27, թթ. 77-79:
[3] Նույն տեղում, ց. 25, գ. 41, թթ. 114-115:

մագերի[1]: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն քննարկելով հարցը, որոշում է Ա. Քոչարյանի թեկնածությունը բացարկել եւ նրա փոխարեն կրկին հավանություն տալ Բ.Քոբուլովի թեկնածությանը[2]:

Համաձայն պաշտոնական տվյալների, ընտրություններին մասնակցեցին ընտրողների 99,9 տոկոսը՝ 643113 մարդ: Չէին մասնակցել ընդամենը 620 մարդ[3]: Իհարկե, խորհրդային իրականության մեջ այսպիսի տվյալներ դեռ մի քանի տասնամյակ կշարունակեն հայտնվել տարբեր աստիճանների ընտրությունների մասին հաղորդագրություններում, որպես խորհրդային ընտրական համակարգի արտահայտություն: Մեկ տարի անց, 1947թ. փետրվարի 9-ին, տեղի ունեցան ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները: Ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման համակարգը նույն էր, ինչ որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների դեպքում, միայն ընտրական հանձնաժողովների եւ պատգամավորական թեկնածուների հաստատումը կատարվում էր տեղում, առանց ՀամԿ/բ/Կ Կենտկոմի, թեպետ վերջինս ուշի-ուշով հետեւում էր գործընթացներին: Ընտրությունների ամբողջ նախապատրաստական աշխատանքները իրականացնում եւ ղեկավարում էր ՀԿ/բ/Կ Կենտկոմը: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն ընդունում է ընտրությունների քարոզչական միջոցառումների ծրագիրը, հաստատում է ընտրատարածքային հանձնաժողովների կազմը[4], պատգամավորների թեկնածուներին[5]:

Ընտրողների ցուցակների կազմումը գտնվում էր կոմկուսի քաղկոմ-շրջկոմների խիստ հսկողության ներքո: Այնուհանդերձ, մի շարք շրջաններում, մասնավորապես Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Արտաշատի եւ Թալինի, 1929թ. ծնվածները դուրս էին մնացել ցուցակներից[6]:

Սկսվեց պատգամավորների թեկնածուների առաջադրումը: Առաջին համաժողովրդական թեկնածուն Ստալինն էր, ապա քաղբյուրոյի մյուս անդամները: Ստացվեցին Ստալինի, Մոլոտովի եւ Միկոյանի համաձայնությունները՝ «քվեարկվել» ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններում[7]:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածուներ առաջադրվեցին հանրապետությունից դուրս աշխատող Հայկ Հովակիմյանը /ԽՍՀՄ պետանվտանգության նախարարության հետախուզության վարչության պետի տեղակալ/, Հովհաննես Բաղրամյանը /Մերձբալթյան ռազմական օկրուգի հրամանատար/, Արամ Խաչատրյանը /ԽՍՀՄ կոմպոզիտորների միության կազմկոմիտեի նախագահի տեղակալ/: Նրանք ոչ մի անգամ չմասնակցեցին Գերագույն խորհրդի նստաշրջաններին: ՀամԿ/բ/Կ Կենտկոմը հետեւում էր ընտրությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքին եւ ընդունեց «Միութենական եւ ինքնավար հանրապետությունների ԳԽ ընտրությունների հետ կապված տեղական կուսակազմակերպությունների կազմակերպչական եւ քարոզչական աշխատանքների թերությունների մասին» որոշումը[8]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 24, թ. 8:
[2] Նույն տեղում, թ. 12:
[3] Նույն տեղում, ց. 26, գ. 49, թ. 20:
[4] Նույն տեղում, գ. 36, թթ. 7-11, 13:
[5] Նույն տեղում, թթ. 81-82:
[6] Նույն տեղում, ց. 27, գ. 48, թ. 26:
[7] Նույն տեղում, ց. 26, գ. 162, թթ. 80-81:
[8] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 41, թթ. 1-4:

Այն մեկ անգամ եւս հավաստում էր, որ ընտրություններում կարեւորը երկրի տնտեսական խնդիրների լուծումն է: Դրա մասին ասվում էր ուղղակի. «Քարոզչական-զանգվածային աշխատանքները հաճախ իրականացվում են մարզի, երկրամասի, հանրապետության տնտեսական-քաղաքական խնդիրներից կտրված: Մամուլում եւ բանավոր քարոզչության մեջ թույլ է լուսաբանվում արդյունաբերության եւ գյուղատնտեսության առաջավորների փորձը, անբավարար են ցույց տրվում տնտեսության վերականգնման հաջողությունները եւ նրա հետագա զարգացման հեռանկարները: Պատգամավորության թեկնածուի օգտին քարոզչությունը իրականացվում է միակողմանի, սահմանափակվում է հիմնականում թեկնածուի որակական հատկանիշներով: Հաճախ ուշադրությունից դուրս են մնում եւ չեն լուսաբանվում հիմնարկությունը, ձեռնարկությունը, կազմակերպությունը, որտեղ աշխատում է թեկնածուն, աշխատանքների հաջողությունները եւ զարգացման հետագա ծրագրերը»:

ՀամԿ/բ/Կ Կենտկոմը հանձնարարում է մարզկոմներին եւ կենտկոմներին անմիջապես ձեռնարկել վճռական միջոցառումներ թերությունները վերացնելու համար: Հեռագրով ստացված որոշումը դառնում է ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի քննարկման առարկա: Որոշվում է քարոզչական աշխատանքներն ուժեղացնելու համար շրջաններ գործուղել 38 պրոպագանդիստ, շրջկոմներին օգնելու համար բյուրոյի անդամներ ուղարկել հանրապետության շրջաններ[1]:

Փետրվարի 9-ին տեղի ունեցան ընտրությունները, որին մասնակցեցին ընտրողների 99,99 տոկոսը կամ 713164 մարդ: Ընտրություններին չէին մասնակցել ընդամենը 73 մարդ: Փաստորեն ընտրատարածքների մեծ մասում քվեարկել էին բոլոր ընտրողները[2]:

269 պատգամավորներից կոմունիստ էր 203 կամ 75,5 տոկ./, կին՝ 75 /27,9 տոկ./: Բանվորներ էին 54 /20,3 տոկ./, գյուղացի՝ 92 /34 տոկ./, ծառայող 123 /45,7 տոկ./: Ազգային կազմն ուներ հետեւյալ պատկերը. հայ 228 /84,7 տոկ./, ադրբեջանցի՝ 21 /7,8 տոկ./, ռուս՝ 10 /3,7 տոկ./, ուկրաինացի եւ քուրդ՝ 3-ական /1,1 տոկ./, մեկական վրացի, հրեա, հույն, ասորի: Այս տվյալները համապատասխանում էին հանրապետության ազգային կազմին: Պատգամավորներից 49 կուսակցական, 59 խորհրդային ղեկավար աշխատողներ էին, 19՝ գիտության, մշակույթի, գրականության եւ արվեստի գործիչներ, այդ թվում Վիկտոր Համբարձումյանը, Ավետիք Իսահակյանը, Արա Սարգսյանը, Վաղարշ Վաղարշյանը, Դավիթ Մալյանը, Շարա Տալյանը եւ ուրիշներ[3]:

Մարտի 28-ին բացվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը, որն ընտրեց խորհրդի նախագահ եւ տեղակալներ, նախագահության նախագահ եւ տեղակալներ: Հաստատվեց հանրապետության կառավարության կազմը: Նախագահության եւ կառավարության կազմերը, ինչպես նաեւ նստաշրջանի օրակարգը նախապես հաստատվել էին ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյում[4]: ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը որպես հանրապետության իշխանության գերագույն մարմին, իրականում իր իրավասությունները կատարում էր համաձայն ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի որոշումների:

---

[1] Նույն տեղում, գ. 21, թթ. 63-65:
[2] Նույն տեղում, գ. 157, թ. 10:
[3] Նույն տեղում, ց. 127, գ. 30, թթ. 76-85:
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 21, թթ. 159-161, գ. 23, թ. 74:

Ինչպես նշեցինք, Գերագույն խորհրդի պատգամավորներն ըստ էության ոչ թե ընտրվում էին, այլ «նշանակվում» ՀԿ/բ/Կ Կենտկոմի կողմից: Վերջինս որոշում էր նաեւ նախագահության կազմը, նրա ղեկավարությունը: ՀԿ/բ/Կ Կենտկոմն էր որոշում Գերագույն խորհրդի նստաշրջանների հրավիրման ժամկետները, դրանց օրակարգը: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ցանկացած հրամանագիր նախօրոք հաստատվում էր ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյում: Այսինքն, ՀԿ/բ/Կ Կենտկոմը՝ հանձին կոմկուսի, կատարում էր եւ՛ օրենսդիր, եւ՛ գործադիր իշխանության իրավասությունը: Նույն ընթացակարգով կայացան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1950-54թթ. եւ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1951-55թթ. ընտրությունները: 1951թ. կայացած Գերագույն խորհրդի ընտրությունների արդյունքների, մասնավորապես ընտրողների մասնակցության վերաբերյալ վիճակագրական տվյալների անհեթեթությունը աբսուրդի է հասնում: 786261 ընտրողից ընտրական տեղամաս չէին հաճախել ընդամենը ... 2 մարդ, այն էլ Երեւան քաղաքում, իսկ ութ ընտրող, ստանալով քվեաթերթիկ, այն արկղի մեջ չէին գցել, դա տեղի էր ունեցել Լենինականի եւ Կիրովականի փակ ընտրատեղամասերում, այսինքն բանտերում[1]:

1955թ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի սոցիալական կազմը որոշ չափով տարբերվում էր նախորդներից: Պակասել էր բանվորների ու գյուղացիների տեսակարար կշիռը, համապատասխանաբար կազմելով 12,7 /40 մարդ/ եւ 22 /67 մարդ/ տոկոս[2]:

Կոմկուսի «ակտիվ օգնականն ու ռեզերվն» էր կոմերիտմիությունը: ՀամԼԿԵՄ 10-րդ համագումարի /1936թ./ ընդունած կանոնադրությամբ կոմերիտմիությունը «իր շարքերում միավորում էր քաղաքի ու գյուղի առաջավոր, քաղաքականապես գրագետ երիտասարդության լայն խավերին»[3]:

ՀԼԿԵՄ 13-րդ համագումարի օրերին /դեկտեմբեր 1947թ./ Հայաստանի կոմերիտմիության շարքերում կար ավելի քան 105 հազար անդամ, որոնք ակտիվորեն մասնակցում էին ինչպես հանրապետության տնտեսության, այնպես էլ հասարակական-քաղաքական կյանքին[4]: Տարեցտարի աճում էին ՀԼԿԵՄ շարքերը: 1947թ. կոմերիտմիության մեջ ընդգրկեցին 14311, 1948-1949թթ. եւս 30 հազար հոգի:

Հայաստանի կոմկուսը կոմերիտմիությանը մշտապես պահում էր խիստ հսկողության ներքո: Կազմակերպության ղեկավարները /Կենտկոմի պատասխանատու աշխատողներ, քաղկոմ-շրջկոմների քարտուղարներ, թերթերի խմբագիրներ/ նշանակվում էին ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի կողմից, բացառապես կոմկուսի անդամներից, կանոնակարգում էր համագումարներն ու պլենումները, ՀԿ/բ/Կ Կենտկոմի, քաղկոմ-շրջկոմների բյուրոները պարբերաբար քննարկում էին կոմերիտմիության գործունեության հետ կապված խնդիրներ: 1949թ. ամռանը ՀԿ/բ/Կ Կենտկոմի անցկացրած ստուգումներով պարզվեց, որ հանրապետության կոմերիտական շատ կազմակերպություններում շարքերի աճը կանգ էր առել, նկատելի էր անդամների թվի նվազում: Եթե 1949թ. առաջին չորս ամիս-

---

[1] Նույն տեղում, g. 31, գ. 55, թ. 163:
[2] Նույն տեղում, g. 27, գ. 102, թ. 18:
[3] Организация удесятеряет силы: Документы и материалы ЦК ВЛКСМ по организационной работе, М, 1968, с. 163.
[4] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 48, g. 18, գ. 790, թթ. 1-60:

ներին կոմերիտական էին դարձել 8553 հոգի, ապա մայիս ամսից այդ թիվը պակասել էր եւ հետագա երեք ամսում /մայիս-հուլիս/ աճը կազմել էր 3891 մարդ[1]: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն սեպտեմբերի 16-ին քննարկում է կոմերիտմիության աճի հարցը եւ հանձնարարում ՀԼԿԵՄ Կենտկոմին, քաղկոմ-շրջկոմներին՝ ակտիվացնել աշխատանքները արտամիութենական երիտասարդության շրջանում, նրանց ներգրավել հասարակական-քաղաքական աշխատանքներում, քաղխմբակներում եւ ընդգրկել կոմերիտմիության շարքերում[2]:

Հետպատերազմյան առաջին տարիներին Հայաստանի արհմիությունները գործում էին ճյուղային սկզբունքով եւ անմիջապես ենթակա էին ԽՍՀՄ արհմիության համապատասխան կոմիտեին (Հայաստանի արհմիությունների խորհուրդը լուծարվել էր դեռեւս 1938թ.): 1946-47թթ. հանրապետությունում կային երկու տասնյակից ավելի ճյուղային արհմիություններ, որոնց մեջ իրենց թվով մեծերից էին լուսավորության, գյուղատնտեսության, կոմունալ տնտեսության, թեթեւ արդյունաբերության, էլեկտրակայանների, շինարարության աշխատողների արհմիությունները[3]: Արհմիությունների գործունեության ոլորտի մեջ էին մտնում սոցիալիստական մրցության ծավալումը, աշխատանքի եւ անվտանգության տեխնիկայի պահպանումը, աշխատավորների նյութական, կենցաղային ու կուլտուրական պայմանների բարելավումը: ՀամԿ/բ/Կ Կենտկոմի կազմբյուրոյի 1948թ. սեպտեմբերի 3-ի որոշմով վերականգնվեցին արհմիությունների հանրապետական խորհուրդները: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի 1948թ. սեպտեմբերի 23-ի որոշմամբ ստեղծվում է կազմբյուրո՝ ճյուղային արհմիությունների միջմիութենական հանրապետական կոնֆերանս հրավիրելու համար: Հոկտեմբերի 26-ին տեղի է ունենում հանրապետական առաջին կոնֆերանսը, որն ընտրում է Հայաստանի արհմիությունների խորհուրդ՝ 27 անդամ եւ 9 թեկնածու կազմով եւ վերստուգիչ հանձնաժողով՝ 7 անդամով[4]: Հանրապետական խորհուրդը ընտրում է ՀԱՄԽ-ի նախագահություն՝ 9 անդամով[5]: 1948թ. դեկտեմբեր-1949թ. հունվարին տեղի են ունենում արհմիությունների հաշվետու-ընտրական ժողովներ, որոնք ավարտվում են ճյուղային կոնֆերանսներով: Կոմկուսը մշտական ուշադրության եւ հսկողության ներքո էր պահում արհմիություններին որպես լծակներ՝ տնտեսական եւ սոցիալական մի շարք խնդիրները լուծելու համար:

Հետպատերազմյան տարիներին հանրապետության զանգվածային հասարակական կազմակերպությունների թվում ամենաբազմամարդը Պաշտպանության ինքնուրույն՝ բանակին, ավիացիային եւ նավատորմին աջակցող կամավոր ընկերությունների: Սրանց հիմնական խնդիրներից էր երիտասարդության պատրաստումը զինվորական ծառայության, որի համար ստեղծվել էին ուսում-նական կազմակերպություններ ու խմբակներ եւ բնակչության շրջանում տարածվում էին ռազմական ու ռազմա-տեխնիկական գիտելիքներ: 1949թ. բանակին աջակցող ընկերությունը բանակում ծառայելու համար

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 65, թ. 123:
[2] Նույն տեղում, ց. 29, գ. 51, թթ. 50-51:
[3] Նույն տեղում, ց. 36, գ. 80, թ. 39:
[4] Նույն տեղում, ց. 28, գ. 51, թ. 12:
[5] «Սովետական Հայաստան», 1948, 27 հոկտեմբերի:

հանրապետությունում նախապատրաստել էր 7105 զինակոչիկ, ավիացիային աջակցող ընկերությունը՝ 550 պարաշյուտիստ եւ ավիացիայի 350 կրտսեր մասնագետ, իսկ նավատորմին աջակցող ընկերությունը՝ 250 ռազմա-ծովային մասնագետ[1]:

ՀԿ/բ/Կ Կենտկոմը, 1949թ. նոյեմբերի 15-ին քննարկելով այս ընկերությունների կատարած աշխատանքը, այն համարեց անբավարար, հանձնարարեց ընկերությունների կոմիտեներին ընդլայնել ակումբների, ուսումնական կետերի ու խմբակների քանակը, ապահովել ընկերությունների շաքերի հետագա աճը: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն 1951թ. հունվարի 6-ին կրկին անդրադառնում է այս ընկերությունների աշխատանքին եւ ընդունում է միջոցառումների ծրագիր դրանք բարելավելու համար: Կոմկուսի քաղկոմ-շրջկոմներին մասնավորապես հանձնարարվում է քննել ընկերությունների քաղաքային ու շրջանային կոմիտեների աշխատանքների վիճակը, միջոցառումներ մշակել դրանց բարելավելու համար, կամավոր ընկերությունների կոմիտեները ամրապնդել գործնականորեն եւ քաղաքականապես պատրաստված կադրերով[2]:

1951թ. այս ընկերությունները միավորվում են եւ ստեղծվում է բանակին, ավիացիային ու նավատորմին աջակցող կամավոր ընկերություն՝ ԴՕՍԱԱՖ: 1956թ. ընկերության հանրապետական կազմակերպությունն ուներ 320 հազար անդամ[3]:

Այս զանգվածային հասարակական կազմակերպությունը կարմիր խաչի ընկերությունն էր, որի խնդիրների թվում էին սանիտարապաշտպանական մասնագետների պատրաստումը, սանիտարական հենակետերի ու ջոկատների ցանցի կազմակերպումը, առողջապահական աշխատանքներին օժանդակելը: 1950թ. կարմիր խաչի ընկերությունն ուներ 2322 հենակետ, 96 ջոկատ, 2771 սկզբնական կազմակերպություն եւ 232 հազար անդամ[4]: Սակայն սկզբնական կազմակերպությունների մեծ մասի գործունեությունը կրում էր ձեւական բնույթ, զբաղվում էին միայն անդամավճար հավաքելով[5]: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն 1951թ. օգոստոսի 17-ին քննելով ընկերության աշխատանքների մասին հարցը, անբավարար աշխատանքի համար ազատում է ընկերության նախագահին[6]: 1956թ. ընկերությունն ուներ 366 հազար անդամ[7]:

1944թ. կազմավորվել էր Արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերությունը, որն իրականացնում էր մշակութային կապեր արտասահմանի հայկական «առաջադիմական» կազմակերպությունների հետ, նրանց մամուլին մատակարարում էր ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ մասին հոդվածներ, լուսանկարներ եւ այլ նյութեր: Ընկերությունը կապ էր պահպանում նաեւ արտասահմանի ոչ հայկական «առաջադիմական» կազմակերպությունների հետ, սակայն սառը պատերազմի պայմաններում նրա գործունեությունը անարդյունավետ էր:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 54, թթ. 105-106:
[2] Նույն տեղում, ց. 31, գ. 28, թթ. 74-77:
[3] Նույն տեղում, ց. 36, գ. 80, թ. 41:
[4] Նույն տեղում, ց. 31, գ. 46, թթ. 13-14:
[5] Նույն տեղում, թ. 16:
[6] Նույն տեղում, գ. 37, թ. 116:
[7] Նույն տեղում, ց. 36, գ. 80, թ. 42:

1947թ. ստեղծվեց քաղաքական եւ գիտական գիտելիքների տարածման ընկերությունը՝ հետագայում «Գիտելիք» անվամբ: Հանրապետական ընկերության ղեկավար մարմինը վարչությունն էր, որը ընտրում էր նախագահություն եւ նախագահ: Ընկերության առաջին նախագահը ակադեմիկոս Վ.Համբարձումյանն էր: Ընկերությունն ուներ 17 բաժանմունք՝ գիտելիքների տարբեր բնագավառների գծով: Հիմնադրման տարում այն ուներ 115, 1956թ.՝ 3000 անդամ[1]:

1945թ. հունվարին ձեւավորվեցին կոմպոզիտորների, օգոստոսին՝ նկարիչների միությունները, իսկ 1949թ.՝ ճարտարապետների միությունը եւ թատերական ընկերությունը: Գրողների միության հետ, որը ձեվավորվել էր դեռեւս 1934թ., ստեղծագործական միությունները մեծ դեր կատարեցին մշակույթի զարգացման գործում, որն ավելի մեծ նվաճումներ կունենար, եթե չլինեին այդ տարիներին հոգեւոր կյանքի եւ ազատ ստեղծագործության դեմ ծավալված խստագույն սահմանափակումները:

1952թ. հոկտեմբերի 5-ին բացվեց ՀամԿ/բ/Կ 19-րդ համագումարը: Ստալինը հիմնական զեկուցումները հանձնարարելով Մալենկովին եւ Խրուշչովին, սահմանափակվեց կարճ եզրափակիչ խոսքով: Այդ նրա վերջին հրապարակային ելույթն էր: Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ Գ. Մալենկովը հայտնեց ԽՍՀՄ-ում ատոմային ռումբ ստեղծելու փաստի մասին եւ լավատեսորեն գնահատեց երկրի ներքին վիճակը: Լռությամբ շրջանցելով 1948-49թթ. զտումները, նա շեշտը դրեց հնգամյակի «հիանալի» տնտեսական արդյունքների վրա արդյունաբերության եւ գյուղատնտեսության բնագավառներում: Նրա միակ քննադատական դիտողությունը վերաբերում էր կոլտնտեսությունների վերակառուցման ծայրահեղություններին եւ ագրոքաղաքների նախագծին[2]:

ՀամԿ/բ/Կ կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին զեկուցումով հանդես եկավ Խրուշչովը, որում նա հարձակվեց տարբեր ձեւի բյուրոկրատական եւ հակադեմոկրատական վերասերումների վրա: Կուսակցության 19-րդ համագումարը հաստատեց նրա նոր անվանումը՝ Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցություն /ԽՄԿԿ/: Կանոնադրությունում կատարած փոփոխությունները հիմնականում վերաբերում էին կուսանդամի իրավունքներին ու պարտականություններին, կուսանդամության թեկնածուների, կուսահամագումարների եւ կենտկոմի պլենումների հրավիրման ժամկետների հարցերին[3]:

Մալենկովի եւ Խրուշչովի զեկուցումները, ըստ էության, չբացեցին որեւէ նոր հեռանկար տնտեսության զարգացման, սոցիալական լարվածության հաղթահարման համար: Հիմնական նորամուծությունները ուղղված էին բարձրագույն կուսակցական հիերարխիայի քաղաքական կառուցվածքին, այսինքն իշխանության անմիջական կենտրոնի փոփոխություններին, որոնք կատարվեցին Ստալինի անձնական նախաձեռնությամբ: Կուսակցությունը ղեկավարող Քաղբյուրոն /15 անդամ եւ թեկնածու/ փոխվեց համեմատաբար մեծածավալ Նախագահությամբ, որտեղ հաշվվում էր 36 մարդ /25 անդամ եւ 11 թեկնածու/: Նման «լայնացում» կատարվեց Կենտկոմի քարտուղարության մեջ՝ 5-ից մինչեւ 10 անդամ, եւ

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 36, գ. 80, թ. 41:

[2] КПСС в резолюциях... т. 8, с. 262-264:

[3] Турищев Ю. Г., История устава КПСС. М., 1971, с. 191.

հենց Կենտկոմում, որի անդամների ու թեկնածուների քանակը կրկնապատկվեց եւ հասավ 236 մարդու[1]:

ԽՄԿԿ 20-րդ համագումարում Խրուշչովը այսպես բացատրեց այդ փոփոխությունների իմաստը. Քաղբյուրոն փոխարինելով ավելի մեծաթիվ մարմնով, Ստալինը համապատասխանաբար փոքրացրեց իր գործընկերների ազդեցությունը, որոնք հիմա շրջապատված էին «նորելուկներով», ավելի երիտասարդ, ավելի պակաս փորձառու եւ հեշտ կառավարվող[2]: Ստալինը նախագահության ակնհայտ դանդաղաշարժությունը մի անգամ եւս օգտագործեց իր օգտին, այն կրկնօրինակելով ավելի նեղ մարմնով՝ նախագահության բյուրոյով, որի 9 անդամին նա նշանակեց անձամբ: Այստեղ բացակայում էին Մոլոտովը եւ Միկոյանը: Իրականում, իր կյանքի վերջին ամիսներին, ինչպես եւ նախորդ տարիներին, Ստալինը հարցերը լուծում էր սեղմ շրջանակում, որտեղ ներկա էին Մալենկովը, Խրուշչովը, Բերիան եւ Բուլգանինը:

19-րդ համագումարով եւ դրանից մի քանի ամիս անց Ստալինի մահով ավարտվեց մի ամբողջ պատմական ժամանակաշրջան, երբ զարգանում եւ ամրապնդվում էր մի համակարգ, որը հենվում էր կուսակցական ապարատի եւ պատժիչ մարմինների վրա: Այդ համակարգը ներթափանցել էր քաղաքականության, տնտեսության, մշակույթի, գաղափարախոսության բոլոր ծակոտկեները եւ երկրի զարգացմանը հասցրեց մեծագույն վնաս: Ստալինի կառավարման վերջին տարիները եղան ամբողջատիրական համակարգի զարգացման գագաթնակետը, բայց, ներփակված լինելով մի մարդու մեջ, այն սկսեց կոռոզիայի ենթարկվել անմիջապես նրա մահից հետո: Այդ գործընթացը տեւեց տասնամյակներ:

2. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՍՏԱՑՈՒՄԸ

Հայրենական պատերազմից անմիջապես հետո կոմկուսը կամպանիա սկսեց մտավորականության շրջանում թուլացած գաղափարական վերահսկողությունը վերականգնելու նպատակով: 1946թ. օգոստոսի 14-ին ՀամԿ/բ/Կ Կենտկոմն ընդունեց «պատմական» որոշում «Զվեզդա» եւ «Լենինգրադ» ամսագրերի մասին /առաջինի խմբագրությունն ստացավ նկատողություն, երկրորդը՝ փակվեց/: Դրանք մեղադրվում էին «կուսակցությանը խորթ գաղափարներ» կրող գործերի՝ հատկապես Ա.Ախմատովայի եւ Մ.Զոշչենկոյի ստեղծագործությունների հրապարակելու մեջ[3]:

Ի կատարումն վերոհիշյալ որոշման, ՀԿ/բ/Կ Կենտկոմը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց, որպեսզի այդ «պատմական որոշման հիման վրա վերհանվեն մեր գրականության սխալները եւ թերությունները ու դրանք վերացվեն»[4]: Թե ինչ սխալներ եւ թերություններ էին դրանք եւ ինչպես պետք է վերացվեին, ուղենշված է ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի 1946թ. սեպտեմբերի 23-ի «Երեւան քաղաքի գրողների ժողովի մասին»

---

[1] История КПСС, т. 5, кн. 2, с. 308-309.

[2] Известия ЦК КПСС, 1991, N 3, с. 164:

[3] ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների եւ կենտկոմի պլենումների բանաձեւերում ու որոշումներում, III մաս, Եր., 1955, էջ 615-619:

[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 48, թ. 358:

որոշման մեջ: Սեպտեմբերի 19-20-ին Երեւանում տեղի էր ունեցել գրողների ընդհանուր ժողով, որտեղ մանրամասն քննարկվել էր «Զվեզդա» եւ «Լենինգրադ» ամսագրերի մասին ՀամԿ/բ/Կ Կենտկոմի որոշումը: Ինչպես նշված է բյուրոյի որոշման մեջ, «բանաստեղծները եւ գրողները, որոնք իրենց ստեղծագործություններում թույլ էին տվել սխալներ, կամ ելույթ չունեցան իրենց սխալների ընդունմամբ, կամ փորձեցին շրջանցել դրանք»: Սա էր պատճառ դարձել, որ ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն հատուկ նիստ գումարեր եւ ընդուներ որոշում, որտեղ գրողներին լուրջ մեղադրանքներ էին ներկայացված. «Ժողովում անհրաժեշտ քննադատության չենթարկվեցին մի շարք գորղների եւ բանաստեղծների առանձին ստեղծագործությունների մեջ եղած դեկադենտական-անկումային, ապաքաղաքական միստիկական եւ հոռետեսական արտահայտությունները /Գ.Էմինի, Մ.Մարգարյանի եւ Ս.Կապուտիկյանի բանաստեղծությունների ժողովածուները, Դ.Դեմիրճյանի «Բժիշկ» եւ «Կորդինատներ» պատմվածքները, Ն.Զարյանի «Ի՞նչ անեմ, որ հավատաս» բանաստեղծությունը/: Ժողովը լուրջ ուշադրություն չդարձրեց եւ քննադատության ենթարկեց առանձին գրողների այն ստեղծագործությունները, որոնց մեջ աղավաղված են խորհրդային իրականությունն ու խորհրդային մարդկանց կերպարները, ծուռ հայելու մեջ է արտացոլված Հայրենական պատերազմը /Լ.Թարգյուլի «Սահականուշ» պատմվածքը, Արաքսմանյանի «Գյազբել լեռան գաղտնիքը», Վ. Խեչումյանի «Ամեն օր լուսաբացին», Տ.Հախումյանի «Երկու ամիս ռազմաճակատում»/: Գրողների ընդհանուր ժողովի ամենալուրջ թերություններից մեկը ուշադրությունը չսրելն էր լուրջ վտանգի՝ խորհրդահայ գրականության մեջ բուրժուա-ազգայնական միտումների վրա: Ժողովն անուշադրության էր մատնել այն հանգամանքը, որ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի որոշման մեջ նշված խորհրդային գրականությանը խորթ տրամադրություններն ու անցյալը իդեալականացնելու փորձերը խորհրդահայ գրականության մեջ, իբրեւ կանոն, քողարկվում էին ազգային պատյանով, չարաշահելով ընթերցողների ազգային զգացմունքները: Այդ միտումների վտանգն այն էր, որ դրանք հող էին ստեղծում գեղարվեստական գրականության մեջ բուրժուա-ազգայնականին վերադառնալու համար, որպիսիք ուղղվում էին ժողովրդական զանգվածների կոմունիստական դաստիարակության եւ խորհրդային կարգերի դեմ:

Ինչպես նշված էր բյուրոյի որոշման մեջ, ժողովի գաղափարական ցածր մակարդակին նպաստել էր նաեւ այն, որ զեկուցող, ՀԿ/բ/Կ Կենտկոմի գաղափարախոսության գծով քարտուղար Զավեն Գրիգորյանը «բավարար չափով չէր սրել ուշադրությունը հայ գրականության մեջ բուրժուա-ազգայնամոլական միտումների երեւան գալու վտանգի վրա, ինչպես նաեւ այն, որ նա թույլ էր տվել անհաջող արտահայտություն, թե «ներկայումս խորհրդահայ գրողների մեջ մենք չունենք զոշչենկոներ եւ ախմատովաներ»: Մտքերի փոխանակությունից առաջ այդպիսի հայտարարությունը չէր կարող չազդել քննադատության եւ ինքնաքննադատության ծավալման վրա խորհրդահայ գրականության մեջ եղած գաղափարական խորթ միտումները եւ երեւույթները բացահայտելու համար[1]:

Այսպիսի որոշումից հետո, որի հիմնական բովանդակությունը հրապարակվեց «Սովետական Հայաստան« թերթի 1946թ. սեպտեմբերի 24-ի համարում, հաջորդ օրը բացված Հայաստանի խորհրդային գրողնե-

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 33, թթ. 44-45:

րի համագումարն ընթացավ ՀԿ/բ/Կ Կենտկոմի մատնանշած ոգով: Մեկը մյուսին հետեւելով՝ հայ գրողներն ընդունում էին իրենց սխալները «գաղափարազուրկ ստեղծագործություններ լույս ընծայելու ասպարեզում», «սկզբունքային քննադատության եւ ինքնաքննադատության դաստիարակիչ նշանակությունը»[1]:

Համագումարի արդյունքների մասին ՀԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղար Զ.Գրիգորյանը նոյեմբերի 2-ին զեկուցագրով տեղյակ է պահում ՀամԿ/բ/Կ Կենտկոմի քարոզչության վարչությանը: Մեջբերենք մի քանի հատված այդ փաստաթղթից. «...Սեպտեմբերի 25-ին բացվեց Հայաստանի խորհրդային գրողների 2-րդ համագումարը: 7 օր տեւած համագումարի ամբողջ աշխատանքն ուղղեցինք ՀամԿ/բ/Կ Կենտկոմի որոշման ոգով: Գրողների համագումարը նշեց, որ հայ գրականության մեջ նկատվում են բուրժուա-ազգայնական ավանդույթների միտումներ: Մի քանի գրողներ գերագնահատում են անցյալը, պարփակվել են ազգայնական գաղափարներով եւ ազգային զգացմունքների խաղով: Համագումարում նշվեց նաեւ, որ Հայաստանի մի քանի գրողների ստեղծագործություններում երեւացել են հոգեզգացության տարրեր, հատկապես պատերազմի վերջին տարիներին /Տարոնցի, Կապուտիկյան, Շիրազ, Մարգարյան եւ ուրիշներ/: Համագումարն ուշադրություն հրավիրեց այն երեւույթի վրա, որ որոշ գրողներ միակողմանիորեն հրապուրվել են պատմական թեմաներով եւ ժամանակակից խորհրդային թեմատիկան չեն գնահատել /Դեմիրճյան, Զորյան, Խեչումյան, Արաքսմանյան/: Երկրորդ համագումարը նշեց նաեւ, որ մի շարք գրողներ հրապուրվել են անհիմաստ, սալոնային, նեղ անձնական լիրիկայով /Նաիրի Զարյան, Գեւորգ Էմին, Սիլվա Կապուտիկյան եւ ուրիշներ»[2]:

Համագումարում նշվեց գրաքննադատության անբավարար վիճակը: Այն «չէր կազմակերպել, չէր ազդել, չէր ղեկավարել մեր գրականությունը: Գրաքննադատների մեծամասնությունը զբաղվել է անցյալով, մոռանալով խորհրդային թեմատիկան«: Լուրջ քննադատության ենթարկվեցին «Սովետական գրականություն եւ արվեստ» ամսագիրը եւ «Գրական թերթը»: Համագումարում նշվեց, որ «նրանք անհրաժեշտ ազդեցություն չեն գործել խորհրդահայ գրականության զարգացման ընթացքի վրա, ժամանակին չեն վերհանում գրականության մեջ նկատվող թերությունները ու վրիպումները, իսկ երբեմն էլ տպագրում են գաղափարազուրկ, խորհրդային իրականությունն աղավաղող, գրական անորակ գործեր: Վերոհիշյալ բոլոր հարցերի գծով ծավալվեց սկզբունքային լայն քննադատություն եւ ինքնաքննադատություն: Համագումարում ելույթ ունեցած մի շարք բանաստեղծներ, գրողներ ու քննադատներ, ինչպես նաեւ գրական ճակատի այլ աշխատողներ ընդունեցին իրենց սխալները, եւ հանդես եկան դրանք ուղղելու պատրաստակամությամբ[3]:

Համագումարին որպես հյուր ներկա էին սփյուռքահայ 10 գրողներ: Հայաստանի խորհրդային գրողների 2-րդ համագումարը սփյուռքահայ գրողների առջեւ դրեց հետեւյալ խնդիրները.

---

[1] «Սովետական Հայաստան», 1946, 29 սեպտեմբերի:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 48, թ. 359:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 48, թթ. 359-361:

«1. Իրենց ստեղծագործություններում ճշմարտացիորեն արտացոլել Խորհրդային Հայաստանի նվաճումներն ինչպես տնտեսական, այնպես էլ մշակույթի բանագավառում:

2. Իրենց ստեղծագործություններով օժանդակել արտասահմանի հայ աշխատավորների ազգային ինքնագիտակցությանը, նրանց դաստիարակել առողջ հայրենասիրության եւ սիրո զգացումով դեպի Խորհրդային Միությունը եւ Խորհրդային Հայաստանը:

3. Համակարգված աշխատանք ծավալել այսօր արտասահմանում ապրող, բայց վաղը Խորհրդային Հայաստան հայրենադարձվող աշխատավորների դաստիարակության ուղղությամբ:

4. Իրենց ստեղծագործություններով պայքար ծավալել ընդդեմ բուրժուական հետադիմության՝ հանուն դեմոկրատիայի հաղթանակի»:

Հայաստանի գրողների 2-րդ համագումարն ընդունեց ընդարձակ որոշում, որի հիմքում դրված էին ՀամԿ/բ/Կ Կենտկոմի «պատմական որոշումները»: Համագումարի այսպիսի արդյունքը եւ գրողներին վերագրված մեղադրանքները որոշ ժամանակ խաթարեցին հայ գրականության բնականոն զարգացման ընթացքը եւ ստիպեցին հանդես գալ մտացածին, գրական որակից զուրկ, իշխանություններին հաճոյանալու ստեղծագործություններով:

Հիշյալ որոշումներին հետեւեցին ՀամԿ/բ/Կ Կենտկոմի օգոստոսի 26-ի «Դրամատիկական թատրոնների խաղացանկի բարելավելու միջոցառումների մասին»[1] եւ սեպտեմբերի 4-ի «Մեծ կյանք» կինոֆիլմերի մասին»[2] որոշումները:

Առաջինի նպատակն էր կանխել «գաղափարազուրկ, գռեհիկ, գեղարվեստականորեն թույլ պիեսների ներթափանցումը թատրոնների խաղացանկի մեջ»[3]: Նմանատիպ պիեսների թվին դասվեցին ժամանակակից այն հեղինակների ստեղծագործությունները, որոնցում «սովետական մարդիկ պատկերվում են այլանդակ ծաղրանկարային ձեւով, պրիմիտիվ եւ նվազ կուլտուրական, քաղքենիական ճաշակով ու բարքերով, իսկ բացասական պերսոնաժներն օժտվում են ավելի ցայտուն գծերով, ցույց են տրվում ուժեղ, ամուր կամքով եւ բանիմաց»: Խստորեն քննադատվեց պատմական թեմաներով տարվելը, ինչպես նաեւ «արտասահմանյան բուրժուական դրամատուրգների պիեսների» արմատավորումը: Վերջիններիս բեմադրությունը, համաձայն Կենտկոմի որոշման, «հանդիսացել է սովետական բեմը բուրժուական ռեակցիոն գաղափարախոսության ու բարոյականության պրոպագանդման համար տրամադրելու, սովետական հասարակությանը թշնամի աշխարհայացքով սովետական մարդկանց գիտակցությունը թունավորելու, գիտակցության եւ կենցաղի մեջ կապիտալիստական մնացուկները վերակենդանացնելու փորձ»[4]:

Որոշման հրապարակումից հետո Հայաստանի բոլոր քաղաքային եւ շրջանային թատրոններում անցկացվեցին կուսակցական դռնբաց ժողովներ, որտեղ մանրամասն քննարկվեց ՀամԿ/բ/Կ Կենտկոմի որոշումը: ՀԿ/բ/Կ Կենտկոմի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժինը ՀԽՍՀ արվեստի գործերի վարչության հետ մանրամասն քննարկեց թատրոնների

---

[1] ՍՍԿՊ-ն բանաձեւերում..., III մաս, էջ 620-626:
[2] "Правда", 1946, 16 сентября.
[3] «Սովետական Հայաստան», 1946, 4 հոկտեմբերի:
[4] ՍՍԿՊ-ն բանաձեւերում..., III մաս, էջ 620-622:

խաղացանկերը, որի արդյունքում դրանցից հանվեցին «գաղափարազուրկ եւ թույլ 17 պիես, արեւմտա-բուրժուական հեղինակների 2 պիես, ինչպես նաեւ գեղարվեստական որակով ցածր 40 ներկայացում»[1]: Ջտվածների թվում էին Արաքսմանյանի «Մեսրոպ Մաշտոց», Ա.Բարսեղյանի «Հայ կինը», «Կռվածաղիկ», Վ.Շողերյանի «Հայրենիքի դուստրը», «Մելիք-Ադամը», Պապայան եղբայրների «Բարձունք», Մ.Քոչարյանի «Սամվել», Մալյուգինի «Ճանապարհ դեպի Նյու Յորք», Կաուֆմանի եւ Հարթի «Ճաշին հյուր եկավ» պիեսները, որոնք տարիներ հետո նորից ընգրկվեցին թատրոնների խաղացանկերում: Կրճատված խաղացանկերը լրացնելու համար ռուսերենից թարգմանվեցին խորհրդային հեղինակներ Ալեքսեյ Սուրովի «Ստալինգրադից հեռու», Լավրենտեւի «Ի պատիվ նրանց, ովքեր ծովում են», Մալյագինի «Հին ընկերներ», Կատաեւի «Գնդի որդին» եւ այլ պիեսներ: Միաժամանակ հայտարարվեց մրցանակաբաշխություն խորհրդային թեմայով լավագույն պիեսների համար[2]: Արդյունքում բարձրարժեք ստեղծագործությունների կողքին /Գ.Բորյանի «Բարձունքներում», Ն.Զարյանի «Աղբյուրի մոտ», Մ.Քոչարյանի «Հին հիվանդություն»/, հրապարակ եկան բազմաթիվ անկոնֆլիկտ պիեսներ՝ պատեհապաշտ դատողություններով եւ անգույն հերոսներով:

Սեպտեմբերի 17-ին Երեւանում կայացած կինոաշխատողների համաքաղաքային ժողովը, քննարկեց ՀամԿ/բ/Կ Կենտկոմի «Մեծ կյանք» կինոնկարի մասին որոշումը: Ինչպես նշված է ՀամԿ/բ/Կ Կենտկոմ ուղարկված զեկուցագրում, «ժողովի մասնակիցները մշակեցին մի շարք միջոցառումներ այդ բնագավառում եղած թերությունները վերացնելու եւ Երեվանի կինոստուդիայի աշխատանքները բարելավելու համար»[3]:

Թատերական եւ կինոգործիչներից բացի, ժողովներ գումարեցին նաեւ կերպարվեստագետները /սեպտեմբերի 24-25/ եւ կոմպոզիտորները /հոկտեմբերի 24-25/, ուր քննարկվեցին ՀամԿ/բ/Կ Կենտկոմի որոշումները: Կերպարվեստագետների ժողովում «ելույթ ունեցողները նշեցին այն թերություններն ու բացերը, որոնք գոյություն ունեն Հայաստանի սովետական կերպարվեստագետների ստեղծագործություններում»[4]: Այդ թերությունների ու բացերի շարադրանքն իր բառապաշարով շատ չի տարբերվում գրողներին վերագրվածից: Նորից դիմենք թերթին. «Սովետական այժմյան թեմատիկայից հեռանալու տրամադրությունները, ստալինյան նոր հնգամյակում ժողովրդի առաջ ծառայող խնդիրներից ետ մնալը, պեյզաժի ու նատյուրմորտի գերակշռող տեղը, ինչպես նաեւ պատմական թեմատիկայով տարվելը տիպական են մեր շատ կերպարվեստագետների համար: Վերջին շրջանում շատ նկարիչներ իրենց ստեղծագործությունները սահմանափակում են էտյուդային պեյզաժի եւ նատյուրմորտի նեղ շրջանակներով /Մ.Աբեղյան, Վ.Աղաբաբյան, Խ.Եսայան, Է.Սարգսյան, Հ.Զարդարյան/, քանդակագործության մեջ նկատվում է ինքնատիպ էսթետիզմ /Ս.Թարյան/, նատուրալիստական շեղումներ /Ն.Նիկողոսյան, Թ.Զորեքչյան/ կամ անմիտ ալեգորիկ ֆիգուրաներ /Ս.Ստեփանյան, Ա.Ուրարտու/: Ստեղծվել են սալոնային, կեղծ, մեր սովետական իրականությունից ամբողջովին կտրված տրամադրություն արտահայտող գործեր /Վ.Տեր-

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 48, թ. 404:
[2] Նույն տեղում, թթ. 344-347:
[3] Նույն տեղում, թ. 362:
[4] «Սովետական Հայաստան», 1946, 5 հոկտեմբերի:

Գրիգորյան, Հ.Ստեփանյան/, գրաֆիկայի մեջ, հատկապես վերջին շրջանում լայն կիրառում է ստացել հին հայ զարդանկարների անքննադատ մեխանիկական օգտագործումն ու ստիլիզացիան /Տարագրոս, Ռ.Շահվերդյան/, իսկ գրաֆիկական այլ տեսակներում պատմական հեռավոր անցյալով տարվելը /Ա.Մամաջանյան, Շ.Հովհաննիսյան/ կամ տեխնիկական անբովանդակ պրիոմների կրկնողությունը /Ա.Ղարիբյան/»[1]: Ասվածը բավական է հաստատելու այն փաստը, որ արվեստի տեսակների բազմազանությանը եւ ստեղծագործողների անհատական դրսեւորումներին անհարիր էին իշխող գաղափարախոսության ստերեոտիպի հետ:

Կենսագործելով Կենտկոմի որոշումը, Երեւանի պետական պատկերասրահից «ձեւամոլության եւ գեղարվեստական ցածր որակի» անվան ներքո ցուցադրությունից հանվեցին մի շարք բարձրարվեստ գեղարվեստական ստեղծագործություններ[2]:

1947թ. հունիսի 10-25-ը ՀամԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղար Ա.Ժդանովն անցկացրեց փիլիսոփաների խորհրդակցություն, որտեղ հասավ Գ.Ալեքսանդրովի «Արեւմտյան փիլիսոփայության պատմության» դատապարտմանը: Ծավալվեց բանավեճ, որը, սակայն, դուրս եկավ գրքի քննարկման շրջանակներից: Բանավեճի ընթացքում երեւան եկավ փիլիսոփայական մտքի հաջորդականության, մարքսիզմի նախորդների դերի որոշակի թերագնահատում: Սխալ ձեւով պնդվում էր, որ նախամարքսյան ամբողջ փիլիսոփայությունը եղել է անպետք միջոց աշխարհընկալման գործում, որ անցյալի փիլիսոփայական համակարգերի ստեղծողները չէին կարող օժանդակել բնական գիտությունների զարգացմանը: Փիլիսոփայական մտքի զարգացումը կապվում էր միայն մատերիալիստ գիտնականների հետ, նվազեցվում էր դիալեկտիկայի դերը իդեալիստական համակարգերում[3]:

ՀԿ/բ/Կ Կենտկոմի որոշմամբ նոյեմբերի 11-13-ին հրավիրվում է փիլիսոփաների խորհրդակցություն, որը նախագահում էր Կենտկոմի քարտուղար Զ.Գրիգորյանը: Լուրջ գիտական բանավեճի փոխարեն հընչում էին երկուստեք մեղադրանքներ. հասկանալի էր, քննարկումը ծախողվեց[4]: Մի քանի օր անց, նոյեմբերի 25-ին, ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն քննարկում է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության սեկտորի աշխատանքների մասին հարցը եւ ընդունում որոշում, որտեղ դրանք գնահատվեցին անբավարար: Կենտկոմի բյուրոն մեղադրում էր սեկտորին, որ «մի շարք հրապարակված աշխատանքներում թույլ են տրվել մեթոդական եւ փաստական կարգի կոպիտ սխալներ եւ խեղաթյուրումներ, գլխավորապես հին Հայաստանի փիլիսոփայական հակամարքսիստական մտքի իդեալականացման ուղղությամբ»[5]:

Ըստ բյուրոյի որոշման, մի շարք փիլիսոփաների մոտ բացակայում էր գիտական հիմնախնդիրների մշակման նկատմամբ կուսակցական մոտեցումը: Վ.Չալոյանի «Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը» աշխատության մեջ «հեղինակը հեռացել է փիլիսոփայության պատմության նկատմամբ մարքս-լենինյան հայացքներից, որպես մատերիալիզմի եւ

---

[1] «Սովետական Հայաստան», 1946, 5 հոկտեմբերի:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 31, գ. 130, թ. 75:
[3] Очерки истории идеологической деятельности КПСС. М., 1986, с. 264.
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գգ. 38-39:
[5] Նույն տեղում, գ. 35, թ. 62:

իդեալիզմի միջեւ պայքարի պատմություն, եւ փորձել է հաստատել ամբողջական, միասնական հայ մատերիալիստական ավանդավարք: Չալոյանի աշխատությունում Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հայացքները քննարկվում են սոցիալ-տնտեսական հարաբերություններից, դարաշրջանի դասակարգերից եւ դասակարգային պայքարից խզված: Հեղինակը, գերագնահատելով նեոպլատոնիկ-իդեալիստ Դավթի առանձին մատերիալիստական արտահայտությունների նշանակությունը, նրան վերագրում է ընդհանուր մատերիալիստական աշխարհայացք»:

Տեղին է մեջբերել ՀԿ/բ/Կ Կենտկոմի կարծիքը նույն Վ.Չալոյանի աշխատանքի վերաբեյալ դրանից մի քանի տարի առաջ, 1945թ.: Կարծիքն ուղարկվել է ՀամԿ/բ/Կ Կենտկոմի գաղափարախոսության եւ քարոզչության վարչություն Վ.Չալոյանի «Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը» դոկտորական ատենախոսության առիթով: Մեջբերենք մի քանի հատված. «Մենք գտնում ենք, որ ընկ. Չալոյանի կողմից կատարված է շատ մեծ, բարեխիղճ եւ պիտանի աշխատանք, որը կնպաստի լուսաբանելու հայկական փիլիսոփայության հարցերը: Ընկ. Չալոյանի ատենախոսությունը, անկասկած, օգուտ կբերի ԽՍՀՄ ժողովուրդների պատմության մշակմանը: Դավիթ Անհաղթը հանդիսանում է հայ հին փիլիսոփայական մտքի դասականը եւ նրա համակարգն երկարատեւ ժամանակահատվածի ընթացքում ընկած է Հայաստանի փիլիսոփայական դպրոցի հիմքում: Ինչ վերաբերում է այն հարցին, որ այդ աշխատանքում կուսակցականությունը քիչ է, մեր կածիքով «Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը» ատենախոսությունում քննարկվում է ՀամԿ/բ/Կ Կենտկոմի վերջին որոշման լույսի ներքո, կապված փիլիսոփայության պատմության երրորդ հատորի հետ եւ ոչնչով չի հակասում մարքս-լենինյան տեսության սկզբունքներին»[1]:

Ներկայացված փաստաթուղթը համոզիչ կերպով ցույց է տալիս, թե գաղափարական պատվերի փոփոխությունը ինչպես կարող է ազդել նույն աշխատանքի գնահատականի վրա: Սակայն կրկին վերադառնանք 1947թ. նշված որոշմանը: Սուր քննադատության են ենթարկվում նաեւ փիլիսոփաներ Ա.Ադամյանը, Հ.Ասլանյանը, Ղ.Վարդապետյանը: Արձանագրվում է, որ բաժնի ղեկավարությունը չի պայքարել աշխատակիցների կողմից թույլ տրված ազգայնական եւ այլ սխալների դեմ: Ուստի բաժնի վարիչ Հ.Ասլանյանն ազատվում է աշխատանքից, նրա փոխարեն նշանակվում է Խ.Մոմջյանը: Հանձնարարվում է վերանայել բաժնի թեմատիկան[2]: Երկու տարի անց, 1949թ. հոկտեմբերի 11-ից ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն անդրադառնում է բաժնի աշխատանքներին: Ընդունված որոշման մեջ նշված է, որ բաժինն անբավարար է կատարել Կենտկոմի նախորդ որոշումը, չեն մշակվել այնպիսի թեմաներ, ինչպիսիք են «Խորհրդային հայրենասիրության բնորոշ առանձնահատկությունները», «Սոցիալիստական բնույթի եւ ազգային ձեւի դիալեկտիկան»: Բաժինը ժամանակին չի կատարել Կենտկոմի կարեւոր հանձնարարությունը դաշնակցության գաղափարախոսության հետադիմական էությունը բացահայտելու վերաբերյալ[3]: Ինչպես երեւում է որոշման նախապատրաստման նյութերից, բաժնի վարիչ Խ.Մոմջյանն իր մի քանի գիտական աշխատու-

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 45, թ. 131:
[2] Նույն տեղում, ց. 27, գ. 35, թ. 64:
[3] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 52, թ. 98:

թյուններում /«Ժողովրդի սխրանքը», «Ադոլֆ Հիտլեր», «Հելվեցիուս եւ Մոնտեսքյո»/ թույլ էր տվել մի շարք «քաղաքական եւ տեսական սխալներ»: Այսպես, «Ժողովրդի սխրանքը» աշխատությունում՝ նվիրված ֆրանսիական բուրժուական հեղափոխության 150-ամյակին, Մոմջյանն այդ հեղափոխությունն անվանել էր «մեծագույն» եւ դա հաստատելու համար մեջբերել էր Հեգելի իդեալիստական արտահայտությունները: Նա «հավասարության նշան էր դրել ֆրանսիական ժողովրդի եւ Հայրենական մեծ պատերազմի ընթացքում խորհրդային ժողովրդի հայրենասիրության միջեւ»: Խոսելով 1789-92թթ. ֆրանսիական ժողովրդի ազատատենչ ոգու մասին, Մոմջյանը «հիմք էր ընդունել պատմական զարգացման միասնական հոսանքի բուրժուական, իդեալիստական սկզբունքները»: «Ադոլֆ Հիտլեր» գրքույկում խորհրդային ժողովրդի հաղթանակը հիտլերյան Գերմանիայի նկատմամբ սխալմամբ պայմանավորել էր ԽՍՀՄ-ի կողմում ԱՄՆ-ի եւ Անգլիայի մասնակցությամբ: Նա «ինչպես փիլիսոփայության սեկտորի աշխատանքներում, այնպես էլ այլ գաղափարախոսական հարցերում հաճախ չէր կարողացել անցկացնել կուսակցականության ըսկզբունքը գիտության մեջ: Այսպես օրինակ, Ղափանցյանի հնդեվրոպական եւ հակամառական սխալների քննարկման ժամանակ նա փաստորեն պաշտպանեց նրան»[1]: Այս ամենը պատճառ դարձան, որ ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն Խ.Մոմջյանին ազատեր սեկտորի վարիչի պարտականություններից[2]: Տեղին է հիշատակել, որ հետագայում նա Մոսկվայում դարձավ ԽՍՀՄ-ի նշանավոր փիլիսոփաներից մեկը:

Փիլիսոփայության նկատմամբ հաշվեհարդարից մի քանի ամիս անց Ա.Ժդանովն անդրադարձավ երաժշտության խնդիրներին: Առիթը 1947թ. դեկտեմբերին Հոկտեմբերյան հեղափոխության 30-ամյակի առթիվ երեք ստեղծագործությունների՝ Ս.Պրոկոֆեւի «Վեցերորդ սիմֆոնիայի», Ա.Խաչատրյանի «Պոեմի» եւ Վ.Մուրադելու «Մեծ բարեկամություն» օպերայի կատարումն էր: 1948թ. փետրվարի 10-ին ՀամԿ/բ/Կ Կենտկոմն ընդունեց «Վ. Մուրադելու «Մեծ բարեկամություն» օպերայի մասին» որոշումը, որտեղ դատապարտվում էր այդ ստեղծագործությունը: Կենտկոմի որոշման մեջ նշվում էր, որ օպերայի երաժշտությունը արտահայտիչ չէ, աղքատ է: Նրա մեջ չկա ոչ մի եղանակ կամ արիա, որը հիշողության մեջ մնա: Այն խառնաշփոթ է եւ աններդաշնակ, կառուցված է համատարած աններդաշնակությունների, ականջ ծակող հնչյունների զուգորդության վրա»: Հարց առաջադրելով, թե ինչու ծախողվեց Վ.Մուրադելու օպերան, որոշումը պատասխանում է. «ՀամԿ/բ/Կ Կենտկոմը գտնում է, որ նրա օպերայի ծախողումը հետեւանք է խորհրդային կոմպոզիտորի ստեղծագործության համար կեղծ եւ կորստաբեր ձեւամոլական այն ուղու, որի վրա կանգնած է ընկ. Մուրադելին»: Կենտկոմը գտնում էր, որ մի շարք կոմպոզիտորներ եւս հետեւում են այդ «հակաժողովրդական ուղղությանը» եւ թվարկում է նրանց անունները՝ Դ.Շոստակովիչ, Ս.Պրոկոֆեւ, Ա.Խաչատրյան, Վ.Շեբալին, Գ.Պոպով, Ն.Մյասկովսկի[3]:

ՀամԿ/բ/Կ Կենտկոմի նախորդ որոշումների նման վերջինս եւս «մեծ բավարարվածությամբ է ընդունվում աշխատավորության եւ արվեստի աշխատողների կողմից»: Երեւանում կայացան Հայաստանի կոմպո-

---

[1] Նույն տեղում, գ. 58, թթ. 179-180:
[2] Նույն տեղում, գ. 52, թ. 99:
[3] "Правда", 1948, 11 февраля.

զիտորների, օպերայի եւ բալետի պետական թատրոնի, սիմֆոնիկ նվագախմբի, երաժշտական կոմեդիայի թատրոնի եւ երեւանի պետական կոնսերվատորիայի ստեղծագործական կոլեկտիվների ժողովներ, ուր ՀամԿ/բ/Կ Կենտկոմի որոշման բացատրությամբ հանդես եկան Կենտկոմի քարտուղար Զ.Գրիգորյանը, քաղկոմի քարտուղար Ս.Սողոմոնյանը: Կոմպոզիտորների միության ժողովում Ա.Տեր-Ղեւոնդյանը, Վ.Տիգրանյանը եւ մյուսները «սրտանց հավանություն են տալիս ՀամԿ/բ/Կ Կենտկոմի որոշմանը, որը ճիշտ եւ ժամանակին դատապարտեց ձեւամոլական երեւույթները խորհրդային երաժշտության մեջ եւ ցույց տվեց խորհրդային ժողովրդին արժանի, լիարժեք, բարձրորակ գործեր ստեղծելու միակ ճիշտ ուղին»: Կոմպոզիտոր Ա.Այվազյանը նշում է. «Մեր պարտքն է ՀամԿ/բ/Կ Կենտկոմի իմաստուն որոշմանը պատասխանել ժողովրդին հասկանալի, գաղափարական խորը բովանդակությամբ ստեղծագործություններով»: Կոնսերվատորիայի դոցենտ Կ.Դոմբաեւը հայտարարում է, որ «խորը բավարարվածության զգացումով է ընդունել Կենտկոմի իմաստուն որոշումը», որ մեր առջեւ խնդիր է դրված ուսանողներին դաստիարակել ռուսական եւ արեւմտյան դասական երաժշտության լավագույն ավանդույթներով»: Իրենց «գոհունակությունն» են հայտնում նաեւ կոմպոզիտորների միության քարտուղար Ա.Թադեւոսյանը, Հայֆիլհարմոնիայի նվագախմբի դիրիժոր Ս.Շաթիրյանը, ժողովրդական արտիստուհի Հ.Դանիելյանը, օպերայի եւ բալետի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար Մ. Թավրիզյանը եւ ուրիշներ[1]: Հասկանալի է, գաղափարական մամլիչի ճնշման ներքո գտնվող մշակույթի գործիչներին այլ ելք չէր մնում, քան հավանություն տալ «պատմական որոշումներին»:

ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն 1948թ. մայիսի 25-ին ընդունում է նման մի որոշում: Պարզվում է, որ «ՀամԿ/բ/Կ Կենտկոմի նշած լուրջ սխալները եւ թերությունները» իրենց տեղն են գտել նաեւ Հայաստանի երաժշտական արվեստում: Մի քանի կոմպոզիտորներ /Հ.Ստեփանյան, Վ.Արարատյան, Դ.Կիրակոսյան եւ ուրիշներ/ հեռացել են ժողովրդական ու դասական երաժշտության ավանդույթներից եւ ընտրել են խորհրդային երաժշտությանը խորթ հակաժողովրդական ձեւամոլական ուղղություն: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն իր որոշման մեջ նշում էր, որ «մեր երաժշտությունը իր բոլոր ժանրերով ետ է մնում խորհրդային ժողովրդի պահանջներից եւ չի արտացոլում խորհրդային կյանքի կենսական խնդիրները: Այնպիսի կարեւոր բնագավառներում, ինչպիսիք օպերան ու բալետն է, տարիներ շարունակ չեն ստեղծվել գործեր, որոնք սիրվեին ու ընդունվեին մեր ժողովրդի կողմից եւ հաստատուն տեղ գրավեին պետական օպերային թատրոնի խաղացանկի մեջ»: Այնուհետեւ, շեշտվում էր, որ կոմպոզիտորների երգերից շատ քչերն են տարածվել, մտել կենցաղ: Նրանք չեն սիրվել ու չեն երգվում ժողովրդի կողմից: Սիմֆոնիկ երաժշտության ասպարեզում կոմպոզիտորները «ընկել են ավելորդ արհեստական բարդացումների հետեւից, փոխանակ պարզ ու մատչելի սիմֆոնիաներ ու սիմֆոնիկ այլ գործեր ստեղծելու, որոնք կընդհանրացնեին մեր ժողովրդի հերոսական աշխատանքը, ցանկությունները եւ լավագույն ձգտումները»: Քննադատվում էր նաեւ երաժշտական-տեսական միտքը: Այն գտնվելով ցածր մակարդակի վրա, չի կարողացել կանխել ձեւամոլական եւ հակաժողովրդական միտումների տարածումը երաժշտության մեջ, չի կանխել «իրա-

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 102, թթ. 38- 40:

նա-արաբական-թյուրքական հետամնաց երաժշտական մշակույթի ազդեցության ներթափանցումը խորհրդահայ երաժշտական ստեղծագործության մեջ»: ՀԿ/բ/Կ Կենտկոմը ստեղծագործող երաժիշտներից եւ քննադատներից պահանջում էր բարձրացնել իրենց քաղաքական մակարդակը, զինվել «մարքսիզմ-լենինիզմի անհաղթելի զենքով», պայքարել խորհրդային երաժշտական արվեստի համար խորթ, ձեւամոլական, հակաժողովրդական բոլոր արտահայտությունների, հետամնաց մշակույթների ազդեցության դեմ՝ հանուն խորհրդային ռեալիստական երաժշտական արվեստի: Կոմպոզիտորներից պահանջվում էր ստեղծել «խորհրդային հարուստ իրականությունը» պատկերող օպերաներ, բալետներ, սիմֆոնիաներ, երգեր եւ այլ ժանրերի բարձրարժեք գործեր, որոնք կփառաբանեին «խորհրդային մարդկանց վեհ ձգտումները եւ զգացմունքները»[1]:

Նույն՝ մայիսի 25-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն որոշում է ընդունում նաեւ կերպարվեստի վերաբերյալ: Սխալների համար մեղադրվում են Ե.Քոչարը, Մ.Սարյանը, Մ. Ասլամազյանը, Մ. Աբեղյանը, Է. Իսաբեկյանը եւ ուրիշներ՝ ռեալիզմից հեռանալու եւ մոդեռնիզմին ու ֆորմալիզմին տուրք տալու համար: Ինչպես նշված է որոշման մեջ, այդ նկարիչները, «աղավաղված պատկերելով իրականությունը, դեֆորմացիայի ենթարկելով գծանկարը, խեղաթյուրելով գունային իրական գամման, ծավալային պատկերումը փոխարինելով հարթանկարչականով, կանգնեցին դեպի ռեալիստական արվեստի հիմունքների քայքայում տանող ուղու, խորհրդային արվեստին խորթ՝ մոդեռնիզմի ու ֆորմալիզմի դիրքերի վրա»: Համաձայն որոշման, ձեւամոլությունը խորհրդահայ կերպարվեստում իր լիակատար արտահայտությունն էր գտել Ե.Քոչարի /Ն.Զարյանի դիմանկարը, Մ.Գորկու կիսանդրին/ եւ մի քանի այլ նկարիչների գործերում: ՀԿ/բ/Կ Կենտկոմը գտնում էր, որ խորհրդահայ կերպարվեստի մեջ մեծ չափով տարածվել է դեկորատիվիզմը: Այս ուղղության «վտանգը» այն էր, որ այն խորհրդահայ արվեստը շեղում էր սոցիալիստական ռեալիզմի սկզբունքներից: Դեկորատիվ-պայմանական ոգով են նկարված Մ.Սարյանի մի քանի դիմանկարներ եւ բնանկարներ, Մ.Ասլամազյանի «Հերոսուհի մայրը» եւ «Հերոսի վերադարձը», Մ.Աբեղյանի «Ի պատիվ հերոսի» եւ «Վերադարձ աշխատանքից», Է.Սարգսյանի «Արտաշատի շրջանի կոլտնտեսականները» եւ այլն: Նշվեց, որ խորհրդահայ արվեստի համար «լուրջ վտանգ» են հանդիսանում նաեւ պարզունակությունը (պրիմիտիվիզմը), Հայաստանի մի մեծ խումբ նկարիչների գաղափարական եւ մասնագիտական ցածր մակարդակը, որոնք հատկապես դրսեւորվում են պատկերա-կոմպոզիցիոն գործերում /Ս.Գալստյանի «Նամակ ռազմաճակատից», Է.Իսաբեկյանի «Նելսոն Ստեփանյանը երիտասարդության հետ», Թ.Զորեքչյանի «Ռազմաճակատը եւ թիկունքը», Ս.Թարյանի «Կոլտնտեսուհու դիմանկարը» եւ այլն/: ՀԿ/բ/Կ Կենտկոմն իր որոշման մեջ կերպարվեստի աշխատողներին հանձնարարում էր իրենց աշխատանքի ծրագիրը դարձնել ՀամԿ/բ/Կ Կենտկոմի որոշումները գրականության եւ արվեստի վերաբերյալ, նրանք պետք է վճռական պայքար ծավալի ձեւամոլության բոլոր արտահայտությունների դեմ, կերպարվեստի բնագավառում վերացնի ամեն տեսակ «հետադիմական եւ հակաժողովրդական միտումները»: Նրանց կոչ էր արվում «արմատապես վերակառուցել իրենց աշխա-

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 46, թթ. 159-162:

տանքը, եւ ամրապնդել արվեստի մեջ սոցիալիստական ռեալիզմը՝ վրձ-ռական պայքար մղելով ֆորմալիզմի դեմ»[1]:

1948թ. վերջերին «ձեւամոլության» քննադատության կողքին բացահայտվեց նոր «վնասակար» թեքում՝ «կոսմոպոլիտիզմը»: Երկուսն էլ որակվեցին որպես նույն՝ «արեւմուտքի առջեւ խոնարհվելու» գործելակերպի երկու կողմեր: Փորձելով կենսագործել վերադաս մարմինների որոշումները, խորհրդային դրամատուրգները փորձում էին ստեղծել այնպիսի ստեղծագործություններ, որոնք ունենային թե «բարձր գաղափարայնություն», թե «բուռն զարգացող խորհրդային կյանքի ճշմարտացի արտացոլում», թե գեղարվեստական բարձր արժեք: Սակայն, միշտ չէ, որ գրողները եւ դրամատուրգները, նույնիսկ տաղանդավոր, կարճ ժամկետում կարողանում էին ստեղծել այդպիսի գործեր: Փորձելով անպայման մնալ սահմանված շրջանակների մեջ /«արդիականության մեծ խնդիրներ», «սովետական ժողովրդի աշխատանքային սխրանքներ», «գաղափարական բարձր որակ»/, դրամատուրգներն իրենց ստեղծագործություններում չէին կարողանում ապահովել գեղարվեստական բավարար մակարդակ: Այդպիսի պիեսներն արժանանում էին թատերական որոշ քննադատների արդարացի դիտողություններին: Նրանք շեշտում էին դրանց գեղարվեստական անկատարությունը, համամարդկային արժեքներից հեռանալը: Սակայն, երբ արժեքները որոշվում էին ոչ թե քաղաքակիրթ բանավեճերում, այլ քաղաքական իրադրության պահանջով, նմանատիպ քննադատությունը «բարձր հայրենասիրական, քաղաքական տեսակետից նպատակասլաց երկերի» նկատմամբ չէր կարող դուրս մնալ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի տեսադաշտից եւ խնդիր դրվեց «գաղափարապես ջախջախել թատերական քննադատների այդ հակահայրենասիրական խմբին»:

1949թ. դեկտեմբերի 15-19-ին տեղի ունեցավ գրողների միության վարչության 12-րդ պլենումը, որը քննարկելով խորհրդային դրամատուրգիայի եւ կինոդրամատուրգիայի վիճակը, դատապարտեց թատերական քննադատների տվյալ խմբին «խորհրդային դրամատուրգիայի դրական երեւույթները վարկաբեկելու» համար եւ նրանց խարանեց «կոսմոպոլիտներ, գեղապաշտ ձեւամոլներ» պիտակներով[2]:

Եվ ամբողջ երկրով մեկ սկսվեց նրանց հալածումն ու տեղերում նրանց ծայնափողերի հայտնաբերումը: 1949թ. հունվարի վերջին ՀԿ/բ/Կ Կենտկոմում տեղի ունեցած խորհրդակցությունը նվիրված էր խորհրդահայ դրամատուրգիայի դրությանը եւ թատրոնների խաղացանկին: Մասնակցում էին դրամատուրգներ, գրողներ, ռեժիսորներ, գրական եւ թատերական քննադատներ ու մամուլի աշխատողներ: Զեկուցողը՝ ՀԿ/բ/Կ Կենտկոմի քարոզչության բաժնի վարիչ Հ. Մամիկոնյանը նշում է, որ գեղապաշտ ձեւամոլները իրենց համախոհներն ունեն նաեւ Հայաստանի թատերական աշխատողների մեջ: Եվ թվարկվում են նրանք՝ Վ.Թերգիբաշյան, Գ.Գոյան, Ս. Մելիքսեթյան, Ռ. Զարյան, Ս.Հարությունյան[3]: Խորհրդակցությունում ելույթ է ունենում նաեւ Կենտկոմի քարտուղար Զ.Գրիգորյանը: Հայաստանի թատրոններին նա մեղադրում է այն բանում, որ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի պատմական որոշումից հետո էլ խաղացանկերի

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 46, թթ. 165-169:
[2] «Գրական թերթ», 1948, 31 դեկտեմբերի:
[3] Նույն տեղում, 1949, 31 հունվարի:

ծրագրում թերագնահատվում են խորհրդային ժամանակակից պիեսները: Անդրադառնալով Հայաստանի թատերական ընկերության գործունեությանը՝ Կենտկոմի քարտուղարը հայտարարում է, որ այն դարձել է գեղապաշտ ձեւամոլների քարոզչության վայր: Այս խորհրդակցությունով դրվեց «կոսմոպոլիտների» հալածանքների սկիզբը:

1949թ. հունվարի 28-ին «Պրավդան» հանդես եկավ «Թատերական քննադատների հայրենասիրական մի խմբի մասին», իսկ «Կուլտուրա ի ժիզն» թերթը՝ «Խորթ դիրքերի վրա» խմբագրական հոդվածներով, որտեղ բացահայտվում էր, որ «թատերական քննադատության մեջ գոյացել է բուրժուական գեղապաշտական տականքների հակահայրենասիրական խումբ»: Այդ քննադատները «կորցրել են իրենց պատասխանատվությունը ժողովրդի առաջ՝ հանդիսանալով խորհրդային մարդու համար խորապես զզվելի, նրանց թշնամական, անսեռ կոսմոպոլիտիզմի ներկայացուցիչներ, նրանք խանգարում են խորհրդային գրականության զարգացմանը, արգելում են նրա առաջընթաց շարժումը: Նրանց համար խորթ է խորհրդային ազգային հպարտության զգացումը»[1]: Ապա առանձին-առանձին ներկայացվում էին խմբի անդամների՝ Յու.Յուզովսկու, Ա.Գուրովիչի, Ա.Բորշչագովսկու, Լ.Մալյագինի, Գ.Բոյաջեւի եւ մյուսների «կատաղի հարձակումները» խորհրդային դրամատուրգիայի ձեռք բերած հաջողությունների վրա:

Թերթերի խմբագրական հոդվածների հրապարակումից շատ չանցած, փետրվարի 8-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն ընդունում է «Խորհրդահայ դրամատուրգիայի եւ թատրոնների խաղացանկի մասին» որոշումը, որտեղ նշվում էր, որ տակավին անբավարար է խորհրդային դրամատուրգիայի եւ դրամատիկական թատրոնների խաղացանկի վիճակը: Կենտկոմի որոշման մեջ նշվում էր նաեւ թատերական քննադատության խիստ անբավարար դրվածքը եւ հարձակման սլաքն ուղղվում էր նրանց դեմ. «Որոշ քննադատներ եւ թատրոնի աշխատողներ, կանգնած լինելով գեղապաշտական ձեւամոլության դիրքերի վրա, փոնել են վարկաբեկել խորհրդային դրամատուրգիայում եղած դրական երեւույթները: Այդ քննադատները /Վ.Թերզիբաշյան, Գ.Գոյան եւ ուրիշներ/ գեղարվեստական թուլության պատրվակի ներքո մերժել են այնպիսի արդիական խորհրդային պիեսներ, ինչպես Ա.Սուրովի «Ստալինգրադից հեռու», Ռոմաշեւի «Մեծ ուժը», Կ.Սիմոնովի «Պրահայի շագանակենիների տակ» եւ այլն»[2]: 1949թ. փետրվարի 15-ին տեղի ունեցավ Հայաստանի գրողների կուսկազմակերպության ժողովը, որը քննարկեց կենտրոնական թերթերի խմբագրական հոդվածները թատերական քննադատների «հակահայրենասիրական խմբի», ինչպես նաեւ ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի փետրվարի 8-ի որոշումը՝ խորհրդահայ դրամատուրգիայի եւ թատրոնների խաղացանկերի բարելավման միջոցառումների մասին: Ժողովում քննադատությունից զերծ չմնաց ոչ մի թատերագետ՝ Վ.Թեզիբաշյանը, Ս.Հարությունյանը, Ալ.Արաքսմանյանը, Ռ.Զարյանը, Ս.Մելիքսեթյանը եւ մյուսները: Ժողովի արձանագրությունից պարզում ենք, որ մոսկովյան թատերական քննադատների խմբի երկու անդամներ՝ Յու.Յուզովսկին եւ Ի.Ալթմանը սերտորեն կապված են եղել խորհրդահայ թատրոնի հետ: Նրանք «տարիներ» շարունակ փորձել են թունավորել Հայաստանի արվեստի առողջ

[1] "Правда", 1948, 28 января.
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 36, թթ. 47-48:

մքնոլորտը իրենց ֆորմալիստական էսթետական մարզանքներով եւ աղայական արհամարհանքով»[1]: Յուզովսկին «սովետահայ թատրոնի նկատմամբ ունեցած թշնամական դիրքերից է գրել իր «Կերպար եւ դարաշրջան» գիրքը, որի մեջ նա նույնիսկ փորձ չի արել ազնվորեն ու արդարամտությամբ վերհանել սովետահայ թատրոնի անվանի վարպետների կերտած շեքսպիրյան կերպարների խորը բովանդակությունը», իսկ Ալթմանը «զրպարտել» է, թե «սովետական այդ պիեսների բեմադրությունը Գ.Սունդուկյանի անվան թատրոնին ետ են մղում իր նվաճած դիրքերից»[2]: Ժողովում զեկուցողը եւ ելույթ ունեցողները հայ թատերագետ քննադատներին անվանեցին Յուզովսկու եւ Ալթմանի «Հայաստանի ձայնափողեր»: Կուսակցական ժողովը միահամուռ հավանություն տվեց թատերական քննադատների «հակահայրենասիրական խմբի գործունեությանը» տրված ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի որոշման եւ հիշյալ թերթերի խմբագրական հոդվածների գնահատականին:

Նույն ոգով անցավ ԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կուսկազմակերպության փետրվարի 21-ի ժողովը: Իսկ փետրվարի 24-ին «Գրական թերթում» տպագրվեց Վ.Նալբանդյանի «Մարտնչող ֆորմալիստը ամբիոնի վրա» հոդվածը՝ ուղղված թատերական քննադատ Սուրեն Հարությունյանի դեմ: Մի կողմ թողնելով Ս.Հարությունյանի հասցեին արված ստորացնող եւ վիրավորական արտահայտությունները, մեջբերենք մի հատված, որը ցույց է տալիս, թե ի՞նչ էր հասկացվում կոսմոպոլիտիզմ հասկացողության ներքո. «Վաղարշ Վաղարշյանի արտիստական գործունեության 30-ամյանկին նվիրված հոդվածում Ս.Հարությունյանը գրում է. «Վաղարշյանի արվեստը ընդհանուր մարդկային գծեր ունի եւ ընդհանուր արվեստի ելակետեր»: Դժվար չէ կռահել, որ «քննադատը« «ընդհանուր արվեստի» եւ «ընդհանուր մարդկային գծերի» մեջ դրսեւորում է իր կոսմոպոլիտիզմը: Այստեղ բացարձակապես անտեսված են ծեւով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական արվեստի լենինյան սկզբունքները, արվեստի դասակարգային բնույթը»: Այս հոդվածով կրքերն ավելի են բորբոքվում: Մարտի 5-6-ին տեղի ունեցավ Հայաստանի գրողների միության եւ թատերական աշխատողների ժողովը՝ նույն օրակարգով: Այստեղ արդեն «անհայրենիք կոսմոպոլիտները» 30-ական թվականների անմոռաց ավանդույթներով պիտակավորվում էին «մարդկային կերպարանքը կորցրած մոլի երկերեսանիների բանդա», իսկ ժողովի հիմնական նպատակն է դառնում բացահայտել, թե «ինչ ազդեցություն են գործել կոսմոպոլիտ-հակահայրենասերների թշնամական կոնցեպցիաները որոշ հայ թատերական քննադատների վրա, որոնք տառապում են էսթետա-ֆորմալիստական հայացքներով»: Ելույթ ունեցողները՝ գրողների միության քարտուղար Վ.Համազասպյանը, Գ.Բորյանը, Վ.Նալբանդյանը, Ն.Զարյանը, Հ.Քոչարը, Հ.Մամիկոնյանը ժողովում բերել են փաստեր հայ «կոսմոպոլիտների» լուրջ սխալների մասին, իսկ ընդունված բանաձեւում խորհրդահայ գրողները եւ դրամատուրգները «խոսք են տալիս բոլշեւիկյան մեծ պարտիային դեն շպրտել սոցիալիստական արվեստի բոլոր թշնամիներին»[3]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1346, ց. 1, գ. 28, թ. 2:
[2] Նույն տեղում, թ. 7:
[3] «Գրական թերթ», 1949, 10 մարտի:

Այս ամենին շուտով հետեւում են ՀԿ/բ/Կ Կենտկոմի կազմակերպական միջոցառումները: Մարտի 22-ին Կենտկոմի բյուրոն քննարկում է «Երեւանի թատերական ինստիտուտի աշխատանքների մասին» հարցը: Ընդունված որոշման նախապատրաստական նյութերից տեղեկանում ենք, որ «լուրջ քաղաքական սխալներ կան հայ թատրոնի պատմության դասավանդման գործում: Գերագնահատվում է արեւմտահայ թատրոնի դերը եւ թերգնահատվում Ռուսաստանում զարգացող հայ թատրոնը: Չի տրվում թատերական գործիչների քաղաքական գնահատականը: Թերագնահատվում է ռուս դասական դրամատուրգիայի եւ ռուս թատրոնի ազդեցությունը հայկական թատերական արվեստի զարգացման գործում: Խիստ անթույլատրելի համարել, երբ հայ թատրոնի պատմության ծրագրում տեղ է հատկացվում հայ գրականության հակահեղափոխական, բուրժուա-ազգայնական ներկայացուցիչներին՝ հանձինս դաշնակցական առաջնորդներ Ավետիս Ահարոնյանի եւ Լեւոն Շանթի: Ուսանողների ուշադրությունը հրավիրվում է առանձին դերասանների /Սիրանույշ, Իսահակյան/ դերակատարումները Ահարոնյանի /«Արցունքի հովիտ»/ եւ Լ.Շանթի /«Հին աստվածներ»/ պիեսներում ու մեծ տեղ է հատկացվում դրանց»[1]:

Կենտկոմի բյուրոյի որոշման մեջ նշվում է, որ առաջատար առարկաների մի շարք դասախոսների կողմից /Վ.Թերզիբաշյան Ս.Մելիքսեթյան, Գ.Գոյան/ ուսանողներին ներկայացվում են վնասակար հակաժողովրդական, ձեւամոլական հայացքներ դրամատուրգիայի եւ թատերական արվեստի մասին: Նրանք մեղադրվում են նաեւ «քննադատ կոսմոպոլիտների /Յուզովսկի, Ալթման, Բոյաջեւ/» ստեղծագործությունները որպես դասագրքեր օգտագործելու, խորհրդային դրամատուրգիան եւ թատրոնը արհամարհելու մեջ: Կենտկոմի ընդունած միջոցառումների թվում առաջիններից մեկը ինստիտուտի դասախոսներ Վ.Թերզիբաշյանին, Ս.Մելիքսեթյանին եւ Գ.Գոյանին աշխատանքից ազատելն է[2]: Մի քանի օր անց, մարտի 25-ին, ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրի պարտականություններից ազատում է Ս.Հարությունյանին՝ «քննադատ-կոսմոպոլիտներ Յուզովսկու, Ալթմանի եւ մյուսների հակահայրենասիրական խմբի ազդեցության ներքո գըտնվելու եւ իր գրական գործունեության ընթացքում մի շարք ձեւամոլական խեղաթյուրումների ու քաղաքական սխալների համար» եւ չեղյալ է համարում 1948թ. նոյեմբերի 28-ի որոշումը՝ նրան Արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերության նախագահ առաջադրելու վերաբերյալ[3]:

1949թ. հունիսի 30-ին ՀԿ/բ/Կ կենտկոմի բյուրոն անդրադառնում է խորհրդահայ նկարիչների գործունեությանը: Ընդունված որոշման մեջ նշվում է, որ առանձին արվեստաբան քննադատներ /Ռ.Դրամփյան, Ե.Հովհաննիսյան, Ե.Մարտիկյան/ իրենց գործունեության մեջ թույլ են տվել կոսմոպոլիտական բնույթի մի շարք լուրջ սխալներ, չեն ապահովել հետեւողական պայքարը կերպարվեստում կուսակցականության համար եւ արվեստի աշխատողներին չեն ցուցաբերել իսկական օգնություն[4]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 58, թ. 73:
[2] Նույն տեղում, թ. 51:
[3] Նույն տեղում, թ. 79:
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 46, թ. 40:

Գաղափարական հսկողությունը տարածվում էր հոգեւոր կյանքի բոլոր բնագավառների վրա: Նույն վստահությամբ, ինչպես պատմագիտության եւ փիլիսոփայության ասպարեզում, կոմկուսի ղեկավարությունը հանդես եկավ նաեւ լեզվաբանության, կենսաբանության, մաթեմատիկայի բնագավառներում՝ որոշ գիտություններ որակելով իբրեւ «բուրժուական»: Այդպիսի գնահատականի արժանացան նաեւ գենետիկան եւ կիբեռնետիկան:

Բանավեճ ծավալվեց նաեւ լեզվաբանության խնդիրների շուրջ: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն 1948թ. փետրվարի 4-ին եւ 1949թ. հունիսի 30-ին ընդունեց որոշումներ Հայաստանում լեզվագիտության վիճակի վերաբերյալ[1]: Առաջին որոշումով ՀԿ/բ/Կ Կենտկոմը խստորեն քննադատեց ՀԽՍՀ ԳԱ Ն. Մառի անվան լեզվի ինստիտուտի աշխատանքները: Ըստ որոշման, «ինստիտուտում չի տարվում համակարգված եւ լայնածավալ գիտական քննադատություն ընդդեմ բուրժուական լեզվաբանության: Անբավարար է առաջատար խորհրդային լեզվաբանության նվաճումների եւ լեզվի մասին Մառի նոր ուսմունքի քարոզչությունը: ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամ Աճառյանի աշխատություններում տեղ են գտել մեթոդական սխալներ»:

Առաջնորդվելով վերոհիշյալ որոշումով, ԳԱ լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը 1949թ. մարտին, քննության առնելով Հ.Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» գրքի 2-րդ հատորը, որոշում է գիրքը նման տեսքով չհրապարակել, քանի որ.

« ա/ «Հայոց լեզվի պատմություն» գրքի 2-րդ մասը նախորդ հատորի օրգանական շարունակությունն է եւ ունի մեթոդաբանական այն արատները, ինչ որ գրքի առաջին հատորը: Ընկ. Աճառյանը, ինչպես առաջին, նույնպես եւ այս հատորում արծարծած բոլոր հարցերը ուսումնասիրել եւ մեկնաբանել է բուրժուական լեզվաբանության այսպես կոչված պատմա-համեմատական մեթոդով:

բ/ Իր գրքի այս հատորում նա գործածել է գիտության կողմից մերժված «ոսկեդար», «բարեշրջություն» տերմինները, որոնց ընդունումը բխում է նրա սխալ մեթոդոլոգիայի, այսինքն էվոլյուցիոն տեսության ընդհանուր սկզբունքից:

գ/ Գրքում ճիշտ չեն մեկնաբանված հայերեն էքսիկական լեզվի՝ գրաբարի եւ բառբառների գոյացման հարցերը: Գրաբարը համարված է մեր լեզվի հնագույն վիճակը, իսկ բարբառները՝ նրա հետագա աղավաղումից առաջացած լեզվական իրողություններ:

դ/ Հեղինակը իր գրքում նկատի չի ունեցել սովետական լեզվաբանության նվաճումները եւ չի օգտագործել այն հարուստ նյութերը, որոնք կուտակել են սովետահայ լեզվաբանները վերջին տարիների ընթացքում: Զանց առնելով լեզվի նոր ուսմունքի ձեռքբերումները, կրկնում է տասնյակ տարիներ առաջ իր սովորած հնդեվրոպական դրույթները՝ իբրեւ սրբության սրբոց համարելով իր ուսուցիչների /Մեյե, Հյուբշման/ կարծիքները:

ե/ Նա լեզվի զարգացումը դիտում է իբրեւ հնչյունների եւ բառերի սոսկական փոփոխությունների հաջորդականություն, հասարակական կյանքից անկախ, ինքնաբավ մի պրոցես, որի պատճառով էլ հայերենի

[1] Նույն տեղում, ց. 28, գ. 41, թթ. 37-39, ց. 29, գ. 46, թթ. 48-51:

բառապաշարի, ինչպես նաեւ ծեւաբանական հարցերը քննելիս հանգում է սխալ եզրակացությունների»[1]:

ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն 1949թ. հունիսի 30-ին քննարկում է լեզվագիտության վիճակը Հայաստանում եւ ընդունում «կազմակերպչական» բնույթի որոշումներ: Արձանագրելով, որ հանրապետությունում «մարքս-լենինյան լեզվաբանության» բնագավառում ձեռք են բերվել հաջողություններ, հրապարակվել են Ն.Մառի աշխատությունները, ծեւավորվել է նրա հետեւորդ լեզվաբանների դպրոց, «Կենտկոմի բյուրոն նշում է լուրջ թերություններ եւ սխալներ Հայաստանի լեազվագիտության բնագավառում»: Մեջբերենք մի պարբերություն ընդունած որոշումից. «Հայաստանի լեզվաբանների շրջանում կան գիտնականներ, որոնք ակադեմիկոս Աճառյանի ղեկավարությամբ մինչեւ այժմ կանգնած են հնդեվրոպական լեզվագիտության դիրքերում, որը հետեւողականորեն իրականացնում է իր գիտահետազոտական եւ դասախոսական աշխատանքները հետադիմական, իդեալիստական բուրժուական լեզվագիտության կեղծգիտական սկզբունքներով, դրանով փորձելով վարկաբեկել ակադեմիկոս Մառի ուսմունքը լեզվի մասին»: Նման պիտակ է ստանում նաեւ Գ.Ղափանցյանը: Ա.Ղարիբյանը եւ Գ.Սեւակը մեղադրվում են այն բանի համար, որ «բոլշեւիկյան սկզբունքայնությամբ պայքար չեն ծավալել Հ.Աճառյանի եւ Գ.Ղափանցյանի վնասակար սկզբունք դեմ», առաջինը՝ նաեւ Գ.Ղափանցյանի «Հայասան-հայերի բնօրրան» գիրքը խմբագրելու համար: ՀԿ/բ/Կ Կենտկոմը, Հայաստանի լեզվաբանների գլխավոր խնդիրը համարելով դասախոսական եւգիտահետազոտական աշխատանքներում լեզվի մասին Ն.Մառի նոր ուսմունքը, որպես մարքս-լենինյան խորհրդային լեզվաբանության հիմք, հետագա անշեղ եւ հետեւողական ներդրում, որոշում է դասախոսական աշխատանքներից ազատել Հ.Աճառյանին, Վ.Առաքելյանին, Մ.Իսրայելյանին, իսկ Գ.Ղափանցյանին՝ զբաղեցրած բոլոր պաշտոններից[2]:

Հայաստանում լեզվաբանության խնդիրների շուրջը ծավալված բանավեճին անդրադառնում է նաեւ սփյուռքահայ մամուլը: «ARMENIAN GUARTERLY» ամսագիրը հրատարակում է Հ.Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատությունը, ուր շեշտվում էր հայերի հնդեվրոպացիներ լինելու հարցը: «Սիոն» եւ «Հանդես ամսօրեա» հանդեսներն արտատպում են Հ.Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» այն գլուխները, ուր նույնպես շեշտված է հայերի արիացիներ լինելու հանգամանքը: «Պայքար» հանդեսը 1949թ. հրապարակում է պատմագիտական մի ժողովածու, ուր Միհրան Թիրաքյանը գրախոսելով Ղափանցյանի «Արա Գեղեցիկի պաշտամունքը» աշխատությունը, քննադատում է նրան այն բանի համար, որ վերջինս «հաբեթականութեան հետեւողներեն է», «կդատապարտէ հնդեւրոպականութեան գծով հայոց լեզվի եւ պատմութեան հարցերը բացահայտելու ընկալեալ ուղղությունը», որ Ղափանցյանը հնդեվրոպական դպրոցը համարում է պատմական դժբախտություն կախված հայ բանասիրության վրա: Թիրաքյանը Գ.Ղափանցյանի տեսակետը համարում է հանդուգն եւ գտնում, որ տվյալ հարցում մեծագույն հեղինակություն հանդիսանում են Հր.Աճառյանը եւ Հ.Մանանդյանը. «Որքան պիտի ուզեինք լսել Հայաստանի միւս հեղինա-

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 291, թթ. 52-53:
[2] Նույն տեղում, գ. 46, թթ. 49-51:

կաւոր գիտնականներու՝ Մանանդեանի ու մանաւանդ հանճարեղ Աճառեանի խօսքը Ղափանցեանի հայտնած վերի կարծիքի շուրջ, թե որ չենք սխալվիր՝ Աճառեանն ընդունած չէ Մառի տեսակետը իբրեւ տիրական հայոց լեզուի հարցերի մէջ: Եվ մեծ լեզուաբանի խօսքն այս առնչութեամբ ծանր, շատ ծանր կկշռե»[1]: Սփյուռքահայ մամուլում բանավեճ է ծավալվում նաեւ Հայաստանում գործածվող գրական լեզվի շուրջը: Բանավեճ հարուցողը դաշնակցական մամուլն էր, որը լուրեր էր տարածում, թե հայոց լեզուն Հայաստանում ռուսականացվում է: «Առաջադիմական» մամուլը բանավեճ է սկսում դաշնակցականների դեմ՝ նրանց հայտարարությունները համարելով սադրանք եւ խծբծանք:

«Ժողովուրդ» թերթում լույս է տեսնում Ա. Ն. ստորագրությամբ հոդված «Ձեր բուն միտքը ասեք» վերնագրով, ուր հոդվածագիրը մերկացնում է դաշնակցականներին իբրեւ սադրիչներ: Նա գտնում է, որ լեզվի հարցը դաշնակների «պրոպագանդայի գլխավոր նիւթերից մեկն է, որոնց միակ նպատակն է պաղեցնել գաղութահայությունը Սովետական Հայաստանից»: Նա դաշնակներին նմանեցնում է այն մարդկանց, ովքեր վերմակի վրա նկատվող լուի համար այրում են ողջ վերմակը: Մեզ համար ինչ կարեւորություն ունի, բացականչում է հոդվածագիրը, Սեվանգէս ասելը լավ է, թե՞ Սեվանի էլեկտրակայանն, մեզ համար կարեւորն այն է, որ Սեվանգէսը կառուցող մարդիկ հազարավոր հեկտար անջրդի հողամասը ջրովի են դարձրել[2]: «Արեւմուտք» թերթում լույս է տեսել «Հայրենաշինություն» վերնագրով հոդված՝ Կադմոս ստորագրությամբ: Հեղինակը գըտնում է, որ արտասահմանում հայոց լեզվի շուրջը սկսած խծբծանքի կողքին կա եւ նախանձախնդրություն՝ հայոց լեզուն «անաղարտ» պահելու հարցում: Հեղինակը գովելի է համարում այն երեւույթը, որ հայրենիքում գրաբարը «ոսկե հանք է» դարձել գրողների համար: Նա այդ երեւույթը պայմանավորում է Վարուժանի նման հեղինակների աշխատությունների տարածմամբ. «Ատոր մէջ անշուշտ իր դերն ունեցած է Դ.Վարուժանի նման արեւմտահայերու գործերու տարածումը«: Սակայն, ցավում է, որ Հայաստանի մամուլում գործ են ածվում՝ «մոմենտ», «բազա», «կոնսուլտացիա», «դեպուտատ», «կանդիդատ», «ռայոն», «էվոլյուցիա», «օկուպացիա», «ագիտացիա» եւ նման այլ տերմիններ[3]: Նման կարգի հոդվածներ են լույս տեսնում «Պայքար» թերթում Մարտիրոսյանի ստորագրությամբ՝ «Օտար բառերու անհարկի գործածութիւն» վերնագրով[4], Արտակ Դարբինյանի «Մեր արեւելահայերենը» վերնագրով հոդվածը «Պայքար»-ի նոր տարվա բացառիկում[5]:

Սակայն, 1950 թ. ապրիլի 12-ին տեղի է ունենում անկախատեսելի իրադարձություն: Հրավիրվում է ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի արտահերթ նիստ, որտեղ քննարկվում է «ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի 1949թ. հունիսի 30-ի «ՀԽՍՀ-ում լեզվագիտության վիճակի մասին» որոշումը» հարցը: Զեկուցում է Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Հարությունյանը: Ընդունված որոշումը բաղկացած է երեք կետից եւ չունի արձանագրային մաս: Առաջին կետում նշվում է, որ հունիսի 30-ի որոշման մեջ բուրժուական

---

[1] «Պայքար», Նոր տարվա բացառիկ, Բոստոն, 1949, էջ 38:
[2] «Ժողովուրդ», փարիզ, 1948, 11 հոկտեմբերի:
[3] «Արեւմուտք», Փարիզ, 1948, 28 նոյեմբերի:
[4] «Պայքար«, Բոստոն, 1948, 4 դեկտեմբեր:
[5] «Պայքար», Նոր տարվա բացառիկ, Բոստոն, 1949, էջ 12-24:

հետադիմական հնդեւրոպական լեզվաբանության եւ լեզվաբան-հայագետների շրջանում նրա դրսեւորման ճիշտ գնահատականի կողքին թույլ է տրվել լեզվի մասին Ն.Մառի ուսմունքի նույնացում մարքս-լենինյան լեզվաբանության հետ, իսկ բուրժուական-հետադիմական լեզվաբանության քննադատությունը տարվել է Ն.Մառի ուսմունքի հիմնական դրույթների տեսանկյունից եւ ոչ թե լեզվի մասին մարքս-լենինյան ուսմունքի դիրքերից: Երկրորդ կետում նշվում է, որ ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն սխալ է թույլ տվել ակադեմիկոսներ Գ.Ղափանցյանին եւ Հ.Աճառյանին աշխատանքից ազատելով եւ հանձնարարում է ԵՊՀ ռեկտորին՝ վերականգնել նրանց նախկին պաշտոններում: Երրորդ կետով Կենտկոմի քարտուղար Զ.Գրիգորյանին հանձնարարվում է որոշումը պարզաբանել ԵՊՀ գիտաժողովում եւ ԳԱ լեզվի ինստիտուտում[1]:

Ի՞նչ էր տեղի ունեցել: Ի.Ստալինը նույնպես պատրաստվում էր մասնակցել լեզվաբանների բանավեճին եւ նյութեր էր հավաքում լեզվաբանության վերաբերյալ: Ինչպես վերհիշում է ՎԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Առնոլդ Չիկոբավան. «1950թ. ապրիլի սկզբին ղեկավար մարմիններից ինձ զգուշացրին, որ մոտ օրերս ինձ սպասվում է ուղեւորություն Մոսկվա. «Լեզվաբանության հարցերն այնտեղ պետք է քննարկվեն Կենտկոմի քարտուղարների հետ եւ Ձեզ անհրաժեշտ է պատրաստվել»: Ապրիլի 10-ի երեկոյան մենք /Կենտկոմի քարտուղար Կ.Զարկվիանին, Նախարարների խորհրդի նախագահը, երկու նախարար եւ ես/ հայտնվեցինք Մոսկվայում՝ Ստալինի ամառանոցում: Քննարկեցինք միայն լեզվի հարցերը՝ Ստալինի դիտողությունները «Վրաց լեզվի բացատրական բառարանի» մասին /որի առաջին հատորը դրանից առաջ էր լույս տեսել/ եւ Ն.Մառի «Նոր ուսմունքը» լեզվի մասին... Որոշվեց անցկացնել բանավեճ՝ ինձ հանձնարարվեց գրել բանավեճային հոդված»[2]:

Այս հանդիպման ժամանակ Մառի ուսմունքի հակառակորդ Ա.Չիկոբավան Ստալինին հայտնում է, որ Հայաստանում Մառի ընդդիմախոս լեզվաբաններ Հ.Աճառյանը եւ Գ.Ղափանցյանը հալածվում են եւ հեռացվել են աշխատանքից: Ստալինը ընդհատում է նրան եւ պահանջում հեռախոսակապ Երեւանի հետ: Ահա թե ինչպես է ներկայացնում Ռ.Մեդվեդեւը Ստալինի խոսակցությունը Գ.Հարությունյանի հետ.

«*Ստալին* - Ընկեր Արուտինով, Ձեզ մոտ հանրապետությունում աշխատում են այսպիսի մարդիկ՝ Աճառյան եւ Ղափանցյան:

Հարությունյան - Այո, ընկեր Ստալին, մեզ մոտ կան այդպիսի մարդիկ, բայց նրանք չեն աշխատում, նրանց ազատել են պաշտոններից:

Ստալին- Իսկ ովքե՞ր են նրանք:

Հարությունյան - Նրանք գիտնականներ են, ակադեմիկոսներ...

Ստալին- Իսկ ես մտածեցի՝ հաշվապահներ, մի տեղում ազատում են, մյուս տեղում՝ տեղավորում: Շտապել եք, ընկեր Արուտինով, շտապել...»[3]:

Ստալինի հեռախոսային զանգին հետեւում է Կենտկոմի բյուրոյի ապրիլի 12-ի որոշումը, իսկ մեկ օր անց Գ.Հարությունյանը Ի.Ստալինին հայտնում է ընդունված որոշման, ակադեմիկոսներին աշխատանքի վե-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 30, գ. 28, թ. 135:

[2] "Литературная газета", 1988, 25 мая.

[3] "Независимая газета", 1997, 4 апреля.

ռականգնելու եւ դասախոսելու թույլտվության մասին[1]: Մեկ տարի անց, ՀԿ/բ/Կ 15-րդ համագումարում հաշվետու զեկուցման մեջ Գ.Հարությունյանը նշում է, որ ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն «այդ սխալները ուղղեց ընկեր Ստալինի ցուցումից հետո»[2]:

Մայիսի 9-ին «Պրավդայում» հրապարակվում է Չիկոբավայի բանավեճային հոդվածը, ուր նա հայտնում էր իր խոր համոզումը՝ «գիտական-մարքսիստ» Ն.Մառի գաղափարների սխալականությունը: Հոդվածին հետեւեցին ինչպես մառիզմի, այնպես էլ Չիկոբավայի պաշտպանությամբ /այդ թվում Գ.Ղափանցյանի/ հոդվածները: Հունիսի 20-ին հրապարակվեց Ստալինի հոդվածը՝ «Մարքսիզմի վերաբերյալ լեզվագիտության մեջ» վերնագրով, որին հաջորդեցին եւս երկուսը /4 հուլիսի եւ 2 օգոստոսի/:

Եվ իրադրությունը փոխվեց: Ելնելով ստալինյան դրույթներից, ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն 1950թ. հուլիսի 25-ին քննարկում է «ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի մասին» հարցը եւ ընդունում այն վերակազմավորելու որոշում: Կենտկոմը, «պարզվում է», որեւէ մեղք չունի Հ.Աճառյանի, Գ.Ղափանցյանի հալածանքներում, ամեն ինչի մեղավորը՝ «մառական» Ա.Ղարիբյանն է իր կողմնակիցներով, որոնք «թույլ չեն տվել կարծիքների բախում լեզվագիտության բնագավառում»[3]: ԳԱ Ն.Մառի անվան լեզվի ինստիտուտը վերանվանվում է լեզվագիտության ինստիտուտի, Ա.Ղարիբյանն ազատվում է լեզվի ինստիտուտի տնօրենի պաշտոնից: Օգոստոսի 14-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն հարցման կարգով որոշում է լեզվագիտության ինստիտուտի տնօրեն հաստատել Գ.Ղափանցյանին[4]: Որոշմանն իրենց ստորագրությամբ հավանություն են տվել Գ.Հարությունյանը, Ա.Քոչինյանը, Զ.Գրիգորյանը, Մ.Պապյանը, Ս.Կորխմազյանը եւ բյուրոյի մյուս անդամները: Հ.Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» գրքի 2-րդ հատորի հրատարակումը ընդգրկվում է ԳԱ 1951թ. հրատարակչական ծրագրի մեջ[5], իսկ Գ.Ղափանցյանի «Հայասա-հայերի բնօրրան» գիրքը 1951թ. փետրվարի 24-ին Գ.Հարությունյանը ներկայացնում է ՀԱՄԿ/բ/Կ Կենտկոմ՝ Ստալինյան մրցանակ հայցելու համար[6]:

Բոլորովին այլ բնույթ էր կրում կենսաբանության շուրջ բանավեճը: Այն կապված էր երկրի տնտեսական, առաջին հերթին գյուղատնտեսական դժվարությունների եւ Տ.Լիսենկոյի ժառանգականության կեղծ գիտական տեսության հետ, որը Կենտկոմին ու «անձամբ ընկեր Ստալինին» խոստանում էր կարճ ժամանակում երկիրն ապահովել առատ գյուղատնտեսական մթերքներով: Նախապատերազմյան տարիներին նշանակվելով Գյուղատնտեսական գիտությունների համամիութենական ակադեմիայի պրեզիդենտ՝ նա այնտեղից հեռացրեց իսկական գենետիկներին՝ իր գիտական ընդդիմախոսներին: Պատերազմի նախօրեին ըսկսված գենետիկների եւ կենսաբանների հետապնդումը կրկնակի եռանդով վերսկսվեց 1947-48թթ.: Լիսենկոյի ազդեցության ներքո ՀԱՄԿ/բ/Կ Կենտկոմը պարտադրեց փոփոխականության հասկացողության այնպիսի մեկ-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 30, գ. 63, թթ. 18-19:
[2] *Գր. Հարությունյան*, Հաշվետու զեկուցում ՀԿ/բ/Պ XV համագումարում, էջ 65:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 30, գ. 28, թթ. 49-50:
[4] Նույն տեղում, գ. 34, թ. 129:
[5] Նույն տեղում, գ. 163, թ. 31:
[6] Նույն տեղում, ց. 31, գ. 54, թթ. 38-39:

նաբանում, որը միացրեց մարքսյան դետերմինիզմը մարդկային բնության վրա ազդելու հնարավորության ընդունման հետ: 1948թ. հուլիսի 31-ից օգոստոսի 7-ը Մոսկվայում տեղի ունեցավ Գյուղատնտեսական գիտությունների համամիութենական ակադեմիայի հերթական նստաշրջանը, որտեղ Տ.Լիսենկոն հանդես եկավ «Կենսաբանական գիտության մեջ տիրող դրության մասին զեկուցումով[1]:

Նստաշրջանն ավարտվեց Լիսենկոյի կողմնակիցների /անվանվում էր միչուրինյան ուղղություն/ հաղթանակով՝ ընդդեմ վեյսման-մենդել-մորգանյան ուղղության /Ավգուստ Վեյսմանի, Թոմաս Մորգանի եւ Գրեգոր Մենդելի անուններով/ կողմնակիցների: Հանրամատչելի մեկնաբանությամբ այդ երկու ուղղությունների պայքարի հիմնական էությունը հետեւյալն է. մորգան-մենդելյան ուղղությունը ժխտում է կյանքի պայմանների ազդեցությամբ ծագած փոփոխությունները ժառանգելու հնարավորությունը, իսկ միչուրինյան ուղղությունը կանգնած էր հակառակ տեսակետի վրա: Որոշումներն ազդանշան հանդիսացան գենետիկ եւ կենսաբան բոլոր վեյսմանականների հալածանքների համար: Ակադեմիկոսներ Ա.Ժերբակը, Պ.Ժուկովսկին, Լ.Օրբելին, Ա.Սպերանսկին, Ի.Շմալգաուզեն եւ նրանց աշակերտները, ընդհանուր առմամբ մի քանի հարյուր մարդ, հեռացվեցին ակադեմիայից եւ բուհերի ամբիոններից: Երկրում արգելվեց Մենդելի գենետիկան, ինչպես նաեւ գիտության այն բոլոր բնագավառները, որտեղ քննարկվում էր անորոշության այս կամ այն ձեւ՝ քվանտային ֆիզիկան, հավանականության տեսությունը, սոցիոլոգիայում վիճակագրական վերլուծությունը:

ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն գիտությունների ակադեմիային թույլատրեց գումարել կենսաբանական եւ գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքների միացյալ նստաշրջան՝ «Գյուղատնտեսական գիտությունների համամիութենական ակադեմիայի նստաշրջանի արդյունքների մասին» օրակարգով[2]: Նստաշրջանում, որին, ակադեմիայի գիտաշխատողներից բացի, մասնակցում էին նաեւ բուհերի փիլիսոփայության, կենսաբանության եւ գյուղատնտեսական առարկաների դասախոսներ, կենսաբան-սելեկցիոներներ, զեկուցումով հանդես է գալիս ԳԱ գենետիկայի ինստիտուտի տնօրեն Գ.Բաբաջանյանը: Ներկայացնելով մոսկովյան նստաշրջանի արդյունքները՝ զեկուցողն ասելիքը կենտրոնացնում է Հայաստանում «վեյսմանյան» ուղղության ներկայացուցիչներ, ԳԱ թղթակից-անդամներ Ա.Թախթաջյանի եւ Մ.Չայլախյանի «սխալների» բացահայտման վրա: Նստաշրջանում հանդես եկան 12 մարդ, որոնք «խորը քննադատության են ենթարկում հանրապետության կենսաբանական գիտություններում տեղ գտած մորգանիզմ-վեյսմանիզմը»[3]:

Նստաշրջանում ելույթ է ունենում նաեւ ՀԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղար Կարլ Բարիգյանը: Կոմիամալսարանի կրթությամբ քարտուղարը տեսական ընդհանրացումներ կատարելով կենսաբանությունից, Հայաստանում մորգան-վեյսմանականների թվին Ա.Թախտաջյանի կողքին հիշատակում է պրոֆեսոր Ա.Տեր-Պողոսյանին, Ա.Արարատյանին, Ս.Սարգսյանին, Հ.Պողոսյանին[4]: Նստաշրջանում հրապարակվում է օրվա նիստից

---

[1] "Правда", 1948, 12 августа.
[2] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 49, թ. 176:
[3] «Սովետական Հայաստան», 1948, 31 օգոստոսի:
[4] «Սովետական Հայաստան», 19484 սեպտեմբերի:

բացակայող Ա.Թախթաջյանի նամակը: Նա գրում էր, որ ամբողջովին եւ լիովին ընդունում է Գ.Բաբաջանյանի կողմից իր հասցեին արված քննադատությունը եւ խոստանում է հետագա հետազոտություններում ուղղել թույլ տված սխալները[1]:

Սակայն այս մեղայական նամակը, ինչպես նաեւ այլոց խոստովանությունները վերակառուցվելու մասին, չփրկեցին ո՛չ Ա.Թախթաջյանին, ո՛չ մյուսներին: ՀԿ/բ/Կ Կենտկոմը «ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի մասին» որոշումով դասախոսական աշխատանքից ազատեց պրոֆեսորներ Ա.Թախթաջյանին, Մ.Չայլախյանին, դոցենտ Ե.Պողոսյանին, ասիստենտ Շ.Մելիքյանին: Ամբիոնի վարիչի պարտականությունից ազատվում է Ա.Տեր-Պողոսյանը, դեկանի՝ Ա.Մինասյանը[2], իսկ մի քանի օր անց այլ բուհերից ազատվում են եւս 5 դասախոսներ, որոնք «իրոք իրենց գիտական եւ դասախոսական աշխատանքներում հետեւում էին կենսաբանության հակագիտական ուղղությանը՝ վեյսմանիզմ-մորգանիզմին»: Վերանայվում են նաեւ ԳԱ-ի եւ գիտահետազոտական ինստիտուտների կենսաբան գիտաշխատողների, միջնակարգ դպրոցների կենսաբանության դասատուների կազմը[3], ինչպես նաեւ բուհերի եւ միջնակարգ դպրոցների կենսաբանության ուսումնական ձեռնարկներն ու դասագրքերը:

Հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա գաղափարական հսկողության հետագա սաստկացման համար ուղենիշ հանդիսացավ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի 1947թ. օգոստոսի 27-ի «Հայկական կուսակցական կազմակերպությունում ղեկավար կուսակցական աշխատողների ընտրության, առաջքաշման եւ օգտագործման վիճակի մասին» որոշումը: Մինչ այդ, Հայաստան գործուղված հանձնաժողովի՝ (ՀամԿ/բ/Կ Կենտկոմի կադրերի վարչության պետի տեղակալ Ա. Լարիոնովի ղեկավարությամբ) զեկուցագիրը հիմք էր ծառայել այդ որոշման համար: Որոշումը քննվեց ՀԿ/բ/Կ Կենտկոմի 1947թ. սեպտեմբերի 16-17-ին կայացած պլենումում, որտեղ «ծավալվեց սկզբունքային քննադատություն ոչ միայն կադրերի հետ տարվող աշխատանքի բնագավառում, այլեւ գաղափարական ճակատում թույլ տված սխալների նկատմամբ»[4]:

Որպեսզի պարզ լինի, թե ինչ սխալների մասին է խոսքը, մեջբերում կատարենք ՀամԿ/բ/Կ Կենտկոմի որոշումից. «Ղեկավար կուսակցական աշխատողների բոլշեւիկյան ճիշտ դաստիարակության գործին լրջորեն խանգարում են խոշոր թերությունները եւ սխալները գաղափարախոսական աշխատանքներում: ՀԿ/բ/Կ Կենտկոմը չի քննադատել գրականության, փիլիսոփայության եւ հատկապես Հայաստանի պատմության վերաբերյալ մի քանի գրքերում եղած սխալները եւ ազգայնական խեղաթյուրումները, չունի միջոցառումների ծրագիր հանրապետությունում գաղափարական աշխատանքները լրջորեն բարելավելու ուղղությամբ: Գրեթե չկան ձեռագիր ու տպագիր աշխատություններ Խորհրդային Հայաստանի պատմության վերաբերյալ: Գիտնականները աշխատում են, գլխավորապես, հեռավոր անցյալի եւ Հայաստանի հին մշակույթի իդեալականացման թեմաներ վրա: ՀԿ/բ/Կ Կենտկոմը հաշվի չի առնում, որ

---

[1] Նույն տեղում, 29 օգոստոսի:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 50, թ. 51:
[3] Նույն տեղում, գ. 208, թ. 53:
[4] Նույն տեղում, գ. 69, թ. 44:

հին Հայաստանի իդեալականացումը, որպես «ոսկե դար», սնունդ է տալիս ազգայնական մնացուկներին եւ խանգարում է աշխատողների բոլշեվիկյան դաստիարակությանը»: Այս ամենին պլենումում զեկուցող Գ.Հարությունյանը ավելացնում է, որ «թույլ տված սխալների արմատները, ինչպես գրականության եւ փիլիսոփայության մեջ, այնպես էլ պատմական աշխատություններում, գնում են դեպի բուրժուական ազգայնականություն, որը հանդես է գալիս հին Հայաստանի իդեալականացման ձեւով, այն ներկայացնելով միասնական, առանց ներքին սոցիալական հակամարտությունների եւ դասակարգային պայքարի, ժողովրդի բարձր ապրելակերպով, զարգացած տնտեսությամբ, մշակույթով, գիտությամբ, արվեստով, գրականությամբ, «հայ ժողովրդի անկախությունը եւ ինքնուրույն գոյությունը ապահովող» առաջադիմական եկեղեցիով»[1]:

Թե ինչ նկատի ուներ ՀամԿ/բ/Կ Կենտկոմը եւ ինչի մասին խոսվեց ՀԿ/բ/Կ Կենտկոմի պլենումում, ներկայացված է դրանից մոտ մեկ տարի հետո 1948թ. հունիսի 15-ին ՀամԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղար Ա.Կուզնեցովին հասցեագրած զեկուցագրում.

«1. Պրոֆեսոր Հ.Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» գիրքը, որը լույս է ընծայվել 1940թ., պարունակում է մի շարք մեթոդաբանական սխալներ: Հեղինակը պատկանում է լեզվաբանների հնդեվրոպական դպրոցին: ՀամԿ/բ/Կ Կենտկոմի որոշումից հետո գիրքը ենթարկվել էր սուր քննադատության:

2. Ռ.Զարյանի «Խաչատուր Աբովյանի կյանքը» գրքում, որը լույս է տեսել 1939թ., առկա է ապաքաղաքական մոտեցում ուսումնասիրվող թեմայի նկատմամբ: Հեղինակը գերագնահատել էր գերմանացի գիտնականների ազդեցությունը Խ.Աբովյանի աշխարհայացքի ձեւավորման գործում: ՀամԿ/բ/Կ Կենտկոմի որոշումից հետո Ռ.Զարյանն ազատվել էր պետհրատի գրական բաժնի վարիչի պաշտոնից:

3. ԳԱ իսկական անդամ Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» աշխատությունում թույլ են տրվել մեթոդաբանական սխալներ:

4. Խ.Սարգսյանի «Մ. Աբեղյանը եւ հայոց հին գրականության պատմությունը» գիրքը լույս է ընծայվել 1946թ, ուր հեղինակը ոչ միայն չէր քննադատել Մ.Աբեղյանի մեթոդաբանական սխալները, այլեւ գովաբանել դրանք: Սարգսյանի աշխատանքը սուր քննադատության ենթարկվեց ՀԿ/բ/Կ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումում:

5. Տ.Հախումյանի «Երկու ամիս ռազմաճակատում» գիրքը լույս է ընծայվել 1946թ., հեղինակը խեղաթյուրել է զինվորների ռազմաճակատային կյանքի իրականությունը: Գիրքը մամուլում ենթարկվել է սուր քննադատության:

6. Մ.Շահինյանի «Խորհրդային Անդրկովկաս» գիրքը, որը լույս է տեսել 1946թ., ակնարկների ժողովածու է: Առանձին ակնարկներում նա թույլ է տվել Անդրկովկասի ժողովուրդների ազգային ինքնասիրությունը վիրավորող արտահայտություններ: Նա Ղարաբաղն անվանել է «Հայաստանի ազնվական կտոր», այն Ադրբեջանի կազմում գտնվելը բնորոշել որպես «դեն նետված, քանդված երկիր»: Ավելացնենք, որ 1947թ. հունիսի 21-ին Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Մ.Բաղիրովը նամակով դիմել էր ՀամԿ/բ/Կ Կենտկոմ գիրքը շրջանառությունից հանելու

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց.27, գ. 4, թ. 19:

առաջարկով: Նրա պահանջը պաշտպանեցին ՀամԿ/բ/Կ Կենտկոմի ոչ անհայտ գործիչներ Ա.Ժդանովը եւ Մ.Սուսլովը[1]: Նրանց հանձնարարությամբ ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն 1947թ. նոյեմբերի 14-ին Մ.Շահինյանի գիրքը համարեց «քաղաքականապես վնասակար» եւ հանձնարարեց այն հանել շրջանառությունից[2]:

7. Բ.Ստաֆֆու «Ստեփան Շահումյան» վեպում, որը լույս է ընծայվել 1947թ., հեղինակը չի կարողացել բացահայտել եւ գեղարվեստականորեն ցույց տալ Ստ.Շահումյանի եւ նրա մարտական ընկերների կերպարները:

8. Մ.Կորյունի «Կամո» վիպակը, որը լույս է տեսել 1947թ., պարունակում է մի շարք գեղարվեստական եւ քաղաքական կարգի սխալներ: Վիպակը սուր քննադատության է ենթարկվել մամուլում:

9. Լյուսի Թարգյուլի «Ազնվականներ» պատմվածքը 1947թ. լույս է տեսել Փարիզի «Հայ կին» ամսագրում: 1946թ., Հայաստանի գրողների 2-րդ համագումարի օրերին, նա իր ձեռագիրն իրանահայ գրող Գարագաշի միջոցով փոխանցել էր արտասահման: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն 1948թ. մարտի 11-ին քննարկեց այդ հարցը եւ ընդունեց որոշում, որի հիման վրա գրողների միությունը Լ.Թարգյուլին հեռացրեց իր շարքերից:

10. Պրոֆեսոր Վ.Զալոյանի «Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը» գիրքը հրապարակվել է 1946թ.: Հեղինակը գրքում արհամարհել է դասակարգային պայքարի դերը Հայաստանում փիլիսոփայական մտքի ձեւավորման գործում: Նրա գիրքը սուր քննադատության ենթարկվեց սեպտեմբերյան պլենումում եւ մամուլում:

11. Պրոֆեսոր Հ.Գաբրիելյանի «Գալուստ Կոստանդյան» գիրքը հրապարակվել է 1946թ.: Հեղինակը Գ.Կոստանդյանին ներկայացրել է որպես «հետեւողական մատերիալիստ, այնինչ իրականում նա եղել էր գռեհիկ էվոլյուցիոնիստ»: Աշխատանքը հանդիսանում է «անցյալի իդեալականացման օրինակ: Գրքում գերագնահատվել է Գ.Կոստանդյանի ազդեցությունը եւ դերը Հայաստանում փիլիսոփայական մտքի զարգացման գործում»:

12. Պրոֆեսոր Ա.Ադամյանի «Հին հայերի գեղագիտական հայացքների պատմությունից» հոդվածը «հանդիսանում է անցյալը իդեալականացնելու եւ գեղագիտական հարցերի իդեալական մեկնաբանման» օրինակ: Նա ազատվել է ԳԱ փիլիսոփակության սեկտորից եւ տեղափոխվել աշխատանքի արվեստի սեկտոր:

13. Ակադեմիկոս Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատությունը /1945թ./ ունի մեթոդաբանական սխալներ:

14. Հ.Հարությունյանի «Վարդանանց պատերազմը» գրքում հստակորեն չի տրված «5-րդ դարի հայկական հասարակության դասակարգային կառուցվածքը, գերագնահատված է եկեղեցու դերը եւ նախարարական տների նշանակությունը»:

15. ԳԱ իսկական անդամ Աբ.Հովհաննիսյանի «Հովսեփ Էմին» /1945թ./ եւ «Ռուսաստանը եւ հայ ազատագրական շարժումը 18-րդ դարի 80-ական թվականներին» մենագրություններում, մասնավորապես, առաջինում գովաբանված է Անգլիայի 18-րդ դարի մշակույթը, առանձին անգ-

---

[1] Գրիգոր Հարությունյան, Կյանքը եւ գործունեությունը, էջ 8:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 34, թ 50:

լիական գործիչների այսպես կոչված «հումանիզմը»: Նրա երկրորդ մենագրությունը 1950թ. ապրիլի 5-ին դարձելէ ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի քննարկման առարկա: Մինչ այդ, «Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ լրաբերում» հրապարակվել է Հ.Աբդուլլաեւի գրախոսականը Աբ.Հովհաննիսյանի մենագրության մասին, որտեղ վերջինս մեղադրվում է «պատմական իրադարձությունները լուսաբանելիս բուրժուա-ազգայնական հայացքներ» վերածնելու մեջ[1]: Միաժամանակ գրախոսության մեջ հայկական պետականության վերականգնման փորձերը համարվել են արկածախնդրություն, իսկ հայկական ազգային-ազատագրական շարժման գործիչները՝ առեւտրականներ եւ ֆեոդալա-կղերական գործամոլներ: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն, ելնելով «հայ եւ ադրբեջանական ժողովուրդների բարեկամության ամրապնդման» շահերից, նշում է գրքի «մի շարք լուրջ թերություններ եւ սխալներ»[2]:

16. Ե.Տեր-Մինասյանի «Ոսկե դարի հայ գրականությունը» գրքույկը /1946թ./ հանդիսանում է «անցյալի իդեալականացման եւ 5-րդ դարը հայ ժողովրդի պատմության «ոսկե դար» համարելու օրինակ»:

17. Ս.Կարապետյանի «Սովետական Հայաստանի 20 տարին» գրքույկի /1940թ/ առաջաբանում տեղ են գտել «Հայաստանի պատմության առանձին հարցերի ոչ ճիշտ մեկնաբանություններ»: Գրքույկում Տիգրան Բ-ն անվանվել էր «Հայաստանի ամենախոշոր առաջադիմական արքաներից մեկը»:

18. Հ.Մամիկոնյանի «Հոֆմանի սատիրան» թեկնածուական ատենախոսությունում կան արեւմուտքի մշակույթի առջեւ խոնարհվելու տարրեր:

19. Գ.Սարգսյանի «Վարուժանի ստեղծագործական կյանքը» հանրամատչելի գրքույկում /1947թ/ հեղինակը Դ.Վարուժանի կենսագրությունը ներկայացնելիս օգտագործել էր դաշնակցական նախահեղափոխական մամուլից փաստեր /«Ազատամարտ», «Անահիտ», «Հայրենիք» եւն./: Նա «թույլ է տվել կոպիտ քաղաքական սխալ, հիշատակելով առանձին հրապարակախոսների նշանավոր դաշնակների /Ռ.Զարդարյան, Գր.Նազարյան, Սիրունի, Հակոբ Օշական եւ ուրիշներ/: Հեղինակը իր քաղաքական կուրությամբ հասել է անհեթեթության, իբրեւ արեւմտահայ գրականության իրենց ժամանակի լավագույն ներկայացուցիչներ բնութագրելով Կոմիտասին, Սիամանթոյին, Վ.Թեքեյանին, Ռ.Զարդարյանին, Գր.Նազարյանին, Պ.Թերլեմեզյանին»[3]: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն 1949թ. հունվարի 18-ին քննարկելով գրքույկի հարցը, այն համարեց «քաղաքականապես վնասակար», որոշեց հանել շրջանառությունից[4]:

Սահմանափակվելով միայն պատմաբաններով, գրականագետներով, փիլիսոփաներով եւ մի կողմ թողնելով գրողներին, արվեստագետներին /Դ.Դեմիրճյան, Ս.Զորյան, Ն.Զարյան, Ս.Տարոնցի, Ն.Տոկարսկի/, անհրաժեշտ է նշել, որ սխալների համար տրվող պատիժները, ի տարբերություն 30-ական թվականների, «մեղմ» էին, հիմնականում՝ աշխատանքից ազատում: Կենսագործելով գաղափարական ճակատում թույլ տված սխալների վերացման գծով ՀԱՄԿ/բ/Կ Կենտկոմի որոշումը, ՀԿ/բ/Կ Կենտ-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 30, գ. 48, թ. 44:
[2] Նույն տեղում, գ. 28, թ. 54:
[3] Նույն տեղում, ց. 29, գ. 75, թթ. 123-124:
[4] Նույն տեղում, գ. 33, թ. 106:

կոմը 1947թ. դեկտեմբերի 16-ին ընդունեց «Հայաստանի կուսակցական կազմակերպությունում գաղափարախոսական աշխատանքների ուժեղացման միջոցառումների մասին» որոշումը: Ներկայացված են «Հայաստանում գաղափարախոսական ճակատի աշխատանքներում թույլ տված սխալները եւ դրանց շտկման կոնկրետ միջոցառումները»[1]: «Փաստերը վկայում են,- կարդում ենք որոշման մեջ,- որ ՀԽՍՀ գաղափարախոսական աշխատողների մի մասը մինչեւ վերջ չի հաղթահարել բուրժուա-ազգայնական գաղափարախոսության անցյալի ժառանգության մնացուկները»[2]: Ապա, ըստ 7 բաժինների, տրված են այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ էին ՀամԿ/բ/Կ Կենտկոմի օգոստոսի 27-ի որոշումը կենսագործելու, սխալները շտկելու համար:

Արդյունքում, 1947-48թթ. լայնածավալ տեղաշարժեր կատարվեցին ՀԿ/բ/Կ Կենտկոմի, քաղկոմ-շրջկոմների գաղափարախոսական աշխատանքներում: Իրենց զբաղեցրած պաշտոններին չհամապատասխանելու համար ազատվեցին քաղկոմ-շրջկոմների 62 քարտուղար, բաժնի վարիչ ու Կենտկոմի պատասխանատու աշխատող: Միաժամանակ, կուսակցական աշխատանքի առաջ քաշվեցին «քաղաքականապես պատրաստ 250 աշխատող՝ մտավորականության շրջանից, ինչի շնորհիվ բարձրագույն կրթություն ունեցող շրջկոմների քարտուղարների քանակը 28 տոկոսից հասավ 41-ի»[3]: Միեւնույն ժամանակ, լուրջ փոփոխությունների ենթարկվեց գիտական հաստատությունների աշխատակազմը: «Թույլ ղեկավարության եւ քաղաքական վստահություն չներշնչելու համար» ազատվեցին ԳԱ գրականության ինստիտուտի տնօրեն Խ.Սարգսյանը, տնտեսագիտության սեկտորի վարիչ Ս.Խրիմյանը: Միայն առաջին՝ թույլ ղեկավարության համար պիտակով աշխատանքից ազատվեցին նաեւ պատմության ինստիտուտի տնօրեն Մ.Ներսիսյանը եւ փիլիսոփայության սեկտորի վարիչ Հ.Ասլանյանը: Գրականության ինստիտուտից «քաղաքական վստահություն չներշնչելու» համար ազատվեցին պրոֆեսորներ Հ.Գյուլիքեվխյանը, Կ.Մելիք-Օհանջանյանը եւ Ե.Տեր-Մինասյանը: Ընդհանուր առմամբ, աշխատանքից ազատվեց 84 գիտաշխատող, որոնցից իրենց զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու համար՝ 34 մարդ, համատեղ աշխատելու համար՝ 20 մարդ եւ քաղաքական դրդապատճառներով՝ 27 մարդ[4]:

Գիտահետազոտական ինստիտուտների աշխատանքների հսկողությունն ուժեղացնելու նպատակով ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն պարբերաբար քննարկում էր դրանց աշխատանքի դրվածքը: 1947թ. քննարկվում է ԳԱ պատմության ինստիտուտի աշխատանքը: Բյուրոյի որոշմամբ ստեղծվեց խորհրդային ժամանակաշրջանի սեկտոր եւ ընդլայնվեց նոր պատմության սեկտորը: Հիմնովին փոխվեց գիտա-հետազոտական աշխատանքների ծրագիրը, շեշտը դրվեց Հայաստանում «դասակարգային պայքարի եւ հեղափոխական շարժումների, հայ-ռուսական հարաբերությունների պատմության, սոցիալիստական շինարարության» եւ այլ խնդիրների վրա[5]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 69, թ. 45:
[2] Նույն տեղում, ց. 27, գ. 37, թ. 16:
[3] Նույն տեղում, ց. 28, գ. 69, թ. 91:
[4] Նույն տեղում, թթ. 102-103
[5] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 32, թթ. 50-53:

Նույն թվին քննարկվում է գրականության ինստիտուտի աշխատանքի հարցը: Ինստիտուտում ստեղծվում է խորհրդահայ գրականության սեկտոր, աշխատանքից ազատվում են ինստիտուտի տնօրենը եւ մի քանի «հին պրոֆեսորներ», որոնց մասին նշվեց վերեւում: Վերանայվեց գիտա-հետազոտական աշխատանքների պլանը[1]:

Քննարկվեցին նաեւ լեզվի ինստիտուտի /1948թ./, փիլիսոփայության սեկտորի /1947թ./ աշխատանքների հարցերը: 1948թ. քննարկվեց ԳԱ տնտեսագիտության սեկտորի աշխատանքների հարցը: Կենտկոմի որոշմամբ հիմնովին փոխվեց սեկտորի գիտա-հետազոտական աշխատանքների թեմատիկան, շեշտը դրվեց խորհրդային թեմատիկայի վրա[2]:

ՀԿ/բ/Կ Կենտկոմը տնտեսագիտական հարցերին կրկին անդրադարձավ 1948թ. կեսին, երբ քննում էր Հ. Թումանյանի «Հայաստանի էկոնոմիկայի զարգացումը 19-րդ դարի սկզբից մինչեւ սովետական իշխանության հաստատվելը» գրքի հարցը: Գիրքը, ըստ որոշման, «լուրջ թերությունների հետ մեկտեղ ուներ նաեւ կոպիտ քաղաքական «սխալներ», մասնավորապես «անբավարար էր մերկացված դաշնակների հակաժողովրդական քաղաքականությունը, որպես անգլո-ամերիկյան իմպերիալիստների գործակալներ», ինչի համար գիրքը հանվում է շրջանառությունից[3]: Նման որոշում ընդունելու համար առիթ էր ծառայել ՀԿ/բ/Կ Կենտկոմի դասախոսական խմբի կողմից գրքի քննարկումը, որի արդյունքների մասին Գ.Հարությունյանին ներկայացրած զեկուցագրից պարզվում է, որ գրքում «անտեսվել են նաեւ բանվորների հեղափոխական պայքարը Անդրկովկասի բոլշեւիկյան կազմակերպության ղեկավարությամբ, չի բացահայտվել, որ դաշնակները եղել եւ մնում են միջազգային իմպերիալիզմի գործակալներ»: Հեղինակը, գրքում բերելով Երեւանի նահանգի գործարանների եւ ֆաբրիկաների 1864թ. տվյալները, կատարել է սխալ եզրակացություն «Հայաստանում արտադրության կապիտալիստական միջոցի բացակայության» մասին: Ի՞նչն էր առիթ ծառայել գրքի նկատմամբ նման վերաբերմունքի, պարզ էր դառնում զեկուցագրի վերջին էջից: Հ.Թումանյանը ներկայացրել էր գյուղատնտեսության բերքատվության տվյալները 19-րդ դարի 1-ին կեսի վերաբերյալ, որն ավելի բարձր էր, քան Խորհրդային Հայաստանում՝ նախապատերազմյան տարիներին, ինչը, համաձայն փաստաթղթի, «այդ ժամանակ չէր կարող լինել»[4]:

Բուհերում մարքսիզմ-լենինիզմի հիմունքների եւ քաղաքատնտեսության դասավանդման բարելավման նպատակով ստուգվեցին եւ բյուրոյում քննարկվեցին գյուղատնտեսական ինստիտուտի /1948թ. հունվարի 14-ին/ եւ Երեւանի Մոլոտովի անվան պետական համալսարանի /1948թ. փետրվարի 26-ին/ մարքսիզմ-լենինիզմի հիմունքների ամբիոնների, ինչպես նաեւ Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի քաղաքատնտեսության ամբիոնի /1948թ. ապրիլի 16-ին/ աշխատանքները[5]:

---

[1] Նույն տեղում, գ. 33, թթ. 34-36:
[2] Նույն տեղում, ց. 28, գ. 40, թ. 57:
[3] Նույն տեղում, գ. 48, թ. 120
[4] Նույն տեղում, ց. 27, գ. 59, թթ. 282-288:
[5] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 40, թ. 58, գ. 42, թթ. 107-109, գ. 44, թթ. 94-96:

Ընդունված որոշումների հիման վրա «վերակառուցվեցին բոլոր բուհերի հումանիտար ամբիոնների ինչպես գիտական, այնպես էլ ուսումնա-մանկավարժական աշխատանքները»[1]:

1947-48թթ. ՀԿ/բ/Կ Կենտկոմը պարբերաբար ուսումնասիրում էր թերթերի ու ամսագրերի վիճակը: ՀԿ/բ/Կ Կենտկոմում քննվեցին «Սովետ երմանիստան», «Սովետական Հայաստան», «Կոմունիստ», Լենինականի «Բանվոր», Կիրովականի «Սոցիալիստական արշավ» թերթերի, «Սովետական Հայաստան», «Սովետական գրականություն եւ արվեստ» ամսագրերի աշխատանքների մասին հարցերը[2]: Մամուլի նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու ու «գաղափարազուրկ եւ վնասակար» հոդվածների հրապարակումը կանխելու համար հանրապետական երեք՝ «Սովետական Հայաստան», «Կոմունիստ» եւ «Սովետ երմանիստան» թերթերի ամենամսյա թեմատիկ պլանները հաստատվում էին ՀԿ/բ/Կ Կենտկոմի, իսկ շրջանային թերթերինը՝ շրջկոմների բյուրոներում[3]:

1948թ. սկզբին ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն քննեց ռադիոֆիկացիայի վիճակը եւ ընդունեց «Հանրապետության ռադիոֆիկացիայի զարգացման միջոցառումների մասին» որոշումը: 1948թ. հունիսին 1138 վայրերից ռադիոֆիկացված էին 336-ը՝ 38585 ռադիոկետերով: Բացի այդ, կային նաեւ 26 գերատեսչական ռադիոհանգույցներ՝ 1292 կետերով: 1947թ. օգոստոսին ռադիոկոմիտեում կազմակերպվեց արտասահմանյան հաղորդումների խմբագրություն: Այդ հաղորդումները հեռարձակվում էին ամեն օր 2-ական ժամ: Արտասահմանում ապրող հայերի համար հաղորդվում էին «ՏԱՍՍ-ի համամիութենական եւ արտասահմանյան տեղեկատվությունը, հանրապետության տնտեսական աճը եւ մշակութային նվաճումները, բնակչության բարեկեցության վերելքը եւ հատկապես ներգաղթած հայերին սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելը բնութագրող հոդվածներ, զրույցներ, ակնարկներ եւ այլ նյութեր»[4]:

Հայաստանի կուսկազմակերպությունները մեծ ուշադրություն էին դարձնում բնակչության շրջանում «մարքսիզմ-լենինիզմի գաղափարների քարոզչության, բոլշեւիկյան կուսակցության պատմության եւ տեսության ուսուցման» աշխատանքների կազմակերպմանը: 1948թ. ինքնուրույն կերպով բոլշեւիզմի պատմությունը եւ տեսությունը ուսումնասիրում էր 21 հազար մարդ: Նույն թվին գործում էին ՀամԿ/բ/Կ պատմություն ուսումնասիրող 476 խմբակ՝ 8650 ունկնդիրներով եւ Լենինի ու Ստալինի կենսագրությունն ուսումնասիրող 581 խմբակ՝ 12.602 ունկնդիրներով: Կոմունիստների քաղաքական գիտելիքները բարձրացնելու համար ստեղծվել էին 423 քաղդպրոց, որտեղ ընդգրկված էր 8.244 մարդ: 1947-48թթ. ընթացքում գաղափարախոսական աշխատողներին եւ բոլշեւիզմի պատմությունն ու տեսությունն ինքնուրույն ուսումնասիրողներին օգնելու համար «Սովետական Հայաստան» թերթում տպագրվեց 122, իսկ «Կոմունիստում»՝ 67 քարոզչական հոդված եւ խորհրդատվություն:

Վերոհիշյալ միջոցառումներին զուգահեռ ստեղծվում էր կուսակցական ուսուցման առկա համակարգ: 1946թ. նոյեմբերին ՀԿ/բ/Կ Կենտ-

---

[1] Նույն տեղում, գ. 69, թ. 56:
[2] Նույն տեղում, ց. 27, գ. 32, թ. 47-49, գ. 36,թ. 38, ց. 28, գ. 43, թ. 43-46, գ. 45, թ. 74-78, գ. 48, թ. 111-119, գ. 49, թթ. 68-70, 129-131:
[3] Նույն տեղու, ց. 28, գ. 51, թ. 66-73:
[4] Նույն տեղում, գ. 69, թթ. 62-63:

կոմին կից կուսակցական միամյա դպրոցը վերակազմավորվում է երկամյայի, որտեղ 1948թ. սովորում էր 292 կուսակցական, խորհդային եւ կոմերիտական աշխատող: 1947թ. նոյեմբերի 1-ին կազմակերպվում է ՀԿ/բ/Կ Լենինականի քաղկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի երեկոյան համալսարանը, որտեղ սովորում էր 90 մարդ, իսկ նրա երկաթուղային հանգույցի մասնաճյուղում եւս 90 մարդ: Ընդլայնվում է ՀԿ/բ/Կ Երեւանի քաղկոմին կից մաքսիզմ-լենինիզմի երեկոյան համալսարանը /ստեղծվել էր 1944թ./, մասնաճյուղեր են բացվում գրողների միությունում, պետանվտանգության եւ ներքին գործերի նախարարություններում: Համալսարանում սովորում էր 1335 մարդ: Հայաստանի բոլոր 38 շրջաններում գործում էին երեկոյան կուսդպրոցներ, որտեղ ընդգրկված էր 1350 մարդ[1]:

Հետպատերազմյան տարիներին, չնայած թղթի պակասին եւ տպագրական կարողությունների անբավարարությանը, մեծ ուշադրություն էր դարձվում մարքսիզմ-լենինիզմի դասականների ստեղծագործությունների հրատարակմանը: 1947-48թթ. հայերեն լեզվով հրատարակվել էին Ստալինի երկերի առաջին երեք հատորները, Լենինի երկերի 4-րդ հրատարակության 3-րդ հատորը, Մարքսի «Կապիտալի» 3-րդ հատորի առաջին մասը, նրանց առանձին մեծաքանակ ստեղծագործությունները, Ստալինի կենսագրությունը 50 հազար տպաքանակով եւ այլն: ՀամԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղարներին հասցեագրված զեկուցագրում ՀԿ/բ/Կ Կենտկոմը վերոհիշյալ միջոցառումները համարում էր «գաղափարախոսական ճակատում Հայաստանի կուսակցական կազմակերպությունների աշխատանքների վերակառուցման միայն սկիզբը»: Միաժամանակ ավելացվում է, որ «դեռեւս կան շատ թերություններ եւ պահանջվում է շատ աշխատանք լիովին կատարելու այն խնդիրները, որ ՀամԿ/բ/Կ Կենտկոմը դրել է Հայաստանի կուսակցական կազմկերպությունների առջեւ»[2]:

Իրականացրած միջոցառումները շուտով տալիս են իրենց առաջին «պտուղները»: Հանրապետության հրատարակչությունները դադարում են տպագրել պատմական թեմաներով ստեղծագործություններ: Անանախադեպ չափերի է հասնում գրաքննությունը: Ի նշան բողոքի «Պրավդա» թերթի 1949թ. սեպտեմբերի 12-ի առաջնորդող հոդվածի այն հաղորդմանը, որ «Հայաստանի հրատարակիչների հայացքը դեռեւս հառած է հեռավոր անցյալին, իսկ ժամանակակից թեմաներով գրքեր այստեղ համեմատաբար քիչ են հրատարակվում», Հայպետհրատի տնօրենը հայտնում է ՀԿ/բ/Կ Կենտկոմ, որ 1949թ. լույս չի տեսել պատմական թեմայով ոչ մի գիրք, եւ ծրագրով ոչինչ չի նախատեսվում[3]:

1947թ. ապրիլին գրաքննության բոլոր մարմիններին ուղարկվում է ԽՍՀՄ նախարարների խորհրդին առընթեր մամուլում ռազմական եւ պետական գաղտնիքների պահպանության լիազորի՝ «Հրատարակության արտադրանքի նկատմամբ քաղաքական-գաղափարական հսկողության ուժեղացման մասին» թ.18/1045 գաղտնի շրջաբերականը, որը բարձրացնում էր գրաքննության պատասխանատվությունը գաղափարական բովանդակությամբ հրատարակությունների հանդեպ եւ պահանջում էր «վճռականորեն կասեցնել քաղաքական անհոգությունն ու ձեւական վե-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 69, թթ. 59-60:
[2] Նույն տեղում, թ. 65-66:
[3] Նույն տեղում, ց. 29, գ. 290, թ. 172:

ռաբերմունքը գործի նկատմամբ»[1]: Միաժամանակ, հանձնարարվում է գաղափարախոսական բնույթի ամեն միջամտության մասին անմիջապես հայտնել կուսակցական մարմիններին: Ըստ դրա, Հայաստանի գրաքննությունը, որն այդ տարիներին անվանվում էր ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր գրականության եւ հրատարակչության գլխավոր վարչություն /Գլավլիտ/, հսկողություն է սահմանում հրատարակության բոլոր բնագավառների վրա: 1947 մարտին ՀԽՍՀ Գլավլիտը հայտնում է ՀԿ/բ/Կ Կենտկոմ, որ արգելվել է «Ավանգարդ» թերթի կողմից տպագրության հանձնված «Երգը» վերնագրով պատմվածքը, որը լավագույնն էր ճանաչվել կարճ պատմվածքների մրցանակաբաշխությունում: Ինչպես նշված է զեկուցագրում, «պատմվածքում միանգամայն կեղծ եւ աղճատված ձեւով են ցույց տրված սովետական զորքերի գործողությունները գերմանա-ֆաշիստական հրոսակների դեմ: Սովետական զորքերի նահանջը պատկերված է ոչ թե ստրատեգիական նպատակներով, որի ժամանակ մեր զինվորները միշտ տոգորված էին հակագրոհի եւ հաղթանակի հավատով, այլ նկարագրված է խուճապահար փախուստ, երբ իբր թե բոլորը գլուխները կորցրել էին եւ հուսալքվել թշնամու իբր անհաղթելի ուժերի առաջ, ինչպես պատկերել է հեղինակը»[2]:

1948թ. սեպտեմբերին Գլավլիտը տեղյակ է պահում ՀԿ/բ/Կ Կենտկոմին, որ պետական համալսարանի Ն.Մառի անվան կաբինետի գիտական աշխատությունների ժողովածուի մեջ ընդգրկված է Տ.Ղազարյանի հոդվածը միջնադարյան Հայաստանի մշակութային-պատմական վերելքի մասին: Այն «հարուցում է մի շարք լուրջ կասկածներ նրա պատմական մեթոդաբանական անշեղության տեսանկյունից»: Գլավլիտի կարծիքով, հոդվածն ունի հետեւյալ «խեղաթյուրումներն ու թերությունները». «Շարադրելով Հայաստանում մշակութային վերելքի պատմությունը, հեղինակը չի բացահայտում եւ չի վերլուծում միջնադարյան հայկական հասարակայնության ու գաղափարախոսության ներքին դասակարգային հակասությունները: Հեղինակը, հավանաբար, ելել է հակամարքսյան վնասակար «միասնական», անբաժան ազգային մշակույթի հիմնադրույթից եւ դա գաղափարախոսական աշխատանքի մասին ՀամԿ/բ/Կ եւ ՀԿ/բ/Կ Կենտկոմների հայտնի որոշումներից հետո»[3]:

1949թ. փետրվարին Գլալիտը հայտնում է ՀԿ/բ/Կ Կենտկոմ, որ հրաման է արձակված հանրային գրադարաններից եւ գրքի առեւտրի շրջանառությունից հանել Ե.Տեր-Մինասյանի «Ոսկեդարյան հայ գրականությունը» գրքույկը՝ իբրեւ «քաղաքականապես վնասակար ստեղծագործություն, որի արատավոր լինելու մասին ցուցում կար ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի 1947թ. դեկտեմբերի 16-ի որոշման մեջ»[4]: Այս բոլոր միջամտությունները Կենտկոմի կողմից ընդունվում են ի գիտություն: Սակայն մեկ անգամ ՀԿ/բ/Կ Կենտկոմն ունենում է առարկություն: 1952թ. ապրիլին ՀԽՍՀ Գլավլիտի պետ Ա.Պետրոսյանը դիմում է Կենտկոմ, որ 1946թ. հրապարակված «Հայ գրականության ընտիր էջեր հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը» գրքում ՀԿ/բ/Կ Կենտկոմի համաձայնությամբ ընդգրկված են նաեւ Ե.Չարենցի մի քանի ստեղծագործություններ, չնայած

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 55, թթ. 102-109:
[2] Նույն տեղում, ց. 27 գ. 59, թ. 91:
[3] Նույն տեղում, ց. 28, գ. 205, թ. 37:
[4] Նույն տեղում, ց. 29, գ. 109, թ. 393:

նրան, որ նա արգելված հեղինակների ցուցակում է: Ապա նշվում է, որ «ԽՍՀՄ գլավլիտը պահանջում է լուծել Ե.Չարենցի հարցը եւ վերացնել այն հակասական վիճակը, երբ ստեղծագործությունը առկա է բաց հրատարակությունում, իսկ հեղինակը հիշատակվում է արգելվածների ցուցակում: ԽՍՀՄ Գլավլիտը հայտնել է, որ այդպիսի վիճակն ապակողմնորոշում է գրաքննության մարմիններին եւ դժվարացնում գրադարանները մաքրել արգելված ստեղծագործություններ պարունակող գրականությունից»: Գրության վրա կա Կենտկոմի քարտուղար Զ.Գրիգորյանի մակագրությունը. «Բացատրել ընկ. Պետրոսյանին, որ վերանայել Չարենցի հարցը եւ, հետեւաբար, նրա ստեղծագործությունները հանել շրջանառությունից չենք կարող»[1]:

Մտավոր կյանքի հսկողության ուժեղացման ձեռնարկումներից էր նաեւ արտասահմանյան երկրների հետ մասնավոր կապերի իսպառ խզումը եւ խորհրդային ընթերցողի համար նախատեսված մամուլի, գեղարվեստական եւ գիտական գրականության արտասահման ուղարկելու արգելքը: Արդեն 1946թ. գարնանը, երբ դեռ ընդունված չէր «Զվեզդա» եւ «Լենինգրադ» ամսագրերի մասին որոշումը, ԽՍՀՄ Նախարարների խորհրդի մամուլում ռազմական եւ պետական գաղտնիքների պահպանման գծով լիազորությունից Հայաստանի ղեկավարության անունով ստացվում է մարտի 25-ով թվագրված գրությունը, որով արգելվում էր արտասահման ուղարկել «Գրական թերթ» եւ «Ավանգարդ» թերթերը, իսկ «Սովետական Հայաստան» թերթը թույլատրվում էր ուղարկել ընդամենը 120 օրինակ: Այդ սահմանափակումն անակնկալ էր հանրապետության ղեկավարության համար, ուստի մայիսի 14-ին հեռագրով, իսկ մայիսի 18-ին հատուկ գրությամբ ՀԿ/բ/Կ Կենտկոմի գաղափարախոսության գծով քարտուղարը բողոքում է ՀամԿ/բ/Կ Կենտկոմի քարոզչության վարչության պետ Գեորգի Ալեքսանդրովին: Մասնավորապես, նշվում էր, որ «Մեժդունարոդնայա կնիգա» ընկերությունն անբարեխղճորեն է տարածում «Սովետական Հայաստան» ամսագիրն արտասահմանի հայերի շրջանում: Իրանից, Լիբանանից, Բուլղարիայից եւ այլ երկրներից վերադարձած գործուղվածները հայտնում են, որ այդ ամսագիրը ստացվում է անկանոն, մեծ ուշացումներով, չնայած սփյուռքահայության կողմից մեծ պահանջարկին ու հետաքրքրությանը: Նույն կարելի էր ասել նաեւ մյուս հրատարակությունների, ինչպես նաեւ գիտական ու գեղարվեստական գրականության կապակցությամբ, այն դեպքում, երբ Հայաստանից դրանք Մոսկվա ուղարկվում էին ժամանակին ու կանոնավոր: Հայաստանի ղեկավարությունը խնդրում էր Ալեքսանդրովի ցուցումները՝ համապատասխան կազմակերպություններին՝

«1. Արտասահմանյան հայկական առաջադիմական կազմակերպություններին եւ ընկերություններին «Գրական թերթ» եւ «Ավանգարդ» թերթերի անարգելք առաքելու մասին:

2. Վերոհիշյալ կազմակերպություններին հանրապետական «Սովետական Հայաստան» թերթի, «Սովետական գրականություն եւ արվեստ» ամսագրի, ինչպես նաեւ գեղարվեստական ու գիտական գրականության առաքման սահմանափակումը հանելու մասին:

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 32, գ. 84, թ. 71:

3. «Մեժդունարոդնայա կնիգա»-ով ՀԽՍՀ–ից արտասահման ուղարկվող «Սովետական Հայաստան» եւ այլ հրատարակությունները կանոնավոր առաքելու մասին»[1]:

Սակայն, անհայտ է՝ Կենտրոնը որեւէ միջոցի դիմեց, թե ոչ: Փաստ է, սակայն, որ իշխանություններն, ամեն ինչ անում էին խորհրդային ժողովրդին հեռու պահելու «արեւմուտքի վնասակար ազդեցությունից», արգելակում էին խորհրդային ընթերցողի համար նախատեսված գրականության եւ մամուլի տարածումը արտասահմանում: 1947թ. դեկտեմբերի 16-ին ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահությունը ընդունում է «ԽՍՀՄ պետական հիմնարկների եւ նրանց պաշտոնատար անձանց արտասահմանյան հիմնարկների եւ նրանց պաշտոնատար անձանց հետ հաղորդակցության կարգի մասին» հրամանագիրը, որով արտասահման գործուղման մեկնող պաշտոնային արգելվում էր ԽՍՀՄ-ից տանել գրականություն, ձեռագրեր եւ տպագիր ստեղծագործություններ[2]:

Կատարելով հրամանագիրը՝ ԽՍՀՄ Գլավլիտը հանրապետական մարմիններին հանձնարարեց արգելել տպագիր հրատարակությունները արտասահման ուղարկելը[3]: Ըստ այդ ցուցումի՝ ՀԽՍՀ Գլավլիտը 1948թ. մարտին արգելեց «Սովետական Հայաստան» ամսագրի պատրաստի համարների առաքումը արտասահման: Կրկին միջամտում է ՀԿ/բ/Կ Կենտկոմը, եւ դարձյալ խնդրում Համկ/բ/Կ Կենտկոմի միջնորդությունը արգելքը վերացնելու համար[4]: Հասկանալի է, Կենտրոնը ձգտում էր հսկողության տակ պահել արտասահմանի հետ շփման ցանկացած ոլորտ պաշտոնյաների, մտավորականների, հասարակական /իրականում պետական կազմակերպությունների կողմից իրականացվող/: 1944թ. ստեղծված Արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերությունը ԽՍՀՄ-ի եւ ՀԽՍՀ-ի նվաճումների մասին հոդվածներ էր ուղարկում Ամերիկայում, Եվրոպայում եւ Մերձավոր Արեւելքում հրատարակվող ավելի քան 60 հայկական թերթերի եւ ամսագրերի: Այդ հոդվածները համապատասխան իրավասու մարմիններում /Գլավլիտ, ԱԳՆ, ՀԿ/բ/Կ Կենտկոմի գաղափախոսության եւ քարոզչության բաժին/ հաստատվելուց հետո ռուսերեն համառոտ թարգմանությամբ ուղարկվում էին Արտասահմանի հետ մշակութային կապի համամիութենական ընկերություն, որը դրանք առաքում էր արտասահման: 1947թ. հունիսի 13-ին համամիութենական ընկերությունը հայտնում է հայկական ընկերությանը, որ արտասահման ուղարկվող նյութերը պետք է ուղեկցվեն ռուսերեն ամբողջական թարգմանությամբ[5]: Դա բացատրվում էր այսպես. «Այդ նյութերը, թեեւ ունեն ՀԽՍՀ Գլավլիտի համաձայնությունը, սակայն Համամիութենական ընկերությունը չի կարող դրանք արտասահման առաքել մեխանիկորեն: Գլավլիտի համաձայնությունը, որ հաստատում է, թե պատրաստված նյութերը պետական գաղտնիք չեն բացահայտում, ակնարկների գեղարվեստական որակի գնահատական չէ, ինչպես նաեւ չի որոշում այդպիսի հոդվածների այս կամ այն երկիրը ուղարկելու նպատակահարմարությունը: Համամիութենական ընկերությունը չունի աշխատակիցներ, որոնք կարող էին

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 48, թ. 171, գ. 49, թթ. 60-61:
[2] ԽՍՀՄ Գերգույն խորհրդի տեղեկագիր, 1948, 25 հունվարի, թ. 5, էջ 504:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 205, թ. 9:
[4] Նույն տեղում, գ. 206, թ. 14:
[5] Նույն տեղում, թ. 36:

հայերեն կարդալ եւ տալ եզրակացություն այս կամ այն հոդվածի առաքման նպատակահարմարության, նրա որակի մասին եւ այլն»: Ի՞նչ էր սա նշանակում: Առաջին, հայկական ընկերության ծախսերի նախահաշվում թարգմանությունների համար հոնորար չէր նախատեսված: Երկրորդ, այդպիսի համակարգի դեպքում, երբ սկզբից տեղում մշակվում էին հայկական տեքստերը, ապա թարգմանվում ռուսերեն, այնուհետեւ սպասում, մինչեւ համամիութենական ընկերությունից կստացվեին ուղղված ռուսերեն տեքստերը, հետո հայերեն տեքստերը նորից մշակվում էին եւ ուղարկվում Մոսկվա՝ արտասահման առաքելու համար, այդ գործընթացը կտեւեր բավական երկար ժամանակ եւ նյութերի մեծ մասը կկորցներ իր արդիականությունն ու նպատակահարմարությունը: Սրան ավելացավ նաեւ այն, որ Մոսկվայի ցուցումների համաձայն ՀԽՍՀ Գլավլիտը հրաժարվեց այդ նյութերը քննարկել եւ դրանց թույլատրություն տալ[1]:

Սա արդեն նշանակում էր հայկական ընկերության գործունեության իսպառ դադարեցում, որովհետեւ արտասահմանյան երկրների հետ շփումների բացակայության պայմաններում ընկերությունը հիմնականում զբաղված էր գաղափարախոսական ու քարոզչական նյութերի արտասահման առաքումով: 1947թ. երկրորդ կեսին պատրաստված մեծաքանակ քարոզչական նյութերը /ծախսվել էր 350 հազար ռուբլի/ մնացել էին տեղում: ՀԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղար Զ.Գրիգորյանը 1948թ. մայիսի 25-ին կրկին դիմում է ՀամԿ/բ/Կ Կենտկոմի քարոզչության վարչություն՝ խնդրելով հանձնարարել կենտրոնական իրավասու մարմիններին վերականգնել արտասահման նյութեր ուղարկելու նախկին կարգը, որը հնարավորություն կտար վերսկսել Հայկական ընկերության կանոնավոր աշխատանքը[2]:

Վերոհիշյալ փաստերը հիմք են տալիս ենթադրելու, որ պատերազմի տարիների քարոզչական նկատառումներով ստեղծված հանրապետական որոշ մարմիններ հետպատերազմյան շրջանում Կենտրոնի համար կորցրել էին իրենց նշանակությունը, եւ եթե դրանք չէին փակվում, ապա միեւնույն ժամանակ գործունեության հնարավորություն չունեին: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ մտավորականության նկատմամբ գաղափարական ճնշման ուժեղացմանն իրենց ծառայությունն էին մատուցում առանձին «վայ գիտնականներ», որոնք իրենց «դիմումներով, նյութերով» կրակին յուղ էին լցնում եւ առիթ ծառայում նույնիսկ մարդկային ողբերգությունների: Քննարկվող ժամանակաշրջանում հատկապես «աչքի էր ընկնում» փիլիսոփայական գիտությունների թեկնածու Արամայիս Կարապետյանը, որն իր դիմումներով, ելույթներով հաճախ ստիպում էր կուսակցական մարմիններին արձագանքել եւ ընդունել համապատասխան որոշումներ: Նա 1946թ. դեկտեմբերի 13-ին «Հայ գրականության մեջ բուրժուական գաղափարախոսության դրսեւորման մասին» խոսուն վերնագրով ծավալուն հոդված է ներկայացնում Գ.Հարությունյանին, ծանոթանալու եւ արժեքավոր համարելու դեպքում՝ «Կոմունիստ» թերթում հրապարակելու թույլատրության համար: Հոդվածում «քննարկվում էին» բոլոր այն գրականագետների, փիլիսոփաների, պատմաբանների աշխատությունները, որոնք հետո՝ 1947-50թթ. մեղադրվեցին ազգայնականության, կոսմոպոլիտիզմի եւ այլ «հանցանքների» մեջ: Գ.Հա-

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 206, թթ. 34-35:
[2] Նույն տեղում, թթ. 30-31:

ությունյանը հոդվածի վրա մակագրել է. «Զ.Գրիգորյանին: Անհրաժեշտ է պարզաբանել շոշափված հարցերը»[1]: Հոդվածի հրապարակումը մերժվեց: Սակայն, Ա.Կարապետյանի «փաստերը» օգտագործվեցին ՀԿ/բ/Կ Կենտկոմի 1947թ. սեպտեմբերյան պլենումում: Նա 1948թ. այն «թարմացրեց» եւ ուղարկեց Մոսկվա «Լիտերատուրնայա գազետա» թերթի խմբագրություն, որը տպագրվեց թերթի հուլիսի 31-ի համարում՝ «Ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի մնացուկների» վերնագրով: Հոդվածը հայերեն թարգմանվեց եւ հրապարակվեց «Գրական թերթում»: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն օգոստոսի 4-ին քննարկեց հոդվածը եւ ընդունեց որոշում, ըստ որի հոդվածագիրը «ճիշտ է նշում, որ դեռեւս չկան բուրժուա- ազգայնական բնույթի սխալները մերկացնող լուրջ գիտական աշխատություններ»: «Լիտերատուրնայա գազետա» թերթի խմբագրության կողմից հոդվածի տպագրումը համարվեց սխալ: Միաժամանակ հանձնարարվեց Հայաստանի խորհրդային գրողների միությանը եւ ԳԱ գրականության ինստիտուտին քննարկել հոդվածը[2]:

ԳԱ գրականության ինստիտուտի գիտական խորհրդի նիստում եւ Գրողների միության ժողովում ելույթ ունեցողները նշեցին, որ հոդվածը «նոր առիթ է էլ ավելի ուժեղացնելու մեր ռեսպուբլիկայի գրողների, պատմաբանների, գրականագետների եւ փիլիսոփաների պայքարը բուրժուական նացիոնալիզմի ամեն տեսակ ռեցիդիվների դեմ»: Նրանք միաժամանակ նշեցին, որ մի շարք գրականագետներ /Ե.Տեր-Մինասյան, Կ.Մելիք-Օհանջանյան, Խ.Սարգսյան եւ ուրիշներ/, որոնց աշխատությունները խստորեն դատապարտվել էին ՀԿ/բ/Կ Կենտկոմի որոշումներում եւ մամուլում, «մինչեւ այժմ հանդես չեն բերել քաղաքացիական քաջություն՝ ազնվորեն ընդունելու իրենց թույլ տված սխալները»: Սակայն, մտքերի փոխանակության մասնակիցները, որոնց անունները չեն հիշատակված, «ցույց տվեցին մի շարք թերություններ, տենդենցիոզ ու սկզբունքային սխալ դրույթներ Ա. Կարապետյանի հոդվածում»: Նրանք նշում են, որ Կարապետյանի բերած գրեթե բոլոր փաստերը հայտնի են եղել եւ քննադատված են ՀԿ/բ/Կ կենտկոմի 1947թ. դեկտեմբերի 16-ի որոշման մեջ եւ լուսաբանված «Բոլշեւիկ», «Վոպրոսի ֆիլոսոֆիի», «Պարտիական կյանք», «Սովետական Հայաստան», «Կոմունիստ», «Գրական թերթ», «Սովետական գրականության եւ արվեստ» թերթերի եւ ամսագրերի էջերում: «Բայց այդ ամենից հետո Ա.Կարապետյանը,- նշում են ելույթ ունեցողները,- իր հոդվածում շարադրելով /երբեմն էլ անճիշտ/ արդեն մերկացված սխալները, ձգտում է ստեղծել այն տպավորությունը, թե իբր ինքն է այդ փաստերի առաջին հայտնաբերողը»: Սակայն, Ա.Կարապետյանը ճիշտ էր, նա էր, ինչպես նշվեց վերեւում, որ 1946թ. դեկտեմբերին ՀԿ/բ/Կ Կենտկոմ էր ներկայացրել իր «նյութերը», որի մասին ժողովականները չգիտեին: Հիշատակության արժանի է ժողովներում արտահայտված այն միտքը, որ «քննարկելով Հայաստանի անցյալի պատմությունը եւ կուլտուրան իդեալականացնող մի քանի հետազոտողների, Ա. Կարապետյանն ընկնում է հակառակ ծայրահեղության մեջ. նա խնամքով մոռացության է մատնում անցյալի կուլտուրայի առաջավոր դեմոկրատական տարրերը: Ա. Կարապետյանի հոդվածում բավական ցայտուն կերպով իրեն զգալ է տալիս ազգային նիհիլիզմի ոգին: Անհնարին է ազգային

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 30 , գ. 126, թթ. 1-25:
[2] Նույն տեղում, ց. 28, գ. 49, թ. 12:

նիհիլիզմի դիրքերից պայքարել բուրժուական նացիոնալիզմի դեմ, որովհետեւ «Ազգային նիհիլիզմը միայն վնասում է սոցիալիզմի գործին, նպաստելով բուրժուական նացիոնալիստներին» /Ի. Ստալին, Երկեր, հ. 4, էջ 91/»: Ինչպես տեսնում ենք, հայ մտավորականները, օգտագործելով նաեւ Ստալինին, վճռականորեն մերժում էին Ա.Կարապետյանի գնահատականները, թեպետ գաղափարական պատվերից ելնելով, իրենց միահամուռ պատրաստականությունն էին հայտնում «պայքարել մարքսլենինյան տեսության խեղաթյուրման բոլոր փորձերի դեմ, վճռականորեն արմատախիլ անել բուրժուա-նացիոնալիստական բոլոր մնացուկները եւ հետեւողականորեն կիրառել բոլշեւիկյան պարտիականության սկզբունքը իդեոլոգիական աշխատանքների բոլոր ոլորտներում»[1]:

1948թ. մարտի 11-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն ընդունում է «Արտասահմանի հայ մամուլում տպագրված խորհրդային Հայաստանի գրողների ստեղծագործությունների մասին» որոշումը, որտեղ նշվում է, որ վերջին տարիներին Հայաստանի որոշ գրողների ստեղծագործություններում /Ա.Գրաշու «Դրոշ», «Սեւան», «Էլեգիա», Ս.Տարոնցու «Հայկ», Վ. Խեչումյանի «Զվարթնոց», «Հեթում գրիչ», Լ.Թարգյուլի «Ազնվականներ»/ արտահայտվել են «հակաժողովրդական, քաղաքականապես վնասակար, բուրժուա-ազգայնական գաղափարներ»: Այդ «հակաժողովրդական ստեղծագործությունները գաղափարական զենք են դարձել մեր թշնամիների ձեռքին, օգտագործվում են արտասահմանյան հետադիմական դաշնակցական մամուլում խորհրդային գաղափարախոսության դեմ պայքարում»: ՀԿ/բ/Կ Կենտկոմին հատկապես վրդովվեցրել էր այն, որ Գրողների միության անդամներ Լյուսի Թարգյուլը եւ Արշալույս Մարգարյանը «ինքնագլուխ», շրջանցելով խորհրդային պաշտոնական մարմիններին, իրենց ստեղծագործություններն ուղարկել էին արտասահմանյան մամուլին: Այդ արարքը Կենտկոմի կողմից բնութագրվում է որպես «քաղաքական կուրություն, խորհրդային գրողի արժանապատվության կորուստ, ստրկամտություն՝ բուրժուական հետադիմական Արեւմուտքի առջեւ»: Կենտկոմի որոշման մեջ Գրողների միության վարչությանը հանձնարարվում էր քննարկել այդ գրողների արարքը, արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերությանը՝ արտասահման ուղարկվող բոլոր ստեղծագործությունները նախօրոք քննարկել գրական բաժանմունքում, կանխելու համար «գաղափարական ու գեղարվեստական տեսակետից վարկաբեկիչ ստեղծագործությունների» արտասահման ուղարկելը: Միաժամանակ Գրողների միության վարչությանը եւ կուսկազմակերպությանը հանձնարարվում է ուժեղացնել գրողների շրջանում գաղափարական եւ քաղաքական աշխատանքը՝ նրանց «խորհրդային ազգային հպարտության եւ հետադիմական բուրժուական Արեւմուտքը ատելու» ոգով դաստիարակելու համար[2]:

Ինչպես արդեն նշել ենք, Գրողների միության վարչությունը Լ. Թարգյուլին եւ Ա.Մարգարյանին հեռացնում է միության շարքերից: Ավելին, Ա. Մարգարյանը «հակախորհրդային գործունեության» մեղադրանքով դատապարտվում է 3 տարի ազատազրկման[3]:

---

[1] «Գրական թերթ», 1948, 10 սեպտեմբերի:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 43, թթ. 48-49:
[3] *Ա. Մանուկյան*, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, էջ 227:

Մեկ տարի անց ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն նորից է անդրադառնում Հայաստանի գրողների միության աշխատանքներին: Քննարկվում եւ որոշում է ընդունվում միության քարտուղարության աշխատանքների մասին[1]: Քննադատվում է քարտուղարության կողմից գրողների գործունեության գաղափարական ղեկավարման, գրական մամուլի եւ գրական կապերի անբավարար վիճակը: Որոշման կենսագործման վերաբերյալ նույն թվի հուլիսին Կենտկոմ ներկայացրած զեկուցագրում Գրողների միության պատասխանատու քարտուղար Վ.Համազասպյանը նշում է, որ միությունում գործում է մարքսիզմ-լենինիզմի համալսարանի մասնաճյուղ, 40 գրողներով, բարելավվել է հայրենադարձ գրողների հետ տարվող աշխատանքը, կազմակերպվել է ռուսաց լեզվի ուսումնասիրման խմբակ: Ղեկավարվելով ՀամԿ/բ/Կ եւ ՀԿ/բ/Կ Կենտկոմների գաղափարախոսական որոշումներով՝ քարտուղարությունը հետեւողականորեն գրողների աշխատանքներն ուղղում է խորհրդային հասարակության կյանքը եւ պայքարն արտահայտող գաղափարապես հագեցած ստեղծագործությունների ստեղծման ճանապարհով: Այնուհետեւ, թվարկվում են այն գրողները, որոնք աշխատում են հայրենական պատերազմի, արդյունաբերության եւ գյուղատնտեսության վերականգնման թեմատիկայով: Կոնկրետ խնդիրներ են դրվել նաեւ հայ բանաստեղծների առջեւ՝ խորհրդային թեմաներով ստեղծագործություններ գրելու նպատակով: Թե ստեղծագործական ի՞նչ ձեռքբերումներ ունեցան հայ գրողները այդ տարիներին, թողնենք գրականագետներին: Միայն նշենք, որ գրեթե բոլոր հայ գրողներն «ընդգրկվում էին այդ աշխատանքում», նույնիսկ Դ.Դեմիրճյանը /վեպ քաղաքի շինարարության մասին/ եւ Ս.Զորյանը /վիպակ պատանի միչուրինականների մասին/[2]:

Խորհրդահայ գրականության հարցերը քննարկման առարկա դարձան նաեւ ՀԿ/բ/Կ 15-րդ համագումարում /1951թ. մարտ/, որտեղ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ Գ.Հարությունյանը շեշտեց «արձակի ետ մնալը» եւ «գրական քննադատության անբավարար վիճակն ու չափազանց ցածր մակարդակը»[3]:

Համագումարում խորհրդահայ գրականության մասին հայտնած տեսակետն իր արտահայտությունը գտավ «Պրավդա» թերթում հրապարակված Հայաստանի սեփական թղթակից Գ.Հայրյանի «Ժամանակակից հայ գրականության մի քանի հարցերի մասին» ծավալուն հոդվածում: Անդրադառնալով «հայ ժողովրդի ժամանակակից կյանքն» արտացոլող մի շարք երկերի /Ն.Զարյանի «Հացավան», Ս.Խանզադյանի «Մեր գնդի մարդիկ», Վ.Անանյանի «Սեւանի ափին», Ա.Իսահակյանի «Հայ ժողովրդի նամակը Ի.Վ.Ստալինին», Գ.Սարյանի «Հրաշալի սերունդ»/, հոդվածագիրը շեշտում է, որ «հայ գրականությունը դեռեւս պարտք է ընթերցողին«: Եվ դա բացատրում է նրանով, որ «հայ ժողովրդի խոշոր նվաճումները պատշաճ արտացոլում չեն գտել գեղարվեստական գրականության մեջ, դեռեւս քիչ են սոցիալիստական արդյունաբերության, գյուղատնտեսության եւ գիտության առաջավորների աշխատանքային սխրագործությունները պատկերող գրքերը: Իրականում, հայ բանվոր դասակարգը դեռեւս, ինչպես հարկն է, չի պատկերվել գրականության մեջ: Բոլշեւիկյան կու-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 37, թ. 38-39:
[2] Նույն տեղում, գ. 289, թթ. 69-83:
[3] *Գ. Հարությունյան*, Հաշվետու զեկուցում ՀԿ/բ/Պ XV համագումարում, էջ 67-68:

սակցության, նրա իմաստուն, ուղղություն տվող ղեկավարության թեման դեռ լիարժեք մարմնավորում չի ստացել: Անբավարար է արտացոլվել նաեւ մեր հայրենիքի եղբայրական ժողովուրդների կյանքը»[1]:

Այս «տեսական» ընդհանրացումից հետո հոդվածագիրը քննադատության առարկա է դարձրել Քր.Թափալեցյանի «Պատերազմ» եւ Հմ.Սիրասի «Արարատ» վեպերը, ինչպես նաեւ Ն. Զարյանի «Արմենուհի» պոեմը: Իհարկե, հոդվածում կա տեղին քննադատություն, սակայն այդպիսի հոդվածները դառնում էին քննարկումների առարկա եւ հաճախ ունենում էին չարաբաստիկ հետեւանքներ: Հայաստանի գրողների միության թե սկզբնական կուսակցական կազմակերպության դռնփակ ժողովում, թե միության ընդհանուր ժողովում (մայիս) քննարկվում է «Պրավդա»-ի հոդվածը[2]: Շեշտելով, որ «Պրավդա»-ի հոդվածը «բոլշեվիկյան ճշմարտությամբ բացահայտում է մեր արդի գրականության մի շարք էական թերությունները», սակայն որոշ գրողներ /Ն.Զարյան, Հ.Միրաս եւ ուրիշներ/ գտնում են, որ արձակի բնագավառում կան մեծ հաջողություններ, բայց վերադաս մարմինները չեն ուզում տեսնել այդ հաջողությունները եւ նկատում են միայն թերությունները:

Այս ելույթները պատճառ են դառնում, որ ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն հունիսին լսի գրողների միությունում «Պրավդա»-ի հոդվածի քննարկումների մասին հարցը եւ ընդունի որոշում: Նշելով, որ հոդվածի քննարկումը սկզբնական կուսակցական կազմակերպությունում ընթացել է «ցածր մակարդակով եւ կուսկազմակերպությունը չի կատարել անհրաժեշտ եզրակացություն այդ հոդվածից», Կենտկոմի բյուրոն արդեն որերորդ անգամ հանձնարարում է միության սկզբնական կուսկազմակերպությանը արմատապես վերակառուցել կուսակցական-քաղաքական աշխատանքները ինչպես կոմունիստ, այնպես էլ անկուսակցական գրողների հետ: Ա.Մնացականյանն /Արշավիր Դարբնի/ ազատվում է միության եւ սկզբնական կուսկազմակերպության քարտուղարի պարտականություններից[3]:

Մեկ ամիս անց՝ հուլիսին, Կենտկոմի որոշմամբ աշխատանքից ազատվում է նաեւ Գրողների միության պատասխանատու քարտուղար Վարդգես Համազասպյանը[4]:

1952թ. սեպտեմբերին ՀԿ/բ/Կ Կենտկոմը քննարկում է հինգ տարվա վաղեմություն ունեցող «ԳԱ գրականության ինստիտուտի աշխատանքների մասին« որոշման կատարման արդյունքները: Արձանագրելով, որ ինստիտուտը չի կատարել Կենտկոմի բյուրոյի նախորդ որոշումը՝ գրականության եւ հատկապես խորհրդահայ արդիական հարցերի վերաբերյալ մարքսիստական լիարժեք գիտական աշխատություններ ստեղծելու մասին, Կենտկոմի բյուրոն նշում է, որ «ինստիտուտի գիտական աշխատություններում թույլ են տրվել մի շարք գաղափարական սխալներ եւ գաղափարախոսական խեղաթյուրումներ: Հայ գրականության դասագրքում թույլ տրված սխալների ելակետը եղել է վնասակար բուրժուական, այսպես կոչված «միասնական հոսանքի» տեսությունը: Հայ գրականության 19-րդ դարի երկրորդ կեսի բոլոր հիմնական հարցերը վերաբերել են

---

[1] "Правда", 1951, 13 мая.
[2] «Գրական թերթ», 1951, 26 մայիսի:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 31, գ. 34, թթ. 79-81:
[4] Նույն տեղում, գ. 35, թ. 56:

ազգային-ազատագրական շարժմանը, լռության են մատնվել դասակարգային պայքարի եւ առանձին խմբերի ու հասարակական հոսանքների միջեւ պայքարի հետ կապված հարցերը»: Այնուհետեւ, շեշտվում էր համանման սխալների առկայությունը 19-րդ դարի եւ 20-րդ դարասկզբի հասարակական-քաղաքական եւ ազգային-ազատագրական շարժումների գնահատման հարցում պատմաբանների եւ փիլիսոփաների առանձին աշխատություններում[1]:

«Միասնական հոսանքի» հայեցակարգը լուրջ քննարկվեց 1952թ. սեպտեմբերին կայացած ՀԿ/բ/Կ 16-րդ համագումարում: Հաշվետու զեկուցման մեջ Գ.Հարությունյանը նշում է, որ «հայ գրականության պատմության տարբեր հարցերի գնահատականում գրականության ինստիտուտի մի քանի աշխատողներ կանգնած են «միասնական հոսանքի» տեսության դիրքերում»: Մասնավորապես, քննադատվեց գրականագետ Խորեն Սարգսյանը, որը հայ գրականության դասագրքի ներածությունում «ամեն կերպ մեղմացրել էր այն արմատական տարբերությունները, որոնք գոյություն են ունեցել Մ.Նալբանդյանի հեղափոխական դեմոկրատիզմի եւ Ստ.Նազարյանի բուրժուական լիբերալիզմի միջեւ»[2]: Համագումարում «միասնական հոսանքի» հայեցակարգի վերլուծությանն էր նվիրված Կենտկոմի քարտուղար Զ.Գրիգորյանի ելույթը: Ըստ նրա, «հայ բուրժուական նացիոնալիստները փորձում էին հայ հասարակությունը դիտել դասակարգային հակասություններից եւ դասակարգային պայքարից դուրս՝ բուրժուազիայի շահերը ներկայացնելով որպես հայ ժողովրդի համազգային շահեր: Այդ նպատակով նրանք չարաշահում էին հայերի հայրենասիրական բարձր զգացմունքները՝ առաջին պլան մղելով ազգային-ազատագրական պայքարը, փորձում էին վերջինս ենթարկել բուրժուազիայի շահերին»: Եվ որպես վառ օրինակներ հնչում են Ռաֆֆու «Կայծեր«, «Խենթ«, «Ջալալեդդին» վեպերը, Ռ.Պատկանյանի ստեղծագործությունները, Գ.Արծրունու հրապարակախոսությունը: Այդ գիծը, շարունակում է Զ.Գրիգորյանը, «առանձնապես եռանդագին անց էին կացնում դաշնակները իրենց ավանտյուրիստական գործունեության մեջ, որի նպատակն էր թմրեցնել աշխատավորների դասակարգային գիտակցությունը եւ հաստատել հայ բուրժուազիայի տիրապետությունը»[3]:

Տեսական այս «վերլուծությունից» հետո Կենտկոմի քարտուղարն իր խոսքն ամրապնդում է Ստալինից կատարած մեջբերումներով, ապա անդրադառնում այն գիտնականներին, ովքեր «ազգային հարցն անջատում են ընդհանուր քաղաքական հարցերից, այն դարձնում ինքնուրույն հարց, դրանով իսկ գլորվելով բուրժուազիայի եւ պրոլետարիատի «համատեղ գործողության միասնական հողը» դրույթի դիրքերը, «միասնական հոսանքի» թեորիայի դիրքերը»: Առաջին հարվածն ուղղվեց է Աշոտ Հովհաննիսյանի դեմ. «նացիոնալիստական կոնցեպցիա է զարգացնում Ա.Հովհաննիսյանը 19-րդ դարի 50-60-ական թվերի հասարակական հոսանքների, մանավանդ բուրժուական լիբերալ Նազարյանի եւ ռեւոլյուցիոն-դեմոկրատ Նալբանդյանի գնահատման հարցում: Այդ ոգով են գրված նրա ոչ միայն հին գործերը՝ Մ.Նալբանդյանի «Անտիպ երկերի»-ի մեկնաբանությունները, այլեւ նոր աշխատությունը՝ «Միքայել Նալբանդ-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 32, թթ. 110-111:
[2] «Սովետական Հայաստան», 1952, 21 սեպտեմբերի:
[3] Նույն տեղում, 24 սեպտեմբերի:

յանը եւ նրա ժամանակը»: Ապա, գաղափարախոսության գծով քարտուղարն անդրադառնում է Ռաֆֆուն. «Միասնական հոսանքի» արատավոր կոնցեպցիայի ազդեցության դրսեւորում հանդիսացավ նաեւ Հայպետհրատի կողմից թույլ տրված սխալը՝ Ռաֆֆու «Կայծեր» վեպի հրատարակումը, կցելով նրան քաղաքականապես սխալ առաջաբան»[1]:

ՀԿ/բ/Կ Կենտկոմի համաձայնությամբ Ռաֆֆու «Կայծեր» վեպը Հայաստանում առաջին անգամ 1947թ. լույս էր ընծայվել հայերեն, իսկ 1949թ.՝ ռուսերեն: 1951թ. ամռանը, «միասնական հոսանքի» դեմ պայքարի թեժ պահին ՀԿ/բ/Կ Կենտկոմի հանձնարարությամբ Հայաստանի գրողների միության քարտուղարությունը վեպի հրատարակությունը համարեց «քաղաքական սխալ, որովհետեւ այդ գրվածքը ժողովուրդների միջեւ թշնամանք հրահրելու իր բուրժուա-նացիոնալիստական տենդենցով խանգարում է սովետական մարդկանց ինտերնացիոնալ դաստիարակության գործին»[2]: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն, անդրադառնալով խնդրին, նշեց, որ գրողների միության քարտուղարությունը «տվել է «Կայծեր» վեպի ճիշտ գնահատականը»[3]:

Զ.Գրիգորյանը «Կայծեր»-ից հետո բերում է «միասնական հոսանքի» ռեցիդիվի այլ օրինակ, այն է՝ Ռ.Պատկանյանի գնահատականը մոսկվաբնակ գրականագետ Կամսար Գրիգորյանի կողմից՝ «Հովհաննես Թումանյան» գրքում (Լենինգրադ, 1950): Հեղինակը գրում է. «Պատկանյանը կոչ էր անում միավորել ազգային ուժերը՝ հայրենիքի ազատության համար մղվող պայքարում« /էջ 45/: Այս միտքը Զ.Գրիգորյանը մեկնաբանում է հետեւյալ կերպ. «Այստեղ երեւում է, որ հեղինակը խոսելով ազգային-ազատագրական շարժման կողմնակիցների մասին, ընդհանրապես չի փորձում շերտավորված վերլուծման ենթարկել այդ շարժման դասակարգային ուժերը եւ ցույց չի տալիս այն տարբեր նպատակները, որ այդ շարժման մեջ առաջադրում էին առանձին դասակարգեր եւ նրանց իդեոլոգները»: Ապա, անցնելով «միասնական հոսանքի» ազդեցության դրսեվորումներին՝ նորագույն պատմության առանձին հարցերի ուսումնասիրման բնագավառում, նա օրինակ է բերում Խ.Բաղալյանի «Անգլո-ամերիկյան գիշատիչ իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականությունը Հայաստանում 1919-1920թթ.» գրքույկը, որը հրատարակվել էր 1951թ.: Պարզվում է, որ գրքույկի «հեղինակը հանդես բերելով օբյեկտիվիստական մոտեցում, չի կարողացել մինչեւ վերջ մերկացնել դաշնակներին, որպես հայ ժողովրդի ամենաոխերիմ թշնամիների ու անգլո-ամերիկայն իմպերիալիզմի գործակալների, եւ թույլ է տվել մի շարք կոպիտ սխալներ»[4]: Իհարկե, Խ.Բաղալյանը թույլ էր տվել կոպիտ սխալներ, սակայն դրանք այլ կարգի էին, որոնք հետագայում քննադատվեցին եւ մերժվեցին հայ պատմաբանների կողմից: Այս փաստերից հետո Զ.Գրիգորյանը ներկայացնում է «միասնական հոսանքի» քաղաքական կողմը. «Անհրաժեշտ է հասկանալ, որ «միասնական հոսանքի» հարցը նեղ գիտական հարց չէ, ինչպես կարծում են ոմանք: Այդ հարցը նախ եւ առաջ քաղաքական նշանակություն ունի, մի բան, որ պետք է հստակորեն պատկերացնեն իդեոլոգիական ճակատի մեր աշխատողները»: Ո՞րն է այդ հարցի քաղաքական

---

[1] «Սովետական Հայաստան», 1952, 21 սեպեպտեմբերի:
[2] «Գրական թերթ», 1951, 11 օգոստոսի:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 31, գ. 37, թ. 57:
[4] «Սովետական Հայաստան», 1951, 24 սեպտեմբերի:

կողմն ըստ Զ.Գրիգորյանի: Նորից կատարենք մեջբերում նրա ելույթից. «Հայտնի է, որ հայ բուրժուական նացիոնալիստական պատմագրությունը, կեղծելով պատմական իրականությունը, 19-րդ դարի երկրորդ կեսի հասարակական-քաղաքական կյանքում ընդունում է միայն երկու հոսանք՝ ֆեոդալական-կղերական հետադիմական եւ ազգային-ազատագրական առաջադիմական: Ազգային-ազատագրական հոսանք ասելով, նացիոնալիստները հասկանում են բուրժուական հոսանքը, որի հաղթանակը պետք է հասցներ հայ հետադիմական բուրժուազիայի տիրապետությանը: Բուրժուական-նացիոնալիստական պատմագրությունը գիտակցաբար ժխտում էր ռեւոլյուցիոն-դեմոկրատական շարժման առկայությունը, որն արտահայտում էր հայ աշխատավորության շահերը: Դրանով իսկ բուրժուական նացիոնալիստներն աշխատում էին ապացուցել, որ հայ իրականության մեջ հող չի եղել ռեւոլյուցիոն դեմոկրատիզմի համար, ձգտում էին թուլացնել ռեւոլյուցիոն-դեմոկրատական շարժման աճը Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին: Դաշնակները, շարունակելով բուրժուական-նացիոնալիստական այդ հետադիմական գիծը, այն ուղղեցին պրոլետարական ռեւոլյուցիոն շարժման եւ բոլշեւիկյան կուսակցության դեմ, աշխատելով ցույց տալ, թե 20-րդ դարում հայ իրականության մեջ հող չի եղել սոցիալիստական հեղափոխության համար: Այստեղից նրանք բխեցնում էին իրենց այն զառանցական ու ստահոդ հերյուրանքները, թե սովետական իշխանությունը դրսից է փաթաթվել հայ ժողովրդի վզին: Այդպիսով, այն մարդիկ, որոնք չեն ըմբռնում «միասնական հոսանքի» քաղաքական վնասակարությունը եւ տուրք են տալիս այդ թեորիային, օբյեկտիվորեն ջուր են լցնում բուրժուական նացիոնալիզմի ջրաղացին: Այդ սխալների պատճառը, նախ եւ առաջ, այն է, որ գիտական կադրերի գաղափարական կոփման եւ մարքսիստական իդեոլոգիայով զինելու ասպարեզում դեռ մինչեւ այժմ էլ լուրջ թերություններ կան»: Ելնելով ասվածից՝ Զ.Գրիգորյանը գիտական հիմնարկների եւ բուհերի կուսկազմակերպությունների եւ «գաղափարախոսական ճակատի» բոլոր աշխատողների առջեւ խնդիր է դնում անդուլ պայքար մղել բուրժուական ազգայնականության ամեն տեսակ դրսեւորումների, մասնավորապես «միասնական հոսանքի» տեսության դեմ[1]:

Այս հանձնարարականների հիման վրա ՀԽՍՀ ԳԱ 1952թ. վերջին կազմակերպեց գիտական բանավեճեր՝ նվիրված «18-20-րդ դարերի հասարակական-քաղաքական հոսանքների եւ ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրման բուժուա-ազգայնական հայացքների դրսեւորումների մերկացմանը»: Անցկացվեցին երեք բանավեճեր՝ «Հասարակական-քաղաքական հոսանքները 18-րդ դարի վերջի եւ 19-րդ դարի սկզբի հայ ազատագրական շարժման մեջ», «Սխալ հայեցակարգեր 19-րդ դարի 50-60-ական թվականների հայ հեղափոխական դեմոկրատների եւ բուրժուական լիբերալների գնահատելու գործում» եւ «Ազգային-ազատագրական շարժումները եւ հասարակական-քաղաքական հոսանքները Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին» թեմաներով[2]:

Բանավեճերի արդյունքների մասին ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, պատմության ինստիտուտի տնօրեն Աբգար Հովհաննիսյանը դեկտեմբերի 26-ին ընդար-

---

[1] «Սովետական Հայաստան»,1951, 24 սեպտեմբերի:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 34, թ. 16:

ծակ «ոչ պաշտոնական» նամակով հայտնում է Գ.Հարությունյանին, որ առաջին երկու բանավեճերն անցել են ընդհանուր առմամբ բավարար մակարդակով, սակայն երրորդը՝ կենտրոնականն իր նշանակությամբ, չի տվել ոչ մի արդյունք եւ փաստորեն ձախողվել է: Ա.Հովհաննիսյանը բանավեճի ձախողման մեղավոր համարում էր ԳԱ փոխպրեզիդենտ Մ.Ներսիսյանին, որն իր զեկուցման մեջ «ոչ միայն չբացահայտեց ինչպես իր, այնպես էլ այլ պատմաբանների աշխատանքներում /Վ.Պարսամյան եւ ուրիշներ/ պարունակվող լուրջ սխալները, այլեւ, ըստ էության, նորից կրկնեց հայկական ազգային-ազատագրական շարժումների մասին ոչ մարքսյան հայեցակարգը, որոնք ընկած են նրա «Հայկական ազգային-ազատագրական շարժումները 19-րդ դարի 60-80-ական թվականներին» դոկտորական ատենախոսության հիմքում»: Մ.Ներսիսյանի կարծիքով, շարունակում է Ա.Հովհաննիսյանը, հայկական ազգային շարժումը կրում է գյուղացիական-դեմոկրատական բնույթ եւ նրանում գլխավոր դերը կատարում էր գյուղացիությունը: Այս «հայեցակետը հակասում է ազգային շարժման մասին մարքս-լենինյան ուսմունքին, որը զարգացրել եւ հիմնավորել էր ընկ. Ստալինը»[1]: Նամակի էջերում Ա.Հովհաննիսյանը վերլուծում է Մ.Ներսիսյանի հիշյալ աշխատության «սխալները« եւ վերջում նշում. «Ես կարծում եմ, որ անհրաժեշտ է հասնել նրան /որը ես չեմ կարող անել/, որպեսզի ընկ. Ներսիսյանն այս կամ այն ձեւով բացահայտի իր սխալները եւ միջոցներ ձեռնարկի դրանք ուղղելու համար: Առանց դրա անհնար է իրագործել Կենտրոնական կոմիտեի եւ անձամբ Ձեր տված ցուցումները «միասնական հոսանքի» բուրժուա-ազգայնական հայեցակարգի դրսեւորումները մինչեւ վերջ արմատախիլ անելու մասին, մասնավորապես, 19-րդ դարի 2-րդ կեսի հասարակական-քաղաքական հոսանքների գնահատման հարցում»: Իր համոզմունքը նամակագիրը բացատրում է նրանով, որ ոչ հեռավոր անցյալում ինքն է գտնվել նման վիճակում, սակայն, երբ Կենտրոնական կոմիտեն 1950թ. ապրիլի 5-ին քննարկել եւ բացահայտել է իր «Ռուսաստանը եւ հայ ազատագրական շարժումները 18-րդ դարի 80-ական թվականներին» մենագրությունում թույլ տված սխալները, նա հանդես է եկել ինքնաքննադատական հոդվածներով՝ նվիրված այդ սխալներին, ապա համոզվել, որ բարձրացել է իր հեղինակությունը հասարակության մեջ[2]:

Գ.Հարությունյանի հանձնարարությամբ պատմաբան-կուսաշխատողներ Օատուր Աղայանը, Հովհաննես Ինճիկյանը, Լեւոն Բաբայանը, Վարդան Ավետիսյանը եւ նամակի հեղինակ Աբգար Հովհաննիսյանը 1953թ. հունվարին ՀԿԿ Կենտկոմ են ներկայացնում բանավեճի արդյունքների մասին զեկուցագիր, որտեղ Մ.Ներսիսյանի հետ ներկայացվում են նաեւ Վ. Պարսամյանի եւ Վ.Ռշտունու «սխալ հայեցակարգերը»:

Զեկուցագրի ստացման հաջորդ օրը Կենտկոմի բյուրոն քննարկում եւ ընդունում է «ՀԽՍՀ ԳԱ հասարակագիտական բաժանմունքի անցկացրած բանավեճերի մասին» որոշումը: Դա դարձավ «միասնական հոսանքին» Կենտկոմի վերջին անրադարձը: ՀԿԿ Կենտկոմի որոշման արձանագրային մասը հիմնականում կրկնում էր Ա.Հովհաննիսյանի նամակի եւ հինգ պատմաբանների զեկուցագրի բովանդակությունը, այն լրացումով, թե Վ.Ռշտունու եւ Վ.Պարսամյանի աշխատությունները գրված են

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 34, թթ. 25-26:
[2] Նույն տեղում, թթ. 35-37:

պատմաբաններ Լեոի եւ Աշոտ Հովհաննիսյանի բուրժուա-ազգայնական հայեցակարգերի ազդեցության ներքո: ՀԿԿ Կենտկոմի բյուրոն հանձնարարում է ԳԱ հասարակագիտական բաժանմունքին հերթական՝ «Հեղափոխական շարժումները եւ բուրժուա-ազգայնական հոսանքներն ու կուսակցությունները 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին» թեմայով բանավեճում ընդգրկել եւ խորությամբ լուսաբանել նաեւ 19-րդ դարի 2-րդ կեսի ազգային-ազատագրական շարժումներին եւ հասարակաքաղաքական հոսանքներին վերաբերող հարցերը, մերկացնել բուրժուա-ազգայնական հայացքների սխալ դրսեւորումները՝ պատմաբանների եւ գրականագետների տվյալ ժամանակաշրջանին վերաբերող աշխատություններում[1]:

ՀԿ/բ/Կ Կենտկոմի որոշման ոգով «Սովետական Հայաստան» եւ «Կոմունիստ» թերթերը հունվարի 9-ին հրապարակում են «Արմատախիլ անել բուրժուա-նացիոնալիստական իդեոլոգիայի ամեն մի դրսեւորում սովետահայ պատմագրության եւ գրականագիտության մեջ» վերնագրով խմբագրական հոդվածներ: Նշվում էր, որ բանավեճերի «անբավարար ընթացքը, քննադատության եւ ինքնաքննադատության թույլ ծավալումը ցույց տվեցին, որ ՀԽՍՀ ԳԱ նախագահությունը, հասարակական գիտությունների բաժանմունքը / ակադեմիկոս-քարտուղար Աբ.Հովհաննիսյան/ եւ սկզբնական պարտիական կազմակերպություններն անհրաժեշտ լրջությամբ չեն զբաղվել դիսկուսիաները նախապատրաստելու եւ անցկացնելու խիստ կարեւոր գործով»[2]: Այս անհիմն մեղադրանքներին ձայնակցեց նաեւ «Պրավդա»-ն: Հունվարի 14-ին թերթում տպագրվեց հայաստանյան թղթակից Գ.Հայրյանի «Վճառականապես արմատախիլ անել գիտական աշխատանքներում եղած թերությունները» հոդվածը հասարակական գիտությունների բաժանմունքի, գրականության եւ պատմության ինստիտուտների, փիլիսոփայության սեկտորի «աշխատանքների անբարենպաստ վիճակի» մասին: Նա ներկայացնելով այդ ինստիտուտներում տիրող «խորթ բարքերը, փոխադարձ երաշխավորությունները, սխալների փոխադարձ ներումը», անզուսպ մեղադրում էր առանց այդ էլ կործանման եզրին հայտնված մի շարք պատմաբանների եւ գրականագետների՝ Աբ.Հովհաննիսյանին, Մ.Մկրյանին, Աշ.Հովհաննիսյանին: Հատկանշական է, որ հոդվածում ներկայացված էին նաեւ Կենտկոմի քարտուղար Զ.Գրիգորյանի եւ գեղարվեստական գրականության ու արվեստի բաժնի վարիչ Հ.Մամիկոնյանի «ամենակոպիտ սխալները»[3]:

Այս հոդվածից հետո ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն կատարում է «կազմակերպական հետեւություն» պատմության եւ գրականության ինստիտուտների տնօրեններ Աբ.Հովհաննսիյանը եւ Մ.Մկրյանը ազատվում են զբաղեցրած պաշտոններից[4]: Գրականության ինստիտուտի տնօրեն է նշանակվում կուսակցական աշխատանքում թրծված Հ.Մամիկոնյանը, պատմության ինստիտուտի տնօրեն՝ Ս.Երեմյանը:

Իսկ Մ. Ներսիսյանը «չպատժվեց» եւ մնաց ԳԱ փոխպրեզիդենտի պաշտոնում, քանզի հունվարի 13-ին «Սովետական Հայաստան»-ում իր հասցեին արված քննադատությունները համարեց «միանգամայն ճիշտ»,

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 26, թթ. 5-6:

[2] «Սովետական Հայաստան», 1953, 9 հունվարի:

[3] "Правда", 1953, 14 января.

[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 26, թթ. 109-110:

ընդունեց, որ իր աշխատություններում հայ ազգային-ազատագրական շարժումը մեկնաբանել է որպես ժողովրդա-դեմոկրատական, մինչդեռ այն իր խնդիրներով ու բնույթով բուրժուական է եղել: «Փոխանակ վճռաբար ու հետեւողականորեն մերկացնելու եւ ցույց տալու Պատկանյանի ու Ռաֆֆու բուրժուական նացիոնալիզմի ռեակցիոն էությանը,- գրել է նա,- ես նրանց պատկերել եմ որպես առաջադեմ դեմոկրատներ: Ես սխալ գնահատական եմ տվել նաեւ մի շարք բուրժուա-նացիոնալիստական խմբակներին եւ նրանց գործիչներին»: Բանավեճի կապակցությամբ նա «ոչ ճիշտ, խիստ սխալ« է համարում իր բռնած դիրքը. «Հանդես գալով «Ազգային-ազատագրական շարժումը եւ հասարակական-քաղաքական հոսանքները Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին» զեկուցումով ես լիակատար հնարավորություն ունեի վճռաբար ընդունելու իմ սխալները: Սակայն ես այդ չեմ արել: Իմ զեկուցումը ինքնաքննադատական չէր: Միաժամանակ, ես խիստ եւ ծավալուն քննադատության չենթարկեցի Լեոյի, Աշոտ Հովհաննիսյանի եւ ուրիշ պատմաբանների ու գրականագետների հակագիտական, բուրժուա-նացիոնալիստական կոնցեպցիաները, մարդիկ, որոնք կոպիտ սխալներ են թույլ տվել հայ ժողովրդի եւ հայ գրականության պատմության հարցերում»: Վերջում Մ.Ներսիսյանը խոստանում է ուղղել եւ հաղթահարել իր սխալները եւ «մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի հիման վրա, ընկեր Ստալինի նոր հանճարեղ աշխատությունների հիման վրա» վերակառուցել իր գիտական աշխատանքը եւ վճռաբար պայքար մղել «բուրժուա-նացիոնալիստական իդեոլոգիայի ամեն տեսակ դրսեւորումների ու ռեցիդիվների դեմ»[1]:

Իհարկե, տարիներ անց Մ. Ներսիսյանը ստեղծեց պատմագիտական արժեքավոր եւ մնայուն աշխատություններ, սակայն ոչ մի տեղ եւ ոչ մի անգամ չհիշատակեց գաղափարական պատվերի ճնշման ներքո կատարած իր անցյալի քայլը:

Խորհրդահայ մտավորականության դեմ ձեռնարկված «միասնական հոսանքի» կեղծ արշավն ավարտվեց Ստալինի մահով:

3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՌՆԱՃՇՈՒՄՆԵՐԸ: ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՔՍՈՐԸ

Խաղաղ կյանքի վերադրծով իշխանությունները շարունակեցին, հաճախ դաժանորեն, բնակչության նկատմամբ նախորդ տարիների բռնությունները: Դեռ պատերազմի տարիներին քաղաքական մեղադրանքով Հայաստանում բռնադատվել էր ավելի քան 5200 մարդ, նրանցից գնդակահարվել 466-ը[2]:

ԽՍՀՄ վերադարձող գերիների նկատմամբ վերաբերմունքն արդեն ցույց էր տալիս ռեժիմի խստացման մասին: Գերիների միայն 20 տոկոսը իրավունք ստացավ վերադառնալ տուն, նախկին ռազմագերիների 15 տոկոսը կամ ուղարկվեց ճամբարներ, կամ դատապարտվեց արտաքսման նվազագույնը 5 տարի ժամկետով: Մյուսներին բաժին հասավ հարկադիր աշխատանքը երկրի ավերված շրջաններում[3]:

---

[1] «Սովետական Հայաստան»,1953, 13 հունվարի:

[2] *Ա. Մանուկյան*, նշվ. աշխ., էջ 219-220:

[3] Игорь Пыхалов, Правда и ложь о советских военнопленных, “Военно-Исторический журнал”, М., 2000, N 9, с. 42.

1945թ. օգոստոսի 18-ին ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեի թ.9871 գաղտնի որոշումով նախկին ռազմագերի լեգեոնականները, վլասովականները, ոստիկանները արտաքսվում էին երկրի հեռավոր շրջաններ, 6 տարի ժամկետով, առանց ընտանիքի[1]:

Որպեսզի պարզ լինի, թե 1930-ական թվականների բռնություններից եւ «մաքրագերծումից» հետո Հայաստանում «հակախորհրդային» ինչ տարրեր էին մնացել, բերենք Վահագնի /Շահալի/ գյուղի օրինակը: ՀԿ/բ/Կ Կիրովականի շրջկոմի քարտուղարը 1949թ. հունիսի 26-ին տեղեկացնում է կենտկոմի քարտուղարին, որ վերոհիշյալ գյուղը «հագեցած է հակախորհրդային տարրերով: Գյուղում այժմ հաշվվում է 22 մարդ նախկին տրոցկիստ, 8 դաշնակ, 14 ռազմագերի, 4 աքսորից վերադարձած, 1 հետախուզվող: Ընդամենը 49 մարդ: Հունիսի 13-14-ին գյուղից աքսորվել է երեք ընտանիք»[2]:

1945-52թթ. հանրապետությունում քաղաքական մեղադրանքով բռնադատվել է 2946 մարդ, այդ թվում 1945թ.՝ 309, 1946թ.՝ 412, 1947թ.՝ 432, 1948թ.՝ 530, 1949թ.՝ 642, 1950թ.՝ 314, 1951թ.՝ 229, 1952թ.՝ 78 մարդ: Լրտեսություն, դավաճանություն, պետական սահմանի ապօրինի անցում, հակահեղափոխական, հակախորհրդային ու դաշնակցական գործունեություն - ահա այն հիմնական մեղադրանքները, որով դատապարտվել են հանրապետության քաղաքացիները: «Հանցագործություններից» առաջին տեղում է հակահեղափոխական գործունեությունը՝ 560 մարդ /1945թ.՝ 47, 1946թ.՝ 83, 1947թ.՝ 30, 1948թ.՝ 52, 1949թ.՝ 208, 1950թ.՝ 68, 1951թ.՝ 43 – 1952թ.՝ 29/, ապա ակնառու են ապօրինաբար սահմանն անցնելու փորձերը՝ 214 /առավել շատ էր 1947թ.՝ 78 եւ 1948թ.՝ 116/: Լրտեսության եւ դաշնակցական գործունեության համար՝ 18-ական մարդ[3]:

Հայրենիքի դավաճանության համար հիմնականում դատապարտվում էին նրանք, ովքեր ծառայել էին գերմանացիների կողմից կազմակերպված լեգեոնում կամ զենքը ձեռքին կամավոր անցել թշնամու կողմը: Հատկանշական է, որ հետպատերազմյան տարիների պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության դատավճիռ կայացվել է միայն 1946թ.: Պատերազմից հետո մահապատիժը ԽՍՀՄ-ում պաշտոնապես վերացվեց: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ հայտարարվեց, որ «խաղաղ ժամանակվա պայմաններում մահապատժի կիրառումը այլեւս անհրաժեշտություն չի համարվում» եւ «ընդառաջելով բանվորների եւ ծառայողների արհմիությունների եւ այլ հեղինակավոր կազմակերպությունների ցանկությունը, որոնք արտահայտում են հասարակության լայն շրջանների կարծիքը», ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունը 1947թ. մայիսի 26-ին մահապատիժը վերացնում է[4]:

Անդրկովկասի օկրուգի ռազմական զինվորական դատախազության կողմից ՀԿ/բ/Կ Կենտկոմ ուղարկված զեկուցագրից պարզվում է, որ միայն 1946թ. առաջին կեսին ՀԽՍՀ պետական անվտանգության եւ ներքին գործերի նախարարությունների կողմից հայրենիքի դավաճանության, լրտեսության եւ նմանատիպ մեղադրանքներով պատասխանատվության է ենթարկվել 68 մարդ: Պատասխանատվության ենթարկվող-

---

[1] ՌԴ նախագահի արխիվ, ֆ. 3, ց. 50, գ. 507, թթ. 44-52:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 134, թ. 8:
[3] *Ա. Մանուկյան*, նշվ. աշխ., էջ 219-221:
[4] «Սովետական Հայաստան», 1947, 27 մայիսի:

ների թիվը ամսեամիս ավելանում էր, եւ դա բացատրվում է նրանով, որ ռազմագերիները նոր էին սկսել ժամանել, եւ նրանց, ում մասին «նյութեր» կային, անմիջապես ծերբակալում էին, իսկ ծերբակալվածները ցուցմունք էին տալիս նրանց մասին, ովքեր իրենց հետ կատարել են «հանցագործություն»: Նշվածներից 54-ը հայեր էին, 12-ը ադրբեջանցիներ, 1 ռուս եւ 1 ադիգեյ: Զեկուցագիրը կազման օրը, օգոստոսի 13-ին, արդեն դատապարտվել էր 36 մարդ, նրանցից 34-ը դատապարտվել էին 5-10, 1-ը՝ 20 եւ 1-ը՝ 3 տարվա ազատազրկման, իսկ 1 գործ կարճվել էր՝ վկաների կեղծ ցուցմունքների պատճառով[1]: Թե ինչ էր իրենից ներկայացնում հակահեղափոխական գործունեությունը, կարելի է պարզաբանել ՀԽՍՀ Գերագույն դատարանի 1947-49թթ. քննած գործերի օրինակով: 1947թ. դատարան էր մտել 22, 1948թ.՝ 55, իսկ 1949թ. միայն առաջին եռամսյակում՝ 38 գործ: Դատապարտվածների մեծ մասը դժգոհ է եղել խորհրդային կառավարության այս կամ այն միջոցառումից: Ոմանք նույնիսկ իրենց մտքերը հայտնել են գրավոր: Այդպիսի մի նամակի համար Շամշադինի շրջանի մի բնակիչ Գերագույն դատարանի կողմից 1948թ, մարտին դատապարտվեց 5 տարվա ազատազրկման: ԽՍՀՄ Գերագույն դատարանը մեկ տարի անց, փոխեց վճիռը, այն համարելով մեղմ: 1947-1948թթ. ԽՍՀՄ Գերագույն դատարանը փոխեց նմանատիպ 7 գործերի պատժաչափերը, դրանց »մեղմ« լինելու պատճառաբանությամբ[2]:

1949թ. Ստեփանավանի շրջանի բնակիչ Վաչագան Հովհաննիսյանը դատապարտվեց 10 տարի ազատազրկման նրա համար, որ «Մոսկվա, ընկ. Մալենկովին» նամակ էր ուղարկել, որտեղ մասնավորապես գրել էր, «Փորձիր քննադատել կամ տրտնջալ, իսկույն կծերբակալվես ու կաքսորվես որպես քաղաքական բանտարկյալ: Սրա կողքին գործող խիստ օրենքներն ու պատիժներն էլ մյուս կողմից են դժգոհեցնում ժողովրդին: Օրինակ՝ ռազմագերիներին աքսորում են դեպի Սիբիր, մարդկանց ազատազրկում կոճակի, մի դույլ կարտոֆիլի, չուլկու-նասկու համար: Կոլտնտեսականների սխալ հարկման քաղաքականությունը, անզավակության հարկերը, հովանավորչությունն ու մարդկային անհատականության արհամարումը: ...Վերջապես ժամանակն է օրենք մշակել մեծահասակ կոլտնտեսականների համար թոշակներ սահմանելու մասին: Գյուղացուն այդքան արհամարհել չի կարելի: Խորամուխ պետք է լինել լենինյան գվարդիայի պետական-կուսակցական գործիչների եւ ականավոր զորապետների ասպարեզից վերանալու պատճառների մեջ»[3]:

Ահա թե ինչպես է բնորոշվել դատավճռում բերված ճշմարտությունը. «Թշնամաբար հակված դեպի խորհրդային կարգերը՝ մեղադրյալ Վ.Հովհաննիսյանը կուսակցական վերադաս մարմիններին ներկայացրել է իր ձեռքով գրված հակախորհրդային բովանդակություն ունեցող փաստաթուղթ, որով բացահայտ թշնամական դիրքերից քննադատել ու վարկաբեկել է կուսակցության ու կառավարության քաղաքականությունը բոլոր բնագավառներում, մասնավորապես գյուղացիության, աշխատավարձի, հարկային քաղաքականության, խորհրդային կարգերի ընդհանուր կառուցվածքի հարցերում, թույլ տվել մի շարք հակահեղափոխական,

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 98, թթ. 148-153:
[2] Նույն տեղում, ց. 29, գ. 101, թթ. 6-10:
[3] Նույն տեղում, ց. 62, գ. 5988, թ. 35:

պրովոկացիոն հայտարարություններ կուսակցության ու կառավարության հասցեին»[1]:

ՀԽՍՀ Գերագույն դատարանի կողմից 1948թ. մինչեւ 5 տարի պատժաչափի դատապարտվել էր 6 /9 տոկ./, 5 տարի՝ 12 /16,5 տոկ./, 6-9 տարի՝ 27 /40,9 տոկ./ եւ 10 տարի՝ 20 մարդ /31,6 տոկ./: 1949թ. ԽՍՀՄ արդարադատության նախարարության խմբի կողմից ՀԽՍՀ Գերագույն դատարանի աշխատանքները ստուգելուց հետո (հակահեղափոխական գործունեության վերաբերյալ գործերի քննության կապակցությամբ) «դատարանը դադարեց հանցագործների նկատմամբ լիբերալ պատժաչափեր ընդունել եւ սկսեց կիրառել ճիշտ պատժիչ միջոցներ»: 1949թ. առաջին եռամսյակում 5-9 տարվա պատժաչափով դատապարտվել էին 28 մարդ /59,6 տոկ./, եւ 10 տարվա՝ 19 մարդ /40,4 տոկ./: Ավելի ցածր պատժաչափի չէր կիրառվել[2]:

1948-49թթ. «հակահեղափոխական գործունեություն» ունեցողների թիվն աճել է հայրենադարձների հաշվին՝ «հակահեղափոխական քարոզչություն» հանցանքով: Մարդկանց այդ նույն խմբի հաշվին էր աճել նաեւ սահմանը ապօրինի անցնելու փորձ կատարողների թիվը, որի մասին արդեն խոսվել է: Բռնարարքներ իրականացվեցին նաեւ նախկին ռազմագերիների նկատմամբ, ովքեր գտնելով հայկական լեգեոնում, հետո մեծ մասամբ փախել եւ միացել էին խորհրդային պարտիզաններին ու Եվրոպայի դիմադրական շարժմանը եւ նրանց շարքերում կռվել գերմանացիների դեմ: Առաջին խորհրդային պարտիզանական գնդի (Ֆրանսիա) հրամանատարների ու զինվորների ձերբակալման առիթ դարձավ 1948թ. փետրվարի 22-ին «Կոմունիստ» թերթում հրապարակված Ս.Բոնդարենկոյի «Պատմվածք հայկական պարտիզանական գնդի մասին» հոդվածը, որտեղ տրվում էր գնդի մարտական սխրանքները Ֆրանսիայի ազատագրման գործում: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն փետրվարի 26-ին քննարկում է հոդվածը եւ գտնում, որ այնտեղ սխալ է մեկնաբանված գնդի գործունեությունը, թե հեղինակը «կեղծ ձեւով է ներկայացրել հայկական պարտիզանական գունդը եւ նրա ղեկավարությունը»: Բյուրոյի որոշման մեջ նշվում է, որ «եղած նյութերի համաձայն նշված գնդում իրենց համար տեղ են գտել մեծ թվով ռազմագերի հայեր, գերմանա-ֆաշիստական միավորումներում ծառայած հայրենիքի ակտիվ դավաճաններ», իսկ «Կոմունիստ» թերթը կոպիտ սխալ է թույլ տվել, իր էջերում հրապարակելով այդ հոդվածը[3]: Բյուրոյի նիստին ներկա գտնվող ՀԽՍՀ պետական անվտանգության նախարար Ս.Կորխմազյանը համապատասխան ցուցումներ է ստանում:

1948թ. հուլիս-օգոստոս ամիսներին ձերբակալվում են 1944-45թթ. Ֆրանսիայում ձեւավորված եւ ռազմական գործողություններին մասնակցած Առաջին խորհրդային պարտիզանական գնդի նախկին հրամանատարներ Ալեքսանդր Ղազարյանը, Բարդուղ Պետրոսյանը, Լեւոն Տիտանյանը, Ստեփան Յաղջյանը եւ Դավիթ Մինասյանը[4]: Նրանք մեղադրվում էին այն բանի համար, որ, գտնվելով գերության մեջ, դավաճանել են հայրենիքին եւ ընդունվել Հայկական լեգեոնի մեջ, որտեղ ծառայել են

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 62, գ. 5988, թ. 21:
[2] Նույն տեղում, ց. 29, գ. 101, թ. 8:
[3] Նույն տեղում, ց. 28, գ. 42, թ. 110:
[4] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 35, գ. 50, թ. 99:

1942թ. օգոստոսից մինչ 1944թ. հուլիս ամիսը, վարելով հրամանատարական պաշտոններ: Հետաքննության մարմինը՝ ՀԽՍՀ ՊԱՆ-ը նրանց մեղադրեց նաեւ նրանում, որ խորհրդային բանակի հաջող հարձակումների եւ Ֆրանսիայի հարավից գերմանական զորքերի նահանջի ժամանակ, 1944թ. հուլիսին փախել էին լեգեոնից, ստեղծել «կեղծ» պարտիզանական գունդ եւ այնտեղ զբաղեցրել հրամանատարական պաշտոններ: Իսկ հետագայում խորհրդային պետական մարմիններից թաքցրել են իրենց ծառայությունը լեգեոնում, ստեղծել շինծու փաստաթղթեր, ներկայացնելով գնդի «մարտական ծառայությունները»: Հիշյալ մեղադրանքով 1949թ. հունիսի 7-11-ը 7-րդ բանակի ռազմական տրիբունալը Ա.Ղազարյանին, Դ.Մինասյանին, Ս.Յաղջյանին դատապարտեց 25, իսկ Լ.Տիտանյանին եւ Բ.Պետրոսյանին 20 տարվա ազատազրկման, որը Անդրկովկասի ռազմական օկրուգի տրիբունալը հուլիսի 23-ին թողեց ուժի մեջ[1]:

Հետաքննության ընթացքում հաշվի չառնվեցին եւ անտեսվեցին նրանց հայրենասիրական գործունեությունը ինչպես լեգեոնում, այնպես էլ հետագայում՝ հիշյալ գնդում: Չնայած մեղադրյալների միջնորդությանը, չհարցաքննվեցին այն վկաները, ովքեր կարող էին վկայել նրանց հայրենասիրական գործունեության մասին: Հետաքննությունը, իսկ այնուհետեւ դատարանը հաշվի չառան մեղադրյալների այն ցուցմունքները, որ գտնվելով ռազմագերիների ճամբարներում, ապա լեգեոնում, կազմակերպել կամ մտել են ընդհատակյա հայրենասիրական կազմակերպություն, համախմբել են հայրենսիրական տրամադրություն ունեցողներին, կապ են հաստատել պարտիզանների հետ եւ նրանց մոտ ուղարկել լեգեոներների խմբեր[2]: Հարկ է նշել, որ հետաքննությունը կատարվել էր օրինականության պահանջների խախտմամբ՝ գիշերը, իսկ ցերեկը նրանց զրկել էին քնելու հնարավորությունից[3]:

1948-49թթ. ձերբակալվում է հայկական ազգային լեգեոնում ծառայած ավելի քան 50 մարդ, որոնք փախչելով լեգեոնից, մտել էին պարտիզանական գնդի մեջ եւ մասնակցել ֆաշիստների դեմ պայքարին[4]: Ֆրանսիական շքանշաններ ստացած Հայկազ Վարդանյանը, Ռուբեն Մանուկյանը, Պարգեւ Մալխասյանը դատապարտվեցին 25 տարվա ազատազրկման[5]:

1947-48թթ. սկսեցին տուն վերադառնալ նրանք, ովքեր 1937-38թթ. դատապարտվել էին 10 տարի ժամկետով կամ պատերազմի պատճառով երկարացվել էր պատժաչափը: Սակայն, կառավարությունը նոր անակնկալ էր պատրաստում: 1948թ. փետրվարի 21-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը ընդունում է գաղտնի հրամանագիր, համաձայն որի աքսորի կամ կրկին դատապարտման էին ենթակա նրանք, ովքեր դատապարտվել էին 30-ական թվականներին[6]:

ԽՍՀՄ պետանվտանգության նախարարությանն առնքեր հատուկ խորհրդակցության վճիռներով կրկին դատապարտվում են հանրապետության հարյուրավոր բնակիչներ: Թվարկենք նրանցից մի քանիսին.

---

[1] Նույն տեղում, թթ. 126-127:
[2] Նույն տեղում, գ. 35, գ. 50, թ. 100:
[3] Նույն տեղում, գ. 39, գ. 65, թ. 22:
[4] Նույն տեղում, գ. 35, գ. 50, թ. 102:
[5] Նույն տեղում, գ. 62, գ. 2310, թ. 1, գ. 5756, թ. 1:
[6] ՌԴ նախագահի արխիվ, ֆ. 3, գ. 58, գ. 179, թթ. 28-29:

Գուրգեն Մահարի, Վահրամ Ալազան, Վաղարշակ Նորենց, Արմեն Անանյան, Կարո Ղազարյան, Արտավազդ Եղիազարյան, Ադո Ադոյան[1]:

Պատերազմի եւ հետպատերազմյան տարիներին կառավարությունն իրականացրեց ինչպես ամբողջ ժողովուրդների, այնպես էլ բնակչության առանձին խմբերի արտաքսումն իրենց հայրենի բնակավայրերից դեպի հեռավոր շրջաններ: 1941թ. օգոստոսի 28-ի հրամանագրով հայտարարվեց Պովոլժիեի գերմանացիների «վերաբնակեցում» նրանց մեջ «դիվերսանտների» եւ «լրտեսների» առկայության պատրվակով: 1943թ. հոկտեմբերից մինչեւ 1944թ. հունիսը «զավթիչների հետ համագործակցելու» համար Սիբիր եւ Միջին Ասիա արտաքսվեցին վեց այլ ժողովուրդներ՝ Ղրիմի թաթարները, չեչենները, ինգուշները, կալմիկները, կարաչաեւցիները եւ բալկարները: Նախապատերազմյան տարիներին ԽՍՀՄ-ին միացված Արեւմտյան Ուկրաինայից եւ Մերձբալթիկայից 1945-50թթ. «կուլակների ու բանդիտների» անվան ներքո Սիբիր եւ Հեռավոր Արեւելք վերաբնակեցվեցին հարյուր հազարավոր ընտանիքներ, հաճախ ամբողջական գյուղեր:

Պատերազմից հետո Հայաստանում իրագործվեց բնակչության զանգվածային արտաքսման երկու գործողություն՝ 1948 եւ 1949 թվերին: Պատմության անհայտ, վարագուրված էջերից են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1948թ. հունիսի 2-ի հրամանագրով անցկացված միջոցառումները, որոնցով իրականացվեց Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության մի ստվար զանգվածի արտաքսումը երկրի հեռավոր շրջաններ, այն պատճառաբանությամբ, թե իբր նրանք չարամտորեն խուսափել են գյուղատնտեսության մեջ աշխատելուց եւ հակահասարակական, պորտաբույծ կյանք են վարել[2]: Հրամանագիրը կարծես 1937թ. կիսատ մնացած հալածանքների հաջորդական շղթայի օղակ լիներ: Այս անգամ գյուղն էր իր մարդկանցով: Դա կատարվում էր կոլտնտեսային գյուղացիության նկատմամբ, որը չուներ նույնիսկ անձը վկայող փաստաթուղթ /անձնագիր/, չկարողանալով ազատ տեղից-տեղ փոխադրվել՝ ամրացվել էր իր իսկ հողին, որպես պետական ճորտ: Այս որոշման նախաձեռնողը Ուկրաինայի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ն.Խրուշչովն էր: Վկայակոչելով Ուկրաինայի գյուղատնտեսության խնդիրները, որը խստորեն տուժել էր պատերազմից, որ կոլտնտեսային համակարգը պատերազմի պատճառով թուլացել էր, Խրուշչովը դիմեց Ստալինին եւ Բերիային առաջարկելով խստացնել պետական քաղաքականությունը գյուղացիության այն մասի նկատմամբ, ովքեր չէին ցանկանում աշխատել կոլտնտեսություններում[3]: Խրուշչովն այդ մարդկանց բնութագրում էր որպես «հանցագործներ եւ պարազիտային տարրեր»:

Խրուշչովի նախաձեռնությունը Մոսկվայում գնահատվեց հեռանկարային ոչ միայն Ուկրաինայի, այլ ամբողջ ԽՍՀՄ-ի համար: Նրա զեկուցագրի հիման վրա պատրաստվեց ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության հրամանագիրը, որի մշակմանը մասնակցեցին Գ.Մալենկովը, Ա.Ժդանովը, Լ.Բերիան եւ Մ.Սուսլովը: Ծանոթանալով հրամանագրի նա-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 61, գգ. 1234, 2783, 6531, 9360, ց. 62, գգ. 233, 5518:
[2] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 207, ց. 10, գ. 79, թթ. 15-16:
[3] Попов В.П., Неизвестная инициатива Хрущева. (О подготовке Указа 1948г. о выселении крестян). Отечественные архивы. 1993. N 2, с.31-46.

խագծի հետ՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարը նրա վրա թողեց ուշագրավ մակագրություն. «Ոչ մամուլի համար: Ի.Ստալին»[1]:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի եւ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի 1942թ. ապրիլի 13-ի «Կոլտնտեսականների համար պարտադիր աշխօրերի մինիմումը բարձրացնելու մասին» որոշման[2] հիման վրա ՀԽՍՀ Ժողկոմխորհը եւ ՀԿ/բ/Կ Կենտկոմը ապրիլի 21-ին որոշեցին բամբակացան շրջաններում բարձրացնել կոլտնտեսականների աշխօրերի պարտադիր մինիմումը մինչեւ 150, իսկ հանրապետության մնացած շրջաններում՝ 120 աշխօր: Ընդ որում, աշխօրերի որոշակի չափ սահմանվեց նաեւ տարվա առանձին ժամանակամիջոցի համար, մինչեւ նոյեմբերի 1-ը պետք է կատարվեր նվազագույն աշխօրերի մոտ 90 տոկոսը[3]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1948թ. հունիսի 2-ի հրամանագիրը ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ շրջաններ ուղարկելու համար նախ թարգմանվեց հայերեն եւ ադրբեջաներեն: Հրապարակման համար չնախատեսված այդ փաստաթուղթը շրջաններ էր ուղարկվում որոշակի ժամկետով եւ վերադարձնելու պայմանով: Այդ հրամանագրի մասին խորհրդային երկրի պատմության բազմահատորյակներն ու մյուս գրքերը լռել են:

Մինչեւ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրի ընդունումը ՀամԿ/բ/Կ Կենտկոմը եւ ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը մայիսի 25-ին փակ նամակով հանրապետությունների ղեկավարներին տեղյակ են պահում անցկացվող «միջոցառման» մասին: ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն մայիսի 31-ին լսելով Գ.Հարությունյանի հաղորդումը, որոշում է «հունիսի 3-ին հրավիրել շրջկոմների քարտուղարների ու շրջգործկոմների նախագահների խորհրդակցություն, նրանց ծանոթացնել նամակին եւ հանգամանորեն հրահանգավորել կուսակցության եւ կառավարության դիրեկտիվի իրագործման առաջիկա աշխատանքների մասին»[4]:

ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն 1948թ. հունիսի 10-ին քննարկում եւ ընդունում է. «ՀամԿ/բ/Կ Կենտկոմի եւ Մինիստրների խորհրդի 1948թ. մայիսի 25-ի փակ նամակի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1948թ. հունիսի 2-ի հրամանագրի եւ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1948թ. հունիսի 3-ի «Գյուղատնտեսական աշխատանքից խուսափող եւ հակահասարակական, պարազիտային կյանք վարող մարդկանց հեռավոր շրջաններ արտաքսելու մասին»՝ որոշման համաձայն նախապատրաստական աշխատանքներ կատարելու միջոցառումների վերաբերյալ» որոշումը:

ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն ի գիտություն է ընդունում Գ.Հարությունյանի հաղորդումը, թե դեռ հունիսի 3-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմը շրջկոմների քարտուղարներին ու շրջգործկոմների նախագահներին ծանոթացրել է ՀամԿ/բ/Կ Կենտկոմի եւ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի փակ նամակին եւ հրահանգավորել առաջիկա աշխատանքների մասին՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագիրը կենսագործելու համար, հանձնարարելով կուսակցության շրջկոմների քարտուղարներին մինչ հունիսի 15-ը շրջանի ղեկավար ակտիվին հասցնել միութենական մարմինների որոշումնե-

---

[1] Там же, с. 36-37.
[2] КПСС в резолюциях, т. 7, М. 1985, с. 281-282
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 22, գ. 29, թ. 19:
[4] Նույն տեղում, ց. 28, գ. 46, թ. 190:

որը: Կենտկոմի բյուրոն նպատակահարմար է գտնում միջոցառումները նախ անցկացնել էջմիածնի, Կիրովականի, Մարտունու, Ախուրյանի եւ Իջեւանի շրջանների 2-3-ական կոլտնտեսություններում՝ «փորձ կուտակելու հետագա աշխատանքների համար»: Որոշվում է նաեւ «Շրջկոմների քարտուղարներին ու շրջգործկոմների նախագահներին պարզաբանել, որ միջոցառումները, որոնք նշված են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրում, չեն կարող անցկացվել կամպանիայով, անմիջապես, քանի որ այն կարող է հասցնել այդ գործում ղեկավարության կորստի, անպատրաստության եւ սխալների: Ընդ որում, ամբողջ նախապատրաստական աշխատանքները պետք է անցկացնել շատ մանրակրկիտ, մտածված եւ դրանով հանդերձ իրականացնել նախօրոք նախատեսված նախազգուշական միջոցառումները, բացառելով որեւէ պատահականություն եւ փախուստի փորձ կամ արտաքսման ենթակա առանձին մարդկանց վրեժխնդրություն: Այնուհանդերձ, մինչեւ կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վճռի կայացման օրը պետք է պահպանել նախատեսված անձանց արտաքսման մասին խիստ գաղտնիություն: Ներքին գործերի նախարարությանը՝ երկօրյա ժամկետում անցկացնել ներքին գործերի նախարարության շրջանային բաժինների խորհրդակցություն եւ միութեանական կառավարության ու ներքին գործերի նախարարության ցուցումներին համապատասխան մանրակրկիտ հրահանգավորել առաջիկա աշխատանքները՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրն իրականացնելու համար»[1]:

ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն հունիսի 21-ին, ըստ նախորդ որոշման, քննում է. «Հայաստանի հինգ շրջաններում անցկացված կոլտնտեսականների առաջին ժողովների արդյունքները եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1948թ. հունիսի 2-ի հրամանագիրը հանրապետության բոլոր շրջաններում հետագա կիրառման միջոցառումների մասին» հարցը: Ընդունված որոշման արձանագրային մասում նշվում է, որ «կոլտնտեսականների ընդհանուր ժողովները, որոնք տեղի են ունեցել էջմիածնում, Կիրովականում, Իջեւանում, Ախուրյանում, Մարտունիում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1948թ. հունիսի 2-ի հրամանով նախատեսված միջոցառումների իրականացման ուղղությամբ, կայացվել են կազմակերպական բարձր մակարդակով եւ նրանց քաղաքական մեծ ակտիվությամբ: Կոլտնտեսականների ժողովների հետեւանքով բեկում է նկատվել աշխատանքային կարգապահության ամրապնդման, նրանց ակտիվության բարձրացման գործում: Նրանց ժողովների փորձը ցույց է տալիս, որ միջոցառումների հաջող իրականացումը, որոնք նախատեսված են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1948թ. հունիսի 2-ի հրամանագրով, կախված է.

ա/ կոլտնտեսականների ժողովների մանրակրկիտ նախապատրաստությունից եւ այն մարդկանց բազմակողմանի ուսումնասիրությունից, որոնց դեմ նախատեսված են իրականացվող միջոցառումները, եւ որոնք բխում են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1948թ. հունիսի 2-ի հրամանագրից,

բ/ ստեղծել հասարակական կարծիք այն մարդկանց նկատմամբ, ովքեր խուսափում են գյուղատնտեսության մեջ աշխատանքից եւ վարում են հակահասարակական, պարազիտային կյանք,

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 47, թթ. 11-12:

գ/ ապահովել կուսակազմակերպությունների ճիշտ եւ մշտական ղեկավարությունն ակտիվի խորհրդակցությունների, կոլտնտեսականների ժողովների եւ այլնի գումարումը կազմակերպելու նպատակով»:

ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն որոշում է հանձնարարել շրջանների ղեկավարությանը «ձեռնամուխ լինել կոլտնտեսականների ընդհանուր ժողովների անցկացման ժամանակ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը: Հաշվի առնելով, որ հրամանագիրը մշտական գործող միջոցառում է, չցուցաբերել շտապողականություն, կոլտնտեսականների ժողովները չանցկացնել միանգամից, կարճ ժամանակամիջոցում, կամպանիայով, այլ աստիճանաբար, տարբեր ժամկետներում»[1]: Միաժամանակ որոշվում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրի կենսագործումը ապահովելու նպատակով շրջաններին ղեկավարելու եւ օգնելու, կոլտնտեսականների ժողովներին անձնական մասնակցություն ունենալու համար կուսակցական-խորհրդային ղեկավար աշխատողներին շրջաններ գործուղել մեկ ամիս ժամանակով:

Հեռավոր շրջաններ աքսորվողների մի մասը գյուղական արհեստավորությունն էր /դերձակներ, որմնադիրներ, պայտարներ, հյուսներ, դարբիններ/, որոնք գյուղից գյուղ էին շրջում, ուր զգացվում էր նրանց կարիքը: Շատ վայրերում աշխօրերի մինիմումը չկատարողների հետ աքսորվեցին, այսպես կոչված, նախկին դաշնակցականներ, Հայրենական մեծ պատերազմի ժամանակ գերի ընկածներ, նույնիսկ երեխամայրեր: Ինչպես ներքոհիշյալ փաստաթղթերն են վկայում, ժողովներ գումարելու համար նախօրոք նախապատրաստական աշխատանքներ էին տարվում՝ գրվում էին որոշումները, հաստատվում աքսորյալների ցուցակները: Փաստ է նաեւ այն, որ շրջգործկոմների կողմից գրեթե միշտ նրանց թիվը նվազեցվում էր: Առանձին գյուղերում եղել են դեպքեր, երբ աշխօրերի մինիմումը չկատարողների համար կատարվել են հավելագրումներ, նպատակ ունենալով նրանց փրկել: Նման դեպքերում, հասկանալի է, որ տուժել են ոչ միայն աշխօրերի մինիմում չկատարողները... ՀԽՍՀ ՆԳՆ ամփոփագրերից երեւում է, որ շատ ընտանիքների անդամներ կամավոր ցանկացել են մեկնել հեռավոր շրջաններ: Այդ փաստաթղթերը տվյալներ են հաղորդում կոլտնտեսությունների ժողովների քանակի, աքսորվողների մասին ընդունված որոշումների, շրջգործկոմների կողմից ցուցակների վերջնական հաստատման, ինչպես նաեւ ստորագրություններ վերցնելու մասին: Ահա դրանցից մեկը.

ՏԵՂԵԿԱՆՔ

1948թ. հուլիսի 30-ի տվյալներով

Ընդամենը հեռացվել են եւ կոլտնտեսականների ընդհանուր ժողովներով արտաքսվել են 281մարդ
Շրջգործկոմի կողմից հաստատվել են.....235__,,__
Չեղյալ են հայտարարվել շրջգործկոմների որոշումներով.....46 __,,__
Արդեն արտաքսվել են..... .....235__,,__
«Հրամանագրի տակ ընկածների» հետ մեկնել են ընտանիքի անդամներ.....169__,,__
Ընդամենն արտաքսվել են /հրամանագրի տակ ընկածներ եւ ընտանիքի անդամներ, որոնք ցանկություն են հայտնել մեկնել/..... .....404__,,__

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 47, թ. 29:

Ստորագրություն է վերցված նախազգուշացումով 715 կոլտնտեսականից[1]:

Ժողովներում հարյուրավոր մարդկանցից ստորագրություններ են վերցվել աշխատերի պարտադիր մինիմումը կատարելու պարտավորության մասին: Արխիվային փաստաթղթերից մեկում, որը կազմվել է 1948թ. հոկտեմբերի 13-ին, ՀԿ/բ/Կ Կենտկոմի գյուղբաժնի հրահանգիչների կողմից, ի մի են բերված հրամանագրի իրականացման ստուգման արդյունքները: Զեկուցագրում նշվում է, որ մի շարք կոլտնտեսականներ շարունակում են չկատարել աշխատերի մինիմումը, առանց կոլվարչության թույլտվության հեռանում են գյուղից: Կոնկրետ օրինակներ են բերվում նաեւ շրջգործկոմների կողմից կոլտնտեսականների ժողովների որոշումները չհաստատելու վերաբերյալ: 1949թ. փետրվարին ՀամԿ/բ/Կ Կենտկոմ ուղարկած «ՀԽՍՀ կոլտնտեսություններում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1948թ. հունիսի 2-ի հրամանագրի իրականացման ընթացքի մասին» ՀԿ/բ/Կ Կենտկոմի զեկուցագրից տեղեկանում ենք, որ կոլտնտեսությունների ընդհանուր ժողովները հանրապետությունից արտաքսելու մասին որոշում են ընդունել 391 մարդու նկատմամբ: Շրջխորհուրդների գործկոմները հաստատել են 315 մարդու մասին որոշումները, որոնք բոլորն էլ արտաքսվել են[2]:

Ըստ ՀԽՍՀ ՆԳՆ ամփոփագրերի, հեռավոր շրջաններ արտաքսվածների ընդհանուր թիվը, ընտանիքի անդամներով, ավելի քան 1000 մարդ է՝ ութ տարի ժամկետով: 1949թ. հունվարին ԽՍՀՄ պետանվտանգության նախարարության հանձնարարությամբ Անդրկովկասի հանրապետություններում եւ Սեւ ծովի առափնյա շրջաններում սկսում են կազմվել նախկին դաշնակցականների եւ հայ լեգեոնականների ու նրանց ընտանիքների անդամների ցուցակներ: Նախապատրաստվում էր հայ բնակչության մի հոծ զանգվածի մշտական արտաքսում հեռավոր շրջաններ: Նախապատրաստական աշխատանքները իրականացվում էին խիստ գաղտնի պայմաններում: Պետանվտանգության շրջանային բաժանմունքների պետերի համար, որոնք նախապատրաստում էին նյութեր եւ կազմում տեղեկանքներ, անհայտ է եղել իրականացվող միջոցառման նպատակը: Նրանց որեւէ գրավոր հրահանգ չէր տրվել, տեղեկանքների կազմելու մասին նրանք ստացել էին միայն բանավոր ցուցումներ[3]:

1949թ. մայիսի 28-ին ԽՍՀՄ պետանվտանգության նախարարությունը ընդունել է հրահանգ, իսկ հաջորդ օրը՝ ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը Ստալինի ստորագրությամբ, թ.2214-856 խիստ գաղտնի որոշումը՝ «Վրացական, Հայկական եւ Ադրբեջանական ԽՍՀ-ներից, ինչպես նաեւ Սեւ ծովի առափնյա տարածքներից արտաքսվողների տեղափոխության, վերաբնակեցման եւ աշխատանքի տեղավորման մասին«[4]:

Ինչպես հայտնի է դառնում ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշումից, պետանվտանգության մարմինների կողմից անց էր կացվում վերոհիշյալ տարածքներում բնակվող «դաշնակցականների, թուրքահպատակ քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող թուրքերի, խորհրդա-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 77, թ. 12:
[2] Նույն տեղում, ց. 29, գ. 90, թ. 398:
[3] Նույն տեղում, ց. 39, գ. 65, թ. 35:
[4] Փաստաթուղթը մեր կողմից բերվել է ՈԴ նախագահի արխիվից: Տես ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 84, թթ. 1-3:

յին քաղաքացիություն ընդունած նախկին թուրքական քաղաքացիների, հունահպատակների, քաղաքացիություն չունեցող նախկին հունահպատակների եւ խորհրդային քաղաքացիություն ընդունած նախկին հունահպատակների» արտաքսում: Որպես վերաբնակեցման վայր «դաշնակցականների», այսինքն՝ հայերի համար, նախատեսված էր Ալթայի երկրամասը, թուրքերի համար Տոմսկի մարզը, իսկ հույների՝ Ղազախական ԽՍՀ Հարավղազախստանյան եւ Ջամբուլի մարզերը: Որոշման հաջորդ կետերով հանձնարարություններ էին տրվում ներքին գործերի, հաղորդակցության, ֆինանսների, նավթարդյունաբերության, առեւտրի եւ այլ նախարարություններին հոգալ արտաքսվողների տեղափոխման, կերակրման, աշխատանքի տեղավորման, տների կառուցման եւ ընտանի կենդանիներ ձեռք բերելու նպատակով միջոցների տրամադրման հարցերը: Որոշումը եւ արտաքսումը իրականացնելու համար երեւան են ժամանում պետանվտանգության նախարարության բարձրաստիճան ղեկավարներ՝ 2-րդ գլխավոր վարչության պետի տեղակալ գեներալ-լեյտենանտ Յու.Եդունովի գլխավորությամբ: Վերջինս բնակչության զանգվածային արտաքսման մեծ փորձ ուներ: Նա դրանից մեկուկես ամիս առաջ, մարտի 25-28-ին ղեկավարել էր Լիտվայից «բանդիտների եւ կուլակների» ընտանիքների արտաքսումը թվով 28981 մարդ:

Հունիսի 11-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմում խիստ գաղտնի պայմաններում տեղի է ունեցել խորհրդակցություն, որին մասնակցել են քաղկոմշրջկոմների առաջին քարտուղարներ, ՀԿ/բ/Կ Կենտկոմի եւ պետանվտանգության նախարարության պատասխանատու աշխատողներ, Մոսկվայից ժամանածներ: Արձանագրություն չի կազմվել: Գ.Հարությունյանը հաղորդել է հանրապետությունում բնակվող «անբարեհույս տարրերին» Ալթայի երկրամաս արտաքսելու վերաբերյալ խորհրդային կառավարության որոշման մասին: Ցուցակների մասին հայտնել է պետանվտանգության նախարար Ս.Կորխմազյանը, նշելով է նաեւ «օպերացիայի» ժամկետների, տրանսպորտի շարժման երթուղիների մասին: Հունիսի 12-ին Երեւանում եւ Լենինականում, հանրապետության շրջաններում կազմվում են կուսակցական եւ խորհրդային ակտիվից այն անձանց ցուցակները, ովքեր պետք է մասնակցեին արտաքսման իրականացմանը: Հաջորդ օրը, երեկոյան, քաղկոմներում եւ շրջկոմներում գաղտնի պայմաններում անցկացվում են ընտրված անձանց համար խորհրդակցություններ, որտեղ տրվում են համապատասխան հրահանգներ: Պետանվտանգության բաժանմունքների աշխատողները, կցված ակտիվի հետ, արտաքսման «օպերացիան» պետք է իրականացնեին հունիսի 13-ի լույս 14-ի գիշերը:

ՀԿ/բ/Կ Ղափանի շրջկոմի քարտուղարի զեկուցագրից պարզվում է, որ «կառավարության որոշման մասին հաղորդումը շրջանի կուսակցական եւ սովետական ակտիվը ընդունել է մեծ հավանությամբ եւ նրանց առջեւ դրված խնդիրը օպերացիայի անցկացման ապահովման ուղղությամբ, մեր կարծիքով, իրականացվեց լավ»[1]:

Արտաքսման գործողությունները հանրապետությունում սկսվում են հունիսի 14-ի առավոտյան ժամը 4-ին եւ ավարտվում 6-7-ին: Կեսօրին արտաքսվող ընտանիքները ռազմական մարմինների մեքենաներով հասցվեցին մոտակա երկաթուղային կայարաններ, որտեղ նրանց սպասում էին բեռնատար վագոններով գնացքակազմերը: Իրականացված գործո-

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 29, գ. 123, թ. 2:

ղությունների մասին ՀԿ/բ/Կ Կենտկոմ է ուղարկվել ընդամենը երեք զեկուցագիր: Ներկայացնենք մի քանի հատված դրանցից. «Օպերացիան կատարվեց միանգամայն կազմակերպված, ժամանակին, եւ պահպանվեցին պահանջվող բոլոր օրինականությունները: *Օրինականության խախտման* /ընդգծումը մերն է- Ա.Վ./, սխալ արտաքսման կամ արտաքսման ենթական մարդկանց կողմից դիմադրության որեւէ դեպք տեղի չի ունեցել,» /ՀԿ/բ/Կ Կրասնոսելսկի շրջկոմի քարտուղարի զեկուցագրից/[1]: «Օպերացիայի ընթացքում ոչ մի հակասովետական արտահայտություն, բացասական տրամադրություն չի դիտվել: *Աշխատանքից* /ընդգծումը մերն է- Ա.Վ./ հետ վերադարձող ընկերները զեկուցեցին արտաքսման ենթարկված մի քանի դաշնակների եւ լեգեոներների մռայլ հնազանդության մասին, ինչպես նաեւ օպերացիային ականատես եղած գյուղերի կոլտնտեսականների եւ քաղաքի աշխատավորության արտահայտած համաձայնությունների մասին խորհրդային կառավարության որոշման առթիվ» /ՀԿ/բ/Կ Ղափանի շրջկոմի քարտուղարի զեկուցագրից/: «Արտաքսման ընթացքում ամրագված ակտիվը ցույց տվեց մեծ օգնություն, հանձնարարված խնդրի կատարումից խուսափելու կամ վախկոտության փաստեր չեն արձանագրվել: Միայն անհրաժեշտ է նշել՝ արտաքսման ժամանակ մի քանի կոմունիստներ լացով եւ գրկախառնությամբ ճանապարհեցին արտաքսվողներին, օրինակ՝ Աղասի Ավետյանը, էլիգում Պողոսյանը, Գերասիմ Հակոբյանը, Խաչատուր Սիմոնյանը եւ ուրիշներ» /ՀԿ/բ/Կ Ազիզբեկովի շրջկոմի քարտուղարի զեկուցագրից/[2]:

Հունիսի 15-ին «Օպերացիայի» անցկացումից հետո գյուղերում եւ քաղաքների հիմնարկ-ձեռնարկություններում անցկացվեցին կուսակցական դռնբաց ժողովներ, ուր հանդես եկան շրջկոմների ղեկավար աշխատողները: «Բոլոր կուսակցական ժողովները, նշված է Կրասնոսելսկի շրջկոմի զեկուցագրում, հավանություն տալով քաղաքական այդ կարեվոր միջոցառմանը, որոշումներ են ընդունել՝ բարձրացնել կոմունիստների եւ աշխատավորության քաղաքական զգոնությունը, մոբիլիզացնել աշխատավորական լայն մասսաներին շրջանի առաջ դրված գյուղատնտեսական խնդիրները հաջողությամբ կենսագործելու համար»[3]:

Կատարվել էր ծանր հանցագործություն, տեղի էր ունեցել սոսկալի ողբերգություն, իսկ իշխանությունները աշխատավորներին հանգիստ կոչ էին անում շրջանի առջեւ դրված «գյուղատնտեսական խնդիրները հաջողությամբ» լուծել: Այդպիսին էր ժամանակաշրջանը, կոմկուսի հաստատած ամենատիրությամբ հանդերձ: ՀՀ ՆԳՆ արխիվում պահպանվում է արտաքսման ենթակա 2935 մարդու գործ /ընտանիքի անդամներով 13272 հոգի/[4]: Սակայն արտաքսման ընթացքում պարզվեց, որ որոշ մարդկանց զավակներ մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին եւ ունեն կառավարական պարգեւներ, իսկ այդպիսիները ենթակա չէին արտաքսման, նրանք հանվեցին ցուցակներից: 1954թ. ԽՄԿԿ Կենտկոմ ուղարկված մի գրությունում արտաքսվածների թվաքանակը նշվում է

---

[1] Նույն տեղում, գ. 125, թ. 2:
[2] Նույն տեղում, գ. 105, թ. 2:
[3] Նույն տեղում, գ. 125, թ. 3:
[4] *Մանուկյան Ա.*, նշվ. աշխ., էջ 231:

3017 ընտանիք, 14 հազար մարդով[1], իսկ 1956թ. կազմված մի այլ փաստաթղթում՝ 2754 ընտանիք՝ 12316 մարդով[2]:

Համաձայն ԽՍՀՄ կառավարության որոշման, արտաքսումն իրականացվեց նաեւ Անդրկովկասի մյուս հանրապետություններում եւ Ռուսաստանի սեւծովափյա շրջաններում: Դժբախտաբար, այդ վայրերից աքսորված հայերի մասին տվյալներ չհաջողվեց հայտնաբերել, սակայն պահպանվել են բազմաթիվ փաստեր: Ախալցխա քաղաքից արտաքսվում են 82 ամյա Խորեն Սարաջեւը, 75 ամյա կնոջ եւ հոգեկան հիվանդ որդու հետ, 1904թ. Հ.Յ.Դ. պատկանելու մեղադրանքով[3]:

Արտաքսվածների սոցիալական կազմը, աշխատանքային բնույթը, ազգային պատկանելությունը, քանակը՝ ըստ հանրապետության շրջանների մանրամասն վերլուծել է Ա.Մանուկյանը «Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ.» աշխատության մեջ: 1949թ. արտաքսման վերաբերյալ փաստաթղթեր ընդհանրապես քիչ են պահպանել, չհաշված արտաքսվածների գործերը, չեն ընդունվել ՀԿ/բ/Կ Կենտկոմի կամ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշումներ[4]:

Իրենց կատարած աշխատանքի մասին զեկուցագիր են ուղարկել ընդամենը երեք կուսշրջկոմ: Արտաքսման ընդհանուր պատկերը պարզելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երկու հանգամանքի վրա: Արտաքսումից ազատվում էին այն «դաշնակցականները« եւ նրանց ընտանիքները, որոնց զավակները մասնակցել էին Հայրենական պատերազմին, իսկ այդպիսիները շատ էին: Այլապես «օպերացիայի» զոհերը ավելի շատ կլինեին: Եվ երկրորդ. արտաքսվողների հետ կամավոր մեկնում էին մարդիկ, ովքեր արտաքսման ենթակա չէին: Համաձայն ԽՍՀՄ կառավարության որոշման անժամկետ արտաքսման ենթակա էին դաշնակցականներն իրենց ընտանիքներով, սակայն անժամկետ արտաքսվեցին նաեւ «հայկական լեգեոնում» ծառայածների ընտանիքները, որոնք կազմում էին արտաքսվածների մոտ մեկ երրորդ մասը 879 ընտանիք: Հայ լեգեոներների աքսորման որոշումը ընդունել էր ԽՍՀՄ պետանվտանգության նախարարությունը 1949թ. մայիսի 28-ի հրահանգով, հակառակ ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1945թ. օգոստոսի 18-ի որոշման, որով լեգեոնականները արտաքսվում էին 6 տարի ժամկետով: Փաստորեն, ԽՍՀՄ պետանվտանգության նախարարությունը, ինչպես նշված է 1955թ. ԽՍԿԿ Կենտկոմ ուղարկված մի փաստաթղթում, «կամայականորեն» ՀԽՍՀ-ից անհիմն կերպով անժամկետ արտաքսել էր 879 լեգեոներ՝ իրենց ընտանիքներով[5]:

Արտաքսվեցին նաեւ որոշ հայրենադարձ հայեր, սակայն նրանց քանակը մեծ չէր, որովհետեւ Խորհրդային Հայաստան ներգաղթածներից

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 34, գ. 61, թ. 147:
[2] Նույն տեղում, ց. 36, գ. 52, թ. 43:
[3] Նույն տեղում, ց. 29, գ. 99, թթ. 33-34:
[4] 1956թ. ՀԿԿ կենտկոմի քարտուղար Ս.Թովմասյանին ուղարկված մի գրությունում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Շ.Առուշանյանը նշում է, որ «1949թ. ապրիլին Գ. Հարութինովը հատուկ հեռագրով դիմել է Ստալինին, ապա ՊԱՍ նախկին մինիստր, այժմ գնդակահարված թշնամի Աբակումովին, խնդրելով նրանց թույլ տալ Հայկական ՍՍՌ-ից արտաքսել 2000-2500 մարդ, ըստ Հարութինովի՝ դաշնակներին» /ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 36, գ. 39, թ. 47/: Մեզ չհաջողվեց ճշտել այդպիսի հեռագրի առկայությունը:
[5] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 35, գ. 45, թ. 165:

շատ քչերն էին, որ այս կամ այն կերպ, այն էլ երիտասարդ տարիքում, կապված էին եղել դաշնակցական կուսակցության հետ: Եվ ճիշտ չէ շրջանառված այն մտայնությունը, թե իբրեւ արտաքսվել են հազարավոր հայրենադարձներ: 1949թ. հունիսին իրագործված բռնադատությունն «օրինականացվեց» 1950թ. առաջին կեսին ԽՍՀՄ ՊԱՆ-ին առընթեր հատուկ խորհրդակցության անհատական որոշումներով, ձեւականորեն քննվելուց հետո: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1950թ. ապրիլի 6-ի հրամանագրով արտաքսվածների վրա տարածվում է նախագահության 1948թ. նոյեմբերի 26-ի հրամանագիրը, որով պատերազմի տարիներին արտաքսված ժողովուրդների համար վերաբնակեցման ժամկետը ԽՍՀՄ հեռավոր շրջաններ համարվեց մշտական, առանց բնակության նախորդ վայրը վերադառնալու իրավունքի: Վերաբնակեցման վայրից ինքնակամ հեռանալու /փախուստի/ համար նրանք ենթակա էին քրեական պատասխանատվության՝ 20 տարվա տաժանակիր աշխատանքների[1]:

Մինչեւ արտաքսվածներով գնացքների շարժակազմերը հասնում էին Ալթայի երկրամաս, ՀԽՍՀ պետանվտանգության նախարարության աշխատակիցներն իրենց կրծքերին էին ամրացնում «կառավարության հանձնարարությունը կատարելու համար» ստացած պարգեւները՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1949թ. օգոստոսի 24-ի հրամանագրով 103 մարդ պարգեւատրվեցին շքանշաններով: Նախարար Սերգեյ Կորխմազյանը պարգեւատրվեց «Կարմիր Դրոշի», տեղակալներ Համբարձում Հակոբյանը եւ Գեորգի Մովսեսովը՝ «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», մյուսները տարբեր շքանշաններով ու մեդալներով[2]: Բնակչության հոծ մասի դժբախտությունը միջոց էր դառնում մյուսների փառքի համար:

1950-ական թվերի սկզբին բռնությունների ենթարկվեցին մի քանի մտավորականներ, որոնք քննադատաբար հանդես էին գալիս հանրապետության ղեկավարության դեմ: 1952թ. հունվարին ՀԽՍՀ պետանվտանգության նախարար Ս.Կորխմազյանը Գր.Հարությունյանին մի շարք զեկուցագրեր է հանձնում Հայաստանի «ազգայնականների» մասին: Նրանց թվում էին գրականագետ Հրայր Մուրադյանը եւ դասախոս Համո Վարդանյանը: Զեկուցագրերում Հ.Մուրադյանին, Հ.Վարդանյանին վերագրելով հակախորհրդային ազգայնական գործունեություն՝ առաջարկվում էր նրանց ձերբակալել եւ ենթարկել քրեական պատասխանատվության: Հ.Մուրադյանի եւ մյուսների մասին զեկուցագրի վրա Գր.Հարությունյանը մակագրում է. «Թույլ տալ»[3]:

Ստանալով հանրապետության դատախազ Ի.Իսագուլովի սանկցիան, պետանվտանգության նախարարությունը հունվարի 16-ին ձերբակալում է Հ.Վարդանյանին[4], իսկ հաջորդ օրը՝ Հ.Մուրադյանին[5]:

Հետաքննությունը վարվում էր օրինականության կոպիտ խախտումներով: ՀԽՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի կոլեգիան 1952թ. մայիսի 10-ին Հ.Մուրադյանին դատապարտում է 10 տարվա ազա-

---

[1] ՌԴ պետական արխիվ, ֆ. 8131, ց. 32, գ. 3286, թ. 114:
[2] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 207, ց. 10, գ. 107, թթ. 16-20:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 500, ց. 1, գ. 121, թ. 177:
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 61, գ. 5779, թ. 34:
[5] Նույն տեղում, ց. 33, գ. 70, թ. 138:

տազրկման «ազգայնական համոզմունք ունենալու, շրջապատում զըրպարտչական, հակախորհրդային, ազգայնական գաղափարներ եւ մտքեր տարածելու համար: Նա հայտարարել էր, որ Հայաստանում ընթանում է ռուսականացում, որ ռուսական լեզվի ուսուցումը ընդունել է լայն թափ, որ հայոց լեզուն նեղվում է, որի պատճառով հայերը ստիպված են իրենց երեխաներին ուղարկել ռուսաց դպրոցներ, որ այդ երեւույթը տանում է հայոց լեզվի եւ մշակույթի մահացման ու ծուլման»[1]: Մայիսի 29-ին նույն պատժաչափն է ստանում նաեւ Համո Վարդանյանը «պարբերաբար ազգայնական եւ հակախորհրդային հայացքներ արտահայտելու, հակակուսակցական դիրքերից բոլշեւիկյան կուսակցության քաղաքականությունը քննադատելու, ժողովրդի թշնամիներին եւ նրանց գաղափարախոսությունը գովերգելու, դրա հետ միասին տրոցկիստական եւ օպորտունիստական մտքեր արտահայտելու, ԽՄԿԿ-ի եւ Խորհրդային պետության ղեկավարների հասցեին զազրելի հարձակումների համար»[2]:

Քաղաքական բռնադատումներին վերջ տվեց Ստալինի մահը, կանխելով նոր, հսկայական «զտումների« մասին նրա մտահղացումները:

4. ԵԿԵՂԵՑԻՆ ԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Երկրորդ աշխարհամարտի տարիներին կտրուկ շրջադարձ տեղի ունեցավ խորհրդային պետության եւ եկեղեցու փոխհարաբերություններում: 1943թ. սեպտեմբերի 4-ին Ի.Ստալինն ընդունեց Ռուս ուղղափառ եկեղեցու տեղապահ Սերգիին եւ բարձրաստիճան այլ հոգեւորականների: Հանդիպումից մի քանի օր անց, սեպտեմբերի 8-ին, տեղի ունեցան 1925թ. թափուր մնացած պատրիարքի ընտրություններ: 1943թ. հոկտեմբերի 29-ին ՀամԿ/բ/Կ Կենտկոմը որոշում է բավարարել ՀԿ/բ/Կ Կենտկոմի խնդրանքը եւ թույլատրում է ստեղծել ՀԽՍՀ ժողկոմխորին կից հայ լուսավորչական եկեղեցու գործերի խորհուրդ[3]: 1944թ. հունվարից սկսվում է հրապարակվել «Էջմիածին» ամսագիրը՝ Մայր Աթոռի պարբերականը: Մայիսի 19-ին ԽՍՀՄ կառավարության որոշմամբ ժողկոմխորհին կից ստեղծվում է կրոնական պաշտամունքների գործերի խորհուրդ, իսկ հունիսի 1-ին՝ ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն հաստատում է հայ եկեղեցու գործերի խորհրդի կազմը՝ Սուրեն Հովհաննիսյան /նախագահ/, Կարո Ղաֆադարյան եւ Հրաչյա Աճառյան: Խորհրդային պետության եւ հայ եկեղեցու հարաբերություններն ավելի հստակվեցին 1945թ. ապրիլի 19-ին Ստալինի եւ կաթողիկոսական տեղապահ Գեւորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի հանդիպումով, երբ նա մի շարք խնդրանքներ է ներկայացնում Ստալինին՝ անցկացնել Ազգային եկեղեցական ժողով եւ ընտրել կաթողիկոս, վերաբացել հոգեւոր ճեմարանը, վերադարձնել վանքերը, ստեղծել տպարան, հայագիտական հոդվածներ տպագրել «Էջմիածին»-ում: Ստալինը բավարարեց տեղապահի առաջ քաշած բոլոր խնդրանքները եւ նրա ներկայացրած խնդրագրի վրա մակագրեց. «Համաձայն եմ: ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահ Իոսիֆ Ստալին: 19/IV 45թ.»[4]:

---

[1] Նույն տեղում, ֆ. 500, g. 1, գ. 121, թ. 179:
[2] Նույն տեղում, ֆ. 1, g. 61, գ. 5779, թ. 34:
[3] Նույն տեղում, g. 23, գ. 24, թթ. 58-59, g. 032, գ. 31, թ. 9: «Սովետական Հայաստան», 1943, 14 նոյեմբերի:
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 24,գ. 32, թ. 83:

1945թ. հունիսի 16-ին Ս.Էջմիածնի հոգեւոր ճեմարանի դահլիճում բացվեց Ազգային եկեղեցական ժողով, որին մասնակցում էին պատգամավորներ ԽՍՀՄ եւ արտասահմանյան թեմերից, օտարերկրյա հյուրեր: Հյուրերի թվում էին ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Ի.Պոլյանսկին, խորհրդի անդամ Կ.Պուգոն, հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս.Հովհաննիսյանը: Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Գեւորգ Չորեքչյանը՝ Գեւորգ Զ անունով:

Պետությունը թույլատրեց վերաբացել մի քանի պաշտամունքային կառույցներ: Եթե պատերազմի տարիներին հանրապետությունում գործում էին 4 եկեղեցի եւ 2 վանք, ապա եկեղեցական ժողովի նախօրեին՝ 1945թ. փետրվարի 27-ին ՀԽՍՀ Ժողկոմխորհը որոշեց վերաբացել 10 եկեղեցի եւ 4 վանք, որոնք, բացի Նորագավթի եկեղեցուց, որը օգտագործվում էր որպես ռազմական պահեստ, անմիջապես սկսեցին գործել: 1947թ. ժողկոմխորհի նախագահ Ս.Կարապետյանի կարգադրությամբ վերաբացվեցին եւս 3 եկեղեցի եւ արդեն 1948թ. գործում էին 22 եկեղեցի եւ վանք: Գեւորգ Զ կաթողիկոսը 1948թ. իշխանությունների առջեւ պահանջ դրեց Հայաստանի յուրաքանչյուր շրջանում ունենալ մեկական, այսինքն 40-50 եկեղեցի: Ինչպես նշված է հայ եկեղեցու գործերի խորհրդի /ՀԵԳԽ/ 1947թ. հաշվետվության մեջ, 1946-47թթ. «խորհուրդը հատուկ ուշադրություն էր դարձրել կաթողիկոսական աշխատունակ աշխատակազմի ստեղծմանը, աջակցել էր հայ եկեղեցու հետագա կազմակերպական ամրապնդմանը եւ արտասահմանյան թեմերի գործունեության ճիշտ ուղղվածությանը»[1]:

Հաշվի առնելով կաթողիկոսի առաջացած տարիքը եւ «դանդաղաշարժությունը», խորհուրդը մշտապես նրա առջեւ հարց է բարձրացրել կաթողիկոսության գրասենյակը համալրել այնպիսի աշխատողներով, որոնք կարող էին ժամանակին ապահովել տարատեսակ խնդիրների լուծումը, մասնավորապես արտասահմանյան եւ ներքին թեմերի ղեկավարումը, «Էջմիածին» ամսագրի հրատարակումը, հոգեւոր ճեմարանի եւ Մայր Աթոռի միաբանության գործունեությունը: Խորհրդի համառ պահանջով Գեւորգ Զ կաթողիկոսը ստիպված էր համաձայնվել եւ Էջմիածին հրավիրել Իրան-Հնդկաստանի թեմի առաջնորդ Վահան արքեպիսկոպոս Կոստանյանին, իբրեւ տեղակալ, միաժամանակ խորհրդի պահանջից հետո նոր միայն կատարում է ներքին թեմերի առաջնորդների նշանակում: Փաստորեն, ՀԵԳԽ միջամտում էր եկեղեցու ամբողջ գործունեությանը, լիներ դա ճեմարանի համար մանկավարժների ընտրություն, «Էջմիածին» ամսագրի հրատարակություն, ներքին եւ արտասահմանյան թեմերի ղեկավարում, կաթողիկոսի Երեւանի առանձնատան շինարարություն, Էջմիածնի տաճարի վերանորոգումը եւ օրացույցի հրատարակում:

Սկսած 1947-48թթ. ուշադրության կենտրոնում էր Հայ եկեղեցու Սահմանադրության ընդունման հարցը: Հայ եկեղեցին մինչեւ խորհրդայնացումը նախկին Ռուսական կայսրության սահմաններում ղեկավարվում էր դեռ 1836թ. ռուսական կառավարության հաստատած «Կանոնադրությամբ» /«Պոլոժենիե»/, իսկ Արեւմտահայաստանի տարածքում՝ «Ազգային-եկեղեցական սահմանադրությամբ», հաստատված թուրքական կառավարության կողմից 1863թ.: Փաստորեն, խորհրդային իշխանության հաստատումից հետո հայ եկեղեցին չուներ ոչ մի կանոնադրական կամ

[1] Նույն տեղում, ց. 32, գ. 97, թ. 34:

օրենսդրական փաստաթուղթ, որը պարտադիր լիներ ամբողջ աշխարհի հայկական եկեղեցիների համար: Ելնելով այդ հանգամանքից, 1945թ. Ազգային եկեղեցական ժողովն օրակարգի հարցերից մեկը դարձրեց հայ եկեղեցու Սահմանադրության մշակումը եւ հաստատումը: Սակայն հարցը չստացավ իր վերջնական լուծումը եւ Ժողովը նորընտիր Գեւորգ Զ կաթողիկոսին հանձնարարեց մշակել Սահմանադրության նախագիծը, տարածել այն արտասահմանյան թեմերում՝ քննարկման համար: Հետագայում Սահմանադրությունը հաստատվելու էր, հաշվի առնելով փոփոխությունները եւ առաջարկությունները, որոնք կարվեին նախագծի ուսումնասիրման եւ քննարկման ժամանակ: Կաթողիկոսի դանդաղաշարժության պատճառով Սահմանադրության նախագիծը միայն 1947թ. դեկտեմբերին ներկայացվեց ՀԵԳԽ-ի քննարկմանը: Պարզվեց, որ այն մի քանի հոդվածներով հակասում է ՀԽՍՀ Սահմանադրությանը: Այսպես օրինակ.

ա/ Համաձայն Սահմանադրության նախագծի, Ամենայն Հայոց կաթողիկոսը իրավունք էր ստանում հանդես գալ «ՄԱԿ-ի, միջազգային կոնգրեսների եւ խորհրդակցությունների, պետությունների բարձրագույն եւ կենտրոնական մարմինների առջեւ հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ /կ. 20/: Դրանով կաթողիկոսը իրավունք էր ստանում իրագործել ՀԽՍՀ իրավասությունները միջազգային հարաբերությունների բնագավառում, որ ՀԽՍՀ Սահմանադրությամբ վերապահված էր նախարարների խորհրդին /ՀԽՍՀ Սահմանադրություն, հոդված 43, կ. ժ»/:

բ/ Սահմանադրության նախագծում հաճախակի էր հանդիպում «կաթողիկոսը որպես հայ ժողովրդի ղեկավար« ձեւակերպումը, որը եթե նպատակահարմար էր սփյուռքի հայության համար, ապա ԽՍՀՄ-ի սահմաններում իշխանությունների համար անընդունելի էր:

գ/ Սահմանադրության նախագծով հայ եկեղեցին ձեռք էր բերում եւ տիրում սեփականություն, այն դեպքում, երբ ԽՍՀՄ–ում կրոնական համայնքին արգելվում էր տիրել որեւէ սեփականության, ուստի՝ առաջարկվում է այդ կետը ձեւակերպել «հայ եկեղեցին տվյալ երկրի գործող օրենքների հիման վրա...» :

Հայ եկեղեցու Սահմանադրության նախագիծը, արված դիտողություններով, ՀԵԳԽ-ի կողմից 1948թ. փետրվարին, ուղարկվեց ԽՍՀՄ Նախարարների խորհրդին կից կրոնական պաշտամունքների գործերի խորհրդին՝ ԽՍՀՄ կառավարությանը հաստատման ներկայացնելու համար:

Ինչպես նշված է ՀԵԳԽ-ի 1948թ. գործունեության հաշվետվության մեջ, «իրականացնելով էջմիածնի՝ հայ լուսավորչական եկեղեցու կենտրոնի գործունեության դիտարկումը, Խորհուրդը իր աշխատանքի ընթացքում օգտագործել է կաթողիկոսի ինքնատիպ իրավական հնարավորությունները՝ կարգավորելու երկրի ներքին վեց եւ արտասահմանյան երկրների 16 թեմերի գործունեությունը: Ընդ որում, խորհուրդը, ղեկավարվելով պետական նպատակահարմարության սկզբունքներով, իրագործել է միջոցառումների՝ մի դեպքում մեղմացնող, մյուս դեպքում՝ թուլացնող եւ երրորդում՝ էջմիածնի, հոգեւոր ճեմարանի, «էջմիածին» ամսագրի, հայ հոգեւորականության եւ համայնքների գործունեության հատկապես վնասակար կողմերը վերացնող համակարգ ինչպես մեր հանրապետության ներսում, այնպես էլ արտասահմանում»: Այնուհետեւ, հաշվետվության մեջ բերվում են համապատասխան օրինակներ. «Չնայած եկեղեցիներ բացելու մասին հավատացյալների մեծաքանակ դիմումների առկայությանը, խորհուրդը որոշակի նկատառումներով շատ դեպքերում

անհապատակահարմար էր համարում միջնորդել կառավարության առջեւ՝ բավա--րարելու հավատացյալների խնդրանքը»[1]:

Պետական իրավասու մարմինների կողմից հավատացյալների՝ այսինքն՝ սեփական քաղաքացիների արժանապատվության ոտնահարումը չափ ու սահման չուներ: 1948թ. օգոստոսին ԽՍՀՄ կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի որոշման համաձայն ՀԵԳԽ գրանցեց Ստեփանավան քաղաքի եւ Կոտայքի շրջանի Քանաքեռ գյուղի եկեղեցիները: Սակայն նոյեմբերին հեռագիր ստացվեց Մոսկվայից՝ ժամանակավորապես դադարեցնել կրոնական համայնքների գործունեությունը նշված վայրերում: Քանաքեռի համայնքի գործունեությունը դադարեցվեց հավատացյալների կողմից պայմանագրի խախտման /եկեղեցու շենքը վերանորոգման կարիք ուներ, համայնքը չէր ընտրել գործադիր մարմին եւ վերստուգիչ հանձնաժողով/ պատճառաբանությամբ, իսկ Ստեփանավանի եկեղեցին՝ համաձայն քաղաքի վերակառուցման ծրագրի, որոշվեց քանդել՝ քաղաքի հավատացյալների համայնքի գործունեությունը դադարեցնելու նպատակով: Որպեսզի դադարեցվի հավատացյալների ուխտագնացությունը Նորքի Ս.Աստվածածին եկեղեցու ավերակներ, ՀԵԳԽ առաջարկություն է ներկայացնում ՀԽՍՀ նախարարների խորհուրդ՝ Նորքի մանկական առողջարանի պարիսպը կառուցել այնպիսի հաշվարկով, որպեսզի «որեւէ հետք չմնա «սրբավայրի» պատերից»[2]: Եվ ինչպես նշված է ՀԵԳԽ 1949-50թթ. հաշվետվությունում, «հաջողվեց լրիվ վերացնել ուխտագնացությունը դեպի Նորք, որտեղ նախորդ տարիներին, այդ թվում եւ 1949թ., ուխտագնացների քանակը եկեղեցական տոներին օրական հասնում էր մինչեւ 15 հազար մարդու»[3]:

1948թ. սկզբներին համոզվելով, որ առանց ԽՍՀՄ կառավարության եւ անձամբ Ստալինի միջամտության հնարավոր չէ լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ հայ եկեղեցու կարգավիճակի որոշումը, Թուրքիայի նկատմամբ հայ ժողովրդի պահանջների արդարացի լուծումը եւ դրանում կաթողիկոսի կողմից միջազգային կազմակերպությունների դիմելու հնարավորություն ստանալը, կամ էջմիածնի ծանր նյութական վիճակի բարելավումը, Գեւորգ Զ կաթողիկոսը ապրիլին երկու նամակ է ուղարկում Մոսկվա՝ անձամբ Ստալինին եւ ԽՍՀՄ Նախարարների խորհուրդ[4]: Ստալինին հղած նամակում կաթողիկոսը խնդրում է նրա համաձայնությունը Ազգային եկեղեցական ժողով հրավիրելու եւ այնտեղ հայ եկեղեցու սահմանադրությունը հաստատելու վերաբերյալ: Հայտնելով, որ վերամշակված սահմանադրությունը կընդարձակեր եւ կուժեղացներ Ամենայն հայոց կաթողիկոսի իրավասությունները, նա շեշտում է, որ նախագծի քննարկման եւ ժողովում հաստատման պահին հաշվի կառնվեն խորհրդային կառավարության բոլոր ցուցումները եւ ցանկությունները, ուստի խիստ ցանկալի է, որպեսզի նախագիծը անհապաղ ուղարկվի տեղեր՝ համաժողովրդական քննարկման համար: Այնուհետեւ, երկրի ղեկավարին տեղյակ էր պահվում, որ նախապատրաստվում է հատուկ հուշագրով դիմել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի փարիզյան նստաշրջանին, ուր նախատեսվում էր ներկայացնել

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 75, թթ. 133-134:
[2] Նույն տեղում, թթ. 165-166:
[3] Նույն տեղում, ց. 31, գ. 87, թ. 196:
[4] Նույն տեղում, ց. 32, գ. 97, թ. 13:

Թուրքիայի հայկական վիլայեթները Խորհրդային Հայաստանին միավորելու հայ ժողովրդի պահանջների պատմա-քաղաքական եւ միջազգային-իրավական հիմնավորումը: Նշելով, որ, չնայած հավատացյալների փոքրաթվության, հայ եկեղեցին ունի նշանակալից կշիռ եւ վայելում է Ամերիկայի ու Եվրոպայի եկեղեցա-քաղաքական շրջանակների ավանդական համակրանքը, բացառությամբ Վատիկանի, կաթողիկոսը Ստալինի համաձայնությունն է խնդրում՝ գործելու հայկական շրջանակներից դուրս: Վերջում ավելացնում է, որ հայ եկեղեցին իր բազմադարյա ավանդույթներով ու կապերով կարող է օգտակար լինել սոցիալիստական հայրենիքին, միութենական կառավարությանը եւ խորհրդային ժողովրդին՝ ազատության, խաղաղության ու ժողովուրդների եղբայրության համար ազնիվ պայքարում[1]: Երկրորդ նամակում, որը ինչպես նշվեց, հասցեագրված էր ԽՍՀՄ կառավարությանը, ներկայացնելով էջմիածնի ծանր նյութական հնարավորությունները, Կաթողիկոսը էջմիածնի հեղինակությունը պահպանելու, «էջմիածին» հանդեսը եւ հոգեւոր ճեմարանը փակվելու վտանգից փրկելու համար խորհրդային կառավարությունից տարեկան 500 հազար ռուբլու օգնություն է խնդրում[2]:

Սակայն, ժամանակները փոխվել էին, խորհրդային կառավարության ներկայացուցիչները դադարեցրել էին Թուրքիայի նկատմամբ հայկական տարածքների պահանջի մասին բարձրաձայն արտահայտվել, ընդհակառակը, Կարսը եւ Արդահանը ներկայացված էին որպես վրացական տարածքներ, կառավարության որոշմամբ դադարեցվել էր հայրենադարձությունը եւ հասկանալի է, կաթողիկոսի դիմումները պետք է մնային անպատասխան: Տարեվերջին, հանդիպելով ՀԵԳԽ նախագահ Հ.Գրիգորյանի հետ, կաթողիկոսը շփոթված եւ դժգոհ հայտարարեց. «Այդպիսի անորոշ վիճակը զրկում է ինձ վստահությունից՝ իմ գործունեության մեջ»[3]:

Ինչպես վերը նշվեց, պետության միջամտությունը Հայ եկեղեցու գործերին ներառում էր նրա գործունեության բոլոր բնագավառները, այդ թվում՝ արտասահմանյան թեմերի գործունեությունը եւ կառավարման ոլորտները: Խորհրդային պետությունը օգտագործում էր իշխանության բոլոր լծակները՝ արտասահմանի թեմական խորհուրդները եւ թեմական առաջնորդներին էջմիածնի ազդեցության ներքո պահելու, «անգլո-ամերիկյան իմպերիալիզմի գործակալներ դաշնակներին» դատապարտելու ուղղությամբ էջմիածնի քաղաքականությունը պաշտպանելու համար: Այդ պայքարը նոր թափով ծավալվեց 1947թ., երբ դաշնակցականները, վարկաբեկելով Կիլիկիայի Գարեգին Ա կաթողիկոսին, փորձեցին պառակտում մտցնել կաթողիկոսությունում եւ վերջինս հակադրել էջմիածնին: Սակայն շնորհիվ Գարեգին Ա կաթողիկոսի բռնած վճռական խորհրդամետ դիրքի՝ այդ բանը նրանց չհաջողվեց մինչեւ վերջինիս մահը: ՀԵԳԽ գործունեության ուշադրության կենտրոնում էին հատկապես այն թեմական առաջնորդները, որոնց հետ դաշնակների կապերի մասին կային համապատասխան մարմինների տվյալներ: Մասնավորապես՝ Եգիպտոսի, Եվրոպայի, Հարավ-Ամերիկյան եւ Հյուսիս-Ամերիկյան թեմական առաջնորդները, որոնց նկատմամբ կաթողիկոսը խորհրդի առաջարկով վարում էր կոշտ քաղաքականություն: Սակայն արտասահմանի թեմերի գոր-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 32, գ. 97 թթ. 15-21:
[2] Նույն տեղում, թթ. 22-30:
[3] Նույն տեղում, ց. 28, գ. 75, թ. 162:

ծունեությունը կառավարելի դարձնելու խնդրում պետական միջամտությունը միշտ չէ, որ տալիս էր ցանկալի արդյունք:

1948թ. վերջերին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանում ծագեց իսկական խռովություն էջմիածնի Մայր Աթոռի ու պատրիարքի տեղապահ Գեւորգ արքեպիսկոպոս Արսլանյանի դեմ: Մի խումբ հայ հոգեւորականներ վերջինիս մեղադրեցին եկեղեցական գումարների յուրացման մեջ, պահանջեցին շտապ անցկացնել պատրիարքի ընտրություն: Տեղապահը պատասխանեց, որ ոչ մի ընտրություն չի կայանա, մինչեւ չստանա Գեւորգ Զ-ի ցուցումն ու թույլտվությունը: 1949թ. սեպտեմբերին Գեւորգ Զ-ն դիմում է ՀԵԳԽ՝ դիվանագիտական խողովակներով օժանդակել՝ իր հեռագիրը Գարեգին Ա կաթողիկոսին հասցնելու համար: ՀԵԳԽ հեռագիրը գաղտնագրված ուղարկվում է Մոսկվա, որտեղ այն չորս ամիս մնում է անհետեւանք, ապա տեղյակ է պահվում, որ հնարավոր չէ տեղ հասցնել: Իսկ Կոստանդնուպոլսի գործերի վերաբերյալ նրա երկու կոնդակները 1950թ. ութ ամիս շարունակ Մոսկվայում տարբեր ատյաններում համաձայնեցվում էին: Եվ պատահական չէր, որ կաթողիկոսի երկարատեւ լռությունը այս կամ այն հարցի վերաբերյալ դաշնակցական մամուլը արդարացիորեն բացատրում էր «Մոսկվայից հրահանգների բացակայությամբ»[1]:

1951թ. փետրվարի սկզբին ԽՍՀՄ կրոնական պաշտամունքի գործերի խորհուրդը լսեց Հ.Գրիգորյանի հաշվետու զեկուցումը ՀԵԳԽ գործունեության մասին: Հաշվետվությունից պարզվում է, որ ՀԽՍՀ-ում առկա է կրոնական շարժման աճը: Այն արտահայտվում էր կրոնական ծիսակատարությունների քանակի զգալի ավելացումով. եկեղեցիներում երեխաների կնունքով, կրոնական տոներին գերեզմանոց այցելությամբ, սուրբ վայրեր ուխտագնացությամբ եւ զոհաբերությամբ: Կաթողիկոսի մոտ պատրաստված եւ աշխատունակ կադրերի բացակայությունը հանգեցրել էր նրան, որ կտրուկ թուլացել էր էջմիածնի կաթողիկոսարանի կողմից արտերկրի թեմերի ղեկավարումը: Կաթողիկոսի կրավորական դերն արտասահմանյան թեմերի ղեկավարման գործում, հետադիմական ուժերի աշխույժ գործունեությամբ հանդերձ, ուժեր, որոնք ձգտում էին հայ եկեղեցու ղեկավար պաշտոններում անցկացնել էջմիածնի նկատմամբ հետադեմ գործիչների, հասցրել էր այնպիսի դրության, երբ էջմիածնից արտերկրի թեմերի անջատվելու սպառնալիքը կարող էր դառնալ իրական: Այդպիսի հնարավորության իրականացումը կնշանակեր թեմերի անցումը դաշնակների ազդեցության տակ:

Միաժամանակ նշվում էր, որ ՀԵԳԽ 1947-48թթ. ընթացքում չի ուսումնասիրել հայրենադարձ հայերի ազդեցությունը ՀԽՍՀ կրոնական շարժման վրա, չէր կատարվել հայ եկեղեցին կազմակերպորեն ամրապնդելու նպատակով կաթողիկոսի հետ համագործակցելու անհրաժեշտության վերաբերյալ ցուցումը՝ այսինքն ստեղծել աշխատունակ աշխատակազմ եւ լուծել կաթողիկոսի տեղապահի հարցը: Վերոշարադրված հանգամանքներից ելնելով, կրոնական պաշտամունքների գործերի խորհուրդը ՀԵԳԽ-ին առաջարկում է.

«... 2. Կատարել ինչպես ՀԽՍՀ-ում, այնպես էլ ԱԽՍՀ-ում, ՎԽՍՀ-ում եւ ՌԽՖՍՀ-ում, որտեղ կան հայ եկեղեցիներ, կրոնական վիճակի եւ

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 31, գ. 87, թթ. 219-220:

ծեսերի ու զանգվածային աղոթքների կատարման շարժի ուսումնասիրություն:

3. Հատուկ ուշադրություն դարձնել հայ եկեղեցու արտասահմանյան թեմերի եւ այդ թեմերում գործերի վիճակի ուսումնասիրության վրա:

4. Շարունակել կաթողիկոսի ազդեցության ընդլայնման գիծը՝ արտասահմանյան թեմերի ղեկավարման գործում: Օժանդակել նրան գործունյա աշխատակազմ ստեղծելու, ինչպես նաեւ ներկա՝ 1951թ. կաթողիկոսի տեղապահի հարցը լուծելու համար:

5. Աշխատանքային ծրագրում նախատեսել այնպիսի միջոցառումներ, որոնք կկանխեին էջմիածնի կաթողիկոսի իրավասությունից արտերկրի այս կամ այն թեմի կամ պատրիարքարանի դուրս գալը:

...9. Հաշվի առնելով արտերկրի թեմերի նկատմամբ էջմիածնի ազդեցության ուժեղացման անհրաժեշտությունը, թեմեր, որոնք հանդիսանում են արտասահմանում բնակվող բոլոր հայերին միավորող միակ համազգային կենտրոններ, խորհուրդը նպատակահարմար է գտնում.

ա/ պաշտպանել կաթողիկոսի եւ ՀԵԳԽ խնդրանքները՝ կաթողիկոսին նյութական օգնություն ցույց տալու եւ արտերկրի թեմերի ղեկավարման աշխատանքները կարգավորելու համար անհրաժեշտ կադրեր գտնելու գործում:

բ/ պաշտպանել ՀԵԳԽ խնդրանքը՝ կաթողիկոսին թույլատրել ստանալ հայերեն եկեղեցական արտասահմանյան հրատարակությունները, հանձնարարել ՀԽՍՀ ԱԳՆ-ին պարբերաբար ՀԵԳԽ մատակարարել սփյուռքահայ մամուլի կրոնական շարժումների մասին տեսություններ: Հանձնարարել «Մեժդունարոդնայա կնիգա» ընկերությանը «էջմիածին» հանդեսը եւ կաթողիկոսական մյուս հրատարակությունները տարածել արտասահմանում: Տվյալ կետում թվարկված բոլոր հարցերի կապակցությամբ առաջարկներով դիմել ԽՍՀՄ կառավարությանը»[1]:

Կենսագործելով որոշումը, ՀԵԳԽ բոլոր հայ եկեղեցականներին ավելի մանրամասն եւ համակողմանի ուսումնասիրելու համար սկսում է նրանց մասին կազմել անձնական գործեր /անձնական հարցաթերթիկ, բնութագիր, կենսագրություն, լուսանկար եւ այլ բնութագրող նյութեր/: Տարեվերջին արդեն պատրաստ էին ԽՍՀՄ-ում բնակվող 57 եկեղեցականների լրիվ եւ արտերկրների 61 գործչի ոչ լրիվ գործերը[2]:

1951թ. ձեռնարկումների մեջ անհրաժեշտ է հիշատակել նաեւ կաթողիկոսի կողմից իր ներկայացուցիչներ՝ Գերագույն հոգեւոր խորհրդի նախագահող Վահան արքեպիսկոպոս Կոստանյանին եւ «էջմիածին» հանդեսի խմբագիր, պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանին Անթիլիաս գործուղելը եւ Երուսաղեմի պարիարքարանի տեղապահ եղիշե արքեպ. Տերտերյանին էջմիածին հրավիրելը: Առաջին ձեռնարկման նպատակն էր մոտիկից ծանոթանալ արտասահմանյան թեմերի գործերի վիճակին, մասնավոր զրույցներ ունենալ բարձրաստիճան հոգեւորականների հետ, պարզել նրանց տեսակետները եկեղեցու միասնության եւ այդ գաղափարի ծավալման միջոցների վերաբերյալ, ինչպես նաեւ զանազան կազմակերպությունների դերը այդ հարցի շուրջը[3]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 31, գ. 173, թթ. 153-156:
[2] Նույն տեղում, ց. 32, գ. 84, թ. 147:
[3] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 823, ց. 1, գ. 56, թթ. 20-24:

Պատվիրակությունը, ինչպես նշված է ՀԵԳԽ-ի 1951թ. հաշվետվությունում, բացի անհրաժեշտ տեղեկատվական նյութեր ստանալուց, ոչինչ չկարողացավ անել[1]: Որովհետեւ, ինչպես նշված է խորհրդի մեկ այլ փաստաթղթում, նրանք «շատ վատ տպավորություն են թողել, նախ եւ առաջ այն պատճառով, որ սարսափելի վախկոտ էին եւ կրավորական: Նրանք այնտեղ սեփական ստվերից էլ էին վախենում եւ բանիմաց չլինելու ու վախկոտության պատճառով փաստորեն ոչինչ չարեցին, բացի մի քանի ճամպրուկ իրեր գնելուց»[2]:

Այլ նշանակություն ունեցավ Երուսաղեմի միաբանության պատվիրակության այցն էջմիածին: Հայաստանում մնալով մեկ ամիս, կաթողիկոսի հետ հանդիպումներից բացի, եղիշե արքեպ. Տերտերյանը հանդիպեց ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ս.Կարապետյանի եւ ՀԵԳԽ նախագահ Հ.Գրիգորյանի հետ: Այդ ընթացքում խորհրդային իշխանության մարմիններին հաջողվեց «ոչ միայն համակողմանի ուսումնասիրել պատվիրակության անդամներին, այլ նրանց միջոցով ծանոթանալ ամբողջ Մերձավոր Արեւելքի գործերի վիճակին, ճշտել արտասահմանյան թեմերի վրա կաթողիկոսի ազդեցության հետագա ընդլայման հնարավորությունները: Բացի դրանից, կաթողիկոսի միջոցով նրանց տրվեցին կոնկրետ հանձնարարություններ՝ այդ ազդեցությունն ուժեղացնելու համար»[3]:

Հանդիպումները նպաստեցին, որ եղիշե արք. Տերտերյանը, որը ՀԵԳԽ-ի 1950թ. որոշ փաստաթղթերում դիտվում էր «ոչ էջմիածնի եւ ոչ էլ Խորհրդային Հայաստանի հանդեպ համակրանք չտածող անձ»[4], դառնա «էջմիածնի վառ կողմնակից եւ Խորհրդային Հայաստանի մեծ հայրենասեր»[5]:

Հատկապես հետաքրքիր է եղիշե արք. Տերտերյանի եւ ՀԵԳԽ նախագահ Հ.Գրիգորյանի հանդիպումը պետություն-եկեղեցի փոխհարաբերության տեսանկյունից, որովհետեւ այդտեղ իր ամբողջ կողմերով բացահայտվում է այդ հարաբերություններում խոսքի եւ գործի տարբերությունը: Տերտերյանի այն հարցին, թե ի՞նչ սպասելիքներ ունի Հայաստանի կառավարությունը Հայ եկեղեցուց ընդհանրապես եւ արտասահմանյան թեմերից մասնավորապես, ինչում է մի պատասխան, որն իրականության հետ ոչ մի կապ չուներ. «Պատասխան. Ընդհանուր առմամբ ոչ մի կոնկրետ սպասելիքներ: Հայաստանյաց եկեղեցին եւ մյուս կրոնական կազմակերպությունները մեզ մոտ գործում են միեւնույն սկզբունքներով եւ օգտվում գործունեության լիակատար ազատությամբ՝ մեր Սահմանադրության շնորհիվ, որը քաղաքացիներին ապահովում է խղճի եւ կրոնական պաշտամունքի լիակատար ազատություն: Եկեղեցին, ինչպես եւ բոլոր հոգեւոր հաստատությունները, մեկ հիմնախնդիր ունեն՝ սպասարկել բնակչության հավատացյալ զանգվածին: Եկեղեցուց եւ նրա մարմիններից կառավարությունը ուրիշ ոչինչ չի սպասել եւ չի սպասում: Ինչ վերաբերում է Հայ եկեղեցու արտասահմանի թեմերին, այս անգամ եւս կառավարությունը չի կարող կոնկրետ հանձնարարություններ տալ, այն պարզ

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 32, գ. 84, թ. 152:
[2] Նույն տեղում, ց. 31, գ. 69, թ. 73:
[3] Նույն տեղում, ց. 32, գ. 84, թթ. 152-153:
[4] Նույն տեղում, ց. 30, գ. 123, թ. 278:
[5] Նույն տեղում, ց. 32, գ. 97, թ. 149:

պատճառով, որ մեզանում եկեղեցին պետությունից անջատ է եւ մեր կառավարությունը խստիվ հետեւում է եկեղեցու գործերին չխառնվելու սկզբունքին»[1]:

Տերտերյանի հետ հանդիպումները հնարավորություն տվեցին մշակել ավելի լայն միջոցառումներ արտասահմանյան թեմերի վրա կաթողիկոսի, ասել է թե, խորհրդային իշխանության ազդեցությունը ուժեղացնելու նպատակով՝ մասնավորապես Կիլիկիո կաթողիկոսությունը էջմիածնամետ պահելու համար:1951թ. ամռանը Կիլիկիո 84 ամյա Գարեգին Ա կաթողիկոսի առողջական վիճակը կտրուկ վատացավ: Բարձր գնահատելով Կիլիկիո կաթողիկոսության դերն ու նշանակությունը սփյուռքահայության կյանքում, միաժամանակ ձգտելով կաթողիկոսության աթոռին Հայ եկեղեցու միասնության կողմնակից եւ խորհրդայնամետ անձնավորություն տեսնել եւ դաշնակցության ազդեցությունից նրան հեռու պահել, խորհրդային իրավասու մարմինները օգտագործեցին բոլոր միջոցները Գարեգին Ա-ի կենդանության օրոք աթոռակից կաթողիկոս օծելու կամ պաշտոնական կոնդակով տեղապահ նշանակելու համար: Հարցի կարեվորության մասին է խոսում այն փաստը, որ այն քննարկվեց ինչպես ՀամԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղարությունում, այնպես էլ քաղբյուրոյի նիստում՝ օգոստոսի 22-ին: Որոշվեց Անթիլիաս ուղարկել Գեւորգ Զ-ի նամակը, հորդորելու Գարեգին Ա կաթոիկոսին նշանակել աթոռակից կաթողիկոս կամ տեղապահ[2]:

Որպես թեկնածուներ, Հայաստանի կառավարության համաձայնությամբ, հաստատվեցին Շավարշ ծայրագույն վարդապետ Գույումճյանը եւ Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը: Մոսկվա հրավիրվեցին ՀԵԳԽ նախագահ Հ.Գրիգորյանը եւ Կիսլովոդսկում բուժվող Գեւորգ Զ-ն՝ նամակը պատրաստելու համար: Օգոստոսի 26-ին նամակը գրված էր: Որոշվեց այն ուղարկել Երուսաղեմի պատրիարքական տեղապահ Եղիշե արք. Տերտերյանին՝ Գարեգին Ա կաթողիկոսին գաղտնապահ հանձնելու համար: Նամակում Ամենայն հայոց կաթողիկոսը նշում էր. «հավատարիմ լինել մեր ուխտին նշանակում է հաւաստիանալ, որ մեր ներկայ աջակիցները եւ մեր յաջորդները հավատարմութեամբ պիտի պահեն՝ ա. Հայ եկեղեցու դավանանքը, բ. Հայ եկեղեցու պատմական աւանդներն, այն է՝ եկեղեցական միասնականութիւնը, ազգային միութիւնը, որեւէ կուսակցութեան չպատկանելու անհրաժեշտութիւնը, հայ ժողովրդի եւ Հայրենքի հետ լինելու պարտավորութիւնը»[3]: Ապա նշելով, որ Կիլիկիո Աթոռի միաբանությունում չկան հարմար թեկնածուներ, առաջարկում է այդպիսիք որոնել միաբանությունից դուրս գտնվող հոգեւորականության շրջանում, ինչպես եղել է նրա ընտրության ժամանակ: Այդպիսի թեկնածուներ կարող են լինել Գույումճյանը եւ Մանուկյանը: Նշված թեկնածուներից ավելի հարմարին կարելի է օծել կաթողիկոս եւ կոնդակով հայտարարել աթոռակից կամ նույն ճանապարհով հայտարարել տեղակալ եւ հրավիրել նրան պաշտոնավարելու:

Գեւորգ Զ-ի օգոստոսի 26-ի կոնդակը բյուրոկրատական քաշքշուկի պաշտամունքի կոմիտե-արտաքին գործերի նախարարություն-Բեյրութի խորհրդային դեսպանություն ճանապարհը անցնելուց հետո հոկ-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 31, գ. 69, թ. 67:
[2] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 823, ց. 1, գ. 23, թթ. 13-14:
[3] Նույն տեղում, գ. 82, թթ. 1-5:

տեմբերի 21-ին հասնում է Եղիշե արք. Տերտերյանին: Վերջինս այն հանձնում է Գարեգին Ա-ին եւ ստանում բանավոր պատասխան կոնդակի գործադրության անհամաձայնության մասին. «անհնարին է ընդդէմ գնալ ընդունած ու հաստատուած կարգ ու սարքին, ու պետք չէ բռնաբարել աթոռների ներքին ազատութիւնը»[1]:

Սակայն, Գարեգին Ա-ի առողջական վիճակի վատթարացումը եւ այն վախը, որ նրա մահից հետո դաշնակները կզավթեն Կիլիկիո կաթողիկոսությունը, խորհրդային իրավասու մարմինների երաշխավորությամբ Գ–որգ Զ-ն նոր նամակ է ուղարկում Գարեգին Ա-ին՝ նորից Եղիշե արք. Տերտերյանի միջոցով, հանձնարարելով վերջինիս ամեն ջանք գործադրել կաթողիկոսին համոզելու իրեն տեղակալ նշանակելու համար[2]:

Փետրվարի 25-ի նամակները ապրիլի 15-ին իրենց «ճանապարհորդությունն» են սկսում դեպի Մոսկվա: Հունիսի 21-ին՝ Գարեգին Ա-ի մահվան օրը, դրանք դեռեւս գտնվում էին Մոսկվայում: Իր բացատրագրում ահա թե ինչ է գրում ՀԵԳԽ նախագահ Հ.Գրիգորյանը. «Այդ նամակները ուղարկված են եղել Երեւանից՝ 1952թ. ապրիլի 15-ին, 37 օր անց, այսինքն մայիսի 22-ին դեռ անշարժ կրոնական պաշտամունքների գործերի խորհրդում էին: Կրոնական պաշտամունքների խորհրդի աշխատակազմին հայտնի էր, որ այդ նամակները բացարձակ մեծ քաղաքական նշանակություն ունեն եւ հասցեագրված են մի մարդու, որը մահամերձ է: Հատկապես անհրաժեշտ է ցանկացած ձեւով եւ անհապաղ դրանք հասցնել Գարեգին Հովսեփյան կաթողիկոսին՝ մինչեւ իր մահը /Եղիշե Տերտերյանի միջոցով/: Դրա մասին անգամ հատուկ վերապահություն է արվել կից նամակում, թեեւ հաշվի առնելով Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի առողջական ծանր վիճակը, Գեւորգ Զ կաթողիկոսը խնդրել էր հնարավորինս արագացնել նամակների առաքումը: Սակայն, կրոնական պաշտամունքների գործերի խորհուրդը, չգիտես թե ինչու, չէր շտապում դրանք առաքել: Նամակների Երեւանից առաքման պահից /1952թ. ապրիլի 15/ մինչեւ Գարեգին կաթողիկոսի մահը /1952թ. հունիսի 21/ անցել է 67 օր: Դրանից ամենաքիչը 32 օր անց, նամակները, առանց որեւէ անհրաժեշտության, գտնվում էին Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդում: Մեզ նաեւ հայտնի է, թե վերջապես երբ են այդ նամակները ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարություն հասել: Հետեւապես, «եզրակացության մեջ տեղ գտած վկայակոչումը, նամակների ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարությունում ուշացնելու վերաբերյալ, մեղմ ասած, այնքան էլ ճիշտ չէ»: Ինչպես տեսնում ենք, բյուրոկրատական քաշքշուկի պատճառով ձախողվում է, ինչպես նշված է վերեւում, «մեծ քաղաքական նշանակության» միջոցառումը: Գարեգին Ա-ի մահից հետո կաթողիկոսական տեղապահ ընտրվեց Խաղ արքեպ. Աջապահյանը, որը 4 տարի մնալով այդ կարգավիճակում, ստիպված էր խուսանավել, մի կողմից, դաշնակների, մյուս կողմից՝ «առաջադիմական» կոչվող կազմակերպությունների եւ Ս.Էջմիածնի միջեւ: Հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ նա դարձավ նաեւ Հայաստանի իշխանությունների ցանկանալի թեկնածուն ի հակակշիռ այլ թեկնածուների, որոնք էջմիածնամետ չէին համարվում: 1951թ. վերջերին ստեղծված իրավիճակը ինչպես էջմիածնի Կաթողիկոսարանում, այնպես էլ Հայ եկեղեցու արտա-

---

[1] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 823, ց. 1, գ. 71, թթ. 10-11:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3910, թթ. 1-2:

սահմանյան թեմերում պահանջում էին պետական մարմինների լուրջ միջամտություն: Մտահոգված այդ իրավիճակով, ՀԵԳԽ նախագահ Հ.Գրիգորյանը դեկտեմբերի 1-ին հատուկ զեկուցագրով դիմում է Գ.Հարությունյանին եւ ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ Ս.Կարապետյանին[1]:

Ծավալուն զեկուցագրում ներկայացվում է իրերի վիճակը. Էջմիածնի կաթողիկոսարանը փաստորեն բաղկացած է 3 հոգուց՝ Կաթողիկոսից, արքեպիսկոպոսներ Վահան Կոստանյանից եւ Ռուբեն Դրամփյանից: Վերջինս անբուժելի հիվանդ է եւ անգործունյա: 83-ամյա կաթողիկոսի առողջական վիճակը եւս վատացել է: Նա տակավին փոխանորդ չունի, իսկ Վահան Կոստանյանը չունի ոչ բավարար պատրաստվածություն, ոչ էլ հեղինակություն՝ փոխանորդ դառնալու համար: Այսպիսով, ստեղծվել է մի կացություն, որում Էջմիածնի, իբրեւ Հայ եկեղեցու կրոնական կենտրոնի, ինքնաոչնչացումը դառնում է իրապես հնարավոր: Այնուհետեւ, նշվում է, որ կտրուկ վատթարացել է Էջմիածնի տնտեսական վիճակը: Մինչեւ հեղափոխությունը ներկայիս ԽՍՀՄ տարածքում գործում էին 900-ից ավելի հայկական եկեղեցի, 1951թ. նրանց թիվը կրճատվել է մինչեւ 30-ի: Բնական է, որ գործող եկեղեցիների այս թիվը ի վիճակի չէ որոշակի նյութական հիմք ստեղծել Էջմիածնի կաթողիկոսության գոյության համար: Միջոցների բացակայությունը հանգեցրել է նրան, որ թե՛ հոգեւոր ճեմարանը եւ թե՛ «Էջմիածին» ամսագիրը կանգնած են փակման իրական վտանգի առջեւ: Ճեմարանն ունի 12 հոգանոց մեկ լսարան, որի ավարտից հետո, եթե նոր ընդունելություն չկատարվի, ճեմարանը կփակվի: «Էջմիածին» ամսագիրը տարեցտարի կրճատում է իր պարբերականությունը, անցնելով միացյալ համարների հրատարակման: 1951թ. 12-ի փոխարեն լույս է տեսել 4 համար: Նշելով, որ հոգեւոր ճեմարանի բացումը եւ «Էջմիածին» ամսագրի հրատարակումը հետադիմական շրջանները /դաշնակներ, կաթոլիկներ եւ այլք/ գնահատել եւ գնահատում են որպես «բոլշեւիկյան հերթական տրյուկ», որպես արտասահմանի հասարակությանը խաբելու համար արված ժամանակավոր միջոցառում, կանխատեսելով դրանց մոտակա փակումը, Հ. Գրիգորյանն ավելացնում է, որ ճեմարանի եւ «Էջմիածին» ամսագրի փակումը, փաստորեն, կնպաստի թշնամական շրջանակների զրպարտիչ հայտարարությունների հաստատմանը: Նաեւ կտրուկ վատացել է վիճակը եկեղեցու արտասահմանյան թեմերում: 9 թեմ չունի թեմական առաջնորդ, հետեւաբար զրկված են որեւէ վերահսկողությունից: Այդ թեմերում Կաթողիկոսի՝ բնականոն ղեկավարումը վերականգնելու եւ նոր թեմական առաջնորդներ նշանակելու ուղղությամբ վճռորոշ միջոցներ ձեռնարկելու անընդունակությունը առատ սնունդ է տալիս թշնամական կազմակերպություններին՝ Էջմիածնի կաթողիկոսությունը քամահարելու համար: Վերջին տարիներին դաշնակցական եւ հետադիմական կազմակերպությունները կտրուկ աշխուժացրել են իրենց գործունեությունը: Դաշնակները դարձյալ վեր են հանել արտասահմանյան Հայ եկեղեցին Էջմիածնից անջատելու իրենց վաղեմի ծրագիրը: Դաշնակցական ամբողջ մամուլը լի է Գեւորգ Զ կաթողիկոսի եւ Էջմիածնի հասցեին զրպարտիչ հերյուրանքներով: Նրանք իրենց ծախու մամուլի էջերում օրեցօր զարգացնում են այն գաղափարը, որ Էջմիածինը

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 31, գ. 69, թթ. 151-163:

գտնվում է «բոլշեւիկների գերության մեջ» եւ ի վիճակի չէ վերահսկել Հայ եկեղեցու արտասահմանյան գործերը, որի հետեւանքով էլ նրանք պահանջում են արտասահմանում Հայ եկեղեցու նոր կենտրոն ստեղծել՝ էջմիածնի բոլոր գործառույթները հանձնելով նրան: Նրանք հատկապես հաճախ են արծարծում մյուռոնօրհնեքի բացակայության փաստը, էջմիածնի կողմից Հայ եկեղեցու արտասահմանյան կենտրոնների փաստացի եւ իրական ղեկավարման բացակայությունը, թեմական առաջնորդների բացակայության պատճառով արտերկրի թեմերից շատերում բարձիթողի վիճակն ու մի շարք այլ հանգամանքներ: Կտրուկ ակտիվացրել է իր թշնամական գործունեությունը նաեւ Հռոմի կաթոլիկ եկեղեցին՝ ի դեմս կարդինալ-կաթողիկոս Աղաջանյանի: Նա լույս է ընծայել մի շարք շրջաբերականներ՝ լի զրպարտական հերյուրանքներով Հայաստանի եւ էջմիածնի հասցեին: Իր վերջին շրջաբերականում, խեղաթյուրելով պատմական փաստերը, նա ջանում է «ապացուցել», որ Հայ եկեղեցին իր սկզբնավորման պահին կաթոլիկ է եղել եւ կոչ է անում բոլոր հայերին վերադառնալ կաթոլիկության գիրկը: Նրա մի քանի հրատարակչական մարմիններ օրըստօրե քարոզում են այդ գաղափարը եւ փորձում ամեն կերպ վարկաբեկել էջմիածինն ու նրա օրգանները: Կարդինալ Աղաջանյանը գործնական քայլեր է ձեռնարկում՝ ուղղված Հայ եկեղեցու եւ արտասահմանում առաջադիմական հայ կազմակերպությունների թուլացմանը, մասնավորապես՝ վերջերս ուղեւորություն է կատարել Ֆրանսիա, որտեղ հանդիպել է արտգործնախարար Շումանի հետ: Այդ հանդիպումից հետո Ֆրանսիայում հալածանքներ սկսվեցին թե Հայ եկեղեցու եւ թե հայկական առաջադիմական կազմակերպությունների դեմ /թերթերի փակում եւ այլն/: Այժմ նա պատրաստվում է նմանատիպ ուղեւորության դեպի Ամերիկա: Կիլիկիո Գարեգին Ա կաթողիկոսի տեւական հիվանդության եւ մի շարք լուրջ սխալներ թույլ տալու հետեւանքով կաթողիկոսությունը փաստորեն գտնվում է դաշնակների ձեռքում: Այժմ դաշնակներն ակտիվ կերպով պատրաստվում են Գարեգին Ա-ի մահից հետո ամբողջապես գրավել կաթողիկոսությունը եւ այն վերածել արտասահմանյան հայոց եկեղեցու կենտրոնի: Եթե էջմիածնի կողմից վճռական միջոցներ չձեռնարկվեն, դաշնակներին դժվար չի լինի իրականացնել իրենց ծրագիրը: Հայ եկեղեցու վիճակը արտասահմանում շատ երերուն է: Չկա ոչ մի փաստաթուղթ, որում հստակ կերպով սահմանված լինեին պատրիարքությունների եւ Հայ եկեղեցու արտասահմանյան թեմերի կրոնական եւ իրավական վիճակները եւ դրանց փոխհարաբերությունները էջմիածնի հետ: Տեղում գործող բոլոր կանոնադրություններն ու համապատասխան փաստաթղթերը մշակվել են տարբեր ժամանակներում ու հաստատվել են տեղական իշխանությունների կողմից այս կամ այն քաղաքական կացության ազդեցության ներքո, որոնք մեծ մասամբ արդեն կորցրել են իրենց իրավաբանական ուժը: Այսպես օրինակ՝ առ այսօր այս կարգի հիմնական փաստաթուղթն, այսպես կոչված, «Հայերի Ազգային Սահմանադրությունն» է, որը 1863թ. գործածվել է Օսմանյան կայսրության ողջ տարածքում /ներառյալ Արաբական Արեւելքի բոլոր երկրները, Երուսաղեմն ու Եգիպտոսը/: Հետագայում այս փաստաթուղթը քննվել է 1923թ. Լոզանի կոնֆերանսում եւ ընդունվել թուրքական կառավարության եւ Լոզանի համաձայնագրով, իբրեւ Թուրքիայի տարածքում հայերի իրավական վիճակը որոշող փաստաթուղթ: Բնական է, որ այս «Սահմանադրությունը» ոչ մի ուժ չի կարող ունենալ այժմյան Թուրքիայից դուրս: Սակայն, այժմ

դաշնակները ցանկանում են դարձյալ վերհանել այդ «Սահմանադրությունը» եւ տարածել այն ողջ հայկական սփյուռքի վրա, իբր այն պատճառաբանությամբ, թե այն մշակված է եղել թուրքահայերի համար, իսկ ներկայիս հայկական սփյուռքը բաղկացած է Թուրքիայից գաղթած հայերից. սրան ավելացրած նաեւ այն, որ այս փաստաթուղթն ընդունված է Լոզանի կոնֆերանսի կողմից: Դաշնակները համառորեն կառչում են այս փաստաթղթից, որովհետեւ այն մշակվել է ցարական Ռուսաստանի /որի տարածքում էր գտնվում էջմիածնի Կաթողիկոսությունը/ եւ սուլթանական Թուրքիայի միջեւ գոյություն ունեցող հակամարտության պայմաններում, որի հետեւանքով Կ.Պոլսի պատրիարքությանը, այդ Սահմանադրության համաձայն, լիակատար ինքնուրույնություն է տրվում եւ ոչ մի բառով հիշատակված չէր պատրիարքության նկատմամբ էջմիածնի իրավունքների մասին: Այժմ, ցանկանալով «Սահմանադրությունը» տարածել ողջ սփյուռքահայության վրա, դաշնակները ջանում են լիակատար ինքնուրույնություն ձեռք բերել արտասահմանյան Հայ եկեղեցու նկատմամբ: Վերջապես Բաղդադում լույս տեսնող դաշնակցական թերթերից մեկը հանդես եկավ «Սահմանադրության» հիման վրա նոր՝ «սփյուռքահայության պատրիարքություն» ստեղծելու ընդարձակ ծրագրով, որն, էջմիածնից կատարյալ անկախության մեջ գտնվելով, պետք է ղեկավարի Հայոց եկեղեցու բոլոր արտասահմանյան գործերը:

Երուսաղեմի պատրիարքության կանոնադրության համաձայն՝ մշակված Պաղեստինում անգլիական տիրապետության ժամանակաշրջանում, պատրիարքի ընտրությունը հաստատվում է ոչ թե Ամենայն Հայոց Կաթողիկոսի, այլ անգլիական կառավարության կողմից: Եկեղեցական կանոններին հակասող նման դրույթներ են պարունակում նաեւ այլ թեմերի կանոնադրությունները: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Հայ ազգային եկեղեցական ժողովը 1945թ որոշեց կաթողիկոսին հանձնարարել Հայ եկեղեցու նոր եւ միացյալ սահմանադրության մշակումը, որը պարտադիր պետք է լիներ բոլոր պատրիարքությունների եւ թեմերի համար: Սահմանադրության նախագիծը մշակվել էր Գեորգ Զ կաթողիկոսի կողմից, սակայն այն մինչ օրս չի հաստատվել կառավարական մարմինների կողմից եւ չի առաքվել արտասահմանյան երկրներ: Մինչդեռ այդ օրինակ սահմանադրության առկայությունը ոչ միայն հիմնովին կամրապնդեր էջմիածնի դիրքը, կհաստատեր արտասահմանում Հայ եկեղեցու իրավական վիճակն ու փոխհարաբերությունները էջմիածնի հետ, այլ կնպաստեր այս հարցում դաշնակների գինաթափմանն ու կսանձեր Կ.Պոլսի պատրիարքի հանդուգն վարքագիծը:

Մյուռոնօրհնության խնդիրը էջմիածնի ցավալի հարցերից ու խոցելի տեղերից մեկն է: Գոյություն ունեցող եկեղեցական կանոնների համաձայն, մյուռոնօրհնությունը կատարվում է ամեն 7 տարին մեկ անգամ, մինչդեռ արդեն 20 տարուց ավելի է, որ մյուռոնօրհնեք չի եղել: Այս վիճակը լայնորեն օգտագործվում է էջմիածնի դեմ դաշնակների եւ թշնամական այլ տարրերի կողմից: Ներկայումս ստեղծվել է այնպիսի վիճակ, որ բոլոր թեմերում սպառվել են մյուռոնի պաշարները: Որոշ թեմերի առաջնորդներ դիմում են Կաթողիկոսին՝ Կիլիկիո Կաթողիկոսությունից մյուռոն ստանալու խնդրանքով, բայց Կաթողիկոսը չի կարող այդ քայլին դիմել, որովհետեւ դրանով կկտրվի էջմիածնի արտասահմանյան Հայ եկեղեցու հետ կապող թելը եւ կհեշտացնի նրա՝ էջմիածնից անջատվելու գործընթացը: Մյուռոնօրհնեքի հետաձգումը հղի է լուրջ բարդություններով:

Մյուռոնի օրհնությունը ոչ միայն կչեզոքացնի այդ անցանկալի խնդիրը, այն նաեւ կնպաստի Էջմիածնի հեղինակության հետագա ամրապնդմանը: Կաթողիկոսին կընձեռվի բոլոր եպիսկոպոսների հետ անձնական հանդիպում ունենալու, նրանց տեղեկատվությունները լսելու եւ համապատասխան ցուցումներ տալու հնարավորություն: Եպիսկոպոսների ժամանումից օգտվելով նա կարող է եպիսկոպոսական ժողով գումարել, որտեղ հնարավոր կլինի հաստատել եւ օրինական ուժ տալ իր մշակած նոր սահմանադրությանը, որը վերջնականապես կհաստատի իր իրավունքները արտասահմանյան բոլոր թեմերի եւ պատրիարքությունների նկատմամբ, ինչպես նաեւ կլուծվեն արտասահմանյան Հայ եկեղեցու գործունեության հետ կապված մի շարք խնդիրներ: Կաթողիկոսը Ստալինից դեռ 1945թ. ստացել էր մյուռոնի օրհնության հավանություն եւ պահանջում էր 1952թ. մյուռոնօրհնության պարտադիր կատարում: Սրան ավելացրած նաեւ այն, որ կաթողիկոսը շատ վատ էր ստանում արտասահմանյան տեղեկատվությունը եւ հաճախ կատարյալ անտեղյակ էր այնտեղ կատարվող անցքերին: Սա արդեն արտասահմանյան հայ մամուլն ու գրականությունը չստանալու հետեւանք էր: Հայ եկեղեցու գործերի խորհուրդը եւս չի ստանում այդպիսիք եւ ի վիճակի չէ ժամանակին տեղյակ պահել կաթողիկոսին սփյուռքահայ գաղթօջախներում կատարվող իրադարձությունների եւ հատկապես՝ թշնամական նկրտումների մասին: Հայաստանում արտասահմանյան հայ մամուլը /հատկապես թշնամական/ ստացող միակ կազմակերպությունը Հայկական ԽՍՀ ԱԳՆ-ն է, որը կտրականապես հրաժավում է որեւէ տեղեկություն հաղորդելուց՝ պատճառաբանելով թե ինքը դրա իրավունքը չունի: Այսօրինակ վիճակը բնականոն համարել չի կարելի, որոհետեւ Կաթողիկոսը ժամանակին ճշգրիտ տեղեկություններ չունենալով, դժվարանում է համապատասխան ու անհրաժեշտ վերահսկողություն իրականացնել: Էջմիածնի կաթողիկոսության բարգավաճմանն ու Հայ եկեղեցու արտասահմանայն գործերի ղեկավարումը բարելավելու համար Հ.Գրիգորյանը առաջարկում է իրականացնել հետեւյալ միջոցառումները.

«1. Էջմիածնի Կաթողիկոսության գործունեության համար հարկ է ապահովել անհրաժեշտ նյութական հիմք, որը հնարավոր կլինի հետեւյալ միջոցառումների իրականացմամբ՝

Ա/ Թույլատրել, հատկապես քաղաքային վայրերում, մի շարք նոր եկեղեցիներ բացել /Թբիլիսիում, Բաքվում, միջինասիական հանրապետությունների քաղաքներում, որտեղ չկա եւ ոչ մի հայկական եկեղեցի, Մոսկվայում, Խարկովում, Արամվիրում, Լեռնային Ղարաբաղում/:

Բ/ Թույլ տալ առանց մաքսի արտասահմանից իր այնտեղ ունեցած տարադրամով ապրանքներ ներմուծել, հետագայում դրանք համապատասխան պետական մանրածախ գներով պետական եւ կամ կոոպերատիվ առեւտրի ցանցին հանձնելու պայմանով:

Գ/ Արտոնել Էջմիածնին տարին մեկ անգամ «տաղավար» տոներին ծիսական արարողություններ կատարել, այսպես կոչված, «սուրբ վայրերում» /ուխտագնացության տեղերում/, բոլոր անդրկովկասյան հանրապետություններում, որտեղ կան այդպիսիք եւ որտեղ առ այսօր տարերային հավաքվում են հավատացյալները: Այդ արարողությունները կատարվում են պատահական, թափառաշրջիկ հոգեւորականների կողմից:

Դ/ Էջմիածնի Կաթողիկոսության համար սահմանել տարեկան լրավճար անհրաժեշտ ծախսեր /Հայ եկեղեցու գործերի խորհրդի կազմած նախահաշվով/ կատարելու համար:

2. Որոշակիորեն բարելավել Էջմիածնի Կաթողիկոսության կադրերի վիճակը: Էջմիածնի միաբանության /բարձրաստիճան հոգեւորականության/ պատրաստված ու գործունյա անդամների թիվը հասցնել 12-15-ի, որի համար՝

ա/ Վարդապետական եւ եպիսկոպոսական աստիճաններ շնորհել այն քաղաքացիներին, որոնք ունեն համապատասխան պարտավորվածություն կամ նախկինում եկեղեցական են եղել: Անհրաժեշտության դեպքում՝ ընտրության հարցում համապատասխան օգնություն ցուցաբերել կաթողիկոսին,

բ/ Արտասահմանի առաջադեմ հոգեւորականներից մշտական բնակության համար Էջմիածին հրավիրել մի քանի անձանց, որոնք ունեն բարձր հոգեւոր աստիճան ու համապատասխան պատրաստվածություն,

գ/ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էջմիածնի միաբանությունում կաթողիկոսի փոխանորդի /ապագա տեղապահ/ հարմար թեկնածու չկա, սփյուռքի հայ հոգեւորականությունից հրավիրել համապատասխան մեկին: Իբրեւ հնարավոր թեկնածուներ կաթողիկոսը տալիս է Երուսաղեմի պատրիարքության տեղապահ Եղիշե Տերտերյանի եւ Հյուսիսային Ամերիկայի թեմական առաջնորդ Տիրան Ներսոյանի անունները,

դ/ Արտերկրյա հայ թափուր թեմերը առաջնորդական կազմով համալրելու համար Երուսաղեմի միաբանությունից հրավիրել երիտասարդ ու պատրաստված հոգեւորականներ՝ Շավարշ Գյումճյանին, Հայրիկ Ասլանյանին, Հայկազուն Աբրահամյանին, Բաբկեն Ապատյանին եւ այլոց ու ապագայում համապատասխան թեմերը գործուղման հեռանկարով՝ եպիսկոպոս ձեռնադրել,

ե/ Հոգեւոր ճեմարանի ունկնդիրների նոր ընդունելություն կազմակերպել՝ նրանց թիվը հասցնելով 40-ի,

3. 1952թ. մյուռոնի օրհնությանը հրավիրել բոլոր եպիսկոպոսներին ու մեկական ներկայացուցիչ՝ եպիսկոպոս չունեցող թեմերից:

Ա/ Մյուռոնօրհնության հետ գումարել եպիսկոպոսական ժողով, որտեղ պետք է քննարկել եւ հաստատել Հայ եկեղեցու նոր սահմանադրությունը, քննարկել հարցեր՝ կապված Հայ եկեղեցու արտասահմանյան կենտրոնների գործունեության հետ:

Բ/ Մյուռոնօրհնությանը հարմարեցնել իր հոբելյանի տոնակատարությունը:

Գ/ Էջմիածնի եւ Ամենյան Հայոց Կաթողիկոսի դերն ու հեղինակությունը սփյուռքահայության մեջ բարձրացնելու համար օգտագործել մյուռոնօրհնեքի նախապատրաստական շրջանը՝ եկեղեցական եւ արտասահմանյան հայ առաջադիմական մամուլի էջերում, լայնորեն քարոզչություն ծավալելու նպատակով:

Դ/ Մյուռոնօրհնության նախապատրաստական աշխատանքները ղեկավարելու համար Մերձավոր Արեւելք, Եվրոպա, Հնդկաստան, Հյուսիսային եւ Լատինական Ամերիկայի երկրներ գործուղել Կաթողիկոսի ներկայացուցիչներին:

4. Կիրառել արտասահմանյան թեմերի ներկայացուցիչներին եւ առաջնորդներին հաշվետվությամբ առավել հաճախ էջմիածին հրավիրելու փորձը, ինչպես նաեւ էջմիածնի ներկայացուցիչների կանոնավոր գոր-

ծուղումները Հայ եկեղեցու արտասահմանյան կենտրոններ՝ ղեկավարման եւ հրահանգավորման նպատակով:

5. Կիլիկիո կաթողիկոսությունում գործերի բարելավման համար երկարատեւ ժամանակով էջմիածնի ներկայացուցչին ուղարկել այնտեղ՝ Գարեգին Ա Կաթողիկոսի մոտ, որն ամենօրյա զրույցների միջոցով կարողանա համապատասխանաբար ներշնչել նրան՝ հասնելու այն միջոցառումների իրականացմանը, որոնք նշված են եղիշե Տերտերյանի միջոցով Գարեգինին ուղարկած Գեորգ Ջ Կաթողիկոսի նամակում, այլեւ կոնկրետ միջոցներ ձեռնարկել դաշնակների կողմից Կաթողիկոսության նվաճումը խանգարելու համար: Այդօրինակ ուղեւորության համար կոնկրետ պատրվակ կարող է ծառայել Մերձավոր Արեւելքում մյուռոնօրհնության նախապատրաստական աշխատանքների ղեկավարման հարցը:

6. Էջմիածնից Կ.Պոլսի պատրիարքության վերջնական բաժանումից խուսափելու համար հարկ է որոշ զիջումների գնալ եւ գտնել հարցի փոխզիջումային լուծումը /վերականգնել միայն 2 կարգալույծ արվածներին, իսկ 3-ին որոշ ժամանակով ուղարկել Երուսաղեմ՝ մեղքերը քավելու համար/:

7. Իրաքում եւ Պարսկաստանում Հայ եկեղեցու թեմերի բարելավման համար թույլատրել Կաթողիկոսին անմիջական բանակցությունների մեջ մտնել այդ երկրի ղեկավարների հետ եւ համապատասխան ուղերձներով իր ներկայացուցիչներին այդ երկրներ գործուղել:

Միաժամանակ Իրաքի եւ Պարսկաստանի խորհրդային դեսպանություններին կաթողիկոսի իր ինքնիշխան իրավունքների վերականգնման ուղղությամբ վարվող բանակցություններին աջակցելու հրահանգ տալ:

8. Արտասահմանի հայկական թեմերում կատարվող իրադարձությունների մասին առավել ամբողջական եւ ստույգ տեղեկություն ստանալու համար թույլատրել կաթողիկոսին իր տարադրամով, բաժանորդագրվել բոլոր սփյուռքահայ պարբերականներին եւ այլ հրատարակությունների՝ պայմանով, որ այդ գրականությունը գտնվի Հայ եկեղեցու գործերի խորհրդի ֆոնդում, սահմանափակ անձանց օգտվելու թույլատվությամբ /Կաթողիկոս, «Էջմիածին» ամսագրի խմբագիր/»:

Առաջադրված հարցերն ուսումնասիրելու եւ ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյին առաջարկություններ ներկայացնելու համար ստեղծվում է հանձնաժողով՝ կենտկոմի քարտուղար Ջավեն Գրիգորյան, պետանվտանգության նախարար Սերգեյ Կորխմազյան եւ ՀԵԳԽ նախագահ Հրաչյա Գրիգորյան կազմով: 1952թ. հունվարի 16-ին հանձնաժողովի զեկուցագիրը ներկայացվում է կենտկոմի առաջին քարտուղար Գ.Հարությունյանին[1]:

Համաձայնելով ՀԵԳԽ նախագահի ներկայացրած ծրագրի միջոցառումների հիմնական մասի հետ, հանձնաժողովը մերժում է ԽՍՀՄ-ում նոր եկեղեցիներ բացելու եւ եկեղեցականներին «սրբավայրեր» մեկնելու թույլտվություն տալու առաջարկները՝ որպես քաղաքականապես ոչ ճիշտ, միաժամանակ առաջարկվում է հանրապետության բյուջեից միջոցներ հատկացնել հոգեւոր ճեմարանի /400 հազար ռուբլի/ եւ «Էջմիածին» ամսագրի /120 հազար ռուբլի/ պահպանման համար, իսկ 1953թ. միաժամանակ կատարել մյուռոնօրհնություն, հրավիրել եպիսկոպոսական ժողով եւ նշել Կաթողիկոսի 85-ամյա հոբելյանը: Միաժամանակ առաջարկ-

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 32, գ. 97, թթ. 68-77:

վում է հետագայում էջմիածնի եւ Հայ եկեղեցու, ինչպես նաեւ այլ կրոնական համայքների հարցերի քննարկման հետեւյալ տարբերակը.

ա. Բոլոր սկզբունքային հարցերը քննարկում է ՀԵԳԽ եւ իր առաջարկները ներկայացնում ՀԽՍՀ Նախարարների խորհուրդ,

բ. ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը պաշտոնապես քննարկում է այդ հարցերը եւ այն դեպքերում, եթե պահանջվում է կենտկոմի հավանությունը, ներկայացնում է իր առաջարկները վերջինիս,

գ. Ինչպես ՀԵԳԽ, այնպես էլ ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը քննարկում են կաթողիկոսի եւ այլ կրոնական համայնքների առաջադրած հարցերը արագ եւ ժամանակին:

Հանձնաժողովի այս առաջարկները քննարկվում են ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի 1952թ. փետրվարի 27-ի նիստում: Կենտկոմի որոշումը, որը կրում է «Հատուկ կարեւորություն» մակագրությունը, դժբախտաբար ՀՀ պետարխիվներում չի պահպանվել, սակայն ՀԵԳԽ կողմից ՀԿ/բ/Կ Կենտկոմ ուղարկված, իսկ վերջինիս կողմից ՀամԿ/բ/Կ Կենտկոմ ներկայացված որոշ զեկուցագրեր տալիս են այդ որոշման մոտավոր բովանդակությունը:ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն, հիմնականում հավանություն տալով հանձնաժողովի առաջարկներին, դրանցում կատարում է մասնակի փոփոխություններ: Մասնավորապես ճշգրտվում է հոգեւոր ճեմարանի եւ «էջմիածին» ամսագրի պահպանման համար անհրաժեշտ պետական բյուջետային միջոցների հատկացման չափը՝ ճեմարանի ծախսերի 50 տոկոսը /350 հազար ռուբլի/ եւ ամսագրի ծախսերի 40 տոկոսը /100 հազար ռուբլի/:

Գր.Հարությունյանը փետրվարի 24-ին ընդունված միջոցառումների մասին տեղյակ է պահում ՀամԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղար Գ.Մալենկովին, դրանց իրականացման թույլատրությունը ՀամԿ/բ/Կ Կենտկոմից ստանալու համար[1]: Միջոցառումների թվում նշվում են 1953թ. գարնանը մյուռոնօրհնություն կատարելը, 1948թ. կաթողիկոսի մշակած հայ եկեղեցու սահմանադրությունը կառավարության կողմից հաստատելն ու այն եպիսկոպոսական ժողովում ընդունելը եւ էջմիածնի միաբանությունը նոր անդամներով համալրելը: Արտասահմանյան թեմերը էջմիածնին նվիրված առաջնորդներով ապահովելու համար Գր.Հարությունյանը խնդրում էր թույլատրել կաթողիկոսին՝ եկեղեցական աստիճաններ շնորհել համապատասխան պատրաստվածություն ունեցող խորհրդային քաղաքացիների եւ նախկին հոգեւորականների, ինչպես նաեւ արտասահմանից մըշտական աշխատանքի հրավիրելը մի քանի առաջադիմական եկեղեցականների: ՀԿ/բ/Կ Կենտկոմը միաժամանակ հնարավոր էր գտնում կաթողիկոսին թույլատրել հոգեւոր ճեմարան ընդունել արտասահմանում ապրող առաջադեմ հայ երիտասարդների: Հաշվի առնելով հոգեւոր ճեմարանի եւ «էջմիածին» ամսագրի փակման աննպատակահարմարությունը եւ այն, որ կաթողիկոսությունը միջոցներ չունի դրանց հետագա պահպանման համար, ՀԿ/բ/Կ Կենտկոմը նպատակահարմար է համարում խնդրել ՀամԿ/բ/Կ Կենտկոմին թույլատրել ՀԽՍՀ նախարարների խորհրդին ամեն տարի իր պահուստից 450 հազար ռուբլի հատկացնել այդ նպատակի համար: Միաժամանակ, արտասահմանյան թեմերի վրա էջմիածնի ազդեցությունը ուժեղացնելու, ինչպես նաեւ էջմիածնից դրանց անջատումը կանխելու համար ՀԿ/բ/Կ Կենտկոմը հարմար է գտնում երաշխավորել

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 32, գ. 50, թթ. 25-29:

կաթողիկոսին արտասահմանից էջմիածին հրավիրել եւ եպիսկոպոսի աստիճան շնորհել մի շարք երիտասարդ առաջադեմ վարդապետների, բարելավել եւ ակտիվացնել «էջմիածին» ամսագրի գործունեությունը, ավելի կոշտ դիրք վարել արտասահմանից կաթողիկոսությանը հասանելիք միջոցների ստացման գործում, սահմանել ավելի խիստ հսկողություն արտասահմանյան թեմերի գործունեության նկատմամբ եւ այլն: Միաժամանակ ՀամԿ/բ/Կ Կենտկոմին տեղյակ էր պահվում, որ մերժվել է իր նյութական հիմքը բարելավելու նպատակով Թբիլիսիում, Բաքվում, Մոսկվայում, Խարկովում, Արամվիրում, Միջին Ասիայի հանրապետություններում եւ Լեռնային Ղարաբաղում նոր եկեղեցիներ բացելու եւ «տաղավարային» տոներին ծիսական արարողություններ բոլոր անդրկովկասյան հանրապետությունների այսպես կոչված «սրբավայրերում» կատարելը թույլատրելու կաթողիկոսի խնդրանքը:

Չնայած ՀԿ/բ/Կ Կենտկոմի որոշմանը եւ Մոսկվա ուղարկված վերոհիշյալ միջնորդությանը, միութենական իշխանությունները չէին շտապում որեւիցե որոշում ընդունել: Իսկ ժամանակն անցնում էր եւ էջմիածնի վիճակն ավելի էր վատանում: 1952թ. հուլիսի 15-ին Գեւորգ Զ կաթողիկոսն ընդարձակ գրություն է հղում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ս.Կարապետյանին, որտեղ Հայոց հայրապետը նպատակ ուներ «ներկա կարեւոր ձեռնարկների նկարագիրը տալ, նոցա նպատակները լուսաբանել եւ նոցա տնտեսական վիճակը բացատրել, որպէսզի պարզուի մեր վերոհիշեալ ասածների ճշմարտութիւնը եւ որոշվի նոցա ապագայի ընթացքը»: Շեշտելով անցյալում էջմիածնի դերը հայ ժողովրդի կյանքում, կաթողիկոսը ներկայացնում է նրա առկա վիճակը. «էջմիածնի դերը հայ ժողովրդի նկատմամբ փոխուել է, նորա դերը սահմանափակուել է, նորա կուլտուրական եւ ֆիզիքական գոյութեան պահպանութեան դերերը անցել են իրենց հայրենի պետութեան, որի ծնունդը Ս. էջմիածինը ի ժամանակին հաճութեամբ ողջունել է, եւ այժմ էլ մեծապէս ուրախ է, որ այդ դերը հայրենի պետութիւնը կատարում է ամենայն յաջողութեամբ՝ ի մխիթարութիւն հայ հավատացեալ ժողովրդի եւ հոգեւորականութեան: Այնուհանդերձ էջմիածնին մնում է հայ ժողովրդի կրոնական կեանքի ղեկավարութիւնը հայրենի երկրում եւ արտասահմանում, ինչպես նաեւ արտաքին գաղութահայութեան կուլտուր-կրթական պատասխանատու դերը կապելով գաղութահայութեան միտքն ու սիրտը հայրենաբնակ ժողովրդի եւ հայրենի երկրի հետ հայրենի սրբությունների միջոցով, որոնց գլուխն է Ս.էջմիածինը»:

Այնուհետեւ շարադրվում են կաթողիկոսությանը հուզող խնդիրները՝ «էջմիածին» ամսագրի եւ հոգեւոր ճեմարանի պահպանումը, Ս.էջմիածնի Մայր Տաճարի հիմնական վերանորոգման անհրաժեշտությունը, կաթողիկոսի Երեւանի առանձնատան կառուցման ավարտումը, Սփյուռքի թեմերից հոգեւոր ճեմարան ուսանողների ընդունումը, այնտեղ դասավանդելու համար պարբերաբար Անթիլիասից մասնագետ աստվածաբանների հրավիրումը, Ս.էջմիածնի միաբան սարկավագներին աստվածաբանություն ուսանելու համար Գերմանիա ուղարկելը[1]: Նոյեմբերի 1-ին Նախարարների խորհրդի նախագահը կաթողիկոսի գրության մասին տեղյակ է պահում Գ.Հարությունյանին, նշելով, որ կաթողիկոսի բարձրացրած հիմնահարցերի մասին կա ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի համապատաս-

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 409, ց. 1, գ. 816, թ. 9: ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 32, գ. 97, թ. 157:

խան որոշումը: Հայտնելով, որ սարկավագներին Գերմանիա ուղարկելն աննպատակահարմար է, նա առաջարկում է հանձնարարել ՀԵԳԽ նախագահ Հ.Գրիգորյանին՝ երաշխավորելու կաթողիկոսին՝ դիմել պատրիարք Ալեքսիին, նրա համաձայնությամբ, Մոսկվայի հոգեւոր ակադեմիա ուսանողներ ուղարկելու: Անդրադառնալով Մայր տաճարի վերանորոգման հարցին, Ս. Կարապետյանը նշում է, որ կառավարությունը չի կարող ոչ մի միջոց տրամադրել այդ նպատակի համար: Ինչ վերաբերում է Կյուլպենկյանի կողմից միջոցների հատկացմանը, ապա կառավարությունը դեմ չէ, որ Կաթողիկոսը վարի անհրաժեշտ բանակցություններ եւ դրական լուծման դեպքում կապահովի անհրաժեշտ շինանյութերով: Գրության վերջում, հայտնելով կաթողիկոսի՝ բարձրացրած հարցերի առիթով հանդիպման խնդրանքի մասին, Ս.Կարապետյանը գտնում է, որ պետք է սպասել միութենական կառավարության որոշմանը[1]: Պարզվում է, որ 1952թ. վերջին սպասվելիք որոշումը դեռեւս չէր ընդունվել:

1952թ. ինչպես Հայաստանի, այնպես էլ միութենական իշխանություններին մտահոգում էր 84-ամյա կաթողիկոսի առողջական վիճակը եւ նրա հավանական հետնորդի հարցը: ԽՍՀՄ կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Ի.Պոլյանսկին սեպտեմբերին ՀԵԳԽ նախագահ Հ.Գրիգորյանից պահանջում է հանդիպում ունենալ կաթողիկոսի հետ եւ ճշտել նրա դիրքորոշումը այդ հարցում: Հ.Գրիգորյանը երկու զրույց է ունենում կաթողիկոսի հետ եւ հոկտեմբերի 12-ին Մոսկվա հայտնում իր զրույցների արդյունքի մասին: Ըստ Կաթողիկոսի, 1945թ. մոտիկից քննելով Հայ եկեղեցու արտասահմանյան գործիչներին, ճշտել է, որ առավել պատրաստված, նվիրված, հեղինակավոր, գաղափարական գործիչներ են արքեպիսկոպոսներ Տիրան Ներսոյանը, Գարեգին Խաչատրյանը, Արտավազդ Սուրմեյանը եւ Վազգեն եպիսկոպոս Պալճյանը: Սակայն այժմ իրավիճակը եւ իր կարծիքն այդ մարդկանց մասին փոխվել են: Արտավազդ Սուրմեյանը վախճանվեց, Գարեգին Խաչատրյանը իրեն վատ դրսեւորեց Կոստանդնուպոլսի պատրիարքի պաշտոնում: Վազգեն Պալճյանը, չնայած խիստ դրական, հայրենիքին եւ էջմիածնին նվիրված անձնավորություն է, բայց մեծ մասշտաբի գործիչ չէ: Ինչ վերաբերում է Տիրան Ներսոյանին, ապա վերջին տարիների նրա գործունեությունը, կաթողիկոսի խոսքերով, իրեն խստիվ դուր չի գալիս: «Եթե այժմ սուր կերպով ծառանա տեղապահի կամ հնարավոր հետնորդի հարցը,- գրել է նա,- ապա միակ հարմար անձը Երուսաղեմի պատրիարքական տեղապահ Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանն է, որը անհրաժեշտաբար պատրաստված է եւ մեծ հեղինակություն է վայելում, եւ, իմ դիտարկումների համաձայն, սրտանց նվիրված է էջմիածնին ու հայրենիքին«[2]:

1953թ. տեղի ունեցան արմատական փոփոխություններ. մահացավ Ստալինը, իսկ տարեվերջին փոխվեց նաեւ Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը: Երկրի հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները հնարավորություն ընձեռեցին որոշակիորեն շտկել իրավիճակը էջմիածնի կաթողիկոսությունում: Երկու տարվա դադարից հետո հոգեւոր ճեմարան ընդունվեցին 20 ուսանողներ, «էջմիածին» հանդեսն սկսեց լույս տեսնել ամեն ամիս եւ ժամանակին, վարդապետ ձեռնադրվեց ուսուցիչ Գեւորգ Վարյանը:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 32, գ. 97, թթ. 155-156:
[2] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 48, թթ. 35-39:

Պայքարն ավելի էր բարդանում Կիլիկիո կաթողիկոսի ընտրությունների շուրջը: Խորհրդային իշխանության մարմինները եւ էջմիածինը, ինչպես նաեւ արտասահմանում առաջադիմական կոչվող ուժերը պաշտպանում էին Խաղ արքեպիսկոպոս Աջապահյանի, իսկ Հ.Յ.Դ.՝ Զարեհ եպ. Փայասլյանի թեկնածությունը: Ընտրություններն անընդհատ հետաձգվում էին, որովհետեւ դաշնակները մեծամասնություն չունեին եկեղեցական, իսկ «առաջադիմական» շրջանակները՝ աշխարհիկ պատգամավորների թվում[1]:

Սակայն ընդհանուր առմամբ էջմիածնի գործունեության հետ կապված հիմնական հարցերը մնում էին չլուծված: Վերոհիշյալ նկատառումներից ելնելով՝ ՀԵԳԽ նախագահ Հ.Գրիգորյանը Հայկոմկուսի ղեկավարության փոփոխությունից մի քանի օր անց՝ 1953թ. դեկտեմբերի 11-ին «Հայ եկեղեցու մասին» ծավալուն զեկուցագիր է ներկայացնում ՀԿԿ Կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Ս.Թովմասյանին[2]: Այն իր բովանդակությամբ հիմնականում կրկնում էր 1951թ. դեկտեմբերի 1-ի զեկուցագրի հիմնախնդիրները, միայն հավելելում էր 1952-53թթ. տեղի ունեցած իրադարձությունները եւ ձեռնարկած միջոցառումները: Մասնավորապես, նշվում է, որ «1952թ. փետրվարին, ՀԿԿենտկոմի բյուրոն որոշում է խնդրել միութենական կառավարությանը տարեկան լրավճար հաստատել հոգեւոր ճեմարանի պահպանության համար 350 հազար ռուբլու չափով եւ «էջմիածին» հանդեսը պահելու համար՝ 100 հազար ռուբլի: Խնդրագիր է ներկայացվել ԽՍՀՄ կառավարությանը՝ թույլատրել 1953թ. կատարելու մյուռոնօրհնեք, ինչպես նաեւ հրավիրել եպիսկոպոսաց ժողով նոր Սահմանադրություն հաստատման համար: Էջմիածնի կադրերի բարելավման նպատակով խնդրանքն էր թույլ տալ Մայր Աթոռ մշտական աշխատանքի հրավիրել արտասահմանյան առաջադեմ եկեղեցական 5 գործիչ եւ էջմիածնի հոգեւոր ճեմարանում ուսանողների ընդունելություն կատարել նաեւ հայ եկեղեցու արտասահմանի թեմերից: Սակայն, խնդիրները դեռեւս չէն քննարկվել միութենական կառավարությունում: Այժմ՝ կապված էջմիածնի կաթողիկոսությունում գործերի վիճակի բացառիկ վատթարացման եւ արտասահմանում թշնամի ուժերի ակտիվացման հետ, խիստ աննպատակահարմար է էջմիածնի գործունեության հետ կապված հարցերի քննարկման հետաձգելը»:

Էջմիածնի կաթողիկոսության գործունեության բարելավման, արտերկրում հայ եկեղեցու գործերին նրա միջամտության ակտիվացման եւ արտասահմանի հայ գաղթավայրերում էջմիածնի հեղինակության առավել բարձրացման համար Հ.Գրիգորյանը խիստ անհրաժեշտ էր համարում հետեւյալ միջոցառումների իրագործումը.

«1. Թույլ տալ 1954թ. մյուռոնօրհնեք կատարել: Մյուռոնօրհնեքի հրավիրել բոլոր եպիսկոպոսներին եւ ամեն թեմից 2-ական աշխարհիկ ներկայացուցիչ: Միաժամանակ եպիսկոպոսաց ժողով հրավիրել հայ եկեղեցու նոր Սահմանադրության նախագիծը քննարկելու համար, ինչպես նաեւ քննարկել Հայ եյեղեցու արտասահմանյան կենտրոնների գործունեության ակտիվացման հետ կապված հարցերը:

2. Թույլ տալ ԽՍՀՄ-ի տարածքում հայկական եկեղեցիներ բացել հետեւյալ վայրերում՝ Ստեփանակերտ /Ադր. ԽՍՀ, Լեռնային Ղարաբաղ/,

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 66, թ. 79:
[2] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 823, ց.3, գ. 69, թթ. 1-33:

Գորիս /Հայկ. ԽՍՀ/, Խարկով /Ուկր. ԽՍՀ/, Մոսկվա՝ Վագանկովի գերեզմանատան մատուռ: Միաժամանակ թույլատրել էջմիածնին տարեկան մեկ անգամ Հայկ. ԽՍՀ ուխտավայրերում արարողություններ կատարել այսպես կոչված «Սրբոց տոներին»:

3. Ապահովել էջմիածնի Կաթողիկոսության գործունեության համար անհրաժեշտ բազա, ինչի համար՝

ա/ տարեկան լրավճար սահմանել հոգեւոր ճեմարանն ու «էջմիածին» հանդեսը պահելու համար հետեւյալ չափերով. հոգեւոր ճեմարանի համար՝ 400000, իսկ «էջմիածին» հանդեսի՝ 200000 ռուբլի,

բ/ մյուռոնօրհնեքը եւ եպիսկոպոսաց ժողովը անցկացնելու համար էջմիածնի Կաթողիկոսարանին հատկացնել միանվագ 600000 ռուբլի,

գ/ կաթողիկոսի ամառանոցի կառուցման ավարտի համար միանվագ տրամադրել 800000 ռուբլի՝ ամառանոցի շինարարական աշխատանքների ավարտելը հանձնարարելով պետական շինվարչությանը,

դ/ թույլ տալ Գեւորգ Զ կաթողիկոսին արտասահմանից առանց մաքսի ապրանքներ ներմուծել իրեն պատկանող տարադրամով՝ այդ ապրանքները հետագայում իրացնելով կոմերցիոն հիմունքներով պետական ու կոոպերատիվ ցանցի միջոցով,

ե/ օժանդակ տնտեսություն ստեղծելու համար հատկացնել 15-20 հեկտար պիտանի հողային տարածք էջմիածնի կամ Աշտարակի շրջանում,

զ/ բնակիչներից ամբողջովին ազատել ու էջմիածնի կաթողիկոսարանին հանձնել վանքի նախկին 2 շենքերը,

4. Բարձրաստիճան հոգեւորականության կադրերի առկա պակասը լրացնելու համար Գեւորգ Զ կաթողիկոսին թույլ տալ էջմիածին մշտական աշխատանքի հրավիրել արտասահմանյան առաջադեմ եկեղեցական 5 գործիչ,

5. Թույլ տալ արտասահմանյան թեմերից տարեկան 15 մարդ ընդունել հոգեւոր ճեմարան:

6. Արտասահմանի հայկական գաղթավայրերում գործերի վիճակի մասին բազմակողմանի տեղեկատվություն ստանալու նպատակով կաթողիկոսին թույլ տալ ստանալ արտասահմանյան բոլոր հայկական պարբերական եւ այլ տպագրություններ՝ այդ ամբողջ գրականությունը պահելով Հայ եկեղեցու գործերի խորհրդի հատուկ ֆոնդում:

7. Էջմիածնի Մայր Տաճարի շուտափույթ վերանորոգումն ապահովելու նպատակով Գեւորգ Զ կաթողիկոսին հանձնարարել շարունակել բանակցությունները Գյուլբեկյանի հետ այն պայմանով, որ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնի պետական շինվարչության հետ: Գյուլբեկյանի այս պայմանին չհամաձայնելու դեպքում թույլ տալ կաթողիկոսին ԽՍՀՄ-ի տարածքում եւ արտասահմանում Հայ եկեղեցու հավատացյալներից Տաճարի վերանորոգման համար միջոցների հանգանակություն կատարել»[1]:

Հ.Գրիգորյանի զեկուցագրի հիման վրա 1954թ. սկզբին կազմվում են ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի եւ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշման եւ խորհրդային նոր ղեկավարության՝ ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Գ.Մալենկովի եւ ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ն.Խրուշչովի

---

[1] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 69, թթ. 32-33:

անունով ուղարկվելիք գրության նախագծեր: Սակայն մարտ ամսին կաթողիկոսի առողջության կտրուկ վատացման պատճառով դրանք մնացին իբրեւ նախագիծ: Որոշման նախագծից պարզ է դառնում, որ իշխանությունները մտադիր էին Հ.Գրիգորյանի միջոցով խորհուրդ տալ կաթողիկոսին իր կենդանության օրոք գահ բարձրացնել աթոռակից կաթողիկոս եւ իբրեւ այդպիսին երաշխավորել Երուսաղեմի պատրիարք եղիշե արքեպ. Տերտերյանի թեկնածությունը[1]: Եվ իրոք, իր մահից մի քանի օր առաջ՝ ապրիլի 30-ին, կաթողիկոսն ստորագրում է կոնդակ՝ Եղիշե արք. Տերտերյանին կաթողիկոսական տեղապահ նշանակելու մասին[2]:

1954թ. մայիսի 9-ին վախճանվեց Գեւորգ Զ կաթողիկոսը: Մայիսի 27-ին կայացավ նրա թաղման արարողությունը, որին մասնակցելու համար արտասահմանից ժամանել էին Կիլիկիո կաթողիկոսական տեղապահ Խաղ արքեպ. Աջապահյանը, Մամբրե արքեպ. Գալաֆյանը /Հյուս. Ամերիկայի առաջնորդական տեղապահ/, Տիրան արք. Ներսոյանը, եպիսկոպոսներ Վազգեն Պալճյանը, Սիոն Մանուկյանը, Դերենիկ Փոլադյանը, մի խումբ վարդապետներ, ինչպես նաեւ ռուս եւ վրաց եկեղեցու պատվիրակներ, ԽՍՀՄ կրոնական դավանանքների խորհրդի նախագահ Իվան Պոլյանսկին: Թաղումից հետո ստացվեց Եղիշե արքեպ. Տերտերյանի նամակը, ուր հաղորդվում էր կաթողիկոսական տեղապահի պաշտոնից հրաժարվելու մասին՝ հետեւյալ պատճառաբանությամբ, որ «Նկատի առած արտասահմանի այժմու ճակատագրական վիճակը, թէ եկեղեցական եւ թէ ազգային տեսակետով, ես կը կարծէի թէ իմ արտասահման մնալս՝ աւելի օգտակար կրնայ ըլլալ Ս.էջմիածնի, մանաւանդ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շուրջ ստեղծուած կացութեան ի հաշիւ: Առժամաբար իմ էջմիածին չգալս կրնայ պատճառ հանդիսանալ, որ ես կարենամ վայելել աւելի վստահութիւն, եւ այս պարագան մեծ դիւրութիւններ կրնայ ընծեռել ի նպաստ էջմիածնի, մասնաւորաբար եւ մեր եկեղեցւոյ ու ընդհանրապէս կարգադրութեանց»[3]:

Հրաժարականի իսկական պատճառը հաշվետվության մեջ ներկայացրել է 1954թ. դեկտեմբերին Անթիլիաս գործուղված Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ, պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանը. «Ինքը՝ Եղիշե արքեպիսկոպոսը, դեմ չէ Ամենայն Հայոց Կաթողիկոսական գահին բազմելուն: Սակայն ջերմ ցանկություն եւս չի ցուցաբերում, որովհետեւ գիտե, որ գալով էջմիածին, անձնական այնքան լայն աշխատություն չի ունենա, որքան նա ունի արտասահմանում, գիտի, որ էջմիածնում նվիրված հոգեւորականություն գոյություն չունի, գիտի, որ աթեիստական շարժումը ուժեղացրել է եկեղեցու դեմ, եւ Հայաստանում հատ ու կենտ եկեղեցիներ են բաց եւ այլն: Վերջերս նա Փարիզից՝ Լեւոն Մեսրոպից, նամակ էր ստացել, ուր վերջինս շատ մռայլ ձեւով էր ներկայացրել էջմիածնի դրությունը: Մեկ անգամ Տերտերյանի հետ իր թեկնածությունը Կաթողիկոսական Գահի վրա դնելու մասին խոսելիս նա, թվում է, թե իր թեկնածությունը դնելուց խուսափելու համար ասաց. «էջմիածնում ուժեղ Կաթողիկոսի կարիքն այժմ չկա, քանի որ Կաթողիկոսը շրջապատված է քաղաքականությունը լավ իմացող հայրենի երկրի պետական հայ մարդկանցով, որոնք ամեն որպէս կարող են օգնել, ուղղություն տալ Կաթողիկոսին, իսկ

[1] Նույն տեղում, գ. 76, թ. 12:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3912, թթ. 7-11:
[3] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 823, ց. 1, գ. 18, թ. 36:

իմ կարիքն ավելի է զգացվում այստեղ՝ Արեւելքում, ուր բախվում են տարբեր պետական շահեր, եւ ուր գտնվում է միլիոնի չափ անտեր հայություն, որին Էջմիածնին եւ Մայր Հայրենիքին կապած պահելու խնդիրը կենսական նշանակություն ունի, իսկ այստեղ, եթե միայն ինձ Էջմիածնի կողմից լիազորություն տրվի, ավելի օգտակար կարող եմ լինել, քան Էջմիածնում»[1]:

Եղիշե արք. Տերտերյանի նման պահվածքի պատճառով խորհրդային իշխանության մարմինները եւ Էջմիածնի միաբանությունը սկսում են կողմնորոշվել դեպի Վազգեն եպ. Պալճյանը, որի շուրջը մեծ կարծիք էր ստեղծվել նաեւ կաթողիկոսի թաղմանը մասնակցելու համար ժամանած պատգամավորության շրջանում, եւ որոնք իրենց կարծիքը փոխանցել էին հավատացյալ շրջաններին: 1955թ. փետրվարին հանրապետության իշխանությունները որոշում ընդունեցին աշնանը կաթողիկոսական ընտրություններ անցկացնելու համար Ազգային եկեղեցական ժողով գումարել[2]:

Առաջիկա կաթողիկոսական ընտրությունները իշխանությունների կողմից դիտվում էին իբրեւ քաղաքական խոշոր միջոցառում: Իր նշանակությամբ դա դուրս էր գալիս հայկական շրջանակներից եւ ստանում համամիութենական նշանակություն: Արտասահմանյան քրիստոնյա աշխարհը կաթողիկոսական ընտրությունների հիման վրա պիտի դատեր, թե ինչ չափով ազատ է կրոնը ԽՍՀՄ-ում: Մյուս կողմից, արտասահմանից եկած պատգամավորները պիտի տեսնեին, թե ինչ չափով է զարգացել, բարգավաճել իրենց հայրենիքը: Այս բոլորը նկատի առնելով, անհրաժեշտ էր լավ նախապատրաստվել: Դեռեւս 1954թ. գարնանը ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշմամբ սկսվել էին Մայր Տաճարի վերանորոգման աշխատանքները, անհրաժեշտ էր դրանք արագացնել եւ նախքան ընտրությունը ավարտել տաճարի, վանքի պարսպի եւ վեհարանի վերանորոգումները: Շատ մեծ եւ լուրջ աշխատանք էր պետք փոքրիշատե կարգավորելու Էջմիածնի միաբանությունը: Ըստ Աշոտ Աբրահամյանի հաշվետվության, «Էջմիածնում առանց այդ էլ խելքը գլխին միաբանություն գոյություն չունի, իսկ եղածն էլ ցրեց, ոչնչացրեց Կոստանյանը»[3]: Ուստի, անհրաժեշտ էր հետ կանչել միաբանություններից հեռացած երիտասարդ եկեղեցականներին եւ պաշտոններ տալ նրանց: Եվ ամենակարեւորը. հարկավոր էր ճշտել կաթողիկոսի հարմար թեկնածուին եւ հասարակական կարծիք ստեղծել նրա շուրջը: 1955թ. ամռանը նախապատրաստական աշխատանքներն արագացվեցին: Սկսվեց Էջմիածին քաղաքի բարեկարգումը, միջոցառումների ծրագիր մշակեցին մշակույթի նախարարությունը, Մատենադարանը եւ այլ կազմակերպություններ: Նամակներ հղվեցին հայ եկեղեցու 2 նշանավոր գործչի՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Գարեգին արքեպ. Խաչատրյանին եւ Երուսաղեմի պատրիարքական տեղապահ Եղիշե արք. Տերտերյանին, ընտրություններին անպայման մասնակցելու խնդրանքով[4]: Եվ կատարվեց ամենակարեւորը, ճշտվեց կաթողիկոսի թեկնածուն՝ Վազգեն եպիսկ. Պալճյանը:

---

[1] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 98, թ. 7:
[2] Նույն տեղում, գ. 96, թ. 3-5:
[3] Նույն տեղում, գ. 98:
[4] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ.823, ց. 1, գ. 18, թ. 43-44, գ. 147, թ. 7:

Ինչպես վերհիշում է 1963-69թթ. ՀԵԳԽ նախագահ Կ.Դալլաքյանը, «թեկնածուի որոնումները բավական երկար են տեւել: Վերջապես կանգ են առել Ռումինիայի թեմական առաջնորդ Վազգեն եպիս. Պալճյանի թեկնածության վրա: Հարցը, սակայն, պետք էր համաձայնեցնել ԽՍՀՄ իշխանությունների բարձրագույն ոլորտներում, մասնավորապես, կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյում: Խնդիրն այն է, որ իշխանությունները Ամենայն Հայոց կաթողիկոսի դիրքը համարում են շատ բարձր քաղաքական պաշտոն, որի գահակալի ընտրության հարցում Քաղբյուրոն իրեն իրավունք էր վերապահում հավանություն տալ կամ ոչ: Գործը պահանջել էր եւ մանրամասն ծանոթացել այդ պահին, եւ հետայնու՝ մինչեւ իր մահը, կենտկոմի ամենաազդեցիկ եւ հեղինակավոր անձնավորությունը՝ Միխայիլ Սուսլովը: Նա դժգոհ էր մնացել եղած առաջարկությունից: Միթե ԽՍՀՄ-ի 4-5 միլիոն հայ քաղաքացիների մեջ մեկը չգտաք, որ արտասահմանցու թեկնածությունն եք բերել,- ասել էր նա: Բացատրել էին, որ պետք է լինի հոգեւորական, իսկ Հայաստանում եպիսկոպոսների թիվը խիստ նվազ էր եւ բոլորը՝ տարեց մարդիկ: Դժկամությամբ համաձայնել էր»[1]:

1955թ. սեպտեմբերի 29-30-ին Էջմիածնում կայացավ Ազգային եկեղեցական ժողովը, որը Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրեց Վազգեն եպիսկոպոս Պալճյանին: Ժողովին մասնակցում էին պատգամավորներ արտասահմանի եւ ներքին սփյուռքի 19 թեմերից, ինչպես նաեւ բազմաթիվ հյուրեր եւ ուխտավորներ: Հոկտեմբերի 2-ին Մայր տաճարում տեղի ունեցավ նորընծա կաթողիկոս Վազգեն Ա-ի օծումը[2]:

ՀԵԳԽ-ին զուգահեռ կրոնական հարցերով զբաղվում էր նաեւ ԽՍՀՄ կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի ՀԽՍՀ լիազորը, որի գործունեության ոլորտում էին մուսուլմանները, ավետարանական քրիստոնյաներ-բապտիստները /ԱԲԲ/, 7-րդ օրվա ադվենտիստները, մոլոկանական աղանդները, ՀԵԳԽ խորհրդի հետ համատեղ՝ հայ կաթոլիկները: 1947թ. ՀԽՍՀ-ում գործում էին մահմեդական՝ 3 գրանցված, ԱԲԲ՝ 1 գրանցված եւ 4 չգրանցված, 7-րդ օրվա ադվենտիստների 2 չգրանցված, «Պոստոյան» մոլոկանների՝ 14 չգրանցված, «Պրիգուն» մոլոկանների՝ 10 չգրանցված, «Մաքսիմիստ» մոլոկանների՝ 2 չգրանցված եւ «Սուբբոտնիկ» մոլոկանների՝ 1 չգրանցված համայնք: Համաձայն ԽՍՀՄ կրոնական պաշտամունքների խորհրդի 1946թ.հունիսի 1-ի թ.309գ. գրության, մոլոկանների վերջին երեք աղանդները համարվում էին «խլիստական, հակախորհրդային եւ մոլեռանդ» եւ գրանցման ենթակա չէին: Ինչպես Հայ առաքելական եկեղեցու հավատացյալների համայնքները, այնպես էլ դրանց գրանցումը եւ ազատ գործունեությունը գտնվում էր պետական իշխանության մարմինների խիստ հսկողության ներքո: Եվ եթե հանկարծ ինչ-որ տեղ թույլ էր տրվում հսկողության մեղմացում, կրոնական պաշտամունքի խորհրդի Հայաստանի լիազորը այդ մասին տեղյակ էր պահում վերադաս մարմիններին: 1947թ. մայիսին ՀԿ/բ/Կ Կենտկոմ ներկայացրած զեկուցագրում լիազոր Ս.Հովհաննիսյանը նշում է. «Շրջանային ղեկավար աշխատողներից ոմանք մտածում են, թե խղճի ազատությունն այն է, որ ոչ ոք չպետք է միջամտի կրոնական համայնքի գործունեությանը, եւ նույնիսկ չգիտեն իրենց շրջանում կրոնական համայնքի գոյության մասին: Ստեփանավան քաղաքում 1942թ. մինչեւ այժմ գործում է

---

[1] Կարլեն Դալլաքյան, Հուշապատում, էջ 93-95:
[2] «Սովետական Հայաստան», 1955, 30 սեպտեմբերի, 4 հոկտեմբերի:

ԱԲԲ համայնք, որի մասին չգիտեին կոմկուսի շրջկոմում եւ շրջգործկոմում»[1]:

Հավատացյալների համայնքների գրանցումից խուսափելու համար իշխանության մարմիններն օգտագործում էին փաստաթղթերում տեղ գտած ամենափոքր սխալն անգամ: ՀԽՍՀ Կրասնոսելսկի շրջանի Կրասնի գյուղի 7-րդ օրվա ադվենտիստների համայնքի գրանցումը մերժվեց այն պատճառով, որ համայքի վարձակալած տանը պետք է ապրեր նաեւ տանտերը, իսկ Ստեփանավանի ԱԲԲ համայնքի գրանցման մասին դիմումը մերժվեց այն պատճառաբանությամբ, որ սենյակի վարձակալության մասին պայմանագիրը չէր վավերցված պատշաճ մարմինների կողմից[2]:

Փարիզի Հայոց ազգային ճակատի «Ժողովուրդ» թերթը 1947թ. ապրիլի 14-ին հրապարակելով «Կաթոլիկական եկեղեցի Երեւանում» վերնագրով հաղորդումը, նշվում էր, որ ապրիլի 12-ին Երեւանի կաթոլիկ եկեղեցում հանդիսավորությամբ նշվել է Զատկի տոնը: Մեկնաբանելով հաղորդումը թերթի խմբագրությունը նշում է, որ այդ փաստը կրկին անգամ մերկացնում է խորհրդային երկրում կրոնական ազատության բացակայության մասին հետադիմական շրջանների զրպարտչական ելույթները: Այդ հաղորդմանը պատասխանով հանդես եկավ Նյու Յորքի «Կռունկ» թերթը, հրապարակելով կաթոլիկ վարդապետ Ստեփան Ստեփանյանի /Կալիֆորնիա/ պաշտոնական հայտարարությունն այն մասին, որ Երեւանում չկա ոչ միայն կաթոլիկ եկեղեցի, այլեւ կաթոլիկ հոգեւորական: Այս հոդվածներն առիթ դարձան, որ պետական մարմինները վերհիշեն Հայաստանի հայ կաթոլիկներին եւ հետաքրքրվեն նրանց վիճակով: Պարզվեց, որ Հայաստանի 7 շրջանի 19 գյուղում բնակվում են 20 հազար հայ կաթոլիկներ, իսկ արտերկրում՝ շուրջ 200 հազար[3]: Ինչպես հայ առաքելական եկեղեցու, այնպես էլ կաթոլիկների կրոնական գործիչները բռնադատվել էին, իսկ եկեղեցիները վերածվել ակումբի կամ կոլտնտեսային պահեստի:

Ինչպես պետական իշխանության մարմինների, այնպես էլ Հայ առաքելական եկեղեցու համար հետպատերազմյան տարիներին սկզբունքային հարց էր դարձել կարդինալ Աղաջանյանի դեմ պայքարը, նրա գործունեությունը չեզոքացնելը: Կարդինալ Ղազարոս Աղաջանյանը ծնվել էր 1895թ. Ախալցխայում, 1917-21թթ. եղել էր կաթոլիկական առաջնորդական տեղապահ Վրաստանում: Հայտնվելով արտասահմանում, նա գլխավորում էր Մերձավոր Արեւելքի հայ կաթոլիկական եկեղեցին /նստավայրը՝ Բեյրութ/: Հռոմի Պիոս 12-րդ պապի կողմից 1946թ. կարդինալի աստիճանի բարձրանալուց հետո նրա իրավասության ներքո անցան նաեւ Արաբական Արեւելքի եւ Միջին Ասիայի բոլոր երկրների բոլոր կաթոլիկները: 1948թ. նա հանդես եկավ «հովվական ուղերձների» մի շարքով, որը ուղղված էր Խորհրդային Հայաստանում կրոնական ազատությունների ոտնահարման եւ էջմիածնի դեմ: Իր «ուղերձներից» մեկում նա փորձում էր ապացուցել, թե հայ եկեղեցին իր սկզբնավորման պահին կաթոլիկ է եղել, որ կաթոլիկական եկեղեցուն էր հարում նաեւ Գրիգոր Լուսավորիչը, եւ միայն հետագա դարերում հայ եկեղեցին հեռացավ կաթոլի-

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 54, թ. 168:
[2] Նույն տեղում, թթ. 290-291:
[3] Նույն տեղում, գ. 27, թ. 26:

կությունից եւ այդ պահից սկսվեց ինչպես հայ եկեղեցու, այնպես էլ հայ ժողովրդի դժբախտությունը: Իր «ուղերձում» Աղաջանյանը բոլոր հայերին կոչ էր անում վերադառնալ կաթոլիկության գիրկը, եւ «պատմական ժառանգորդության հիման վրա», իրեն հայտարարում էր «Կիլիկիայի պատրիարք եւ բոլոր հայ ուղղափառների կաթողիկոս»[1]:

Հասկանալի էր, որ իշխանությունը եւ Ս. Էջմիածինը չէին կարող լուրջ ուշադրություն չդարձնել Աղաջանյանի ելույթների վրա, հաշվի առնելով, թե ինչ կարեւոր դեր էր խաղում նա Հռոմի կաթոլիկ եկեղեցու կուրիայում: Աղաջանյանի պատմագիտական հայացքների դեմ վճռականորեն հանդես էր գալիս Կիլիկիո կաթողիկոս եւ ներհուն գիտնական Գարեգին Ա Հովսեփյանը: Գեւորգ Զ կաթողիկոսը Աղաջանյանին հակազդելու մասին 1948թ. Ստալինին հղած նամակում գրում է. «Վատիկանի ներկայացուցիչները, հատկապես ԱՄՆ-ում եւ Արաբական Արեւելքի երկրներում, հնարավորն են անում Հայ եկեղեցին վարկաբեկելու համար: Այդ գործում հատուկ գործունեություն է ցուցաբերում Կարդինալ Աղաջանյանը, որը ծնունդով Ախալցխայի հայ է եւ նախկին կաթոլիկական տեղապահը Վրաստանում /1917-21թթ./: Կարդինալ Աղաջանյանը, օգտագործելով ոչ միայն Վատիկանի կազմակերպական եւ նյութական միջոցները, այլեւ քաղաքականապես ուժեղ հետադիմական շրջանների օգնությունը, եռանդուն սադրիչ քարոզչություն է կատարում ընդդեմ խորհրդային իշխանության, հայերի հայրենադարձության եւ այլն: Ընդ որում Աղաջանյանի իրավասությունը տարածվում է ոչ միայն Սիրիայի եւ Լիբանանի կաթողիկե հայերի, այլեւ արաբական Արեւելքի ու Միջին Ասիայի բոլոր երկրների բոլոր կաթոլիկների վրա: Մեր ներկայացուցիչները, մասնավորապես Կիլիկիո Կաթողիկոսը, Հայ եկեղեցու նվիրապետն ու ներհուն գիտնականը, մեծ աշխատանք է կատարում Աղաջանյանի քաղաքական սադրանքները չեզոքացնելու համար: Սակայն, թվում է, որ Վատիկանի խարդավանքներին հակազդելու համար ցանկալի էր շփումը մյուս կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչների հետ: Եթե ցանկալի կհամարեք, կարելի կլինի կապ հաստատել առաջադիմական եւ խորհրդայնամետ եկեղեցական շրջանների հետ՝ Վատիկանի դեմ համատեղ պայքարի համար»[2].

Գ.Հարությունյանը 1947թ. ապրիլի 14-ին Ստալինին հղած գրությունում նշում է, որ կարդինալ Աղաջանյանը մեղադրում է խորհրդային կառավարությանը, որ նա չի կատարել իր խոստումը կրոնական ազատության մասին, եւ որ Հայաստանում նախապատվություն են տալիս հայ-լուսավորչական դավանանքին, արհամարհում եւ հետապնդում են հայ կաթոլիկ հոգեւորականներին, եւ որ հայրենադարձ հայ կաթոլիկներին ստիպում են հեռանալ կաթոլիկական դավանաքից եւ հարել հայ լուսավորչականությանը: Ապա, թվարկելով հայ կաթոլիկների թիվը սփյուռքում եւ Հայաստանում, խնդրում է թույլատրել ՀԽՍՀ-ում բացել 7-ից 10 կաթոլիկական եկեղեցի եւ Լենինական քաղաքում կազմակերպել կաթոլիկ առաքելությունների վարչություն որպես Հայաստանի հայ կաթոլիկական եկեղեցու ղեկավար կենտրոն[3]: Ստալինի արձագանքը հավանաբար եղել է բացասական, քանզի Հայաստանում այդ եւ հետագա մի քանի

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 31, գ. 173, թ. 144:
[2] Նույն տեղում, ց. 32, գ. 97, թթ. 19-20:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 27, գ. 27, թթ. 24-26:

տարիների ընթացքում ոչ մի կաթոլիկական եկեղեցի չի բացվում եւ Լենինականում վարչություն չի ստեղծվում:

Իսկ այդ ընթացքում հավատացյալ կաթոլիկները Հայաստանում ազատ գործելու համար դիմում էին ցանկացած քայլի, նույնիսկ դավանափոխության: Կալինինոյի շրջանի Սարչապետ գյուղի կրոնական համայնքի երկու ներկայացուցիչ 1948թ. օգոստոսի 31-ին հանդիպում են ՀԵԳԽ նախագահի եւ կրոնական պաշտամունքների խորհրդի Հայաստանի լիազորի հետ եւ հանձնում դիմում իրենց համայնքը գրանցելու եւ հայկական եկեղեցի բացելու մասին: Իմանալով, որ այդ գյուղում բնակվում են կաթոլիկներ, իշխանության ներկայացուցիչները հայտնում են, որ նրանք իրենց դիմումի մեջ պետք է նշեն, թե ինչ դավանանքի են հարում: Ի պատասխան՝ համայնքի ներկայացուցիչները հայտնեցին, որ իրենք լիազորված են հայտարարել, որ իրենց հոգեւոր առաջնորդ կարող են ճանաչել Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ ոչ թե Հռոմի պապին[1]:

1950թ. ԽՍՀՄ կրոնական պաշտամունքի խորհրդի Հայաստանի լիազորի պաշտոնը վերացվում է եւ հանրապետության բոլոր կրոնական համայնքների գործունեության կանոնակարգման իրավասությունը անցնում է ՀԵԳԽ-ին: Վերջինս իրականում բաղկացած էր երկու հոգուց՝ նախագահից եւ հրահանգչից, իսկ խորհրդի մյուս անդամները՝ Կ.Ղաֆադարյանը եւ Հր. Աճառյանը անգործության էին մատնված, որոհետեւ անկուսակցական էին, եւ ինչպես նշում է խորհրդի նախագահ Հ.Գրիգորյանը, «հարցերի զգալի մասը, որ ենթակա էր խորհրդի քննարկմանը, գաղտնի բնույթ է կրում եւ չի կարող քննարկվել նման կազմով խորհրդի կողմից»[2]:

Առանց աշխատակազմի, Հ.Գրիգորյանը անկարող էր զբաղվել բոլոր կրոնական համայքների գործերով: Խորհրդի 1951թ. հաշվետվության մեջ այդպես էլ նշված է[3]: Իսկ ուսումնասիրելով 1953թ. հաշվետվությունը, պարզվում է, որ 1947թ. սկսած ոչինչ չէր փոխվել: Հայաստանում գործում էին գրանցված 1 ԱՔԲ, 2 մահմեդական, 1 մոլոկանների համայնք եւ գոյություն ունեին «ընդհատակյա չգրանցված հայ կաթոլիկների, հայ բապտիստների, մոլոկան պրիգունների եւ մոլոկան պոստոյանների խմբեր»[4]:

1953թ. հուլիսի 1-ի տվյալներով Հայաստանում կար 23 գործող եկեղեցի եւ աղոթատուն, որոնցից հայ եկեղեցի՝ 18, մահմեդական հավատքի՝ 2, ԱՔԲ՝ 1, մոլոկանների՝ 1, ուղղափառ եկեղեցի՝ 1: Կային 298 չգործող եկեղեցական շինություն եւ աղոթատուն, որոնցից հայ առաքելական եկեղեցի՝ 246, կաթոլիկական եկեղեցի՝ 7, մուսուլմանական՝ 19, հնադավան 24, մոլոկանների 2: Նույն ժամանակ հանրապետությունում կային գրանցված եկեղեցական ծառայողներ՝ հայ եկեղեցու՝ 34, նրանցից քահանա՝ 28, «սեւ հոգեւորական» 6, մուսուլմանական հավատքի՝ 2, ԱՔԲ՝ 2, մոլոկան՝ 1, ռուս ուղղափառ եկեղեցու՝ 1:[5]

Եկեղեցին եւ հավատացյալները գտնվում էին իրավազուրկ վիճակում: Չնայած կրոնական ազատությունների խիստ սահմանափակությանը, խորհրդային իշխանությունը եւ կոմկուսը երբեք չէին դադարեց-

---

[1] Նույն տեղում, ց. 28, գ. 75, թթ. 128-129:
[2] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 823, ց. 3, գ. 38, թ. 25:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 32, գ. 84, թ. 145:
[4] Նույն տեղում, ց. 33, գ. 66, թթ. 84-85:
[5] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 66, թ. 85:

նում բնակչության աթեիստական դաստիարակության ուղղությամբ կատարվող աշխատանքները: Ինչպես նշված է ագիտատորների եւ պրոպագանդիստների համար նախատեսված ՀամԿ/բ/Կ Կենտկոմի. «Մարքսիզմ-լենինիզմը կրոնի եւ այն հաղթահարելու միջոցների մասին» դասախոսության մեջ (1950թ.), «հայրենական մեծ պատերազմի տարիներին տեղի ունեցան կրոնական մնացուկների որոշ աշխուժացում, եկեղեցական կազմակերպությունների ցանցի ընդլայնում եւ եկեղեցիների գործունեության ուժեղացում: Կրոնական մնացուկների, սնահավատությունների ու նախապաշարմունքների աշխուժացման պատճառներից մեկն այն է, որ տեղական կուսակցական ու խորհրդային որոշ կազմակերպություններ դադարել էին գիտա-աթեիստական պրոպագանդա մղել, կրոնի վերաբերմամբ բռնել էին բոլշեւիզմին խորթ չեզոքության դիրք»: Խորհրդային պետությունը եւ կուսակցության ղեկավարությունը, անձամբ Ստալինը, կարծես թե ոչինչ չէին արել եկեղեցու գործունեությունն աշխուժացնելու եւ այն երկրի պաշտպանության շահերի համար օգտագործելու համար: Պատերազմը ավարտվել էր հաղթանակով, եւ պետության ղեկավարությանը եկեղեցին այլեւս պետք չէր: Ուստի անհարժեշտ էր «մեր կադրերին, կոմունիստներին ու անկուսակցականներին պարզաբանել բոլշեւիկյան կուսակցության իսկական վերաբերմունքը կրոնի նկատմամբ, բացահայտել կոմունիզմի ու կրոնի ամբողջ անհաշտելիությունը, ցույց տալ մեր Հայրենիքի աշխատավորների գիտակցության մեջ կրոնական մնացուկները հաղթահարելու միջոցներն ու մեթոդները»[1]:

Չնայած հսկայածավալ հակակրոնական աշխատանքներին, շարունակում է փաստաթուղթը, «մեր հանրապետությունների մի քանի շրջաններում նկատվում է կրոնական շարժման որոշ աճ, մասնավորապես այն շրջաններում, որտեղ տեղափոխված են արտասահմանից մեզ մոտ ներգաղթած քաղաքացիներ: Այս աճը գլխավորապես նկատվում է «սբրբավայրեր» հաճախելու, կնունքի, զոհաբերությունների, կրոնական ծիսակատարությունների ուղղությամբ»: Ապա բերվում են օրինակներ, ՀԽՍՀ-ից, որովհետեւ այլ հանրապետություններում ներգաղթած քաղաքացիներ չկային: «Կրոնական տոների օրերին,- նշված է փաստաթղթում,- հատկապես էջմիածնի վանքում եւ հանրապետության ուրիշ շրջաններում, որտեղ կան «սրբավայրեր»՝ Ստեփանավանի շրջանի Ուռուտ գյուղում, Այրում գյուղում (ոչ հեռու Ալավերդուց), Սպիտակի շրջանի Նալբանդ գյուղում, Արթիկի շրջանում, Աշտարակի շրջանի Մուղնի գյուղում տեղի են ունենում համահավաքներ: Այդ օրերին էջմիածնի վանքում տեղի են ունենում երեխաների մկրտության ծիսակատարության հարյուրավոր դեպքեր: Երեխաների մի զգալի մասը այնտեղ է բերվում Երեւանից եւ այլ շրջաններից: Արթիկի շրջանի Ղփչաղ գյուղի «Հառիճ» հնագույն վանքի բակում, որը գտնվում է պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի տրամադրության ներքո, բակում տեղավորված է նաեւ գյուղի լրիվ միջնակարգ դպրոցը, որը բացասաբար է անդրադառնում աշակերտության կոմունիստական դաստիարակության վրա: Չնայած նրան, որ այդ վանքը հաշվի չի առնվել որպես գործող օբեկտ, պետք է նշել, որ վանքը որոշ օրերի զարդարված է վառվող մոմերով, հավատացյալները աղոթում եւ այլ ծիսակատարություններ են կատարում»[2]:

---

[1] Նույն տեղում, ց. 30, գ. 264, թթ. 73-74:
[2] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 30, գ. 264, թ. 95:

Այս «անհանդուրժելի երեւույթները» փաստաթղթում բացատրվում են նրանով, որ «խորհրդային համապատասխան մարմինները հանրապետության շրջաններում թուլացրել են իրենց աշխատանքը կրոնական համայնքների նկատմամբ խորհրդային գործող օրենքների պահպանման եւ նրա հսկողության ուղղությամբ: Սրա հետեւանքով տեղերում կան փաստեր, երբ կրոնական համայնքի եւ պաշտամունքի ծառայողների կողմից չարձանագրված վայրերը նրանք օգտագործում են բնակչության հետամնաց մասի կրոնական մոլեռանդությանն իրենց շահադիտական նապատակներին ծառայեցնելու համար: Այդ բոլոր եւ համանման այլ փաստեր վկայում են, որ մեր որոշ ընկերներ մոռացել են մաքրսիզմի այբուբենը, անտեսում են Լենինի եւ Ստալինի ցուցումները, մեր կուսակցության ցուցումները կրոնական նախապաշարմունքների դեմ պայքարի անհրաժեշտության մասին»:

Ամփոփելով կարելի է նշել, որ հետպատերազմյան շրջանում պետության եւ եկեղեցու փոխհարաբերությունները մնում էին բարդ: Մի կողմից կրոնական կազմակերպություններ որոշ չափով ամրապնդեցին իրենց ազդեցությունը: Ինչպես վկայում են վերոշարադրված փաստաթղթերը, Հայ առաքելական եկեղեցին հնարավորություն ստացավ գործունեություն ծավալել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Վերջին հանգամանքը ոչ միայն խրախուսվում էր, այլեւ օժանդակվում պետության կողմից: Դրա հետ միաժամանակ կուսակցության բարձրագույն ղեկավարության շրջանում նախկինի պես գերիշխում էին ուժեր, որոնք երկրում ծավալում էին հակակրոնական քարոզ՝ փորձելով նրան տալ «հարձակողական եւ վճռական» բնույթ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՍՏԱԼԻՆԻԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԽՐՈՒՇՉՈՎՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

1. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՍՀՄ-ՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1953թ. մարտի 6-ին ՏԱՍՍ-ը հաղորդեց, որ նախորդ օրը երեկոյան դադարել է բաբախել «Լենինի գործի հանճարեղ շարունակողի, կոմունիստական կուսակցության եւ ողջ խորհրդային ժողովրդի առաջնորդի սիրտը»: Ստալինի մահը համընկավ այն ժամանակի հետ, երբ 30-ական թվերին ԽՍՀՄ-ում կազմավորված քաղաքական ու տնտեսական համակարգը, սպառելով իր զարգացման հնարավորությունները, երկրում եւ հասարակության մեջ ծնեց տնտեսական լուրջ դժվարություններ, սոցիալ-քաղաքական լարվածություն: Դժվարությունն այն էր, որ հացահատիկի տարեկան միջին բերքը 1949-53թթ. կազմում էր 81 միլիոն տոննա: Բնակչության թվի հաշվով այն բավականաչափ քիչ էր 1913թ.: Ո՞ւր կարող էր շարժվել բազմազգ երկիրը Ստալինի մահից հետո: Հնարավոր էր՝ կամ ստալինիզմի շարունակման ուղիով, կամ նրա որոշակի մեղմացման օգնությամբ հասարակական-քաղաքական կուրսը պահպանելով կամ կատարելով շրջադարձ դեպի ստալինիզմի արմատական վերացումը: Ստալինիզմի հրաժարումը չէր նշանակում վարչա-հրամայական համակարգի անմիջական անհետացում: Դրա համար անհրաժեշտ էր ժամանակ: Խոսք կարող էր գնալ միայն ստալինիզմի արմատական մեղմացման մասին. անհիմն բռնադատվածների ազատում, շրջադարձ դեպի ամենասուր ագրարային խնդիրների լուծումը եւ անցումը մի շարք դեմոկրատական վերափոխումների:

1953թ. մարտի 7-ին «Պրավդան» հրապարակեց ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ նախարարների խորհրդի եւ Գերագույն խորհրդի նախագահության համատեղ նիստի որոշումը: Փաստորեն հաստատվել էր ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության նոր կազմ: Նրա անդամների թիվը կրճատվեց ավելի քան երկու անգամ՝ 25-ից մինչեւ 10-ի: Նախագահության անդամության թեկնածուների թիվը 11-ից իջեցվեց 4-ի: Վերացվեց ԽՄԿԿ կանոնադրությամբ չնախատեսված Կենտկոմի նախագահության բյուրոն, որը ստեղծվել էր Ստալինի առաջարկությամբ, ինչպես նաեւ Նախարարների խորհրդի նախագահության բյուրոն: Նախագահության կազմում մնացին կառավարության նախագահը եւ նրա առաջին տեղակալները: ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության կազմում ընդգրկվեցին, համաձայն «Պրավդայի» հրատարակած հերթականության, Գ.Մալենկովը, Լ.Բերիան, Վ.Մոլոտովը, Կ.Վորոշիլովը, Ն.Խրուշչովը, Ն.Բուլգանինը, Լ.Կագանովիչը, Ա.Միկոյանը, Մ.Սաբուրովը, Մ.Պերվուխինը: Փաստորեն, վերականգնվեց այն նախագահությունը, որը եղել էր մինչեւ կուսակցության 19-րդ համագումարը (1952թ.): Այսպիսով, տեղի ունեցավ Կենտկոմի նախագահության ստալինյան բարեփոխման արմատական վերացում: Նոր իրավիճակում՝ Ստալինի մահից հետո, կենտրոնախույս ուժերի անխուսափելի հանդես գալու պայմաններում ունենալ 36 մարդուց բաղկացած կուսակ-

ցության ղեկավարության բարձրագույն օպերատիվ մարմին, իրոք անանպատակահարմար էր: Տվյալ դեպքում ցուցադրական է ոչ թե փաստը, այլ կրճատման սկզբունքը: Կենտկոմի նախագահության կազմը սահմանափակեց 10-ով նրա համար, որովհետեւ հենց այդքան մարդ էր մնացել իշխանության գլուխ «Ստալինի զինակիցներից», ներառյալ Բուլգանինը, Պերվուխինը եւ Սաբուրովը, որոնք արդեն բավական տարիներ բարձրագույն իշխանության մարմիններում էին: Կենտկոմի նախագահության ստալինյան համալրմանը չտրվեց ոչ մի տեղ: Հօգուտ «հին գվարդիայի» այդպիսի շրջադարձի հիմնական դրդապատճառը անառարկելիորեն Ստալինի անձի պաշտամունքի հարցի անխուսափելի բարձրացումն էր: Կենտկոմի նախագահության ընդլայնված կազմի պայմաններում այդ հարցի լուծումը Ստալինի մտերիմ զինակիցների ցանկալի հունով կարող էր շատ դժվար լինել: Հետհամագումարյան (19-րդ) Կենտկոմի նախագահության անդամների կեսը ստալինյան շրջապատի մաս չէր կազմում, մասնակից չէր իշխանության չարաշահմանը: Նրանց համար Ստալինի պաշտամունքի բացահայտումը, նրա բոլոր անօրինականություններով, չուներ այն վտանգը, որը կախված էր «զինակիցների» գլխին: Կրճատված կազմով Կենտկոմի նախագահությունը հնարավորություն ստացավ «անհատի պաշտամունքին» վերաբերվել իր անդամների շահերից ելնելով:

Այսպիսով, կարծում ենք, որ Կենտկոմի նախագահության հապշտապ վերանայումը դարձավ այն պատի առաջին քարը, որը դրվեց անձնական իշխանության ստալինյան ռեժիմի եւ դրա հետ կապված հանցագործությունների լրիվ մերկացման ճանապարհին: Կուսակցության եւ պետության մեջ բոլոր ղեկավար պաշտոնները մնացին ստալինյան մտերիմ զինակիցների ձեռքում: Գ.Մալենկովը դարձավ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ՝ միաժամանակ նախագահելով Կենտկոմի նախագահության նիստերում: Կենտկոմի քարտուղարությունը եւ աշխատակազմը գլխավորեց Ն.Խրուշչովը: Վ.Մոլոտովն իրեն վերադարձրեց արտգործնախարարի պորտֆելը: Իր դիրքերն ավելի ամրապնդեց Լ.Բերիան, որը չմնաց աննկատ դառնալով միավորված ՆԳՆ ղեկավար: Ն.Բուլգանինը նշանակվեց պաշտպանության նախարար, իսկ տեղակալներ՝ Ա.Վասիլեւսկին եւ Մոսկվա վերադարձած Գ.Ժուկովը: Գերագույն խորհրդի նախագահության նախագահ դարձավ Կ.Վորոշիլովը՝ Ն.Շվերնիկի փոխարեն, որը հաստատվեց ՀԱՄԿԽ-ի նախագահ:

Փոփոխություններ տեղի ունեցան նաեւ հանրապետությունների իշխանական օղակներում: 1953թ. փոխվեց Անդրկովկասի հանրապետությունների ղեկավարությունը: Մինչ այդ, կենտրոնի օրինակով, փոփոխություններ տեղի ունեցան հանրապետությունների պետական իշխանության մարմինների կառուցվածքում: ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ մարտի 21-ին միավորվում են պետանվտանգության եւ ներքին գործերի նախարարությունները, մարտի 27-ին տասնյակ այլ նախարարություններ եւ գերատեսչություններ խոշորացվում են: Ապրիլի 22-ին տեղի է ունենում Կենտկոմի մի շարք բաժինների միավորում: Հանրապետության քաղաքների ու շրջանների ղեկավարումը բարելավելու համար ապրիլի 7-ին որոշվում է լուծարել ընդամենը մեկ տարի առաջ ստեղծված օկրուգները, իսկ մայիսի 4-ին որոշվում է միավորել հանրապետության նման տնտեսական ու կլիմայական պայմաններ ունեցող շրջանները[1]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 20:

1953թ. մարտի 27-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունում է համաներման մասին հրամանագիր: Բանտերից ազատվում են հազարավոր մարդիկ, որոնց անհրաժեշտ էր ապահովել աշխատանքով: ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը ապրիլի 7-ին ընդունում է «Համաներումով ազատված անձանց աշխատանքի տեղավորման մասին» որոշումը, տեղական իշխանության մարմիններին հանձնարարելով կատարել բնակության վայրեր վերադարձողների հաշվառում եւ նրանց առաջին հերթին աշխատանքի տեղավորում կոլտնտեսություններում ու կարեւորագույն կառույցներում[1]: ՀԿԿ Կենտկոմի բյուրոն հունիսի 6-ին լսում է նախարարների խորհրդի նախագահ Ա.Քոչինյանի հաղորդումը համաներման հետեւանքով ազատված քաղաքացիներին աշխատանքով ապահովելու մասին: Նշվում է, որ հունիսի 5-ի տվյալներով կալանավայրերից ազատված 5604 մարդկանցից աշխատանքով ապահովված են 4226-ը կամ 75,4 տոկոսը: Բյուրոն որոշում է ընդունում 10 օրում լուծել բոլորին աշխատանքով ապահովելու հարցը, միաժամանակ պահանջում ստուգել տեղերի տվյալների ճշտությունը[2]:

Ստալինի մահից հետո սկսեցին ստացվել մեծաքանակ դիմումբողոքներ Ալթայի երկրամաս արտաքսվածներից, իրենց անհիմն աքսորելու մասին: Հանրապետության ՆԳՆ ստուգումներից պարզվեց, որ «արտաքսվածների թվում ընկել են մարդիկ, որոնք դաշնակների հետ ոչ մի կապ չունեին: Այդ մարդիկ արտաքսվել էին չստուգված նյութերով, իսկ ստուգման ժամանակ դրանք չհաստատվեցին»[3]:

Ներքգործնախարար Գ.Մարտիրոսովի կողմից Գ.Հարությունյանին այդ մասին զեկուցելուց հետո հունիսի 6-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն ընդունում է խիստ գաղտնի որոշում, որը ստորեւ բերվում է ամբողջությամբ. «ԽՍՀՄ Պետական անվտանգության նախարարության 1949թ. մայիսի 28-ի հրահանգի համաձայն Հայկական ԽՍՀ-ի տարածքից Ալթայի երկրամաս արտաքսված անձանց դիմումների մասին.

1. ԽՍՀՄ ՊԱՆ 1949թ. մայիսի 28-ի հրահանգի իրականացման ժամանակ թույլ տված սխալների առկայության պատճառով անհրաժեշտ համարել կատարել այն անձանց գործերի ստուգում, որոնք 1949թ. Հայկական ԽՍՀ-ի տարածքից արտաքսվել են Ալթայի երկրամաս:

2. Հանձնարարել Հայկական ԽՍՀ ներքգործնախարար ընկ. Մարտիրոսովին հարց բարձրացնել ԽՍՀՄ ՆԳՆ առջեւ վերադարձնել Հայկական ԽՍՀ-ից արտաքսված անձանց գործերը՝ տեղում ստուգելու համար:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Գր.Հարութինով
1-ին օր. ԽՄԿԿ Կենտկոմ»[4]:

ՀԿԿ Կենտկոմի հուլիսյան պլենումում Գ.Մարտիրոսովը նշում էր, որ որոշման նպատակը «թույլ տված սխալների ուղղումն էր եւ աքսորից նրանց վերադարձնելը, որոնց վերաբերյալ նյութերը անբավարար եւ անհամոզիչ էին», ապա ավելացնում է. «Չնայած երկարատեւ ժամանակին, որ անցել է հարցը ՀԿԿ Կենտկոմի բյուրոյում քննարկելուց հետո, ԽՍՀՄ

---

[1] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, գ. 24, գ. 1495, թ. 1:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, գ. 33, գ. 33, թթ. 1-2:
[3] Նույն տեղում, գ. 7, թ. 35:
[4] Нами Микоян, С любовью и печалью, М., 1998, с. 75.

ՆԳՆ թշնամական ղեկավարությունը, հանձինս Բերիայի եւ Քոբուլովի, նույնիսկ հարկ չամարեցին պատասխանել մեր բարձրացրած հարցին»[1]:

Ստալինի մահից հետո ընդունված մի շարք որոշումներ ունեին իշխանության հիմնական ծանրությունը Կենտկոմի նախագահությունից նախարարների խորհուրդ տեղադրելու միտում: ՀԿԿ Կենտկոմի բյուրոն հունիսի 17-ին քննարկում է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի հարցը եւ որոշում այդ պաշտոնում առաջադրել Գրիգոր Հարությունյանի թեկնածությունը, ազատելով նրան առաջին քարտուղարի պարտականություններից: Առաջին քարտուղարի պաշտոնում առաջադրվում է Անտոն Քոչինյանի թեկնածությունը, որը հանդիսանում էր նախարարների խորհրդի նախագահը: Որոշվեց ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի նիստերի նախագահումը հանձնարարել Գ.Հարությունյանին: Հավանաբար այս որոշումն ընդունելիս նկատի է առնվել այն հանգամանքը, որ ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության նիստերը ղեկավարում էր նախարարների խորհրդի նախագահ Գ.Մալենկովը: Այս բոլորի մասին խնդրվում էր ԽՄԿԿ Կենտկոմի հաստատումը[2]: Սակայն, երկրի մայրաքաղաքում այլ իրադարձություններ էին նախապատրաստվում: Հունիսի 26-ին Բերիան ձերբակալվում է: Մի քանի օր այդ փաստը գաղտնի է պահվում նույնիսկ ԽՄԿԿ Կենտկոմի անդամներից, որոնք այդ մասին իմացան միայն հուլիսի 2-ին, իսկ երկիրը հուլիսի 10-ին[3]:

Հուլիսի 2-ին Մոսկվայում իր աշխատանքներն սկսեց ԽՄԿԿ Կենտկոմի պլենումը, որտեղ քննարկվեց «Բերիայի հանցագործ կուսակցական եւ հակապետական գործունեության մասին» հարցը: Գ.Մալենկովի հաղորդումից, կենտկոմի նախագահության անդամների ելույթներից հետո, այլոց թվում, հուլիսի 4-ին ելույթ է ունենում նաեւ ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը: Նա նախ Բերիայի ձերբակալման մասին նախագահության որոշումը համարում է ճիշտ, նրան անվանելով «կարիերիստ եւ ավանտյուրիստ, որը հանուն իշխանության զավթման դիմել էր ցանկացած միջոցի»: Այնուհետեւ, շարունակում է, որ ինքը վախ է ապրել, երբ Ստալինի թաղման ժամանակ Մալենկովից հետո երկրորդը Կարմիր հրապարակում ելույթ է ունեցել Բերիան. «Այդ ժամանակ ես մտածեցի, որ եթե նա հայտնվի ղեկավար եռյակում, ապա անպայման կձգտի լրիվ իշխանության»: Ապա տեղեկացնում է, որ Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների պատմության մասին գրքի հեղինակը նա չէ, որովհետեւ Բերիան ընդհանրապես ոչ մի գիրք չի կարդացել, ինչպես եւ չէր կարող ուսումասիրել կուսակցական արխիվները: Այնուհետեւ Գ.Հարությունյանը, որ գրքի հրատարակման ժամանակ եղել էր Թիֆլիսի քաղկոմի քարտուղարը եւ շատ բան գիտեր, հայտնում է, որ այդ գիքը գրել են Բեդիան եւ Սակվարելիձեն, ինչը աշխուժություն է առաջացնում դահլիճում: Ապա կարծես հիշելով բռնադատված եղբորը եւ աներձագին, ավելացնում է. «Հայտնի է, թե որքան լավ կուսակցական աշխատողներ են կոտորվել նրա կողմից Վրաստանում 1937թ. միայն այն պատճառով, որ նրանցից շատերը նրան չէին ընդունում»[4]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 7, թթ. 35-36:
[2] Նույն տեղում, գ. 21, թթ. 6-7:
[3] "Правда", 1953, 10 июля.
[4] "Известия ЦК КПСС", 1991, N 2, с. 180-182.

Հետաքրքիր է, որ, ի տարբերություն Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Բաղիրովի, որի ելույթը ընդհատվեց տասնյակ անգամ, Հարությունյանի ելույթը ընդհատվեց ընդամենը մեկ անգամ: Վեց օր, հուլիսի 2-7-ը, ընթացավ Կենտկոմի պլենումը: Խոսակցությունը պլենումում դուրս եկավ «Բերիայի գործի» շրջանակներից: Ծավալվեց կուսակցության ղեկավարության թերությունների վերաբերյալ սուր եւ սկզբունքային քննադատություն, որը կուտակվել էր նախորդ տարիներին: Պլենումի աշխատանքներում կարեւոր տեղ գրավեցին Ստալինի անձի պաշտամունքի, նրա հետեւանքների վերացման, կուսակցության եւ պետական կյանքի դեմոկրատացման մասին հարցերը: Այդ սկզբունքային հարցերը պաշտպանեցին մի շարք կենտկոմականներ: Սակայն ստալինյան հին շրջապատի մի քանի ներկայացուցիչներ օրթոդոքսալ դիրք գրավեցին: Կագանովիչը իր ելույթում հայտարարեց. «Ճիշտ է, որ եղել են ծայրահեղություններ անհատի պաշտամունքի առումով: Բայց դա չի նշանակում, որ մենք պետք է կատարենք կտրուկ շրջադարձ դեպի մյուս կողմը, այնպիսի առաջնորդի, ինչպիսին Ստալինն է, մոռացության կողմը: Այսօր, մենք պետք է վերականգնենք Ստալինի օրինական իրավունքները եւ անվանակոչենք Մեծ կոմունիստական ուսմունքը Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի ուսմունք»[1]: Կագանովիչին պաշպանեց Ա.Անդրեեւը. «Ինչ որ տեղից հայտնվեց անհատի պաշտամունքի մասին հարցը: Ինչու՞ ծառացավ այդ հարցը: Չէ որ այն լուծվել է վաղուց: Միլիոնավոր մարդիկ գիտեն, թե ինչ նշանակություն ունի հանճարեղ անհատը, կանգնած շարժման գլխին, ինչպիսի նշանակություն են ունեցել եւ ունեն Լենինը եւ Ստալինը»[2]:

ԽՄԿԿ Կենտկոմի պլենումի որոշման մեջ նշվում է, որ Ստալինի անձի պաշտամունքի պատճառով Լենինի մշակած կուսակցական կյանքի նորմաների, կուսակցության ղեկավարման բոլշեւիկյան սկզբունքների պահպանման գործում տեղ են գտել լուրջ թերություններ: Պլենումը Լ.Բերիային հանեց Կենտկոմի կազմից եւ հեռացրեց կուսակցությունից: Նա ենթարկվեց քրեական պատասխանատվության եւ ԽՍՀՄ Գերագույն դատարանի վճռով գնդակահարվեց որպես «ժողովրդի թշնամի»: Պլենումի որոշումները չհրապարակվեցին: Հուլիսի 10-ին «Պրավդայի» էջերում հայտնվեց մի քանի տող պարունակող ինֆորմացիոն հաղորդագրություն Լ.Բերիային կուսակցությունից որպես «ժողովրդի թշնամի» հեռացնելու մասին: Կուսակցական կազմակերպություններ ուղարկվեց ԽՄԿԿ Կենտկոմի փակ նամակը, որտեղ խոսք էր գնում ոչ միայն «Բերիայի գործի», այլեւ կուսակցական եւ խորհրդային դեմոկրատիայի խախտման լուրջ փաստերի մասին: Նամակում, սակայն, խոսք չկար 30-ական թվերի զանգվածային բռնությունների, դրանում Ստալինի եւ նրա շրջապատի մեղսակցության մասին:Հուլիսյան պլենումը շրջադարձային նշանակություն ունեցավ երկրի կյանքում: Դրվեց խորհրդային հասարակության կյանքում լուրջ փոփոխությունների սկիզբը: Դրա արդյունքները /«Կենտկոմի փակ նամակը»/ քննարկվեցին բոլոր կուսակցական կազմակերպություններում: Հայաստանում սկսվեց ակտիվ քաղաքական գործընթաց, որը տարեվերջին հանգեցրեց հանրապետության ղեկավարության փոփոխությանը:

---

[1] "Известия ЦК КПСС", 1991, N 1, с. 197.

[2] Նույն տեղում, N 2, с. 185:

Հուլիսի 14-ին Երեւանում գումարվեց ՀԿԿ Կենտկոմի եւ Երեւանի քաղկոմի միացյալ պլենում, որտեղ ԽՄԿԿ Կենտկոմի որոշման մասին հաղորդումով հանդես եկավ Գ.Հարությունյանը: Կենտկոմի անդամներին հաղորդելով «միջազգային իմպերիալիզմի գործակալ» Բերիայի վերաբերյալ ընդունված որոշման մասին Գ.Հարությունյանը վճռականորեն հանդես է գալիս Հայաստանի Կոմկուսի աշխատանքներին քիչ ծանոթ «մի քանի ընկերների» դեմ, որոնք մտածում են, որ Բերիան ինչ-որ չափով շեֆություն է արել Հայաստանի նկատմամբ, եղել է միջնորդ այն հարցերի լուծման համար, որը դրվել է կառավարության եւ Կենտկոմի առջեւ. «Շատ ընկերներ տեղյակ են, բայց ես մի անգամ եւս հայտարարում եմ այստեղ, որ Բերիան ոչ մի կապ չի ունեցել այն հարցերի լուծման հետ, որոնք Հայաստանը դնում էր ԽՄԿԿ Կենտկոմի առջեւ, լինեին դրանք կուսակցական կամ տնտեսական հարցեր: Իր բոլոր հարցերը Հայաստանը դրել է կուսակցության Կենտկոմ՝ անմիջապես ընկեր Ստալինի առջեւ»[1]:

Կենտկոմի պլենումում ելույթ է ունենում նաեւ ավտոմոբիլային տրանսպորտի նախարար Շ.Առուշանյանը եւ հայտարարում, որ «Արուտինով-Հարությունով-Հարությունյանը մեզ մոտ հանդիսանում է Բերիայի դրածոն..., որ 17 տարի Արուտինովը աշխատելով Հայաստանում, ամբողջ այդ ժամանակ նա իրականացրել է Բերիայի քաղաքականությունը»[2]:

Չնայած նրան, որ Առուշանյանից հետո բոլոր ելույթ ունեցողները /18 մարդ/ հանդես եկան այդ հայտարարության դեմ, Գրիգոր Հարությունյանը պլենումի վերջում ստիպված է լինում ելույթ ունենալ, համոզել, որ ինքը Բերիայի դրածոն չի եղել, Հայաստանում աշխատելու տարիներին նրա, ինչպես նաեւ Դեկանոզովի եւ Քոբուլովի հետ կապ չի ունեցել, որ Բերիան հայերին եւ Հայաստանը չի սիրել, ոչնչացրել է հարազատ եղբորը՝ այդ ժամանակ Թիֆլիսի Ստալինյան շրջկոմի քարտուղարին, որ ինքը տրոցկիստ չի եղել եւ այլն: Գ.Հարությունյանը հայտարարում է, որ ինքը բյուրոյում դրել է իրեն քարտուղարի պաշտոնից ազատելու հարցը, որ կա ԽՄԿԿ Կենտկոմի առջեւ միջնորդելու որոշումը /նկատի ունի Քոչինյանի հետ պաշտոնները փոխելու որոշումը -Ա. Վ/: Նա նաեւ կարծիք է հայտնում, որ 16 տարի ՀԿԿ Կետկոմի քարտուղարի պաշտոնում աշխատելը սխալ է, նույնիսկ կխնդրի, որ թույլատրեն մեկնել Հայաստանից, բայց ոչ թե նրա համար, որ ինքը նեղացած է, այլ միգուցե իր հեռանալը խթանի Հայաստանում կուսակցական կադրերի աճին:

Հուլիսի 15-ից կուսկազմակերպություններում սկսվում են կուսակցական փակ ժողովներ, որտեղ քննարկվում է ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը՝ «փակ նամակը» Բերիայի մասին: ՀԿԿ Կենտկոմում այդ ժողովների մասին ստացած առաջին հաղորդումները պարզում են, որ քննարկումները դուրս են եկել օրակարգի սահմաններից: Մասնավորապես գրողների միությունում, պետական համալսարանում, մշակույթի նախարարությունում ոչ միայն քննադատում եւ հայհոյում էին Բերիային, այլեւ Հարությունյանի անունը կապում են նրա հետ, նշում, որ Բերիայի ազդեցությունը դրսեւորել է նրա աշխատաոճում, պահանջում էին հրապարակել Ռաֆֆու, Չարենցի, Արծրունու եւ ուրիշների երկերը: Քանի որ «միասնական հոսանքի» քննադատությունը վնաս է հասցրել հայ մշակույթին, ուստի անհրաժեշտ է վերանայել վերաբերմունքը 19-րդ դարի հայ «լիբերալ-

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 7, թ. 9:
[2] Նույն տեղում, թ. 47:

բուրժուական գործիչների» նկատմամբ: Ժողովներում նաեւ հնչում էին «հակառուսական եւ հակավրացական« արտահայտություններ: Հայաստանի գրողների միության դռնփակ ժողովում Հրաչյա Քոչարը, Սիրասը, Սիլվա Կապուտիկյանը, Նաիրի Զարյանը հանրապետության ղեկավարությանը, մասնավորապես Գ.Հարությունյանին մեղադրեցին սխալ տնտեսական ու մշակութային քաղաքականություն վարելու մեջ: Հ.Քոչարը հայտարարեց. «Այս բոլորը հետեւանք է այն բանի, որ Հայաստանում Կենտկոմի քարտուղար ընկ. Հարությունյանը վարում է Բերիայի գիծը: Այդ գիծը ավելի շատ արտահայտվել է գրականության, արվեստի, կուլտուրայի հարցերում: Կենտկոմը չի զբաղվել այդ հարցերով, հաճախ ճնշել եւ արգելակել է նրա զարգացումը»[1]: Ժողովներում Գ.Հարությունյանը քննադատվեց նաեւ հայերեն չխոսելու, կադրերին անձնական նվիրվածության սկզբունքով ընտրելու եւ այլ հարցերում[2]:

Գ.Հարությունյանի հասցեին քննադատական սուր խոսքեր հնչեցին նաեւ պետական համալսարանում, ՀԿԿ Սպանդարյանի շրջկոմի պլենումում եւ այլուր: Հուլիսի 17-ին շտապ հրավիրվում է Կենտկոմի բյուրոյի նիստ եւ ընդունվում «ազգայնական» պիտակավորված արտահայտությունները դատապարտող որոշում: Այն միաժամանակ որպես տեղեկատվություն ուղարկվում է ԽՄԿԿ Կենտկոմ՝ Խրուշչովին[3]: Հապշտապ ընդունված այդ որոշումը ճակատագրական դարձավ Գ.Հարությունյանի համար: Նա չհասկացավ, որ ժամանակները փոխվել են, որ Հ.Քոչարին, Ն.Զարյանին, Ս.Կապուտիկյանին եւ մյուս ճանաչված գործիչներին ազգայնականության մեջ մեղադրել միայն նրա համար, որ համարձակվել են քննադատել Կենտկոմի քարտուղարին, չի կարող անհետեւանք մնալ եւ կօգտագործվի Մոսկվայի կողմից: Ն.Խրուշչովին ուղարկած հաղորդագրությունում Գ.Հարությունյանը մասնավորապես նշում էր, որ «գաղափարախոսության ճակատի մի քանի հիմնարկների կուսակազմակերպություններում ԽՄԿԿ Կենտկոմի պլենումի որոշման քննարկման ժամանակ տեղի ունեցան աննորմալ երեւույթներ, որոնք արտահայտվեցին Հայաստանի ամբողջ տնտեսական ու հատկապես մշակութային նվաճումները հախուռն վատաբանելու փորձերի մեջ, ինչպես նաեւ բացահայտ ազգայնական արտահայտություններում: Ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, այդպիսի տրամադրություններ կրողները, որպես կանոն, մի կողմից մարդիկ են, ովքեր նախկինում զբաղեցրել են ղեկավար պաշտոններ եւ գործնականորեն կապված են եղել Հայաստանի նախկին ազգայնական ու հակախորհրդային ղեկավարության հետ, մյուս կողմից գրողների եւ բուհերի աշխատողների որոշ մասը, ովքեր վաղուց կրում են ազգայնական տրամադրություններ: Այդ երեւույթները տեղի են ունեցել Գրողների միության /գրողներ Ն.Զարյան, Հ.Քոչար, Հ.Սիրաս, Ս.Կապուտիկյան/, պետական համալսարանի /փիլիսոփայության ամբիոնի ասիստենտ Ա.Բաբախանյան/, եւ մշակույթի նախարարության /աշխատակիցներ Ա.Ղազարյան, Ա.Այվազյան/ կուսակազմակերպություններում, ինչպես նաեւ Երեւանի Սպանդարյանի շրջկոմի պլենումում»[4]:

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 159, թ. 13:
[2] Նույն տեղում, ֆ. 4241, ց. 1, գ. 1, թթ. 33-34:
[3] Նույն տեղում, ֆ. 1, ց. 33, գ. 21, թթ. 27-29, գ. 59, թթ. 78-81:
[4] Նույն տեղում, գ. 59, թթ. 79-90:

Հուլիսի 21-ին տեղի ունեցավ պետհրատի կուսկազմակերպության ժողովը, որտեղ ՀԿԿ ղեկավարության հասցեին քննադատությունն ընդունեց ավելի սուր ու կազմակերպված բնույթ: Գր.Հարությունյանը մեղադրվում էր ժողովրդից կտրված լինելու, կադրերին անձնական նվիրվածության հատկանիշով ընտրելու, լեռնային գյուղերի քայքայման, միջակ գրողների ստեղծագործությունները գովաբանելու, արեւմտահայ գրականությունը եւ մշակույթը թերագնահատելու եւ այդ հարցերում «հակակուսակցական գիծ վարելու» մեջ[1]:

Անհրաժեշտ է նշել, որ տեղին հնչած քննադատական խոսքի կողքին, 30-ական թվերի ոգով, հանրապետության շատ ղեկավարներ մեղադրվեցին «սոցիալական խորթ ծագման», «ժողովրդի թշնամիների» հետ կապ ունենալու մեջ, որը վկայում էր կուսակցության եւ ժողովրդի մեջ ստալինիզմի խոր արմատների մասին: ՀԿԿ Կենտկոմի պլենումում եւ բյուրոյի նիստին ներկա գտնվող ԽՄԿԿ Կենտկոմի աշխատակիցներ Տուրկինի եւ Բաժենովի վերադարձից հետո, հուլիսի վերջին Երեւան է ժամանում հանձնաժողով Չուրաեւի գլխավորությամբ: Հանձնաժողովն ուսումնասիրում է ՀԿԿ Կենտկոմի հուլիսի 17-ի որոշման ընդունման հանգամանքները եւ ԽՄԿԿ Կենտկոմ ներկայացնում զեկուցագիր, որը հիմք հանդիսացավ հետագայում Գ.Հարությունյանի վերաբերյալ ընդունված որոշման համար:

Օգոստոսի 15-ից սկզբնական կուսկազմակերպություններում սկսվում են հաշվետու-ընտրական ժողովներ: Սեպտեմբերի 12-15-ը տեղի է ունենում պետական համալսարանի կուսկազմակերպության ժողովը, որի նիստերից մեկին ներկա է գտնվել Կենտկոմի երկրորդ քարտուղար Հ.Մարտիրոսյանը: Ժողովն ընդունում է ժամանակի համար բավական համարձակ որոշում. «Կուսակցական ժողովը գտնում է, որ ՀԿԿ Կենտկոմի ներկա քարտուղարությունը, կտրված լինելով լայն կուսակցական զանգվածներից, չի կարող ղեկավարել Հայկական ԽՍՀ տնտեսական եւ մշակութային շինարարության գործի հետագա զարգացումը»[2]: ՀԿԿ Կենտկոմի եւ Գր.Հարությունյանի դեմ քննադատությամբ հանդես եկան Երեւանի հեռակա մանկավարժական ինստիտուտում, Լենինականի երկաթուղային դեպոյում, Երեւանի սինթետիկ կաուչուկի գործարանում, Մարտունու շրջանային կուսակցական կոնֆերանսում եւ այլուր[3]: Զախողվելով համալսարանի կուսակցական ժողովում, գիտակցելով, որ ստեղծված մթնոլորտում այլեւս անհնար է աշխատել, Կենտկոմի երկրորդ քարտուղար Հ.Մարտիրոսյանը, նամակով դիմում է Ն.Խրուշչովին: «ՀԿԿ Կենտկոմի բյուրոն,- կարդում ենք դիմումում, դուրս է մղվել նորմալ հունից եւ հայտնվել իրադարձությունների հետեւում: Չիմանալով ինչպես դուրս գալ դրությունից, խնդրվում էր արագացնել առկա իրավիճակի քննարկումը»[4]: Գ.Հարությունյանի շրջապատից սկսում են հեռանալ եւ նրա դեմ հանդես գալ նրա երեկվա զինակիցները՝ Կենտկոմի քարտուղար Բերսաբե Գրիգորյանը, Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մացակ Պապայանը եւ ուրիշները: ՀԿԿ Կենտկոմի ղեկավարության մեջ ծեւավորվում է գաղտնի ընդդիմություն՝ Շ.Առուշանյան, Ս.Թովմասյան,

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 164, թթ. 50-59:
[2] Նույն տեղում, ֆ. 116, ց. 1, գ. 287, թ. 207:
[3] Նույն տեղում, ֆ. 1, ց. 33, գ. 10, թ. 70, ֆ. 29, ց. 11, գ. 1, թ. 6:
[4] Նույն տեղում, ֆ. 1, ց. 33, գ. 10, թթ. 40-41:

Յա.Զարոբյան, Ա.Բունիաթյան, Հ.Բաղդասարյան, Ն.Թուխիկյան կազմով: Խմբի նպատակն էր օգտագործել Գր.Հարությունյանի դեմ ծավալված քննադատությունը, նրա սխալները /հուլիսի 17-ի որոշումը/ եւ պաշտոնանկ անել նրան, ինչպես նաեւ դեկավար այլ աշխատողների: Բ.Գրիգորյանի վկայությամբ, խմբի անդամները միմյանց միջեւ բաժանել էին հանրապետության դեկավար պաշտոնները (ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար՝ Ս.Թովմասյան, երկրորդ քարտուղար՝ Հր.Մարգարյան, երրորդ քարտուղար՝ Ն.Թուխիկյան, Նախարարների խորհրդի նախագահ՝ Ա.Բունիաթյան)[1]: Իրադարձությունների հետագա ընթացքը հաստատեց այս վկայության ճշմարտությունը:

Գր.Հարությունյանը փորձում է մեղմել իր հասցեին հնչած քննադատությունը, հատկապես հայերեն լեզվով չխոսելու հարցում: 1953թ. հոկտեմբերի 14-ին, տասնամյակներ անց, ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի որոշումները ռուսերենի հետ սկսեցին գրվել նաեւ հայերեն: Գր.Հարությունյանը հուլիսյան պլենումում քննադատել է այն նախարարություններին, որոնք իրենց ստորաբաժանմունքներին գրությունները եւ հրահանգները ուղարկում էին ռուսերեն լեզվով: Նույն օրերին լայնորեն նշվում է Ս.Շահումյանի ծննդյան 75 ամյակը: Կուսակցության մեջ վերականգնվում է մատենադարանի նախկին տնօրեն Գ. Աբովը, որը 1952թ. չէր կատարել Գ.Հարությունյանի հանձնարարությունը Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի մահվան կապակցությամբ ցավակցական հեռագիր ուղարկելու մասին: Խուսափել էր, որ այդ փաստը հետագայում կարող է օգտագործվել իր դեմ: Արդյունքում նա հեռացվել էր աշխատանքից եւ կուսակցությունից[2]:

Հոկտեմբերի 1-ին Գ.Հարությունյանը դիմում է ԽՄԿԿ Կենտկոմ՝ արձակուրդ ստանալու խնդրանքով: Պատասխանն ուշանում էր, որը լավ բան չէր խոստանում:Նոյեմբերի 14-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամները կանչվում են Մոսկվա[3], ԽՄԿԿ Կենտկոմ, որտեղ նոյեմբերի 17-18-ին՝ քարտուղարության նիստում, Ն.Խրուշչովի նախագահությամբ, քննարկվում է «Հայկական կուսակցական կազմակերպությունների գործերի դրության մասին» հարցը: Որոշվեց հրավիրել ՀԿԿ Կենտկոմի պլենում, քննարկելու համար ԽՄԿԿ Կենտկոմի հուլիսյան եւ սեպտեմբերյան պլենումների որոշումների կատարման ընթացքը Հայաստանում: Խրուշչովի տրամադրության տակ կային Հայկոմկուսի մի շարք անդամների «ահազանգեր ու դիմումներ, մի շարք նյութեր ու ԽՄԿԿ Կենտկոմի աշխատակիցների զեկուցագրեր, որոնք վերջին ամիսներին հանգամանորեն ծանոթացել էին Հայաստանում գործերի դրությանը»[4]:

Թե ինչպես էր ընթացել քարտուղարության նիստը, վերաշարադրենք Բ.Գրիգորյանի ինքնագիր գրառումների հիման վրա: Մոսկվա էին հրավիրվել կենտկոմի քարտուղարները՝ Գ.Հարությունյանը, Հ.Մարտիրոսյանը, Բ.Գրիգորյանը, Նախարարների խորհրդի նախագահ Ա.Քոչինյանը, Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ.Պապայանը, ներքգործնախարար Գ.Մարտիրոսյանը, ինչպես նաեւ կենտկոմի անդամներ Ս.Թովմասյանը, Յա.Զարոբյան, Հ.Մարգարյանը, Ն.Թուխիկյանը, Ա.Բունի-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 45, թ. 105:
[2] Նույն տեղում, ֆ. 1, ց. 33, գ. 22, թթ. 141-163, ց. 61, գ. 143:
[3] Նույն տեղում, ց. 33, գ. 45, թ. 48:
[4] Նույն տեղում, գ. 12, թ. 77:

աթյանը: Քարտուղարության նիստում, Չուրաեւի զեկուցումից հետո, Հր.Մարգարյանի, Յա.Զարոբյանի, Ս.Թովմասյանի, Ա.Բունիաթյանի, Ն.Թուխիկյանի ելույթները լրիվ ուղղված էին Գ.Հարությունյանի դեմ: Վերջինս ելույթ ունեցավ շփոթված եւ շատ կարճ: Այն անընդհատ ընդհատում էին Խրուշչովը եւ Սուսլովը, նրան անվանելով Բերիայի կցորդը: Խրուշչովը խոսեց վերջինը եւ հայտարարեց, որ Գ.Հարությունյանին պետք է ազատել առաջին քարտուղարի պաշտոնից, պետք է ազատել նաեւ երկրորդ քարտուղար Հր.Մարտիրոսյանին, իսկ քարտուղար Բ.Գրիգորյանին պետք է թողնել իր պաշտոնում: Ապա դիմեց ներկաներին, հարցնելով, թե ով կարող է լինել առաջին քարտուղար: Առաջինը խոսեց Յա.Զարոբյանը եւ ասաց, որ «մեզ մոտ առաջին քարտուղար կարող է լինել հանրապետության տնտեսությունը, մշակույթը իմացող, տեսականորեն պատրաստված մարդ, որպիսին է Սուրեն Թովմասյանը»: Մյուսները հիմնականում պաշտպանեցին Զարոբյանի առաջարկը: Մ.Պապյանը եւ Գ.Մարտիրոսովը հայտնեցին, որ առաջին քարտուղարի թեկնածու չկա, ուստի այդ պաշտոնը վարելու համար Հայաստան պետք է ուղարկել Հ. Բաղրամյանին կամ Ի.Թեւոսյանին: Խրուշչովը պատասխանեց, որ այդ մարդիկ չեն կարող կուսակցական աշխատանք կատարել, քանի որ մեկը զինվորական գործիչ է, իսկ Թեւոսյանը բարձր պաշտոն է վարում, բացի այդ, Արուտինովի նման չի տիրապետում հայերեն լեզվին[1]:

ԽՄԿԿ Կենտկոմի առաջին եզրակացությունն այն էր, որ «ընկ. Հարությունովը չի կարող վայելել կուսակցության քաղաքական վստահությունը եւ, բնականաբար, չի կարող լինել Հայաստանի կուսակցական կազմակերպության ղեկավար«: Իհարկե, Հարությունյանը չէր կարող հաշտվել այդպիսի գնահատականի հետ եւ փորձում է հակառակը ապացուցել, որ ինքը կապ չունի Բերիայի հետ: Սրան ի պատասխան Խրուշչովը, պատմելով ՀԿԿ Կենտկոմի 1937թ. սեպտեմբերյան պլենումի մասին, հայտարարում է. «Դուք Բերիայի դրածոն եք»: Երկրորդ եզրակացությունը շարադրվեց այսպես. «Հայստանի կուսակցական կազմակերպությունը ամբողջությամբ առողջ եւ ամուր կուսկազմակերպություն է, որ ՀԿԿ Կենտկոմի անդամների մեջ կան արժանի կուսակցական ընկերներ, որոնք կարող են ապահովել կուսակցական ղեկավարումը»[2]:

Այսպիսի հանձնարարականով նոյեմբերի 28-ին սկսվում են ՀԿԿ Կենտկոմի պլենումի աշխատանքները, որին մասնակցում էին ԽՄԿԿ Կենտկոմի մի խումբ աշխատակիցներ, Կենտկոմի քարտուղար Պ.Պոսպելովի ղեկավարությամբ: Պլենումը բացում է Ա. Քոչինյանը, զեկուցմամբ հանդես է գալիս Կենտկոմի քարտուղար Բ.Գրիգորյանը: Տեղեկացնելով ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարության նիստի եւ ընդունված որոշումների մասին, զեկուցողը թվարկում է Հարությունյանի «լուրջ թերությունները եւ սխալները».

- ՀԿԿ Կենտկոմի պլենումում թաքցրել է շատ փաստեր Բերիայի հանցագործությունների մասին, չի բացահայտել իր հարաբերությունները Բերիայի հետ, ինչպես վայել է կոմունիստին եւ ղեկավարին:

- Պլենումից հետո մի քանի սկզբնական կազմակերպություններ սուր քննադատության են ենթարկել Կենտկոմի եւ Հարությունյանի գործունեությունը, իսկ Հարությունյանը բյուրոյի՝ հուլիսի 17-ի որոշումը, որ-

---

[1] ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 45, թ. 107:
[2] Նույն տեղում, ֆ. 1, ց. 33, գ. 12, թթ. 79-80:

պես տեղեկատվություն, ուղարկել է ԽՄԿԿ Կենտկոմ, որտեղ փորձել է կոծկել Կենտկոմի քարտուղարների հասցեին եղած սուր քննադատությունը եւ մի շարք կոմունիստների անհիմն մեղադրել է ազգայնականության մեջ:

- Կենտկոմի բյուրոյում եւ քարտուղարությունում չի եղել կոլեգիալություն. շատ հարցեր Հարությունյանը լուծել է միանձնյա կամ երկրորդ քարտուղարի հետ:

- Ղեկավար աշխատանքի է առաջադրել մարդկանց, որոնք չեն վայելել հարգանք եւ հեղինակություն: Հանրապետության ղեկավարների թվում եղել են մարդիկ Բերիայի շրջապատից:

- Սխալ է ղեկավարել գաղափարախոսական աշխատանքը, հրապարակվել են քաղաքական լուրջ սխալներով գրքեր:

- 16 տարի աշխատելով Հայաստանում, չսովորեց հայերեն, որն առաջացնում է արդարացի դժգոհություն:

- Կենտկոմի բյուրոն եւ Նախարարների խորհուրդը թույլ են տվել մեծ սխալներ եւ թերություններ գյուղատնտեսության ղեկավարման բնագավառում: Ցածր բերքատվության պատճառով աշխօրերի դիմաց տրվում է չնչին բնամթերք եւ դրամ:

- Աշխատավորությունը գտնվում է բնակարանային ծայրահեղ վատ պայմաններում:

Խոսելով նաեւ իր սխալների մասին, զեկուցողը շնորհակալություն է հայտնում ԽՄԿԿ Կենտկոմին եւ հավատացնում, որ Հայաստանում կկատարեն կուսակցության եւ կառավարության ցուցումներն ու որոշումները[1]:

Հաջորդում է Գ.Հարությունյանի ելույթը: Այստեղ եւս նա չի ընդունում եւ մերժում է շատ մեղադրանքներ, բացառությամբ մի քանիսի: Ընդունում է, որ սխալ հունով է ընթացել Կենտկոմի հուլիսյան պլենումը, որտեղ ինքը ժամանակին չի միջամտել եւ զգուշացրել «ընկերներին», որ «չի կարելի հարձակվել ընկ. Առուշանյանի ելույթի վրա: Շրջանցել է Բերիայի մերկացման փաստից բխող հարցերը»: Սխալ է եղել նաեւ բյուրոյի հուլիսի 17-ի որոշումը, եւ եթե չլիներ «ԽՄԿԿ Կենտկոմի միջամտությունը, ապա այդ որոշումը կճնշեր քննադատությունը կուսկազմակերպություններում»: Իր խոստովանությամբ, խոշոր սխալներ են թույլ տվել նաեւ կադրերի առաջքաշման ասպարեզում: Կենտկոմը պահել է մարդկանց, որոնք հեղինակություն չեն վայելել, ծախողվել են նախկին աշխատանքում: Նա ընդունում է, որ 1931-36թթ. աշխատանքային սերտ հարաբերությունների մեջ է եղել Բերիայի հետ, սակայն հետո ոչ մի կապ չի ունեցել, Մոսկվայում 3-4 անգամ հանդիպել է գործով՝ տասական րոպե: Սակայն այն փաստը, որ իրեն Հայաստանում աշխատանքի երաշխավորել է Բերիան, տվյալ պահին խիստ ազդել է իր հեղինակության վրա, որպես ՀԿԿ Կենտկոմի քարտուղար: Ինքը եւս համոզվել է, որ այլեւս չի կարող մնալ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, եւ որ ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը ճիշտ է եւ բխում է Հայաստանի կոմկուսի շահերից: Այնուհետեւ ծավալվում են ելույթները. Գ.Հարությունյանը մեղավոր է ամեն ինչում եւ ամեն ինչի համար: Եվ դա ասում են նույնիսկ նրանք, որոնք մի քանի ամիս առաջ պաշտապանում էին նրան: Կային նաեւ զուսպ ելույթներ: Վերջում նորից ելույթ է ունենում Գ.Հարություն-

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 10, թթ. 4-30:

յանը եւ պատասխանում որոշ հարցադրումների, ապա հայտարարում. «Ես ցանկանում եմ հավատացնել ԽՄԿԿ եւ ՀԿԿ Կենտկոմներին, կուսակցական կազմակերպությանը, որ ուր էլ ինձ ուղարկեն աշխատանքի, եթե ես աշխատանքի ընդունակ եմ, ամենուր կձգտեմ աշխատանքով ապացուցել իմ անկեղծությունը կուսակցության գործին»[1]:

Պլենումի վերջում ելույթ է ունենում ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Պ.Պոսպելովը: Նա անդրադառնում է ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարության երկօրյա նիստին (ընդ որում առաջին օրը վեց ժամ տեւողությամբ), նշում է, որ դա է եղել «մեծ կուսակցական եւ բաց խոսակցություն, որտեղ բոլորը արտահայտել են իրենց տեսակետները, եւ դա վկայում է, որ Կենտկոմը լրջորեն է մոտեցել Հայաստանի կուսկազմակերպության գործերի վիճակին»[2]: Ապա հայտնում է, որ Արութինովը ԽՄԿԿ Կենտկոմում իրեն պահել է «ոչ անկեղծ եւ անարժան, ժխտել է Բերիայի հետ իր մոտիկության բոլոր փաստերը: Նա իր ռեպլիկաներում թույլ է տվել հակաուսակցական հարձակում ընդդեմ ԽՄԿԿ Կենտկոմի, որի իմաստը կայանում է նրանում, որ իբր, ամբողջ կուսակցությունը ժամանակին չի կարողացել ճանաչել Բերիային, ինչ գործ ունի այստեղ Արուտինովը, որը նույնպես չի կարողացել ճանաչել նրան: Դա վատ է բնութագրում Արուտինովին, որովհետեւ նա մասնակցել է կենտկոմի հուլիսյան պլենումին, որտեղ մանրամասն բացատրվել է, թե ինչու կուսակցությունը չէր կարող առաջ մերկացնել Բերիային»: Այս ամենի պատճառով ԽՄԿԿ Կենտրոնական Կոմիտեն «քաղաքական անվստահություն է հայտնել Արուտինովին», շարունակում է Պոսպելովը, բայց Կենտկոմի քարտուղարության եւ ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի ամբողջ կազմի նկատմամբ անվստահություն չի հայտնել: ԽՄԿԿ Կենտկոմը հանգել է այն եզրակացությանը, որ անհրաժեշտ է «յուրաքանչյուր աշխատողի նկատմամբ ցուցաբերել անհատական վերաբերմունք», որ Կենտկոմի բյուրոյի մի քանի անդամներ, «թեկուզ եւ անցյալում լուրջ սխալներ թույլ տված, ցանկանում են աշխատանքում ազնվորեն շտկել դրանք, եւ նրանց պետք է տալ այդ հնարավորությունը»[3]:

Նոյեմբերի 30-ին Կենտկոմի պլենումը որոշում է ընդունում Գ.Հարությունյանին «հանել ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի պոստից եւ ՀԿԿ Կենտկոմի կազմից, որպես քաղաքական վստահություն չվայելողի»[4]: Պլենումը որոշում է ընդունում ազատել նաեւ երկրորդ քարտուղար Հրանտ Մարտիրոսյանին «աշխատանքի մեջ անհրաժեշտ սկզբունքայնություն չդրսեւորելու» համար, ինչպես նաեւ երրորդ քարտուղար Բերսաբե Գրիգորյանին: Վերջինիս մասին ԽՄԿԿ Կենտկոմը ցուցում չուներ: Պլենումի մասնակիցները նրան ազատում են սեփական նախաձեռնությամբ, թեեւ նորընտիր առաջին քարտուղար Ս.Թովմասյանը առաջարկում էր Բ.Գրիգորյանի հարցը քննարկել առաջիկա համագումարում[5]:

Կենտկոմի պլենումը ընտրում է նոր քարտուղարներ՝ Սուրեն Թովմասյան, Հրաչյա Մարգարյան եւ Յակով Զարոբյան, ինչպես նաեւ բյուրոյի նոր կազմ, որտեղ նախորդ կազմից վերընտրվում են Ա.Քոչինյանը,

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 12, թթ. 74-75:
[2] Նույն տեղում, թ. 77:
[3] Նույն տեղում, թթ. 79-80:
[4] Նույն տեղում, թ. 122:
[5] Նույն տեղում, թ. 107:

Մ.Պապյանը եւ Գ.Մարտիրոսովը: Պլենումից կարճ ժամանակ անց «ընդդիմության խմբի» անդամները գրավում են ղեկավար պաշտոններ: Հ.Բաղդասարյանը նշանակվում է «Սովետական Հայաստան» թերթի խմբագիր[1], Շ.Առուշանյանը՝ ՀԿԿ Երեւանի քաղկոմի առաջին քարտուղար[2], Ա.Բունիաթյանը Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ[3]: Իրենց զբաղեցրած պաշտոններից ազատվում են Գ.Հարությունյանի «կողմնակիցներ» Զ.Գրիգորյանը /մշակույթի նախարար/, Ա.Հարությունյանը /Երեւանի քաղկոմի առաջին քարտուղար/, Գ.Ալեքյանը /Կենտկոմի կազմակերպական բաժնի վարիչ/, Ս.Ղազարյանը /Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ եւ գյուղատնտեսության նախարար/, Իսահակ Իսագուլովը /ՀԽՍՀ դատախազ/, Գ.Բեհբութովը /«Կոմունիստ» թերթի խմբագիր/, Հ.Ինճիկյանը եւ Լ.Վարդանյանը /Կենտկոմի բաժինների վարիչներ/, Կ.Ռուխիկյանը /ՀԱՄԽ-ի նախագահ/ եւ ուրիշներ: Կենսագործելով ԽՄԿԿ Կենտկոմի «անմիջապես բոլորին տեղաշարժ չանել, այլ մաքրել կազմը» ցուցումը՝ ՀԿԿ Կենտկոմի նոր ղեկավարությունը 1954թ. սկզբին առաջին քայլերն է կատարում այդ ուղղությամբ: Հունվարի 7-ին Կենտկոմի քարտուղար Ս.Թովմասյանը նամակով տեղյակ է պահում Խրուշչովին կուսակցական ժողովներում եւ շրջկոմների պլենումներում ՀԿԿ Կենտկոմի նոյեմբերյան պլենումի արդյունքների քննարկումների մասին: Խիստ քննադատության է ենթարկվել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ.Պապյանը՝ «անսկզբունքայնության եւ կոմունիստին ոչ վայել արարքների» համար: Բոլոր ժողովներում նշվել է նրա ցածր գործնական հատկանիշները եւ նրա մնալը այդ պոստում «վիրավորանք Հայաստանի համար»: Վերոհիշյալի հիման վրա աննպատակահարմար գտնելով Ա.Քոչինյանի հետագա մնալը Նախարարների խորհրդի նախագահի, իսկ Մ.Պապյանի եւ Գ.Մարտիրոսովի՝ իրենց պաշտոններում հետեգա մնալը անհնար, Ս.Թովմասյանը խնդրում է Խրուշչովի ցուցումները այդ հարցերի վերաբերյալ[4]: ԽՄԿԿ Կենտկոմը որոշում է ձեռք չտալ Ա.Քոչինյանին, իսկ Մ.Պապյանը եւ Գ.Մարտիրոսովը ազատվում են զբաղեցրած պաշտոններից[5]: .

2. ՍՏԱԼԻՆԻԶՄԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ

1954թ. փետրվարի 14-ին բացվեց ՀԿԿ 17-րդ համագումարը: Կենտկոմի հաշվետվությամբ հանդես եկավ Ս.Թովմասյանը: Հաշվետվության մեջ ընդհանրապես չօգտագործելով Ստալինի անունը, զեկուցողը, խոսելով կուսակցության քարոզչական աշխատանքների մասին, նշեց, որ այդ «աշխատանքում դեռեւս վերջ չի տրված անհատի պաշտամունքի վնասակար իդեալիստական տեսությանը»[6]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 33, գ. 32, թ. 121:
[2] Նույն տեղում, թ. 130:
[3] Նույն տեղում, գ. 33, թ. 2:
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 34, գ. 60, թթ. 13-17:
[5] Նույն տեղում, գ. 36, թ. 131, գ. 37, թ. 51:
[6] *Ս. Թովմասյան*, Հաշվետու զեկուցում Հայաստանի կոմպարտիայի XVII համագումարում ՀԿՊ Կենտկոմի աշխատանքի մասին, Ե., 1954, էջ 50:

Ճիշտ է, «անհատի պաշտամունք» հասկացողությունը արտասանվեց անհասցե եւ վերացականորեն, սակայն այն վկայում է, որ ԽՄԿԿ 20-րդ համագումարից դեռեւս 2 տարի առաջ, 1954թ. կուսակցության ղեկավարության մեջ կային անհատի պաշտամունքի հաղթահարման միտումներ: Համագումարի բանաձեւում նշվում էր, որ ՀԿԿ Կենտկոմը եւ ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը սխալներ են թույլ տվել արդյունաբերության եւ գյուղատնտեսության ղեկավարման հարցում: Արդյունաբերության բնագավառում մի շարք՝ հատկապես էներգատար ճյուղերի զարգացումը տեղի էր ունեցել անհրաժեշտ չափով հաշվի չառնելով հանրապետության էներգետիկ հնարավորությունները: Սեւանի ջրերը օգտագործվում էին ոչ արդյունավետ կերպով, տեղի էր ունենում ջրի անխնա կորուստ: Սխալ տեղաբաշխումներ էին կատարվել եւ մեծ ծգծգումներ էին նկատվում արդյունաբերական նոր ձեռնարկությունների շինարարության գործում, երկար ժամանակով ուշանում էր մի շարք հանքային հանածոների արդյունաբերական իրացումը: Գյուղատնտեսության բնագավառի սխալները վերաբերում էին ծրագրավորմանը, հավելագրումներին եւ աչքակապությանը, թվացյալ բարեկեցության տպավորության ստեղծմանը: Համագումարի բանաձեւում նշված է, որ ՀԿԿ Կենտկոմի նախկին ղեկավարության «մեծագույն սխալներից մեկը գաղափարախոսության ճակատում հանդիսանում էր թույլ պայքարը ընդդեմ բուրժուական գաղափարախոսության, մասնավորապես բուրժուական ազգայնականության ռեցիդիվների դեմ»[1]: Այստեղ տեղին է նշել, որ Հայկոմկուսի նախորդ շրջանի գործունեության հիմնական առանցքը եղել է կոշտ պայքարը «բուրժուական ազգայնականության» դեմ: Համագումարում արծարծվեց նաեւ մտավոր կյանքի բնագավառում իրականացված կամպանիաների թեման: ԳԱ պրեզիդենտ Վ.Համբարձումյանը, խոսելով 1948-49թթ. կենսաբանական գիտությունների շուրջը ծավալված բանավեճի մասին, նշում է. «Միչուրինյան կենսաբանության համար պայքարի դրոշով վեյսմանիզմի մեջ անհիմն մեղադրանքների ենթարկվեցին եւ հալածվեցին Հայաստանի առաջին միչուրինականներից մեկը մեր հանրապետության գյուղատնտեսական գիտությունների խոշորագույն գործիչ, ԳԱ իսկական անդամ Մ.Թումանյանը, կենսաբանական գիտությունների ասպարեզի խոշորագույն մասնագետ Ա.Թախթաջյանը եւ մի շարք ուրիշ լուրջ գիտնականներ»: Արդյունքում, Թումանյանի կյանքը չերկարեց, Թախթաջյանը հեռացավ Հայաստանից, իսկ մեղադրանքների հեղինակ Բաբաջանյանի՝ հանրապետության գյուղատնտեսությանը օգնելու խոստումներից ոչինչ չստացվեց[2]:

Հարցապնդումներն ավելի սուր բնույթ ունեին արծակագիր Հր.Քոչարի ելույթում: Նա առաջ քաշեց մշակութային ժառանգությունը ճիշտ գնահատելու հարցեր: Նա մասնավորապես ընդգծեց Ռաֆֆու գրական ժառանգությունը, որպես մեր ժողովրդի ազգային-ազատագրական ձգտումների արտահայտիչ, ըստ արժանվույն գնահատելու խնդիրը, համարելով, որ «Ռաֆֆու հարցը մի գրողի հարց չէ, դա մեր ժողովրդի պատմության եւ նրա ստեղծած արժանիքների գնահատության հարցն է»[3]: Սակայն ժամանակի ոգուն համաձայն նա Լեւոն Շանթին եւ Ավետիս

---

[1] Հայաստանի կոմպարտիայի XVII համագումարի բանաձեւը, Ե., 1954, էջ 15:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 34, գ. 2, թ. 58:
[3] Նույն տեղում, գ. 4, թ. 17:

Սհարոնյանին անվանեց «հակաժողովրդական թույնով վարակված» գրողներ: Հրաչյա Քոչարը համագումարում բարձրացրեց նաեւ Ե.Չարենցի գրական ժառանգությունը «փականքներից ազատելու« հարցը:

Համագումարում բարձրացվեց նաեւ 1936-37թթ. դատապարտվածների եւ 1949թ. Ալթայի երկրամաս աքսորվածների գործերի վերանայումն արագացնելու հարցը, որի առթով ՆԳՆ Գ.Մարտիրոսովը առաջարկեց ընդունել օրենսդրական բնույթի որոշում, ինչը կհեշտացներ այդ գործերի վերանայումը եւ արդար վճռի կայացումը: Բարձրացվեց նաեւ բռնարարքների մեղավորների հարցը: Շ.Առուշանյանը եւ Հր.Քոչարը միանշանակ տալիս են Գր.Հարությունյանի անունը, իսկ Գ.Մարտիրոսովը 1949թ. աքսորի համար մեղավոր է համարում ՆԳՆ նախարար Ս.Կորխմազյանին եւ նախկին դատախազ Ի.Իսագուլովին, մոռանալով, որ վերջինս դատախազ էր դարձել 1949թ. դեկտեմբերին, երբ աքսորը վաղուց արդեն կատարված փաստ էր: Սակայն համագումարի ընդունած բանաձեւում դեռեւս խոսք չկար զանգվածային բռնությունների եւ աքսորի մասին, պետք էր ժամանակ եւ ԽՄԿԿ Կենտկոմի որոշում: Համագումարից հետո Կենտկոմի բյուրոյի կազմում նախորդ, մեկ ու կես տարի առաջ ընտրված բյուրոյի անդամներից վերընտրվեց միայն Ա.Քոչինյանը: Փաստորեն հանրապետության ղեկավարությունն ամբողջովին փոխվեց:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների նախօրյակին Երեվան ժամանեց եւ 1954թ. մարտի 11-ին ընտրողների առջեւ ելույթ ունեցավ Ա.Միկոյանը: Նա քննադատեց հանրապետության նախկին ղեկավարության նիհիլիստական վերաբերմունքը մշակութային ժառանգության նկատմամբ: Դատապարտելով Ռաֆայել Պատկանյանի արձանի տեղահանումը եւ Ռաֆֆու երկերի հրատարակության դադարեցումը, նա երկար տարիների լռությունից հետո բարձրաձայն արտասանեց «հայ տաղանդավոր բանաստեղծ» եղիշե Չարենցի անունը եւ փաստորեն թույլատրեց նրա երկերի հրատարակությունը: Իր ելույթում Ա.Միկոյանը տարօրինակ համարեց այն փաստը, որ մոռացության է մատնված «կուսակցության ականավոր գործիչ« Ալ. Մյասնիկյանի հիշատակը: Նա Ստալինի անունը հիշատակեց ընդամենը մեկ անգամ, դնելով Շահումյանի, Օրջոնիկիձեի, Կիրովի եւ մյուսների կողքին[1]:

1954թ. զբաղեցրած պաշտոններից ազատվում եւ կուսակցությունից հեռացվում են հանրապետության ներքին գործերի եւ պետանվտանգության գերատեսչությունների մի շարք ղեկավար աշխատողներ: ՀԿԿ Կենտկոմի բյուրոն 1954թ. ապիլի 13-ին ԽՄԿԿ շարքերից հեռացնում է պետանվտանգության նախկին նախարար Ս.Կորխմազյանին «թույլ տրված սխալների եւ ազնիվ մարդկանց ձերբակալելու համար»[2]: Նույն օրը զբաղեցրած պաշտոններից ազատվում են նախարարության մի խումբ պաշտոնյաներ «ազնիվ խորհրդային քաղաքացիների հետապնդման, անհիմն ձերբակալելու» համար[3]: ՀԽՍՀ Գերագույն դատարանի նախագահ, պետանվտանգության նախարարի նախկին տեղակալ Հ.Հարոյանը ազատվում է զբաղեցրած պաշտոնից «հետաքննության մեթոդների կոպիտ խախտման եւ ձերբակալվածների ծեծին անձամբ մասնակցելու համար»: Կենտկոմի բյուրոյի մայիսի 19-ի որոշմամբ նա հեռացվում է նաեւ ԽՄԿԿ

---

[1] «Սովետական Հայաստան», 1954, 12 մարտի:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 123, գ. 5590, թ. 35:
[3] Նույն տեղում, ց. 34, գ. 62, թ. 18:

շարքերից[1]: ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի սեպտեմբերի 10-ի որոշմամբ ԽՄԿԿ շարքերից հեռացվում է Գ.Մուրադյանը՝ «1937-38թթ. պետանվտանգության մարմիններում աշխատելիս սոցիալիստական օրինականության կոպիտ խախտումների, ձերբակալվածներին ծեծելու եւ նրանց նկատմամբ անթույլատրելի բարբարոսական մեթոդներ կիրառելու» համար[2]: Հետաքրքիր է, որ Գ.Մուրադյանը իրեն մեղավոր ճանաչելով շեշտում էր, որ ծեծուջարդը կիրառել է վերադասի՝ մասնավորապես 1937թ. սեպտեմբերին Հայաստան եկած ԽՍՀՄ ՆԳԺԿ բրիգադի ցուցումով[3]:

Նույն օրը ՀԿԿ Կենտկոմի բյուրոն որոշում է Ս.Կորխմազյանի, Հ.Հարոյանի եւ Գ.Մուրադյանի «հանցավոր գործունեության» մասին նյութերը հանձնել քննչական մարմիններին նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար: 1954թ. հուլիսի 5-ին ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ս.Թովմասյանը դիմում է ԽՄԿԿ Կենտկոմ: Տեղեկացնելով 1949թ. աքսորի եւ աքսորվածների թվաքանակի մասին 14 հազար մարդ, հայտնում է, որ աքսորավայրից ստացվել է 14 հազարից ավելի դիմում ու բողոք: Քննարկված 250 դիմումներից 127 գործի մասին կայացվել է արդարացման եզրակացություն, սակայն ԽՍՀՄ ՆԳՆ-ում այդ գործերի քննարկումը եւ եզրակացությունների հաստատումը ձգձգվում է 8-10 ամիս: 1953թ. օգոստոսից սկսած ԽՍՀՄ ՆԳՆ է ուղարկվել 194 գործ, որոնցից մեկ տարվա ընթացքում քննարկվել է ընդամենը 5 գործ: ՀԿԿ Կենտկոմի քարտուղարը նշելով, որ արտաքսված քաղաքացիների դիումումների եւ բողոքների քննարկումը նման պայմաններում կերկարի մի քանի տարի, առաջարկում է գործերի վերջնական որոշման կայացումը հանձնել ՀԽՍՀ Նախարարների խորհրդի իրավասությանը[4]:

Ս.Թովմասյանի գրության հիման վրա ԽՍՀՄ Գլխավոր դատախազ Ռ.Ռուդենկոն, ՆԳՆ Ս.Կրուգլովը, ՊԱԿ-ի նախագահ Ի.Սերովը եւ արդարադատության նախարար Կ.Գորշենինը 1954թ. սեպտեմբերի 9-ին ԽՄԿԿ Կենտկոմ են ուղարկում գրություն, որտեղ նշելով, որ 1949թ. Ալթայի երկրամաս հատուկ բնակության է արտաքսվել 3017 դաշնակի ընտանիք, ավելացնում են, որ այդ մարդիկ դաշնակ են համարվել առանց բավականաչափ հիմնավորվածության: Հանձնաժողովը առաջարկում է արտաքսվածների գործերի վերանայումը հանձնարարել «հակահեղափոխական գործունեության համար դատապարտված անձանց գործերի վերանայման հայկական հանրապետական հանձնաժողովին» եւ անհիմն արտաքսվածներին ազատել[5]:

ԽՄԿԿ Կենտկոմի նախագահությունը 1954թ. սեպտեմբերի 11-ին համաձայնելով հանձնաժողովի առաջարկների հետ, որոշում է «հանձնարարել հանձնաժողովին՝ ՀԽՍՀ դատախազի (նախագահ), ՊԱԿ-ի նախագահի, ՆԳՆ եւ արդարադատության նախարարի կազմով, ստացվող դիմումների ու բողոքների հիման վրա վերանայել դաշնակների եւ նրանց ընտանիքների անդամների գործերը եւ անհիմն արտաքսված անձանց ազատել հատուկ բնակությունից»[6]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 34, թթ. 43-44:
[2] Նույն տեղում, ց. 62, գ. 4662. թ. 5:
[3] Նույն տեղում, թթ. 17-28:
[4] Նույն տեղում, ց. 34, գ. 61, թ. 147:
[5] ՌԴ պետական արխիվ, ֆ. 8131, ց. 32, գ. 3286, թ. 169:
[6] ՌԴ նախագահի արխիվ, ֆ. 3, ց. 10, գ. 98, թ. 123:

Մոսկվայից ստացված հրահանգներին համապատասխան ստեղծվում է «հատուկ վերաբնակեցվածների գործերի վերանայման հանրապետական հանձնաժողով», որը իր գործունեությունը սկսում է 1954թ. հոկտեմբերին[1]:

Մինչեւ 1955թ. օգոստոսի 15-ը հանձնաժողովը վերանայում է 1015 գործ եւ որոշում ընդունում «հատուկ վերաբնակեցումից» ազատել 839 գործերով 3074 մարդ: ԽՍՀՄ ՆԳՆ առընթեր հատուկ խորհրդակցության եւ Գերագույն դատարանի որոշումներով սկսած 1949թ. վերանայվել էր 216 գործ եւ կայացվել միայն ազատման վճիռ: 1955թ. սեպտեմբերին վերանայման էր սպասում 1377 գործ, որոնցից ավելի քան 700-ը վերաբերում էր լեգեոնականներին, որոնց գործերը ընդհանրապես չէին վերանայվել[2]:

Այս հանգամանքը նկատի ունենալով, Կենտկոմի քարտուղար Ս.Թովմասյանը 1955թ. սեպտեմբերի 5-ի կրկին դիմում է ԽՄԿԿ Կենտկոմ, բարձրացնելով անօրինական կարգով 1949թ. հունիսին Ալթայի երկրամաս աքսորված հայ լեգեոնականներին ընտանիքներով աքսորից ազատելու հարցը: Նշելով, որ համաձայն ԽՍՀՄ ՊՊԿ 1945թ. օգոստոսի 18-ի որոշման լեգեոներները ենթակա էին աքսորի վեց տարի ժամկետով, 1949թ. խախտվել է այդ որոշումը եւ 879 լեգեոներ իրենց ընտանիքներով արտաքսվել են անժամկետ: ԽՍՀՄ Գերագույն դատարանը, քննարկելով առանձին գործեր, նշել է նրանց աքսորի անօրինականությունը, եւ վճիռ ընդունել նրանց վերադարձի մասին, սակայն ընդհանրացնող որոշում դեռեւս չի կայացրել եւ միջնորդություն չի ներկայացրել համապատասխան ատյաններ՝ այդ խմբի բոլոր անձանց հարցը լուծելու համար: Տեղյակ պահելով, որ ՀԽՍՀ ՆԳՆ, հանրապետության դատախազության եւ ՀԿԿ Կենտկոմի բազմաթիվ դիմումները հղված համապատասխան վերադաս մարմիններին ԽՍՀՄ նախկին պետանվտանգության նախարարության 1949թ. մայիսի 28-ի հրահանգը լեգեոներների մասով չեղյալ հայտարարելու վերաբերյալ, արդյունք չի տվել: «ՀԿԿ Կենտկոմը, գրում է Կենտկոմի քարտուղարը,- խնդրում է ցուցումներ տալ վերոհիշյալ հրահանգի լեգեոներներին վերաբերող մասը չեղյալ հայտարարելու մասին եւ այդ հարցը լուծել համապատասխան օրենքի, այսինքն լեգեոներների նկատմամբ կիրառել Պաշտպանության պետական կոմիտե որոշումը, իսկ նրանց ընտանիքներին ազատել՝ որպես ապօրինի աքսորվածներ[3]:

Միաժամանակ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը դիմում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ շքանշաններից զրկել 1949թ. արտաքսումը իրականացրած հանրապետության Պետանվտանգության նախարարության մի քանի նախկին ղեկավար աշխատողների, այդ թվում Կորխմազյանին, Հարությանին, Մովսեսովին եւ մյուսներին[4]: 1954թ. աշնանը կուսակազմակերպություններում տեղի ունեցան հաշվետու-ընտրական ժողովներ եւ շրջանային կուսակցական կոնֆերանսներ: Դրանցում շարունակվում էր նախկին ղեկավարության «սխալների եւ արատավոր ոճի» քննադատությունը[5]:

---

[1] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 207, g. 10, գ. 107, թ. 1:
[2] Նույն տեղում, թ. 13:
[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 35, գ. 45, թթ. 165-166:
[4] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 207, g. 10, գ. 107, թթ. 3-5:
[5] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 34, գ. 73, թթ. 46-59:

Բոլորովին այլ մթնոլորտում ընթացան մեկ տարի անց, 1955թ. հաշվետվու-ընտրական ժողովներն ու կոնֆերանսները: Քննադատության թիրախ են դառնում հանրապետության նոր ղեկավարներ Ս.Թովմասյանը, Հ.Մարգարյանը, Շ.Առուշանյանը: Նրանք քննադատվում էին գաղափարախոսական եւ ներկուսակցական աշխատանքներում թույլ տված սխալների, ըստ հայրենակցության կադրային քաղաքականության համար: Հաշվետու-ընտրական ժողովներում արծարծվեցին նաեւ այլ հարցեր: Հայաստանում գրողների միության կուսակցական հաշվետու ընտրական ժողովում՝ նոյեմբերի 10-ին բարձրացվեց Սեւանի հիմնախնդիրը: Գրողները անհանգստացած էին լճի ջրային պաշարների սպառման եւ դրա աղետալի հետեւանքների համար: Նրանք ՀԿԿ Կենտկոմին եւ կառավարությանը առաջարկեցին կրկին անդրադառնալ Սեւանի հիմնախնդրին: Ժողովում Հր.Քոչարը բարձրացրեց Լ.Շանթի ստեղծագործությունները հրապարակելու հարցը[1]: Այս փաստը վկայում էր, որ փոփոխություններն իրենց հետքն էին թողել մարդկանց պատկերացումներում եւ մտածելակերպում: Չէ որ նույն Քոչարը 2 տարի առաջ, ՀԿԿ 17-րդ համագումարում Լ. Շանթին համարում էր «հակաժողովրդական գրող»:

1956թ. հունվարին կայացավ ՀԿԿ 18-րդ համագումարը: Այն ընթացավ հիմնականում հանրապետության ժողտնտեսության խնդիրների քննարկման եւ հետագա զարգացման ծրագրերի մշակման հունով, իսկ հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի երեւույթներին քիչ ուշադրություն հատկացրեց: Ինչպես Կենտկոմի հաշվետվության մեջ /զեկ. Ս.Թովմասյան/, այնպես էլ ելույթներում՝ փոքր բացառությամբ, չխոսվեց զանգվածային բռնությունների, ստալինիզմի հետեւանքների վերացման, բնակչության սոցիալական դրության եւ այլ հարցերի մասին: Բացառություն էին պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս Հ.Վարդանյանի եւ Գերագույն խորհրդի նախագահ Շ.Առուշանյանի ելույթները: Առաջինը հանդես եկավ ՀԿԿ Կենտկոմի ղեկավարության, մասնավորապես Ս.Թովմասյանի գործունեության, ինչ որ տեղ հիմնավոր, ինչ որ տեղ անհիմն, քննադատությամբ: Նա, մասնավորապես, նրան մեղադրեց իր քննադատությունը չընդունելու, «մասսաներից կտրված լինելու, սպեկուլյացիայի դեմ չպայքարելու, «արյունոտ ձեռքերի» տեր մի խումբ նախկին ղեկավարների չպատժելու մեջ»: Միաժամանակ, առաջարկեց բանաձեւի մեջ մտցնել եւ տալ 1937թ. «ջարդարարության» եւ 1949թ. «հազարավոր հայ ընտանիքների Սիբիր աքսորելու» գնահատականը[2]:

Շ.Առուշանյանը նշեց, որ «ՀԿԿ Կենտկոմը մեծ աշխատանք է կատարել ուղղելու այն խեղաթյուրումները եւ վերանայելու թշնամական ու վնասարարական աշխատանքների հետեւանքները, որը եղել է մեզ մոտ սկսած 1937թ. մինչեւ 1953թ.»: Սակայն, դեռ չէր կայացել ԽՄԿԿ 20-րդ համագումարը եւ այդ ամենի համար, ըստ Առուշանյանի, մեղավոր են ժողովրդի թշնամիներ՝ Բերիայի դրածոներ Ամատունին եւ Ակոպովը, որոնք «1937թ. սկսեցին ջարդել մեր կուսակցության եւ պետության կադրերին: Լենինյան-ստալինյան կենտկոմի կողմից նրանց մերկացումից հետո, դըժբախտաբար, Ամատունուն փոխարինեց մյուս դրածոն՝ Գրիգոր Արուտինովը, որը կատարելով իմպերիալիզմի գործակալ Բերիայի պահանջը, կարողացավ ջարդել կուսակցական, խորհրդային, կոմերիտական, տըն-

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1346, ց. 1, գ. 63, թթ. 105-111:
[2] Նույն տեղում, ֆ. 1, ց. 56, գ. 3, թթ. 44-46:

տեսական, զինվորական եւ գիտական մեծ թվով կադրեր: Նույն ձեւով, կատարելով Բերիայի ցուցումները, Գ.Արուտինովը եւ ժողովրդի մերկացված թշնամի Կորխմազյանը 1949թ. կազմակերպեցին հազարավոր հայերի աքսորը, փորձելով դժգոհություն ստեղծել հայ ժողովրդի մեջ»[1]:

Ահա այսպես հեշտությամբ ու մակերեսորեն, Շ.Առուշանյանը բացատրում էր զանգվածային բռնությունների պատճառները եւ տալիս մեղավորների անունները: Կրկնում ենք, դեռ առջեւում էին 20-րդ եւ 22-րդ համագումարները. Ստալինի անունը անձեռնմխելի էր: Համագումարում ելույթ ունեցողներից շատերը հիմնական ասելիքի հետ պարտք համարեցին դատապարտել Հ.Վարդանյանի ելույթը, պատճառաբանելով, որ «ընկ. Թովմասյանի աշխատանքի մեջ կան թերություններ, սխալներ, բայց նրան Արուտինովի հետ համեմատելը քաղաքական մեծ սխալ է»[2]:

Համագումարի բանաձեւում հիմնականում արծարծվում էին ժողտնտեսության հիմնախնդիրները եւ շատ քիչ տեղ էր հատկացված մշակույթի, կրթությանն եւ գիտության հարցերին: Համագումարը նախօրոք կազմած ցուցակով ընտրեց Կենտկոմի նոր ղեկավարություն եւ ԽՄԿԿ 20-րդ համագումարի պատգամավորներ:

1954-55թթ. ԽՍՀՄ Գերագույն դատարանի ռազմական կոլեգիայի վճռով կալանավայրերից ազատվում են 1937-38թթ. դատապարտված, 1948-49թթ. արտաքսման ենթարկված հազարավոր քաղաքացիներ, այդ թվում կուսակցական-խորհրդային ղեկավար աշխատողներ, գրականության եւ մշակույթի գործիչներ, խորհրդային 1-ին պարտիզանական գնդի հրամանատարներ, բանվոր-կոլտնտեսականներ: Նրանց թվում էին Գուրգեն Մահարին, Վահրամ Ալազանը, Վաղարշակ Նորենցը, Միքայել Մազմանյանը, Գեւորգ Քոչարը, ՀԿԿ Կենտկոմի նախկին անդամներ Արմեն Անանյանը, Լիպարիտ Բարսեղյանը, Արտավազդ Եղիազարյանը, Ադո Ադոյանը, Ալեքսանդր Դուլգարովը, Անդրանիկ Հասրաթյանը, Բաբկեն Սիմոնյանը, Անանիա Բերբերյանը, Սամսոն Գաբրիելյանը, Վասիլ Մալխասյանը, Մելքոն Գրիգորյանը, Հայկ Զարգարյանը, Հայկ Ջալադյանը: Նրանց մեծ մասը վերականգնվեց ԽՄԿԿ շարքերում, հավատալով, որ զանգվածային բռնությունների համար մեղավոր են Ստալինը, Բերիան, Ամատունին, Գր.Հարությունյանը, բայց ոչ երբեք կուսակցությունը:

Հատկանշական է, որ խորհրդային 1-ին պարտիզանական գնդի հրամանատարները կալանքից ազատվեցին ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության որոշումով: 1955թ. մարտի 20-ին «Օգոնյոկ» հանդեսում հայտնվեց պարտիզանական գնդի գումարտակի նախկին հրամանատար Վ.Օհանյանի հրապարակումը խորհրդային պարտիզանների գործունեության մասին ֆրանսական դիմադրական շարժման մեջ: Նա մեկ ամիս անց, ապրիլի 22-ին նամակով դիմեց Ա.Միկոյանին, խնդրելով արդարացնել իր մարտական ընկերներին: Մայիսի 25-ին Միկոյանը հանձնարարեց այն ուղարկել ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության անդամներին: 1955թ. հունիսի 9-ին Կենտկոմի նախագահությունը, անդամների հարցման կարգով, որոշեց. «հանձնարարել ընկ. Ռուդենկոյին քննել սպաների եւ զինվորների գործերը, որոնց մասին գրում է ընկ. Օհանյանը, եւ իր առաջարկությունները ներկայացնել ԽՄԿԿ Կենտկոմ»[3]: 1955թ. հուլիսի 14-ին Ռու-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 56, գ. 3, թթ. 64-65:
[2] Նույն տեղում, թ. 68:
[3] Նորագույն պատմության ռուսական ՊԱ, ֆ. 3, ց. 8, գ. 250, թթ. 176-187.

դենկոն գրություն է ուղարկում ԽՄԿԿ Կենտկոմ, որտեղ ներկայացնելով պարտիզանական գնդի ստեղծման եւ գործունեության, ապա նաեւ ավելի քան 50 պարտիզանի դատապարտման հանգամանքները, առաջարկում է Ղազարյանի, Պետրոսյանի, Սինասյանի, Տիտանյանի եւ Յաղջյանի նկատմամբ քրեական գործը կարճել հանցակազմի բացակայության պատճառով: ԽՄԿԿ Կենտկոմի նախագահությունը օգոստոսի 16-ին ընդունում է հետեւյալ որոշումը. «Համաձայնել ԽՍՀՄ Գլխավոր դատախազ ընկ. Ռուդենկոյի 1955թ. հուլիսի 14-ի գրության առաջարկների հետ»[1]:

1950-ական թվերին ԽՍՀՄ-ում իրականացվեց մեծ մասշտաբի սոցիալական քաղաքականություն, որպիսին երկիրը դեռ չէր տեսել. օրենք թոշակների մասին, գյուղացուն անձնագրի հանձնում, մեծ թափով բնակարանային շինարարություն, «Աջափնյակները» դարձնելով համարյա ամեն քաղաքի բնորոշ հատկանիշ: Սակայն, այդ տարիներին մարդու, նրա սոցիալական ֆունկցիաների, կյանքում նրա տեղի մասին պատկերացումները դեռ մնում էին անփոփոխ: Երբ նա ընդամենը պետական քաղաքականությանը կից առարկա էր, ապա նրա տեղը հասարակական հարաբերությունների համակարգում չէր փոխվում, նա հասարակական կառավարման գործընթացներում պասիվ դերում էր: Եվ երբ մեկը համարձակվում էր նախաձեռնություն ցուցաբերել, ապա պետական մեքենան պատրաստ էր ճզմել նրան: Ասվածը հաստատելու համար ներկայացնենք մի օրինակ: 1955թ. ամռանը, ԽՄԿԿ 20-րդ համագումարի նախապատրաստման կապակցությամբ, Երեւանից ԽՄԿԿ անդամ, ինժեներ-շինարար Ասատուր Հովհաննիսյանը 50 էջից բաղկացած նամակ է ուղակում ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարին, ուր առաջարկում է համագումարում տալ երկրի աշխատավորության տնտեսական դրության ճիշտ եւ օբյեկտիվ վերլուծություն: Նամակի հեղինակը գրում է երկրի շատ ղեկավարների՝ ժողովրդից կտրված լինելու մասին: Նրանք չգիտեն մարդկանց իսկական կյանքը եւ դատում են դրա մասին աշխատասենյակներում կազմված շաբլոն զեկուցագրերի հիման վրա, երբ ստեղծվում է տոնական բարեկեցության մթնոլորտ: Իր առաջարկած բոլոր հարցերի գծով, որոնց վրա հարկ չհամարեցինք կանգ առնել, նամակի հեղինակն առաջարկում էր մինչեւ համագումարը անցկացնել լայն բանավեճեր[2]:

Մինչ նամակի եւ նրա հեղինակի ճակատագրին անդրադառնալը նշենք, որ այդպես մտածում էին շատերը: Այդ մասին են վկայում հանրապետության եւ երկրի բարձրագույն ղեկավարություններին ներկայացրած ՊԱԿ-ի խիստ գաղտնի ամփոփագրերը: Սեպտեմբերին Մոսկվայում ստացված նամակը հոկտեմբերին ուղարկվում է ՀԿԿ կենտկոմ՝ «բյուրոյում, հեղինակի ներկայությամբ, ըստ էության քննարկելու»[3] համար:

1955թ. հոկտեմբերի 21-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն քննարկում է ԽՄԿԿ անդամ Ա. Հովհաննիսյանի դիմումը[4]: Քննարկումը սղագրվել է: Նիստին ներկա է եղել նաեւ ԽՄԿԿ Կենտկոմի հրահանգիչ Կ.Ալեքսանդրովը: Սղագրությունը, որ բաղկացած է 30 էջից, ավելի շուտ հարցաքննություն է: Բերենք բնորոշ հատվածներ.

---

[1] Նորագույն պատմության ռուսական ՊԱ, ֆ. 3, ց. 8, գ. 285, թթ. 129-132:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 35, գ. 30, թթ. 101-151:
[3] Նույն տեղում, թ. 98:
[4] Նույն տեղում, գ. 23, թ. 32

«*ԸՆԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ* Կարդում է հատված դիմումից. «...Բանվորների աղքատիկ աշխատավարձը 1908թ եւ համեմատում եք 1940 եւ 1945 թվերի հետ: Որտեղի՞ց եք վերցրել այդ տվյալները:

ՊԱՏԱՍԽԱՆ Ես վերցրեցի Լենինի աշխատությունները եւ ստուգեցի: Ապա զարգացրի իմ մտքերը:

ԸՆԿ. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ Դուք ձգտում եք հաստատել ենթադրություններ, որ ամերիկյան բանվորներն ապրում են լավ, քան խորհրդային:

ՊԱՏԱՍԽԱՆ Այո, ճիշտ է:

ԸՆԿ. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ Մեզ հայտնի է, որ նրանք ապրում են կիսաքաղց: Խանութներում կա ապրանք, իսկ բանվորները գնել չեն կարողանում:

ԸՆԿ. ԹՈՎՄԱՍՅԱՆ Ուրեմն չե՞նք կառուցել /սոցիալիզմը- Ա. Վ./:

ՊԱՏԱՍԽԱՆ Ղեկավարները ասում են, որ մեզ մոտ լավ է: Արդյո՞ք մեզ մոտ բոլոր տեղերում լավ է:

ԸՆԿ. ԹՈՎՄԱՍՅԱՆ Նշանակում է սոցիալիզմ չենք կառուցել:

ՊԱՏԱՍԽԱՆ Ինչքան մեզ մոտ անտուն մարդիկ կան: Արդյո՞ք դա կարելի է անվանել սոցիալիզմ«:

ԸՆԿ. ՔՈՉԻՆՅԱՆ Դուք ինչպե՞ս կարող էիք վարկաբեկել Կենտկոմին եւ կառավարությանը: Դուք ինչպես կարող էիք գրել այդպիսի բառեր:

ԸՆԿ. ԹՈՎՄԱՍՅԱՆ Դուք ինչպե՞ս կարող էիք այնպիսի երկրի, որի նմանը չկա աշխարհում, զրպարտել, ասելով, որ սոցիալիզմը չի կառուցված:

ՊԱՏԱՍԽԱՆ Ես արտահայտել եմ այն, ինչ կա իմ հոգում: Եթե ես սխալվել եմ, դա վնաս չի հասցնի կուսակցությանը եւ կառավարությանը: Ես միայն արտահայտել եմ ներքին դրությունը»[1]:

Բերածը դիպուկ օրինակ է կոմկուսի ղեկավարների կույր հավատի ու դեմագոգիայի եւ շարքային կոմունիստի առողջ ու ազնիվ դատողության: ՀԿԿ Կենտկոմի բյուրոն որոշեց. «ԽՄԿԿ անդամ Ա.Ս.Հովհաննիսյանը ԽՄԿԿ Կենտկոմին հասցեագրված իր նամակում բերում է տրոցկիստական հարձակումներ ընդդեմ մեր կուսակցության, նրա միասնականության, զրպարտաբար հայտարարում է դեմոկրատական ցենտրալիզմի խախտման եւ կուսակցության գլխավոր գծի սխալականության մասին: Ներկայացնելով իր կեղծ ենթադրությունները, նա զրպարտաբար հայտարարում է մեր երկրում գնողականության անկման մասին: ՀԿԿ Կենտկոմի բյուրոյում Հովհաննիսյանը իրեն պահեց անպարկեշտ, ցուցաբերեց կոմունիստին եւ խորհրդային քաղաքացուն անհարիր վարմունք, պնդեց իր հակախորհրդային եւ զրպարտչական հայտարարությունները: Կենտկոմի բյուրոն որոշում է. հակախորհրդային, զրպարտչական եւ հակակուսակցական մտածելակերպի, կուսակցության եւ կառավարության ղեկավարությանը զրպարտելու համար Ասատուր Սեդրակի Հովհաննիսյանին հեռացնել ԽՄԿԿ շարքերից»[2]:

Բերված եզակի օրինակը բնորոշում է ժամանակի իրականությունը: Ստալինիզմը դեռ կար, մարդկանց կարելի էր կպցնել նաեւ «տրոցկիստի» պիտակ, շարքային կոմունիստը, խորհրդային քաղաքացին սեփական միտք եւ համոզմունք ունենալու իրավունք չուներ: Ավարտվում էր 1955թ., առջեւում էր 1956թ. 20-րդ համագումարով:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 35, գ. 30, թթ. 67-69:

[2] Նույն տեղում, գ. 23, թ. 32: Հետագայում, 1962թ. իր «սխալները» ընդունելուց հետո Ա. Հովհաննիսյանը վերականգնվեց ԽՄԿԿ շարքերում: Տես նույն տեղում, ց. 62, գ. 5922:

3. ԽՄԿԿ 20-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1956թ. փետրվարի 14-ին Կրեմլի մեծ դահլիճում 1436 պատգամավորների եւ 55 «եղբայրական կուսակցությունների» ներկայացուցիչների մասնակցությամբ բացվեց ԽՄԿԿ 20-րդ համագումարը: Հրավիրված լինելով կանոնադրական ժամկետից ութ ամիս շուտ՝ համագումարի խնդիրն էր ամփոփել Ստալինի մահից հետո տեղի ունեցած իրադարձությունները եւ երկրի զարգացման ուղիների բանավեճի արդյունքները: Համագումարը ավարտվեց Խրուշչովի «Անհատի պաշտամունքի եւ նրա հետեւանքների մասին» գաղտնի զեկուցումով: Իսկական ցնցում առաջացրած այդ զեկուցումը ընթերցվեց փակ դռների հետեւում, միայն համագումարի պատգամավորների համար եւ բացեց ստալինիզմի վերացման գործընթացի ուղին: Կենտկոմի հաշվետու զեկուցումը, որը համագումարին ներկայացրեց Ն.Խրուշչովը, անվիճելիորեն հաստատեց վերջին երեք տարիների գործընթացի փոփոխումը ինչպես միջազգային հարաբերությունների, այնպես էլ ներքին քաղաքականության ասպարեզում, խզումը ստալինյան կանխադրույթներից եւ ավանդույթներից: Իր ամբողջ խորությամբ հանդերձ այդ խզումը անսպասելի չէր, իսկ գործընթացի փոփոխությունը լրիվ հրաժարում նախկին պատկերացումներից: Թեպետ կուսակցության պատմության մեջ առաջ էլ էին եղել կտրուկ շրջադարձեր, որոնց ընթացքում վերանայվել էին անփոխարինելի թվացող սկզբունքներ, համագումարի սկիզբը եւ հաշվետու զեկուցումը ոչ մի ձեւով չէին կանխագուշակում այն, ինչ տեղի ունեցավ 10 օր անց: Որպես զեկուցման լեյտմոտիվ, հաստատելով իսկական լենինիզմի պաշտպանությունը, Խրուշչովը շեշտեց միջազգային լիցքաթափման կարեւորությունը, նշելով, որ դաշինքների բախումը ոչ միայն պատմական անհրաժեշտություն չէ, այլեւ ԽՍՀՄ արտաքին քաղաքականության գլխավոր գիծը պետք է դառնա խաղաղ գոյակցությունը: Նրա կարծիքով, նոր, սոցիալիզմի համար աշխարհում ուժերի բարենպաստ հարաբերակցության շնորհիվ «բուրժուական երկրներում» իշխանության գրավումը այսուհետ կարող է ընթանալ սահմանադրական եղանակով: Խրուշչովը այնուհետեւ հայտարարեց, որ սոցիալիզմի կառուցման սկզբունքները կարող են ձեւափոխվել, կախված ցանկացած երկրի կոնկրետ պայմաններից, որը նույնպես սկզբունքային խզում էր ստալինյան տեսությունից եւ պրակտիկայից: Այդպիսով, խորհրդային մոդելի պարտադրումը, որպես անփոխարինելի օրինակ, իր տեղը զիջեց սոցիալիզմին անցնելու ձեւերի բազմազանությամբ: Անցնելով ժողովրդական տնտեսությանը, զեկուցողը շարադրեց 6-րդ հնգամյա ծրագրի հիմնական ուղղությունները, որոնք որոշվել էին Խրուշչեւյան «տնտեսական ծրագրի համաձայն»: Ծրագրում հիմնական ուշադրությունը հատկացվեց գյուղատնտեսությանը, որի դրությունը մընում էր վտանգավոր, ինչպես նաեւ սպառման առարկաների արտադրությանը, բնակարանային շինարարությանը: Գաղափարախոսական-քաղաքական կտրվածքով Խրուշչովի զեկուցումը բավական զգուշավոր էր: ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարը սահմանափակվեց «Բերիայի բանդայի» հանցագործությունների կարճ հիշեցումով, եւ մի քանի քննադատական դիտողություններով Ստալինի, Մոլոտովի եւ Մալենկովի հասցեին /առանց անունները տալու/, թեեւ քողարկված ձեւով ընդունվում էր

մահացած առաջնորդի «վաստակը» «ժողովրդի թշնամիների» դեմ պայքարում[1]:

Վերականգնել եւ ամրապնդել լենինյան կոլեկտիվ ղեկավարման սկզբունքները՝ այսպիսին էր համագումարում ելույթ ունեցողների մեծամասնության քաղաքական լեյտմոտիվը: Ճառախոսները կոլեկտիվ ղեկավարությունը հակադրում էին անձի պաշտամունքին, որպես կանոն, փորձելով հնարավորինս խուսափել անուններից, առաջարկում էին հետեւյալ որոշումը՝ կուսակցության դեմոկրատացում, դադարել ապրել պատրանքների եւ կեղծիքի աշխարհում: Համագումարի բաց նիստերում «Ստալինի անձի պաշտամունքի եւ սոցիալիստական օրինականության խախտումների» դեմ ելույթ ունեցավ Ա.Միկոյանը, որը քննադատեց «ՀամԿ/բ/Կ պատմության համառոտ դասընթացի» սխալ հետեւություններն ու խեղաթյուրումները, հատկապես 1917թ. հեղափոխության եւ քաղաքացիական կռիվների հարցերում, ինչպես նաեւ 1952թ. Ստալինի առաջադրած տրոտսեսագիտական տեսության կապակցությամբ[2]:

Փետրվարի 21-ին ԽՍՀՄ կառավարության նախագահ Ն.Բուլգանինը ներկայացրեց համագումարի դիրեկտիվները 6-րդ հնգամյա ծրագրի վերաբերյալ: Փետվարի 25-ի առավոտյան փակ նիստում Ն.Խրուշչովը համագումարի պատգամավորների առջեւ հանդես եկավ «Անհատի պաշտամունքի եւ նրա հետեւանքների մասին» զեկուցումով: Զեկուցման ավարտից հետո որոշվեց մտքերի փոխանակություն չծավալել: Ն.Բուլգանինի առաջարկով, որը նախագահում էր նիստը, համագումարը ընդունեց «Անհատի պաշտամունքի եւ նրա հետեւանքների մասին« որոշումը, որը հրապարակվեց մամուլում, ինչպես նաեւ որոշում զեկուցման տեքստը կուսակցական կազմակերպություններին ուղարկելու մասին՝ առանց մամուլում հրապարակելու:

Զեկուցման մեջ Խրուշչովը ցույց տվեց «անձի պաշտամունքի« սկզբնավորումը, զարգացումը եւ հետեւանքները 20 տարիների ընթացքում: Ինչպես եւ հաշվետու զեկուցման մեջ, այստեղ եւս Խրուշչովը կոչ էր անում հավատարիմ մնալ Լենինին, իսկ կոլեգիալության սկզբունքին լենինյան հավատարմության մանրամասն նկարագրությունը հիմք ծառայեց Ստալինի կողմից լենինյան ավանդույթների խախտումը մերկացնելու համար: Զեկուցումից համագումարի պատգամավորներն իմացան «Լենինյան կտակի» գոյության մասին, որպիսին մինչ այդ ժխտել էր: Զեկուցման մեջ վերլուծվեց Ստալինի կողմից դեմոկրատական ցենտրիզմի սկզբունքի խեղաթյուրումը, պատմվեց զտումների եւ «հետաքննության ապօրինի մեթոդների» մասին, որոնց օգնությամբ հազարավոր կոմունիստներից եւ մյուսներից կորզվել էին ամենաանհավատալի խոստովանություններ: Պսակազերծ անելով Ստալինի մասին հյուսված առասպելը, որպես Լենինի գործի «ժառանգորդի» եւ «հանճարեղ շարունակողի», զեկուցողը հարձակվեց նաեւ «Ստալին զորավարի» առասպելի վրա, կործանեց գեներալիսիմուսի կերպարը, ներկայացնելով նրա անվճռական ու անիրազեկ մարդու կերպարը, որը պատասխանատու է 1941-42թթ. կործանիչ պարտությունների համար: Զեկուցողը խոսեց նաեւ Ստալինի պատասխանատվության մասին՝ կովկասյան ժողովուրդների աքսորի, Բ.Տիտոյի հետ վեճի, կեղծ 1949թ. /«Լենինգրադյան գործ»/, 1951թ. /«Սինգրելական

[1] «Սովետական Հայաստան», 1956, 15 եւ 16 փետրվարի:
[2] Նույն տեղում, 21 փետրվարի:

գործ»/ եւ 1953թ. /«Բժիշկ-մարդասպանների գործ»/ դավադրությունների հորինման գործում: Խրուշչովի զեկուցումը գծագրեց Ստալինի նոր կերպար՝ բռնակալ, օրեցօր իր պաշտամունքը ստեղծող, անիրազեկ, ոչ մեկին լսել չցանկացող, «ժողովրդից կտրված» եւն.: Զեկուցումը հագեցած է փաստարկներով, որոնք շփոթեցրին լսարանին: Ընդհանուր առմամբ զեկուցումը ստալինիզմի դատապարման հարցում կառուցված էր ընտրովի սկզբունքով, մակերեսային էր եւ հարցականի տակ չդրեց 1917թ. կուսակցության կողմից իրականացրած ոչ մի շրջադարձ: Ընտրովի բնույթը դրսեւորվեց նրանում, որ լենինյան գծից ստալինյան «շեղումը» որոշվեց 1934թ., որը սխալների եւ հանցագործությունների շարքից բացառում էր կոլեկտիվացումը, 1932-33թթ. սոսկալի սովը եւ ինդուստրացման հետ կապված ծայրահեղությունները: Այդ մասին է վկայում նաեւ զեկուցման մեջ «անձի պաշտամունքի» զոհերի ընտրությունը, երբ այդ շարքում դասվեցին միայն կոմունիստները, որոնք հայտնի էին իրենց պարզորոշ ստալինյան կողմնորոշմամբ, բայց ոչ օպոզիցիոներները եւ հասարակ քաղաքացիները: Անօրինական բռնությունների շրջանակները նեղացնելով միայն Ստալինի անձնական դիկտատուրայի զոհ կոմունիստներով, զեկուցումը շրջանցեց հասարակության առջեւ ամբողջ կուսակցության պատասխանատվության մասին կենտրոնական հարցը[1]:

Խրուշչովը մերժելով ստալինյան ռեժիմի ծայրահեղությունները, 20-րդ համագումարում, դեռ գտնվում էր ստալինյան շատ գաղափարների գերության մեջ: Կատարելով մեկ քայլ առաջ ողբերգական իրադարձությունների բացատրության մեջ՝ նա նույն պահին, հրվում էր հետ: Եվ ինչպես նշում է Ֆ.Բուռլացկին. «չնայած իր ամբողջ արմատականությանը, նա չընդունեց Պալմիրո Տոլյատիի քննադատական դիտողությունը, երբ նա խորհուրդ էր տալիս անհատի պաշտամունքի արմատները որոնել ստեղծված համակարգի մեջ, թեեւ Տոլյատին, իհարկե, հարց չէր դնում սոցիալիզմը կապիտալիզմով փոխարինելու մասին, այլ նկատի ուներ անձնական իշխանության ռեժիմի բուն փոփոխությունը»[2]:

Համագումարում ոչնչով աչքի չընկնող ելույթ ունեցավ նաեւ Ս.Թովմասյանը: Խոսելով «Նոյյան տապան» փնտրող ամերիկայն հետախույզների, Հայաստանի տարածքը լուսանկարող ամերիկայն օդապարիկների մասին, նա լռությամբ անցավ հանրապետությանը հուզող մի շարք հարցերի կողքով, ինչպես, օրինակ, Աղստաֆա-Երեւան երկաթգծի անհրաժեշտությունը, որը հետո, հանրապետությունում բազմիցս ներկայացվեց նրան՝ որպես մեղադրանք: Մարտին ինչպես մաբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում սկսեցին քննարկել ԽՄԿԿ 20-րդ համագումարի որոշումները: Կուսկազմակերպություններում սկսեցին ընթերցել Խրուշչովի «գաղտնի զեկուցումը»: ՀԿԿ Կենտկոմի բյուրոն 1956թ. մարտի 7-ին որոշեց համագումարի արդյունքների քննարկում կազմակերպել: Մարտի 12-ին հրավիրվելու էր հանրապետության եւ Երեւան քաղաքի կուսակցական ակտիվի ժողով, քաղաքներում եւ շրջաններում՝ կուսակտիվի ժողովներ, իսկ սկզբնական կազմակերպություններում՝ դռնփակ ժողովներ[3]:

Հանրապետության ակտիվի ժողովը ընթացավ նախորդ տարիների լավագույն ավանդույթների ոգով: Կենտկոմի առաջին քարտուղար

---

[1] "ИЗВЕСТИЯ ЦК КПСС" , 1989, N 3, с. 128- 166.

[2] "Литературная газета", 1988, 24 февраля.

[3] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 36, գ. 31, թ. 156:

Ս.Թովմասյանը ներկայացրեց համագումարի արդյունքները, ընթերցեց առանձին հատվածներ Խրուշչովի զեկուցումից, ավելացրեց, որ «կուսակցության եւ խորհրդային ժողովրդի ոխերիմ թշնամի Բերիան, լինելով Անդրերկրկոմի քարտուղարի պաշտոնում եւ այնուհետեւ ՆԳԺԿ-ում, կուրս էր վերցրել ֆիզիկապես եւ բարոյապես ոչնչացնել ՀԿԿ կադրերին: 1934-38թթ. Հայաստանում այնպիսի վիճակ էր ստեղծվել, որ ղեկավար կադրերից միայն առանձին մարդիկ դուրս մնացին բռնությունից: Բռնության ենթարկվեցին նաեւ մարդիկ, ովքեր երբեւէ աշխատել էին Հայաստանում, բայց այդ ժամանակ աշխատում էին միության տարբեր հանրապետություններում եւ մարզերում»: Նաեւ ավելացնում էր, որ 1937թ., լինելով Վրաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար, Բերիան ցուցում էր տալիս Հայաստանի ղեկավարությանը այս կամ այն մարդուն ձերբակալելու մասին եւ բերում է ճարտարագետ Հովսեփ Տեր-Աստվածատրյանի օրինակը[1]: Այսքանով սպառելով «անհատի պաշտամունքի» խնդիրը, Ս.Թովմասյանն անցնում է տնտեսության խնդիրներին: Եվ եթե ժողովում չլիներ Արտավազդ Եղիազարյանի ելույթը, դժվար է կռահել, որ քննարկվում էր հատկապես 20-րդ, եւ ոչ թե մի այլ համագումարի արդյունքների հարցը: Այդ մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ երբ Ա.Եղիազարյանը խորանում էր Հայկոմկուսում իրականացված բռնությունների եւ դրանցում Ստալինի մեղսակցության մեջ, Ս.Թովմասյանն ընդհատում է նրան[2]: Եվ բնական է, որ ժողովի բանաձեւում որեւէ խոսք չէր լինելու բռնությունների եւ «անհատի պաշտամունքի« մասին[3]:

Պատկերը փոխվեց, երբ մի քանի օր անց տեղի ունեցան Երեւանի շրջանային ակտիվի ժողովներ: Կիրովյան շրջանի կուսակտիվի ժողովին մասնակցում էին նաեւ ԳԱ ինստիտուտների եւ բուհերի բազմաթիվ աշխատողներ: Ելույթ ունեցողներն առաջ քաշեցին նաեւ հարցեր, որոնք ինչպես ԽՄԿԿ 20-րդ համագումարում, այնպես էլ հանրապետության ակտիվի ժողովում չէին շոշափվել, եւ անսպասելի էին հանրապետության ղեկավարության համար: Այս եւ հետագա ժողովներում էական նշանակություն էին տալիս կոլտնտեսային շինարարության, կուսակցական կյանքի, ընտրական եւ դատական հիմակարգի, ազատ մամուլի, ազգային քաղաքականության եւ այլ հարցերի: Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի ելույթում բարձրացվեց համակարգի հարցը: Նա փորձեց բացատրել, որ խնդիրը «Ստալինի անձնավորության մեջ չէ, այլ նրա սահմանած ղեկավարության մեթոդների ու համակարգի մեջ է»: Խոսելով Ստալինի ղեկավարությամբ իրականացրած «բռնի կոլեկտիվացման մասին», նա եզրակացնում է, որ «խոսելով Ստալինի թույլ տված սխալ քաղաքականության մասին, չի կարելի կենտրոնացնել կրակը Ստալինի անձնավորության դեմ: Ոչ թե Ստալինի անձնավորությունն է, որ պետք է զբաղեցնի, այլ այն երեւույթը, որը մենք իրավունք ունենք որակել «ստալինիզմ» տերմինով: Այդ ստալինիզմը մի երեւույթ է, որը մեր պարտիական ղեկավարության մեջ վերից վար շատ անգամ առատ աղբյուր էր դառնում խոշոր խեղաթյուրումների համար»[4]: Անդրադառնալով ԽՍՀՄ ընտրական համակարգին, նա շեշտում է, որ «մեզանում ոչ ոքի համար գաղտնիք չէ,

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 36, գ. 46, թթ. 26-27:
[2] Նույն տեղում, թ. 86:
[3] Նույն տեղում, թթ. 115-117:
[4] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 88, ց. 17, գ. 67, թթ. 106-109:

որ այդ ընտրական սիստեմը շատ հեռու է ընտրական դեմոկրատական սիստեմ լինելուց»: Նա նշեց նաեւ, որ ստալինյան հանցագործությունները սկսվել են ավելի վաղ, քան 1934թ. եւ որ պետք է Ռիկովի եւ այլ հին կոմունիստների գործերը եւս վերանայվեն: Փաստորեն, Ա.Հովհաննիսյանի ելույթում բարձրացվեցին հարցեր, որոնք չկարողացավ կամ չհաստատեց կատարել Ն.Խրուշչովը: Կիրովյան շրջանի ժողովում ելույթ ունեցան նաեւ հին կոմունիստներ Արմեն Անանյանը, Մամբրե Գարագաշը, համալսարանի դասախոս Ռաֆիկ Մովսիսյանը, ՀԱՄԽ-ի աշխատակից Հայրիկ Մուրադյանը: Նրանք խոսեցին հայոց լեզվի դերի բարձրացման, Աղստաֆա-Երեւան երկաթգծի կառուցման, Ստալինին պատասխանատվության ենթարկելու, հանրապետության նոր ղեկավարության հին մեթոդներով աշխատելու եւ այլ հարցերի մասին:

Հայաստանի գրողների կուսկազմակերպության ժողովում (ապրիլի 4-9) Բաղիշ Հովսեփյանը, Սեւակ Արզումանյանը, Պարգեւ Մարտիրոսյանը, Նաիրի Զարյանը, Հրաչյա Քոչարը կարեւոր նշանակություն էին տալիս պատգամավորների ընտրության /Գերագույն խորհրդում դեպուտատները ոչ թե ընտրվում են, այլ նշանակվում/, «Թուրքիայում կազմակերպված հայերի ջարդերի», հայոց լեզվի, գյուղացիության ծանր եւ կիսաքաղց վիճակի, ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության անդամների պատասխանատվության, հարկային քաղաքականության, Ղարաբաղը, Նախիջեւանը, Ախալքալակը Հայաստանին միացնելու եւ շատ այլ հարցերի: Ն.Զարյանը «Ստալինի չարագործությունների» նկատմամբ ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության վերաբերմունքի մասին նշում է. «Ո՞վ կարող է հավատալ, որ նրանք չէին տեսնում այդ բոլորը: Ուրեմն, ինչով բացատրել, որ նրանք, այնուամենայնիվ, հանդուրժում էին: Վա՞խից: Բայց իրավունք ունի՞ վախկոտ լինել գործիչը»[1]:

Գրողների միության կուսկազմակերպության ժողովում Ն.Զարյանը եւ Հր.Քոչարը մեղանչում էին, երբ 1937-38թթ. Ա.Բակունցի եւ մյուսների հասցեին գրած իրենց հոդվածները բացատրում էին որպես «ժամանակի անառողջ մթնոլորտի» արդյունք: Ս.Արզումանյանն առաջ է քաշում Հայաստանից դուրս հայերի մշակութային կյանքի վիճակի հարցեր եւ նշում, որ փակվել են հայկական դպրոցները, մամուլը, թատրոնը, հարյուր հազարավոր հայեր ձուլվել են՝ խորհրդային իշխանության տարիներին եւ ստալինյան «ազգային» քաղաքականության շնորհիվ[2]:

Պետհամալսարանի կուսկազմակերպության ժողովում դասախոսներ Աշոտ Բաբախանյանը, Ռաֆիկ Մովսիսյանը, Պողոս Պողոսյանը, Մարտիրոս Կյուրեղյանը, Ռաֆիկ Հարությունյանը առաջ քաշեցին մամուլի ազատության, Թուրքիայի հայկական տարածքների, ներկուսակցական դեմոկրատիայի, Խրուշչովի զեկուցման հակասությունների /Ստալինի վնասակար գործունեության փաստի եւ նրան որպես խոշոր մարքսիստ գնահատելու միջեւ/ հարցերը: Ա.Բաբախանյանը հայտարարեց, որ անձի պաշտամունքը խորհրդային իրականությանը հատուկ օբյեկտիվ պայմանների արդյունք է[3]:

ՆԳՆ կուսկազմակերպության ժողովում Արտեմ Կարապետյանն իր ելույթում ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության անդամներին եւս մեղա-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1346, ց. 1, գ. 73, թ. 114:
[2] Նույն տեղում, թ. 78:
[3] Նույն տեղում, ֆ. 116, ց. 1, գ. 415, թ. 29:

դրեց «անհատի պաշտամունքի» ստեղծման եւ ամրապնդման մեջ: Նշելով, որ նրանք երկար տարիներ գովերգել են Ստալինին, ավելացրեց, որ «մեր բոլոր ղեկավար ընկերները՝ Խրուշչովը, Մալենկովը, Բուլգանինը, Վորոշիլովը, Մոլոտովը եւ մյուսները վախեցել են, թույլ են տվել մորթապաշտություն, վախկոտություն, փոքրոգիություն, նրանք պետք է պատասխանատվություն կրեն«[1]:

Նույնպիսի հարցեր արծարծվեցին նաեւ ԳԱ պատմության ինստիտուտի, կոնսերվատորիայի, մանկավարժական եւ բժշկական ինստիտուտների, թ.16 դպրոցի, պետհրատի, Լենինականի մանկավարժական ինստիտուտի եւ այլ սկզբնական կուսակցական կազմակերպությունում:

Շուտով որոշում ընդունվեց Խրուշչովի զեկուցման քննարկումները դադարեցնելու մասին: Հիմնական պատճառը, մեր կարծիքով, քննադատության լայն եւ ուժեղ թափն էր: Այդ տարիներին նոր քաղաքական կուլտուրան դժվարությամբ էր ձեւավորվում եւ բաց հասարակական կարծիքի ֆենոմենը անսովոր էր: Ինչպես արձագանքել ներքեւից եկող նախաձեռնությանը եւ որտեղ է «թույլատրելիության» սահմանը: Կուսակցությունը դեռ չէր մշակել այս ուղղությամբ իր քաղաքականությունը: ԽՄԿԿ ազդեցությունը այս հարցում կարող էր լինել երկակի՝ կամ հասարակական ակտիվությունը ուղորդել դեպի ընդունած քաղաքական գծի խորացումը եւ պաշտպանությունը, կամ գնալ նախաձեռնության սանձահարման ճանապարհով՝ ղեկավարվելով «որպեսզի ոչինչ չպատահի» սկզբունքով: 1956թ. կուսակցությունն ընտրեց երկրորդ ճանապարհը, որը կարելի է ցույց տալ Հայկոմկուսի օրինակով: Ապրիլի 5-ին լույս տեսավ «Պրավդայի» խմբագրական հոդվածը, որտեղ ասված է. «Միեւնույն ժամանակ չի կարելի անցնել այնպիսի փաստերի կողքով, երբ առանձին նեխած տարրեր փորձում են քննադատությունն ու ինքնաքննադատությունն օգտագործել ամեն կարգի զրպարտիչ հերյուրանքների եւ հակակուսակցական պնդումների համար: Առանձին նեխած տարրեր անհատի պաշտամունքը դատապարտելու պատրվակով ճգնում են կասկածի տակ դնել կուսակցական քաղաքականության ճշմարտությունը: Խորհրդային երկրի պատմական զարգացման ամբողջ ընթացքը հերքում է այդօրինակ հերյուրանքները, քարը քարի վրա չի թողնում անպետք միջոցներով կատարվող այդ կարգի փորձերը:Կուսակցության քաղաքականությունը, նրա պատմության բոլոր ժամանակաշրջաններում, եղել եւ մնում է լենինյան քաղաքականությունը: Այդ քաղաքականությունը կուսակցությունը, նրա Կենտրոնական կոմիտեն մշակել են սոցիալիզմի համար մղած պայքարի ընթացքում, այն մարմնավորում է կուսակցության կոլեկտիվ իմաստությունը»[2]:

Հիմք ընդունելով վերոհիշյալը, ՀԿԿ Կենտկոմը գործի է անցնում: Ժողովներում Կենտկոմի ներկայացուցիչներից եւ շրջկոմներից ստացված առաջին զեկուցագրերի հիման վրա ՀԿԿ Կենտկոմի բյուրոն քննարկեց «Երեւանի պետական համալսարանի կուսակցական ժողովում հակակուսակցական ելույթների մասին» հարցը: Ընդունած որոշման արձանագրային մասում նշված է. «Առանձին կուսկազմակերպություններում տեղի են ունեցել ծավալված քննադատության եւ ինքնաքննադատության օգտագործում հակակուսակցական ելույթների համար ընդդեմ կուսակցու-

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 36, գ. 72, թ. 57:
[2] "Правда", 1956, 5 апреля.

թյան գլխավոր գծի եւ քաղաքականության ու զրպարտչական արտահայտություններ խորհրդային եւ կուսակցական մարմինների հասցեին: Այսպես, օրինակ, Երեւանի պետական համալսարանի մի շարք կոմունիստներ իրենց ելույթներում թույլ են տվել բացահայտ հակակուսակցական արտահայտություններ ներկուսակցական դեմոկրատիայի, խորհրդային ընտրական համակարգի, կուսակցության եւ խորհրդային պետության ազգային եւ արտաքին քաղաքականության սկզբունքների, ԽՄԿԿ 20-րդ համագումարի որոշումների հասցեին»[1]:

Ընդունած որոշմամբ, որ բավականին խիստ է, աշխատանքից ազատվում է համալսարանի կուսկոմիտեի քարտուղարը «անսկզբունքայնության եւ լիբերալիզմ ցուցաբերելու համար»: Հանձնարարվում է Կիրովյան շրջկոմին անցկացնել համալսարանի կուսկոմիտեի նոր ընտրություն, քննարկել «հակակուսակցական հարձակում թույլ տված» երեք դասախոսների հարցը: Երեւանի քաղկոմին եւ քաղաքային շրջկոմներին առաջարկվում է քննարկել ժողովներում հակակուսակցական թշնամական եւ զրպարտչական ելույթներ ունեցած կոմունիստների հարցը, վճռականորեն կասեցնել նմանատիպ երույթները[2]:

Ապրիլի 20-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն վերադառնալով ԽՄԿԿ 20-րդ համագումարի որոշումների քննարկման արդյունքներին՝ նշում է, որ «ժողովները մի անգամ եւս ցույց տվեցին Հայաստանի կուսկազմակերպությունների համախմբվածությունը ԽՄԿԿ լենինյան կենտրոնական կոմիտեի շուրջը»: Վերջին որոշումը պարզում է նաեւ, որ մի շարք կուսկազմակերպություններում (Գրողների միություն, Պետհամալսարան, Պետհրատ, Լենինականի մանկավարժական ինստիտուտ, Կիրովյան շրջանի կուսակտիվի ժողով) ԽՄԿԿ 20-րդ համագումարի արդյունքների քննարկումը անցել է «ցածր մակարդակով»: Ժողովներում «խորությամբ չեն քննարկվել համագումարի արդյունքները, անբավարար է մոբիլիզացվել կոմունիստների ուշադրությունը համագումարի առաջադրած կոնկրետ խնդիրների իրագործման համար»: Միաժամանակ, նշվում է, որ Երեւանի քաղկոմը եւ մի քանի շրջկոմներ ժամանակին չեն արձագանքել ելույթներին, չեն ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ «սանձարձակ անձանց» կտրուկ հակահարված տալու եւ կուսկազմակերպություններում կարգապահությունը ապահովելու համար[3]:

Պարզ է դառնում, որ շարքային կոմունիստները իրավունք չունեին դուրս գալ որոշակի սահմաններից: Մնում է փաստել, որ 20-րդ համագումարի սահմանած «ազատությունը» թվացյալ էր: Կենտկոմի բյուրոն քաղկոմներին եւ շրջկոմներին հանձնարարում է քննարկել «կուսակցության գլխավոր գծի դեմ հակակուսակցական հարձակումներ թույլ տված» կոմունիստների կուսակցականության հարցը: Բյուրոն ինքն էլ ցույց է տալիս օրինակ: Բյուրոյի նիստում քննարկվեց նաեւ «ՀԿԿ Կենտկոմի եւ առանձին ղեկավար աշխատողների դեմ առաջադրած մեղադրանքների ստուգման արդյունքների մասին« հարցը: Կուսակցական եւ Կիրովյան շրջանի ակտիվի ժողովներում սուր քննադատության էին ենթարկվել Ս.Թովմասյանը եւ Շ.Առուշանյանը: Նրանց հասցեին հնչել էին մեղադրանքներ առաջինի համար՝ ՆԳՆ-ում եւ երկրորդի համար՝ կուսկոլեգիայում,

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 36, գ. 32, թ. 105:
[2] Նույն տեղում, թ. 108:
[3] Նույն տեղում, թ. 111

այն բանի համար, որ նրանք 1938-39թթ. դարձել են բռնությունների մասնակից, հայրենակցության սկզբունքով են կադրեր /գորիսցի-սիսիանցի/ ընտրել եւ առաջ քաշել, ճնշել են քննադատությունը: Կենտկոմի բյուրոն գտավ, որ Ս.Թովմասյանի եւ Շ.Առուշանյանի հասցեին մեղադրանքները «մտացածին են եւ զրպարտչական»: Ա.Բաբախանյանը եւ Հ.Վարդանյանը բյուրոյի որոշմամբ հեռացվեցին կուսակցությունից «մանրբուրժուական սանձարձակության եւ նողկալի կեղծիքի» համար, իսկ Ռ.Մովսիսյանը ստացավ խիստ նկատողություն «զրպարտության եւ ոչ կուսակցական ելույթի համար»[1]: Իրագործելով Կենտկոմի որոշումները, ՀԿԿ Երեւանի եւ Լենինականի քաղկոմները, Սպանդարյանի, Միկոյանի եւ Կիրովյան շրջկոմները ապրիլ-մայիս ամիսների ընթացքում կուսակցությունից հեռացրին Բաղիշ Հովսեփյանին, Սեւակ Արզումանյանին, Պողոս Պողոսյանին, Արտեմ Կարապետյանին, նկատողություններ հայտարարվեցին Սուրեն Շլեփչյանին, Նիկոլայ Շահնազարյանին, Համո Գասպարյանին, Խ.Գյուլբեկյանին, Աշոտ Գալստյանին, Պարգեւ Մարտիրոսյանին, Սուրեն Այվազյանին, Մարտիրոս Կյուրեղյանին, Հարություն Քոթանջյանին, Մնացական Աթոյանին, Ռաֆիկ Հարությունյանին[2]:

Ահա այսպիսի մեթոդով լռեցվեց նախաձեռնության եւ միտքը բարձրաձայն արտահայտելու առաջին փորձը: Նշենք, որ մի քանի տարի անց կուսակցությունից հեռացվածների մեծ մասը վերականգնվեցին ԽՄԿԿ շարքերում[3]:

Սկզբնական կուսակցական կազմակերպություններում ԽՄԿԿ 20-րդ համագումարի արդյունքների քննարկման խնդրին անդրադարձավ ՀԿԿ Կենտկոմի 1956թ. մայիսյան պլենումը: «Կուսակցության գլխավոր գծի դեմ հակակուսակցական ելույթ» ունեցողները պլենումում որակվեցին «մերժված անձինք», «հայ ժողովրդի կատաղի թշնամիների՝ դաշնակների ծայնափողեր», իսկ նրանց ելույթները՝ «մաքուր դաշնակցականություն»[4]:

Պլենումին նախորդել էր Երեւանի պետհամալսարանի կուսկազմակերպության դռնփակ ժողովը, որը քննարկել էր ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի 1956թ. ապրիլի 7-ի որոշումը համալսարանի կուսկազմակերպության մասին: Ժողովում նշվեց, որ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն որոշումն ընդունել է հապճեպորեն, որ «չափազանց խիստ են ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի կողմից պարտիական կազմակերպության նախորդ ժողովին տված գնահատականը, ինչպես նաեւ կոմունիստների ելույթներում թույլ տված սխալների առանձին որակումներն ու մեղադրանքները»: Որոշման մեջ նշված էր, որ 20-րդ համագումարի արդյունքների քննարկման ժամանակ չեն եղել հակակուսակցական եւ հակախորհրդային ելույթներ, չի եղել հարձակում եւ զրպարտանք կուսակցության գլխավոր գծի քաղաքականության դեմ: Մի շարք կոմունիստներ իրենց ելույթներում եւ առաջարկություններում միայն թույլ են տվել «քաղաքական առանձին սխալներ, չկշռադատված մտքեր եւ արտահայտություններ»[5]:

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 56, գ. 32, թթ. 115-116:
[2] Նույն տեղում, ց. 36, գ. 72, թ. 39-42:
[3] Նույն տեղում, ց. 61, գգ. 3246, 6401, ց. 62, գգ. 627, 5696, 7391:
[4] Նույն տեղում, ց. 36, գ. 15, թ. 25:
[5] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 116, ց. 1, գ. 416, թ. 240:

ԽՄԿԿ 20-րդ համագումարը առաջ քաշելով միջազգային ասպարեզում խաղաղ գոյակցության սկզբունքը, միաժամանակ չհրաժարվեց, ընդհակառակը, շեշտեց գաղափարախոսության բնագավառում անգիջում պայքարի անհրաժեշտությունը: Ուստի 50-ական թվերի կեսերին մեծ աշխատանք կատարվեց խորհրդային քաղաքացիներին «բուրժուական վնասակար քարոզչության ազդեցությունից» զերծ պահելու, առաջին հերթին՝ օտարերկրյա ռադիոկայանների հաղորդումների խլացման ուղղությամբ: Հայերեն լեզվով առաջինը եթեր էր դուրս եկել «Ամերիկայի ձայն» ռադիոկայանը՝ 1951թ. հուլիսի սկզբին[1]: 1954թ, հունվարին Երևանում խլացվում էր 14 ռադիոալիք, իսկ մյուս վայրերում՝ 7: 1955թ. համապատասխան տվյալներն էին՝ 34 եւ 17, իսկ 1958թ. ամբողջ հանրապետության տարածքում խլացվում էր 40 «թշնամական» ռադիոալիք: Այդ նպատակով Երեւանի մոտ գործարկվեց հզոր ռադիոկենտրոն[2]:

1956թ. շարունակվում էին բռնադատվածների արդարացման աշխատանքները: ԽՄԿԿ 20-րդ համագումարի օրերին՝ ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ս.Թովմասյանը ԽՄԿԿ Կենտկոմ ներկայացրեց 1949թ. Ալթայ աքսորված բոլոր քաղաքացիներին արդարացնելու առաջարկություն[3]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1956թ. մարտի 24-ին ընդունեց հրամանագիր քաղաքական, պաշտոնական եւ տնտեսական հանցագործություններ թույլտված անձանց գործերի վերանայման մասին, որով բանտերից ազատվում էին այն հանցագործները, որոնք պետական եւ հասարակական վտանգ չէին ներկայացնում: Գործերի վերանայման համար ստեղծվեցին հանրապետական հանձնաժողովներ: ՀԽՍՀ հանձնաժողովը ղեկավարում էր Կենտկոմի քարտուղար Յա.Զարոբյանը[4]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն ուղարկած հաշվետվությունում նշվում է, որ 1956թ. հուլիսի 4-ի դրությամբ հանձնաժողովը վերանայել է 431 գործ եւ բանտերից ազատվել կամ արդարացվել է 317 մարդ[5]:

Սակայն միշտ չէ, որ պետանվտանգության մարմինները քաղաքացիների արդարացման մասին դիմումներին արձագանքում էին ժամանակին: 1955թ. սկզբին ՀԿԿ Կենտկոմը ՊԱԿ-ին հանձնարարեց ըստ էության պարզել խորհրդային պարտիզանական գնդի հարցը: Վեց ամիս անց՝ հունիսին, ՊԱԿ-ի ղեկավարությունը ՀԿԿ Կենտկոմ ներկայացրեց եզրակացություն, որը ՀԽՍՀ ՊԱՆ նախկին ղեկավարության մեղադրական եզրակացության մեխանիկական կրկնությունն էր: ՀԿԿ Կենտկոմի բյուրոյում 1958թ. փետրվարին ստեղծվում է ՀԽՍՀ ՊԱԿ-ի՝ անմեղ դատապարտված քաղաքացիների արդարացման ուղղությամբ տարվող աշխատանքները ստուգող հանձնաժողով[6]: Հանձնաժողովը պարզեց, որ «ՊԱԿ-ի ղեկավարության կողմից անհրաժեշտ կազմակերպական աշխատանքի եւ պահանջկոտության բացակայության պատճառով քննչական բաժան-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 31, գ. 68, թ. 107:
[2] Նույն տեղում, ց. 34, գ. 59, թթ. 78-80:
[3] Նույն տեղում, ց. 36, գ. 52, թ. 43:
[4] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 207, ց. 10, գ. 105, թթ. 1-3:
[5] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 36, գ. 53, թ. 22:
[6] Նույն տեղում, ց. 126, գ. 1, թ. 5:

մունքը շատ գործերի գծով արխիվային-քննչական գործերի քննարկումն ուշացնում է մեկ տարուց ավել»[1]:

Ստուգումների ժամանակ 1956թ. վարույթում էր գտնվել 887 մարդու 126 գործ, իսկ 1957թ. 456 մարդու 105 գործ:Հանձնաժողովը նշում է, որ «ՊԱԿ-ի աշխատանքների լուրջ թերություններից է արդարացման վերաբերյալ մերժման անհիմն, ոչ ճիշտ եզրակացությունների մեծ տոկոսը: ՊԱԿ-ի քննած գործերից 1579 մարդու վերաբերյալ արդարացման մասին եզրակացություն տրվել է 642 մարդու վերաբերյալ, մերժվել է 796 մարդու արդարացում: ՊԱԿ-ի կողմից 1957-58թթ. 532 մարդու վերաբերյալ մերժված գործերից ԽՍՀՄ եւ հանրապետության դատախազությունները բողոքարկել են 259 մարդու վերաբերյալ, որի շնորհիվ անհիմն դատապարտված մարդիկ արդարացվել են: Կենտկոմի հանձնաժողովն ուսումնասիրում է դատախազության եւ ՊԱԿ-ի կողմից մերժված 169 մարդու 71 գործ եւ հանձնաժողովի 5 նիստում որոշում է ընդունում բողոքարկել 36 մարդու վերաբերյալ գործերի դադարեցումը, 71 մարդու վերաբերյալ մերժումը համարում է ճիշտ, իսկ 14 գործ 72 մարդու վերաբերյալ՝ ուղարկում է կրկնակի քննության:

Իսկ ովքեր էին մերժվածները, որոնց մասին հանձնաժողովը ընդունել էր «քաղաքական նկատառումներով արդարացման մերժումը համարել ճիշտ» շաբլոն որոշումը: Ուսումնասիրությունից պարզվեց, որ դրանք հիմնականում նախկին դաշնակցականներ եւ տրոցկիստներ էին:

Ժամանակ էր պետք, եւ դա ձգվեց մինչեւ 1988թ., որպեսզի դաշնակցականը եւ տրոցկիստը նույնպես արդարացվի իրենց չգործած հանցանքի համար: Եթե 1954-55թթ. ՀԿԿ Կենտկոմը կուսակցության մեջ վերականգնում էր բանտերից եւ աքսորից վերադարձած ԽՄԿԿ նախկին անդամների, ապա 1956թ. սկսվեցին հետմահու կուսակցության մեջ վերականգնել նաեւ 1937-38թթ. գնդակահարված կամ աքսորում մահացած կոմունիստներին: ԽՄԿԿ Կենտկոմն արդարացրեց եւ կուսակցության մեջ հետմահու վերականգնեց Ա.Խանջյանին եւ Ս.Տեր-Գաբրիելյանին[2], իսկ ՀԿԿ Կենտկոմը Հակոբ Աթոյանին, Լեւոն Արիսյանին, Աբրահամ Գուլոյանին, Մուշեղ Դանիելյանին, Ռուբեն Դաշտոյանին, Միքայել Ենգիբարյանին, Արամայիս Երզնկյանին, Ներսիկ Ստեփանյանին, Դրաստամատ Տեր-Սիմոնյանին, Պետիկ Թորոսյանին, Ալեքսանդր Շահսուվարյանին եւ շատ ուրիշների: Սակայն այդ աշխատանքը մինչեւ վերջ չհասցվեց: ՀԿԿ Կենտկոմի բյուրոն չանդրադարձավ այն կոմունիստների հարցին, որոնց համար հարազատներ չունենալու բերումով կամ այլ պատճառով դիմում չէր հանձնվում: Սակայն այն չափով, ինչ չափով անցնում էր 20-րդ համագումարի հասցրած շփոթությունը եւ հասարակության մեջ աճում էր բազմաթիվ հարցերի պատասխան ստանալու ցանկությունը, կուսակցության մեջ սկսվեց կազմակերպվել ստալինիզմի վերացման հանդեպ համառ դիմադրություն: Կուսակցական աշխատողների մեծ մասը, որոնք պաշտոնի էին հասել Ստալինի օրոք, լավ հասկանում էին, որ ստալինիզմի վերացման գործընթացը դժվար կլինի պահել համագումարում արված մերկացման շրջանակներում: Նրանցից ամեն մեկը վախենում էր, որ մի օր իրեն կհարցնեն, ինչ դեր է նա խաղացել, ակտիվ թե պասիվ, զտումներում եւ «պաշտամունքում»:

---

[1] ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 126, գ. 1, թթ. 18-19:

[2] Նորագույն պատմության ռուսական ՊԱ, ֆ. 3, ց. 8, գ. 368, թթ. 50-53:

ԽՄԿԿ Կենտկոմը 1956թ. հունիսի 30-ին ընդունեց «Անձի պաշտամունքի եւ նրա հետեւանքների հաղթահարման մասին» որոշումը, որը մի մեծ քայլ նահանջ էր «գաղտնի զեկուցման» համեմատությամբ: Մինչեւ 22-րդ համագումարն այդ փաստաթուղթը պահպանեց իր նշանակությունը եւ ծառայեց հետստալինյան պահպանողականության համար որպես գաղափարախոսական հիմք: Ստալինը նրանում բնութագրվում էր որպես մարդ, որը «պայքարել է սոցիալիզմի գործի համար», իսկ նրա հանցագործությունները որպես «ներկուսակցական եւ խորհրդային դեմոկրատիայի որոշ սահմանափակումներ, որոնք անխուսափելի էին դասակարգային թշնամու հետ ծանր պայքարում»[1]:

Այո, անձի պաշտամունքը ընդունվում էր ստալինյան ժամանակաշրջանի հատկանիշներից մեկը, սակայն այդ երեւույթը դիտվում էր բացարձակապես որպես Ստալինի անձնական թերությունների հետեւանք: Ստալինի ծառայություններն ակնհայտորեն գերակշռում էին նրա սխալներից, որոնք չունեին վճռորոշ նշանակություն եւ չէին կարող շեղել կուսակցությունը ճիշտ ուղուց: ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը քննարկվեց հանրապետության բոլոր կազմակերպություններում, հիմնարկներում եւ ձեռնարկություններում: Եվ ինչպես նշված է ԽՄԿԿ Կենտկոմ ուղարկված տեղեկատվության մեջ. «ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը Հայաստանի աշխատավորությունն ընդունեց միահամուռ հավանությամբ եւ ջերմ պաշտպանությամբ»[2]: Արդեն չկար Խրուշչովի «գաղտնի զեկուցման» քննարկման ժամանակ դրսեւորված համարձակությունը եւ եռանդը:

1956թ. հուլիսին ԽՄԿԿ Կենտկոմը փակ նամակով մեկ անգամ եւս անդրադարձավ «20-րդ համագումարի որոշումների քննարկման արդյունքներին եւ համագումարի որոշումների կատարման ընթացքին»: ՀԿԿ Կենտկոմի բյուրոն որոշեց նամակը քննարկել սկզբնական կուսակցական կազմակերպությունների դռնփակ ժողովներում: Ակնհայտ է, որ անհատի պատշամունքի մասին գրեթե խոսք չկար: Ընդհակառակը, ինչպես երեվում է սկզբնական կուսկազմակերպության ժողովների արձանագրություններից, քննարկումների ընթացքում հիմք են ընդունվել «Պրավդա» թերթի ապրիլի 5-ի խմբագրական հոդվածի հիմնական դրույթները:

1956թ. ամռանը եւ աշնանը հակաստալինյան եւ հակախորհրդային ելույթներ տեղի ունեցան Լեհաստանում եւ Հունգարիայում, որոնք վերածվեցին քաղաքական ճգնաժամի: Եթե Լեհաստանում հնարավոր եղավ հանգուցալուծում գտնել խաղաղ ճանապարհով, ապա Հունգարիայում «աշխատավոր ժողովրդի նվաճումները պաշտպանելու համար» ԽՍՀՄ զենքի ուժով ճնշեց ժողովրդական շարժումը: Երբ խորհրդային տանկերը մտնում էին Բուդապեշտ, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում կազմակերպվեցին հանրահավաքներ, որտեղ «մեր հանրապետության աշխատավորները զայրույթի զգացումով դատապարտեցին սեւ հետադիմության ֆաշիստական ուժերին, որոնք փորձեցին բռնանալ սոցիալիզմ կառուցող հունգար ժողովրդի խաղաղ ստեղծագործական կյանքի վրա»[3]:

Հունգարական ճգնաժամից հետո Ն.Խրուշչովի դիրքերը թուլացան: Պահպանողական-բյուրոկրատական ուժերը, որոնք սկզբում շփոթ-

---

[1] КПСС в резолюциях... т. 9, с. 119.
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 36, գ. 70, թ. 7:
[3] Նույն տեղում, թ. 11:

վեցին եւ ջլատվեցին ներքին երկպառակտություններից, շուտով զգացին ստեղծվող իրավիճակի, աշխատավորների ակտիվության աճի ամբողջ վտանգավորությունը, ուստի եւ որոշեցին «համախմբել շարքերը» եւ «դուրսպրծուկ» Ն.Խրուշչովին հեռացնել կուսակցության ղեկավարումից, նրան դարձնել կամ գյուղատնտեսության նախարար, կամ ձերբակալել: Խրուշչովի եւ նրա վարած գծի հակառակորդները՝ Վ.Մոլոտովը եւ Գ.Մալենկովը, որոնք նույնպես հաշտ չէին իրար հետ, խիստ գաղտնի պայմանավորվեցին համատեղ գործողություններ ձեռնարկելու մասին: Գլխավոր դերը ստանձնեց առաջին քարտուղարի պաշտոնի հավակնորդ Վ.Մոլոտովը, որը դեռ Վ.Լենինի կենդանության օրոք եղել էր Կենտկոմի քարտուղար, բոլորից ավելի երկար աշխատել Ի.Ստալինի հետ, էական մասնակցություն ունեցել ստալինյան ժամանակների զանգվածային բռնություններին եւ անօրինականություններին: Եթե դավադիրներին հաջողվեր իրագործել հղացած ծրագիրը՝ կուսակցության ղեկավարության գլուխ կանգնեցնել Վ.Մոլոտովին, ապա ամբողջ ստալինյան բյուրոկրատիան վստահ կլիներ, որ իշխանության չարաշահման ոչ մի փաստ չէր մերկացվի: Ավելին, նրանք կունենային նաեւ նախկինը վերականգնելու հույս: Հենվելով դեռ չկորսված իրենց հեղինակության վրա եւ ապավինելով կուսակցության բարձրագույն ղեկավարության մեծամասնության աջակցությանը, դավադիրները 1957թ. հունիսի 18-ին հրավիրեցին Կենտկոմի նախագահության արտահերթ նիստ: Այն աննախադեպ էր երկու տեսանկյունով. առաջին, ընթանում էր ուժեղ պահպանության ներքո վերցված Կրեմլում եւ տեւեց ամբողջ չորս օր ընդհատվում էր միայն գիշերը: Երկրորդ՝ նիստում ԽՄԿԿ Կենտկոմի նախագահությունը Խրուշչովին ազատեց առաջին քարտուղարի պաշտոնից, բայց իր որոշումն իրագործել չհաջողվեց: Խրուշչովին շտապ կանչելով նախագահության նիստի՝ Մոլոտովը եւ Մալենկովը հարց դրեցին գրաված պաշտոնից նրան հանելու մասին: Մեծամասնության կողմից այդ որոշումն ընդունվեց: Հետո նախագահողի տեղը գրավեց Բուլգանինը: Անվերջ նիստերում Խրուշչովը մեղադրվում էր տնտեսության նկատմամբ վոլյունտարիստական մոտեցման, Ի.Ստալինի պաշտամունքի, զանգվածային բռնությունների մերկացման ուղղությամբ ձեռնարկած «անմիտ գործողությունների» մեջ[1]:

Խրուշչովը վճռականորեն հերքեց բոլոր մեղադրանքները վկայաբերելով տնտեսական հաջողությունները եւ արտաքին քաղաքականության բնագավառում ձեռք բերած բավական էական նվաճումները: Սուր վիճաբանություններում ի պաշտպանություն Խրուշչովի հանդես եկան նախագահության երեք անդամներ՝ Միկոյանը, Սուսլովը, Կիրիչենկոն: Նախագահության անդամության թեկնածուներից եւ քարտուղարներից Բրեժնեւը, Ժուկովը, Մուխիտդինովը, Շվերնիկը, Ֆուրցեւան եւ մյուսները պաշպանեցին Խրուշչովին, բայց նրանք նիստին ներկա էին լոկ խորհրդակցական ձայնի իրավունքով: Չնայած Ժուկովը վճռական ձայնի իրավունք չուներ, բայց նրա դիրքորոշումը չափազանց կարեւոր էր, քանի որ նա պարզ հասկացնել տվեց, որ բանակը կպաշտպանի Խրուշչովին: Շեպիլովը սկզբում պաշտպանում էր Խրուշչովին, բայց երկարատեւ վիճաբանությունների ընթացքում անսպասելիորեն փոխեց իր դիրքորոշումը եւ միացավ նախագահության անդամների մեծ մասի կարծիքին:Քաղաքական իշխանության համար պայքարը ծայրաստիճան սուր

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 37, գ. 33, թ. 5:

բնույթ էր կրում: Բայց չնայած կատաղի հակամարտությանը, Խրուշչովի հակառակորդները ակնհայտ ցանկանում էին վերանայել կուսակցության 20-րդ համագումարի սկզբունքային որոշումները:

1957թ. հունիսի չորսօրյա վիճաբանություններն ավարտվեցին նրանով, որ Կենտկոմի նախագահությունը որոշում կայացրեց Խրուշչովին ՍՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից ազատելու մասին: Բայց Խրուշչովը, իր կողմնակիցների աջակցությամբ, հրաժարվեց ենթարկվել ընդունված որոշմանը: Նա հայտարարեց, որ իրեն Կենտկոմի առաջին քարտուղարի պոստում ընտրել է ոչ թե նախագահությունը, այլ Կենտկոմի պլենումը, եւ միայն պլենումը կարող է իրեն ազատել պաշտոնից: Նա պահանջեց հրավիրել Կենտկոմի պլենում, ինչը նախագահությունը մերժեց: Սակայն դա նախագահության պահպանողական ուժերի համար պյուռոսյան հաղթանակ էր: Առաջին, պլենում հրավիրելուց արդեն հնարավոր չէր խույս տալ: Նրա քննարկմանն էր ներկայացվում ոչ թե նախագահության միասնական որոշումը, այլ նրա անդամների երկու տարբեր կարծիքներ: Երկրորդ, առաջիկա պլենումի անդամների տրամադրությունը բնավ պահպանողական-բյուրոկրատական ուժերի օգտին չէր: Կենտկոմի նախագահության այդքան անսովոր նիստից հետո հունիսին հրավիրված պլենումը նույնպես աննախադեպ էր քննարկած հարցերի բնույթով ու տեւողությամբ. 1957թ. հունիսի 22-29-ին: Պլենումում փաստորեն քննարկվում էին զեկուցումը եւ դրան հակադրվող հարակից զեկուցումը: Ն.Խրուշչովը զեկուցում ներկայացրեց «կուսակցությունում տիրող դրության մասին»: Մյուս տեսակետը հանգամանալի շարադրեց Վ.Մոլոտովը: Բոլոր ելույթ ունեցողները, պաշտպանեցին Խրուշչովին: Ստեղծված պայմաններում Մալենկովը, Վորոշիլովը, Բուլգանինը, Սաբուրովը եւ Պերվուխինը հանդես եկան զղջման ճառերով: Պլենումում մինչեւ վերջ անդրդվելի մնաց միայն Մոլոտովը եւ միայն նա ձեռնպահ մնաց պլենումի բանաձեւը քվեարկելիս: Նրա խմբավորման մյուս մասնակիցները քվեարկեցին բանաձեւի օգտին, որը դատապարտում էր իրենց սեփական վարքագիծը[1]:

Այդպես, Ն.Ս.Խրուշչովի եւ նրա կողմնակիցների հաստատակամության ու սկզբունքայնության շնորհիվ ձախողում կրեց Խրուշչովին պաշտոնանկ անելու, ԽՄԿԿ 20-րդ համագումարի որոշումները վերանայելու, հասարակությունը ստալինյան կուսակցական-պետական բյուրոկրատիայի լիիշխանության վերականգնման ուղին վերադարձնելու՝ բյուրոկրատական, պահպանողական ուժերի առավել վտանգավոր փորձերից մեկը: ԽՄԿԿ Կենտկոմի հուլիսյան պլենումի արդյունքները քննարկվեցին հանրապետական եւ Երեւանի քաղաքային կուսակտիվի ժողովում, 1957թ. հուլիսի 3-ին, Ս.Թովմասյանը մանրամասն տեղեկություն տվեց ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության եւ Կենտկոմի պլենումի մասին[2]: Ակտիվի ժողովը «հավանություն տվեց եւ միահամուռ միացավ» ԽՄԿԿ Կենտկոմի «հակակուսակցական խմբի» մասին որոշմանը[3]:

Պլենումից հետո Խրուշչովի ձեռքին կենտրոնացվեց ամբողջ կուսակցական իշխանությունը, իսկ 1958թ. մարտին Նախարարների խորհրդի նախագահ դառնալով՝ նաեւ պետական իշխանությունը: Քաղաքա-

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 37, գ. 33, թ. 12:
[2] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 37, գ. 33, թթ. 4-22:
[3] Նույն տեղում, թ. 66:

կան-սոցիալական բարեփոխումների գիծը, սկսված 20-րդ համագումարից, ստացավ երաշխիք հետագա շարունակման համար: Սակայն, այն այժմ ուղղակի կապված էր Խրուշչովի անձի եւ նրա միանձնյա քաղաքականության տատանումների հետ: Խրուշչովի ավտորիտար որակը հատկապես հանդես եկավ 1957թ. հոկտեմբերին, երբ պաշտպանության նախարարի պաշտոնից հեռացվեց Գ.Ժուկովը եւ դատապարտվեց «բոնապարտիզմի ճանապարհ ընտրելու արկածախնդրության» համար: Խրուշչովի վերադարձը կուսակցության եւ կառավարության ղեկավարությունը համատեղելու ստալինյան սկզբունքին վերջ տվեց կոլեգիալությանը, չնայած նրան, որ դրա քաղաքական առավելությունը հաստատել էր 20-րդ համագումարը: Սակայն, ինչպես գրում է Ն.Վերտը, եթե «Խրուշչովը հանդես էր գալիս որպես իշխանության կրող, որ փաստորեն չէր զիջում նրան, որը չարաշահում էր Ստալինը, նրա դերը ինչպես ներքաղաքական, այնպես էլ միջազգային գործերում չէր նշանակում պատվախնդրությամբ եւ գործնականությամբ լրիվ հաջորդականություն իր նախորդից: Այդ մասին արդեն վկայում էր իր պարտված հակառակորդների ճակատագիրը եւ այն մեծ դերը, որը սկսեց խաղալ ԽՄԿԿ Կենտկոմը»[1]:

Այսպիսով, 1957թ. հունիսյան պլենումը կարելի է դիտել որպես սահմանագիծ խորհրդային երկրի պատմության մեջ:

---

[1] А. Верт, История Советского государства, М., 1999, с. 401.

ՎԵՐՋԱԲԱՆ

ԽՍՀՄ պատմության մեջ հետպատերազմյան շրջանը էական նշանակություն ունեցավ: Ամենից առաջ հաղթանակը փաստարկ էր անսասան պահպանել երկրի սոցիալ-քաղաքական եւ տնտեսական կարգը: Պատերազմից հետո նոր ուժով կենսագործվեց ծանր արդյունաբերության եւ ռազմա-արդյունաբերական համալիրի արագացված զարգացումը: Եվ նորից միջոցների խորհրդային աղբյուրը մնաց պետության կողմից անխղճորեն շահագործվող կոլտնտեսային գյուղը: Նորից վերածնվեցին բռնությունները: Սակայն 30-ական թվերի «մեծ տեռորին» փոխարինեց ԽՍՀՄ-ում ընդդիմության նույնիսկ հանդես գալու հնարավորության հետեւողական ճնշման, ձեւավորվող ընտրախավի ներկայացուցիչների հսկողության, իսկ ամենափոքր կասկածանքի դեպքում՝ հետապնդման պետական մեխանիզմը: Դրանով կարելի է բացատրել մարշալ Ժուկովի հետապնդումը, բանակի հրամանատարության մեջ բազմաթիվ ձերբակալությունները, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի այսպես կոչված «լենինգրադյան խմբի» ջախջախումը, նախարարություններում եւ կենտրոնական գերատեսչություններում «պատվո դատարանների» գործունեությունը, «Պետանվտանգության նախարարության գործը», «բժիշկների գործը»:

Հետպատերազմյան ԽՍՀՄ-ում միութենական պետական մարմնի ազդեցությունը ավելի բարձր էր, քան կուսակցական մարմնինը: Եվ դա բացատրվում է Ստալինի Նախարարների խորհրդի նախագահ լինելու հանգամանքով: ԽՍՀՄ-ի կյանքում հանրապետությունների դերի բարձրացման աննշան փորձերը, ամենից առաջ կապված ՈՒԽՖՍՀ իրավունքների ընդլայնման առաջարկությունների հետ, վճռականորեն կասեցվեցին 1948թ.: Երկրի ղեկավարությունում մղվում էր մշտական պայքար ազդեցության եւ իշխանության համար, որի ընթացքում բախվեցին երկու հիմնական խմբավորումներ՝ Ժդանով-Կուզնեցով եւ Մալենկով-Բերիա: Զգալի չափով Ստալինն ինքն էր հրահրում բախում իր շրջապատում: Կյանքի վերջին տարիներին նրա մոտ ծրագրեր էին հղացել արմատականորեն փոխել կառավարման բարձրագույն օղակները: Նա ազատվում էր պատժիչ մարմինների արդեն ավելորդ եւ անցանկալի գործիչներից: Ձերբակալվեցին եւ դատի էին սպասում Պետանվտանգության նախարարության խոշոր գործիչները, նախարար Աբակումովի գլխավորությամբ: Սկսվեց Բերիայի «շրջափակումը»: Թուլացան «հին կուսակցական գվարդիայի» ներկայացուցիչներ Մոլոտովի, Վորոշիլովի, Կագանովիչի եւ Միկոյանի դիրքերը: ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության կազմի կտրուկ ավելացումը կուսակցության 19-րդ համագումարից հետո Ստալինին հնարավորություն տվեց ստեղծել յուրատեսակ «փոխարինողների թիմ«, պատրաստ ցանկացած պահի փոխարինելու հին ղեկավարությանը: Ստալինի այդ քաղաքականության մեջ չի կարելի չտեսնել 20-30-ական թվերի նույն քաղաքական ավանդույթների շարունակությունը:

Խորհրդային Հայաստանը հետպատերազմյան տարիներին շարունակում էր ապրել եւ զարգանալ *1922թ. Խորհրդային Միության տեսքով ստեղծված ռուսական պետության*[1] ընդհանուր օրենքներով: Հանրապետության սոցիալ-տնտեսական եւ հասարակական-քաղաքական կյան-

[1] Ընդգծված միտքը տես Новейшая история Отечества. т. 2, с. 440.

քին վերաբերող փոքրիշատե կարեւոր որոշումներն ընդունվում էին Մոսկվայում, եւ դրանում իրենց վճռական խոսքն ունեին ըստ հերթականության՝ Ստալինը, Բերիան եւ Միկոյանը: Իհարկե, կարեւոր էր նաեւ հանրապետության ղեկավարության, առանձնապես ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի դերը, որը հաճախ հաջողությամբ կարողանում էր հանրապետության շահերը փոխկապակցել ընդհանուր միութենական շահերի հետ: Բայց միշտ չէ, որ դրանք կշռադատված էին մինչեւ վերջ: Դրանով կարելի է բացատրել հայրենադարձության ծախողումը, ծանր եւ քիմիական արդյունաբերությունների անհեռատես, արագընթաց զարգացումը, հանրապետությունը սեփական հացով ապահովելու համար անիմաստ ձեռնարկումները:

Ստալինի մահից հետո սկսված բարեփոխումները հարկադրական էին եւ անխուսափելի: Այս կամ այն ձեւով դրանք ձեւակերպվել էին պատերազմից անմիջապես հետո, նույն ժամանակ էլ որոշվել էին դրանց իրականացման հնարավոր այլընտրանքները: Թվարկենք դրանք: Արդյունաբերության մեջ ծանր՝ առավելապես պաշտպանական արդյունաբերության տեսակարար կշռի նվազում եւ թեթեւ արդյունաբերությունում ներդրումների ավելացում: Գյուղատնտեսության բնագավառում «ագրոքաղաքների» ստեղծումից, գյուղատնտեսական բանվորների ուժերով խորհրդային տնտեսությունների արագացված զարգացումից դեպի գյուղում պետության միջամտության մակարդակի իջեցում, գնման գների բարձրացում եւ հարկերի պակասեցում: Արտաքին քաղաքականության բնագավառում՝ ԽՍՀՄ աշխարհաքաղաքական դերի ուժեղացումից, ԽՍՀՄ-ի հրթիռամիջուկային տերության վերածումից դեպի ավելի զգույշ արտաքին քաղաքականության վարում: Անհրաժեշտ էին բարեփոխումներ նաեւ պատժիչ համակարգում: 1930-40-ական թվերի բռնությունները, որոնք հանդիսանում էին պետական-կուսակցական մարմինների ղեկավարման եւ ամբողջ հասարակության քաղաքական ճնշման իրականացման միջոց, իրենց սպառել էին:

ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությունում ընդունում էին ինչպես բարեփոխումների անցկացման, այնպես էլ սոցիալիզմի խորհրդային մոդելի պահպանման անհրաժեշտությունը: Բանավեճն ընթանում էր այն մասին, թե ինչպիսի բարեփոխումներ է անհրաժեշտ անցկանել: ԽՍՀՄ ղեկավարությունում իշխանության համար պայքարը ընթանում էր եւ հաճախ հանդես էր գալիս բարեփոխումների այս կամ այն տարբերակի համար պայքարին զուգահեռ: Բարեփոխումների սկիզբը, անկասկած, կապված է Բերիայի գործունեության հետ, որը սկսեց քաղաքական արդարացումների գործընթացը, ԽՍՀՄ-ում պատժիչ համակարգի մեղմացումը: Առաջարկվեց իրականացնել Գերմանիայի միավորումը՝ նրա ապառազմականացման եւ ռազմական դաշինքի մեջ չմտնելու գնով, բարելավել Հարավսլավիայի հետ հարաբերությունները: Ներքաղաքական կյանքում իր վրա ուշադրություն է գրավում նրա փորձերը՝ տարանջատել պետական-կուսակցական մարմինների իրավասություններն ու մեծացնել հատկապես պետական մարմնների դերը: Բերիան գիտակցում էր ազգային խնդրի կարեւորությունը ԽՍՀՄ-ի ապագայի համար: Նրա բարեփոխումները խիստ արմատական էին, իսկ պայքարը իշխանության համար՝ նույնքան սուր: Բերիայի վերացումով նրա առաջարկած բարեփոխումներից մի քանիսը հետաձգվեցին 2-3 տարով (Հարավսլավիայի հետ հարաբերությունների բարելավումը, Ստալինի անձի պաշտամունքի դատա-

պարտումը, զանգվածային արդարացումները), մյուսները կամ չիրականացվեցին կամ իրականացվեցին ԽՍՀՄ-ի գոյության վերջին տարիներին՝ Գորբաչովի օրոք (կուսակցական եւ պետական մարմինների իրավասությունների տարանջատում), երբ «գնացքը հեռացել» էր ԽՍՀՄ-ի սոցիալիստական կայարանից:

Մալենկովը փորձեց փոխել ԽՍՀՄ-ի տնտեսական զարգացման գերակայությունը, ավելացնել ժողովրդական սպառման ապրանքների արտադրության տեսակարար կշիռը: Նրա անվան հետ կապված բարեփոխումները գյուղատնտեսությունում օժանդակեցին վերակենդանացնել կյանքը գյուղում, ստեղծեցին ավելի բարենպաստ պայմաններ զարգացնելու անձնական օժանդակ տնտեսությունները: Այդ առաջարկությունները տնտեսության բնագավառում առաջացրին «գաղափարախոս-ֆունդամենտալիստների» վճռական բողոքը, որոնք պնդում էին, Խրուշչովի լիակատար համաձայնությամբ, պահպանել ծանր, պաշտպանական արդյունաբերության զարգացման առավելության նախկին ստալինյան ուղին: Խրուշչովը գյուղատնտեսության բնագավառում Մալենկովի քաղաքականությանը հակադրեց խոպանի յուրացման ծրագիրը, որը նախատեսում էր հսկայածավալ ներդրումներ երկրի չյուրացված շրջաններում, ապա՝ գյուղտնտեսական ապրանքների արտադրության բագավառում ձեւակերպվեց «հասնել եւ անցնել Ամերիկայից» կարգախոսը: Այդ միջոցառումները գյուղատնտեսությանը հասցրեցին խորը ճգնաժամի, ավելացրեցին ԽՍՀՄ-ի սննդամթերքային կախվածությունը արտասահմանյան գնումներից: Դրա փոխարեն Խրուշչովին հաջողվեց պահպանել եւ ամրապնդել ԽՍՀՄ-ի, որպես ամբողջ կապիտալիստական աշխարհի համար վտանգի, կերպարը: Խրուշչովի կողմից գրգռված վիճակում նետած «Մենք ձեզ (ամերիկացիներին-Ա.Վ.) կթաղենք» արտահայտությունը վնասում էր նրա խորը համոզումը կապիտալիզմի նկատմամբ սոցիալիզմի հաղթանակի պատմական անխուսափելիության վերաբերյալ: Խորհրդային հոթիռա-միջուկային ծրագրերի արագացված զարգացումը ԽՍՀՄ-ի համար միջոց ծառայեց պահպանել հավասարակշռությունը ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի երկրների, ամբողջ աշխարհի հետ: ԽՍՀՄ-ը վստահորեն ներքաշվում էր ռազմական մրցավազքի մեջ:

Բարեփոխումների բոլոր այլընտրանքներից, որոնք իրականացվեցին 50-ական թվերի սկզբներին, Խրուշչովը ընտրեց ամենապահպանողական տարբերկները, իսկ դրանք պահպանվեցին նրա հետնորդների կողմից մինչեւ ԽՍՀՄ-ի գոյության վերջին տարիները: Նրա «գաղտնի զեկուցումը» 20-րդ համագումարում, մի կողմից Ստալինի քննադատության շարունակությունն էր, որը սկսվեց անմիջապես վերջինիս մահից հետո, մյուս կողմից, միջոց էր շարունակվող ներկուսակցական պայքարի համար: Այլ բան, որ խորհրդային հասարակությունը եւ ամբողջ աշխարհը տեսնում էին Ստալինի բացահայտումը ավելի հետեւողական, քան ցանկանում էր ինքը՝ զեկուցողը: Խրուշչովի հետագա ամբողջ գործունեությունը փորձ էր բոլոր միջոցներով սահմանափակել զեկուցման լայն մեկնաբանումը: Դրա համար օգտագործվում էին ՊԱԿ-ի բռնարարքները, ձերբակալություններ եւ ճամբարներ մարդկանց համար, ովքեր չափից դուրս շատ էին հավատացել «20-րդ համագումարի գաղափարներին», նրա ռազմական միջամտությունները եւ սպառնալիքները «եղբայրական սոցիալիստական երկրների» նկատմամբ:

Բուռն 50-ական թվերի կեսերին ձեւավորվեցին այն քաղաքական սկզբունքները, որոնք ընկան ԽՍՀՄ-ի կուսակցական-պետական համակարգի հիմքում՝ ընդհուպ մինչեւ 80-ական թվականների երկրորդ կեսերը: Ամենից առաջ, հատկապես այդ ժամանակ հաստատվեց նոմենկլատուրայի կայունությունը: Ընդգրկումը նոմենկլատուրա ապահովում եւ երաշխավորում էր այն, ինչ ԽՍՀՄ-ում անվանվում էին արտոնություններ: Խրուշչովի կողմից այդ սկզբունքների ոտնահարման փորձը հասցրեց նրա պաշտոնանկմանը 1964թ.: Կայունության սկզբունքը բացառում էր զանգվածային բռնությունները որպես կառավարման միջոց, որը լայնորեն կիրառվում էր առաջ: Նոմենկլատուրան խզեց իր կապերը ստալինյան քաղաքական ժառանգության բռնությունների մասի հետ: Այստեղից՝ կուսակցական մարմինների աջակցությունը ԽՄԿԿ 20-րդ եւ 22-րդ համագումարների որոշումներին: Այդ տարիներին տեղի ունեցավ խորհրդային ժամանակների վերջին ընդհարումը կուսակցական եւ պետական մարմինների միջեւ: «Խորհրդային պետության Առաջնորդի» հեղինակությանը, ինչպես 40-50-ական թվերի սկզբին անվանում էին Ստալինին, տարածվում էր ԽՍՀՄ Նախարարների խորհրդի եւ նրա ապարատի, գործադիր իշխանության մարինների վրա: Այժմ գործնականում հաստատվեց կուսակցական ղեկավար սկզբունքը պետական մարմինների գործունեության բոլոր կողմերի վրա: Իրենց կարեւոր դիրքերը զիջեցին այնպիսի գերատեսչություններ, ինչպիսիք էին ԽՍՀՄ ներքին գործերի եւ պաշտպանության նախարարությունները, ՊԱԿ-ը: Առավել կարեւոր դարձավ ԽՄԿԿ Կենտկոմի ապարատի բաժինների դերը, իսկ ԽՄԿԿ Կենտկոմի հունիսյան (1957թ.) պլենումից հետո կուսակցական ապարատի դերը աճեց:

Հանրապետության ղեկավարությունը եւս փորձեց 1949թ. արտաքսված հանրապետության բնակիչների մի մասին ետ վերադարձնել, այդ նպատակով դիմելով կենտրոն: Բերիայի վերացումից հետո հանրապետությունում սկսված կուսակցական ժողովներում ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Գ.Հարությունյանի անունը սկսեց կապվել Բերիայի հետ. նա մեղադրվեց «Հայաստանում Բերիայի գիծը շարունակելու մեջ»: Փորձված կուսակցական գործիչը չկարողացավ ճիշտ կողմնորոշվել նոր իրադրության մեջ, ելույթներն որակեց «ազգայնական» եւ այդ մասին բովանդակ հաղորդում ուղարկեց Մոսկվա: Սակայն ժամանակները փոխվում էին: Խրուշչովը օգտագործելով այդ փաստը, կարողացավ Գր.Հարությունյանի երեկվա գինակիցների ձեռքով նրան ազատել Հայաստանի ղեկավարի պաշտոնից: Հանրապետության նոր ղեկավարությունը (Ս.Թովմասյան, Շ.Առուշանյան) իր գործելաոճով շատ բանով չէր տարբերվում նախորդներից, իրենց հասցեին քննադատության ամենափոքր ակնարկն անգամ դիմավորում էր սվիններով: ԽՄԿԿ 20-րդ համագումարի որոշումները մեծ ոգեւորություն առաջացրին հանրապետության ինչպես մտավորականության, այնպես էլ բոլոր սոցիալական խմբերի մոտ: Երկրի հասարակական-քաղաքական կյանքի դեմոկրատացման, ստալինիզմի հետեւանքների վերացման հիմնախնդիրների հետ հանրապետությունում բարձրացվեց չլուծված ազգային հարցը, հայկական երկրամասերի գոյության փաստը հարեւան հանրապետություններում:

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում այդ ելույթներն արագորեն կասեցվեցին, իսկ հեղինակները պատժվեցին: Ազատության զգացումը ժամկետից շուտ էր թեւածել խորհրդային երկրում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք
Հիմնական գրականության եւ աղբյուրների տեսություն 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

1. Արդյունաբերական զարգացման հանրագումարները 12
2. Գյուղատնտեսության բարեփոխումների փորձերը 17
3. Բնակչության սոցիալական դրությունը 27

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

1. Խորհրդա-թուրքական հարաբերությունները եւ հայկական տարածքների խնդիրը 34
2. Հայրենադարձության կազմակերպումը եւ իրականացումը 63
3. Ազգային քաղաքականության առանձնահատկությունները 81

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏԱԳԱ ԽՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ
ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1. Կուսակցական եւ խորհրդային մարմինների սերտաճման նոր մակարդակը 98
2. Կոմունիստական կուսակցության գաղափարախոսական վերահսկողության խստացումը 114
3. Քաղաքական բռնաճնշումները: Բնակչության զանգվածային աքսորը..... 155
4. Եկեղեցին ամբողջատիրության համակարգում..... 169

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՍՏԱԼԻՆԻԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ
ԽՐՈՒՇՉՈՎՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

1. Իշխանության կառուցվածքային փոփոխությունները ԽՍՀՄ-ում եւ դրա անդրադարձը Հայաստանում..... 198
2. Ստալինիզմի վերացման սկիզբը..... 210
3. ԽՄԿԿ 20 -րդ համագումարը եւ բարեփոխումների գործընթացը հանրապետությունում 219

ՎԵՐՋԱԲԱՆ..... 233

ԱՄԱՏՈՒՆԻ ՍԱՍՈՒՆԻԿԻ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՍՏԱԼԻՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԽՐՈՒՇՉՈՎ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ
(1945 - 1957թթ.)

ВИРАБЯН АМАТУНИ САСУНИКОВИЧ

АРМЕНИЯ
ОТ СТАЛИНА ДО ХРУЩЕВА
ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ЖИЗНЬ
1945-1957 годы

Հանձնված է շարվածքի 12.10.2001:
Ստորագրված է տպագրության 12.11.2001: Տպագրական մամուլ 14,85:
Տպաքանակը՝ 160 օրինակ: Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատարակչություն, 375019,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ:

[10 ԵԵ 77]

Նշումների համար

9uu 4h nnb
F

ЦЕНА
А II
86667